

Ա. ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅ ԺՊՈՎՐԴԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ
ԸՍՏ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԵՂԵՍԱԿՆԵՐԻ
XIII-XVII դարեր

ԳԻՐԲ

Ա

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЕНИИ
ИНСТИТУТ ИСТОРИИ

М. К. ЗУЛАЛЯН

**ВОПРОСЫ ИСТОРИИ
АРМЯНСКОГО НАРОДА XIII—XVIII вв.
ПО ДАННЫМ ЕВРОПЕЙСКИХ АВТОРОВ**

КНИГА ПЕРВАЯ
ПОЛИТИЧЕСКАЯ ИСТОРИЯ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЕНИИ
ЕРЕВАН 1990

9(47.925)
9-94

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Մ. Կ. ՉՈԽԱՅԱՆ

**ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ XIII—XVIII ԴԱՐԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ
ԸՍՏ ԵՎՐՈՊՊԱՑԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ**

Գ Ի Բ Ք Ա

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

0478



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1990

**Տպագրվում է Հայաստանի ԳԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ**

**Պատասխանատու խմբագիր՝
պատմական գիտ. դոկտոր Վ. Ա. Բայրաւդյան**

**Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
պատմական գիտությունների դոկտոր Հ. Գ. Փափազյանը
և պատմական գիտությունների թեկնածու Պ. Ա. Զորանյանը**

Զուգայլան Մ. Կ.

Ձ 940 Հայ ժողովրդի XIII—XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների [Պատ. խմբ. Վ. Ա. Բայրուրդյան]։ 22 ԳԱ. Պատմ. ին-տ.—Գիրք Ա.—Ծր.։ 22 ԳԱ հրատ., 1990.

Գիրք Ա։ Քաղաքական պատմություն.—1990.—364 էջ։

Աշխատության մեջ առաջին անգամ փորձ է արվում քննության ենթարկել Հայ ժողովրդի XIII—XVIII դարերի պատմության հանգուցային հարցերը՝ Արևելք այցելած եվրոպացի ուղեգիրների, զիմանագետների ղեկուցադրերի և այլ բնույթի երկասիրություններում առել գտած վկայությունների հիման վրա։

Աշխատությունը նախատեսված է պատմության մասնագետների, ուսանողների և պատմությամբ հետաքրքրվող լայն շրջանների համար։

Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Ս Ք

Տարիներ առաջ, երբ զբաղված էինք ուշ միջնադարյան ժամանակաշրջանի հայ ժողովրդի պատմության հարցերով, նկատեցինք, որ XIII—XVIII դարերի եվրոպացի հեղինակների թողած ուղեգրությունները (ինչպես նաև այլ բնույթի սկզբնաղբյուրներ) ըստ ամենայնի ու ըստ արժանվուն չեն ներառված գիտական շրջանառության մեջ։ Մինչդեռ այդ նյութերը, որոնք անմիջական աղբյուր ունեն մեր պատմական իրականության հետ, միանգամայն արժանի են ոչ միայն հատուկ ուսումնասիրության, այլև առանձին-առանձին թարգմանվելու ու ներկայացվելու մեր գիտական հասարակությանը։ Անշուշտ, այդ թարգմանություններին անհրաժեշտ է կցել առաջաբաններ և գիտական ծանոթագրություններ։ Հույս ունենք, որ այդ խոշոր բացը մոտակա տարիներին կլրացվի մեր շնորհաշատ մասնագետների կողմից և կուղղվեն անցյալում թույլ տրված ցավալի բացթողումները։

Այս առումով ներկա ուսումնասիրությունը XIII—XVIII դարերի հայ ժողովրդի պատմության հարցերը եվրոպացի հեղինակների տրված լինելով հետազոտելու առաջին փորձն է։ Սույն աշխատության առաջին գիրքը նվիրված է քաղաքական պատմության առավել հետաքրքիր դրվագներին։ Երկրորդ գիրքը շոշափելու է սոցիալ-տնտեսական պատմության հարցեր, իսկ երրորդն ու չորրորդը համապատասխանաբար նվիրվելու են միսիոներական գործունեության և մշակույթի խնդիրների լուսաբանությանը։

Յուրաքանչյուր գրքի վերջում նախատեսված է թարգմանաբար քաղվածքներ հրատարակել եվրոպացի հեղինակների առավել հետաքրքրություն ներկայացնող աշխատություններից։ Առաջին գրքի հավելվածի նյութերը թարգմանել են Մերուժան Կարապետյանը և էլիզ Թաչիրյանը։

Հաճելի պարտքս եմ համարում շնորհակալություն հայտնել սույն գործի հաջողությանը նպաստող բոլոր գործընկերներիս՝ մասնավորապես Մերուժան Կարապետյանին, որը ջանք չխնայեց աղբյուրների ու գրականության ցանկը լրացնելու և առավել ամբողջական դարձնելու համար։

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Եվրոպացի հեղինակները հայերի և Հայաստանի մասին թողել են ուղեգրություններ, դիվանագիտական զեկուցագրեր, արևելյան երկրների հետ եվրոպական երկրների կնքած առևտրական պայմանագրեր, ճիզվիտ միսիոներների զեկուցագրեր Հայաստանից, Թուրքիայից ու Իրանից, երկարամյա դիտողությունների, ուսումնասիրությունների արդյունք հանդիսացող պատմական երկեր և այլն: Այդ հեղինակների մոտ կան խիստ շահեկան ու երբեմն էլ բացասիկ ալժեք ունեցող նյութեր, որոնք վերաբերում են հայ ժողովրդի հասարակական-տնտեսական և քաղաքական պատմությանը, կաթոլիկ աշխարհի հետ նրա ունեցած քաղաքական առնչություններին, դավանաբանական վեճերին, մշակույթի հարցերին, աշխարհագրական միջավայրին և բաղամասիվ այլ բնագավառների ու խնդիրների: Հենց սկզբից ընդգծենք, որ եվրոպական այս աղբյուրներին պետք է քննադատաբար մոտենալ: Գալով Արևելք, եվրոպացի հեղինակներից շատերն իրենց պետությունների որոշակի հանձնարարություններն են կատարել և որոշակի զիրքերից նկարագրել այս կամ այն երկրի կացությունը: Եթե նա վաճառական է եղել, ապա առավել ուշադրություն է դարձրել տվյալ երկրի առևտրի հնարավորություններին և առևտրական ուղիներին: Եթե նա դիվանագիտական ներկայացուցիչ է եղել, ապա նրան նախ և առաջ հետաքրքրել է երկրի քաղաքական ու ռազմական վիճակը: Կաթոլիկ միսիոներների առաջ խնդիր էր դրված գրազվել հոգեորսությունը, այսինքն՝ «հերձվածող» արևելյան քրիստոնյաներին կաթոլիկադավան դարձնել՝ կաթոլիկ աշխարհի հետ զնացող քաղաքական ծրագրերն իրագործելու նպատակով: Այս բոլորը, սակայն, չեն նսեմացնում եվրոպական այս աղբյուրների գիտական ու պատմական նշանակությունը:

Հատուկ կուղենայինք ընդգծել, որ մեր շարադրած աղբյուրների այս տեսությունը սպառիչ տեղեկություն չի տալիս հայ ժողովրդի պատմության վերաբերյալ եվրոպական աղբյուրներում եղած նյութերի մասին: Կասկածից վեր է, որ եվրոպական արխիվներում առ այսօր մեզ հետաքրքրող չհրատարակված շատ նյութեր կան, իսկ հրատարակվածներից էլ ոչ բոլորն են, որ այստեղ հիշատակվել են:

Յավոք պետք է նշել, որ այդ նյութերը հատուկ ուսումնասիրության առարկա չեն հանդիսացել հայ իրականության մեջ, եթե զանց առնենք Գ. Վ. Զարբհանյանի¹ և Կ. Կոստանյանցի² երկու գրքույկները, որոնց մեջ առավել ուշադրություն է դարձված հայոց լեզվի և բանահյուսության ուսումնասիրությանը եվրոպայում՝ XIII—XIX դարերում: Այդ երկու գրքույկներն էլ ավելի արժեքավորվում են մատենագրական տվյալներով:

1932 թ. Երևանում լույս տեսավ Հովհ. Հակոբյանի «Ուղեգրություններ»³ վերնագրով երկասիրությունը, ուր ոչ միայն թարգմանական բաղվածքներ են բերված XIII—XVI դդ. եվրոպացի ուղեգիրներից, այլև դրանց կցված են ծանոթագրություններ և ուղեգիրների մասին որոշ կենսագրական տվյալներ: Հովհ. Հակոբյանի գրքում, սակայն, ոչ միայն տեղ չեն գտել բոլոր ուղեգրությունների նյութերը Հայաստանի և հայերի մասին, այլև ժամանակագրական առումով ընդգրկված է միայն մինչև XVI դարն ընկնող ժամանակահատվածը:

Խորհրդային պատմագիտության մեջ երկու աշխատություններ անմիջական առնչություն ունեն խնդրո առարկա այս թեմայի հետ: Մեկը ականավոր արևելագետ Վ. Վ. Բարտոլդի «Արևելքի ուսումնասիրության պատմությունը եվրոպայում և Ռուսաստանում»⁴, իսկ մյուսը՝ Մ. Ա. Պոլիեկտովի «XIII—XVIII դարերի եվրոպական ուղեգիրները կովկասում»⁵ աշխատություններն են: Վերջինը տեղեկությունների ժողովածու է XIII—XVIII դդ. եվրոպացի հեղինակների կենսագրությունների վերաբերյալ, ինչպես նաև որոշ մատենագիտական նյութերի հաղորդում: Ինչ վերաբերում է Վ. Վ. Բարտոլդի աշխատությանը, ապա դա համառոտ շարադրանք է եվրոպացի հեղինակների՝ Արևելք կատարած ուղեվորությունների պատմական շարժառիթների մասին: Եվս երկու աշխատություններ աղերս ունեն սույն հարցի հետ: Առաջինը Զ. Ի. Յամպոլսկու⁶, իսկ երկրորդը՝ Ն. Կ. Օպովսկայայի «Վրաստանը XVII—XVIII դա-

1 Գ. Վ. Զարբհանյան, Ուսումնասիրություններ հայ լեզվի և մատենագրության ի Արևմուտս, Վենետիկ, 1895:

2 Կ. Կոստանյանց, Հայագիտություն Արևմտյան եվրոպայում, Թիֆլիս, 1910:

3 Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932:

4 В. В. Бартольд, История изучения Востока в Европе и России. Л., 1925.

5 М. А. Полиевктов, Европейские путешественники XIII—XVIII вв. по Кавказу, Тифлис, 1935.

6 «Путешественники об Азербайджане», т. I., Составил З. И. Ямпольский, Баку, 1961.

րերի Արևմտյան Եվրոպայի գրականության մեջ»⁷ վերնագրով գրքերն են: Զ. Ի. Յամպոլսկու հրատարակած հատորում տեղ են գտել անցյալում տարբեր ժամանակ ուսերեն թարգմանված XIII—XVIII դդ. եվրոպացի մի շարք ճանապարհորդների, որոնց թվում՝ Վիլհելմ Թուբրուկի, Մարկո Պոլոյի, Կլավիխոյի, Յոսաֆաթ Բարբարոյի, Ամբրոջիո Կոնտարինիի, Անտոնի Զենկինսոնի, Ադամ Օլեարիուսի, Յա. Ստրեյսի ուղեգրությունները Ադրբեջանի մասին, ինչպես նաև առանձին քաղվածական հատվածներ ուսերեն մի քանի հայտնի ուղեգրություններից: Բերված նյութերի մի զգալի մասը վերաբերում է պատմական Հայաստանին: Որոշ ծանոթագրություններ գրված են ոչ ճիշտ դիրքերից և ակնհայտ է պատմական իրականությունը կեղծելու միտումը Զ. Ի. Յամպոլսկու կողմից:

Ինչ վերաբերում է Ն. Կ. Օռլովսկայայի վերոհիշյալ գրքին, ապա այնտեղ XIII—XVIII դդ. եվրոպական հեղինակներից Վրաստանի մասին բերված նյութերը խիստ համառոտ են: Գրքում ավելի մեծ տեղ է տրված եվրոպական պատմագիտության մեջ վրացերեն լեզվի ու բանասիրության հարցերին:

Խորհրդահայ պատմագիտության մեջ եվրոպական հեղինակների առանձին վկայություններ օգտագործել են Լեոն⁸, Հ. Ս. Անասյանը⁹, Աշ. Գ. Հովհաննիսյանը¹⁰, Մ. Կ. Զուլպյանը¹¹, Վ. Ա. Բայրուրդյանը և այլք: Այս առումով հատկապես պետք է առանձնացնել Աշ. Հովհաննիսյանին, որն իր մեծարժեք «Գրվագներում» գիտական շրջանառության մեջ է գրել բազմաթիվ նոր նյութեր՝ անելով համապատասխան գիտական եզրակացություններ:

Եվրոպացի հեղինակների աշխատությունները բաղմարովանդակ են: Գ. Վ. Զարբհանյանը դրանք բաժանում է երեք խմբի՝ «ա) դիվանագիտական, երբ արևմտյան ազգք և ժողովուրդք, ընդհանրապես արևելքի, և մասնավորաբար մեր աշխարհին հետ ունեցած հարաբերությանց պատճառաւ սկսան ծանոթանալ Հայաստանի, և անոր բնակչաց պատմությանը, աշխարհագրության և լեզվին: բ) Երբ այն առիթով, և նախ

և առաջ մեր թագավորաց ոմանց խնդրանք՝ (sic!) սկսան արևմտյան հոգևորականք մուտ գտնել ի մեր աշխարհ, և հմտանալով մեր լեզվին՝ աշխատել կրոնական և բանասիրական տեսակետով: գ) Ուսումնականք»¹²: Այստեղ հեղինակը նկատի ունի XVII—XIX դդ. եվրոպացի հայագետների գիտական հետազոտությունները: Անշուշտ, մեզ առավել հետաքրքրող նյութերը դիվանագիտական ուսումնասիրություններն են:

* * *

Հանրահայտ է, որ Արևելքի հետ եվրոպական երկրների ունեցած քաղաքական-դիվանագիտական հարաբերությունները սկսեցին XI դ. վերջերից՝ կապված խաչակրաց արշավանքների հետ: Խաչակիրները եվրոպացի ավատատերերի և առևտրականների առաջ բաց արեցին հեթաթախին Արևելքը, որն իր ստեղծած նյութական ու գրական մշակույթով ոչ միայն շէր զիջում, այլ որոշ առումով գերազանցում էր Արևմտյան Եվրոպայի երկրներին: Խաչակիրները Արևելքում երևացին ոչ թե քրիստոնեական սուրբ վայրերը և արևելյան քրիստոնյաներին աղատագրելու, ինչպես միամտորեն այն ժամանակ կարծում էին հայ պատմիչներից ոմանք¹³, այլ երկրամասը կողոպտելու նպատակով:

Խաչակիրների քրիստոնյա քարոզչությունից խաբված Կիլիկիայի հայ իշխողները նրանց տրամադրեցին ընդարձակ կալվածքներ, այլևայլ արտոնագրեր առևտրի ու այլ բնագավառներում: Աստիճանաբար ամրապնդելով իրենց դիրքերը Կիլիկիայում, խաչակիր արկածախնդիրները կանգ չառան նույնիսկ Կիլիկիայի հայոց իշխանների ամրոցների հափրչտակման առաջ, իսկ հետագա դարերում արդեն կաթոլիկ աշխարհի ներկայացուցիչները Կիլիկիայում հայերից պահանջում էին ենթարկվել հոռմեական եկեղեցուն, հոգեպես ձուլվել նրանց հետ՝ հրաժարվելով նույնիսկ մայրենի լեզվից: Արևելքում գտնվելու հարյուրամյակներին

12 Գ. Վ. Զարբհանյան, նշվ. աշխ., էջ 7:

13 «Եւրոպանչիւր դօրօքն դային օգնութիւն քրիստոնէից և առ փրկել յայլազգեաց զսուրբ քաղաքն Երուսաղէմ և ազատել ի Տաճկաց զսուրբ զերեզմանն աստուածընկալ, արք փառաւորք և թագաւորազունք, հաւատով և ամենայն աստուածապաշտութեամբ զարդարեալք և էին սնեալք ի գործս բարութեան,—զրում է առաջին խաչակիրների մասին Ս. Ուսնայեցի (տե՛ս Մ. Ուսնայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1888, էջ 254): Իր հերթին Ս. Անեցի էլ զրում է, թե «Հոռմեացիք էին ընդ թիրակ ի կողմանս Ասիացոց խնդրել զքէն վրիժուց տառապանաց քրիստոնէից՝ ի Սկիւթացոց և ի Պարսից հանդերձ Տաճկաստանու» (Մամվել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 120):

7 Н. К. Орловская, Грузия в литературах Западной Европы XVII—XVIII веков, Тбилиси, 1965.

8 Ան, Հայոց պատմություն, հ. 3, Երևան, 1946:

9 Հ. Ս. Անասյան, 17-րդ դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961:

10 Աշ. Հովհաննիսյան, Գրվագներ հայ ազատագրական մարի պատմության, հ. 2, Երևան, 1959:

11 Մ. Կ. Զուլպյան, Արևմտյան Հայաստանը XVI—XVIII դդ., Երևան, 1980:

ընթացքում խաչակիր ասպետները ոչ միայն ոչնչով չնպաստեցին Կիլիկիայի հայկական պետության ամրապնդմանը, այլև ընդհակառակը՝ ամեն կերպ նպաստեցին նրա թուլացմանն ու քաղաքական անկմանը: Իսկ մինչև այդ կաթոլիկ Եվրոպայի երկրները, մասնավորապես Վենետիկն ու Զենովան, Կիլիկիայի վրայով Արևելքի երկրների հետ ծավալեցին լայն առևտրական գործարքներ: Դեռևս 1201 թ. նրանք հայտնի թագավոր Լևոն 2-րդ-ից (1198—1219) կորզեցին առևտրական մի պայմանագիր, որն իրենց վաճառականներին ապահովում էր բացառիկ արտոնյալ վիճակ: Ես իտալական վաճառականներին արտոնում եմ, գրում էր Լևոն 2-րդ-ը իր շնորհագրում, — որ նրանք իրենց գույքերով ու ապրանքներով իմ ամբողջ թագավորության մեջ, քաղաքներում թե գյուղերում, երկրի ողջ տարածքում երթևեկեն անվտանգ... զան ու վերադառնան, ազատ ու հանգիստ գնեն ու վաճառեն առանց որևէ մի հարկադրանքի, հարկերի, առևտրատուրքերի ու մաքսերի զանձման»¹⁴: Այդ արտոնությունների շարանը գնալով աճեց և, փաստորեն, Զենովայի ու Վենետիկի համայնքները դարձան մի տեսակ պետություն պետության մեջ: Այս բոլորը տեղի ունեցավ այն բանից հետո, երբ Կիլիկիայում հաստատվեց հայկական թագավորությունը: Ծիշտ չէ, անշուշտ, Վ. Հեյդի այն ենթադրությունը, թե Վենետիկն ու Զենովան կարող է առևտրական արտոնություններ ունեցած լինելն մինչև հայկական թագավորության հիմնադրումը Կիլիկիայում: Վ. Հեյդի այս ենթադրությունը հիմնված է այն փաստի վրա, որ XII դարում Կիլիկիան անվանապես համարվում էր Բյուզանդիայի նահանգներից մեկը, իսկ վերջինս այս երկու քաղաք-պետությունների հետ կնքել էր առևտրական պայմանագիր¹⁵: Վ. Հեյդը հաշվի չի առնում, որ այդ ժամանակ (1132 թ.) Դաշտային Կիլիկիան (Ադանան, Տարսուսը, Մամեստիան) գտնվում էր սելջուկների գերիշխանության տակ:

Եաչակրաց առաջին իսկ արշավանքից հետո Բյուզանդիայի՝ որպես Եվրոպայի ու Արևելքի միջև միջնորդ պետության դերը խիստ նվազեց: Այժմ արդեն առևտուրն Արևելքի հետ կատարվում էր սիրիական նավահանգիստների միջոցով: Սելջուկների արշավանքներից հետո խիստ անկում էին ապրել այն առևտրական ուղիները, որոնք անցնում էին Սև ծովի ու Հայաստանի վաճառաշահ կենտրոնների (Տրապիզոն, Արծն, Կարս, Անի և այլն) միջով: Առևտրական նոր ուղիներն անցնում էին Կիլիկիայով ու մտնում Փոքր Ասիայի այն տարածքը, որը զավթված

էր սելջուկների կողմից: Հենվելով Իբն Բիբայի ու այլ աղբյուրների վրա, Գ. Միքայելյանը ցույց է տվել, որ հաճախ սելջուկների ու Կիլիկյան հայկական պետության միջև ռազմական ընդհարումների գլխավոր պատճառը առևտրական ուղիների զավթման ձգտումն է: սելջուկների կողմից¹⁶: «Մուսուլմանական, հունական և հայկական աղբյուրները արժեքավոր վկայություններ են հաղորդում Փոքր Ասիայում կարավանային ուղիների, առևտրական կենտրոնների ու նավահանգիստների զավթելու նպատակով Ռումի սուլթանների նվաճողական արշավանքների մասին»¹⁷, — կարդում ենք դարձյալ Գ. Միքայելյանի մոտ:

Այդ պատերազմների անմիջական արդյունքը եղավ այն, որ սելջուկները 1207 թ. գրավելով Ատտալիան, իսկ 1214 թ. Սինոպը, գուրսեկան Միջերկրական ու Սև ծովերը և դրանով իսկ սկսեցին իրենց ձեռքում պահել կարավանային առևտրի կարևորագույն ուղիների մի մասը: Այսուհանդերձ, Արևելքի հետ Եվրոպայի առևտուրը հիմնականում XII ու հետագա դարերում կատարվում էր Կիլիկիայի տարածքի միջոցով: «Առևտրի տեսանկյունից, — գրում է Վ. Հեյդը, — Հայկական թագավորությունը գտնվում էր առանձնահատուկ նպաստավոր պայմաններում: Նրա ամենամեծ տարածման ժամանակ, այսինքն Լևոն 2-րդի իշխանության օրերին, նա գրավում էր մի զգալի ծովափ, որն ընդգրկում էր արևելքում Ալեքսանդրեթի ծոցից մինչև Ատտալիայի ծովախորշին մի քանի մղոն չհասած տարածքը»¹⁸: Կիլիկիայի վրայով դեպի Եվրոպա էին առաքվում հնդկական, շինական և պարսկական ընտիր գործվածքեղեն, Միջագետքի, Փոքր Ասիայի և Կիլիկյան Հայաստանի արհեստագործական նուրբ արտադրությունն ու գյուղատնտեսական մթերքները: Հատկապես XIII դ. երկրորդ կեսից սկսած միջազգային առևտրում մեծ դեր սկսեց խաղալ Այաս նավահանգիստը: Այն հանգամանքը, որ կաթոլիկ Եվրոպայի հետ Կիլիկիայի թագավորների կնքած առևտրական պայմանագրերում Այաս նավահանգստի անունը առաջին անգամ հիշատակվում է 1261 թ., Ալ. Հովհաննիսյանին թույլ է տվել եզրակացնելու, որ Այասը «խոշոր նշանակություն ստացավ ոչ թե խաչակիր թագավորությունների կամ լատինական իմպերիայի ժամանակ, այլ դրանց անկումից հետո»¹⁹: Այստեղից էլ, բնականաբար, բխում է, որ անհիմն են կվրոպացի բուրժուական պաշտամբանների այն պնդումները, թե Եվրոպայի հետ կիլիկյան հայոց թագավորների կնքած առևտրական

¹⁴ V. Langlois. Le trésor des chartes d'Arménie, Venise, 1863, p. 107.

¹⁵ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս W. Heyd. Histoire du commerce du Levant. t. I, Paris, 1965, p. 367—373.

¹⁶ Նույն տեղում, էջ 369:

¹⁷ Գ. Գ. Микаелян, էջ 191:

¹⁸ W. Heyd, 1, էջ 367:

¹⁹ Ալ. Հովհաննիսյան, Դրվագներ..., հ. 1, Երևան, 1957, էջ 59:

պայմանագրերը, գործարքները մեծապես նպաստել են տեղական առևտրին ու արդյունաբերությանը, բաղաձայնի զարգացմանը:

Եվրոպայի հետ Կիլիկիայի հայոց թագավորության ունեցած տրնտեսական, բաղաձայնի և այլ բնույթի մի քանի հարյուրամյակ տևած այս առնչություններն արտացոլվել են եվրոպական աղբյուրներում: Դրանք Կիլիկիայի հայոց պատմության մասնագետներից մեկը՝ Ս. Վ. Բոռնազյանը, բաժանում է մի քանի խմբերի: «Առաջին խմբին են պատկանում,—գրում է նա,—արևմտաեվրոպական երկրների, Միդիայի խաչակիր պետությունների, արաբական և բյուզանդական հեղինակների մատենագրական և իրավաբանական երկերը: Երկրորդ խմբին են պատկանում՝ եվրոպական մի շարք երկրների պետական արխիվներում պահպանված արխիվային նյութերը, Կիլիկիայի հայկական պետության արքունիքի կամ նոտարական գրասենյակների կողմից բաց թողնված ակտերը, կամ թե պապի, արևմտաեվրոպական պետությունների, հարևան արաբական պետությունների և Կիլիկիայի հայկական թագավորության միջև եղած թղթակցությունները... պետական ատյանի կողմից բաց թողնված առևտրական շնորհագրերի և պայմանագրերի, հողային նվիրատվությունների և հաշտության պայմանագրերի լատիներեն, ֆրանսերեն, արաբերեն և հայերեն լեզուներով գրված բնագրերն ու պատճենները»²⁰: Արխիվային նյութերի զգալի մասը պահպանվել է Զենովայի, Վենետիկի, Միլանի, Տուրինի, Մալթայի, Բեռլինի, Փարիզի, Լոնդոնի, Նեապոլի, Վատիկանի և Մադրիդի պետական արխիվներում, որոնց ընդհանուր քանակն ըստ Վ. Լանգլուայի և էդ. Գյուլտրիեի հազորգումների, հասնում է 351-ի:

Այս բոլոր նյութերի զգալի մասը, շնորհիվ Վ. Լանգլուայի²¹, էդ. Գյուլտրիեի²², Վ. Հեյդի²³, Վ. Հ. Ռուզոտ—Կոլլենբերգի²⁴, Ռ. Գրուսսեի²⁵,

²⁰ Ս. Վ. Բոռնազյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան պետությունում, Երևան, 1973, էջ 23:

²¹ V. Langlois, Le trésor des chartes d'Arménie, Venise, 1863, Essai historique et critique sur la constitution sociale et politique de l'Arménie. St. Pétersbourg, 1860, Inscriptions grecques, romaines, byzantines et arméniennes de la Cilicie. Paris, 1867; Voyage dans la Cilicie. Paris, 1861.

²² Ed. Dulaurier, Etude sur l'organisation politique, religieuse et administrative du royaume de la petite Arménie.—Journal Asiatique, 1861, 5e série, t. XVII, XVIII.

²³ W. Heyd, Histoire du commerce du Levant. T. I—II.

²⁴ W. H. Rudt-Collenberg, The Rupenides, Hethumids and Lusignans, Paris, 1963.

²⁵ R. Grousset, Histoire des croisades et du royaume franc de Jérusalem. Vol. I—III, Paris, 1936.

Ֆ. Տուրնեբրիգի²⁶ ու այլոց աշխատությունների, մտել է գիտական շքեղանառության մեջ: Կիլիկիայի բաղաձայնի պատմության տեսանկյունից հիշարժան են խաչակրաց արշավանքներին նվիրված ժողովածուները²⁷, ինչպես նաև Հովհան Դարդելի «Ժամանակագրությունը»²⁸: Վերջինս եղել է Առն 6-րդ թագավորի խորհրդականն ու խոստովանահայրը ու համանաբար իր «Ժամանակագրությունը», որն ընդգրկում է Կիլիկիայի ավելի քան մի հիսնամյա բաղաձայնի պատմությունը, գրել է հենց թագավորի թելադրությամբ Կահիրեում, գերեզմարության ընթացքում: Վերջապես, որոշ հետաքրքրություն է ներկայացնում նաև 1211—1212 թթ. Կիլիկիա այցելած Վիլլերբանդ Օլդենբուրգցու՝ ավստրիական գրքի դեսպանի, «Ուղեգրությունը»²⁹:

Եվրոպական երկրների ուղադրությունը դեպի Արևելք խիստ մեծացավ XIII դարում՝ կապված մոնղոլական արշավանքի հետ: Եվրոպայում վաղուց էր տարածված մի խուլ լուր, որ իբր հեռավոր Ասիայում գոյություն ունի քրիստոնյա աստվածապետական մի պետություն ումն Հովհաննես երեցի գլխավորությամբ. 1165 թ. նույնիսկ լատիներեն լեզվով հրատարակ հանվեց ձեռագիր մի գրքուկ, ուր Հովհաննես երեցի անունից եվրոպայի քրիստոնյա պետություններին համագործակցելու կոչ էր արվում: Հոռոմի պապն ու ֆրանսիական թագավորներն Արևելք ուղարկեցին Պլանտ Կարպինին (1246 թ.), Լոնժյումեին (1240 թ.), Ռուբրոկին ու այլոց՝ Արևելքի քրիստոնյա այդ պետության մասին ստույգ տեղեկություններ հավաքելու նպատակով: Իսկ ինչ էր իրականում այդ «քրիստոնյա պետությունը» Արևելքում: Լոկ մի առասպել, որի հիմքում «...ընկած էր այն իրողությունը, որ հեռու Արևելքում միսիոներական եռանդուն աշխատանք էին կատարում սիրիացի նեստորականները, որոնց, ինչպես նշում են եվրոպական հետազոտողները, հաջողվել էր XI դարի առաջին կեսերին քրիստոնեության առաջալ դարձնել Զինգիդ խանի նախորդներից մեկին՝ Ունչխանին: Հովհան անունը Ունչխանի քրիստոնեական անունն էր»³⁰:

²⁶ F. Tourneboize, Histoire politique et religieuse de l'Arménie, Paris, 1900.

²⁷ Recueil des historiens des croisades. T. I, Documents arméniens. T. II, Documents latins et français relatifs à l'Arménie. T. III, Recueil des historiens des croisades. Historiens occidentaux, Paris, 1906.

²⁸ J. Dardel, Chronique d'Arménie.—Recueil des historiens des croisades I, Paris, 1906. Տե՛ս նաև Հովհաննես Դարդելի հայերեն հրատարակությունը՝ Ժամանակագրություն հայոց, ՍՊԲ., 1891:

²⁹ Willebrand d'Oldenbourg, Itinéraire. Hambourg, 1959.

³⁰ Աշ. Հովհաննեսյան, Դրվագներ..., գիրք առաջին, էջ 317:

Եվրոպացիներին նաև հայտնի էր դարձել, որ մոնղոլները կատարելի ատելություններ են լցված մուսուլմանական աշխարհի նկատմամբ ու հովանավորում են քրիստոնյաներին: Նման լուրեր տարածողները հենց իրենք՝ մոնղոլներն էին, որոնք հետամուտ էին քաղաքական նպատակների: Խոսելով մոնղոլների հետախուզական արշավանքների մասին, Կիրակոս Գանձակեցիին գրում է, թե «համբավ ստույգեան զայր զճնոցանէ (ընդգծումը մերն է—Մ. Զ.), թե մոզք են և քրիստոնեայ հատուով և նշանագործք, և եկեալ են ի վրէժխնդրութիւն քրիստոնէից որ ի բնութեան Տաճկաց. և ասէին՝ թե ունին եկեղեցի վրանեայ և խաչ սքանչելագործ... և այսպիսի ստույգեան համբաւոր լցաւ աշխարհս մեր»³¹: Սա մի միջոց էր շեղութեամբ Արևելքի քրիստոնյա պետություններին, հպատակեցնելու նրանց ու նրանց զինական օգնությամբ հարվածելու մուսուլմանական աշխարհին:

Պլանո Կարպինին, Ֆրանցիսկյան այդ հոգևորականը, Արևելք ուղարկվեց 1246 թ. Լիոնի եկեղեցական ժողովի որոշմամբ, պապ Իննոկենտիոս 4-րդի կողմից: Նա թողել է «Մոնղոլների պատմություն» վերնագրված աշխատությունը³², որը հետաքրքիր տեղեկություններ է պարունակում մոնղոլների կենցաղի, սովորույթների, ռազմական արվեստի, ինչպես նաև XIII դարի 20—40-ական թթ. Վրաստանի քաղաքական պատմության մի քանի հարցերի շուրջ: Պլանո Կարպինին նկարագրածի անմիջական ականատեսն է. «...քանզի մենք եղանք նրանց մեջ,—գրում է նա,—և նրանց հետ (իմա՝ մոնղոլները—Մ. Զ.) ավելի քան մի տարի ու շորս ամիս... նրանց մասին մենք իմացանք նաև նրանց մոտ գերություն մեջ գտնվող արժանահավատ քրիստոնյաներից»³³:

Մոնղոլների ու նրանց հպատակեցած երկրների մասին հավաստի ու հարուստ տեղեկություններ կան Վիլհելմ Ռուբրուկի³⁴ (մոտ 1215—

³¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1909, էջ 100 և հոս.

³² Մենք օգտագործել ենք Ֆրանսերեն վերջին թարգմանությունը, տե՛ս Jean de Plan Carpin. Histoire des mongols, traduit et annoté par Dom Jean Becquet et par Louis Hambis, Paris, 1965.

³³ Նույն տեղում, էջ 24:

³⁴ Մենք օգտագործել ենք ինչպես Pierre Bergeron-ի, այնպես էլ 1877 թ. Փարիզում լույս տեսած Լուի դե Բակերի հրատարակած տեքստերը, տե՛ս Voyages faits principalement en Asie dans les XII, XIII, XIV et XV siècles par Benjamin Tudel, Jean de Plan-Carpin, N. Ascelin, Guillaume de Rubruquis, Marc Paul vénitien, Haiton, Jean de Mandeville et Ambroise Contarini par Pierre Bergeron, T. I, Paris, 1735; Guillaume de Rubruquis, ambassadeur de Saint Louis en Orient. Récit de son voyage, traduit de l'origine latin et annoté par Louis Bacher. Paris, 1877.

1270) գրվածքում: Նա Ֆրանցիսկյան միաբան էր Ֆլանդրիայից. ծնվել է Ֆրանսիայի ծայր հյուսիսում գտնվող Ռուբրուկ գյուղում, այստեղից էլ նրա մականունը: 1253—1255 թթ. ընթացքում նա կուրդովիկոս 9-րդի կողմից ուղարկվեց մոնղոլական մեծ խան Մանգուի մոտ: Ռուբրուկն իր ուղևորությունը սկսում է Կոստանդնուպոլսից, որտեղից հեռանում է 1253 թ. մայիսի 7-ին: Ապա Սև ծովի վրայով ուղևորվելով դեպի Սուդայա (Սուտակ, Ղրիմում), այնտեղից էլ Մատրիգայի (Ազովի մոտ), Տանայիսի (Դոնի), Իտիլի (Վոլգայի) վրայով շարժվում է Մեծ խանի նստավայր հանդիսացող Կարակորում, ուր հասնում է 1253 թ. դեկտեմբերի 27-ին ու այնտեղ մնում մինչև 1254 թ. հուլիսի 10-ը: Մոնղոլիայից Ռուբրուկը վերադառնում է Գերհնդի. Շամախու, Մուղանի դաշտավայրի վրայով ու մտնում է Հայաստան: Շարունակելով իր ուղևորությունը, նա Արաքսի երկայնքով հասնում է Անի, այնուհետև՝ Կարին և Երզնկա, ապա՝ Կիլիկիա, Կիպրոս, Անտիոք և Տրիպոլի, որտեղից էլ 1255 թ. օգոստոսի 15-ին կուրդովիկոս 9-րդին հաղվեալություն է հղում ուղևորության ու իր վրա դրված հանձնարարության կատարման մասին:

Վ. Ռուբրուկը մեզ տվյալներ է հաղորդում Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի ժողովուրդների վերաբերյալ, խոսում է Թավրիզի, Շամախու, Թիֆլիսի, Նախիջևանի, Կարինի մասին, հատուկ նշում, որ «Դաշանց թղթի» գաղափարը մեծապես տարածված էր հայերի միջավայրում: Վ. Ռուբրուկի շնորհիվ մենք տեղեկանում ենք, որ մինչև Հեթում թագավորի Մոնղոլիա մեկնելը հայերն ասորիների հետ միասին վաղուց մոնղոլների մոտ միսիոներական գործունեություն էին ծավալել:

XIII դարում Արևելքում եվրոպացիների հետաքրքրության հիմնական թեման ոչ միայն քաղաքական էր (մոնղոլների հետ դաշինք կրելու ձգտումը), այլև առևտրական, ինչպես նախորդ դարում: Դրա փայլուն վկայություններից է Մարկո Պոլոյի ուղևորությունը Մոնղոլիա XIII դարի 60-ական թվականներին: Երբ Պոլո եղբայրները ձեռնարկեցին իրենց առաջին ուղևորությունը Մոնղոլիա, Վենետիկը գտնվում էր ծաղկման գագաթնակետում և իր ձեռքում էր կենտրոնացրել Արևելքի հետ կատարվող առևտրի զգալի մասը: Սակայն շուտով 1261 թ., երբ Պոլո եղբայրները գտնվում էին Վոլգայի ափին, Վենետիկի հավերժ ախոյան Ջենովայի օգնությամբ Անգելոս Պալեոլոգը տապալեց Լատինական կայսրությունն ու վերականգնեց բյուզանդականը: Ջենովացիներն Արևելքում գրավեցին վենետիկցիների տեղը: 1298 թ. Գուրգուլայի ճակատամարտում, որին մասնակցում էր նաև Մարկո Պոլոն, Վենետիկը

ժամեր պարտութիւն կրեց Զենովայից, որի շնորհիւ վերջինս Միշերկրականում հաստատեց իր գերիշխանութիւնը ընդհուպ մինչև 1380 թ., երբ վճռական հարված ստացավ Վենետիկից: Այսուհանդերձ Մարկո Պոլոն Հեռավոր արևելք կատարած ուղևորութեամբ մեծագույն ծառայութիւն մատուցեց իր հայրենիք Վենետիկին և ողջ Արևմուտքին՝ եվրոպական առևտրականների առաջ բացելով Արևելքի առասպելական դռները: «Մարկո Պոլոյի գիրքը,— գրում է Վ. Շկլովսկին,— գերազանցում է իր ժամանակի ողջ եվրոպական գրականութեանը իր հստակութեամբ, որոշակիութեամբ, հզոր գրելաոճով և նյութերի առատութեամբ: Զմոռանանք, որ այս աշխատանքում փորձ է արված նկարագրել մի երկիր, որը տարածվում է Սառուցյալ օվկիանոսից մինչև հասարակած գոտին, Վենետիկից մինչև Յանցզիի գետաբերանը»³⁵:

Մարկո Պոլոն (1245—1325 թթ.) ծնվել է Վենետիկի Ռիալտո կղզում: Նիկոլա Պոլոյի որդի Մարկո Պոլոն Արևելք կատարած երկրորդ ուղևորութեան ընթացքում միանում է իր առևտրական եղբայրներին, ծառայութեան մտնում մոնղոլական մեծ խան Խուբիլայի մոտ, շուրջ տասնյոթ տարի վարում բազմաթիվ պետական բարձր պաշտոններ, որից հետո վերադառնում է հայրենիք:

Վենետիկցիների ուղևորութիւնը սկսվում է Կիլիկիայի Աչաս նավահանգստից և շարունակվում է Հայաստանի վրայով: Մարկո Պոլոն իր «Ուղեգրութեան» մեջ մեզ հաղորդում է արժեքավոր վկայութիւններ՝ Կիլիկիայի, որին նա անվանում է Փոքր Հայք, Մեծ Հայքի, Քավրիզի և Հայաստանի հարակից այլ շրջանների վերաբերյալ: Մարկո Պոլոն իբրև ջերմեռանդ կաթոլիկ ցավով արձանագրում է, որ Կիլիկիայում հաչերը, չնայած քրիստոնյաներ են, բայց նրանց հավատը «այնպես չէ, ինչպես հոռմեացիների մոտ»: Նա մնում է, նախ և առաջ, առևտրական և, որպես կանոն, խոսելով իր այցելած քաղաքների մասին, նշում է, որ «բնակիչները առևտրականներ են» և կամ թե «քիչ են ունակ առևտրին»: Նրա աշխատութեան Հայաստանին վերաբերող նյութերը հիմնականում թարգմանված են Հովհ. Հակոբյանի կողմից³⁶:

Մարկո Պոլոյից մի քանի տարի անց, մոտավորապես 1318 թ. Արևելք ու Մոնղոլիա ուղևորութիւն կատարեց Օդերիկ Ուզինացի հոգևորականը, իսկ 1332 թ.՝ ժան դը Մանդևիլը: Այս երկու հեղինակների թողած ուղեգրութիւնները հար և նման են իրար ու, հավանաբար, վերջինն իր նյութերի մեծ մասն արտագրել է նախորդից: Երկուսի մոտ էլ

առասպելախառն ու անարժանահավատ տեղեկութիւնները զգալի տեղ են գրավում: Ժան դը Մանդևիլի, ինչպես նաև հրեա Բենիամին դե Տյուդորի, Ն. Ասցելինի ուղեգրութիւնները հրատարակված են Պիեռ Բերտերոնի ժողովածուի³⁷ մեջ:

1330 թ. դեպի Արևելք ու Մոնղոլիա ուղևորութիւն է կատարում նաև Վիլհելմ Բուլդեֆելը, որը Բենեդիկտոս 12-րդ պապին է բերում 1328 թ. մեծ խան Խուբիլայի բարյացակամ ոգով գրած նամակները: Այս ուղեգրութիւնը հետաքրքիր է Մոնղոլիայի ու Արևմտյան Եվրոպայի քաղաքական պատմութեան առնչութեան տեսանկյունից: Հայերի մասին տեղեկութիւնները համարյա բացակայում են (հեղինակը Մոնղոլիա է ուղևորվել Արաբիայի վրայով)³⁸: Ի դեպ Հոռմի պապերի հետ մոնղոլական խաների ունեցած գրավոր բանավարութիւնների մասին եղած վկայութիւնները դարձյալ բերված են Պիեռ Բերտերոնի³⁹ մատնանշված աշխատութեան մեջ:

Մոնղոլական կայսրութեան ժամանակաշրջանի պատմութեան հարցերին է նվիրված հայ պատմիչ Հեթումի «Արևելքի երկրների պատմութեան ծաղկաբաղ» խորագրով աշխատութիւնը, որը, ուսումնասիրողների համընդհանուր կարծիքով, լավագույնն է մոնղոլներին նվիրված եվրոպական աղբյուրների մեջ: «Նրա երկի կարևոր առանձնահատկութիւնն այն է,— գրում է Լ. Հ. Բարայանը,— որ այն հարցերի ավելի լայն շրջանակ է ընդգրկում, ավելի խորն է բացահայտում համաշխարհային թատերաբեմում մոնղոլ նվաճողների հանդես գալու նախադրյալները, քան այդ արել են Կարպինին, Ռուբրուկը, Ասցելինը և ուրիշները»⁴⁰:

Հեթում պատմիչի այս աշխատութիւնը, ինչպես ճիշտ նկատել է Աշ. Հովհաննիսյանը, «...խաշակրաց նոր արշավանքի ոսգմաքաղաքական մի ծրագիր էր»⁴¹ և սոսկ մոնղոլների պատմութիւնը չէ, այլ կերպ ասած՝ հայոց Հեթում արքայի գարմիկ պատմիչը իր աշխատութիւնը գրելիս որոշակի քաղաքական նպատակներ է հետապնդել: 1842 թ. Հեթում պատմիչի այս աշխատութիւնը լատիներենից հայերեն է թարգմանել Մ. Ավգերյանը և հրատարակել Վենետիկում⁴²:

37 Pierre Bergeron, էջ 54.

38 Նույն տեղում:

39 Նույն տեղում, գլ. 10, էջ 61—65:

40 Լ. Հ. Բարայան, Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրութեան (9—13-րդ դարեր), Երևան, 1981, էջ 341:

41 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ..., հ. 1, էջ 175:

42 Հեթում պատմիչ թարգմաց, Վենետիկ, 1842:

35 Victor Chklovski. La voyage de Marco Polo. Paris, 1948, p. 45.

36 Հովհ. Հակոբյան, Ուղեգրութիւններ, հ. Ա, էջ 37—64:

XIV դարի վերջին և XV դարի սկզբին, Կիլիկիայի հայկական պետության անկումից բիշ անց Կիլիկիա ու նրա հարակից շրջաններն է այցելում Ֆրանսիայի Ֆիլիպ Բարի թագավորի խորհրդատու Բերտրանդոն դե լա Բրոկիերը⁴³։ Իր ուղեգրության մեջ, որը վերնագրված է «Անդրբժույցի ուղեգրություն», Բերտրանդոն դե լա Բրոկիերը արժեքավոր վկայություններ է հաղորդում Կիլիկիայի քաղաքական կացության ու նրա բնակչության իրավազուրկ վիճակի մասին։ Այնտեղ խոսվում է այն մասին, թե ինչպես Ռամազան-օղլու, Զուլքառար-օղլու և Կարաման-օղլու թուրքմենական ցեղերը տեր ու տնօրինություն էին անում Կիլիկիայի տարբեր մասերում ու նրա հարակից շրջաններում։ Գրավելով Կիլիկիայի մեծագույն մասը ու անվերջ պայքարելով Եգիպտոսի սուլթանների ռանձգությունների դեմ, թուրքմեն տիրակալները կարողացան երկրամասն իրենց իշխանության տակ պահել ընդհուպ մինչև 1516 թ., երբ Կիլիկիան ընկավ օսմանյան տիրապետության ներքո։ Թուրքմեն տիրակալներն այդ ժամանակ իշխում էին նաև Մեծ Հայքում և եվրոպացի ուղեգիրները երկիրն անվանում էին «Թուրքմանիա»։ Նույն բանով է Կիլիկիան կոչում նաև Բերտրանդոն դե լա Բրոկիերը։ «Երբ ես մեկնեցի Սիրիայից,— գրում է նա,— ես մուտք գործեցի թուրքմենների երկիրը, որին մենք անվանում ենք Հայաստան (խոսքը Կիլիկիայի մասին է—Մ. Զ.)»։ Ուղեգրի վկայություններից երևում է նաև, որ Կիլիկիան հայկական պետության անկումից հետո էլ քաղաքային կյանքն ու առևտուրը դեռևս լրիվ անկում չէին ապրել։ Այսպես, խոսելով Ադանայի մասին, նա գրում է. «Ադանան մի շատ լավ վաճառականական քաղաք է, որը ամուր պաշտպանված է պարիսպներով»⁴⁴։

Հեթում պատմիչից հետո ընդհուպ մինչև XV դարի սկզբները, եվրոպական պատմության մեջ աչքի ընկնող գրական հուշարձան չի պահպանվել։ Միայն Լենկ-Քիմուրի ժամանակաշրջանն է, որ արտացոլվել է Ռույ Գոնսալես դի Կլավիխոյի «Ուղեգրություն» մեջ։

Այսուհանդերձ, պատմական արժեքից զուրկ չեն գերմանացի Հանս Շիլդերգերի⁴⁵ հաղորդած վկայությունները Հայաստանի և հայերի մա-

սին։ 1394 թվականին ծառայության մեջ գտնվելով հունգարական Սիգիզմունդ թագավորի մոտ, նա Նիկոպոլիսի ճակատամարտում գերի է ընկնում թուրքերի ձեռքն ու սուլթան Բայազետ 1-ինի կարգադրությամբ ուղարկվում է Փոքր Ասիա։ 1402 թվականին Անկարայի ճակատամարտում գերի է ընկնում Քիմուրի ձեռքը և այնուհետև մասնակցում նրա արշավանքներին։ 1417 թվականին նա փախչում է գերությունից ու վերադառնում հայրենիք։ Լինելով անգրագետ, նա հետագայում թելադրել է իր տեսածն ու վերապրածը։ Նրա միամիտ նկարագրությունները պահանջում են խիստ քննադատական մոտեցում ունենալ և առասպելական ու հաճախ աղավաղված նյութերից բաղել ճշմարիտն ու պատմականը։

Որոշ հետաքրքրություն են ներկայացնում նաև իտալացի ֆրանցիսկյան Օդորիկոս Պորզենոնցու 1316 թ. Կոստանդնուպոլիս և Տրապիզոնի վրայով Հայաստան կատարած ուղևորության մասին վկայությունները⁴⁶։ XIX դարի վերջին Բալկաններում թուրքերի ունեցած ռազմական հաջողությունները մեծապես վնասել էին Եվրոպայի և Արևելքի միջև կատարվող առևտրին։ Եվրոպական երկրների պարբերաբար կազմակերպած «խաչակրաց» արշավանքներն անվերջ պարտություն էին կրում թուրքերից։ Բալկանյան երկրների դաշինքին հատկապես մեծ հարված հասցրեց սուլթան Բայազետ Յրլզըրըմը՝ 1396 թ. Դանուբի ափին կայացած Նիկոպոլիսի ճակատամարտում։ Ահա այս ժամանակ Արևելքում հանդես եկած նոր բռնակալ Քիմուրը, որը 1402 թ. Անկարայի ճակատամարտում գլխովին ջախջախել էր թուրքական բանակն ու գերի վերցրել Բայազետ սուլթանին, եվրոպացիների կողմից դիտվում էր որպես հնարավոր դաշնակից գլխավոր թշնամու՝ օսմանյան թուրքիայի դեմ։ Ռույ Գոնսալես դի Կլավիխոն՝ կաստիլիացի այդ ազնվականը, ծնվել է Մադրիդում։ Մենդյան ստույգ թվականը հայտնի չէ. մահացել է 1412 թ.։ 1403 թ. Կաստիլիայից երկրորդ դեսպանությունն ուղարկվեց Քիմուրի մոտ, որին մասնակցում էին Ալֆոնսո Պաեսսա դե Սանկտա Մարիան, Կլավիխոն և Գոմես դե Սալասարը, որոնք և 1406 թ. վերադարձան Կաստիլիա։

Կլավիխոն թողել է այդ ճանապարհորդության օրագիրը⁴⁷։ Ուղեգիրը 1403 թ. մայիսի 21-ին դուրս է գալիս Կադիսից և Միջերկրական ու

մանությունը (Buchan Telfer. The Bondage and Travels of John Shiltberger. London, 1878).

⁴⁶ Odoric de Pordenone. Les voyages en Asie au XIV siècle. Paris, 1891.

⁴⁷ Օրագիրն առաջին անգամ լույս է տեսնում 1582 թ. Գոնսալես Արզոլեդի Մոլիսայի ջանքերով, հետևյալ վերնագրով՝ «Vida y Hasanas de Grand Tamerlan... escrita por Ruy Gonzalez de Glavijo... con un itinerario de la succedito en la embajada. Sevilla, 1582. 1782 թ. այս գիրքը վերահրատարակվում է, որից և կա-

⁴³ La voyage d'outremer de Bertrandon de la Broquière, publié et annoté par Charles Schéfer, Paris, 1892.

⁴⁴ Նույն տեղում, էջ 40։

⁴⁵ 2. Շիլդերգերի ուղեգրությունը դեռևս XV դարում մի քանի անգամ հրատարակվել է Գերմանիայում։ 1852 թ. Մյունխենում Կ. Ֆ. Նոյմանը հրատարակում է քրեական տեքստը՝ «Reisen in Europa, Asia und Africa von 1394 bis 1427» վերնագրով։ Ռուսերեն թարգմանությունը հրատարակել է Լ. Ֆ. Բրուսը (Путешествие Ивана Шильдбергера по Европе, Азии и Африке с 1394 по 1427 гг. — Записки Новороссийского университета, т. I, Одесса, 1867)։ Կա անգլերեն թարգ-

Սև ծովերի վրայով ուղևորվում է Կոստանդնուպոլիս, Սինոպ և Տրապիզոն: Այստեղից նա շարունակում է իր ճանապարհը դեպի Երզնկա, էրզրում (Arseron), Ալաշկերտ, Իզդիր, Բայազետ, Խոյ, Թավրիզ, Սուլթանիե, Թեհրան և 1404 թ. սեպտեմբերի 8-ին հասնում է Սամարղանդ, ուր հատուկ ընդունելության է արժանանում Թիմուրի կողմից ու այնտեղ մնում մինչև նոյեմբերի 21-ը: Վերադարձին Կլավիխոն, անցնելով Իրանի վրայով, այցելում է Անի, Կարս, Սպեր, Տրապիզոն և այլ վայրեր ու քաղաքներ:

Հիշարժան են Մակվում պահպանված հայկական իշխանություններից մեկի մասին Կլավիխոյի հաղորդած վկայությունները: «Կիրակի, հունիսի 1-ին (1404 թ.), — գրում է Կլավիխոն, — մենք հասանք մի բերդ, որ կոչվում էր Մակու, և այդ վայրը պատկանում էր մի իշխանի, որ հռովմեական կաթոլիկ քրիստոնյա էր, բայց անունը նուրագրին էր, և այն զինվորները, որոնք պահպանում էին այս բերդը նույնպես պատկանում էին հռովմեական կաթոլիկ հավատին: Նրանք իրականում ազգությամբ հայ էին, խոսում էին հայերեն, բայց միևնույն ժամանակ հասկանում էին թուրքերեն և պարսկերեն: Մակվում Դոմինիկյան միաբանության մի վանք կա»⁴⁸:

1402 թվականին Անկարայի ճակատամարտը միայն ժամանակավորապես կանգնեցրեց թուրքերի հետագա առաջխաղացումը Բալկաններում ու հետաձգեց Բյուզանդիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլսի անկումը: XV դարի 40-ական թթ. օսմանցի թուրքերը վերսկսեցին իրենց զավթողական պատերազմները Եվրոպայի արևելքում: 1444 թ. սուլթան Մուրադ 2-րդը Վառնայի մոտ ջախջախեց լեհական ու հունգարական բանակները և գրավեց բալկանյան երկրների զգալի մասը, իսկ 1448 թ. Կոստոլոյի դաշտում պարտության մատնեց հունգարական վոյեվոդ Յանուշ Խունիատայի գլխավորությամբ արևելամեծքաղական երկրներից կազմված դաշնակից բանակը, որից հետո Մուրադ 2-րդի հաջորդ Մեհմեդ 2-րդին ուղին շեր մնում, քան առանց մեծ արգելքի 1453 թ. մայիսի 29-ին գրավել Կոստանդնուպոլիսը: Այս բոլոր քաղաքական իրադարձու-

թարվել է ուսերեն թարգմանությունը. Рюи Гонзалес до Клавихо. Дневник путешествия ко двору Тимура в Самарканд... подлинный текст с переводом и примечаниями. Сборник отделения русского яз. и словесности АН, т. XXVIII, № 1, СПб., 1871.

Կա նաև անգլերեն թարգմանությունը (Clements Markham. Narrative of embassy of... Clavijo to the court of Timour. London, 1859. Hakluyt series, t. XXVI. Guy de Strange — Clavijo embassy to Tamerlan. London, 1928.

⁴⁸ Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 113:

թյունները հսկայական վնաս պատճառեցին Եվրոպայի լեանտյան առևտրին: Ամենից շատ տուժեցին Վենետիկն ու Ջենովան: Այս երկու քաղաք-հանրապետություններն առևտրական խոշոր կենտրոններ ունեին Կոստանդնուպոլսի Պերա ու Ղալսթիա թաղամասերում և այստեղից էին կատարում Արևելքի հետ ողջ առևտուրը: Իտալիայի այս երկու հանրապետությունների համար կարևոր առևտրական կենտրոններ էին նաև Տրապիզոնն ու Կաֆան (Թեոդոսիան), որտեղից նրանք իրենց ապրանքները տեղափոխում էին Իրան, մասնավորապես Թավրիզ: Այնտեղից էլ ստանում էին Հնդկաստանի ապրանքները Հորմուզի վրայով ու տեղափոխում Եվրոպա: Սակայն շուտով թուրքերը գրավեցին սկզբում Տրապիզոնը (1461 թ.), իսկ այնուհետև՝ 1475 թ., Ղրիմի թերակղզին⁴⁹ ու Եվրոպայի առաջ փակեցին Արևելքի առևտրական ուղիները:

Այս բոլորը մասնավորապես Վենետիկին ստիպեցին դաշնակիցներ փնտրել Արևելքում, և այդպիսի դաշնակից գտնվեց՝ հանձինս ակկոյունլու թուրքմենների ականավոր տիրակալ Ուզուն Հասանի (1453—1477 թթ.): Վերջինս ոչ միայն սիրալիք ընդունեց Վենետիկի հանրապետության դեսպաններին, այլև, իր հերթին, բարեկամական դեսպանություններ ուղարկեց Եվրոպա: Ուզուն Հասանը Եվրոպայի հետ ունեցած իր բանավարություններում օգտագործում էր հայ զինվանագետներին, որոնցից մեկն էր Նախիջևանի շրջանից հայ խոջա Միրաքը՝ Ուզուն Հասանի «հավատարիմ ծառան ու ներկայացուցիչը»⁵⁰: Վենետիկի հանրապետության դեսպանները զրի են առել այն քաղաքական իրադարձությունները, որոնց ականատես են եղել իրենց ճանապարհորդությունների ընթացքում: Այդ գրառումները պատմական որոշակի արժեք են ներկայացնում: XV դարի 70-ական թթ., երբ ռազմական գործողություններ էին մղվում մի կողմից Ուզուն Հասանի զորքերի, մյուս կողմից՝ թուրքերի միջև, օսմանցիների բանակում էր գտնվում մի ուրիշ վենետիկցի՝ Ջիովաննի Մարիա Անջիոլելլոն, որի թողած պատմական վկայությունները նույնպես խիստ ուշագրավ են:

Կատերինո Ջենոն ամուսնացած էր Կալոյոաննես կայսեր՝ Վիոլետա թոռան հետ, հետևաբար, Ուզուն Հասանի կնոջ՝ Դեսպինայի, մոտիկ ազգականն էր: 1474 թ., վերադառնալով Վենետիկ, Ջենոն սենատին է

⁴⁹ Ղրիմի թերակղզում, ինչպես հայտնի է, XIII—XIV դդ. մեծ էր հայերի թիվը: Ջենովացիների հետ նրանք գտնվում էին մշտական առևտրական և այլ առևտրությունների մեջ: Այդ տեսակետից որոշակի գիտական արժեք է ներկայացնում Վ. Ա. Միրայևյանի «Հայ-իտալական առևտրություններ, շենոլական փաստաթղթերը զրիմահալերի մասին» գիրքը (Երևան, 1974 թ.):

⁵⁰ Ղ. Ալիշան, Հայ-վենետ, Վենետիկ, 1896, էջ 186—187:

հանձնում Արևելք կատարած ուղևորության մասին իր զեկուցագիրը⁵¹։ Գրանից պարզվում է, որ իտալական դեսպանների հետ բանակցությունների ընթացքում Ուզուն Հասանի հետ կայացել էր զինական դաշնակցություն, և որ գործող դաշնակից զորքերը պետք է հանդիպեին Կարամանիայում։ Սակայն այդ դաշինքին վիճակված չէր կյանքում իրականանալ, քանի որ 1473 թ. օգոստոսին Գերջանի ճակատամարտը ավարտվել էր հօգուտ թուրքերի ու գրանով իսկ կանխորոշել այդ դաշինքի հետագա ճակատագիրը։

Ջոզեֆո Բարբարոն ծնվել է Վենետիկում XV դարի սկզբին ու մահացել 1493 թ.։ Իր առևտրական գործարքների համար 1436—1452 թթ. ապրել է Տանայում (Ազով) ու մոտիկից ծանոթացել արևելյան ժողովուրդներին։ 1471 թ. Ջ. Բարբարոն մեկնել է Իրան՝ Կիպրոսի, Կիլիկիայի, Եփրատի վրայով դեպի Քավրիզ, Սուլթանիև և Իսպահան։ Վերադառնալիս նա կրկին եղել է Քավրիզում, Շամախիում, Գերբենդում, իսկ այնուհետև մեկնել է Մոսկվա և Լեհաստանի ու Գերմանիայի վրայով հասել հայրենիք⁵²։

Ջ. Բարբարոյի «Ուղեգրությունը» ներկայացնում է նրա «օրագրի» հետագա մշակումը։ Նա հանդես է գալիս մերթ որպես անմիջական ականատես, մերթ՝ որպես իր լսածների գրառող։ Բացի Կիլիկիայի մասին թողած հիշատակություններից, առավել արժեքավոր է Քավրիզից մինչև Գերբենդ ընկած տարածության նկարագրությունը։ Նա տալիս է աշխարհագրական միջավայրի, բնակչության թվական կազմի, սովորույթների ու բարքերի, քաղաքական պատմության վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ։ Գտնվելով Ուզուն Հասանի բանակում, նա մասնակցել է թուրքմենական տիրակալի՝ 1477 թ. Վրաստան կատարած արշավանքին և նկարագրել այն։

Ամբողջիտ Կոնտարինին Իրան ուղևորվեց Գերմանիայի, Լեհաստանի, Ղրիմի, Վրաստանի և Հայաստանի վրայով։ Բաթումից մինչև Քավրիզ, Կոնտարինիի ուղևորությունը տևում է 1474 թ. հունիսի 29-ից մինչև օգոստոսի 4-ը։ Իսպահանում Կոնտարինին հանդիպում է Ջ. Բարբարոյի հետ և նույնմթերի 4-ին երկուսով արժանանում են Ուզուն Հասանի

ընդունելությանը։ Կոնտարինին նպատակադրվել էր հայրենիք վերադառնալ նույն ճանապարհով, որով մեկնել է Իրան, սակայն Բաթումի մոտերքում տեղեկանալով թուրքերի կողմից Ղրիմի գրավման մասին (1475 թ.)։ ստիպված է լինում վերագառնալ Քիֆիս և Շամախու ու Գերբենդի վրայով շարժվել դեպի Աստրախան, այստեղից էլ Ռուսաստանի, Լեհաստանի, Գերմանիայի վրայով 1477 թ. ապրիլի 10-ին հասնում է Վենետիկ։

Ա. Կոնտարինիի «Ուղեգրությունը»⁵³ հար և նման Ջ. Բարբարոյի նկարագրածին, սակայն և այնպես տարբերվում է նրանից։ Բարբարոյի «Ուղեգրությունը», — գրում է Մ. Ա. Պոլիևկտովը, — ավելի շուտ հանդիսանում է ճանապարհորդության ընթացքում իր հավաքած նյութերի, ինչպես նաև ուրիշ մարդկանցից ստացած տեղեկությունների մշակում, հետևաբար ամեն պարագայում հեշտ չէ առանձնացնել, թե որտեղ է Բարբարոն խոսում որպես ականատես և որտեղ՝ ուրիշի խոսքերով։ Կոնտարինիի «Ուղեգրությունը» իր ուղևորության օրագիրն է, ուր նա բերում է համարյա բացառապես իր անձնական տպավորությունները⁵⁴։

Ա. Կոնտարինին ընթերցողներին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում իր այցելած վայրերի մասին։ Ուղեգիրը, որպես շերտեղանդ հոմեադալան, իրենալական գծերով է ներկայացնում Նախիջևանի շրջանի՝ կաթոլիկ հայերով բնակեցված տասնմեկ գյուղեր, որոնք, իր բառերով ասած՝ «ամենահաճելի ու ամենաարգավանդ վայրերն են ողջ Պարսկաստանում»⁵⁵։ Ուղեգրության մեջ բերված են Հայաստանի քաղաքական պատմությանը վերաբերող տվյալներ։ Այսպես, Ուզուն Հասանը մի առիթով ասել է Ա. Կոնտարինին. «Ասեք ձեր ղեկավարներին, որ ես շուտով ռազմական գործողությունները կտեղափոխեմ Օսմանյան կայսրության տարածքը, թող նրանք իրենց կողմից կատարեն իրենց (հանձն առած) պարտականությունը, ինչպես ես անում եմ իմը»⁵⁶։

Գտնվելով Ուզուն Հասանի վրա արշավանք ձեռնարկած Մեհմեդ 2-րդի բանակում, Ջիովաննի Մարիա Անջլիուելլոն հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում թուրքական բանակի մարտունակության, կազմի, ռազմական տեխնիկայի մասին։

51 Կատարինո Ջենոյի զեկուցագիրը առաջին անգամ լույս է տեսել Վենետիկում 1558 թ. (տե՛ս Del commentari del viaggio in Persia Caterino Zeno): Կա նաև անգլերեն թարգմանությունը (տե՛ս Hakluyt series, № 11):

52 Ջ. Բարբարոյի «Ուղեգրություն» առաջին անգամ լույս է տեսնում Վենետիկում, 1453 թ., վերահրատարակվում է 1545 թ. հետևյալ վերնագրով. Viaggi fatti de Venetia alle Tana in Persia, India et della Porto del Gran Turco: Հետագայում կատարվել է լատիներեն (1606 թ.) և ռուսերեն (1831 թ.) մասնակի թարգմանությունը (ղեկի Տանա ուղևորության նկարագրությունը):

53 Ա. Կոնտարինիի «Ուղեգրությունը» առաջին անգամ է լույս տեսնում Վենետիկում 1487 թ. հետևյալ վերնագրով. Viaggio di Messer Ambrosio Conterini, ambasciadore di Venezia ad Uzun Cassan Re di Persia per Annibale Fosco. Venezia. 1487. Կա ֆրանսերեն թարգմանությունը Պ. Բերժեկոնի կողմից, որից և մենք օգտվել ենք։

54 М. А. Полиевктов, с. 98.

55 Pierre Bergeron, III, էջ 21.

56 Նույն տեղում, էջ 30:

1475 թ. Գերզանի ճակատամարտի մասին արժեքավոր տվյալներ բերելուց հետո Անշիոլելլոն խոսում է Ուզուն Հասանի հետագա ճակատագրի, 1477 թ. նրա մահվան, ակկոյունլունների պետության մեջ ժայր առած գահակալական կռիվների մասին և այլն: Ուղեգրությունը Սեֆյանների պետության հիմնադրման պատմության կարևոր աղբյուրների շարքին է դասվում: Այնտեղ խոսվում է Սեֆյանների պետության հիմնադիր շահ Իսմայիլի՝ 1501--1510 թթ. ընթացքում Իրանում և Արևմտյան Հայաստանում ծավալած ռազմական գործողությունների մասին⁵⁷:

Նշենք, որ շահ Իսմայիլի վարած ներքին ու արտաքին քաղաքականության վերաբերյալ ամենահետադրեր նյութերն ընդգրկում է Իրան մեկնած մի անանուն վաճառականի թողած «Ուղեգրությունը»: Հեղինակը նշում է, որ Արևելքի ժողովուրդների կենցաղի, սովորույթների և այցելած քաղաքների մասին նյութերը հավաքել է ութ տարիների և ութ ամիսների ընթացքում: Այդ նյութերը իրենց թարմությամբ մեծապես կարող են հետաքրքրել ընթերցողներին: Նա գրում է նաև, որ ինքը մասնակցել է շահ Իսմայիլի մի շարք արշավանքներին⁵⁸:

Անանուն վաճառականի դեպի Իրան կատարած ճանապարհորդությունն ընթացել է Հայկական լեռնաշխարհի հարավային շրջաններով (Դիարբեքիր, Մերդին), որոնց մասին նա թողել է տնտեսական ու դեմոգրաֆիկ բնույթի վկայություններ: Նա խոսում է նաև Շահ Իսմայիլի զորավար Ուստաշու խանի կողմից այդ շրջանների գրավման մասին: Հատկապես գիտական մեծ հետաքրքրություն ունեն Բիթլիսին, Վանին, Ոստանին, Դատվանին, Արճեշին և հարավ-արևմտյան Հայաստանի այլ քաղաքներին ու գավառներին նվերված վկայությունները, որոնք գերազանցապես վերաբերում են քուրդ բեկերի և շահ Իսմայիլի քաղաքական հարաբերություններին: Ընդարձակ են հեղինակի թողած տեղեկությունները Մերձավոր արևելքի խոշորագույն առևտրական կենտրոններից մեկի՝ Թավրիզի մասին: Դրանք որոշակի գիտական նշանակություն ունեն տվյալ ժամանակաշրջանի տնտեսական պատմության ուսումնասիրության համար:

Սեֆյան պետության հիմնադրման պատմությունը, Ակկոյունլու պետության վերջին տիրակալների, շիրվանշահների և օսմանյան թուրքերի դեմ շահ Իսմայիլի պայքարի պատմությունն արտացոլվել է նաև վենետիկյան դիվանագետ Ռոտտաի թողած հիշատակարանում, որը դե-

տեղված է Ռ. Դյու Մանի «Պարսկաստանի վիճակը 1660 թ.» գրքի հավելվածում⁵⁹: Իր աշխատության սկզբնական մասում Ռոտտան տալիս է Սեֆյան հարստության ծագումնաբանությունը, այնուհետև շարադրում իր՝ շահ Իսմայիլի, կենսագրությունը: Իշխանության դուրս անցնելուց հետո, շահ Իսմայիլը, վկայում է Ռոտտան, «...մեծ ատելություն է տածում դեպի թուրքերը»⁶⁰: Այնուհետև Ռոտտան պատմում է շահ Իսմայիլի մղած պատերազմների ու նվաճած երկրների մասին: Նա հատուկ ընդգծում է, որ շահ Իսմայիլի հեղինակությունը գյուղացիների ու սոցիալական այլ շերտերի նկատմամբ վարած խաբեպատիր քաղաքականության շնորհիվ երկրում մեծ էր. «Իր պալատականների ու իր ենթակաների կողմից նա (շահ Իսմայիլը—Մ. Զ.) պաշտված է, և ինքը ավելի մեծ հեղինակություն ձեռք բերելու համար (մարդկանց մեջ) ներկայացնում է միայն դեմքը շղարշով քողարկված, ինչպես դա մի ժամանակ անում էր Մովսես (մարգարեն) Իսրայելի զավակների առաջ»⁶¹,—գրում է նա: Ռոտտան իր աշխատության վերջին գլուխը վերնագրել է այսպես. «Այն մեծ ատելությունը, որ տածում է իշխան Սոֆին դեպի հրեաները, թուրքերը և սարակինոսները (իմա՝ արաբները—Մ. Զ.), և թե ինչպես է նա համակրում քրիստոնյաներին...», որտեղից պարզվում է, որ շահ Իսմայիլի թշնամանքն ուղղված էր սուննիների դեմ և քրիստոնյաներին «հովանավորելը» պայմանավորված էր եվրոպական պետությունների հետ թուրքերի դեմ ուղղված դաշինք կնքելու նպատակով: «Քրիստոնյաներին,—կարդում ենք Ռոտտաի մոտ,—նա (շահը—Մ. Զ.) ցույց է տալիս բարյացակամ (վերաբերմունք), որովհետև նա անձեռնմխելի էր թողնում նրանց բոլոր եկեղեցիներն ու մատուռները՝ առանց բռնություն գործադրելու: Եվ տանում էր իր հետ հայոց պատրիարքին և մեր հավատին հետևող բազմաթիվ վանականների ու հոգևորականների, դրանով իսկ ակնհայտ դարձնելով մահմեդական օրենքը (իմա՝ սուննիզմը—Մ. Զ.) հիմնովին ոչնչացնելու նրա ցանկությունը»⁶²:

XV դարի եվրոպական պատմագրության մասին մեր խոսքը ավարտելուց առաջ նշենք ևս մի երկու կարևոր բյուզանդական աղբյուրների մասին, որոնք XVII դարում հրատարակվել են Ֆրանսիայում՝ այլևայլ աղբյուրներից քաղված խիստ արժեքավոր լրացումներով: Առաջինը բարոն դե Գիյեի կողմից հրատարակվածն է՝ «Մեհմեդ 2-րդի պատմու-

⁵⁹ „Estat de la Perse en 1660“ par le P. Raphael du Mans, publié avec notes et appendice par Charles Schéfer. Paris, 1890, Appendice, p. 259—276.

⁶⁰ Նույն տեղում, էջ 264—265:

⁶¹ Նույն տեղում, էջ 274—275:

⁶² Նույն տեղում, էջ 274—275:

⁵⁷ Հովն. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 276—285:

⁵⁸ Նույն տեղում, էջ 286—287:

թյունը», վերնագրով⁶³։ Հայ ժողովրդի քաղաքական պատմության համար հատկապես որոշակի հետաքրքրություն ունի երկրորդ հատորը, որը բացառապես նվիրված է Ուլուն Հասանի ու այլոց հետ Մեհմեդ 2-րդի գրագրություններին՝ նամակներից մեկում սուլթանը մանրամասն նկարագրում է Դերջանում իր տարած հաղթանակը Ուլուն Հասանի նկատմամբ։ Երկրորդ հատորի վերջում բերված են նաև աղբյուրներ, ուր խոսվում է Սեֆյանների ծագման մասին։

Երկրորդ աղբյուրը, որի մասին այստեղ ակնարկեցինք, Հանիկոս խալկոկոնդիլի կամ խալկոնդիլի (ծննդյան և մահվան թվականները հայտնի չեն, ենթադրվում է, որ նա ծնվել է XV դ. 30-ական թթ. ու մահացել նույն հարյուրամյակի վերջում)՝ «Թուրքերի և Մեհմեդ 2-րդի ծագման ու գործունեության մասին» վերնագրով աշխատությունն է։ Այստեղ մանրամասն շարադրված է օսմանյան պետության քաղաքական պատմությունը 1298—1463 թթ., կարճ՝ տրվում է թուրքերի կատարած նվաճումների պատմությունը Փոքր Ասիայում և Բալկաններում⁶⁴։ Կա Բլեդ դե՝ Վիժենների կատարած ֆրանսերեն թարգմանությունը, որին կցված են Թովմաս Արթուրի և դե Մեզերեի կողմից կատարված ժամանակագրական լրացումներն ընդհուպ մինչև 1661 թ.։

XVI դարում, երբ Օսմանյան կայսրությունը հասնում էր իր հզորության գագաթնակետին, եվրոպական պետությունների մոտ առավել ուժեղացավ հետաքրքրությունը այդ պետության նկատմամբ, որի անմիջական արդյունքն էր պատմական մեծ ու փոքր աշխատությունների հրատարակումը եվրոպայում։ Միայն XVI դարի առաջին կեսին եվրոպական հասարակությանը հայտնի դարձան 901 նման աշխատություններ, որոնց համառոտ նկարագրությունը տրված է գերմանացի արևելագետ Կարլ Գյոլյների 1961 թ. Բեռլինում ու Բուխարեստում հրատարակված գրքում⁶⁵։ Այս ժողովածուում մատնացույց արված աղբյուրների մեջ հայ ժողովրդի պատմության տեսակետից առավել կարևոր են 1535 թ. «Մեծ թուրքի (իմա՝ սուլթանի—Մ. Զ.) նկատմամբ Սոֆիի տարած հաղթանակի մասին Կոստանդնուպոլսից ուղարկված մի նամակի պատճենը»։ Իտալացի Զիովիի (Պաոլո) 1538 թ. ֆրանսերեն թարգմանված ու Փարիզում հրատարակված հետևյալ վերնագրով աշ-

խատությունը. «Թուրքիայի կայսրերի պատմությունը վերջերս լատիներենից ֆրանսերեն թարգմանված»⁶⁶ և 1547 թ. դարձյալ Փարիզում հրատարակված «Կոստանդնուպոլսից ուղարկված նամակների պատճենը; որը պարունակում է Պարսկաստանի թագավոր Սոֆիի մեծ թուրքին վերջերս հասցրած մեծ պարտությունը...» գիրքը⁶⁷։ Կարլ Գյոլյների կողմից հրատարակված աղբյուրների ցանկից երևում է, որ Թուրքիայի մասին եվրոպա ուղարկված նյութերի մեծ մասը գրված է լատիներեն։

Եվրոպական պետությունների հետ Օսմանյան կայսրության հարաբերությունները XVI դարում դարձան ավելի կայուն։ Միմյանց նկատմամբ թշնամական դիրք գրաված եվրոպական պետությունների տարբեր խմբավորումներ աստիճանաբար սկսեցին իրենց կողմը գրավել Թուրքիային։ Մյուս կողմից, թուրքական վտանգը եվրոպայի էնտերոնից հեռացնելու նպատակով, եվրոպական պետությունները ձգտեցին կանոնավոր դեսպանություններ ուղարկել Կոստանդնուպոլիս։ Ավելի ու ավելի հաճախ տարբեր մասնագիտությունների տեր եվրոպացիներ սկսեցին ուղեորություններ կատարել Թուրքիայում։ Եվ ահա, դեսպանությունների զեկուցագրերը և առանձին ուղեգրությունները բավականին պատմական նյութեր են հաղորդում Օսմանյան կայսրության հասարակական-տնտեսական և քաղաքական պատմության մասին։ Այս նյութերից միայն մի մասն է առ այսօր հրատարակված, մյուսը, դրժբախտաբար, գեռևս մնում է եվրոպայի տարբեր երկրների արխիվներում։ Մասնակիորեն հրատարակված նյութերի շարքին կարելի է դասել 1839—1846 թթ. ընթացքում Ե. Ա. Ալբերիի կողմից լույս ընծայված «Սենատին հղված վեներտիկյան դեսպանների զեկուցագրերը» վերնագրված փաստաթղթերի ժողովածուն⁶⁸։ Այդ փաստաթղթերն արտացոլում են 1527—1577 թթ. Արևելքում Ֆրանսիայի վարած քաղաքականությունը։ Համանման փաստաթղթերի մի ժողովածու, որն ընդգրկում է 1515—1580 թթ. ժամանակաշրջանը, պարունակում է նաև 1848—1853 թթ. Է. Շարիերի կողմից հրատարակված չորս հատորանոց գիրքը⁶⁹։

⁶⁶ Gioiolo (Paulo). L'histoire des empereurs de Turquie... Nouvellement traduit de latin en français. Paris, 1538.

⁶⁷ La copie des lettres envoyées de Constantinople qui contiennent la grande deffaicte que nouvellement Sophy Roy de Perse a fait contre le grand Turc. Traduite de language italien en français, Paris, 1547.

⁶⁸ E. Albéry, Relazioni degli ambasciatori Veneti al Senato, T. III, Firenze, 1859—1863.

⁶⁹ Ernest Charrière, Négociations de la France dans le Levant, ou correspondances, mémoires et actes diplomatiques des ambassadeurs de France à Constantinople, Vol. I—IV, Paris, 1848—1853.

⁶³ Histoire du règne de Mahomet II, empereur des Turcs par le sieur Guillet, T. I—II, Paris, 1684.

⁶⁴ (Chalcondyle). Histoire générale des turcs, contenant l'histoire de Chalcondyle, trad. de Blaise de Vigenaire et continuée jusque en l'an 1612 par Thomas Artus et par le sieur Meseray jusque en l'an 1661. T. I—II, Paris, 1662.

⁶⁵ Karl Göliner, Turcica, Die europäischen Türkendrucke des XVI Jahrhunderts. Band I, Bucuresti—Berlin, 1961.

XVI դարի 40-ական թթ. հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության համար որոշակի արժեք ունի ֆրանսիական թագավոր Հենրիխ 2-րդի դեսպան դ'Արամոնի ուղեգրությունը⁷⁰: Նա 1548—1549 թթ. մասնակցում էր սուլթան Սուլեյման Կանունիի (1520—1566 թթ.) ֆրանսիական արշավանքին ու օրը-օրին նկարագրում է դրա ողջ ընթացքը: Նա արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Ամասիայի, Քոնստանտինոպոլի, Սեբաստիայի, էրզրումի, Վանի, Մուշի, Բիթլիսի, Դիարբեքրի և պատմական Հայաստանի մյուս քաղաքների մասին: Դ'Արամոնի հաղորդած վկայություններից ևս մի անգամ պարզվում է այն իրողությունը, որ արշավող թուրքական բանակի սարսափից բնակչությունը ստիպված լքում էր հայրենի երկիրը: Ֆրանսիական դեսպան դ'Արամոնի վկայությունները գրի է առել իր բարտուղար Ժան Շեզոնն: Բնագիրը հրատարակել է ֆրանսիացի հայտնի արևելագետ-պատմաբան Շառլ Շեֆերը, որը գրքին կցել է առաջաբան, ծանոթագրություններ և ֆրանսիական արխիվային նյութեր, որոնց թվում սուլթան Սուլեյմանի 1549 թ. Հենրիխ 2-րդին հղած նամակը, ուր սուլթանը մասնավորապես նկարագրում է շահ Քահամասպի հետ իր պատերազմները և թուրքական բանակի հարձակումը դեպի Վրաստան:

XVI դարի 50—60-ական թթ. թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքականության ուսումնասիրության տեսանկյունից մասնակի հետաքրքրություն են ներկայացնում նաև բելգիացի դիվանագետ Օթիե Գիսլեն վան-Բուսբեկի (1522—1592) թողած հուշագրությունները⁷¹: Բուսբեկը որպես ավստրիական կայսր Ֆերդինանդ 2-րդի դիվանագիտական ներկայացուցիչ, 1553 թ. հաշտություն կնքելու նպատակով ուղարկվեց թուրքիա, ուր մնաց մինչև 1562 թ.: Թուրքիայի մասին իր տպավորությունները Բուսբեկը շարադրեց չորս ընդարձակ զեկուցագիր-նամակների ձևով, որոնք 1589 թ. առաջին անգամ լույս տեսան ֆրանսերենով: Հետագայում այդ աշխատությունը հրատարակվում է նաև եվրոպական այլ լեզուներով:

Նույն դարի 70-ական թթ. մեզ հետաքրքրող աղբյուրների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում շահ Քահամասպի իշխանության վերջին տարիների Իրանի ներքին կացության վերաբերյալ Վենետիկի հան-

րապետությանը իտալացի Վինչենցո դ'Ալեսանդրիի հղած ընդարձակ զեկուցագիրը⁷²: 1571 թ., երբ թուրքերը սպառնում էին Կիպրոսին, Վինչենցո դ'Ալեսանդրին Վենետիկի հանրապետության կողմից ուղարկվեց Իրան՝ շահ Քահամասպին հորդորելու համատեղ հանդես գալ թուրքիայի դեմ: Վինչենցո դ'Ալեսանդրիի Վենետիկ հղած վերոհիշյալ զեկուցագիրը հեղինակի՝ Իրանում երկար ժամանակ ապրելու ու շահական պալատի բարձրաստիճան ներկայացուցիչների հետ շփվելու անմիջական արդյունքն է: Իրանի և Արևելյան Հայաստանի հասարակական-տնտեսական կյանքին վերաբերող արժեքավոր վկայություններից բացի, Վ. դ'Ալեսանդրիի մոտ տվյալներ կան XVI դարի 70-ական թթ. Բիթլիսի քուրդ կառավարիչ էմիր Շարաֆի ապստամբության ու թուրքերի կողմն անցնելու և այս առթիվ՝ տեղեկություններ նաև Բիթլիսի, Վանի, Ոստանի, Բերկրիի, Արճեշի, Արծկեի և հարավային Հայաստանի այլ քաղաքների մասին⁷³:

XVI դարի 70—90-ական թթ. անգլիական առևտրական կապիտալը ամենաեռանդուն ձևով սկսեց իր պայքարը Արևելքում եվրոպական մյուս պետությունների ներկայացուցիչների դեմ՝ առևտրի բնագավառում առանձնաշնորհումներ ձեռք բերելու նպատակով: Մշտապես զարգացող անգլիական արդյունագործության համար առանձնակի հետաքրքրություն ունեցրեց Իրանի հում մետաքսը՝ բոժոժը: Ե՛վ հայկական բամբակը, և՛ իրանական մետաքսը ներմուծման կարևորագույն ապրանքներն էին դառնալու Անգլիայի համար: Անգլիացիներն առաջինն էին, որ Ջ. Բարբարոյից ու Ա. Կոնտարինիից հետո իրենց ուղադրությունը սեփական Վոլգա-կասպիական առևտրական ուղու վրա: XVI դարի կեսերին վոլգյան ուղին, ընդհուպ մինչև Աստրախանը ներառյալ, անցել էր Մոսկովյան պետության գերիշխանության ներքո: Ուստի անգլիացիները շտապեցին ուսների հետ առևտրական գործարքներ կնքել: Այդ գործի առաջամարտիկը հանդիսացավ անգլիացի նավագնաց Անտոնի Ջենկինսոնը, որը 1557—1571 թթ. ընթացքում Վոլգա-կասպիական առևտրական ուղով ճանապարհորդություն կատարեց Բուխարա և Իրան: Հետագայում Ա. Ջենկինսոնի ձեռնարկած գործը շարունակեցին անգլիական առևտրական կապիտալի մյուս ներկայացուցիչները, որոնց թվում Բերրոուն, Չափամանը, էդվարդը, Ջոնսոնն ու այլք: Անգլիացիներին հաջողվեց ոչ միայն ձեռք բերել, ինչպես նշվեց, Վոլգա-կասպյան առևտրի մենաշնորհը, այլև ազատ իրավունք՝ իրանական ապրանքներն առանց որևէ մաքսի Ռուսաստանի վրայով փոխադրելու Անգլիա:

⁷⁰ La voyage de Monsieur d'Aramon, ambassadeur pour le roy en Levant, écrit par le noble homme Jean Chesneau, l'un des secrétaires dudit seigneur ambassadeur. Publié et annoté par M. Ch. Schéfer. Paris, 1887.

⁷¹ Busbequis Augier-Guislain (Baron de Busbec). Lettres, traduites en français avec les notes historiques et géographiques par M. L'abbé de Froy. T. 1—II, Paris, 1748.

⁷² Տե՛ս Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 331—354:

⁷³ Նույն տեղում, էջ 338:

Վուլգա-կասպիական ուղիների յուրացմանը զուգընթաց, անգլիական առևտրական կապիտալը ձգտում էր իր համար տեղ ապահովել այսպես կոչված լեանտյան ավանդական ուղիներում: Դեռևս 1553 թ. նույն ինքը՝ Ա. Զենկինսոնը, սուլթան Սուլեյման Կանունիից ստացավ հատուկ առևտրական արտոնագիր, որով անգլիացիները դասվում էին «...առավել առանձնաշնորհյալ ազգերի» թվին⁷⁴: Այդ արտոնագիրը հետագայում՝ 80-ական թվականներին, դարձավ ապագա անգլիական կապիտալիստների հիմքն ու լեանտյան ընկերության հիմնադրման սկիզբը⁷⁵: Այդ բոլորը իրավական ձևակերպում ստացավ անգլիական թագուհի էլիզաբեթի և սուլթան Սուրայ 3-րդի միջև կնքված հատուկ պայմանագրով: Երկու կողմերն էլ փորձեցին այդ առևտրական պայմանագրին տալ քաղաքական բնույթ⁷⁶: Անգլիական առևտրական կապիտալի համար բարենպաստ այս պայմաններում 1599—1600 թթ. առաջինը Քուրթիա ուղևորվեց թոմաս Դալլամը, որի ուղեգրությունը⁷⁷ սույն թեմայի համար նույնպես որոշակի արժեք ունի:

Հայ ժողովրդի պատմության հարցերն ուսումնասիրողների համար առավել հետաքրքիր են Ա. Զենկինսոնի ընդարձակ ուղեգրության այն էջերը, որոնք վերաբերում են Իրանի ներքին կացության նկարագրությանը և նրա առևտրական հնարավորություններին: Չնայած Ա. Զենկինսոնը հիշատակում է այն մասին, թե ինքը եղել է Հայաստանում, սակայն որևէ մասնավոր տեղեկություն չի հաղորդում: Իրանի վերաբերյալ Ա. Զենկինսոնի հաղորդած վկայություններն արժեքավոր են Արևելյան Հայաստանի ընդհանուր վիճակը հասկանալու առումով: Այդ տեղեկություններն ամենից շատ արտացոլվել են 1561—1563 թթ. ընթացքում Իրան կատարած նրա ուղևորության հուշագրություններում: 1561 թ. հունիսի 1-ին՝ դուրս գալով Աստրախանից, Ա. Զենկինսոնը Դերբենդի, Շամախու, Քավրիզի վրայով նույնմբերի 2-ին ժամանում է Ղազվին՝ շահ Թահմասպի նստավայրը: Վերջինս, նկատի ունենալով Քուրթիայի հետ կնքված հաշտության պայմանագիրը, նպատակահարմար է համարում անգլիացիներին շտալ որևէ առևտրական առանձնաշնորհում: Հետագայում, սակայն, ինչպես շահ Թահմասպը, այնպես էլ նրա հաջորդները, անգլիացիներին տալիս են նման առանձնաշնորհումներ:

⁷⁴ Early voyages and travels in the Levant. London, 1893, Introduction, p. V.

⁷⁵ Նույն տեղում:

⁷⁶ Նույն տեղում:

⁷⁷ Նույն տեղում, էջ 1—68:

Ա. Զենկինսոնի հաղորդած վկայությունները հիմնականում վերաբերում են Իրանի տնտեսությանն ու առևտրին, սակայն կան նաև քաղաքական պատմությանը, մասնավորապես թուրք-իրանական պատերազմների վերաբերյալ նյութեր: Այսպես. խոսելով Քավրիզի մասին, նա գրում է, որ Իրանի մեծագույն քաղաքը «...լուսնի այն առևտուրը կամ վաճառականությունը, ինչ որ նախապես ունի, կամ ինչպես ուրիշ (քաղաքներն) են այս ժամանակ, թուրքական արշավանքների պատճառով, որոնք Սոֆիից գրավել են գրեթե Վինչև հիշյալ Քավրիզ քաղաքը»⁷⁸:

XVI դարի վերջի Իրանի տնտեսությանն ու քաղաքական պատմությանը վերաբերող նյութերի կարելի է հանդիպել նաև Ա. Զենկինսոնի գործընկերներ Արթուր Էդվարդսի, Լորենս Չափմանի, Ջոն Սպարքի, Թոմաս Բանիստրի ու այլոց իրանյան ուղեգրություններում, որոնք նույնպես թարգմանված են հայերեն՝ Հովհ. Հակոբյանի կողմից⁷⁹: Այս հեղինակների մոտ խոսվում է նաև Եվրոպայի ու մասնավորապես Վենետիկի հետ Ջուրջայի հայ խոջաների ունեցած առևտրական հարաբերությունների մասին: Ինչպես երևում է անգլիացի այս ուղեգիրների վկայություններից, անգլիական առևտրի ներկայացուցիչներն ուղիներ են փնտրել խանգարելու հայ խոջաների և Վենետիկի միջև ծավալված ապրանքափոխանակությանն ու տիրանալու Իրանի հում մետաքսի արտահանման մենաշնորհին: Բայց և այնպես, նրանք խիստ վախեցել են Արևելքում առևտրական հարաբերությունների համար գոյություն ունեցող բազմաթիվ խոչընդոտներից և այն աստիճան, որ բացականչում են. «...ավելի լավ է ամբողջ կյանքում մշտապես մնալ մուրացկան Անգլիայում, քան լինել հարուստ վաճառական Իրանում»⁸⁰:

Վերջապես, XVI դարի վերջին քառորդին է վերաբերում անգլիացի մի ուրիշ վաճառականի՝ Ջոն Նյուբերիի թողած ուղեգրությունը, ուր նույնպես հանդիպում ենք հայերի և Հայաստանի մասին ուշագրավ վկայությունների: Ջոն Նյուբերին որևէ առևտրություն չի ունեցել անգլիական-մոսկովյան ընկերության հետ: Նա 1581—1582 թթ. ընթացքում առևտրական նպատակներով ճանապարհորդել է Իրան և Հնդկաստան: Վերադարձին՝ 1581—1582 թթ. ձմռան ամիսներին, եղել է Հա-

⁷⁸ Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 378: Ընդհանրապես ներկա աշխատության մեջ օգտագործել ենք Հովհ. Հակոբյանի թարգմանությունը՝ Ա. Զենկինսոնի Թուրքաստան և Իրան կատարած ուղևորության մասին, տե՛ս նաև Early voyages and travels to Russia and Persia by Anthony Jenkinson and other Englishmen. Vol. I—II, Edited by E. Delwar Morgan and C. H. Coste, London, 1886.

⁷⁹ Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, 408—447:

⁸⁰ Նույն տեղում, էջ 418:

յաստանում և ուղևորվել դեպի Քոխաթ: Քավրիզից մինչև Քոխաթ ուղեգրութեան թարգմանությունը դարձյալ տրված է Հովհ. Հակոբյանի կողմից⁸¹:

Շահ Քահմասպի մահից հետո Իրանում ծայր առած գահակալական կռիվներն առժամանակ դադարեցրին դիվանագիտական այն բանակցությունները, որ վարում էին եվրոպական պետությունները Իրանի հետ՝ վերջինիս հակաթուրքական դաշինքի մեջ ներգրավելու նպատակով: Գարսվերջին, սակայն, երբ Իրանում իշխանութեան գլուխ է անցնում Շահ Աբասը, որի ժամանակ ոչ միայն վերջ է տրվում գահակալական կռիվներին, այլև սանձահարվում են կենտրոնախոյս ուժերը, եվրոպական պետությունների հակաթուրքական դաշինք կնքելու նախաձեռնությամբ հանդես է գալիս Անգլիան, պայքարելու Վենետիկի դեմ՝ իրանական հում մետաքսի արտահանությունն իր մենաշնորհը դարձնելու նպատակով: Անգլիան ձգտում էր ամեն կերպ վերացնել այն բոլոր խոչընդոտները, որ թուրքիան հարուցում էր իրանական մետաքսի արտահանության առաջ:

1599 թ. Շահ Աբասի պալատում հայտնվեց անգլիացի սըր Անտոնի Շիրլեյը, որն առաջարկում էր իր զինվորական ժառանգությունները: Անգլիական կառավարության ներկայացուցիչների կողմից Անտոնի Շիրլեյը ուղարկվել էր Իրան՝ համոզելու Շահ Աբասին մտնել հակաթուրքական դաշինքի մեջ ու անգլիական հպատակներին որոշ առևտրական առանձնաշնորհումներ տալ: 1598 թ. մայիսի 24-ին իր եղբոր՝ Ռոբերտ Շիրլեյի ու այլոց հետ նա մեկնեց Վենետիկից և ուղևորվեց դեպի Իրան: Այստեղ Շահ Աբասի զորավար Ալլահվերդի խանի միջնորդությամբ Շահ Աբասը տվեց հակաթուրքական դաշինք ստեղծելու մասին իր համաձայնությունը: Նա Անտոնի Շիրլեյին լիազորեց իր անունից քանակցություններ վարելու գերմանական կայսր Ռուդոլֆի, Հոմի պապի, Վենետիկյան հանրապետության և իսպանական թագավորի հետ: Ապա Անտոնի Շիրլեյի հետ նա եվրոպա ուղարկեց նաև իր ներկայացուցիչ Հյուսեին Ալի Բեկին: Իրանում գտնվելը, ապա նաև եվրոպական երկրներում շահի անունից վարած բանակցությունները Անտոնի Շիրլեյը գրի է առել ուղևորության ձևով⁸²:

⁸¹ Նույն տեղում, էջ 448—459:

⁸² *Sh'w Sir Anthony Shirley, His relation of his travels into Persia.* London, 1613; A new and large discourse of the travels of sir Antony Shirley by sea and overland to the Persian empire, written by William Parry. London, 1601: *Dépêches du Piedro Duodo, ambassadeur de la seigneurie de Venise, près de la cour d'Allemagne, relatives à la mission de sir Anthony Shirley et de Hussein Aly bek.* Estat de la Perse en 1660, p. 277—284.

Հոռոմում Անտոնի Շիրլեյը կաթոլիկ եկեղեցու պետին հավաստիացնում էր, որ իրանաբնակ բոլոր «հերձվածողները», այսինքն՝ հայերը, վրացիները և այլք, հպատակություն են հայտնելու իրեն, եթե պապը կազմակերպի եվրոպական պետությունների հակաթուրքական դաշինքը⁸³: Նման հավաստիացման հիմքում ընկած կարող է լինել Անտոնի Շիրլեյի տեղեկությունը հայերի, վրացիների կողմից եվրոպական պետություններին արված օգնության դիմումների մասին և Շահ Աբասի մտադրությունը՝ օգտագործել հայ բանազնացներին եվրոպայի հետ վարվելիք դիվանագիտական բանակցություններում:

Երբ Շահ Աբասի դիվանագիտական ներկայացուցիչ Հյուսեին Ալի Բեկը շրջագայում էր եվրոպական մայրաքաղաքներում, գերմանական կայսր Ռուդոլֆը Շահ Աբասի մոտ էր ուղարկել հատուկ պատվիրակություն տրանսիլվանացի իշխան Կակաշ դե Ջալոնկեմենիի ղեկավարությամբ՝ եվրոպայի հետ Շահ Աբասի ծրագրած դաշինքի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու նպատակով: Մյուս կողմից, էտիեն Կակաշը կայսեր կողմից հանձնարարություն ուներ ուսական ցարին ներգրավելու հակաթուրքական դաշինքի մեջ⁸⁴: Դեպի Իրան ուղևորության ժամանակ էտիեն Կակաշին ուղեկցում էր Գևորգ Թեկտանդեր ֆոն դեր Յաբելը: 1603 թ. հոկտեմբերի 25-ին Լենքորանից ոչ հեռու գտնվող իրանական Լանցեն քաղաքում պատվիրակության ղեկավարը մահանում է, և Թեկտանդերը ստիպված է լինում ինքը կազմել կայսերը ներկայացվելիք ղեկուցադիրն Իրան այցելելու մասին: Մենք օգտագործել ենք Շառլ Եֆերի հրատարակությունը⁸⁵:

Թեկտանդերը գտնվել է Շահ Աբասի բանակում, որը թուրքերի դեմ պատերազմ էր վարում Արևելյան Հայաստանը նրանց ձեռքից հետ խլելու նպատակով: Նա, որպես ականատես, նկարագրում է Քավրիզի, Մարանդի, Նախիջևանի, Երևանի գրավումը Սեֆյանների կողմից: Շահի թույլտվությամբ նա եղել է նաև էջմիածնում ու տեսակցություն ունեցել հայոց կաթողիկոսի հետ: Թեկտանդերի հաղորդած վկայությունները համընկնում են հայկական աղբյուրների հաղորդած տվյալներին:

Իսպանիան դեռևս Ֆիլիպ 2-րդ թագավորի ժամանակ՝ XVI դարի 80-ական թթ., շահ Մուհամմեդ Խուդաբանդայի հետ բանակցություններ էր վարում մի կողմից առևտրի բնագավառում առանձնաշնորհումներ

⁸³ *Sh'w Estat de la Perse en 1660, էջ 9:*

⁸⁴ Նույն տեղում, էջ 11:

⁸⁵ *Iter Persicum ou description du voyage entreprise en 1602.* Paris, 1887. *Կա նաև 1609 թ. հրատարակությունը հետևյալ վերնագրով՝* Brève, mais non moins détaillée et véridique description du voyage en Perse..., Altenbourg, 1609.

ստանալու, մյուս կողմից՝ Քուրբիայի դեմ միացյալ ճակատ կազմելու նպատակով: Սակայն դիվանագիտական այդ փորձերը հաջողություն չէին ունեցել: Ֆրիչպ 2-րդը ընթանալով իր հոր ծրագրած ուղիով, Իրանի հետ նոր դիվանագիտական շփման մեջ մտավ՝ 1601 թ. այդ երկիր ուղարկելով ևս մի պատվիրակություն՝ բաղկացած Հնդկաստանի իր ներկայացուցիչներից: Այդ պատվիրակության մեջ էր նաև ավգուստինյան հոգևորական Անտոնիո դե Գուվեան, որը և դարձավ Շահ-Աբասի կյանքին ու քաղաքական գործունեությանը նվիրված մեծարժեք ու հավաստի գրքի հեղինակը⁸⁶: Իսպանական պատվիրակությունը 1602 թ. փետրվարի 15-ին դուրս է գալիս Գոայից և սեպտեմբերի 4-ին հասնում իրանական Մաշհադ քաղաքը՝ Շահ-Աբասի այն ժամանակվա նստավայրը: Իսպանական պատվիրակությունն ընդունելության ժամանակ շահին հավաստիացնում է, որ Հնդկաստանի փոխարքան որևէ մտադրություն չունի ուզմական արշավանք կազմակերպելու Պարսից ծոցում: Ապահով իր թիկունքից, ինչպես այդ մասին գրում է Անտոնիո դե Գուվեան, Շահ-Աբասը պատերազմ է հայտարարում Քուրբիային:

Անտոնիո դե Գուվեայի աշխատությունն ընդգրկում է Շահ-Աբասի կողմից Քուրբիայի դեմ ձեռնարկված պատերազմի սկզբից, այսինքն՝ 1602 թ. աշնանից ընդհուպ մինչև 1608 թ. ընկած ժամանակաշրջանը: Հաղորդված նյութերի առատությունը ու խորությունը, արված նուրբ դիտողություններով Անտոնիո դե Գուվեայի այս գիրքը հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության համար բացառիկ արժեք ունի: Բերված վկայությունները հավաստի են և զերծ իրանական ու թուրքական աղբյուրների միակողմանի մեկնություններից: Աշխատության մեջ հեղինակը մեծ համակրանքով ու ցավով է գրում թուրք-իրանական պատերազմների ընթացքում հայ ժողովրդի կրած անլուր տառապանքների մասին. երկասիրության երրորդ գրքում, որ վերնագրված է «Հայերի ստրկացման ու նրանց բռնագաղթի մասին», սրտաճմլիկ տողերով մանրամասն նկարագրվում է հայերի բռնագաղթի դժնդակ պատկերը⁸⁷:

⁸⁶ Այս աշխատությունը առաջին անգամ լույս է տեսնում կիսաթմբով 1611 թ. հեռույալ վերնագրով՝ «Relacam en cuoe tratam as guerras et grandes victorias que alcancon o Grande Rey de Persia xa Abbas co Grea Turco Mahometto et seu filho Amethe»:

Շուտով այդ աշխատությունը թարգմանվում ու հրատարակվում է հին ֆրանսերենով, որը և մենք օգտագործել ենք. տե՛ս Relation des grandes guerres et victoires obtenues par le roy de Perse Chah Abbas contre les empereurs de Turquie Mahomet et Achmet son fils. Par le P. Fr. Anthoine de Gouvea, traduit de l'original portugais. Rouen, 1646.

⁸⁷ Anthoine de Gouvea, էջ 341—365.

Անտոնիո դե Գուվեայի գլխավորած պատվիրակությունից հետո Իսպանիան 1618 թ. Իրանի հետ անմիջական դիվանագիտական և առևտրական հարաբերություններ հաստատելու մի նոր փորձ կատարեց: Այդ նպատակով Իրան ուղարկվեց Մադրիդի պալատի նոր պատվիրակությունը, որին գլխավորում էր Գարսիա դե Սիլվա Ֆրագուերան, որը և թողեց պատմական որոշակի արժեք ներկայացնող իր ուղեգրությունը⁸⁸: Ճիշտ է, Գարսիա դե Սիլվան բուն Հայաստանում չի եղել, այլ հասել է մինչև Քավրիզ, սակայն նոր Զուղայի հայերի մասին խոսելիս նա անդրադառնում է նաև ոչ հեռավոր անցյալում հայերի բռնագաղթի հետ կապված որոշ հարցերի, նվրոպայի հետ հայ, մասնավորապես նոր Զուղայի խոջայության ունեցած առևտրական հարաբերություններին և այլն:

XVII դարի 20-ական թթ. Շահ-Աբասն Անգլիայի հետ դաշնակցած գրավեց Հորմուզը և վերջ տվեց Պարսից ծոցում պորտուգալացիների գերիշխանությանը: Անգլիացիների այս օգնությունը Իրանին մեծապես ուժեղացրեց անգլիական Արևելահնդկական առևտրական ընկերության ազդեցությունը երկրում: Նման պայմաններում Ֆրանսիան, հանձինս կարգինալ Ռիշելիեի, արեց առավելագույնը՝ Իրանի հետ իր տրեսանական ու քաղաքական հարաբերությունները բարելավելու նպատակով: 1626 թ. դե Հեյի գլխավորությամբ Իրան ուղարկվեց ֆրանսիական հատուկ պատվիրակություն: Սակայն թուրքական կառավարության պահանջով դե Հեյը ստիպված եղավ Կոստանդնուպոլսից վերադառնալ Ֆրանսիա: Իրանի հետ դիվանագիտական բանակցություններ վարելու պաշտոնը դրվեց հայր Պասիֆիկի վրա: Նորջուղայեցի խոջա նազարի միջնորդությամբ հայր Պասիֆիկը Ղազվինում ընդունվում է Շահ-Աբասի կողմից: Ֆրանսիական պատվիրակությանը հաջողվում է դիվանագիտական և կրոնական կենտրոններ հիմնել Սպահանում և Բաղդադում՝ ուղղված, անշուշտ, անգլիական ազդեցության դեմ: Հայր Պասիֆիկը թողել է Իրան կատարած իր այցելության հանգամանալից շարադրանքը, որ հաղվադեպ խոսվում է նաև իրանահայերի ու Հայաստանի մասին⁸⁹: Հայր Պասիֆիկի աշխատությունը հետաքրքիր է մի

⁸⁸ Մենք օգտագործել ենք Գարսիա դե Սիլվայի աշխատության ֆրանսերեն թարգմանությունը. տե՛ս L'ambassade de D. Garcias de Silva Figueroa en Perse, contenant la politique de ce grand empire, les moeurs du roy Schah Abbas et une relation exacte de tous les lieux de Perse, des Indes, où cet ambassadeur a esté l'espace de huit années qu'il y a demeuré. Traduite de l'Espagnol par monsieur de Wicqueford, Paris, 1667.

⁸⁹ Relation du voyage de Perse fait par le R. R. Pacifique. Paris, 1631.

շարք վավերագրերի հրատարակմամբ: Դրանցից է սուլթան Մուրադ 4-րդի 1627 թ. ապրիլի ֆերմանը կապուչիներին Օսմանյան կայսրության պետական սահմաններում արտոնություններ շնորհելու մասին, Շահ-Աբասի համանման շնորհագիրը նույն կապուչիներին՝ Իրանում ազատ գործունեություն ծավալելու արտոնություն տալու մասին և, վերջապես, Շահ-Աբասի նամակը ֆրանսիական թագավոր Լյուդովիկոս 13-րդին:

Կարգինալ Ռիշելիեի ձեռնարկած գործը հետագայում շատ ավելի մեծ ընդգրկումով շարունակեցին Լյուդովիկոս 14-րդը և նրա հեռատես մինիստր Կլեբերը: Նրանց հիմնական նպատակն էր թուլացնել Անգլիայի և Հոլանդիայի ազդեցությունն Իրանի վրա, Ֆրանսիայի համար Իրանում առևտրի բնագավառում մենաշնորհային իրավունք ապահովել: Իրան ուղարկվեցին նորանոր պատվիրակություններ, որոնք հայերի մասին թողեցին արժեքավոր գրառումներ, սակայն մինչ այդ Հայաստանի և հայերի մասին կան այլ հեղինակների պատմական բնութի աշխատություններ, որոնք ժամանակագրական կարգով նախորդում են վերը մատնանշվածներին: Այսպես, իսպանացի Տեխեյրան, որին կարելի է դասել ուղեգրների շարքը, թողել է Իրան կատարած իր այցելությունն ակարագրությունը⁹⁰: Նա Հայաստանում չի եղել, սակայն Իրանի հասարակական-տնտեսական և քաղաքական պատմության վերաբերյալ նրա հաղորդած որոշ վկայություններն անմիջական առնչություն ունեն հայ ժողովրդի պատմության հետ: Բացի այդ, Տեխեյրան կատարել է XV դարի պարսիկ հայտնի պատմագիր Միրխոնդի «Ռուզբաթ-աս-սաֆա» («Մաքրության այգի») հայտնի աշխատության քաղվածական թարգմանությունը, որը մասնագետների հավաստիացումով թերություններ ունի⁹¹: 1605 թ. Տեխեյրան Հորմուզի, Բասրայի ու Բաղդադի վրայով վերադառնում է հայրենիք: Հաջորդ հեղինակը, որի ուղեգրությունը Արևելքի, ներառյալ նաև Հայաստանի պատմության ուսումնասիրության կարևոր աղբյուրներից է՝ Պիետրո դելլա Վալլեն է (1586—1652 թթ.): Ուղեգիրը դեռևս երիտասարդ հասակում աչքի էր ընկել որպես բանաստեղծ ու գրականագետ և ստացել Ֆանտաստիկ մականու-

նը: 1614 թ. նեապոլցի բժիշկ-պրոֆեսոր Մարիո Սկիպանոյի խորհրդով Պիետրո դելլա Վալլեն ձեռնարկում է մի մեծ ճանապարհորդություն դեպի Արևելք: Նույն թվականին նա ժամանում է Կոստանդնուպոլիս, ուր մնում է մի տարի և սովորում թուրքերեն: Կոստանդնուպոլիսից Պիետրո դելլա Վալլեն ուղևորվում է Կասիբե, ապա Երուսաղեմ, իսկ այնուհետև՝ Դամասկոս, Հալեպ և Բաղդադ: Այստեղ նա ամուսնանում է ասորուհի Սիտտի Մասնիի հետ և ընտանիքով 1616 թ. մեկնում Իրան: Ուղեգիրը սիրալիր ընդունելություն է արժանանում Շահ-Աբասի կողմից՝ Ֆարրահաբադի պալատում և 1618 թ. մասնակցում է Արդեբիլի մոտ թուրքերին շահի տված ճակատամարտին ու մանրամասն նկարագրում այն: 1621 թ. Պիետրո դելլա Վալլեն մեկնում է Սպահան, այնուհետև՝ Շիրազ, այցելում է Պերսեպոլիսի ավերակներն ու այդ բուրբ մանրամասն նկարագրում իր աշխատության մեջ: Իրանում նա մնում է մինչև 1623 թ., այնուհետև ուղևորվում է Հնդկաստան: Պիետրո դելլա Վալլեն հայրենիք է վերադառնում Մակվի, Բասրայի, Հալեպի և Կիպրոսի վրայով: 1626 թ. մարտին Հոսմում նա արժանանում է Ուրբանոս 8-րդ պապի ընդունելությանը, որը նրան առաջարկում է բարձր պաշտոն պապական պալատում:

Պիետրո դելլա Վալլեի ուղեգրությունը⁹², ինչպես նաև Շահ-Աբասի մեծարմանը նվիրված նրա հատուկ աշխատությունը⁹³ ժամանակի միջազգային սուր հարաբերությունների վերաբերյալ պարունակած ստուգապատում ու թարմ նյութերի շնորհիվ վաղուց են գրավել մասնագետների ուշադրությունը: Ուղեգրի աշխատությունը կազմված է նամակների ձևով՝ ուղղված իր բարեկամ Մարիո Սկիպանիին: Շահ-Աբասի պալատում եղած ժամանակ դելլա Վալլեն իրանական տիրակալին խորհուրդ էր տալիս դաշինք կնքել իր պալատը դեպանություն ուղարկած ուս կազակների հետ՝ ընդդեմ թուրքերի: Ուղեգրին թվում էր, թե այդ ճանապարհով իրանցիները թուրքերին կվտարեն Սև ծովից ու կգրավեն Կոստանդնուպոլիսը: Հայերի, Հայաստանի ու մասնավորապես իրանա-

⁹⁰ Relaciones de Pedro Texeira descendemia y succession de los reyes de Persia y de Hormuz y de un viaje hecho por el mismo autor don de la India Oriental hasta Italia por terra. Ambres. Կոստանդնուպոլիսում է սույն աշխատության թարգմանությունը ֆրանսերեն. տե՛ս Վոյաժե՛ս Վոյաժե՛ս Վոյաժե՛ս Վոյաժե՛ս Voyage de Texeira ou l'histoire des rois de Perse, traduite d'Espagnol en François. Vol. I, II, Paris, 1631.

⁹¹ Միրխոնդի եվրոպական լեզուներով թարգմանությունների մասին տե՛ս Ա. Ե. Крымский, История Персии, ее литературы и древнейшей теософии, т. III, М., 1917.

⁹² St' u Pietro della Valle, Viaggi in lettere familiari al suo amico Mario Schipanno divisi in tre parti cioe la Turchia, la Persia et l'India, Roma, 1650.

Շուտով աշխատությունը լույս է տեսնում նաև ֆրանսերեն էսպան կարճոյի և Ֆրանսուա Լե Կոնտի թարգմանությամբ. տե՛ս Pietro della Vallé, Voyages de Pietro della Vallé, gentilhomme romain dans la Turquie, l'Egypte la Palestine, la Perse, les Indes Orientales et autres lieux. Vol. I—IV, Paris, 1661—1663.

⁹³ Pietro della Vallé, Delle condizioni di Abbas, re di Persia, Venetia, 1628. St' u նաև Ժ. Բոգուսի կատարած ֆրանսերեն թարգմանությունը՝ Histoire apologetique d'Abbas, roy de Perse, traduite de l'italien de messire Pierre de la Vallé. Paris, 1631.

հայերի մասին Պիետրո դելլա Վալլեի մոտ կան ընդարձակ տեղեկություններ: Ուղեգրի նամակները, շնայած երբեմն ավելորդ մանրամասնություններին ու ձգձգվածությանը, կարգացվում են հափշտակությամբ: Պիետրո դելլա Վալլեի աշխատության շնորհիվ մենք հստակ պատկերացում ենք կազմում XVII դարի 20-ական թթ. Շահ-Աբասի վարած ներքին ու արտաքին քաղաքականության մասին:

1629 թ. առաքելական նկրտումներով Արևելք ուղարկվեց Ֆրանսիական միսիոներների ևս մի փոքրաթիվ խումբ, որի մեջ էր նաև հայր Ֆիլիպը: Նա 1649 թ. կիսում լատիներենով⁹⁴ հրատարակում է Թուրքիա, Հայաստան և Իրան կատարած իր ուղևորության նկարագրությունը, որը մի քանի տարի անց լույս է տեսնում նաև Ֆրանսերենով⁹⁵:

XVII դարի սկզբում Եվրոպայի մայրաքաղաքներում սկսում են լույս տեսնել նաև աշխատություններ՝ նվիրված Թուրքիայի պատմությանը, որոնց մեջ արժանահիշատակ է 1609 թ. կիսում լույս տեսած ժակ էսպրինշարի «Օսմանցիների կամ թուրքերի կայսրերի պատմությունը մինչև Մեհմեդ 3-րդը»⁹⁶: Մինչև XV դարի վերջին բառորդն ընկած ժամանակաշրջանի պատմությունը մի քաղաքություն է Եվրոպայում լույս տեսած համանման աշխատություններից, ըստ որում պատմական անունները, տեղանունները և տերմինները խիստ աղավաղված են: Հայ ժողովրդի պատմության տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում գրքի վերջում գետնով գրված հետևյալ վերնագրով՝ «1577 թ. սկսած պարսկական պատերազմի և այն բոլորի մասին, որ տեղի ունեցան մինչև 1588 թ.», ուր մանրամասն խոսվում է Անդրկովկասում թուրք-պարսկական պատերազմների և Իրանի կրած պարտության մասին:

Այս գրքի լույս ընծայումից մի քանի տարի առաջ նույն կիսում քաղաքում 1606 թ. հրատարակվում է Եվրոպական պետությունների ղե-

կավարներին հասցեագրված մի ուղերձի լատիներենից կատարված ֆրանսերեն թարգմանությունը⁹⁷: Գրքի առաջին մասում խոսվում է թուրքական վայրագ կարգերի մասին, որոնք քրիստոնյա ժողովուրդներին բերեցին ստրկություն բառիս լայն իմաստով: Ի դեպ, հենց առաջին մասում էլ նկարագրվում է այսպես կոչված «եսիր բազարներում» (ստրկաշուկաներ) քրիստոնյա գերեզարվածների վաճառքի ցնցող պատկերը: Գրքի երկրորդ մասում շեշտվում է Եվրոպայում թուրքերի ունեցած ռազմական հաջողության գլխավոր պատճառը՝ Եվրոպական պետությունների անմիաբանությունը:

XVII դարի սկզբի Թուրքիայի, ինչպես նաև Հայաստանի պատմությանը վերաբերող Եվրոպական աղբյուրների մեջ առանձնահատուկ տեղ են գրավում 1605-ից մինչև 1610 թթ. Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպան բարոն դե Սալինյակի նամակները Ֆրանսիական թագավորին⁹⁸: Նամակներում արժարժվում են Թուրքիայի այդ տարիների քաղաքական պատմության կարևորագույն հարցերը՝ ջալալիների շարժումը, թուրք-իրանական, թուրք-ավստրիական պատերազմները և այլն, և այլն: Հաղորդված նյութերը միանգամայն ստույգ են: Օսմանյան կայսրության վիճակը XVII դարի սկզբին այն աստիճան ծանր էր, որ բարոն դե Սալինյակին թվում էր, թե այդ պետության վերջնական կործանումը մոտ է: Բարոն դե Սալինյակի նամակներին նվիրված ժողովածուում տեղ են գտել նաև Ֆրանսիայի թագավորի (1607 թ. մարտի 26-ի), ենիչերիների պետի (նույն թվականի սեպտեմբերի 10-ի)՝ դեսպանին ուղղված նամակները, որոնցում շոշափվում են ջալալիների շարժման հետ կապված հարցերը⁹⁹:

XVII դարի 30—40-ական թթ. Թուրքիայի, Իրանի և Հայաստանի պատմության կարևորագույն Եվրոպական աղբյուրների շարքին են դասվում գերմանացի արևելագետ Ադամ Օլեարիուսի¹⁰⁰ և Ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Բատիստ Տավերնիեի ուղեգրությունները¹⁰¹: Վերջինս թողել է պատմական արժեք ներկայացնող ևս մի աշխատություն¹⁰², որը

⁹⁴ Itinerarium o'len'ale, in quo varii itineraris successus, plures orientis regiones, earum montes, maria et flumina, series principum qui in eis dominati sunt, incolae tam christiani quam infideles, populi, animalia, arbores, plantae et fructus, religiosorum in Oriente missiones ae varii celebres aventus describuntur. Lyon, 1649.

⁹⁵ Voyage d'Orient du R. P. Philippe de la Très Sainte Trinité, carme déchaussé, ou il décrit les divers succez de son voyage, plusieurs régions d'Orient, leurs montagnes, mers et leurs fleuves, la chronologie des princes qui y ont dominé, leurs montagnes, habitans tant chrestiens qu'infidèles. Lyon, 1652, 1669.

⁹⁶ Histoire des ottomans ou empereurs des Turcs jusque' à Mahomet III. Revue et augmentée depuis la impression.. Item un bref de la dernière guerre de Perse, par Jacques Esprinchart. Lyon, 1609.

⁹⁷ *Տե՛ս* Discours parénitique sur les choses turques. Lyon, 1606.

⁹⁸ Ambassade en Turquie de Jean Goutand Biron, baron de Salignac 1605 à 1610. Paris, 1889.

⁹⁹ *Նույն տեղում*, էջ 124—127:

¹⁰⁰ Relation du voyage d'Adam Oléarius en Moscovie, Tartarie et Perse. Traduit de l'allemand par A. de Wicquefort. Paris, 1679.

¹⁰¹ *Տե՛ս* Les six voyages de Jean Baptiste Tavernier en Turquie, en Perse et aux Indes. T. I—IV, Paris, 1697.

¹⁰² *J. B. Tavernier*, Nouvelle relation de l'intérieur du sérail du Grand Seigneur. Paris, 1675.

նպաստում է լրացուցիչ տվյալներ քաղելու Օսմանյան կայսրության կառավարչաձևի, ավատական հարաբերությունների ու բազմաթիվ այլ հարակից հարցերի մասին:

Աղամ Օլեարիուսը (մոտ 1600—1671) գերմանացի արևելագետ էր, մաթեմատիկոս ու փիլիսոփա: Ավարտել է կայսրիզի համալսարանը: Երիտասարդ հասակում նա ծառայության մեջ է մտնում Հոլշտայնի հերցոգ Ֆրիդրիխ 3-րդի մոտ: Շուտով նա, որպես դեսպանության քարտուղար, իսկ հետագայում՝ խորհրդատու, մտնում է Ֆրիլիպ Կրուզերի և Օ. Կրուզերի գեներալի Մոսկովա ու Իրան մեկնող դեսպանության կազմի մեջ: Այդ դեսպանության գլխավոր նպատակն էր իրանական բոժոժը Մոսկովայի վրայով Հոլշտայն տեղափոխելու համար վերոհիշյալ երկու երկրների հետ առևտրական պայմանագրերի կնքումը: Դեսպանության կազմում Աղամ Օլեարիուսը երկու անգամ եղավ Մոսկովյան պետությունում, 1636—1639 թթ.: Անդրկովկասի մերձկասպյան շրջաններում (Շամախի, Դերբենդ և այլն) ու Իրանում: Ուղևորության ընթացքում Աղամ Օլեարիուսը սովորում է ռուսերեն, պարսկերեն ու արևելյան այլ լեզուներ և հայրենիք վերադառնալուց հետո մշակում հավաքած հարուստ նյութերն ու հրատարակում իր ուղեգրությունը¹⁰³:

Աղամ Օլեարիուսի աշխատության հիմնական մասը նվիրված է Իրանի վիճակի նկարագրությանը, այնտեղ մեծ տեղ է տրված նաև Սեֆյան հարստության քաղաքական պատմության հարցերին՝ սկսած նրա հիմնադիր շահ Իսմայիլից մինչև հեղինակի ժամանակ իրանական դահին բազմած Արաս 2-րդի իշխանության առաջին տարիները, ավելի ճիշտ՝ մինչև 1643 թ.¹⁰⁴: Մեզ անհայտ են հեղինակի օգտագործած աղբյուրները. ինչ վերաբերում է XVII դարի 30—40-ական թթ., մասնավորապես շահ Սեֆիի ժամանակաշրջանի պատմության շարադրանքին, ապա դրանք մեծ մասամբ գրված են ականատեսի վկայությամբ: Շամախիի հայերին ու մասնավորապես ջուղայահայերին նվիրված են ընդարձակ էջեր¹⁰⁵:

Ժան Բատիստ Տավերնիեն ծնվել է Փարիզում 1605 թ. և իր մահկանացուն կնքել Մոսկովայում՝ 1689 թ.: Հայրը՝ Գարրիել Տավերնիեն, լինելով փորագրիչ և աշխարհագրական քարտեզների հրատարակիչ, որդու մեջ վաղ հասակից առաջացնում է սեր դեպի ճանապարհորդությունը: Նրա երևակայությունն առանձնապես շուշի էր առասպելական Արևելքը:

¹⁰³ Adam Olearius, 5. 1. էջ 172—174.

¹⁰⁴ Նույն տեղում, էջ 612—637:

¹⁰⁵ Նույն տեղում, էջ 336—390, 497—500, 581—633 և այլն:

1636 թ. Ժ. Բ. Տավերնիեն պատեհ առիթ է ներկայանում իրագործելու իր երազանքները: Նա Կոստանդնուպոլիսի վրայով անցնում է Փոքր Ասիա և Թոխաթ—Էրզրում—Սրբան ճանապարհով մտնում է Իրան: 1636-ից մինչև 1663 թ. ընկած ժամանակահատվածում նա Արևելքում ձեռնարկում է վեց ճանապարհորդություն. Իրանում և մասնավորապես Հնդկաստանում նա զբաղվում է թանկարժեք քարերի առևտրով: Ուղեգրությունների մեջ հայ ժողովրդի պատմության համար առավել հետաքրքրականն առաջին գիրքն է: Ժ. Բ. Տավերնիեն երկասիրությունը գրված է կենդանի ու վառ լեզվով, թեև հաղորդված անձնանունների ու տեղանունների մի մասը աղավաղված են: Հեղինակը փաստորեն չի տիրապետել արևելյան լեզուներից որևէ մեկին: Իրանի մասին եղած հաղորդումների մեծ մասը վերցված են երկրում երկար տարիներ ապրած հայր Ռաֆայել դյու Մանից և հայր Գարրիել Շինոնից: Հիրավի, երբ մենք համեմատում ենք Ժ. Բ. Տավերնիենի և հայր Ռաֆայելի դյու Մանի «Պարսկաստանի վիճակը 1660 թվականին» աշխատությունը, ապա նկատում ենք, որ ուղեգրության ամբողջ հատվածներ պարզ փոխադրություններ են հայր Ռաֆայել դյու Մանի վերոհիշյալ աշխատությունից: Մեր խոսքը, նախ և առաջ, վերաբերում է նոր Ջուղայի հայերի, նրանց կենցաղի ու սովորությունների մասին հաղորդված տեղեկություններին, ինչպես նաև հայերի դավանանքին ու նորջուղայեցիների շրջանում եվրոպական միսիոներների ծավալած կաթոլիկական քարոզներին հատկացված էջերին¹⁰⁶:

Ինչ վերաբերում է Ժ. Բ. Տավերնիենի մյուս աշխատությանը, ապա ինչպես խոստովանում է հեղինակը, դրա նյութը վերցված է թուրքական պալատում երկար տարիներ ծառայած երկու եվրոպացիներից: Իմ գրքում, գրում է նա, ես ընթերցողներին ներկայացրի թուրքական պալատի հավաստի ու մանրամասն նկարագրությունը՝ հենվելով այն նյութերի վրա, որոնք «...ես նշմարեցի Կոստանդնուպոլիս կատարած իմ բազմաթիվ ճանապարհորդությունների ընթացքում և այն ամենի վրա, որ ես իմացա երկու իմաստուն մարդկանցից, որոնք բարձր պաշտոններով երկար տարիներ ծառայել էին Սերայում (թուրքական պալատում—Մ. Զ.)»¹⁰⁷, Գրքի առաջաբանում Ֆրանսիական թագավորին հղած իր խոսքում Ժ. Բ. Տավերնիեն ուղում է հավաստիացնել, որ սովորական պալատի և առհասարակ թուրքիայի մասին իր դիտողությունները լավագույնն են մինչ այդ Եվրոպայում լույս տեսած նույնա-

¹⁰⁶ St. J. B. Tavernier, Les six voyages... I, էջ 459—470, 495—518.

¹⁰⁷ J. B. Tavernier. Nouvelle relation de l'intérieur du sérail, préface, p. III.

տիպ աշխատութիւններէ մեջ¹⁰⁸, Սակայն դա հետո է իրականութիւններէ Ժ. Բ. Տավերնիեից առաջ և նրանից հետո Օսմանյան կայսրութեան վերաբերյալ լույս տեսան մեծ քանակութեամբ տրակտատներ՝ աշխատեց կողմած «էտաներ» (Ֆրանսերեն «état» կացութիւն, վիճակի իմաստով), ուր ավելի խոր ու գիտականորեն են լուսարանվում օսմանյան ռազմավարական տիրական կարգերի բազմաթիւ կողմերը: Այդպիսի աշխատութիւններէ թվին նախ և առաջ պետք է դասել անգլիական թագավոր Կարլոս 2-րդի դեսպան Ռիկոյի կամ Ռայկոտի հուշերը¹⁰⁹ XVII դարի 60-ական թթ. Թուրքիայի մասին: Նա 1661 թ. գալիս է Թուրքիա և այնտեղ մնում տասնութ տարի, ըստ որում տասներկու տարի՝ որպէս անգլիական հյուպատոս Զմյուռնիայում: Նա բազմաթիւ ճանապարհորդութիւններ է կատարում Օսմանյան կայսրութեան տարբեր նահանգներում ու հիմնավորապէս տիրակալութեան էր թուրքերենին: Ռիկոն այլևայլ ուղիներով ստույգ տեղեկութիւններ է ստանում Մեհմեդ 4-րդի ժամանակաշրջանի թուրքական բանակի, պետական ֆինանսների վիճակի, պալատական կյանքի մանրամասնութիւնների մասին և այլն, ու այդ բոլորը գրի է առնում, ինչպէս նշվեց, «Օսմանյան կայսրութեան արդի վիճակի պատմութիւնը» խորագրով աշխատութեան մեջ, որը թարգմանված է եվրոպական մի շարք լեզուներով և վկայում է աշխատութեան խիստ արժեքավորութեան մասին:

Բացի այս երկասիրութիւնից, Ռիկոն ունի նաև 1623-ից մինչև 1677 թ. ընկած ժամանակաշրջանի օսմանյան գահակալների պատմութեանը նվիրված առանձին ուսումնասիրութիւն¹¹⁰: Աշխատութեան առավել հետաքրքիր մասերը նվիրված են հեղինակի ապրած ժամանակաշրջանի քաղաքական պատմութեան հարցերի լուսարանմանը: Ռիկոյի այս աշխատութեան շատ դրվագներ անմիջական առնչութիւն ունեն հայ ժողովրդի պատմութեան հետ:

Ռիկոյի հետ միաժամանակ թուրքական մայրաքաղաքում էր ֆրանսիական դեսպանութեան քարտուղար Ֆրանսուա Պետի Դելակրուան: Նա Արևելք էր ուղարկվել դեռևս 1670 թ. և Պոլսում էր գտնվում 1676—

1680 թթ.: 1684 թ. նա Փարիզում հրատարակում է իր հուշերը¹¹¹, որոնք հետաքրքիր ու արժեքավոր նյութեր են պարունակում թուրքական կառավարչաձևի, պետական պաշտոնների, բանակի, ֆինանսների, Պոլսի բնակչութեան և մասնավորապէս հայերի մասին:

1672—1673 թթ., որպէս ֆրանսիական դեսպան մարքիզ դե Նուանտելի անձնական քարտուղար, Պոլսում էր գտնվում արևելագետ-սեմագետ Անտուան Գալլանը: Նա թողել է մեզ իր օրագիրը, որը հրատարակվում է 1881 թ. Փարիզում՝ Շառլ Շեֆերի կողմից¹¹²: Այստեղ հեղինակը հիմնականում կանգ է առնում ֆրանս-թուրքական հարաբերութիւնների վրա, և դրա հետ մեկտեղ տեղեկութիւններ է հաղորդում Պոլսի բնակչութեան առօրյա կյանքի, կենցաղի ու սովորութիւնների մասին: Օրագրում Ա. Գալլանը տալիս է իր ժամանակակից վեզիր Կարա Մուստանա փաշայի կենսագրութիւնը: Քանի որ խոսք եղավ դեսպան մարկիզ դե Նուանտելի մասին, ապա նշենք, որ XIX դարի վերջի ֆրանսիացի հայտնի պատմաբան Ալբեր վանդալը հրատարակեց նրա ուղեգրութիւնները¹¹³, ուր կան խիստ հետաքրքիր նյութեր՝ կապված Լյուդովիկոս 14-րդի արևելյան քաղաքականութեան հետ: Այնտեղ խոսվում է Կրետի կամ Կանդիայի պատերազմին (1645—1669 թթ.) Ֆրանսիայի մասնակցութեան, ֆրանս-թուրքական հարաբերութիւնների սրման և արևելյան քրիստոնեաների, ի թիվս որոնց հայերի՝ Ֆրանսիացի ակնկալած օգնութեան մասին և այլն:

XVII դարի 60—80-ական թթ. եվրոպայի տարբեր երկրներում լույս են տեսնում տարբեր բնույթի տրակտատներ (էտաներ) և պատմական աշխատութիւններ Թուրքիայի մասին, առանց որոնց ուսումնասիրութեան հնարավոր չէր լինի ամբողջական պատկերացում կազմել Օսմանյան կայսրութեան հայ ժողովրդի իրավաքաղաքական վիճակի մասին: Այդպիսի աշխատութիւններից նիկոլոզ Մաքիյավելլու¹¹⁴, Դյու Լուարի¹¹⁵, Ժակ դե Ժանտի¹¹⁶, Միշել Ֆեբուրի¹¹⁷, դե Շասե-

¹¹¹ François Petit de la Croix. Mémoires du sieur de la Croix. Paris, 1684.

¹¹² Journal d'Antoine Galland pendant son séjour à Constantinople. (1672—1673). publié et annoté par Charles Schéfer. T. I—II, Paris, 1881.

¹¹³ Les voyages de marquis de Nointel (1670—1680) par Albert Vandal. Paris, 1900.

¹¹⁴ Nic. Machiaveli. Political reflexions upon the government of the Turks. London, 1656.

¹¹⁵ Les voyages du sieur du Loir, Paris, 1654.

¹¹⁶ Jacques de Jant. L'histoire du prince Osman, fils du sultan Ibrahim. Paris, 1670.

¹¹⁷ Michel Fevre, L'état présent de la Turquie... Paris, 1675; Théâtre de la Turquie où sont représentées les choses les plus remarquables qui s'y passent

¹⁰⁸ Նույն տեղում:

¹⁰⁹ Histoire de l'état présent de l'empire ottoman, contenant les maximes politiques des turcs, les principaux points de la religion mahométane, ses sectes, ses hérésies et ses divers sectes de religieux, leur discipline militaire avec une supputation exacte de leur force par mer et par terre et du revenu de l'état. Traduit de l'anglois de monsieur Ricaut. Paris, 1670.

¹¹⁰ Histoire des trois derniers empereurs des Turcs, depuis 1623 jusq'à 1677. Traduite de l'anglais du steur Ricaut. T. I—IV, Paris, 1673.

պոլի¹¹⁸, Դյու վինյոյի¹¹⁹, դե լա Մագդելենի¹²⁰ ու այլոց տրակտատները: Հատկապես պետք է առանձնացնել Միշել Ֆերուրի պատմական աշխատությունները, որոնցում հայերի մասին հաղորդումները խիստ ընդարձակ են:

Միշել Ֆերուրի Թուրքիայի մասին գրած ուսումնասիրությունը ոչ այլ ինչ է, քան մի կոչ՝ ուղղված «ամենաքրիստոնյա» արքային՝ Լյուդովիկոս 14-րդին, նվաճելու Մերձավոր արևելքը: Հեղինակը թուրքական կայսրությունը ներկայացնում է մոայլ գույներով ու իրեն մի պահ թվում է, որ Լյուդովիկոս 14-րդը, հենվելով Արևելքում քրիստոնյա հպատակների օգնության ու աջակցության վրա, Ֆրանսիայի դրոշը կպարզի Օսմանյան կայսրության փլատակների վրա: «Դուք, Ձերդ Մեծութուն,— Լյուդովիկոս 14-րդին դիմելով, գրում է Մ. Ֆերուրը,— որ միշտ էլ համարվել եք թուրքական հողերի ապագա նվաճողը, Եվրոպայում Ձեր (վերջին) հաղթանակների համբավի ներքո հույսեր եք ներշնչում (քրիստոնյա հպատակների մեջ), որ Դուք ավելի թիչ խոչընդոտներով ու ավելի մեծ փառքով մի օր նվաճելու եք Արևելքը»¹²¹:

Միշել Ֆերուրը Թուրքիայում ապրել է տասներկու տարի, սովորել է, համաձայն գրքի հրատարակչի հավաստիացման, թուրքերեն, արաբերեն, քրդերեն, մի հանգամանք, որը նրա ուսումնասիրությունը տալիս է արժանահավատություն: Հավանաբար այդ է պատճառը, որ դեռևս հեղինակի կենդանության ժամանակ այդ գիրքն ունեցավ նաև իտալերեն ու գերմաներեն հրատարակություններ:

XVII դարի 60—80-ական թթ. Արևելքի պատմության ուսումնասիրության համար որոշակի արժեք ունեն եվրոպացի հեղինակների՝ գեղազանցապես Իրան կատարած ուղևորությունների մասին հուշերը: Դրանց թվին են պատկանում նախ և առաջ Լա Բուլլեյ լե Գուզի¹²²,

aujourd'hui avec les moeurs, le gouvernement, les coutumes et la religion des Turcs et des treize autres sortes de nations qui habitent dans l'empire ottoman. Traduit de l'italien par sieur Michel le Febvre, Paris, 1687.

¹¹⁸ De Chassepoe. Histoire des grands vizirs, Paris, 1676.

¹¹⁹ Du Vigneau. L'état présent de la puissance ottomane avec les causes de son accroissement et celles de sa décadence, Paris, 1678.

¹²⁰ De la Magdalaine. Le miroir de l'empire ottoman ou l'état présent de l'empire et de la milice du grand seigneur, Paris, 1681.

¹²¹ Michel Febvre, L'état présent., I—II.

¹²² Les voyages et observations du Sieur de la Boullaye Le Gouz, Paris 1653. Երկրորդ հրատարակությունը՝ 1657 թ.:

ժ. Տեվենոյի¹²³, ժ. Շարդենի¹²⁴, Պետրոս Պետրիկի¹²⁵, Յ. Սարույսի¹²⁶, Ն. Սանսոնի¹²⁷, երեք կաթոլիկ միսիոներների ու այլոց ուղեգրությունները:

Ֆրանսուա դե լա Բուլլեյ լե Գուզը ծնվել է Ֆրանսիայի Բոժե քաղաքում՝ 1610 թ., մահացել է Սպահանում՝ 1669 թ.: Լե Գուզը, դեռևս երիտասարդ հասակում ճանապարհորդություն է ձեռնարկում դեպի Արևելք: Նա վենետիկից ուղևորվում է Կոստանդնուպոլիս և Փոքր Ասիայի ու Հայաստանի վրայով հասնում Սպահան: Որոշ ժամանակ Իրանում ապրելուց հետո նա մեկնում է Հնդկաստան, իսկ այնուհետև վերադառնում հայրենիք: Լա Բուլլեյ լե Գուզի ուղեգրությունը գրված է առանց որևէ մեթոդական սկզբունքի, վատ ոճով և Ամասիայի, էրզրումի, Հասան-Կալայի, էջմիածնի, Երևանի, Թավրիզի մասին նրա հաղորդած վկայությունները խիստ համառոտ են ու գիտական լուրջ արժեքից զերծ:

Իսկ գրան հակառակ, ժան Տեվենոյի ուղեգրությունը XVII դարի ամենակարևորագույն աղբյուրների շարքն է դասվում թե՛ նյութերի առատության և թե՛ հեղինակի կատարած նուրբ գիտողությունների առումով: Ժան Տեվենոն ծնվել է Փարիզում (1633 թ. հունիսի 7-ին), մահացել Իրանական Ադրբեջանում (1667 թ. նոյեմբերի 28-ին): 1655 թ. նա մեկնում է Կոստանդնուպոլիս, այնտեղ մնում է մեկ տարի ու հաջորդ թվականի ապրիլին վերադառնում Փարիզ: Յոթ տարի անց նա ձեռնարկում է իր երկրորդ ուղևորությունն Արևելք ու Բաղդադի վրայով

¹²³ Jean Thévenot, Relation d'un voyage fait au Levant dans laquelle il est curieusement traité des Etats sujets au Grand Seigneur, des moeurs, religions, forces, gouvernements politiques, langues et coutumes de ce grand empire. Paris, 1664.

ժ. Տեվենոյի սույն աշխատությունն ունեցել է մի շարք հրատարակություններ 1689 թ. Օուանում՝ հինգ հատորով, Ամստերդամում՝ 1705, 1725 և 1727 թ., XVII դարի վերջին լույս են տեսնում նաև անգլիական, հոլանդական և գերմանական հրատարակությունները: Մեր ձեռքի տակ է Ամստերդամի 1727 թ. հրատարակությունը:

¹²⁴ Jean Chardin, Voyages en Perse et autres lieux de l'Orient tome I—X. Paris, 1811. Idem. Récit du couronnement du roi de Perse Soliman III, Paris, 1671.

¹²⁵ Bedros Bedik. Cehil Sutun. Viennae, 1678.

¹²⁶ Աստիեն անգամ Յան Սարույսի աշխատությունը լույս է տեսնում հոլանդերեն 1677 թ., ապա թարգմանվում է ֆրանսերեն և լույս է տեսնում Ամստերդամում 1681 թ., Լիսնոնում՝ 1682 թ. և դարձյալ Ամստերդամում 1718 և 1720 թթ. ու վերնագրված է այսպես. „Les voyages de Jean Struys en Moscovie, en Tartarie, en Perse, aux Indes et en plusieurs autres pais étrangers“.

¹²⁷ Nicolas Sanson. Voyage ou relation de l'état présent du royaume de Perse, Paris, 1695.

գալիս է Իրան: Սպահանում նա հինգ ամիս շարունակ լինում է հայր Ռաֆայել դյու Մանի հյուրը: 1667 թ. Պերսեպոլիսի ավերակները ուսումնասիրելիս հանդիպում է Շարդենին և Տավերնիեին: Այնուհետև նա որոշում է հայրենիք վերադառնալ Հյուսիսային Իրանի վրայով, ուր և կնքում է իր մահկանացուն:

Իրանի, իրանահայերի, Պոլսի և պոյսահայերի մասին ժան Տեվինոյի տվյալները միանգամայն ստույգ են: Հեղինակը բավականին սովորել էր թուրքերեն ու պարսկերեն և պատահական չէ, որ արևելյան անձնանունների, տեղանունների և տերմինների տառադարձությունը մեծ մասամբ ճիշտ է տվել: Ուղեգրությունը գրված է կենդանի ու վառ լեզվով: Իրանի մասին նա իր գիտելիքների մի զգալի մասը ստացել է հայր Ռաֆայել դյու Մանից:

Ինչ վերաբերում է ժան Շարդենին, ապա մասնագետների համընդհանուր կարծիքով, Սեֆյան Իրանի վարչական, հասարակական-քաղաքական և այլ հարցերին նվիրված նրա բազմաճատոր աշխատությունը դասական ու լավագույնն է XVII—XVIII դդ. ողջ եվրոպական գրականության մեջ: Կարելի է առանց չափազանցության ասել, որ ժան Շարդենի ուղեգրություններում մասնագետ ընթերցողը կհանդիպի բազմակողմանի ու հարուստ տեղեկությունների:

Ժան Շարդենը ծնվել է Փարիզում (1643 թ. հունվարի 24-ին), դաժանանքով բողոքական հարուստ ոսկերիչի ընտանիքում, մահացել է լոնդոնում՝ 1713 թ.: 1664 թ. ժ. Շարդենը առևտրական նպատակներով հոր կողմից ուղարկվում է Սուրաթ, ուր ուղևորվում է Իրանի վրայով: Այս ճանապարհորդությունը կարճ է տևում: Վերադառնալով Փարիզ, նա այստեղ երկար չի մնում և 1665 թ. կրկին ուղղություն է վերցնում դեպի Իրան, ուր այս անգամ մնում է հինգ տարի և հիմնավոր սովորում պարսկերեն: 1660 թ. ժան Շարդենը շահ Աբաս 2-րդի կողմից ստանում է շահական վաճառականի կոչում: 1670 թ., վերադառնալով Փարիզ, նա հրատարակում է իր «Պարսկաստանի թագավոր Սուլեյման 3-րդի թագադրումը և թե ինչ հիշարժան դեպքեր տեղի ունեցան նրա իշխանության առաջին երկու տարիներին» խորագրով աշխատությունը: 1671 թ. ժան Շարդենը դարձյալ մեկնում է Իրան, իր հետ տանելով մեծ քանակությամբ թանկարժեք քարեր և Իրանի համար հազվագյուտ իրեր: Այս անգամ նա Իրանում մնում է շուրջ տասը տարի: 1681 թ., գալով Անգլիա, ժան Շարդենը անգլիական թագավոր Կարլոս 2-րդի կողմից նշանակվում է Արևելահնդկական ընկերության ներկայացուցիչը Հոլանդիայում:

Իր ուղեգրությունների առաջաբանում ժան Շարդենը տալիս է հետևյալ ուշագրավ ինքնակենսագրական տվյալները. «Ես Փարիզից մեկնեցի առաջին ճանապարհորդության 1664 թ. և այնտեղ վերադարձա 1670 թ.» վեց ամբողջական տարիներ մնալով Արևելքում, սակայն մեծ մասամբ Պարսկաստանում, որտեղ իմ (առևտրական) գործերը ինձ առանձնապես կապում էին: Ես այս ճանապարհորդությունից ունեմ ավելի շատ հուշեր, քան որևէ այլ մի ճանապարհորդ, որոնք ինձ նախորդել էին այս ուղու վրա և ես ավելի գիտեի պարսկերենը, քան մինչ այդ բոլոր նրանք, ովքեր տվել էին այս մեծ թագավորության մասնակի նկարագրությունը»¹²⁸: Երկրորդ ճանապարհորդության ընթացքում (1671—1681 թթ.), գրում է ժ. Շարդենը, ես ջանացի իմ ողջ ժամանակն «ինչքան դա ինձ հնարավոր եղավ, օգտագործել ուսումնասիրելու երկրի լեզուն, ավելի ստույգ իմանալու նրա ժողովուրդների կենցաղն ու սովորությունները: Կանոնավոր կերպով հաճախելու պալատ և այստեղ զրույցելու մեծամեծների և գիտնականների հետ, որպեսզի ինձամբով ուսումնասիրեմ այն ամենը, ինչ կարող է արժանանալ Եվրոպայի հետաքրքրությանը»¹²⁹: Ժ. Շարդենը այն աստիճան է ուսումնասիրում Իրանը, որ գրում է, թե ինքը «...Սպահանը ավելի լավ գիտի, քան Լոնդոնը, շնայած այնտեղ ապրում է ահա քսանվեց տարուց ի վեր»¹³⁰:

Ինչ վերաբերում է աշխատության բովանդակությանը, ապա ժ. Շարդենը դարձյալ առաջաբանում տալիս է հետևյալ բացատրությունը. «Բաժանված է տասը հատորների. առաջին հատորը մի տեսակ օրագիր է այն ամենի մասին, թե ինչ պատահեց ինձ հետ կամ թե ինչ առավել ուշագրավ երևույթների հանդիպեցի իմ ճանապարհորդության ընթացքում Փարիզից մինչև Մինգրելիա: Երկրորդը այս օրագրի շարունակությունն է Մինգրելիայից մինչև Թավրիզ, երրորդը՝ Թավրիզից մինչև Սպահան: Այս երեք հատորները պարունակում են Փարիզից մինչև Սպահան կատարած ճանապարհորդության նոտագրման ողջ բովանդակությունը: Չորրորդ հատորն ընդգրկում է Պարսկաստանի կայսրության, նրա կառավարության, օրենքների, բնակչության, կենցաղի ու սովորությունների համընդհանուր նկարագրությունը: Հինգերորդը՝ պարսիկների գիտության ու արվեստների, նրանց արտադրության նկարագրությունն է. վեցերորդը՝ նրանց քաղաքական-ազգային և քաղաքացիական կառավարության նկարագրությունն է, յոթերորդը՝ նրանց

¹²⁸ Jean Chardin, I, préface, 1—II.

¹²⁹ Նույն տեղում, էջ 2—3:

¹³⁰ Նույն տեղում:

կրոնի ու դավանանքի նկարագրությունն է. ութերորդը՝ Պարսկաստանի մայրաքաղաք Սպահանի հատուկ նկարագրությունն է...»¹³¹, Վերջապես իններորդ և տասներորդ հատորներն ընդգրկում են 1674 թ. Սպահանից դեպի Բենդեր-Աբաս և Պերսեպոլիս հեղինակի կատարած ուղեորությունների նկարագրությունը:

Զնայած թույլ տված որոշ անճշտություններին ու թյուրիմացություններին, ժան Շարդենի ուղեգրությունները շահեկան են ոչ միայն Սեֆյան Իրանի, այլև Հայաստանի պատմության ուսումնասիրության համար:

Պետրոս Պետիկը, ծագումով Կիլիկիայի Քիլիս քաղաքից, կաթոլիկական հայ ընտանիքի զավակ էր: Փոքր հասակում նա զրկվում է հորից: Կրթությունը ստանում է Հոմոմում: Ուսումն ավարտելուց հետո պապի ներկայացուցիչ Մատթեոս Ավանիացու հետ մեկնում է Իրան՝ պապի, Ֆրանսիական թագավորի և Վենետիկի դուքսի նամակները շահին հանձնելու համար: Եվրոպա վերադառնալով նա գրում է «Ջեհիլ սուլթուն» («Քառասուն սյուն») կոչված աշխատությունը: Այն արժանահավատ տեղեկություններ է պարունակում իրանահայ կյանքի, հայ խոջայության և հայ հասարակական շարժումների վերաբերյալ: «Մանթիանալով Պետիկի գրքին,—գրում է Աշ. Հովհաննիսյանը,—դժվար չէ համոզվել, որ քաղաքական և իդեական իր բովանդակությամբ, ընդհանուր առմամբ դա արժանահավատ մի փաստագրություն է և կարևոր մի աղբյուր՝ 1675—1678 թվականների հայ ազատագրական մտքի պատմության տեսակետից նշանակալից իրադարձությունների լուսաբանության համար»¹³²:

Յանս Կանեցսոն՝ Ստրաուսը կամ Ստրույսը հոլանդացի նավաստի էր: 1656 թ. Կանդիայի պատերազմի ժամանակ մասնակցել էր Դարդանելի ծովամարտին, ուր թուրքական ռազմական նավատորմը ոչնչացվեց: 1668 թ. նա ընդունվում է ռուսական ծառայության, ուր այն ժամանակ հավաքագրում էին օտարերկրացի նավաստիներին՝ Կասպից ծովի առևտրական նավատորմի կառուցման համար, որպեսզի իրանական բռժոժը տեղափոխեն Ռուսաստան: Այդ նպատակով, ինչպես հայտնի է, 1667 թ. Ռուսաստանն առևտրական պայմանագիր կրնքեց նոր Զուղայի հայ առևտրական ընկերության հետ: 1670 թ. ամռանը մի խումբ ընկերներով հետ Ստրույսը Աստրախանից ուղևորվում է դեպի Կասպից ծով: Տարկուում գերի է ընկնում տեղացի մի ֆեոդալի մոտ և ստրուկ վիճակում դեգերում է Երևանում, Դերբենգում, Շամա-

խում և այլուր: Փրկագնով ազատվելուց հետո Ստրույսը ծառայության է մտնում Իրանի լեհական դեսպանի մոտ, որի հետ ճանապարհորդում է Արզբեիլ—Ղազվին—Սպահան ուղիով ու մանրամասն նկարագրում Իրանի քաղաքական-հասարակական կացությունը XVII դարի 70-ական թվականներին:

Յան Ստրույսի ուղեգրությունը լայն ճանաչում է գտնում եվրոպայում ու թարգմանվում մի շարք եվրոպական լեզուներով: Հայ ժողովրդի պատմության տեսակետից հետաքրքրական են Յան Ստրույսի ուղեգրության այն էջերը, որոնցում խոսվում է Անդրկովկասի հայաշատ քաղաքների ու հատկապես նոր Զուղայի հայության մասին:

Նիկ. Սանսոնը միսիոներական առաքելությամբ Իրան ժամանեց 1683 թ.: Այստեղ նա սովորեց հայերեն, պարսկերեն և թուրքերեն, սակայն արևելյան լեզուներից նրա կատարած տառադարձությունից դատելով, կարելի է եզրակացնել, որ նա մատնանշված երեք լեզուներից ոչ մեկն էլ հիմնավոր չգիտեր: Մյուս կողմից, Նիկ. Սանսոնի մոտ որևէ նոր վկայություն չկա Իրանի մասին, որը չլիներ, ասենք, ժ. Բ. Տավերնիեի, ժ. Շարդենի ու այլոց մոտ: Այսուհանդերձ, այս աղբյուրը հաստատում է նախորդ հեղինակների հաղորդած տեղեկությունները:

Քանի որ խոսք եղավ կաթոլիկ միսիոներների մասին, անզրադառնանք Իրանում և հայերի միջավայրում երկար տարիներ ապրած, նրանցից մի քանիսի թողած պատմական երկասիրություններին, որոնք վաղուց արդեն գրավել են պատմաբան-մասնագետների ուշադրությունը: Նկատի ունենք հայր Գաբրիել դե Շինոնի¹³³ և հայր Ռաֆայել դյու Մանի¹³⁴ ու այլոց աշխատությունները:

Հայր Գաբրիել դե Շինոնը շուրջ քսան տարի ապրել է Սպահանի կապուչինների վանքում ու եղել է հայր Ռաֆայել դյու Մանի մերձավորագույն գործընկերներից մեկը: Նա սովորել է պարսկերեն, թուրքերեն և հայերեն: Խոսելով հայերենի մասին, դե Շինոնը, ընկնելով շափազանցությունների մեջ, նշում է, որ իր «...հայոց լեզուն Արևելքի, գուցե և աշխարհի ամենադժվար լեզուներից է»¹³⁵: Դե Շինոնը նոր Զուղայի հայերի մեջ երկպառակություններ է սերմանել, որի հետևանքով հայ համայնքի ներկայացուցիչների խիստ բողոքի հիման վրա կառավարության ներկայացուցիչները նրան տեղափոխել են Թավրիզ:

¹³³ P. Gabriel de Chinon. Relations nouvelles du Levant ou traités de la religion, du gouvernement et des coutumes des Perses, des Arméniens et des Gaures. Lyon, 1671.

¹³⁴ (Raphael du Mans). Estat de la Perse en 1660.

¹³⁵ Gabriel de Chinon, էջ 239.

¹³¹ Նույն տեղում:
¹³² Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ..., հ. 2, էջ 199.

Շինոնը սուր հարձակումներ է գործում «հերձվածող» հայերի դեմ, որոնց միակ «մեղքը» եղել է այն, որ շեն ենթարկվել կաթոլիկական պրոպագանդային: «Ես շեմ կարծում,—գրում է նա,—թե աշխարհում գտնվի մի այլ ժողովուրդ, որը ավելի կապված լիներ իր ավանդույթներին, քան հայերը»¹³⁶:

Հայր Ռաֆայելը (Ժակ Դյուտերտրը) ծնվել է Ֆրանսիայի Ման քաղաքում՝ 1613 թ. օգոստոսին: Երիտասարդ հասակում ստացել է փայլուն կրթություն, հատկապես աչքի է ընկել մաթեմատիկայի բնագավառում: Նա քառասուն տարի ապրել է Սպահանում, եղել է կապուչինների վերատեսուչը և վայելել է ինչպես ֆրանսիական արքունիքի, այնպես էլ Իրանի տիրակալների (սկսած Աբաս 2-րդից մինչև շահ Հյուսեյնը) հովանավորությունը: Ռաֆայել դյու Մանի մասին առաջին անգամ հիշատակում է Ժ. Բ. Տավերնիեն՝ 1644 թ. ուղևորության ժամանակ:

Իրանական արքունիքի հետ ամենասերտ կապեր ունենալով՝ դյու Մանը քաջատեղյակ էր XVII դարի երկրորդ կեսի թուրք-իրանական քաղաքական հարաբերություններին: Ռաֆայել դյու Մանի «Պարսկաստանի վիճակը 1666 թվականին» աշխատությունը գրված էր հատուկ կուրբերի համար, որը, ինչպես տեսանք, ձգտում էր ընդլայնել ֆրանսիական առևտուրը Արևելքում:

Ռաֆայել դյու Մանի գրքի վերջում կցված է խիստ արժեքավոր մի հավելված, ուր տեղ է գտել թուրքերի դեմ սեֆյան շահ Իսմայիլի տարած հաղթանակների՝ իտալացի Ռոտայի կողմից գրված պատմության ֆրանսերեն թարգմանությունը: Այս թարգմանությունից հետո գրքի հրատարակիչ Շառլ Շեֆերը ղետեղել է Իրանից ու Երևանից Ֆրանսիայի կառավարության ներկայացուցիչներ դե Լալենի և դե լա Բուլլեյ դե Գուզի նամակները կյուրովիկոս 14-րդին: Վերջում տրվում է Իրանի առևտրի վերաբերյալ Ժ. Բ. Տավերնիեի հուշագիրը¹³⁷:

Հայաստանում և իրանահայերի մեջ XVII դարի վերջին քառորդին միսիոներական գործունեության պատմության ուսումնասիրության համար կարևորագույն աղբյուր է 1694 թ. Փարիզում լույս տեսած «Հայաստանի ներկա վիճակը, ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր առումով» աշխատությունը¹³⁸: Հրատարակիչն է ճիզվիտների կենտրոնի ղեկավարներից Թոմա Շառլ Ֆլեորիոն: Գրքի առաջաբանում ճիզվիտ

միսիոներների նամակներից քաղվածքներ են բերված՝ բնութագրելու համար հայ ժողովուրդին: «Աշխարհում քիչ ժողովուրդ կգտնվի,—ասվում է զեկուցագրում,—որ հայ ժողովուրդի նման լավագույն բարեմասնություններ ունենա: Ամենուր նշմարելի է, որ հայերը մեծ ողջամտություն և խոհականություն ունեն: Նրանք քիչ են խոսում, շատ են խորհրդակցում ու իրենց ձեռնարկած բնագավառներում մեծ հաջողություններ ունեն: Այդ նրանք են; որոնք անում են Արևելքի ողջ առևտուրը և մեծապես նպաստում են Եվրոպայի բազմաթիվ մեծ քաղաքների առևտրի բարգավաճմանը»¹³⁹:

Առաջաբանում հատուկ ընդգծվում է նաև հայերի ընթերցասիրությունը, գիտություն և կատմամբ նրանց ծարավը ու հյուրասիրությունը: «Հայաստանի ներկա վիճակը...» աշխատության շնորհիվ մասնագետպատմաբանները ոչ միայն որոշակի գաղափար կկազմեն Հայաստանում կաթոլիկ միսիոներների ծավալած քայքայիչ գործունեության մասին, այլև առանձին արժեքավոր տեղեկություններ կքաղեն Հայաստանի հասարակական-տնտեսական և քաղաքական պատմության հարցերի վերաբերյալ:

«Հայաստանի ներկա վիճակը...» աշխատության յուրահատուկ շարունակությունը կարելի է համարել 1730 թ. Փարիզում լույս տեսած «Ճիզվիտական միաբանության մի միսիոների ճանապարհորդությունը Թուրքիայում, Պարսկաստանում, Հայաստանում, Արաբիայում և Բարբարիայում» գիրքը¹⁴⁰, -ուր դարձյալ որոշ մանրամասնություններով տրվում է նույն ճիզվիտ միսիոներների գործունեությունը Հայաստանում XVII դարի 80—90-ական թվականներին: Անանուն վերնագիր ունեցող այս աշխատության հեղինակը Վիլլոտն է, որն իր ժամանակին նույնպես միսիոներական նպատակներով եղել է Հայաստանում: Վիլլոտի այս աշխատության համար ևս աղբյուր են ծառայել կաթոլիկ միսիոներների նամակները Հայաստանից: Ուղեգրության մեջ տեղ են գտել նաև Իրանի XVIII դարի 20-ական թթ. քաղաքական պատմությանը վերաբերող նյութեր, հավանաբար ներկայացված ականատեսի վկայություններով¹⁴¹: Գրքի վերջին մասում խոսվում է ճիզվիտ միսիոներների կողմից նախիջևանի հայ կաթոլիկ համայնք այցելության ընթացքում իրանական հարկահավաքների թույլ տված բռնությունների, կամայականությունների և հայ կանանց ընդվզումի մասին¹⁴²: Ուղեգրության

¹³⁶ Նույն տեղում, էջ 271:

¹³⁷ Raphael du Mans. Appendice, p. 259—356.

¹³⁸ Etat présent de l'Arménie, tant pour le temporel que pour le spirituel. Avec une description du pays et des moeurs de ceux qui l'habitent par le Père Th. Ch. Fleury. Paris, 1694.

¹³⁹ Նույն տեղում, էջ 6:

¹⁴⁰ Voyages d'un missionnaire de la compagnie de Jésus en Turquie, en Perse, en Arménie et en Barbarie. Paris, 1730.

¹⁴¹ Նույն տեղում, էջ 67—80:

¹⁴² Նույն տեղում, էջ 248—258:

մեջ կարելի է հանդիպել նաև Հայաստանի հասարակական, տնտեսական և քաղաքական պատմությանը վերաբերող այլ բնույթի նյութերի: Խոսելով Հայաստանում միսիոներական գործունեության մասին, չի կարելի զանց առնել ամենակարևորագույն աղբյուրներից մեկը՝ Թեոֆիլիան կրոնավոր Կղեմես Գալանոսի «Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցւոյն քնդ մեծի Սուրբ եկեղեցւոյն Հռոմայ» աշխատութիւնը, որը լույս տեսավ Հռոմում նաև լատիներեն¹⁴³: Կղեմես Գալանոսը Ուրբանոս 8-րդ պապի կողմից 1626 թ. Կովկաս էր ուղարկվել վրացիների և հայերի մեջ կաթոլիկություն տարածելու առաքելությամբ: Այնուհետև նա 1640 թ. անցնում է Պոլիս, ուր և հիմնավորապես սովորում է հայոց լեզուն: Կղեմես Գալանոսն իր բուռն բնավորությամբ և հայ եկեղեցու նկատմամբ ունեցած շքողարկված ատելությամբ առաջացրել է հայ հասարակայնության զայրույթը: Կաթոլիկ պրոպագանդայի կողմից նա անվանվել է «աստծու խարազանը՝ Արևելքի հերձվածողների նկատմամբ»: Նրա մոտ ի մի էին ձուլված կիրքն ու նենգությունը, ճարտարությունն ու խարդավանքը: «Այս հոգևոր գործիչն արդեն բոլորովին մի ուրիշ երևույթ է ներկայացնում իր անսովոր խանդով և ընդունակություններով.— գրում է Լեոն,— բայց մանավանդ իր խանդավաճքով: Նա 1636 թ. ուղարկված էր Վրաստան, ուր քաղաքական պաշտոնը ծածկում էր բժշկի մասնագիտության տակ: Վրացիների մեջ նա երկար շմնաց, այլ սովորելով հայերեն լեզուն, սկսեց հայերի մեջ «աստծու հունձ»-ը: Մի եռանդով, որ միանգամայն պակասում էր Պիրոմալիին (իր նախորդին—Մ. Զ.) և մի ճարակությամբ, որ միայն եզրփոխներին կարող էր պատիվ բերել: Իր հայրենագիտությունը նա ծառայեցրեց միսիոներական նպատակներին, հորինելով կրոնական վիճարանությունների գրքեր»¹⁴⁴:

XVII դարի վերջին քառորդին (1693—1698 թթ.) է վերաբերում իտալացի Կարլո Զեմելի Կարերի ճանապարհորդությունն Արևելքում, ներառյալ նաև Հայաստանում: Նա այցելել է էրզրում, Փարս, Երևան, Նախիչևան և հայերի մասին հաղորդում է ուշագրավ տեղեկություններ¹⁴⁵:

Եվս մի երկու աղբյուրներում խոսք է գնում հռոմեական եկեղեցու հետ հայերի դավանաբանական վեճերի, միսիոներների գործունեու-

¹⁴³ *St' a Cl. Galanus, Consiliatio ecclesiae Armenae cum Romanae. Vol. I—III, Roma, 1650—1654. Ուրի նաև այլ լատիներեն աշխատությունն նույն հարցի 2-րդը՝ Historia armena ecclesiastica et politica. Coloniae, 1685.*

¹⁴⁴ Լեո, *Հայոց պատմություն, Կ. Ք, Երևան, 1946, էջ 327:*

¹⁴⁵ *C. Gemelli-Careri, Voyages autour du monde. Paris, 1719.*

թյան և օսմանյան տիրապետության ներքո հայ եկեղեցու իրավական ստատուսի հետ կապված հարցերի մասին: Դրանք Դելակրուայի¹⁴⁶ և Լալրոզի¹⁴⁷ աշխատություններն են:

XVII դարի վերջի և XVIII դարի սկզբի հայ ժողովրդի պատմությանը վերաբերող եվրոպական աղբյուրների մեջ կարևոր տեղ է գրավում Պիտտոն դե Տուրնեֆորի ուղեգրությունը¹⁴⁸: Պիտտոն դե Տուրնեֆորը (1656—1708) ազնվականական ծագում ունեցող ֆրանսիացի ականավոր բուսաբան էր և 1691 թ. սկսած Ֆրանսիայի ականաբան իսկական անդամ: 1700—1702 թթ. Տուրնեֆորը ֆրանսիական կառավարության առաջարկով կատարում է մեծ ճանապարհորդություն դեպի Փոքր Ասիա, Հայաստան և Անդրկովկաս, որտեղից նա Ֆրանսիա է բերում 1356 նոր տեսակի բույսեր ու դեղաբույսեր, որոնց մի զգալի մասը՝ պատմական Հայաստանի տարածքից (ուղեգրության մեջ բերված են դրանց նկարները՝ արված հեղինակի կողմից): Այս առումով նա մեծ ծառայություն է մատուցել հայ բուսաբանությանը:

Պիտտոն դե Տուրնեֆորի ուղեգրությունը ներկայացված է Ֆրանսիայի պետական քարտուղար կոմս Ժերոմ դե Պոնշարտրենին հղված նամակների ձևով, ուր մանրամասն տեղեկություններ են հաղորդվում Թուրքիայի վարչատնտեսական կյանքի և Հայաստանի իրավիճակի մասին, ինչպես նաև պատմական էքսկուրսիաներ են կատարվում դեպի Հայաստանի անցյալի պատմությունը՝ կապված աշխարհագրական միջավայրի այս կամ այն տեղանվան հետ: Ուղեգրությանը կցված են պատմական Հայաստանի տարբեր քաղաքների հայերի տարազը պատկերող բազմաթիվ նկարներ:

Պիտտոն դե Տուրնեֆորը Փարիզից դուրս է գալիս 1700 թ. մարտի 9-ին, ժամանում Կոստանդնուպոլիս, ապա Սև ծովով մեկնում Տրապիզոն, այնուհետև էրզրումի (հունիսի 15), Կարսի (հուլիսի 12—16) և Թիֆլիսի վրայով գալիս հասնում է էջմիածին և Երևան (1701 թ. օգոստոս): Պիտտոն դե Տուրնեֆորը առաջին եվրոպացի ուղեգիրն էր, որ անհաջող փորձ կատարեց բարձրանալու Արարատ լեռան գագաթը¹⁴⁹: Ուղեգիրը նկարագրում է Արարատ լեռան բուսական ու կենդանական

¹⁴⁶ *La Croix, Etat Présent des nations et églises grecques, arméniennes et maronites en Turquie. Paris, 1695.*

¹⁴⁷ *M. V. La Crose. Histoire du christianisme d'Ethiopie et d'Arménie. Paris, 1739.*

¹⁴⁸ *St' a Relation d'un voyage du Levant fait par ordre du roy, par M. Pitton de Tournefort. T. I—II, Paris, 1717.*

¹⁴⁹ *Նույն տեղում, էջ 357—359:*

աշխարհը և ի դեպ նշում է իրեն հանդիպած վագրերի մասին: Նա Կարսի, Հասան Կալայի, Սերաստիայի, Քոխատի, Ամասիայի վրայով վերադառնում է Զմյուռնիա, որտեղից մեկնում է Մարսել:

Պիտտոն դե Տուրնեֆորի ուղեգրությունն աչքի է ընկնում շոշափված նյութերի հարստությամբ, գիտականությամբ, հեղինակի նուրբ դիտողություններով և այլն: Հիացած Արարատյան դաշտավայրի բերք ու բարիքով, նա այդ վայրը համարում էր «երկրային դրախտ»: Նա ջերմ խոսքեր է գրել նաև հայերի մասին, նշելով, որ «հայերը աշխարհի լավագույն մարդիկ են»¹⁵⁰: Հայ ժողովրդի պատմությունն ուսումնասիրողների համար առանձնապես մեծ հետաքրքրություն ունեն հայ վաճառականության և, մասնավորապես, Արևելքի ու Արևմուտքի միջև առևտրի զարգացման ընագավառում նոր Զուղայի խոշալուծյան կատարած դերի ու նշանակության մասին իր քսաներորդ նամակում Տուրնեֆորի արած դատողությունները¹⁵¹: Եվ առհասարակ պետք է նշել, որ նրա հաղորդած նյութերը բազմաթիվանդակ են:

Պիտտոն դե Տուրնեֆորի Արևելքում գտնվելու տարիներին Փոքր Ասիայում էր ճանապարհորդում հոլանդացի նկարիչ Կորնելիզ լե Քրույներ կամ լե Բրենը (1652—1726)¹⁵², 1701—1708 թթ. ընթացքում նա կատարեց իր երկրորդ ուղևորությունը դեպի Իրան և Հնդկաստան՝ Ռուսաստանի տարածքով: Նա Ռուսաստանից Իրան մեկնեց հայ վաճառականների ուղեկցությամբ և ճանապարհին այցելեց Շամախի, Քավրիզ ու Սպահան: Անդրկովկասի ու Իրանի վերաբերյալ նրա հաղորդած նյութերի մեծ մասը վերաբերում է տեղական բնակչության կենցաղին, սովորույթներին, հավատալիքներին: Նույնը կարելի է ասել նաև Քուրբիայի մասին նրա բերած տվյալների վերաբերյալ: Սակայն, այսուհանդերձ, լե Բրենի մոտ էլ կան վկայություններ, որոնք լրացնում են մեր գիտելիքները Քուրբիայի և Իրանի հասարակական-տնտեսական ու քաղաքական կյանքի վերաբերյալ:

XVII դարի վերջի և XVIII դարի առաջին քառորդի Իրանի, ինչպես նաև իրանահայերի և Արևելյան Հայաստանի պատմության համար որոշակի արժեք են ներկայացնում Սպահանի կարմելիտների միաբանության նոթագրություններն ու ճիզվիտ միսիոներների ղեկուցադրերը, նամակներն Իրանից¹⁵³:

Տվյալ ժամանակահատվածի պատմության համար եվրոպական պատմագիտության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում ևս երկու աշխատություն: Առաջինը լեհ ճիզվիտ միսիոներ Յուզե Կրուշինսկու հուշերն են¹⁵⁴, իսկ մյուսը՝ եվրոպացի հեղինակ Մամիյ-Կլերակի «Պարսկաստանի պատմությունն» է՝ գրված նույն Կրուշինսկու և եվրոպացի ու թուրք բարձրաստիճան պաշտոնյաների ղեկուցադրերի հիման վրա¹⁵⁵:

Յուզե Կրուշինսկու հուշերի հրատարակիչ ժան Անթուան դյու Սերսոն գրքի առաջաբանում հեղինակի մասին տալիս է շատ կարևոր կենսագրական տվյալներ: Գիրքը ամբողջովին հիմնված է ականատեսի վկայությունների վրա, «...բանգի ես այն կազմեցի,—գրում է նա,—բացառապես լեհ ճիզվիտ հայր Յուզե Կրուշինսկու հուշերի հիման վրա, որը քան տարի Սպահանում ապրելուց հետո, այնտեղից դուրս եկավ (աֆղանների կողմից) քաղաքի պաշարման վերջում, և առիթից օգտվելով պիտի ասեմ, որ նա մասնավորապես իրադարձություններին ծանոթ էր խորությամբ»¹⁵⁶: Նա, որպես թարգմանիչ, մասնակցում է շահական արքունիքի հետ եվրոպական այն պետությունների պատվիրակության ներկայացուցիչների բանակցություններին, որոնք Հոտմի պապի, գերմանական կայսեր ու ֆրանսիական թագավորի անունից նամակներ էին բերել շահին: Այդ բանակցությունների ընթացքում նա ճարպկորեն պետական բարձրաստիճան պաշտոնյաներից անհրաժեշտ տեղեկություններ է ձեռք բերել Իրանի քաղաքական կացության և շահ Հուսեյնի ժամանակ իրանական ավատատիրական հասարակության ճգնաժամի մասին¹⁵⁷: Իրանը աֆղանների կողմից գրավվելուց հետո հայր Կրուշինսկին կապեր է հաստատել նաև Իրանի նվաճողների հետ և իմացել վերին աստիճանի հետաքրքիր ու ստույգ տեղեկություններ¹⁵⁸: Նոր Զուղայի պաշարման ու այնուհետև գրավման ժամանակ հայր Կրուշինսկին գտնվել է նոր Զուղայի ճիզվիտների տանը և դարձել հայերի գլխին պայթած աղետի անմիջական ականատեսը¹⁵⁹: Հայր Կրուշինսկին, լինելով բժիշկ, բուժում է աֆղանական բարձրաստիճան պաշտոնյային. դառնում է նրա բարեկամն ու նրանից կարևորագույն տե-

¹⁵⁴ Histoire de la dernière révolution de Perse par le père Y. Krusinski. T. I—II, Paris, 1723.

¹⁵⁵ Mamiye-Clairac, Histoire de Perse depuis le commencement de ce siècle. T. I—III, Paris, 1750.

¹⁵⁶ P. Y. Krusinski, էջ 3:

¹⁵⁷ Նույն տեղում, էջ 4:

¹⁵⁸ Նույն տեղում, էջ 5:

¹⁵⁹ Նույն տեղում, էջ 54—112:

¹⁵⁰ Նույն տեղում, էջ 369—396:

¹⁵¹ *St's Voyages au Levant, c'est-à-dire dans les principaux endroits de l'Asie Mineure, dans les îles de Chio, Rhodes, Chypres etc...* par Corneille le Brun. T. I—V, Paris, 1725.

¹⁵² A Chronicle of the Carmelites in Persia, T. I—II, London, 1939.

¹⁵³ Choix des lettres édifiantes... T. V, Missions du Levant, Paris, 1809.

զեկույթուններ իմանում աֆղանական արշավանքի մասին: Հայր Կրու-
շինսկու հուշերը ժամանակագրական առումով հասնում են մինչև
1725 թ.: Հաջորդ տարիների Իրանի քաղաքական դեպքերը, ինչպես նաև
1727 թ. թուրքերի և Իրանի աֆղանական տիրակալ Աշրաֆի միջև
կնքված պայմանագրի կետերը տրված են արժանահավատ աղբյուրների
հիման վրա: Ընդլիար միսիոներին հուշերի սկզբում տրվում է Սեֆյան
հարստության քաղաքական պատմությունը շահ Իսմայիլից մինչև շահ
Հյուսեինի տիրապետությունն ընկած ժամանակաշրջանը: Նա այդ
գրել է Ադամ Օլևարիուսի, Տավերնիեի, Շարդենի և, չի բացառված, նաև
պարսկական ժամանակագրությունների հիման վրա: Այնուհետև ման-
րամասն ու գիտականորեն ստույգ պատմվում է շահ Հյուսեինի ժամա-
նակ Իրանում ծայր առած ճգնաժամի աղետաբեր հետևանքների մա-
սին, երկրի ու նրա աշխատավոր բնակչության համար: Չափազանցու-
թյուն չէր լինի ասել, որ Կրուշինսկու աշխատության այս հատվածը,
նսայի կաթողիկոս Հասան Զալալյանի «Աղվանից պատմության» հետ,
պատկանում է Իրանի այս ժամանակահատվածի պատմության լավա-
գույն աղբյուրների թվին:

Ինչ վերաբերում է Մամիյ-Կլերակի «Պարսկաստանի պատմություն»
եռահատոր աշխատությանը, ապա պետք է ասել, որ աֆղանական ար-
շավանքի, ինչպես և նախորդ շրջանի Իրանի պատմության համար հիմ-
նական աղբյուր դարձյալ ծառայել են Յ. Կրուշինսկու հուշերը: Իսրա-
յել Օրու իրանական դեսպանության մասին հաղորդված ընդարձակ
վկայությունները¹⁶⁰ նույնպես վերցված են Կրուշինսկուց: 1725 թ. հա-
ջորդող նյութերը, որոնք տեղ են գտել երկրորդ և երրորդ հատորներում,
պատմական որոշակի արժեքով օժտված տարբեր բովանդակության զե-
կուցագրեր են: Այդպիսիների շարքին են պատկանում՝ «Զեկույց Պարս-
կաստանում տեղի ունեցած տարբեր իրադարձությունների մասին, որը
կազմված է 1730 թվականին Սպահան արշաված մեծ Վեզիրին ներ-
կայացված հաշվետվությունների հիման վրա»¹⁶¹, «Մի թուրք էֆենդիի
կողմից գրված ու Կոստանդնուպոլսի վերջին խռովությանը վերաբերող
զեկուցագրի թարգմանությունը, որին կցված են այս իրադարձության
տարբեր պարագաներին վերաբերող նյութեր, քաղված այլ հուշագրու-
թյուններից»¹⁶²: Այստեղ պետք է նշել, որ երրորդ հատորի զգալի մա-
սը նվիրված է 1730 թ. Կոստանդնուպոլսում Պատրոնա Խալիլի ապրս-
տամբությանը և այդտեղ տեղեկություններ կան պոլսահայերի մասին:

¹⁶⁰ Mamiye-Clairac, Histoire de Perse. T. 1, p. 47—57.

¹⁶¹ Նույն տեղում, հ. 3, էջ 90—105:

¹⁶² Նույն տեղում, էջ 119—250:

Հետաքրքրությունից զուրկ չեն, անշուշտ, այն էջերը, որոնք նվիրված
են Քահանավազի խանի (հետագայում Նազիր շահի)՝ թուրքերի դեմ
մղած պատերազմների պատմությանը¹⁶³:

XVIII դարի սկզբին Օսմանյան կայսրության, հետևաբար նաև Արև-
մբայան Հայաստանի վիճակը, թուրքիայի փոխհարաբերությունները
եվրոպական պետությունների հետ լուսաբանված են թուրքիայի Ֆրանս-
սիական, անգլիական և այլ եվրոպական պետությունների դեսպաննե-
րի՝ իրենց կառավարություններին հղած զեկուցագրերում, նամակնե-
րում, հուշերում և այլն: Այդ նյութերի մի մասը հրատարակված է: Այս
առումով հատկապես ուշագրավ են 1717—1727 թթ. Պոլսում Ֆրանսիա-
կան դեսպան բարոն դե Բոննակի¹⁶⁴, իսկ այնուհետև նրան այդ պաշ-
տոնում փոխարինած մարքիզ դե Վիլնյուվի¹⁶⁵ հուշերը, զեկուցագրերը:
Վերջինս Պոլսում մնաց մինչև 1741 թ.: Այս երկու հեղինակների մոտ
էլ կան նյութեր, որոնք անմիջապես առնչություն ունեն հայ ժողովրդի
պատմության հետ: Բացի այս բնույթի աղբյուրներից, տվյալ ժամանա-
կաշրջանի պատմության ուսումնասիրման համար կան թուրքիայի քա-
ղաքական պատմությանը նվիրված աշխատություններ, որոնցից կա-
րելի է առանձնացնել մոլդավական իշխան Դիմիտրի Կանտեմիրի «Օս-
մանյան պատմությունը»¹⁶⁶, Ֆրանսիացի ճանապարհորդ Օբրի դե լա
Մոտրեի (1674—1743) ուղեգրությունը¹⁶⁷ և այլն: Մատնանշված վերջին
երկու հեղինակներից կարելի է քաղել լրացուցիչ պատմական նյութեր,
որոնք դարձյալ այս կամ այն չափով աղերավում են հայ ժողովրդի
պատմության հետ:

Ֆրանսիական դեսպաններ դե Բոննակի և դե Վիլնյուվի ուշադրու-
թյան կենտրոնում են եղել Ֆրանսիայի համար կարևոր երկու հարց՝
«հերձվածողներին», այսինքն՝ Արևելքի բրիտանյաներին կաթոլիկ
դարձնելու և լեանտյան առևտրի հարցերը: XVIII դարի առաջին քա-
տորդին պոլսահայ համայնքի ներսում ծայր առած ներհամայնքային
պայքարի մասին այս երկու հեղինակների մոտ կան ուշադրավ վկա-
յություններ: Հատկապես դե Վիլնյուվը ամենաեռանդուն մասնակցություն

¹⁶³ Նույն տեղում, էջ 250—354:

¹⁶⁴ Mémoire historique sur l'ambassade de France à Constantinople par le
marquis de Bonnac, publié avec un précis de ses négociations à la Porte ot-
tomane. par M. Charles Schéfer, Paris, 1894.

¹⁶⁵ Une ambassade française en Orient sous Louis XV. La mission du marquis
de Villeneuve 1728—1741, par Albert Vandal, Paris, 1887.

¹⁶⁶ Dimitri Cantémir. Histoire de l'empire ottoman. Paris, 1743.

¹⁶⁷ Motraye de la. Voyages de la Motraye en Europe, Asie et l'Afrique.
Vol. I—II, La Haye, 1727.

է ունեցել պոլսահայերի ներհամայնքային պայքարում: Բացի այդ, օգտավելով կապիտուլյացիաների հետևանքով թուրքիայի վրա Ֆրանսիայի ունեցած ազդեցությունից, այս երկու դեսպանները կարևոր դեր են խաղացել թուրքիայի արտաքին քաղաքական պատմության մեջ: Եթե դե Բոննակի միջնորդությամբ ստորագրվել է 1724 թ. հուլիսյան ռուս-թուրքական համաձայնագիրը, ապա դե Վիլնյովը վճռական դեր է կատարել 1739 թ. ռուս-թուրքական և ռուս-ավստրիական, բելգրադյան դույզ հաշտության պայմանագրերի կնքման հարցում:

XVIII դարի 30—40-ական թթ. թուրք-իրանական քաղաքական հարաբերությունների պատմությունը հնարավոր բոլոր մանրամասնություններով տրված է 1748 թ. Փարիզում լույս տեսած «Պարսկաստանի թագավոր Քահանավուլի պատմություն» սովորածավալ հատորի մեջ¹⁶⁸: Այն ընդգրկում է 1730—1736 թթ. ժամանակաշրջանը: Քահանավուլի կողմից Արևելյան Հայաստանի նվաճման առիթով Հայաստանի մասին հաղորդվում են անհրաժեշտ տեղեկություններ: Աշխատությունը հիմնված է սկզբնաղբյուրների՝ օսմանյան և իրանական բարձրաստիճան պաշտոնյաների ղեկուցագրերի վրա: Զի բացառված, որ այստեղ օգտագործված լինեն նաև օսմանյան ժամանակագրությունները, ականատեսների վկայությունները և այլն: Գրքում ուշագրավ տեղեկություններ կան նաև քրդերի ու ֆրզստանի մասին¹⁶⁹: Ընդարձակ էջեր կան նաև ջուղահայերի և այն մասին, թե ինչպես էր նադիր շահը ուզում վերականգնել Շահ-Աբասի ժամանակ ջուղահայերի ձեռք բերած առևտրական իրավունքներն ու արտոնությունները¹⁷⁰:

1730 թ. Պատրոնա Խալիլ Պոլսում բարձրացրած խռովության, Ահմեդ 3-րդի տապալման և Մահմուդ 1-ի գահ բարձրացման, խռովության օրերին պոլսահայերի անցկացրած ահուսարսափի և այլ հարակից հարցերի մասին է պատմում «Ջեկուցագիր 1730 և 1731 թվականների երկու ապստամբությունների մասին»¹⁷¹ վերնագրով 1737 թ. Հաագայում հրատարակված գիրքը, որը տվյալ ժամանակաշրջանի արժանահավատ աղբյուրներից է: Այս նույն հարցերին է նվիրված նաև դե Գրուզենակի 1740 թ. Փարիզում լույս տեսած աշխատությունը¹⁷²:

Նադիր շահի ժամանակ թուրք-իրանական առնչությունների պատմության կարևոր աղբյուրներից է ֆրանսիական արքայական ակադեմիայի անդամ Մ. Օտտերի երկհատոր ուղեգրությունն արևելքում¹⁷³: Հեղինակը, ինչպես ինքն է գրում, Պոլսում գտնվելու ժամանակ վայելել է ֆրանսիական դեսպան դե Վիլնյովի հովանավորությունն ու աջակցությունը: Իր ուղեգրության մեջ Մ. Օտտերը խոսում է 1736 թ. աշնանը իր այցելած Կիլիկիայի քաղաքներ Ադանայի, Տարսուսի, Սսի և այլ վայրերի մասին: Ապա անցնելով ֆրզստանով ու պատմական Հայաստանի՝ քրդերի ազդեցության ոլորտում գտնվող տարածքով, տեղեկություններ է տալիս Բիթլիսի ու նրա հարակից շրջանների մասին: Մ. Օտտերի հաղորդած վկայություններից երևում է, որ նա Իրանում գտնվելու քսան ամիսների ընթացքում սովորել է պարսկերենն ու ծանոթացել Պարսկաստանի վիճակին¹⁷⁴: Մ. Օտտերի ուղեգրության առաջին հատորի զգալի մասը նվիրված է թուրքերի դեմ նադիր շահի մղած պատերազմների պատմությանը¹⁷⁵, գրված այլևայլ ստույգ աղբյուրների հիման վրա: Այն սկսվում է աֆղանական արշավանքից ու հասցվում է մինչև 1739 թ. տեղի ունեցած իրադարձությունները: Շարադրված քաղաքական պատմությունը շնայած համառոտ լինելուն պարունակում է տեղեկություններ, որոնք բացակայում են Քահանավուլի խանի պատմությանը նվիրված, վերը մեր հիշատակած աշխատության մեջ: Այսպես, Մ. Օտտերը վկայություններ ունի Սյունիքում և Քավրիզի մոտ թուրքական բանակին հայերի ցույց տված դիմադրության մասին¹⁷⁶ և այլն: Երկրորդ հատորը բացառապես նվիրված է 1739 թ. հեղինակի ղեպի Պոլիս վերադարձի ուղևորության նկարագրությանը: Ճանապարհը Դիարբեքի, Արզնի, Խարբեքի վրայով ընթանում էր ղեպի Սեբաստիայի նահանգ: Հատկապես հետաքրքիր են այն էջերը, ուր խոսվում է Սեբաստիայի նահանգում լեվենդ ավազակախմբերի խժոժությունների, փաշայի բանակի կամայականությունների ու բռնությունների մասին: Նա մի քանի անգամ գիշերել է հայկական տներում, ուր իրեն պատմել են հայ ժողովրդի կրած անլուր տառապանքների, զրկանքների մասին:

¹⁷³ Voyages en Turquie et en Perse avec une relation des expéditions de Tahmas Kouli-Khan, par M. Otter de l'académie royale des inscriptions et belle-lettres. T. I—II, Paris, 1748.

¹⁷⁴ Նույն տեղում, հ. II, էջ 1:

¹⁷⁵ Նույն տեղում, հ. I, էջ 254—358:

¹⁷⁶ Նույն տեղում, էջ 281—282:

¹⁶⁸ Histoire de Thamas Kouli-Kan, roi de Perse. Nouvelle édition. Paris, 1748.

¹⁶⁹ Նույն տեղում, էջ 150—152:

¹⁷⁰ Նույն տեղում, էջ 285—289:

¹⁷¹ Relation des deux rebellions arrivées à Constantinople en 1730 et 31 dans la déposition d'Achmet III et l'élévation au trône de Mahomet V, composés sur des mémoires originaux reçus de Constantinople. La Haye, 1737.

¹⁷² Grouzenac de. Histoire de la dernière révolution arrivée dans l'empire ottoman le 28 septembre 1730. Paris, 1740.

Արևելյան Հայաստանի 1720—1750-ական թթ. քաղաքական պատմության ուսումնասիրության համար որոշ արժեք ունի նաև Ֆրանսիացի հեղինակ դե Պեյսոնելի «Պարսկաստանի և Վրաստանի արդի խառնակությունների մասին ուսումնասիրության փորձ»¹⁷⁷ վերնագրով աշխատությունը: Նրանում մանրամասն շարադրված են Վրաստանի քաղաքական պատմության կարևորագույն փուլերը՝ Վախթանգ Յ-րդից մինչև Հերակլ 2-րդի ժամանակաշրջանը: Վերջին գլուխը վերնագրված է այսպես. «Պարսկաստանի և Վրաստանի վիճակը ներկայիս 1753 թվականին»¹⁷⁸, այլ կերպ ասած, հեղինակը դեպքերը ընթերցողներին է ներկայացնում որպես ականատես:

Նադիր շահի ժամանակաշրջանի Արևելքի պատմության հարցերը շոշափված են նաև ժամանակակից մի քանի այլ հեղինակների կողմից, որոնք գտնվելով Արևելքում, մոտիկից ծանոթ էին թուրք-իրանական քաղաքական առնչություններին: Այդպիսիներից էին, օրինակ, էտյեն Մինյոն¹⁷⁹, դե Սագրեդոն¹⁸⁰, Մ. Գելակրուան¹⁸¹ և այլք: Այս հեղինակների մոտ շոշափվում են ոչ միայն քաղաքական, այլև երբեմն հասարակական-տնտեսական պատմության հարցերը:

XVIII դարի 50—60-ական թթ. Օսմանյան կայսրության պատմության ուսումնասիրության համար որոշակի արժեք ունեն Պոլսում Ֆրանսիայի դեսպան կոմս դե Սեն Պրիեստի¹⁸², անգլիական դեսպաններ Հենրի Գրենվիլի¹⁸³ և Զեյմա Պորտերի¹⁸⁴ հուշերն ու աշխատություն-

¹⁷⁷ Essai sur les troubles actuels de Perse et de Géorgie, par M. de Peyssonnel, Paris, 1754 Այս հեղինակը հետաքրքրվում էր Վրաստանի պատմությամբ՝ ֆրանսիական առևտուրը Անդրկովկասում և Իրանում զարգացնելու նպատակով: Ինքն էլ՝ 1787 թ. ֆարիզում լույս տեսած «Տրակտատ Սև ծովի առևտրի մասին» (Traité sur le commerce de la mer Noire, par M. Peyssonnel, ancien général de France à Smyrne) գրքի հեղինակն է:

¹⁷⁸ Նույն տեղում, էջ 151—154:

¹⁷⁹ Histoire de l'empire ottoman depuis son origine jusqu'à la paix de Belgrade en 1740, par M. Mignet. T. I—IV, Paris, 1741.

¹⁸⁰ De Sagredo. Histoire de l'empire ottoman. T. I—VII, Paris, 1732.

¹⁸¹ M. de la Croix. Abrégé chronologique de l'histoire ottomane. T. I—II, Paris, 1758.

¹⁸² M. le comte de Saint-Priest. Mémoires sur l'ambassade de France en Turquie et sur le commerce des français dans le Levant, Paris, 1877.

¹⁸³ Henry Grenville. Observations sur l'état actuel de l'empire ottoman, edited by Andrew S. Ehrenkretz, The University of Michigan press, 1971.

¹⁸⁴ Turkey, its history and progress. From the journals and correspondence of sir James Porter, continued to the present time with a memoir of sir James Porter by his grandson Georges Larpent. Vol. I—II, London, 1844; Réflexion sur l'état critique actuel de la puissance ottomane. Paris, 1765.

ները: Ֆրանսիայի և Անգլիայի դեսպաններն իրենց կառավարություններին հղած զեկուցագրերում մեծ տեղ են հատկացրել այդ երկու երկրների լեռնային առևտրին: Այդ զեկուցագրերում հաղորդվում են այնպիսի տեղեկություններ, որոնք բարձրացնում են դրանց գիտական նշանակությունը: Ի դեպ, նույնպիսի խոշոր գիտական նշանակություն ունի նաև Հանվելի աշխատությունը նույն ժամանակաշրջանի իրանյան առևտրի վերաբերյալ¹⁸⁵: Այս գրքում բազմաթիվ պատմական փաստեր կան, որոնք անմիջականորեն աղբյուրում են հայ ժողովրդի պատմության հետ:

XVIII դարի 60—70-ական թթ. Թուրքիայի պատմության ուսումնասիրության համար շահեկան են նաև Ֆրանսուա դե Տոտտի¹⁸⁶, բարոն դե Բոննեվալի¹⁸⁷ հուշերը, Մարսիլիի¹⁸⁸ Թուրքիայի ռազմական պատմությանը նվիրված հանրահայտ աշխատությունները և այլն:

Հունգարական ծագում ունեցող բարոն դե Տոտտը երկար տարիներ աշխատում էր Պոլսի ֆրանսիական դեսպան Վերժենի մոտ: Նա մի քանի տարի որպես ռազմական, ինժեներ ծառայեց նաև թուրքական բանակում և առանձնապես մեծ գործունեություն ծավալեց 1768—1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ: Մշտական շփման մեջ գտնվելով թուրքական ղեկավար շրջանների հետ, նա մոտիկից ծանոթացավ թուրքական վարչական համակարգի, ֆինանսական դրուժյան, բանակի կացության հետ և այլն:

Վերը հիշատակված այս երեք հեղինակների մոտ էլ այս կամ այն առիթով խոսվում է Թուրքիայի հայերի, նրանց իրավական վիճակի մասին և այլն:

Այս ժամանակաշրջանի պատմության համար մասնագետների մոտամենալայն ճանաչում ունի ծագումով պոլսահայ Իգնատիոս Մուրաջեա դ'Օսսոնի յոթհատորանոց «Օսմանյան կայսրության ընդհանուր պատկերը»¹⁸⁹ խորագիրը կրող աշխատությունը: Նա զբաղվել է դիվանագիտական գործունեությամբ (եղել է Շվեդիայի դեսպանության աշխա-

¹⁸⁵ Hanvey. An historical account of the British Trade over the Caspian sea. T. I—IV, London, 1753.

¹⁸⁶ Tott, baron de. Mémoires sur les Turcs et les Tartares. Vol. I—III, Amsterdam, 1781.

¹⁸⁷ Mémoires de comte de Bonneval... sous les empereurs Ahmet III et Mahomet I. Nouvelle édition. Vol. II, Paris, 1806.

¹⁸⁸ L'état militaire de l'empire ottoman, ses progrès et sa décadence par M. le comte de Marsigli. Amsterdam, 1732.

¹⁸⁹ M. d'Ohsson. Tableau général de l'empire ottoman. Vol. I—VI, Paris, 1778—1824.

տակիցը Պոլսում, հյուպատոսս՝ Իզմիրում): Մ. դ'Օսսոնի աշխատությունը կատարյալ մի հանրագիտարան է Օսմանյան կայսրության ու նրա հպատակների կյանքի տարբեր կողմերի մասին: Հիմնականում լինելով պատմական հետազոտություն, Մ. դ'Օսսոնի աշխատությունը միաժամանակ հեղինակի երկար տարիների ընթացքում կատարած անձնական դիտողությունների արդյունք է: Աշխատության մի մասը թարգմանված է ռուսերեն¹⁹⁰:

XVIII դարի վերջին քառորդի Արևելքի պատմության և կարևորագույն եվրոպական աղբյուրների շարքին են դասվում նաև ֆրանսիացի ճանապարհորդներ ու դիվանագիտական ներկայացուցիչներ կոմս դե Ֆերրիեր-Սովրեֆի¹⁹¹, Ֆ. Վոյնեյի¹⁹² և Գ. Ա. Օլիվիեի¹⁹³ ուղեգրությունները:

Ֆերրիեր-Սովրեֆը (1750—1814) 1782—1789 թթ. ֆրանսիական թագավոր կյուրովիկոս 16-րդի հանձնարարությանը դիվանագիտական գործունեության է ուղարկվում Պոլիս և այստեղից երկու անգամ՝ 1784—1785 և 1787 թթ. մեկնում է Իրան՝ Սպահան: Ճանապարհին նա այցելում է պատմական Հայաստանի քաղաքները՝ էրզրում, Կարս, Բայազետ, Երևան, էջմիածին, Նախիջևան, լինում է Անդրկովկասի հայաշատ քաղաքներում, որոնց թվում՝ Քրիլիսիում ու Շամախիում և այլն: Գտնվելով Իրանում, Ֆերրիեր-Սովրեֆը իրանական կառավարությանը խորհուրդ էր տալիս հնարավորության սահմաններում թույլ շտալ Ռուսաստանի թափանցումը Անդրկովկաս: Ի դեպ, հեղինակը տեղեկություններ է հաղորդում նաև նադիր շահի մահից հետո Իրանի քաղաքական պատմության հարցերի մասին: Այս առումով արժեքավոր են այն էջերը, որոնք նվիրված են հեղինակի ժամանակվա շահերին՝ Ալի Մուրադ խանին և Աղա Մուհամեդ խանին¹⁹⁴: Ուղեգրության մեջ մեծ տեղ է հատկացված ռուս-թուրքական 1787—1791 թթ. պատերազմի գլխա-

վոր պատճառներին, պատերազմող կողմերի ռազմական հնարավորություններին և այլն:

Ֆրանսուա Վոյնեյի ուղեգրության մեջ հիմնականում խոսվում է թուրքական տիրապետության ներքո գտնվող Սիրիայի և Եգիպտոսի՝ մասին, սակայն նրանում արժարժվում են Օսմանյան կայսրության հասարակական-տնտեսական պատմության այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են հպատակ բոլոր ժողովուրդներին: Այստեղ բազմաթիվ փաստերի հիման վրա ցույց է տրված օսմանյան իրավակարգի գիշատիչ բնույթը:

Գ. Ա. Օլիվիեի ուղեգրությունն ուսանելի է շատ կողմերով: Ուշադրություն է գրավում հեղինակի քաջատեղյակությունը Քուրբիայի և Իրանի ներքին վիճակին XVIII դարի 60-ական թթ.: Թե՛ Քուրբիայի հողային հարաբերությունների և թե՛ նահանգներում փաշաների գործադրած բռնությունների ու կամայականությունների մասին խոսելիս անմիջապես երևում են հեղինակի խոր գիտելիքները: Հեղինակի գրչի տակից ընթերցողների առաջ հաննում է արևելյան բռնատիրությունների քայքայման պրոցեսի և հպատակ ժողովուրդների, մասնավորապես քրիստոնյաների, անտանելի վիճակի վառ գույներով նկարագրված տխուր պատկերը:

Հայաստանի պատմական աշխարհագրության տեսակետից ուշագրավ է 1797 թ. Փարիզում լույս տեսած «Պատմական և աշխարհագրական հիշատակություններ Սև ու Կասպից ծովերի արանքով ընկած երկրների մասին» վերնագրով աշխատությունը¹⁹⁵:

Մեզ մնում է մի քանի խոսք ասել XIX դարի սկզբի եվրոպական մի շարք ուղեգրությունների մասին ու դրանով իսկ ավարտել աղբյուրների մասին մեր այս համառոտ տեսությունը: Այս ուղեգիրների մոտ ոչ միայն կան նյութեր, որոնք անհրաժեշտ են երկփեղկված Հայաստանի հասարակական-տնտեսական պատմությունը ուսումնասիրելու, այլև XVIII դարի վերջերից Օսմանյան կայսրության սահմաններում առաջացած դերբեջությունների հետ կապված հարցերը ավելի լավ ըմբռնելու համար:

¹⁹⁵ Mémoires historiques et géographiques sur les pays entre la mer Noire et la mer Caspienne Paris, 1797.

¹⁹⁰ М. д'Оссон. Полная картина Оттоманской империи в двух частях. Перевод с французского, СПб., 1795.

¹⁹¹ Mémoires historiques, politiques et géographiques des voyages du comte de Ferrières-Sauveboeuf, faits en Turquie, en Perse et en Arabie, depuis 1782 jusqu'en 1789. T. I—II, Paris, 1790.

¹⁹² C. F. Volney, Voyage en Egypte et en Syrie pendant les années 1783, 1784 et 1785 suivi de considération sur la guerre des Russes. London, 1788.

¹⁹³ Voyage dans l'empire othoman, l'Egypte et la Perse, fait par ordre d'un gouvernement pendant les six premières années de la république, par G. A. Olivier, Paris, an 9 (1801).

¹⁹⁴ Ferrières-Sauveboeuf, II, էջ 1—20.

Այս հեղինակներից նախ և առաջ պետք է հիշատակել Ա. Ժորբերին¹⁹⁶, Ա. Դյուպրեին¹⁹⁷, Գ. Դրուվիլին¹⁹⁸, Զ. Մ. Կիննեյրին¹⁹⁹, Մ. դե Կոցերյուրին²⁰⁰ և այլոց:

Պիեռ Ամեդե Ժորբերը (1779—1847) ֆրանսիացի խոշորագույն արևմեյակագետներից մեկն էր, Փարիզի արևելյան կենդանի լեզուների թուրքերեն լեզվի պրոֆեսոր: 1806 թվականին Պ. Ա. Ժորբերը նապոլեոնի կողմից գաղտնի առաքելությամբ ուղարկվում է Իրան, Ֆաթհ-Ալի-Շահին Ֆրանսիայի կողմը թեքելու նպատակով: Նույն տարվա ապրիլի 10-ին նա արդեն գտնվում է Պոլսում, ուր Սելիմ 3-րդի կողմից արժանանում է ջերմ ընդունելության: Հունիսի 7-ին նա արդեն Տրապիզոնում էր, որտեղից ուղևորվեց Էրզրում, իսկ այնուհետև անցնելով Արաքսը, ենթարկվեց քրդերի հարձակումներին, և ի վերջո գերի ընկավ Բայազետի փաշա Մահմուդի ձեռքը: Հրաշքով ազատվելով բանտային կապանքից, նա ուղևորվում է Իրան՝ իր առաքելությունը ավարտելու նպատակով:

Տրապիզոնից էրզրում ուղևորվելիս Ժորբերը ճանապարհին հանդիպում է ապստամբ թալուրոզլուների կատարած ավերածություններին, երկրում տիրող անիշխանությանը և, հետևաբար, ճանապարհների անապահովությանը: Նա ընդարձակ մի գլուխ նվիրել է քրդերին ու Քրդրտանին²⁰¹, խոսում է քրդաբնակ շրջաններում հայերի զինված լինելու մասին, առանձին վկայություններ է հաղորդում իր այցելած քաղաքների Երզնկայի, էրզրումի, Մանազկերտի, Վանի, Թավրիզի և այլ վայրերի մասին:

Ա. Դյուպրեն, որն իբրև Ֆրանսիայի ներկայացուցիչ երկար տարիներ զիմանագիտական պաշտոններ էր վարել Թուրքիայում, իր ուղեգրության առաջին գրքում խոսում է Ամասիայի, Թոխատի, Սեբաստիայի մասին և հատկապես հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում պղնձի արդյունահանության կենտրոն Արզնի—Մաղենի մասին²⁰²: Նրա հետագա ճանապարհն ընթանում է Դիարբեքիրի—Մերդինի—Մծրինի վրայով

դեպի Իրան: Երկրորդ հատորում Ա. Դյուպրեն նկարագրում է նոր Զուղայի և ջուղահայերի վիճակը XIX դարի սկզբին²⁰³: Այնուհետև տեղեկություններ է հաղորդում Թավրիզի ու նրա առևտրի մասին: Հետդարձի ճանապարհով նա Խոյի, Նախիջևանի վրայով ուղևորվում է Երևան ու էջմիածին և խիստ արժեքավոր տեղեկություններ հաղորդում²⁰⁴: Վերջում հեղինակը դիտողություններ է անում Եվրոպայի հետ Իրանի առևտրի վերաբերյալ²⁰⁵:

Գասպար Դրուվիլի ուղեգրության ամենահետաքրքիր էջերն են իրանական բեկերեկերի (խաների) մասին հաղորդումները²⁰⁶ և քրդերին նվիրված գլուխը²⁰⁷: Հեղինակի հավաստիացմամբ ինքը երկար տարիներ ապրել է քրդերի մեջ, ծանոթացել նրանց կենցաղին ու սովորույթներին:

Հայ ժողովրդի հասարակական-տնտեսական պատմության նյութերի կարելի է հանդիպել նաև Զոն Մակդոնալդ Կիննեյրի և Մորիս դե Կոցերյուրի մոտ:

- 203 Նույն տեղում, էջ 145—151:
- 204 Նույն տեղում, էջ 248—266:
- 205 Նույն տեղում, էջ 372—387:
- 206 G. Drouville, էջ 17—23:
- 207 Նույն տեղում, էջ 187—207:

¹⁹⁶ A. Jaubert. Voyage en Arménie et en Perse. Paris, 1821.
¹⁹⁷ A. Dupré. Voyage en Perse, fait dans les années 1807, 1808 et 1809. T. I—II, Paris, 1819.
¹⁹⁸ (G. Drouville). Voyage en Perse, fait en 1812 et 1813, par Gaspard Drouville. T. I—II, Paris, 1828.
¹⁹⁹ John Macdonald Kinnair, Voyage en Turquie. Paris, 1819.
²⁰⁰ Maurice de Kotzebue. Voyage en Perse à la suite de l'ambassade russe en 1817, trad. de l'allemand par M. Breton. Paris, 1819.
²⁰¹ A. Jaubert, էջ 66—77, 108—120 և այլն.
²⁰² A. Dupré, էջ 59—62.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԵՐԸ XIII—XV ԴԱՐԵՐՈՒՄ

Հոռմեական կայսրության անկումից ընդհուպ մինչև խաչակրաց արշավանքները, Նվրոպան, փաստորեն, դադարեցրել էր Արևելքի հետ ունեցած քաղաքական և տնտեսական ամեն տեսակի կապերը: Խաչակրաց արշավանքները որոշ առումով վերականգնեցին նախկին վիճակը: Կողոպտելով Արևելքի առասպելական հարստությունները, կաթոլիկ աշխարհի որոշ երկրներ, և մասնավորապես Վենետիկն ու Ջենովան, գարկ տվեցին իրենց սեփական քաղաքային տնտեսությանը: «Քրիստոնյա ենիչերիններ», երևալով Արևելքում, մասնավորապես Հայկական Կիլիկիայում, անկախ իրենց հետապնդած թալանչիական նպատակներից, որոշ առումով նպաստեցին Կիլիկյան հայկական պետության դիրքերի ամրապնդմանը: Սակայն Կիլիկիայում հայկական պետության հիմնադրումը բացառապես պայմանավորված չէր խաչակրաց արշավանքներով, ինչպես այդ ուղում են իրենց ընթերցողներին հավաստիացնել անցյալի ու ներկայի բուրժուական որոշ պատմաբաններ: Կիլիկյան հայկական պետությունը ստեղծվել էր դեռևս մինչև խաչակրաց արշավանքները: Միակ դրականը հայկական պետության դիրքերի ամրապնդման համար այն էր, որ խաչակրաց առաջին արշավանքի հետեւանքով սելջուկյան հորդաները ստիպված եղան նահանջել Միջերկրականի արևելքից և որ թուլացավ փոքրասիական սելջուկյան Իկոնիայի սուլթանությունը:

Այսուհանդերձ անհրաժեշտ է հատուկ ընդգծել, որ XII դարում Կիլիկյան հայկական պետության ռազմաքաղաքական հզորացման գրգռվոր պատճառը ոչ թե խաչակիրների մուտքն էր Կիլիկյան հայկական հողի վրա, այլ արդեն այս ժամանակ հոծ ու կազմակերպված հայ բնակչության առկայությունը:

Խաչակիրների ժամանակավոր օգնությունը Կիլիկյան հայկական պետականությանը հետագայում պարզապես վերածվեց շարիքի: Հուսախաբված կաթոլիկ ասպետներից, դեպքերի ժամանակակից Մ. Ուոհայե-

ցին գրում էր, թե՛ «փառաւոր իշխանքն և գլխաւորքն նոցա հատան, և իշխանութիւն նոցա յանարժանսն և յաշոքսն անկաւ և վասն այնորիկ յարուցին հալածանս և շարշարանս ի վերայ հաւատացելոցն Քրիստոսի ի ձեռն սաստիկ արծաթասիրութեան իւրեանց»¹: Մի այլ տեղ նա նշում է, թե «Ի գրկանս և ի յանիրաւութիւնս և յաւերս անողորմապէս վարեցան ի վերայ քրիստոնէից»² և որ «...փոխանակ փրկութեան անցումն արարքն հաւատացելոցն»³ և որ «Զի հանապազ վասն գանձի առնելոյ անիրաւարար շարշարանօք յաւեր և յապականութիւն դարձուցին զերկիր և յամենայն ժամ պարապեալ կային և ալ ոչինչ առնէին, բայց միայն նստեալ խորհէին զշարութիւն, զհիլա և զամենան ճանապարհս շարեաց սիրէին, բարեաց և ամենայն երախտեաց մոռացողը»⁴:

Չնայած այս իրավիճակին, 1198 թ. մինչև անկախության վերջնական կորուստը (1375), Կիլիկիայի հայ գործիչները, ինչպես ցույց են տալիս հալ և օտար աղբյուրները, ձգտում էին ընդհանուր լեզու գտնել կաթոլիկ աշխարհի հետ, որպեսզի կարողանային դիմագրավել իրենց հարևան մուսուլմանական երկրների և Բյուզանդիայի ոտնձգություններին: Հենց այդ նպատակով է, որ սկսած Լևոն Մեծագործի ժամանակվանից, Կիլիկիայի հայոց թագավորները այլևայլ տնտեսական և քաղաքական արտոնություններ էին շնորհում Մերձավոր արևելքում հաստատված խաչակիր պետությունների, Վենետիկի և Ջենովայի հանրապետությունների ներկայացուցիչներին: Անցնելով հակահարձակման, եգիպտոսի էյուբյան տիրակալները մեկը մյուսի հետևից Մերձավոր արևելքի քաղաքական քարտեզից ջնջեցին խաչակիր պետությունները և Կիլիկիան Վիկտոր Լանգուայի խոսքերով ասած «հարկազրկված եղավ ընկնել այն հորձանուտի մեջ, որ Արևմուտքից եկած խաչակիրներին դուրս էր բշում Ասիայից»⁵:

Կրելով պարտություն Մերձավոր արևելքի արաբական երկրներում, կաթոլիկ աշխարհն առավել ուշադրություն դարձրեց Կիլիկիային, մասնավորապես Քյոսա-ղաղի ճակատամարտից (1243) հետո, երբ Իկոնիայի սուլթանությունն այլևս խոչընդոտ չէր կարող հանդիսանալ Արևմուտք-Արևելք ծավալվող առևտրին: Մերձավոր արևելքի երկնակամարում մոնղոլների երևալը նոր հույսեր առաջացրեց պապական ճամբարում

1 Մ. Ուոհայեցի, էջ 303 և հետ:

2 Նույն տեղում, էջ 284 և հետ:

3 Նույն տեղում, էջ 315 և հետ:

4 Նույն տեղում, էջ 309 և հետ:

5 V. Langlois, Le trésor des chartes d'Arménie, էջ 84:

այն հարցում, թե հնարավոր չէ արդյո՞ք մոնղոլների զինական դաշնակցությունը հարվածել զլիսավոր թշնամուն՝ իսլամական աշխարհին:

Գեոն XIII դարի 30-ական թվականներին պապական Սինոդը ուղիորդով հետևելով Ռուսաստան և Արևելյան Եվրոպա մոնղոլների կատարած արշավանքներին, նրանց կատարած ավերածություններին՝ հետախուզական նպատակներով հարավ-արևմտյան տափաստաններ էր ուղարկել դեմինիկյան օրդենից հունգարացի Ցուլիանին⁶: Այնուհետև ինքը՝ Իննոկենտիոս 4-րդ պապը, ժամանելով Լիոն՝ այնտեղ հրավիրեց տիեզերածոցով, որը որոշում ընդունեց մոնղոլների մոտ հատուկ պատվիրակություն ուղարկել Ջովաննի Պլանո Կարպինիի զլիսավորումը: Նրան հանձնարարվեց «թաթարների թագավորին», որի անունը չգիտեին, հանձնել սիրաշահողական մի նամակ, ուր մոնղոլներին կոչ էր արվում դադարեցնել Արևելյան Եվրոպայի երկրների ասպատակումն ու ընդունել «ճշմարիտ հավատ», այսինքն՝ կաթոլիկություն: Պապի ուղերձը փաստորեն ուղղված էր Բաթու խանին, քանզի մեծ խան Ուգեդեյն այն ժամանակ մահացել էր, և դեռևս չէր որոշված նրա փոխանորդը: Բաթու խանն ընդունելով Պլանո Կարպինիին, նրան ուղարկում է Կարակորում, որտեղ պապի պատվիրակը 1246 թ. ականատես է լինում նոր մեծ խանի՝ Գույուկի ընտրության արարողություններին: Հոսմի պապի այս առաջին դիվանագիտական քայլն անգամ անհանգստություն է առաջացնում մուսուլմանական արաբական աշխարհում⁷:

Պլանո Կարպինիի դիվանագիտական այս առաքելությունը հաջողություն չունեցավ: Գույուկ խանն անուշադրության մատնելով պապի ուղերձը՝ պապից ու կաթոլիկ աշխարհի մյուս ներկայացուցիչներից պահանջեց անվերապահ իրեն ենթարկվել⁸: Այսուհանդերձ Պլանո Կարպինիի դիվանագիտական այս առաքելությունը մեծ նշանակություն ունեցավ մոնղոլների մասին գիտական ու ստուգապատում տեղեկություններ հաղորդելու իմաստով: Պլանո Կարպինիի «Historia Mongolarum» («Մոնղոլների պատմություն») աշխատության մեջ մանրամասն խոսվում է մոնղոլական կայսրության պետական կառուցվածքի, մոնղոլների կենցաղի ու սովորությունների, նրանց ռազմարվեստի, նվաճված երկրներում մտցրած վարչական համակարգի մասին և այլն, և այլն: Պլանո Կարպինին իր տեղեկությունները մոնղոլների մասին հաղորդում է կամ իրրև անմիջապես ականատես, կամ էլ ականջալուր: «Եվ այսպես այն բոլորը, ինչ մենք խոհեմաբար գրում ենք Ձեզ պիտանի

լինելու համար դուք պետք է դրանց հավատ ընծայեք, նամանավանդ՝ որ այս բոլորը (ինչ նկարագրում ենք) կամ մենք դրանց տեսանք սեփական աչքերով, քանի որ մենք նրանց (մոնղոլներին—Մ. Զ.) մեջ շրջազայեցինք մեկ տարի և շորս ամիս և ամենին ականատես եղանք, և կամ թե ոչ որոշ տեղեկություններ մենք քաղեցինք մոնղոլներին գերեվարված ու արժանահավատ քրիստոնյաներից»⁹:

Պլանո Կարպինին խոսում է մոնղոլների կողմից Հայաստանի ու վրաստանի նվաճման և բնակչությանը ծանր հարկատվության ենթարկելու մասին: «Այդպիսի վիճակում գտնվում են և ներկայումս»¹⁰,— գրում է Պլանո Կարպինին: Այնուհետև նա խոսում է փոքրասիական սելջուկյան սուլթանության ջախջախման մասին: Մոնղոլները, գրում է նա, «...շարժվեցին Ուոուսի սուլթանի երկիրը, որը բավականին ազդեցիկ էր ու հզոր: Նրանք մարտնչեցին նրանց հետ ու հաղթեցին: Եվ շարունակեցին իրենց հաղթական արշավանքը մինչև Հալեպի սուլթանի երկիրը»¹¹:

Պլանո Կարպինին գրում է մոնղոլների արժաթասիրության և հպատակված երկրները կողոպտելու պրակտիկայի մասին: «Իմիջիտայլոց առանց որևէ մի խոչընդոտի նրանք (հպատակներից) խլում են ոսկին ու արծաթը և այն ամենը ինչ և ինչքան որ իրենք ցանկանում են»¹²: Պլանո Կարպինին նկատել է, որ մոնղոլ խաներն իրենց ենթարկված քրիստոնյա իշխաններից պահանջում են բացահայտ հնազանդություն ու սիրում են, երբ նրանք գալիս են իրենց ոտները այս կամ այն հարցը լուծելու¹³: Եվ ի դեպ, մանրամասն խոսում է վրաց արքայազուհիներ Ուլու Դավիթի և Դավիթ Նարինի միջև գահակալական վեճերի ու մոնղոլական արքունիքի համապատասխան վերաբերմունքի մասին:

Պլանո Կարպինիի դիվանագիտական առաքելությանն առընթեր, Իննոկենտիոս 4-րդ պապը նույն այդ՝ 1245 թվականին մոնղոլներին ենթակա Անդրկովկաս և Իրան ուղարկեց մի այլ պատվիրակություն Անդրե դե Լոնժյումենի և Ասցելինի զլիսավորումը: Լոնժյումենի ուղևորությունն ընթացավ Միրիայի ու Միջագետքի վրայով դեպի Թավրիզ: Այնտեղ նա հանդիպում ունեցավ նեստորական եկեղեցական գործիչ Միմեոն Ռաբան Աթայի հետ, որն ամենալայն կապեր էր հաստատել

⁹ Jean de Plan Carpin. Histoire des mongols, traduit et annoté par Dom Jean Becquet et par Louis Hambis, p. 24.

¹⁰ Նույն տեղում, էջ 70:

¹¹ Նույն տեղում, էջ 72:

¹² Նույն տեղում, էջ 86:

¹³ Նույն տեղում, էջ 87:

⁶ A. Свет, После Марко Поло, М., 1964, с. 12.

⁷ Նույն տեղում, էջ 13:

⁸ P. Pelliot, Les mongols et la papauté, T. 1, Paris, 1913, էջ 10—21:

Կարակորումի և Իրանի ու Անդրկովկասի մոնղոլ կառավարիչ Բայջունոյնի հետ: Ռաբան Աթան 1235 թ. գտնվում էր Հայաստան արշավող Չարմադանի բանակում, և ինչպես հայտնում է Կիրակոս Գանձակեցին, հանդես է եկել հայ բնակչության հովանավորի դերով¹⁴: Ասորի այս քաղաքական գործիչը կողմնակից է եղել մոնղոլների և Փոքր Ասիայի բրիտանոնյա երկրների (Հայաստանի, Վրաստանի) քաղաքական դաշինքի գաղափարին¹⁵: Հայ-վրացական գործերը գործուն մասնակցություն են ունենում մոնղոլների մեծ ու փոքր արշավանքներին: Մոնղոլական բանակներում հատկապես մեծ դեր էին կատարում հայ և վրաց այրուձիհ: «Նրանք, — մոնղոլների մասին գրում է կաթոլիկ Մատթեյ (Մատթեոս) Պարիսեոսիսը, — կողմնակիցներ են հավաքագրում պարտավածների միջից և ենթարկում նրանց իրենց՝ դաշինք կրնքելով նրանց հետ» և որ «նրանց բանակում կան շատ կոմաններ և վատթար բրիտանոնյաններ» («Pessimi christiani») ¹⁶: Հիրավի, Քյոսա դադի ճակատամարտի ժամանակ Իկոնիայի սուլթանի ղեմ մարտնչում էին Ավագ ու Շահնազ Զաբարյանները, Գագի Վահրամբ, Խաչենի Հասան-Ջալալը, Մարի Աղբուղա և Գրիգոր Դոփյանները: 1258 թ. Բաղդադի գրավման ժամանակ Հուլավու խանի բանակում էական դեր կատարեցին Վայոց ձորի Պոռ իշխանը և իր որդիները: Հետագայում հայ իշխանական զորամասերը մասնակցում էին նաև եգիպտական մամլուկների ղեմ մոնղոլների ապագա պատերազմներին¹⁷: Ստեփաննոս Օրբելյանի վկայությամբ, Տարսաչիճ Օրբելյան իշխանը մասնակից էր եղել մոնղոլական պատերազմներին՝ «...ի Խորասան, ի Շամ, ի Հոռոմս, ի Համս և ի Համայ ընդ Մսրացույն և ի Դարբանդ՝ ինն անգամ վանեալ անձամբ զպատերազմ և մղեալ մարտս»¹⁸: 1292 թ. մի հի-

շատակարանում Պոռյան իշխաններից Ամիր Հասանի մասին ասված է, թե սիրված էր Հուլավու և Աբաղա խաների կողմից, «վասն արիական քաջութեան և խոհեմութեան իւրոյ, մինչև զինակիր և հառաջադէմ լեալ յամենայն գործս արքունի: Եւ յանձնէ իւրեանց բազում անգամ զարդարեցին ոսկեհուռ դիպակաւք և կամար ոսկեղէն ընդելուզեալ ակամբ և մարգարտօք կապեալ ի մէջս նորա և այնպես շքեղութեամբ ճոխացուցանէին զնա: Եւ նա յառաջանային օրըստօրէ ի գործ քաջութեան և յամենայն պատերազմունս անուանք լեալ ի համադասան, մինչև լոս՝ ճամբաւոյ նորա տաճածեցուն ընդ շաշլաւեհին հոռմեացոցն և Յունաց» (ընդգծումը մերն է—Մ. Զ.):

Ասցելիների ճանապարհորդությունն ընթանում էր Կիլիկիայի, Իկոնիայի, Սեբաստիայի, Կարսի և Թիֆլիսի վրայով դեպի Բայջու (Բայջու)՝ խանի պալատը: Ասցելիների բանակցությունները մոնղոլների հետ ունեցան մասնակի հաշտություն: Առաջին անգամ մոնղոլները ռազմական դաշինք կնքելու նպատակով կաթոլիկ աշխարհ են ուղարկում հատուկ պատվիրակություն՝ Այբեգի և նետորական Սարգիսի զխավորությամբ: Չնայած բանակցությունների արդյունքները հայտնի չեն, Ֆրանսիացի հայտնի արևելագետ Պ. Պելիոն գրում է, թե Բայջուի գահանիստ վայրն առաքված Ասցելիներին հաջողվեց «...ամրապնդել մուսուլմանների ղեմ պայքարում Ֆրանկների և մոնղոլների համագործակցության գաղափարը»¹⁹:

Արևմուտքի մոնղոլների հետ դիվանագիտական կապեր հաստատելու հարցում մեծ դեր կատարեցին Կիլիկյան Հայաստանի քաղաքական գործիչները, որոնք քաջատեղյակ էին մոնղոլների հետ Մեծ Հայքի որոշ իշխանների համագործակցությանը: Կիլիկիայի պետական գործիչները համոզված էին, որ կաթոլիկ աշխարհն ի զորու չէ ապահովելու իրենց պետական անվտանգությունը հարևան հզոր մուսուլմանական աշխարհի ոտնձգությունների դեմ: Ուստի, XIII դարի 40-ական թվականներին և, մասնավորապես, Քյոսա դադի ճակատամարտից հետո, Կիլիկիայի հայոց Հեթում I-ին (1226—1270) թագավորն ու նրա համախոհները փորձեցին զինական համագործակցության մեջ մտնել մոնղոլների հետ:

1243 թ. Իկոնիայի սուլթանության ղեմ տարած հաղթանակից հետո, Բայջու խանի հետ Կիլիկիան բարեկամական հարաբերություններ հաստատեց: Մոնղոլների հետ հետագա բանակցություններ վարելու նպատակով Հեթում I-ին թագավորը մեծ խան Դոյուկի մոտ՝ Կարակորում ուղարկեց նշանավոր ռազմական գործիչ ու մատենագիր Սըմ-

¹⁴ Կիրակոս Գանձակեցի, էջ 261—262: «Նախախնամողն Աստուած, որ զամենայն Կեալն Կամի, նա՛ մարդասիրութեամբն իարավ երեկոյց ի մէջ նոցա այր մի երկիւղած և աստուածապաշտ, Ասորի ազգաւ, որ հայր անուանեալ իր արքային նոցա, զոր խազանն կոչէին, անուն նորա Սիմեօն, զոր ուրբան Աթա կոչէին: Իբրև լուսա զանխնայ կոտորումն բրիտանոնեկից՝ որ ի զօրաց թաթարին, մատուցեալ առ խազանն՝ խնդրեաց ի նմանէ թուղթ առ զօրան իւր, զի մի այնպէս առհասարակ կոտորեցեն զանեղ մարդիկ, որի ոչ պատերազմին ընդ նոսա, այլ թողուլ զնոսա, զի ծառայեցեն նմա: Իսկ նա զնոյն ինքն առաքեաց մեծ և արևելի շքով, գրեալ հրովարտակ առ զօրագլուխս իւր, զի ամենեքեան անսայեցեն հրամանի նորա: Եվ նա եկեալ, բազում ինչ նպաստ եղև քրիստոնէից, թափելով ի մահուանէ և ի դերութենէ...»:

¹⁵ P. Pelliot, I, էջ 38—59.
¹⁶ Տե՛ս Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ... հ. 1, էջ 168—169:
¹⁷ Նույն աեղում, էջ 169:
¹⁸ Պատմութիւն նահանգին Սիսական արաբեալ Ստեփանանի Օրբելյան արքեպիսկոպոսի Սիսեաց, Թիֆլիս, 1910, էջ 423—424:

¹⁹ P. Pelliot, I, էջ 112.
 71

բատ սպարապետին, իսկ այնուհետև՝ մեծ խանի պահանջով Կարակո-
րում մեկնեց նաև ինքը: Գրանով Մանգու խանը ձգտում էր, նկատի
ունենալով Կիլիկիայի ռազմաստրատեգիական խոշոր, նշանակությունը,
երկիրը կախյալ վիճակում պահել: Սակայն մոնղոլական կայսրություն-
նից այդ կախումը շատ հարցերում, մասնավորապես ներքին կյանքում
մնում էր լուրի ձևական: Ակնարկելով այդ մասին, Լյուդովիկոս 9-րդի հա-
տուկ պատգամավոր Վ. Ռուբրուկը նշում էր, որ Մանգու խանը հայոց
թագավորին «...շնորհեց այն առավելությունը, որ ոչ մի դեսպան
չպիտի մտնեք իր երկիրը», այսինքն՝ մոնղոլ կառավարիչներ չպիտի
լինեն այնտեղ, և որ Մանգու խանը մեծապես զիջել է տուրքը²⁰:

Մոնղոլների հետ բարեկամական հարաբերությունների ստեղծումը
բնավ էլ չէր նշանակում. որ ներկայան հայկական պետությունը որոն-
գրել էր արևելյան՝ մոնղոլական կողմնորոշում, ինչպես կարծում են
որոշ պատմաբաններ, այլ այդ քայլով Փոքր Հայքի Հայոց պետությունն
էլ ավելի էր ամրապնդում իր պետական անվտանգությունը: Դա չէր
նշանակում միաժամանակ, որ Կիլիկիայի Հայոց թագավորը բարեկա-
մանալով մոնղոլների հետ, ծառայում էր կաթոլիկ աշխարհի դիվանա-
գիտական նկրտումներին: Իրականում նա առաջնորդվում էր լուր սեփա-
կան պետության գերագույն շահերով: Մյուս կողմից, Հեթումը, իրոք,
ձգտում էր Արևելքում ստեղծել հակախալսմական դաշինք: Հենց իրենց՝
մոնղոլների, քաղաքականությունը ձևավորվում էր այն իրավիճակից,
որ կաթոլիկ Արևմուտքն ու հեթանոս մոնղոլները Մերձավոր արևելքում
հետամտում են միևնույն նպատակները:

Եվ ահա այդ էր պատճառը, որ Փրանսիական թագավոր Լյուդո-
վիկոս 9-րդը, 1253 թվականին Վիլհելմ (Գիյոմ) Ռուբրուկի գլխավորու-
թյամբ մոնղոլների մոտ առաքեց նոր պատվիրակություն՝ մուսուլ-
մանների դեմ համատեղ գործելու առաջարկով: Վ. Ռուբրուկի առաքե-
լությունը մասնակի հաջողություն ունեցավ: Մեծ խան Մուկեն Կա-
րակորումում Վ. Ռուբրուկին հանձնեց Լյուդովիկոս 9-րդին հղված պա-
տասխան նամակը և արդեն 1254 թ. նախապատրաստական աշխա-
տանքներ ձեռնարկեց Եգիպտոսի դեմ կատարվելիք արշավանքի համար:

Վերադարձին Վ. Ռուբրուկի ճանապարհն անցավ նաև Հայաստանի
վրայով և, ինչպես արդեն նշվեց, իր «Ուղեգրություն դեպի Արևելյան
երկրները» վերնագրված խիստ շահեկան գրքում թողեց կարևոր վկա-
յություններ Հայաստանի մասին: Չիմանալով տեղական լեզուները,
Վ. Ռուբրուկը բացառիկ դիտողականության շնորհիվ կարողացել է տալ

մոնղոլական հասարակական կառուցվածքի կարևորագույն առանձնա-
հատկությունները:

Գալով հայ իրականության հետ առնչված հարցերին, Վ. Ռուբրուկը
նախ նշում է, որ մոնղոլական մայրաքաղաքում վիստում էին այլևայլ
երկրների դիվանագիտական ներկայացուցիչները, որոնց թվում հա-
յերը, որոնք հետամտում էին մուսուլմանների դեմ մոնղոլների հետ
դաշինք կնքելու գաղափարը: Վ. Ռուբրուկը քաջ գիտեր, որ Հեթում
1-ինը ծրագրել էր այցելել մեծ խանին և որ նա անհամբեր մայրաքա-
ղաքում սպասել է հայոց թագավորի գալստյանը: Վերադարձի ճանա-
պահին Վ. Ռուբրուկը տեղեկանում է, թե Հեթում 1-ինը արդեն մեկնել է
Կարակորում: Վ. Ռուբրուկը նկատել է, որ օտար, և, մասնավորապես,
մուսուլմանական տիրապետության հետևանքով Հայաստանը վայրէջք է
ապրել: Այսպես, խոսելով Նախիջևանի մասին, նա նշում է. «Բաշուն
տարած էր ինձ մի քաղաք, որ կոչվում էր Նախուա (Նախիջևան), որ
ժամանակով մի մեծ թագավորության մայրաքաղաք և ընդարձակ ու
գեղեցիկ մի քաղաք էր: Այնտեղ կար ժամանակ, որ ութսուն եկեղե-
ցիներ կային, բայց հիմա մնացել են երկու փոքրիկ եկեղեցիներ միայն,
որովհետև սարակինոսները (մուսուլմանները—Մ. Զ.) ոչնչացրել են»²¹:

Գրությունը մխիթարական չէր նաև մոնղոլների տիրապետության
ժամանակ: Այսպես է նկարագրում Վ. Ռուբրուկը հայոց իշխան Շա-
հնշահ Զաքարյանի իշխանության քաղաքական կացությունը. «Մենք
այս քաղաքից (Նախիջևանից) հեռացանք հունվարի 13-ին, որովհետև
ձյան պատճառով մենք ստիպված էինք մնալ այնտեղ: Չորս օրից
եկանք Սահենասհի (Շահինշահ) երկիրը, երբեմնի ամենազորավոր
վրացի իշխանը, բայց հիմա հարկատու թաթարներին, որոնք կործա-
նած են իր բոլոր ամրոցները»²²: XIV դարի 20-ական թվականներին
Փրանցիսկյան միսիոներ Օդորիկո Պորդենոնն այցելելով էրզրում, քա-
ղաքը տեսնում է ավերված վիճակում: «Թողնելով Տրապիզոնը,—գրում
է նա,—ես ուղեորվեցի Մեծ Հայքի քաղաք, որին անվանում են Արզի-
րոն (էրզրում), որը մի ժամանակ եղել է շատ գեղեցիկ, հարուստ: Եվ
այդպես էլ նա կմնար, եթե նրան պարբերաբար չավերեին թաթարներն
ու սարակինոսները»²³:

Բնականաբար, այս իրավիճակն էր պատճառը հայերի մոտ ազա-
տագրական պայքարի նոր ձգտումների, դրսևորումների, որոնք ար-

²⁰ Հովհ. Հանդրյան, Ուղեգրություններ, Կ. Ս., էջ 26:

²¹ Նույն տեղում, էջ 16:

²² Նույն տեղում, էջ 18:

²³ Հ. Հարթ, էջ 171:

տահայտվում էին «մարգարեությունների» ձևով²⁴։ Նախիջևանի մոտ նա տեղեկանում է երկու «հայ» մարգարեների մասին, որոնք գուշակել են իրենց ժողովրդի ապագան։ «Այդ մարգարեներից մեկը,—պատմում է Ռուբրուկը,—Մեթոդիոսն է, հայ մի նահատակ, որը ամենայն պարզությամբ նախատեսել էր իսմայելացիների ներխուժումը։ Մյուսը կոչվում է Ակակրոն (VAT, Ակարոն) մի մարդ, որը մահվան անկողնում, գուշակել է նետոզների հյուսիսից խուժելու մասին։ Սրանք, ասել է նա, նվաճելու են ամբողջ Արևելքը, բայց խնայողաբար են վարվելու, որպեսզի նվաճեն նաև Արևմուտքը։ Սակայն, ինչպես ասել է նա, մեր եղբայր կաթոլիկ ֆրանկները չեն ենթարկվելու նրանց։ Նետոզները զբաղվելու են բոլոր երկրները, հյուսիսից մինչև հարավ, մինչև Կ. Պոլիսը, որպեսզի իրենց տիրապետության տակ առնեն այստեղ նրա նավահանգիստը։ Նրանց գլխավորներից խելահաս մեկը մկրտություն է ընդունելու այդտեղ և ցույց է տալու ֆրանկներին թաթարների պետին սպանելու և նրանց շփոթության մեջ գցելու հնարը։ Այս խորհրդին հետևելու են աշխարհի կենտրոնում (ասել է՝ Երուսաղեմում) գտնվող ֆրանկները։ Նրանք հարձակվելու են նաև իրենց հարևան թաթարների վրա, ապա մեր ժողովրդի (այսինքն հայերի) օգնությամբ ետ են քշելու նրանց ափելի հեռու։ Այսպիսով, ֆրանկների թագավորը առաջ է գնալու մինչև Թավրիզ քաղաքը և հիմնելու այդտեղ իր գահը։ Ապա նրանք քրիստոնեության են դարձնելու ամբողջ Արևելքը ու բոլոր անօրեններին, հաստատելով երկրի վրա այնպիսի մի խաղաղություն, որ վերապրողներն ազատվելու են մեռածներից, որոնց չէր վիճակված տեսնելու նոր դարաշրջանի երանությունը»²⁵։

Վ. Ռուբրուկը խոսում է Հայաստանում այս «մարգարեությունների» լայն ժողովրդականության մասին։ «Այս մարգարեությունը ես կարդացել էի Կ. Պոլսում, այնտեղ բերված տեղացի հայերի կողմից, բայց մասնավոր ուշադրություն չէի դարձրել նրան, սակայն, երբ այս խոսակցությունն ունեցա եպիսկոպոսի հետ, արթնացավ իմ հիշողության մեջ, և ամբողջ Հայաստանում պատմում էին այս մարգարեությունը, այնքան վստահ, որքան ավետարանի մասին։ Նրանք ինձ ասում էին նաև «ինչպես հօգիները իրենց քավարանում սպասում են Քրիստոսի գալստյան իրենց փրկության համար, այնպես էլ մենք սպասում ենք

ձեր գալստյան՝ փրկելու համար մեզ այն կապանքից, որի մեջ գտնվում ենք երկար ժամանակից ի վեր»²⁶։

Նվ շատ բնական է, որ Զաքարյան տան անդամները պիտի ատեին մոնղոլական լուծը և գերադասեին հեռանալ երկրից։ «Ես ճաշեցի մի անգամ այս Շահնշահի հետ,—այնուհետև կարգում ենք Վ. Ռուբրուկի մոտ,—և նա շատ մեծ քաղաքավարություն ցույց տվեց իմ հանդեպ, ինչպես նաև իր կինը և զավակը՝ Զաքարիա անունով մի շատ գեղեցիկ ու լամաստուն երիտասարդ, որ հարցրեց ինձ,—եթե ձեզ մոտ գամ՝ դուք կպահեք ինձ, որովհետև նա արքան ծանր է զգում թաթարների տիրապետությունը, որ թեև նա ամեն բան առատորեն ունի, սակայն նախընտրում է թափառել օտար երկրներ, քան կրել նրանց տիրապետությունը։ Այսուհանդերձ, նրանք ինձ ասացին, թե իրենք հոգմեական եկեղեցու զավակներ են, և եթե պապը մի քիչ օգնություն ուղարկի իրենց՝ նրանք դրացի բոլոր երկրները պիտի ենթարկեն եկեղեցուն»²⁷։

Վ. Ռուբրուկի կարծիքով, մոնղոլները պետք է պայքարեն միայն մուսուլմանների դեմ։ Քրիստոնյաների դեմ մղված ամեն մի պատերազմ անարդարացի է և անբարոյական։ Արևելքի քրիստոնյան, ըստ նրա, «անմեղ է և արդար» և որ «երբեք չեն ոչնչացնի անմեղին և արդարին»։ Իսկ ո՞վքեր են լինելու արևելյան քրիստոնյաների փրկարարները, եթե ոչ «ֆրանկները», որոնց, ինչպես ճիշտ նկատել է Աշ. Հովհաննիսյանը, մեր հեղինակը հայրենասիրությունից դրոզված, նույնացնում է ֆրանսիացիների հետ։ «Առաջին հեղինակն է Ռուբրուկը, կարդում ենք Աշ. Հովհաննիսյանի «Դրվագներում», որի մոտ նկատում ենք հետագա միսիոներներին տարբերանշող տենդենցը՝ շահավետել հայ ազատագրական լեգենդը հօգուտ այն պետության կամ ի նպաստ այն երկրի, որին ինքն է պատկանում կամ որի շահախնդրությունն ինքն է բորբոքում»²⁸։

Ուշադրավ է Վ. Ռուբրուկի այն վկայությունը, թե հայերը «թուրքերի երկրում», այսինքն՝ Իկոնիայի պետության սահմաններում կազմում են բնակչության ճնշող մեծամասնությունը։ «Դուք պետք է գիտենաք թուրքերի մասին, որ նրանց (երկրում) տասը մարդուց մեկը սարակինոս է, գրեթե ամբողջությամբ հայեր են և հույներ»²⁹։ Մի այլ տեղ, խոսելով Երզնկայի մասին, Վ. Ռուբրուկը գրում է. «Այդ քաղա-

24 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ..., հ. 1, էջ 83—84։

25 Այս հատվածը բերված է Աշ. Հովհաննիսյանի «Դրվագներ...» 1-ին հատորից։ Այն թարգմանվել է լատիներեն բնագրից (նույն տեղում, էջ 83—84)։

26 Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 19։

27 Նույն տեղում, էջ 20։

28 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ..., հ. 1, էջ 86։

29 Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 30։

ֆից (Նախիջևան) տասնհինգ օր հետո մենք մտանք Քուրքիայի սուլթանի երկիրը փետրվար 15-ին, և առաջին քաղաքը, որ մենք հասանք, Մարգենականն (Երզնկա) էր: Ավանի բոլոր բնակիչները քրիստոնյաներ են՝ հայեր, վրացիներ և հույներ»³⁰: Ինչպես կտեսնենք հետագա շաբաղաբանքի ընթացքում, եվրոպացի հեղինակները միաբերան վկայում են այն մասին, որ Աեծ ու Փոքր Հայքերի հիմնական բնակչությունը քաղաքական անկախության վերացումից հետո էլ շարունակում էին մնալ հայերը: Նշենք միայն, որ Վ. Ռուբրուկից շուրջ քսան տարի հետո Հայաստան այցելած Մարկո Պոլոն նույնպես նշում է, որ Հայաստանի հիմնական բնակչությունը հայերն են: Մեծ Հայքը, ասում է Մ. Պոլոն, «...Մի մեծ երկիր է: Սկսվում է մի քաղաքից, որը կոչվում է Արզիսգա (էրզրնկա), ուր հյուստում են աշխարհի լավագույն բեհեզները (buckram)... երկրի ժողովուրդը հայեր են, որոնք հպատակվում են ու թուրքմենները հիմնականում ապրում են լեռներում ու զբաղվում անասնապահությամբ: Թուրքմենները, այնուհետև կարգում ենք Մ. Պոլոյի մոտ, «բնակվում են լեռներում և սարահարթերում, ուր որ գտնում են լավ արոտավայրեր, որովհետև նրանց զբաղումը խաշնարածությունն է... Մյուս երկու դասակարգերն են հայերն ու հույները, որոնք առաջինների հետ խառն ապրում են քաղաքներում և գյուղերում, զբաղվելով առևտրով և արհեստներով: Նրանք հյուսում են աշխարհի ամենանուրբ և ամենագեղեցիկ գորգերը, և նույնպես մեծ քանակությամբ մետաքս, որդան կարմիր ու սև գույններով և առատությամբ ուրիշ կտորեղեններ»³¹: Այս բոլորից հետո, ցավալի է նշել, որ արդի թուրք պատմագիտության ներկայացուցիչները կեղծելով պատմությունը, իրենց խաշնարած նախնիներին են վերագրում գորգարվեստի և այլ արվեստների բնագավառում Փոքր Ասիայի և Հայաստանի տարածքում ստեղծված արվեստի, նախ և առաջ, գորգարվեստի նմուշները: Որ Հայաստանի տարածքը ընդարձակ է եղել, վկայում է նաև XIV դարի 20-ական թվականներին Հայաստան այցելած ֆրանսիացի միսիոներ ժուրդեն դե Սեվերակը: «Այս Հայաստանը, — գրում է նա, — երկարությամբ ձգվում է Սեբաստիայից մինչև Օրոգանի (Մուղանի) դաշտավայրը, իսկ լայնությամբ՝ Պարսար լեռներից մինչև Թավրիզ»³²:

Մարկո Պոլոյի հաղորդած մյուս արժեքավոր վկայությունների մեծ մասը վերաբերում են Հայաստանի հասարակական-տնտեսական պատ-

մությունը, որոնք քննվելու են սույն աշխատության երկրորդ մասում: Նշենք միայն, որ վենետիկցի ճանապարհորդ դիվանագետը շափազանցրած գույներով ներկայացնում է XIII դարի 60-ական թվականներին Կիլիկիայում հայ ռազմիկների մոտ մարտունակության անկումը, որը հետևանք էր, ինչպես այդ մասին նշում է Կիլիկյան Հայաստանի պատմության հմուտ մասնագետ Գ. Միքայելյանը, Կիլիկիայի հասարակական կյանքում տեղի ունեցած որոշակի փոփոխությունների: Կիլիկյան հայերի մոտ ռազմական ոգու անկումը նկատել է նաև Սմբատ Գրուստապլը³³: Անցյալում, — նշում է Մ. Պոլոն, — Կիլիկիայի «...ազնվականները քաջարի զինվորականներ էին և կատարում էին հերոսական գործեր, բայց ներկայումս ողորմելի արարածներ են և ոչ մի բանի շնորհիվ չունեն: Հարբենալու մեջ նշանավոր են»³⁴:

XIII դարի 50—80-ական թվականների հայ-մոնղոլական քաղաքական կապերի, մոնղոլների վարած արտաքին քաղաքականության հարցերը և ոչ մի պատմական աշխատության մեջ այնքան խոր ու բազմակողմանի չեն լուսարանված, ինչպես դա արված է Հեթում պատմիչի հին ֆրանսերենով գրված «Մաղկաբաղում»³⁵: Ուստի այստեղ հարկ ենք համարում Պիեռ Բերթերոնի հրատարակած բնագրի³⁶ հիման վրա անդրադառնալ այդ հարցերին: Այնտեղ պատմական դեպքերի շարադրանքն սկսվում է Ալփ-Արսլանի արշավանքներով:

Հեթում պատմիչը նույնպես նշում է, որ սելջուկյան նվաճումներից հետո Փոքր Ասիայի տարածքի հիմնական բնակչությունը կազմել են քրիստոնյաները: Փոքր Ասիայի տարածքում, գրում է նա, «...ապրում են չորս տարբեր ազգեր՝ հույներ, հայեր, հակոբիկներ (ասորիներ), որոնք զբաղվում են առևտրով և գյուղատնտեսությամբ, և թուրքերը, որոնք մուսուլմաններ են և որոնք հույներից խլել են այս կայսրությունը»³⁷:

Հեթում պատմիչը Արևմուտք-մոնղոլներ դաշինքի ջերմ պաշտպանն է: Ըստ նրա, զխավոր թշնամուն՝ մուսուլմանական աշխարհին, հարվածը պետք է հասցնել միաժամանակ՝ խաշակրաց արշավանքների

³⁰ Г. Г. Микаелян, էջ 341—342.

³⁴ Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 44:

³⁵ Հեթում պատմիչի աշխատությունը բազմիցս տպվել է Արևմտյան եվրոպայի երկրներում: Նրա մասին տե՛ս Ս. Մ. Միրնու աշխատությունը՝ С. М. Мирный, La flor des estoires de la Terre d'Orient Гайтона как историко-географический источник по Востоку и по истории монголов, — «Советское востоковедение», 1956, № 5.

³⁶ P. Bergeron, XXXVIII, էջ 11—84:

³⁷ Նույն տեղում, էջ 17:

³⁰ Նույն տեղում, էջ 20:

³¹ Նույն տեղում, էջ 46:

³² A. Coem, էջ 138:

և մոնղոլների և համընդհանուր հարձակման միջոցով: Նա 1307 թ. Կղևմես պապին ներկայացրած զեկուցագրում նորից առաջ էր քաշում խաչակրաց նոր արշավանքի գաղափարը և ընկնելով ուղղակի պատրանքների մեջ, մոնղոլ խաներին ներկայացնում է քրիստոնեական մկրտության ընդունելուն պատրաստակամություն: Այնուհետև անդրադառնալով Հեթում թագավորի Կարակորումում վարած բանակցությունների պատմությանը, Հեթում պատմիչը գրում է. «Թագավորը յոթ պահանջներ ներկայացրեց նրան (Մանգու խանին—Մ. Ձ.): Առաջինը՝ խընդրում էր կայսեր իր ողջ ժողովրդի հետ քրիստոնյա դառնալ և հրաժարվելով ամեն տեսակի պաշտամունքներից, ընդունել մկրտությունը: Երկրորդ պահանջն էր, որ մշտական բարեկամություն ու խաղաղություն լինի քրիստոնյաների և թաթարների միջև: Երրորդ (պահանջն) էր՝ բոլոր քրիստոնեական եկեղեցիները լինեն ազատ, աշխարհիկ ու հողերական քրիստոնյաները ստրկություն չմատնվեն և լինեն ապահարկ: Չորրորդ՝ սարակինոսներից (մուսուլմաններից) (Մեծ խանը) հետ խլի սուրբ երկիրը ու մեր տիրոջ գերեզմանը ևս այն հանձնի քրիստոնյաներին: Հինգերորդ՝ որ նա պատերազմ հայտարարի Բաղդադի խալիֆին...: Վեցերորդ՝ որ իրեն՝ (հայոց թագավորին) տրվի հատուկ առանձնաշնորհում կարիքի դեպքում օգնության դիմել թաթարներին, հատկապես նրանց, ովքեր Հայաստանի թագավորության հարևաններն են և այդ օգնությունը կատարվի անհապաղ և վերջապես յոթերորդ՝ նա պահանջում է Հայաստանի թագավորությանը պատկանող այն բոլոր հողերը, որոնց մուսուլմանները զավթել էին և (այժմ) գտնվում են թաթարների գերիշխանության տակ վերադարձվեն նրան՝ (հայոց թագավորին)»³⁸:

Հայոց թագավորի այս պահանջներին Մանգու խանը, իբր, պատասխանել է հետևյալ կերպ. «Մենք հայտարարում ենք, որ Հայոց թագավոր, որ հաճույքով ընդունում ենք Ձեր առաջարկները և գրանք աստուծո օգնությամբ կիրադործենք: Նախ՝ ես թաթարների տիրակալս՝ կմկրտվեմ ու կդառնամ քրիստոնյա և հետո կանեմ այնպես, որ իմ հպատակները անեն նույնը, չնայած ես ոչ որի իմ կամքը չեմ թելադրում: Ինչ վերաբերում է Ձեր երկրորդ պահանջին, պատասխանում ենք, որ մեր նպատակադրումն է՝ հավիտենական խաղաղություն և բարեկամություն հաստատել թաթարների և քրիստոնյաների միջև»³⁹: Համաձայնվելով Հայոց թագավորի մյուս պահանջներին, Արղուն խանը, իբր, հատուկ նշել է, «Ծրք պատշաճ գտնվի, մենք հանուն Հիսուս Քրիստոսի

38 Նույն տեղում, էջ 38:
39 Նույն տեղում, էջ 37:

տոսի նկատմամբ տաժած հարգանքի անձամբ կզնանք սուրբ երկրի ազատագրմանը: Եվ քանի որ այստեղ մենք խիստ զբաղված ենք, ապա մեր եղբայր Հուլիանին կհանձնարարենք ձեռնարկել այդ միջոցառումը»⁴⁰:

Հեթում պատմիչի այս վկայությունները մասնագետների կողմից, իրավամբ, կասկածի տակ են առնվել, քանի որ հեղինակի հետամտած քաղաքական միտումը խիստ ազնվաբա է: Ի վերջո, Հեթում պատմիչի փայփայած երազանքը կատարվում է. կնքվում է հայ-մոնղոլական զինակցությունը և հայերը մոնղոլների հետ լծվում են եգիպտական սուլթանների դեմ ծավալված ռազմական պայքարին: «Այս ժամանակներում,—կարդում ենք Հեթում պատմիչի մոտ,—Հայաստանի թագավորությունը այն աստիճան ծաղկուն վիճակում էր, որ կարող էր տրամադրել տասներկու հազար այրուձի և բառասուն հազար հետևակ»⁴¹:

Հուլիան խանի գլխավորությամբ եգիպտոսի դեմ ձեռնարկված արշավանքը, որին մասնակցում էին ոչ միայն Կիլիկիայի հայոց թագավորը, այլև Մեծ Հայքի իշխանները, սկզբնական շրջանում ունեցավ որոշ հաջողություն, սակայն այն բանից հետո, երբ Հուլիան սուրհանդակի միջոցով իմացավ իր եղբոր՝ Մեծ խանի մահը, շտապեց Կարակորում: Օգտվելով առիթից, եգիպտոսի սուլթանը անցնում է հակահարձակման և պարտության մատնում մոնղոլ-քրիստոնեական բանակը: Շուտով հիվանդանում ու մահանում է նաև Հուլիանը⁴²:

Հուլիանի հաջորդը՝ Աբաղա խանը, պատերազմի մեջ գտնվելով իրենց ցեղակից ուլուսներ Ջուլինների և Չաղաթայների հետ, չէր կարող օգնել Կիլիկիայի թագավորությանը, որի հետևանքով եգիպտական սուլթան Բեյբարսը 1268 թ. Սիրիան գրավելուց ու Անտիոքի խաչակիր իշխանությունը ոչնչացնելուց հետո մուսթ գործեց Կիլիկիա, ավերեց երկիրը, գերեզմարեց բնակչությանը և Կիլիկիայի Հայոց թագավորը ատիպված եղավ հաշտություն խնդրել՝ եգիպտական սուլթանից: Հեթում պատմիչը խոսում է կնքված այդ պայմանագրի ծանր պայմանների մասին⁴³:

1282 թ. մոնղոլներն ու դաշնակից քրիստոնյա զորքերը նոր ծանր պարտություն են կրում եգիպտացիներից: Հեթում պատմիչի խոսքերով ասած՝ «Հայոց թագավորի բանակի մեծ մասը և ապայական կազմի մի ստվար հատվածը ոչնչացվեցին»⁴⁴:

40 Նույն տեղում, էջ 38—39:
41 Նույն տեղում, էջ 42:
42 Նույն տեղում, էջ 45:
43 Նույն տեղում, էջ 47:
44 Նույն տեղում, էջ 51:

Արաղա խանին հաջորդած Թոգուտար խանն ընդունելով իսլամը, ստանում է Ահմեդ խան անունը և սկսում անողոր հալածել քրիստոնյաներին: «Սատանայի որդի այս Ահմեդը,—գրում է Հեթում պատմիչը,—խորտակել տվեց բոլոր քրիստոնեական եկեղեցիները... նա խորտակել տվեց Թավրիզի բոլոր քրիստոնեական եկեղեցիները: Նա իր դեսպաններին Եգիպտոսի սուլթանի մոտ ուղարկեց, նրա հետ դաշինք կնքեց և խոստացավ սարակինոսներին ուղարկել իր հպատակության տակ գտնվող քրիստոնյաներին և ուղքեր ու կհրաժարվեին մեկնել փխտել էր տալու»⁴⁵: Սակայն, երկու տարի իշխելուց հետո, Ահմեդ խանը տապալվում է հնամենի ավանդություններին հավատարիմ մոնղոլական ավագանու կողմից և իշխանությունն անցնում է Արղուն խանին (1284—1291): Ահմեդ խանի սպանության առթիվ Հեթում պատմիչը բացականչում է. «Եվ այսպես սատկեց քրիստոնեական հավատքի թշնամի կատաղի շուն՝ Ահմեդը»⁴⁶:

Արղուն խանի ժամանակաշրջանը բնորոշվում է Եվրոպայի հետ վարվող ամուլ բանավարություններով⁴⁷: 1291 թ. փետրվարի համար ծրագրված Արղուն խանի և Ֆրանսիական թագավոր՝ Ֆիլիպ 4-րդի համատեղ ռազմական գործողությունները եգիպտական սուլթանի դեմ այնպես էլ չիրականացան: 1292 թ. մամլուկները դարձյալ ասպատակեցին Կիլիկիան և հուսախար եղած Հեթում 2-րդը ստիպված եղավ եգիպտական սուլթանին հանձնել Կիլիկիայի մի քանի բերդեր և ամրոցներ, որոնց թվում Մարաշը:

Շուտով Կիլիկիային ռազմական աջակցություն ցույց տվեց ոչ թե կաթոլիկ աշխարհը, այլ իսլամին փարված Ղազան խանը (1295—1304), որին հետևյալ կերպ է բնութագրում Հեթում պատմիչը. «Իր իշխանության սկզբում նա չէր համարձակվում նեղել մահմեդական հանդիսացող մարդկանց, որոնք նրան կայսրության ղեկին էին բերել և չկատարել նրանց տրված խոստումները: Այդ էր պատճառը, որ սկզբում, նա շատ դաժան գտնվեց քրիստոնյաների նկատմամբ, բայց երբ ամրապնդեց իր կայսերական գահը, նա սկսեց նրանց (իմա՝ քրիստոնյաներին—Մ. Զ.) սիրել ու հարգել: Նա իր կյանքի ընթացքում շատ բաներ արեց նրանց օգտին... նա սկսեց պատժել այն մեծամեծ իշխանավորներին, որոնք իրեն ձգտում էին համոզել հովանավորել իսլամը և հալածել քրիստոնյաներին: Այնուհետև նա հրամայեց իր կայսրության բոլոր թաթարներին ռազմական պատրաստություններ տեսնել, որով-

հետև նա ծրագրել էր արշավելու եգիպտական թագավորության դեմ, և եթե հնարավոր լինի, ոչնչացնել սուլթանին: Իր ծրագրի մասին նա հայտնեց հայոց և վրաց թագավորներին և Արևելքի մյուս բոլոր քրիստոնյաներին»⁴⁸:

Դժվար է հավատալ, որ Հեթում պատմիչը այսպես բնութագրեր մի մարդու, որը իլխանների պատմության մեջ հռչակվել էր որպես իսլամի մոլեռանդ պաշտպանի: Ըստ երևույթին, պատմիչը Կիլիկիայի գլխավոր թշնամի համարելով Եգիպտոսը, իդեալականացնում է իր երկրին օգնության հասած մոնղոլական այդ քաղաքական գործչին:

Ղազան խանը եգիպտական սուլթանի դեմ կազմակերպում է երեք արշավանքներ (1299, 1300, 1303 թվերին), որոնց անձամբ մասնակցում էր նաև Հեթում 2-րդը⁴⁹: Չնայած ունեցած մասնակի հաջողություններին, Ղազան խանը գնալով ավելի ու ավելի էր համոզվում, որ առանց Եվրոպական երկրների հետ համատեղ ռազմական գործողությունների հնարավոր չէ հաղթել եգիպտական Ֆաթիմյաններին: Երրորդ արշավանքի ժամանակ, Ղազան խանը պարտություն էր կրել եգիպտական սուլթանից: Դամասկոսի մոտ տեղի ունեցած ճակատամարտում, ինչպես պատմում է Հեթում պատմիչը, որպես դեպքերի անմիջական ակնատես⁵⁰, «...բազմաթիվ հայեր, ինչպես և թաթարներն ու վրացիները, իրենց ձիերով հանդերձ, ոչնչացվեցին»⁵¹: Ճակատամարտից հետո, Հեթում պատմիչի հավաստիացմամբ, Հեթում 2-րդը մեկնում է Իրան՝ Ղազան խանի մոտ, որը Հեթում պատմիչի վկայությամբ, «...ի նկատի ունենալով նրա կորուստները, նրան առանձնահատուկ շնորհարեց և նրան տրամադրեց իր սեփական ուժիկով պահվող հազար թաթարներ, որոնք պիտի հսկեին հայոց թագավորությունը»⁵²: Ղ. Ալիշանի հավաստիացմամբ, Ղազան խանը տվեց Հայոց թագավորին «ազատություն և՛ հարկապահանջութիւնս յիւր երկրէն յամենայն ամի» և խոստացավ անձամբ վրեժ լուծել «ի տաճկաստանեացն»: Այս խոստման կատարմանը, Հեթում պատմիչի ասելով, խանգարեց Ղազան խանի մահը⁵³: Եգիպտական զորքերը նորից են ներխուժում Կիլիկիա

48 P. Bergeron, XLI, էջ 56.
49 Նույն տեղում, XLII—XLIII, էջ 53—62.
50 «Ես՝ Հայտն եղբայրս,—կարդում ենք Հեթում պատմիչի մոտ,—որ գրեցի այս պատմությունը, բոլոր իրադարձություններին անձամբ ներկա էի»: Տե՛ս P. Bergeron, XIV, էջ 65):
51 Նույն տեղում:
52 Նույն տեղում:
53 Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 524:

45 Նույն տեղում, էջ 52:
46 Նույն տեղում, էջ 54:
47 Г. Г. Микаелян, էջ 418—422,

(1305 թ.) «...Եվ մինչև Տարսոն ամեն ինչ կողոպուտի ու ասպատակութեան ենթարկելով... հետ են վերադառնում հսկայական վնասներ պատճառելուց հետո»⁵⁴:

Ղազան խանի մահից հետո իլխան է դառնում խարբանդան (խուրբանդան), որն ընդունելով իսլամը, դառնում է Օլջեյթու խան (1304—1316), որի ժամանակ վատանում է ինչպես Մեծ Հայքի, այնպես էլ Կիլիկիայի վիճակը: XIV դարի մի ձեռագրի հիշատակարանում Օլջեյթու խանին գրիչը սրամտորեն դարձնելով խարբանդա («իշու ծառա») գրում է «...զօրէնս Քրիստոսի ոչ ծանեաւ և բազմիմաց հնարիւք գերծեաց զազգս մեր յամենայն կարասեաց, զի պահանջեալ չարկս ի յազազաց և յաւտարաց»⁵⁵: Օլջեյթու խանի օրվանից, փաստորեն, Կիլիկիայի փոխարարբերութիւնները մոնղոլների հետ խզվում են, և Կիլիկիան հայոց թագավորները՝ և՛ Հեթումյանները, և՛ նրանց հաջորդած Լուսինյանները փնտրելով ավելի ու ավելի թեթևում են դեպի կաթոլիկ աշխարհը, որը միայն ուժեղացնում էր եգիպտական սուլթանների թշնամանքը և արագացնում Կիլիկիան հայկական թագավորութեան վերացումը:

Ակառ՝ 1321 թվականից եգիպտական մամլուկների և Փոքր Ասիայի տարածքի վրա հաստատված թուրքմենների ներխուժումը Կիլիկիա կատարվում էր պարբերաբար՝ յուրաքանչյուր հինգ-տասը տարին մեկ անգամ մինչև նրա վերջնական կործանումը (1375 թ.): Եվրոպան տալիս էր միայն խոստումներ, և դրանց իրականացումը կապում կիլիկյան հայերի հավատափոխութեան հետ: Բոլոր կողմերից շրջապատված ու հոգեվարքի մեջ գտնվող Կիլիկիան հայկական պետությունը դադարեց գոյություն ունենալուց: Ահա այսպես պատկերավոր ձևով է ներկայացնում Կիլիկիան Հայաստանը շրջապատած թշնամիներին, որոնց մեջ էին նաև կաթոլիկ աշխարհի ներկայացուցիչները՝ վենետիկը և Զենովան, վենետիկցի Սանտոնոն: «Հայկական թագավորությունը, — գրում է նա, — ժանիքներով հոշոտում են չորս գազաններ, մի կողմից՝ առյուծը, այսինքն՝ ֆրանսիացիները, որոնց հայոց թագավորը մեծ տուրք է վճարում, մյուս կողմից՝ հովազը, այսինքն՝ (եգիպտական) սուլթանը, որը յուրաքանչյուր տարի ավերում է երկիրը և ոչնչացնում քրիստոնյաներին, երրորդ կողմից՝ գայլը, այսինքն՝ (սելջուկ) թյուրքերը, որոնք ավերում են տնտեսությունը և թագավորությունը, չորրորդ կողմից՝ օձը, այսինքն մեր

⁵⁴ P. Bergeron. XLV, էջ 62.

⁵⁵ Աշ. Լավնանիսյան, Դրվագներ..., հ. 1, էջ 402.

ծովի ծովահենները (վենետիկցիները և ջենովացիները), որոնք յուրաքանչյուր օր ջարդում են Հայաստանի քրիստոնյաների ոսկորները»⁵⁶:

* * *

Կիլիկիայում հայկական պետության վերացումից հետո երկրում փաստական տիրություն էին անում թուրքմենական ռամազան օղլուները, որոնց դեմ պայքարում էին Լարենդայում հաստատված կարաման-օղլու թուրքմենները: Թուրքմենական առանձին ցեղեր կիլիկյան հողի վրա հաստատվել էին դեռևս հայոց թագավորության գոյության ժամանակ: 1228 թ. Իկոնիայի սուլթան Ալաէդդինը հայերից զավթելով էրմենեկը, երկրի պաշտպանության համար այնտեղ տեղավորեց թուրքմենական ցեղերին՝ ածխագործ նուրե Սոֆիի գլխավորությամբ, որը Համմերի վկայությամբ ունեցել է հայկական ծագում⁵⁷:

Այդ ածխագործի անունով էլ, իբր, հետագայում այդ թուրքմենական ցեղը անվանվել է Կարաման⁵⁸: Այս ցեղերը զբաղվում են ավազակությամբ՝ ահ ու սարսափի մեջ պահելով շրջակա բնակչությանը: Իկոնիայի սուլթանության թուլությունից օգտվելով, նրանք հետագայում, ինչպես վկայում են հայկական աղբյուրները, խիստ ընդարձակում են իրենց զբաղեցրած տարածքը: «...Յարեան ոմն ի խորանաբնակ իսմայելացոցն ցեղէն, խարաման անուն, և եկեալ յարեցան ի նախնույն ցեղէն՝ բազումք, որ և ետ կոչել նոցա զինքն՝ սուլտան, և այնչափ զօրացաւ նա՝ մինչև սուլտանն Հոռոմաց (իմա՝ Իկոնիայի—Մ. Զ.) ըռուզնատին՝ յահի եղեալ ի նմանէ՝ ոչ իշխէր ընդդիմախոսել նմա, և բազում տեղիս հանդերձ ամրոցօք ընդ ձեռամբ իւրով բռնակալեաց, և բազում նեղութիւն էած կողմանն Սավրիոյ և Սելեկիոյ՝ գերելով զնոսա. երկիցս անգամ կոտորեաց ի զօրաց արքային Հեթմոյ՝ զոր կացուծեալ էր անդ կողմնապահս»⁵⁹: 1318 և 1336 թվականներին կարամանյան թուրքմենները, հաճախ դաշնակցած եգիպտական սուլթանների հետ՝ հարձակվում են Կիլիկիան հայկական պետության վրա⁶⁰:

Կիլիկիայի հայկական պետության վերացումից հետո, XV դարի սկզբին, ինչպես արդեն ասվեց, Կիլիկիա և նրա հյուսիս-արևելքում ստեղծված Կարամանյան թուրքմենական իշխանություն է այցելում ֆրանսիացի Բերտրանդոն դե լա Բրոկիերը: Եվ բոլորովին էլ զարմա-

⁵⁶ M. Sanutus. Liber secretorum fidelium crucis. Hanoviae, 1611, p. 32.

⁵⁷ Տե՛ս J. Hammer, 1, էջ 202.

⁵⁸ Ղ. Ալիշան, Սիսուան, վենետիկ, 1885, էջ 293.

⁵⁹ Նույն տեղում:

⁶⁰ Նույն տեղում, էջ 295.

նալի շէ, երբ նա երկիրը տեսնում է քոչվոր թուրքմենական ցեղերով այն աստիճան ողողված, որ նա երկիրն անվանում է Թուրքոմանիա, թեպետ նշում է, որ դա նախկին Փոքր Հայքն է: Սկսելով իր ճանապարհորդությունը Ալեքսանդրեթի ծոցից դեպի Կիլիկիայի խորքերը, Ֆրանսիացի դիվանագետը գրում է. «Ինձ անհրաժեշտ եղավ երկու օր, որպեսզի կարողանամ շրջագայել ծոցի շուրջ ձգված երկիրը: (Երկիրը) շատ գեղեցիկ է և ժամանակին ունեցել է քրիստոնյաներին պատկանող բազմաթիվ ամրոցներ, որոնք այժմ ավերված են»⁶¹: Այս երկրամասից դեպի արևելք ընկած տարածությունն վրա, հեղինակի ասելով «...բնակվում են միայն թուրքմենները ... նրանք ապրում են բաց դաշտում, և ենթարկվում են իրենց առաջնորդին, սակայն հաճախ փոխում են բնակավայրը՝ ընտանյոք հանդերձ: Այս պարագայում նրանց սովորույթն է ենթարկվել այն իշխանին, որի հողում նրանք կանգ են առնում, և պատերազմի դեպքում զենքով ծառայել նրան»⁶²:

Լա Բրոկիերի հաղորդած վկայություններից չի կարելի հանգել այն եզրակացության, թե Կիլիկիայում արդեն հայերը կազմում էին բնակչության փոքրամասնությունը: Ե՛վ քաղաքներում, և՛ լեռնային գյուղերում Ֆրանսիացի ճանապարհորդը հանդիպել է հայերի: Ֆրանսիացուն ուղեկցած հայր նրան ցույց է տվել լեռան վրա գտնվող մի զոլակ, որի բնակիչները «...բացառապես իր ազգից են»⁶³: Խոսելով Սսի մասին, մեր հեղինակը նշում է, որ լինելով «կարևոր մի քաղաք»՝ պատկանել է հայերին: «Այնտեղ մինչև այժմ կարելի է տեսնել կիսավեր բազմաթիվ եկեղեցիներ»⁶⁴:

Թուրքմենների տիրապետության ներքո ապահովություն գոյություն չունի: Երբ Լա Բրոկիերը կիպրացի երկու վաճառականների հայտնել է իր նպատակը՝ ցամաքով վերադառնալ Ֆրանսիա, ապա նրա զրուցակիցներն զգուշացրել են նրան, ասելով, որ «...դա անհնարին է, և որ, եթե ես հազար կյանք ունենայի, բոլորն էլ կկորցնեի»⁶⁵:

Բերտրանդոն Դե Լա Բրոկիերի կողմից Լարենդայում Կարամանի իշխան Փիր-Բուզաղի և նրա պալատի նկարագրությունը ցույց է տալիս, որ մենք գործ ունենք ինքնուրույն մի պետության ներկայացուցչի արքայական տան հետ⁶⁶:

⁶¹ Bertrandon de la Broquière, էջ 525:

⁶² Նույն տեղում:

⁶³ Նույն տեղում, էջ 526:

⁶⁴ Նույն տեղում:

⁶⁵ Նույն տեղում, էջ 534:

⁶⁶ Նույն տեղում, էջ 537:

Այսպիսի վիճակն էր, որ առաջ էր բերել նորաստեղծ օսմանյան պետության ղեկավարների նախանձն ու ատելությունը: Առաջին անգամ կարամանի թուրքմեններն ու օսմանցիները ընդհարվեցին սուլթան Մուրադ 1-ինի (1359—1389) ժամանակ⁶⁷: Նրա հաջորդ Բայազետ Յըլզերըմը (1384—1402), շարունակելով իր հոր քաղաքականությունը, ևս մեկ անգամ փորձեց վերացնել Կարամանի իշխանությունը: 1390 թ. Բայազետը հարձակվեց Կարամանի վրա, որի իշխանը՝ Ալաէդդինը, փախչելով Լեոնային Կիլիկիա, հաշտություն խնդրեց թուրքական տիրակալից: Նույն տարում տարածքային զիջումների գնով երկու կողմերի միջև կնքվեց հաշտություն, որը կարճ տևեց: Ալաէդդինը նորից հարձակվեց օսմանցիների դիրքերի վրա: Բայազետն անհապաղ Եվրոպայից անցնելով Փոքր Ասիա, ռազմական գործողություններ սկսեց Ալաէդդինի դեմ: Ակշայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում կարամանյան իշխանը պարտություն կրեց ու գերի ընկավ Բայազետի ձեռքը: Մեծ փրկագնով և տարածքային նոր կորուստներով: Կարամանի իշխանին հաջողվեց այս անգամ էլ գործն ավարտել հաշտությամբ⁶⁸: Սակայն Կիլիկիայի և Կարամանի համար օսմանցիների և կարամանցիների միջև ծավալված պայքարը, ինչպես կտեսնենք հետագա շարադրանքից, շարունակվեց:

* * *

XIV դարի վերջերին Մեծ ու Փոքր Հայքերը ենթարկվեցին նոր անասելի աղետների, կոտորածի, ավարի ու թալանի Թիմուրի թյուրքազաղաթալական հորդանների կողմից:

Քաղաքական այդ տակնուվրայությունների վերաբերյալ ստուգապատում տեղեկություններ են հաղորդում ինչպես հայ, այնպես էլ օտար աղբյուրները: Վերջիններիս մեջ հատկապես ուշագրավ են իսպանացի Ռույ Գոնսալես զի Կլավիխոյի, բավարացի Շիլդբերգերի և հույն Խալկոնդիլեսի հաղորդածները: Թիմուրի բանակներն ավերում ու քանդում էին քաղաքներն ու գյուղերը, բերդերն ու ամրոցները, եկեղեցիներն ու ապարանքները՝ ամայի ու անմարդաբնակ դարձնելով ամրոջ երկրամասեր:

1386 թ. Թիմուրի զորքերն Իրանը նվաճելուց հետո մուսք գործեցին Անդրկովկաս և անցնելով Արաքս գետը, երևացին Կարսի մա-

⁶⁷ J. Hammer, I, էջ 266:

⁶⁸ Նույն տեղում, էջ 307—308:

տուլցում: Այնուհետև, Քիմուրն իրեն ենթարկեց Վրաստանը⁶⁹: 1387 թ. Այրարատյան նահանգը գրավելիս Քիմուրը Սուրմալիում հայերի կողմից համառ դիմադրություն հանդիպեց. «Իսկ բարեպաշտ տանուտէր մի Մարտիրոս անուն,—կարգում ենք Քովմա Մեծոփեցու մոտ,—յոյժ զօրեղ զօրական, ողորմած և աղքատասէր ի գեղջէն Կողբայ եղեալ ի լեառն բարդող, որ կոչի յայլով ազգաց Բակաթու, յոյժ արի և բաջ մանկամբբ գեղջն ապրեցոյց զամենայն հաւատացեալսն մեծաւ պատեւրազմաւ և սրտապինդ զօրութեամբ օգնութեամբ հզօրին Աստուծո Յիսուսի Քրիստոսի փրկչին մերո: Եւ թեպետ բազում անգամ պատերազմեալ՝ ոչ կարացին առնուլ զլեառն զայն»⁷⁰:

Հայերի կողմից Քիմուրյան հորդաների դեմ ընդհարումներ տեղի ունեցան Հայաստանի և այլ մասերում: Հայերի հանդգնութեան պատասխանը Քիմուրի կողմից միշտ միևնույնն էր՝ անմարդկային դաժան հաշվեհարդարը: Նույն 1387 թ. Շահապանում արտագրված մի ձեռագրի հիշատակարանում, նշելուց հետո, որ Հայոց աշխարհը սոսնատակ եղավ, գրիչը վկայում է, «Ոմանք ի գերութիւն վարեալք՝ արք և կանայք, և կէսք առաթուր դիաթաւլ արախողխող գալարեալ, առհասարակ քահանայք և աշխարհականք գէշ անկեալ դիակամբ անթաղ ընկեցեալք և այլք ի բազմազան տանջարանս մաղեալք: Ոմանք հրով կիսայրեացք տոչորեալք և այլք ի սովոյ գազանարեկ վտանգեալք, կէսք խստամբեր կրիք շարշարեալք և այլք երկիւղիւս պաշարեալք»⁷¹:

Երբ առաջին անգամ Քիմուրը երևաց Փոքր Ասիայի տարածքի վրա, Փոքր Հայքը կառավարվում էր թյուրքական ցեղերից մեկի առաջնորդ Քահերթենի կողմից, որը Երզնկան դարձրել էր իր մայրաքաղաքը: Հարվածելով Կարամանին, Բայազետը նպատակադրվել էր իրեն ենթարկել նաև Փոքր Հայքը, նախ և առաջ Սերաստիան, որի տիրակալը դարձյալ թյուրքական ցեղերից մեկի ղեկավար Կազի-Բուրհանեղդինն էր: Իր գաշնակից ակկոյունլուների դինաստիայի հիմնադիր Կարա-ձուլուկի օգնությամբ 1392 թ. Բայազետը զավթում է Սերաստիան⁷²:

Սա այն ժամանակ, երբ հարևան Երզնկայի տիրակալ վերոհիշյալ Քահերթենն արդեն ճանաչել էր Քիմուրի սուլթանն իրավունքներն իր իշխանության նկատմամբ: Բայազետը Սերաստիան զավթելուց հետո անվերջ ոտնձգություններ էր կատարում Քահերթենի նկատմամբ, ինչը Կլավիխոյի ասելով, սրել էր Քիմուրի և Բայազետի հարաբերությունները: Սակայն խոսքը տանք Կլավիխոյին. «Արզինջան քաղաքի իշխանն այդ ժամանակում, ինչպես արդեն բացատրված է, իշխան Քահարթենն էր, և իր սահմանները կից էին թուրքի (սահմաններին): Սուլթանը վերջերս շատ ագահ էր դարձել և ուզում էր տիրանալ այդ երկրամասին, և հատկապես Կամախի այդ զորավոր բերդին, որը Քահարթենն շատ նախանձախնդիր էր պահելու: Դրա վրա սուլթան Բայազետը մի պատգամ էր ուղարկել Քահարթեններին՝ պահանջելով, որ հարկ վճարի իրեն, ինչպես նաև իրեն հանձնի այդ Կամախի բերդը»⁷³: Հույս չունենալով սեփական ռազմական ուժերի վրա, ինչպես այնուհետև վկայում է Կլավիխոն, Քահարթենը դիմում է Քիմուրի օգնությանը⁷⁴:

Քիմուրի այն պահանջին, որ Բայազետը հանգիստ թողնի Քահերթենին, թուրքական սուլթանը պատասխանել է, թե «...Քիմուրի պես հիմար մի մարդ, ինչպես է համարձակվում իրեն՝ սուլթանին ուղարկել այդպիսի մի պատգամ, երբ ինքը՝ սուլթանը, կարող է Քահերթենի հետ վարվել այնպես, ինչպես որ կամենա»⁷⁵:

Քիմուրը, անավարտ թողնելով Վրաստանի վերջնական նվաճումը, առժամանակ հետաձգել էր Բայազետի հետ առճակատումը: Շուտով, սակայն, նա նոր արշավանք կազմակերպեց դեպի Վրաստան, իսկ մինչ այդ Մեծ Հայքի նվաճումը նա վաղուց էր ավարտել: Քիմուրը Կարակոյունլու թուրքմեններից զավթել էր Խլաթը, Արծկեն, Մուշի հովիտը, Վան-Վասպուրականը: Վանը Քիմուրին հերոսական դիմադրություն էր ցույց տվել, ուստի քսանօրյա պաշարումից հետո, երբ քաղաքն ու ամրոցը գրավվեցին, Քիմուրի կարգադրությամբ քաղաքի պաշտպանները ձեռքերը կոնակին կապված ամրոցից ցած նետվեցին⁷⁶:

69 J. Hammer, II, էջ 18—19: Հաշորդ՝ 1387 թ. Քիմուրի հորդաները երևացին արգեն էրզրումի մոտ: Այդ նույն թվականին Երզնկայում արտագրված մի ձեռագրի հիշատակարանում Գևորգ գրիչը հայտնում է. «Յայսմ ժամանակի,—գրում է նա,—յորում էր թուական հայոց ՊԶ (1387), ելաւ աղջն Խուժաղուժ յարեւից, ի կողմանց հիփսոյ, որ կոչեր Լանկ-Քամուր, և եկն մինչև յԱրզրում, և բազում ոճիրս գործեաց... զոր լեաս դարձույց Աստուծո: (Լ. Խաչիկյան, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 570):

70 Քովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ Քամուրայ և յաշորդոց իւրոց, Փարիզ, 1860, էջ 18:

71 Տե՛ս Մ. Չամչյան, Հայոց պատմություն, հ. Գ. Վենետիկ, 1786, էջ 421:

72 J. Hammer, I, էջ 308—309:

73 Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 97:

74 Նույն տեղում, էջ 98:

75 Նույն տեղում:

76 J. Hammer, II, էջ 20—21. Մ. Չամչյանը նշում է, որ պաշարումը տեղի է ունեցել քսան, այլ քառասուն օր (տե՛ս Մ. Չամչյան, հ. Գ, էջ 425): Ք. Մեծոփեցու վկայությամբ, օպանվածների թիվը այնքան մեծ էր, որ դժոխային պատկեր էր ներկայացնում: «Եւ այնքան բարձրացաւ,—գրում է նա,—ղեզ մեռելոցն առ պարսպաւ, մինչ զի որք ի վերջոյ տեկանեին ոչ մեռանէին զոր և տեսաք ասէ աշօք, և լուսք ականջօք յարբիսկիսկոպոսէն Զաքեոսէ և ի Պողոս վարդապետէ, որք յայնժամ գերի վարեալ ազատեցան» (նույն տեղում):

եմ ահա, երբ Քիմուրը արշավել էր Վրաստան, լուր ստացվեց, որ Ոսկե Հորդայի խան Քոխթամիշը Գերբենդի վրայով մուտք էր գործել Շիրվան: Քոխթամիշի կողմից նման մի արշավանք Շիրվան և Հայաստան կատարվել է նաև 1386 թ.⁷⁹ Քիմուրի առաջին արշավանքից մի տարի առաջ: Այդ մասին են պատմել Սուրմալիի հայերը, երբ Կլավիխոն այցելել է իրենց քաղաքը: Անշուշտ, այդ արշավանքից տուժել է ոչ միայն Սուրմալին, այլև ողջ Արարատյան նահանգը: Ավելորդ շենք համարում այստեղ բերել Կլավիխոյի այդ վկայությունը: «Այստեղի (Սուրմալիի—Մ. Զ.) մարդիկ մեզ պատմեցին, թե սրանից (տասն)ութը տարի առաջ թաթար խանը՝ Քոխթամիշը պաշարել էր իրենց քաղաքը, երկու ամբողջ օր ուժրակոծելով: Հետո, երրորդ օրը համաձայնություն էին եկել նրա հետ, պայմանով, որ հանդիստ թողնվի իրենց քաղաքը, ոչ ինքը և ոչ էլ իր մարդիկը պետք էր որ չմտնեին քաղաքը, բայց իրենք, որպես տուրք պիտի վճարեին սահմանված մի գումար: Այս պայմանները Քոխթամիշը խոսք տվավ հարգել, բայց նա ավելացրեց պահանջելով, որ քաղաքի զինված մարդուց կեսը դուրս գա միանալու իր ուժերին, և իր հետ միասին երթալու վրացիների դեմ, մտադրված լինելով պատերազմել այդ ազգի թագավորի դեմ, որի անունը Գեորգ էր: Սակայն և այնպես հազիվ թե իրենց պատերազմիկները քաղաքից դուրս էին եկել, Քոխթամիշը հրաման տվավ իր մարդկանց քայլելու քաղաքի դեմ, ուր նրանք ներս մտան հարձակումով, և կողոպտեցին, և այնտեղ գտնված բոլոր հարստությունները տարին, որպես ավար: Այս թաթարները—այսպես այրեցին տները, շատ տեղերից խորտակելով քաղաքի պարիսպները և սպանելով մեծ թվով քաղաքացիների: Սուրմալիի բնակչության սովոր մեծամասնությունը նախապես եղել են հայեր, որովհետև Հայաստանի քաղաքներից մինն է, բայց վերջին տարիներին շատ քրիստոնյաներ տեղահանվել են այս տեղից և խլամներ են եկել ու հաստատվել նրանց տեղը»⁷⁷: Քիմուրը շուտ տվեց իր զենքերը Քոխթամիշի դեմ և Քերեք գետի մոտ տված վճռական ճակատամարտում որոշեց վերջինիս ճակատագիրն ու Ոսկե Հորդան ենթարկվեց Քիմուրին (1395 թ. ապրիլ)⁷⁸:

Երբ Քիմուրը զբաղված էր իր գլխավոր հակառակորդներից մեկի՝ Քոխթամիշի հետ պատերազմելով, Բայազետ Յըլզըրըմը, օգտվելով հարմար առիթից, հարձակվեց Փոքր Հայքի վրա ու զավթեց այն: Այդ մասին դեպքերի ակնատես Շիրզերգերի մոտ կարդում ենք. «Դեռ չէր հաջողեցրել թամբուլանը (Հյուսիսային Գովկասից) վերադառնալ իր

երկրամասը, երբ Բայազետը 300 հազարանոց զորքով հարձակվեց թամբուլանին պատկանող Փոքր Հայքի վրա, զավթեց նրա գլխավոր քաղաք Երզնկան և գերեզմարեց այդ քաղաքի տիրակալ Մուլախարտին (պետք է լինի թահարթենին—Մ. Զ.)»⁷⁹: Այս նույն դեպքերը Կլավիխոյի մոտ նկարագրված են հետևյալ կերպ. «Բայազետը հարձակում գործեց Արզինջան քաղաքի վրա, մղվելով այն կատաղությունից ու ցասումից, որ նա սնուցանում էր իշխան թահարթենի հանդեպ»⁸⁰: Բնականաբար, Քիմուրի և Բայազետի փոխհարաբերությունները ծայրահեղորեն սրվում են:

Ահա այս ժամանակ է, որ, ինչպես այդ մասին դարձյալ վկայում է Կլավիխոն, Կ. Պոլսի բյուզանդական կայսրը և ջենովացիները Քիմուրին առաջարկում են համատեղ ուզմական գործողություններ ձեռնարկել թուրքերի դեմ, խոստանալով նույնիսկ դրամական օգնություն: «Այս շրջանում էր,—կարդում ենք Կլավիխոյի մոտ,—որ Կ. Պոլսի (Մանվել) կայսրը և Ջենովայի ազնվականները, որոնք հաստատված էին Պերայում, պատգամավոր ուղարկեցին Քիմուրին՝ ասելով եթե նա պիտի կռվեր թուրքին (սուլթանի) դեմ, նրանք պիտի օգնեին, իրեն տալով զինվորներ և նավեր... Ավելին, հույները Քիմուրին (մարդ) ուղարկեցին և խոստացան դրամական օժանդակություն»:

1400 թվականին Քիմուրը Երզնկայի գրավումից ու թահարթենին նորից իշխանության գլուխ բերելուց հետո հսկայական բանակով⁸¹ եկավ ու պաշարեց Սեբաստիան: Փոքր Հայքի այս քաղաքը Փոքր Ասիայի ամենախոշորներից էր, և հալվ Կոնդիլեսի վկայությամբ ուներ մինչև հարյուր քսան հազար բնակչություն, գերազանցապես՝ հայ⁸²: Տասնութօրյա պաշարումից հետո քաղաքի բնակիչները դիմեցին հաղթողի ողորմածությանը, խնայվեցին հիմնականում մուսուլմանները, իսկ հայերը անողորմ սրի մատնվեցին: Յոզեֆ Համմերը, հենվելով «Շարաֆնամե»-ի վրա, այդ մասին գրում է. «Քրիստոնյաները, և մասնավորապես շորս հազար հոգուց կազմված հայկական հեծելազորը, որը պաշարող բանակին ցույց էր տվել ամենահերոսական դիմադրություն՝ բոս կընքված հաշտության պիտի գերեզմարվեր: Սակայն հակառակ Ջորանի վրա

⁷⁹ Иоган Шильдбергер, Путешествие по Европе, Азии и Африке с 1394 по 1427. Перевод Ф. К. Брука, Изд. З. А. Бунятова, Баку, 1984, стр. 23.

⁸⁰ Հավե. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 101:

⁸¹ Շիրզերգերը մեկ միլիոն է հաշվում նրա բանակի թիվը, որն, անշուշտ, շափազանցություն է (И. Шильдбергер, էջ 23):

⁸² Chalcondyles. I, էջ 56:

⁷⁷ Հավե. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 109:

⁷⁸ J. Hammer, II, էջ 40:

երզվելուն, Բարբարոսը (իմա՝ Թիմուրը—Մ. Չ.) հայերին հանձնեց իր զինվորներին՝ կարգադրելով կենդանի թաղել նրանց»⁸³։

Խալկ Կոնդիլեսը այսպես է նկարագրում Սեբաստիայի աղետը։ Համաձայն Թիմուրի տված հրամանի «...առաջին հերթին սրի քաղվեցին բոլոր տղամարդիկ, այնուհետև հավաքելով կանանց ու երեխաներին մի մեծ հրապարակի վրա (Թիմուրը) նրանց վրա բաց թողեց իր հեծելազորը, որը մի անողորմ կոտորած սարքեց սպանելով մինչև վերջին մարդը։ Ահա այս տարաբախտ քաղաքի վախճանը, քանզի և ոչ մի կենդանի էակ չճողոպրեց սրից»⁸⁴։ Չիերի սմբակների տակ կոտորված այդ հողերը, ինչպես գրում է Մ. Չամչյանը, հետ այսու կոշվեցին սև հողեր⁸⁵։

Թիմուրի զորքերը շուտով վերադարձան Ղարաբաղ, իսկ Բայազետը չհապաղեց վերադառնալ Սեբաստիան և Երզնկան։ 1402 թ. հուլիսին Անկարայի մոտ տեղի ունեցած վճռական ճակատամարտում Բայազետը ոչ միայն պարտություն կրեց Թիմուրից, այլև զերի ընկավ նրա ձեռքը։ Այժմ արգեն ողջ Փոքր Ասիան ենթարկվում էր Թիմուրի աշխարհակալությանը։

Թոխթամիշի ու Թիմուրի արշավանքները, ինչպես նշեցինք, աղետաբեր եղան հայ բնակչության համար։ Կլավիխոյի ընթերցելիս այնտպավորությունն է ստացվում, որ Հայաստանի շատ վայրեր, որտեղից անցել է իսպանացի դիվանագետը, դարձել էին ամայի ու անմարդաբնակ։ Այսպես՝ Իգդիրի մոտից Կլավիխոյի ճանապարհը անցնում էր լեռան շուրջը։ «Անցանք շատ ավերակ վայրեր, ուր տեսանք տների հիմքերը՝ շինված մեծ շափի քարերով»,— գրում է նա։ Այնուհետև՝ «Ճասնումեկ տարի առաջ էր (?), որ թաթարների խան Թոխթամիշը իշխանության գլուխն անցնելով և բազմաթիվ ձիավոր հետևորդներ ունենալով (Ղփչաղից) արշավեց գրավելու համար Պարսկաստանը։ Նա հասավ (Ատրպատականի) նահանգը և գրավեց Թավրիզը ու վերին Հայաստանի բոլոր շրջանները։ Շատ քաղաքներ կողոպտվեցին, շատ բերդեր ավերվեցին և իր բանակները քար ու քանդ արին գյուղերը, ինչպես մենք դեսպաններս տեսանք այս մասերում ճանապարհորդելիս»⁸⁶։ Եվ այնուհետև, անցնում էինք մենք, գրում է նա, «Բոլորովին ամայի երկրից... Հայաստանի այս մասում (Խոյից մինչև Ալաշկերտ) բնակչության բացակայության պատճառն այն է, որ քրիստոնյաները կորցրել են

իրենց իշխանությունն ամբողջ Մեծ Հայաստանում»⁸⁷, որի հետևանքով Կլավիխոյի ասելով մուսուլմանները զավթել էին նրանց հողերը, տիրել քաղաքներին, սպանել տեղաբնակ հայ բնակչությանն ու տեղավորվել երկրում⁸⁸։

Կլավիխոյի այս վկայությունները, դուցեև մասամբ կարելի է ճիշտ համարել Արարատյան նահանգի և Հայաստանի հարավային ու հարավարևմտյան մասերի համար, որտեղից անցել է իսպանացին։ Դրանք XV դարում դբաղեցված էին կարակոյունլու և ակկոյունլու՝ մեկը մյուսի նկատմամբ ախոյան թուրքմենական ցեղերով։ Նման պայմաններում, հայ ժողովրդական զանգվածները կոտորածներից խուսափելու համար գերադասել էին բնակվելու գյուղավայրերում։ Շիրգբերգերն էլ նույնն է վկայում ասելով, թե գյուղերի բնակիչները հայեր են, իսկ քաղաքներում բնակվողները՝ «անօրենները»։ XVI—XVIII դարերի եվրոպացի հեղինակների հաղորդած վկայություններից երևում է, որ Մեծ ու Փոքր Հայքերի բնակչությունը, շնայած քաղաքական տակնուվրայություններին, մեծամասամբ տեղաբնիկ հայերն էին։

Ուշագրավ է Կլավիխոյի մոտ Հայաստանի սահմանների բնորոշումը։ Նա Խոյ քաղաքը, որի «...բնակչության մեծ մասը հայ ցեղից է»⁸⁹, մի քանի անգամ շեշտելով համարում է Հայաստանի սահմանը։ «Խոյ քաղաքում Պարսից երկիրը վերջանում է, Մեծ Հայաստանը՝ սկսում»⁹⁰։ Եվ ահա այս Խոյի ու Սալմաստի արանքում ընկած տարածքում, մասնավորապես Մակվում Կլավիխոն իջևանում է նուրբեղին կոչված հայ իշխանի մոտ, որը «...մեծ մխիթարություն էր զգում այն իրողությունից, որ մենք քրիստոնյա էինք» և որ նա «...մեզ ցույց տվավ մեծ հյուրասիրություն»⁹¹։ Կլավիխոն պատմում է, որ Մակվի հայ իշխանն իրեն այնքան հզոր է զգացել, որ չի ենթարկվել Թիմուրի մերձավորագույն ավագանիներից մեկին՝ Ջհան շահ Միրզային⁹²։ Ջարմացած իսպանացին բացականում է. «Հիրավի, զարմանալի է, թե ինչպես Մակվի այս քրիստոնյաները կարող են պահել իրենց, շրջապատված մահամեղական ժողովրդով և այսքան կտրված բոլոր քրիստոնյաների օգնությունից, փաստապես նրանք պատկանում են հայ ազգին, բայց հռովմեական կաթոլիկ հավատքին»⁹³։

87 Նույն տեղում, էջ 138։

88 Նույն տեղում, էջ 139։

89 Նույն տեղում, էջ 117։

90 Նույն տեղում, էջ 136։

91 Նույն տեղում, էջ 115։

92 Նույն տեղում։

93 Նույն տեղում, էջ 116։

83 J. Hammer, II, էջ 61։

84 Chalcondyles, I, էջ 56։

85 Մ. Չամչյան, հ. 9, էջ 429 («...սրոյ վասն և տեղին կոշեցաւ և կոշի սև հողեր»)։

86 Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 124։

Քիմուրի կարճ ժամանակում ստեղծած ընդարձակածավալ կայսրությունը, որը պահպանվում էր միայն բռնի ուժով, շուտով տրոհվեց առանձին մասերի: Հայկական լեռնաշխարհում Քիմուրյանների թուլացումից առաջինը օգտվեցին կարակոյունլու թուրքմենները, որոնք Քիմուրին ուժեղ դիմադրություն էին ցույց տվել և ճգմվել ջաղաթայական բռնակալի կողմից, Նգիստոս փախուստ տված կարակոյունլուների առաջնորդ Կարա-Յուսուֆը շուտով եկավ նորից նվաճեց Հայկական լեռնաշխարհի զգալի մասը և Քավրիզում իրեն հռչակեց նոր պետության հիմնադիրը: Կարա-Յուսուֆի հաջորդների մեջ ամենակարկառուն դեմքը Ջհան շահն (1437—1467) էր, որի պետության սահմանները հասնում էին մինչև Հերատ:

Հայկական լեռնաշխարհում և Արևմտյան Իրանում գերիշխանություն հաստատելու համար կարակոյունլուների դեմ դաժան պայքար էին ծավալել նաև պատմական Աղձնիք նահանգում հաստատված ակկոյունլու թուրքմենները, որոնք, ի տարբերություն շիա կարակոյունլուների, պատկանում էին սուննի դավանանքին⁹⁴ և, հետևաբար, մասնակի ատելություն էին տաժում առաջինների նկատմամբ: Իբրև սուննիներ ակկոյունլուները հանդես էին գալիս որպես Քիմուրի ու նրա հաջորդների զորեղ դաշնակիցներ: 1449—50 թվականներին կարակոյունլուներն ասպատակում են Հայաստանի արևմտյան մասերը և, մասնավորապես, Կամախն ու Երզնկան, ավերելով երկրամասը, հրի ու սրի մատնելով նրա բնակչությանը, որը գերազանցապես բաղկացած էր հայերից: 1450 թ. արտագրված մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «եկեալ սուլթանն Քաւրիզու Ջհանշահ անուն՝ բազում և անթիւ զօրօք՝ վաթսուն հազարաւ, եկեալ էառ զեղնգայն, յազգէ թուրքմանաց (ակկոյունլուներից) որ իր ազգաւ Պայրնտուր և կալեալ զիշխանն Երզնկայ քաղաքին և 40 անուանի ամիրայ զհետ նորա, և տարեալ յարեկու կորուսին, և զկամխայ աստուածաշէն երկիրն ևս հասարակ գերեաց, իբրև անձինս ԺԻՀ (10.000) ընդ այր և ընդ կին, թող զայն որ մաշեցան և զներքին Դերջանն և զվերին Դերջանն, զԲաբերդ, զԿեղի, զԿոճական և զԳայլգետն, զՇեռեան, զՍատաղ, առհասարակ գերեաց»⁹⁵:

Կարակոյունլու Ջհանշահի և ակկոյունլու Ուզուն Հասանի միջև համարտությունը տևեց երկար, և ի վերջո՝ 1467 թ. նոյեմբերի 11-ին

Մուշի մոտ տեղի ունեցած ճակատամարտում կարակոյունլուները ծանր պարտություն կրեցին, սպանվեց ինքը՝ Ջհանշահը: Գրավելով Քավրիզը, Ուզուն Հասանը (1453—1477) իրեն հռչակեց կարակոյունլուներին փոխարինելու եկած ակկոյունլուների հզոր պետության տիրակալ:

Ահա նորաստեղծ այս պետության օգնությանն առաջինը դիմեց շորս կողմերից թուրքերով պաշարված, փոքրիկ ու անկման եզրին գտնվող հունական Տրապիզոնի կայսրությունը: Մինչ այդ իր մահացու թշնամուն՝ օսմանցիներին, հարվածելու նպատակով դեռևս Հոռմի Կալիքստոս պապը (1455—1458) հատուկ պատվիրակություն էր ուղարկել Արևելք՝ Մինորիա կուրդվիկոս Բոյունացու զխավորությունը: Վերջինս 1459—1460 թվականների ընթացքում կապվեց Տրապիզոնի կայսր Դավիթի, Աբխազիայի ու Վրաստանի թագավորների, վրաց և մահաբդական մի շարք իշխանությունների հետ, որոնց թվում հիշատակվում են նաև Կարամանիայի սուլթանը և ակկոյունլուների առաջնորդ Ուզուն Հասանը: Հոռմի պապի ներկայացուցչի և թվարկված այս իշխանությունների միջև կնքված համաձայնությունը որոշվել էր ազատագրել Կ. Պոլիսը և վերջ տալ օսմանյան պետության գոյությունը⁹⁶:

Չնայած այն հանգամանքին, որ նշված համաձայնագիրը ոչ մի հետևանք չունեցավ և մնաց թղթի վրա, հետագայում եվրոպական մի շարք երկրների և Ուզուն Հասանի միջև կայանալիք դաշնակցության հիմք ծառայեց: Տրապիզոնի կայսրության և ակկոյունլուների պետության միջև բաղադրական հարաբերություններն էլ ավելի ամրապնդվեցին, երբ Ուզուն Հասանն ամուսնացավ Դավիթ կայսեր մերձավորագույն ազգակցուհի Կիրա Կատերինայի՝ եվրոպայում Դեսպինա անունով հռչակված իշխանուհու հետ:

Համոզված լինելով, որ ինքն ի զորու չէ պայքարելու հզոր օսմանյան պետության դեմ, Ուզուն Հասանը ինքը հանդես եկավ վենետիկի հետ դաշն կնքելու գաղափարով: Այդ նպատակով, ինչպես վկայում է Կատերինո Զենոն, հատուկ պատվիրակություն ուղարկեց վենետիկյան հանրապետություն՝ հայազգի մեծահարուստ վաճառական Մուրատի, կամ ինչպես ենթադրում է Ղ. Ալիշանը, Միրաբի զխավորությունը⁹⁷:

Իր հերթին վենետիկն Ուզուն Հասանի պատվիրակության հետ իր դեսպանությունն ուղարկեց ակկոյունլու տիրակալի մոտ, զինական օգնության և համատեղ ռազմական գործողություններ առաջարկելով ընդ-

⁹⁴ V. Minorsky. La Perse au XVème siècle entre la Turquie et Venise. Paris, 1923, p. 4.
⁹⁵ Տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 327:

⁹⁶ Տե՛ս Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ, հ. 2, էջ 9:
⁹⁷ Ղ. Ալիշան, Հայ-վենետ., էջ 187: Միրաբը համարվել է Ուզուն Հասանի «հավատարիմ սպասավորը» (...fidelis servidior nostro):

դեմ թուրքերի (ծովից ու ցամաքից)⁹⁸։ Պատվիրակության հիմնական խնդիրն էր Ուզուն Հասանին համոզել, որ «բոլոր քրիստոնյաների կատարի թշնամին հանդիսացող» թուրքիան միաժամանակ, «թշնամի է նրան (իմա՝ Ուզուն Հասանին—Մ. Զ.) և նրա ցեղին»⁹⁹։

1453 թ. Կ. Պոլիսը գրավելով և այն վերածելով օսմանյան պետության նոր մայրաքաղաքի, սուլթան Մեհմեդ Ֆաթիհը նորանոր նվաճումներ կատարեց Արևմուտքում։ 1461 թ. նա հարձակվեց Տրապիզոնի կայսրության վրա։ Տրապիզոնի վրա հարձակումը կատարվում էր ծովով՝ Սինոպի վրայով և ցամաքով՝ էրզրումի ճանապարհով։ Սուլթանի հրամանով՝ Ռումելիի բեգլերբեգ Համզաբեգը ասպատակեց էրզրումի շրջակայքը «...իր հետևում թողնելով միայն ավերակներ և հուսահատության մատնված մի ժողովուրդ»¹⁰⁰։ Իսկ երբ Համզաբեգի բանակին միացավ նաև ինքը՝ սուլթանը, ապա վախեցած Ուզուն Հասանը Ֆաթիհի մոտ ուղարկեց Սառա անունով իր մորը, խնդրելով հաշտություն։ Սուլթանը համաձայնվեց հաշտություն կնքելու Ուզուն Հասանի հետ միայն այն դեպքում, եթե վերջինս խզեր իր դաշինքը Տրապիզոնի կայսրության հետ¹⁰¹։ Հաշտության առաջարկն ընդունվեց և սուլթանին ոչինչ չէր խանգարում հոշոտել հունական այդ փոքրիկ կայսրությունը։

Տրապիզոնի կայսրության անկմանը հաջորդեց հոռոեական պապ Պիոս 2-րդի 1464 թ. օգոստոսի 16-ի՝ թուրքերի դեմ ուղղվելիք նոր խաչակրաց արշավանքի կոչը։ Սակայն այդ արշավանքը եվրոպական պետությունների միջև գոյություն ունեցող տարաձայնությունների պատճառով այնպես էլ չկայացավ¹⁰²։

Թվում էր, որ Ուզուն Հասանի հեղինակությունն Արևելքում սասանված էր, սակայն երկու իրադարձություններ նորից քաղաքական առաջին պլանի մղեցին նրան և ակկոյունլուների պետությունը միջազգային հասարակական աչքում դարձավ մեծ ու հզոր։ Առաջինը, ինչպես արդեն տեսանք, 1467 թ. Մեհմեդ Ֆաթիհի դաշնակից համարվող Զհանշահի պարտությունն էր օսմանցիներից, և երկրորդը՝ իր վասալ Զհանշահի վրեժն առնելու նպատակով թիմուրի հաջորդներից Աբու Սայիդի 1469 թ. փետրվարի 11-ին Մուղանի դաշտավայրում կրած ծանր պարտությունն Ուզուն Հասանից։ Այս բոլորից հետո, Ուզուն Հասանն ար-

դեն տեր էր դարձել ոչ միայն Հայաստանին ու Քրդստանին, այլև ողջ Իրանին և Իրաքին՝ Բաղդադը ներառյալ։

Այս էր պատճառը, որ երբ 1463 թ. իշխան Իբրահիմի որդիների միջև Կարամանիայում գահակալական պայքար բռնկվեց, ապա նրանցից մեկը՝ Իսահակ բեկը, գահը զավթելու նպատակով դիմեց Ուզուն Հասանի օգնությանը։ Վերջինս մի մեծ բանակի գլուխ անցած Երզրնկայից շարժվեց դեպի Սեբաստիա՝ ավերելով ու կողոպտելով երկիրը¹⁰³։ Ակկոյունլու տիրակալի այս քայլը հավասարազոր էր թուրքերի դեմ պատերազմի հայտարարության։ Ի պատասխան դրա, Մեհմեդ 2-րդը Կարամանիա ուղարկեց նորանոր բանակներ, որոնց առաջ խնդիր էր դրված օսմանյան պետության սահմաններին միացնել Փոքր Ասիայի տարածքում դեռևս իր գոյությունը պահպանած և հարյուր հիսուն տարի շարունակ օսմանցիների վտանգավոր ախոյանը հանդիսացող Կարամանի իշխանությունը։ Կարամանիան ընդգրկում էր Իկոնիայից հարավ մինչև Միջերկրական ծովն ընկած տարածքը։ Դրա շնորհիվ կարամանցիներն ազատ հաղորդակցության մեջ էին Արևմտյան Եվրոպայի և մասնավորապես Վենետիկի հետ, որի գերիշխանության ներքո էր գտնվում Կիպրոս կղզին։ Հետևաբար, Մեհմեդ Ֆաթիհի, Ուզուն Հասանի Կարամանյան իշխանների և Եվրոպայի երկրների դաշինքի վտանգը նկատի ունենալով իր ողջ ուժերով ձգտեց վերացնել այդ իշխանությունը։ Մինչև XV դարի 70-ական թվականներն ընկած ժամանակաշրջանում թուրքական հորդաներն ասպատակում էին Կարամանիան և նրա սահմանների մեջ մտնող Կիլիկիան, անողորմ հրի ու սրի մատնելով երկիրը¹⁰⁴։

Ուզուն Հասանը Կարամանիային պաշտպանելու հարցում վճռական էր, ուստի 1471 թ. իր բանակին հրամայեց շարժվել դեպի թոխատ։ «Այս բոլոր գազանությունները, որը պատմությունը վերագրում է թիմուրին թոխատի գրավման առթիվ,—գրում է Յոզ. Համմերը,—կրկնվեցին Ուզուն Հասանի պարսիկների (իմա՝ թուրքմենների—Մ. Զ.) կողմից։ Այս քաղաքը բոցերի ճարակ դարձավ և նրա բնակիչները տանջամահ արվեցին»¹⁰⁵։ Թոխատից հետո թուրքմենական զորքերը մտան Կարամանիա և Իկոնիայի վրայով ասպատակեցին Կիլիկիան։ Սկզբնական շրջանում Ուզուն Հասանի զորքերը որոշ հաջողություններ ունեցան, և Մեհմեդ 2-րդի որդին՝ Մուստաֆան, խուճապահար փախուստի դիմեց, սակայն, շուտով վերադասավորելով իր ուժերը՝ Իկոնիայի մոտ

98 Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, 4. Ա, էջ 158։

99 Նույն տեղում, էջ 161։

100 J. Hammer, III, էջ 74։

101 Նույն տեղում, էջ 75։

102 Նույն տեղում, էջ 114։

103 Նույն տեղում, էջ 117։

104 Ավելի մանրամասն տե՛ս Նույն տեղում, էջ 142—151։

105 Նույն տեղում, էջ 143։

պարտութեան մատնեց Ուզուն Հասանի զորքերին և իրեն ենթարկեց Կարամանիայի ու Կիլիկիայի զգալի մասը: Ուզուն Հասանի զորքերը անհաջողութեան մատնվեցին նաև Եփրատի ափին՝ Բիրաջիկի մոտ եզրիպտական սուլթանի զորքերի հետ ընդհարվելիս:

Այսպիսով, դաշնակիցները կորցրեցին ռազմաստրատեգիական կարևորագույն հանգույց հանդիսացող Կարամանիան ու Կիլիկիան և զրկվեցին փոխադարձ հաղորդակցման գլխավոր մայրուղուց:

Պատմագիտական գրականության մեջ պահպանվել են Արևելքի երկու տիրակալների՝ Մեհմեդ Ֆաթիհի և Ուզուն Հասանի նամակազրույցները 1473 թ. Դերջանի վճռորոշ ճակատամարտից առաջ: Այդ նամակները լույս են սփռում երկու պետությունների քաղաքական նպատակազրույցների՝ եվրոպական երկրների հետ Ուզուն Հասանի կնքած դաշինքի խախտում լինելու մասին և այլն: Այսպես, 1472 թ. հոկտեմբերի 19-ի Ուզուն Հասանին ուղղած նամակում թուրքական սուլթանը թուրքմենական տիրակալին զգուշացնում է չապավինել եվրոպական պետություններին. «Կարո՞ղ ես հերքել այն հանգամանքը, որ դաշնակիցների միջև եղած համերաշխությունն անընդհատ խախտվում է նրանց ունեցած հակոտնյա շահերի պատճառով: Այդ մասին ես կարող եմ անվերջ օրինակներ բերել: Վենետիկցիները համերաշխ չեն իրար մեջ, և ես էլ լրեսու կղզու գրավման համար պարտական եմ իրենց զորավարներից մեկի դավաճանությունը»¹⁰⁶: Այնուհետև սուլթանը հիշեցնում է Ուզուն Հասանին, որ Կ. Պոլսի գրավման մեջ եվրոպացիների դավաճանությունը նույնպես կատարել է իր գերը: «Քո շահերն անկեղծորեն չեն կարող պաշտպանվել քեզ համար այնքան անծանոթ միջավայրում: Նրանք քեզանից այնքան հեռու են, որ քեզ լքելու դեպքում ամենևին էլ չեն վախենա քո վրիժառությունից»¹⁰⁷: Իսկ նույն թվականի նոյեմբերի 3-ի թվակիր պատասխան նամակում Ուզուն Հասանը հանդես է գալիս թուրքերի կողմից ստրկացված եվրոպական քրիստոնյա ժողովուրդների պաշտպանության դիրքերից: «Ես հուզված եմ,— գրում է Ուզուն Հասանը Մեհմեդ Ֆաթիհին,— այն դժբախտություններից, որ կրում են այս ժողովուրդները: Չնայած նրանք աստուծուն աղոթում են այլ կերպ, քան մենք, սակայն որպես մարդկային արարածներ պատկանում ենք միևնույն հոր զավակներին»¹⁰⁸:

1472 թ. դեկտեմբերի 4-ի սուլթանին ուղղված նամակում Ուզուն Հասանը բացահայտում է եվրոպական պետությունների հետ դաշինք կնքելու իրական դրդապատճառները, որոնք թելադրված էին սեփական երկրի անվտանգության ապահովության մտահոգությունից: «Իշխանությունը քո ձեռքը վերցնելու օրվանից քո անսահման ամբարտավանությունը դրդում է քեզ անխտիր հարձակվել քո բոլոր հարեվանների վրա: Եվ այս հանգամանքը ստիպեց ինձ դաշինք կնքել (քրիստոնյա) իշխանների հետ»¹⁰⁹:

Այդուհանդերձ եվրոպայի պետությունների հետ Ուզուն Հասանի դաշինքն անդրադառնում էր նրա ներքին քաղաքականության վրա: Նա, աղքատների վկայությամբ, բարեհաճ վերաբերմունք ուներ իր հպատակ քրիստոնյա հայերի նկատմամբ: Նրա հավանական հովանավորության ներքո Սյունիքում և Արցախում որոշ հայ իշխանական տոհմերի մնացորդները կենդանության նշաններ են ցույց տալիս: Խոսքը, նախ և առաջ, վերաբերում է Գոփյաններին, Պոռչյաններին և այլն¹¹⁰:

Ուզուն Հասանն աչքաթող անելով Մեհմեդ Ֆաթիհի ամեն տեսակի նախազգուշացումները, սպառնալիքները, ապաստան էր տալիս օսմանցիների կողմից իրենց իշխանությունից վտարվածներին, խոստանալով՝ վերականգնել նրանց իրավունքները:

1473 թ. գարնանը հարյուր հազարանոց բանակի գլուխ անցած Մեհմեդ Ֆաթիհը դուրս եկավ Ուզուն Հասանի դեմ: Արշավող թուրքական բանակի շարքերում էր գտնվում իտալացի Զիոլաննի Մարիա Անջիլոելլոն, որը, որպես ականատես, հաղորդում է շափազանց հետաքրքիր տեղեկություններ: Արշավող բանակի առաջապահ ուժն էին այսպես կոչված ակրնջիները¹¹¹, որոնց առաջ խնդիր էր դրված ավերել ու ամայնեցնել երկիրը: Ակրնջիները, ասում է իտալացի հեղինակը, ռոճիկ շտանալու պատճառով իրենց եկամուտներն ապահովում են ասպատակությունների ընթացքում կողոպտելով բնակչությանը ու ավերելով նրանց երկիրը¹¹²:

Թուրքական բանակի արշավանքների ժամանակ, ինչպես դա երևում է Անջիլոելլոյի վկայությունից, ժողովրդից բռնությամբ ու անվճար հավաքել են պարենամթերք: Հավաքման պարտականությունը դրված է եղել հատուկ պաշտոնյաների՝ արփաէմիսների վրա: «Երբ պատահի, որ բանակը սահմաններն անցնի և մտնի թշնամու երկիրը,

¹⁰⁶ S. H. Histoire de Méhémet II, empereur ottoman, enrichie de lettres traduites du grec et de l'arabe, seconde partie, p. 22—23.

¹⁰⁷ Նույն տեղում, էջ 24:

¹⁰⁸ Նույն տեղում, էջ 30:

¹⁰⁹ Նույն տեղում, էջ 37:

¹¹⁰ Հ. Մանեղյան, Երկեր, հ. Գ., Երևան, 1952, էջ 411:

¹¹¹ Ակրնջի—թուրքերեն բառացի նշանակում է ասպատակող:

¹¹² Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 259:

և պարենի պետք լինի,—կարողում ենք Անջիոլելլոյի մոտ,—արփաէ-
միինները (arpaemiler) պարտականութիւն ունեն լուր ուղարկելու
իրենց վեհապետի երկրի այն տեղերը, ուր նրանք գիտեն թե առատ
ցորեն կա, և հրամայելու, որ յուրաքանչյուր քաղաքը ուղարկի այսքան
քանակութեամբ ցորեն ու գարի: Քաղաքները իրենց շրջակայքով պար-
տավորված են հնազանդելու և իրենց վերահսկիչներին հայթայթելու
այն քանակութեամբ ցորեն ու գարի, որքան իրենց վրա (պարտք) է
դրված: Բացի այս, նրանք պարտավոր են տալ բավականաչափ մթերք
այն մարդկանց և կենդանիների համար, որոնք պետք է կրեն բռնները,
հակառակ պարագային համայնքները ենթակա են պատժի ու կորուս-
տի»¹¹³: Այստեղից էլ դժվար չէ պատկերացնել գլուղական բնակչութեան
ողբերգական վիճակը:

Թուրքական բանակի արշավանքը, ըստ Անջիոլելլոյի, ուղեկցվում էր
հրով ու սրով, բնակչութեանը ենթարկվում էր անլուր տառապանքնե-
րի: Ակրնջիները, գրում է նա, ասպատակութեանների ժամանակ գե-
րեվարում էին տեղացիներին, հարցուփորձի միջոցով նրանցից քաղու-
ման հրաժեշտ տեղեկութիւններ տեղանքի և թշնամու առաջապահ ուժերի
մասին¹¹⁴, իսկ այնուհետև՝ այնպիսի մի ավերածութեան սարքում, որ
բնակչութեանը ստիպված է լինում «իրենց տավարով ու ինչքերով
ապաստանել լեռներում և այլ ապահով վայրերում»¹¹⁵: Ասպատակու-
թեան ժամանակ, «Երզնկայի ողջ բնակչութեանը դիմել էր փախուստի»
Եփրատ գետի մյուս կողմը: Այսուամենայնիվ, «...բնքը մնացել էին,
որոնց մեջ կար արնջիների ժամանման միջոցին մի ծերունի հայ մի
եկեղեցում, շրջապատված շատ գրքերով, և թեև նրանք որ գտան նրան
շատ անգամ կանչեցին, բայց նա չպատասխանեց, այլ շարունակեց
ամենայն ուշադրութեամբ կարդալ իր առջևի գրքերը, և զինվորները
բարկանալով, սպանեցին նրան և այրեցին գրքերը»¹¹⁶:

1473 թ. հուլիսի 26-ին Դերջանից ոչ հեռու գտնվող մի վայրում
արևելյան երկու բռնակալների միջև տեղի ունեցավ մեծ ու վճռական
ճակատամարտ, որն ավարտվեց թուրքերի հաղթանակով: Այս ճակա-
տամարտը վերջնականապես վճռեց Փոքր Ասիայի ճակատագիրը, այդ
երկրամասը վերածելով Թուրքիայի:

Այս հաղթանակից հետո սուլթանը իր հետ մայրաքաղաք տարավ
գերեվարված մեծ թվով արհեստավորների և գիտնականների, գերազան-
ցապես հայերից:

Չնայած բարոյական ծանր հարվածին, Ուզուն Հասանը չէր ընկրճ-
վել և վենետիկին ուղղած իր նամակում հայտնում էր, որ նա կրկին հար-
ձակվելու է օսմանցիների վրա՝ նրանց բռնատակ է անելու ձիերի
սմբակների տակ¹¹⁷:

Անտեղյակ Ուզուն Հասանի կրած պարտութեանից, վենետիկի նա-
վատորմը ումրակոծում է Կիլիկիայի առափնյա շրջանները, մասնավոր-
ապես Ատտալիան, որից հետո հտալացիները կատարում են ափհա-
նում¹¹⁸, սակայն Ուզուն Հասանի նկատմամբ օսմանցիների հաղթանակի
լուրը նրանց ստիպում է հետ քաշվել դեպի Կիպրոս:

1477 թ. պատրվակ բռնելով, որ թուրքերի դեմ մղված պատերազ-
մի ժամանակ վրացիներն իրեն չէին օգնել, Ուզուն Հասանը պատերազմ
սկսեց Վրաստանի դեմ: Այդ մասին դարձյալ, որպես ականատեսներ,
վկայում են Բարբարոն և Անջիոլելլոն¹¹⁹: Ուզուն Հասանը ցանկանում
էր, գրում է Անջիոլելլոն, «կողոպտել Վրաստանը, որովհետև վրացիները
օգնած չէին իրեն թուրքի (սուլթանի) դեմ մղված պատերազմում: Իրենց
սովորութեան համաձայն, նախ նա ուղարկեց իր թեթև հեծելազորը, մո-
տավորապես հինգ հազար հոգի, որոնք իրենց առաջխաղացման ըն-
թացքում կտրտեցին ու այրեցին անտառները, որովհետև նրանք պետք
էր որ անցնեին լեռներից ու ընդարձակ անտառներից: Երկու օրվա ճա-
նապարհորդութեանից հետո մենք հասանք՝ մի բերդ թիֆլիս անունով,
որ լքված էր, և մենք գրավեցինք առանց դիմադրութեան: Եվ առաջա-
նալով Գորի (Gori) և շրջակա այլ տեղերը, նա կողոպտեց և նույնպես
ոտնակոխ արեց շրջակա երկրի մեծ մասը»¹²⁰: Ստանալով ռազմատու-
գանք և իրեն պահելով թիֆլիսը, Ուզուն Հասանը հաշտութեան է կըն-
քում վրաց ղեկավարների հետ ու վերադառնում Թավրիզ¹²¹:

1478 թ. հունվարի 6-ին Ուզուն Հասանը մահանում է և երկրում
նրա ժառանգների միջև բռնկվում են ներքին երկպառակութեաններ ու
համառ մարտեր: Ի վերջո՝ Կարակոյունլուների գահն է բարձրանում
սուլթան Յաղուբը (1478—1490):

Գահակալական կռիվների ժամանակ Թավրիզում Մեհմեդ Յաթիհի
ղեկապան Ռուստամ բեգը իր 1478 թ. հոկտեմբերի 5 թվակիր նամա-

113 Նույն տեղում, էջ 262:

114 Նույն տեղում, էջ 263:

115 Նույն տեղում, էջ 264:

116 Նույն տեղում, էջ 264—265:

117 V. Minorsky, էջ 15:

118 J. Hammer, III, էջ 175, 179:

119 Հավհ. Հակոբյան, Ուղեգրութեաններ, հ. Ա, էջ 204—205, 267—268:

120 Նույն տեղում, էջ 267—268:

121 Նույն տեղում, էջ 268:

կում իր տիրակալին հորդորում էր հարձակվել ակկոյունլունների պետության վրա և ոչնչացնել այն: «Ձերդ մեծության համար ամենաբարենպաստ պահն է՝ մի մեծ բանակի գլուխ անցած արշավանք ձեռնարկել մի երկրի վրա, որը բզկտված է ներքին կռիվներով»¹²²: 20 հոկտեմբեր թվակիր պատասխան նամակում, Մեհմեդ Ֆաթիհը նպատակահարմար էր գտնում հետաձգել արշավանքը մինչև որ «...խաղաղություն հաստատվի իմ (նվաճած) երկրներում»¹²³:

Յաղուբի գահակալության տարիներին գնալով ուժեղանում են Արդեբիլում հաստատված ու շիա դավանանքին պատկանող Սեֆյան տոհմի ներկայացուցիչները: Այս ժամանակներում տոհմի ավագանին էր շեյխ Հայդարը՝ Ուզուն Հասանի փեսան, որը մի մեծ բանակի գլուխ անցած արշավում է Շիրվան, գրավում Շամախին և բազառ մատնում հրի ու սրի: Սակայն շուտով Յաղուբի օգնական զորքով Շիրվանշահ Ֆարրուխ Յասարը հարձակվում է Հայդարի վրա, պարտության մատնում նրան և Սեֆյանների ներկայացուցիչը ճակատամարտում սպանվում է: Այս դեպքերի մասին հայերեն ձեռագրերի հիշատակարաններից մեկում ասված է. «...Որ և ժողովեաց յայսմ ամի (մեծ սօֆի Արտաւել քաղաքին) արն իրրև խի (40.000), և գնացեալ խարեութեամբ եմուտի Շամախի, և զամենեսեան որ ի ձեռն էած ի քրիստոնէից և ի տաճկաց՝ զարս և զկանայս՝ սրով կոտորեաց, և զքաղաքն ամենայն հրով այրեաց կումառօքն և որ ինչ էր ի նմա... Չոր զոյժ արկեալ տէրն Շամախու ի Քարէզ առ Փատիշահ փեսայն իւր Աղաւալ (Աղուպ) և ծանոյց նմա, և նա յուղարկեաց զիշխանն մեծ Սուլեման՝ բազում զօրօք, որ գնացեալ ջանիւ մեծաւ մարտեան և յաղթեալ կոտորեցին առ հասարակ զամենեսեան, և յինքեանց ևս շատք մեռան»¹²⁴:

Ակկոյունլունների գահին բազմած Յաղուբ բեգի մահանալուց հետո երկրում ծայր են առնում նոր գահակալական երկպառակություններ ու կռիվներ, որոնք տևում են երեք տարի: Գահն անցնում է Ուզուն Հասանի թոռ Ռուստամի (1493—1496) ձեռքը, որի ժամանակ ակկոյունլունների պետությունը գնում է դեպի վերջնական անկում: 1496 թ. բռնկվում են նոր գահակալական կռիվներ: 1499 թ. թավրիղում իշխանությունն անցնում է Ալվանդի ձեռքը, սակայն գահին հավակնում էր նաև Իրանի հարավային մասում և Իրաքում հաստատված Մուրադը: Այս խառնակ իրավիճակից օգտվեցին Արդեբիլի Սեֆյանները, որոնք հենվելով Իրանում հաստատված շամլու, ուսլու, ուսթաջլու, թեքելու, աֆ-

շար, կաջար, զուլբադար թյուրքախոս ցեղերի վրա, կարողացան Իրանում հաստատել իրենց նոր՝ Սեֆյան հարստությունը: Այս քաղաքական իրադարձությունների մասին եվրոպացի հեղինակների, մասնավորապես իտալացի հեղինակների (Ջիովաննի Անջիոլելլո, Անանուն իտալացի վաճառական, Ռոտա և այլն) մոտ կան հետաքրքիր վկայություններ: Առավել ուշադրավ են Ռոտայի հաղորդածները: Համաձայն Ջ. Անջիոլելլոյի¹²⁵, ինչպես և մի քանի այլ աղբյուրների, Սեֆյան պետության հիմնադիր Իսմայիլին թավրիղի տիրակալ Ռուստամի հալածանքներից պատսպարել են Աղթամար կղզում, սակայն այս վկայությունը չի հաստատվում արևելյան աղբյուրներով: Այլ վկայություն է հաղորդում նաև քաջատեղյակ Ռոտան: Սակայն լսենք Ջ. Անջիոլելլոյին: «Ռուստամը (պետք է լինի Ռուստամը — Մ. Ջ.) թշնամու պարտության լուրը առնելով անմիջապես մարդ ուղարկեց Արդաբիլ բռնելու նրա կնոջը և երեք որդիներին, և ցանկանում էր նրանց մահվան դատապարտել, բայց մի քանի իշխանների հաճելի լինելու համար, ազատեցին նրանց, սակայն պահեցին նրանց Աղթամարի (Astumar) լճի մի կղզում, ուր բնակվում են հայ քրիստոնյաներ»¹²⁶: Ռուստամը մարդիկ է ուղարկում Աղթամար և պահանջում է Իսմայիլին իրեն հանձնել, սակայն հայ քահանաները նրան Ղարաբաղ են փախցնում և այնտեղ Իսմայիլը մնում է հինգ տարի և նրա մասին «ոչ ոք ոչինչ չլսեց»¹²⁷: Կատերինա Ջենոն մի քիչ այլ կերպ է ներկայացնում այս դեպքերը: Նա ակկոյունլու տիրակալին անվանում է ոչ թե Ռուստամ, այլ Ալամուր: Շեյխ Հայդարի որդիները, գրում է նա, իրենց անձի ապահովության համար դիմեցին փախուստի, մեկը Անատոլիա, մյուսը՝ Հալեպ, երրորդը հայ քրիստոնյաներով բնակեցված Աղթամար կղզին, այստեղ մնալով շորս տարի: Այդ մասին Պարսկաստանում ոչինչ չգիտեին: Հայ քահանաների մոտ պատսպարված պատանին, որը տասներեք տարեկան էր՝ կոչվում էր Իսմայիլ, որը, հիրավի, ուներ արքայական կեցվածք: Տասնութ տարեկան հասակում, Իսմայիլը Աղթամարից սկզբում մեկնեց Ղարաբաղ, այնուհետև Գիլան՝ իր հոր բարեկամներից մեկի տունը¹²⁸:

Ռոտայի տեղեկությունները համընկնում են արևելյան աղբյուրների հաղորդածներին, ուր մասնավորապես ասված է, որ Իսմայիլը

125 Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 271:

126 Նույն տեղում:

127 Նույն տեղում, էջ 272:

128 Նույն տեղում, էջ 273:

122 Histoire de Méhémet II, sec. partie, էջ 116:

123 Նույն տեղում, էջ 121:

124 Ղ. Ալիջան, Հայագատում, էջ 586—587:

«...փախստական էր ու արքայազն իր Արգերիլ քաղաքից ու գտնվում էր Կահիրան (Գիլանի նահանգ) քաղաքում Կասպից ծովի մոտ»¹²⁹։

1500 թվականին Իսմայիլը հարձակվեց Շիրվանշահի պետության վրա, իր հոր՝ Հայդարի, վրեժը տեղի տիրակալ՝ Ֆառուխ Յասարից առնելու նպատակով։ Շամախու մոտ տեղի ունեցած ճակատամարտում Ֆառուխ Յասարը պարտություն է կրում և գերի ընկնում Իսմայիլի ձեռքը, որը «...խնայեց նրա կյանքը և գրավելով քաղաքը, մեծ նվերներ տվավ իր զինվորներին»¹³⁰։ Իսմայիլն առատաձեռնություն միջոցով շուտով իր կողմն է գրավում մեծ թվով համախոհներ։ «Նրա առատաձեռնությունը իր մարդկանց հանդեպ, դարձրել էր նրանց անձնվեր իր վերաբերմամբ և գրեթե անհավատալի թվով մարդիկ միացան նրան, և այսպես մոտ քառասուն հազար մարդ ունենալով իր հրամանի տակ, նա վճռեց շարժվել Թավրիզի վրա»¹³¹։ Նրա առատաձեռնության մասին է խոսում նաև անանուն վաճառականը։ Գրավելով Գիլանում գտնվող Մահմադաղար կոչեցյալ ամրոցը, գրում է նա, «Իսմայիլը անսահման գանձ գտավ քաղաքում, որը բաժանեց իր մարդկանց մեջ, ոչինչ չպահելով իր համար։ Եվ այսպես նրա համբավը տարածվեց ամեն կողմ, թե Շեյխ Հայդարի որդի Իսմայիլը գրավել է այս գեղեցիկ բերդը, և ինչ որ գտել է այնտեղ բաժանել է իր ընկերակիցներին»¹³²։ «Նա այնքան շատ ազատամիտ է, — կարդում ենք Ռոտալի մոտ, — որ եթե կարելի է այդպես ասել, չի հավարում ոչ ոսկի և ոչ էլ հարստություն և արժեք չի տալիս դրանց, այլ բաժանում է գրանք այնպես, որ քոլոր մարդիկ մնում են զարմացած և կան անձինք, որոնք մտածում են, որ նա (Իսմայիլը) տեղյակ է հողի տակ թաքնված գանձերին»¹³³։

Ինչպես արդեն նշվեց, այդ էր պատճառը, որ նա դեռ երիտասարդական հասակում, Ռոտալի վկայությամբ, իր պալատականների և հպատակների կողմից պաշտվում է, որպես մարգարե¹³⁴։ «Ժողովրդի հարգանքն ու սերը թագավորի հանդեպ... անհավատալի է, որովհետև նրանք պաշտում են նրան ոչ իբրև թագավորի, այլ որպես աստու-

ծո»¹³⁵, — գրում է իտալացի վիճակագրի Ալեսանդրին։ Ժ. Շարդենը գրում է, որ կղզբաշները հավատում էին, թե «հենց ինքը Աստվածն է խոսում նրա բերանով»¹³⁶։ Եվ վերջապես, ինքը՝ շահ Իսմայիլը, մի բանաստեղծության մեջ իր մասին գրում էր, որ «ինքն է բացարձակ Առաքյալը... և սեփական (աստուծուն ուղղված աղոթքը) իրեն ևս պարտական»¹³⁷։ Մի այլ բանաստեղծության մեջ, շահ Իսմայիլն իրեն պարզապես համարում է «Ալի»։ «Ես իրականության աստվածն եմ, ես աստուծուց եմ գալիս, ես տասներկու իմամներից մեկն եմ, ես կնվաճեմ աշխարհի շորս ծագերը, ես Ալիի հզորության խտացված արտահայտությունն եմ»¹³⁸։

1501 թ. աստվածացված Իսմայիլն իր զենքն ուղղեց ակկոյունլուների պետության ներկայացուցիչ Ալվանդի դեմ և Նախիջևանի մոտ գտնվող Շարուրում վճռական ճակատամարտում պարտության մատնեց նրան, գրավեց Թավրիզը և իրեն հուշակեց շահնշահ։ Հաջորդ տարին նա հարվածեց նաև Իրանի հարավում և Իրաքում հաստատված Յաղուբ սուլթանի որդի Մուրադին, դառնալով ընդարձակածավալ երկրի տիրակալը։ Այս իրադարձությունների մասին եվրոպացի հեղինակների մոտ կան ընդարձակ վկայություններ։

1502—1507 թվականների ընթացքում շահ Իսմայիլը գրավում է պատմական Հայաստանի մեծագույն մասը՝ հարևան դառնալով օսմանյան պետությանը և եգիպտական սուլթանի տիրույթներին։ Կոտրելով բուրդ բեգերի, մասնավորապես Բիթլիսի Շարաֆ խանի դիմադրությունը, շահ Իսմայիլն իրեն է ենթարկում նաև ողջ Քրդստանը։ Քրդերի համառ դիմադրությունը շահ Իսմայիլին բացատրվում է նրանով, որ քրդերի մեծագույն մասը սուննիներ էին, «բոլոր քուրդերը ավելի ճշմարիտ մահմեդական են, — կարդում ենք անանուն վաճառականի մոտ, — քան Պարսկաստանի մյուս բնակիչները, քանի որ պարսիկներն ընդունել են սեֆելի վարդապետությունը, մինչ քուրդերը ընդունած չեն այդ, և թեև նրանք կրում են կարմիր գլխաշոր (caftan), սակայն իրենց սրտում մահացու ատելություն ունեն նրանց հանդեպ»¹³⁹։

¹²⁹ Raphael du Mans, appendice, p. 265. Աղամ Օլեարիուսը, հենվելով արևելյան աղբյուրների վկայության վրա, նույնպես նշում է, որ շահ Իսմայիլը «...թաքնված էր Գիլանի նահանգի իշխաններից մեկի մոտ (.. Voyages d'Adam Oliéarius, 1 էջ 613—614)»։

¹³⁰ Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 275։

¹³¹ Նույն տեղում։

¹³² Նույն տեղում, էջ 318։

¹³³ Raphael du Mans, appendice, էջ 264։

¹³⁴ Նույն տեղում, էջ 264—265։

¹³⁵ Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 346։

¹³⁶ J. Chardin, V, էջ 233։

¹³⁷ V. Minorsky, The middle East in western politics in the 13th, 14th and 15th centuries. — Journal of the Royal asiatic society of Great Britain and Ireland. London, oct., 1940, t. XVII, p. 450.

¹³⁸ Irène Mélikoff. Le problème kizilbas. — „Turcica“, Revue des études turques, t. VI, Paris-Strasbourg, 1975, p. 58.

¹³⁹ Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 298։

Շահ Իսմայիլին այնքան է հզորանում, որ Ռոտայի բառերով ասած, «...այնպիսի մի հզոր պետություն, ինչպիսին թուրք (սուլթանինն) է, վախենում է շահ Իսմայիլից»¹⁴⁰: Հիրավի, թուրքական սուլթանը վախենում էր ոչ միայն Սեֆյան Իրանի ռազմական հզորացումից, այլև Փոքր Ասիայում շիա վարդապետության տարածումը լուրջ վտանգ էր սպառնում Օսմանյան պետությանը: «Հռչակավոր Սոֆին,—կարդում ենք դարձյալ Ռոտայի մոտ,—այն աստիճան հզորացավ ու ընդարձակեց իր տարածքը, որ նրան շրջապատող հարևան շատ երկրներից ու վայրերից իր շուրջն էին համախմբվում մեծ թվով ներկայացուցիչներ իր հավատակիցներից: Եվ դրա պատճառն այն էր, որ իրենց (սրբազան) գրքերում ասված էր, գալու էր իրենց հավատից մի նոր մարգարե, որը պիտի հզորանար ու բարձրանար, մինչդեռ ուրիշները պիտի ոտնատակ լինեին, թուլանային և կործանվեին»¹⁴¹:

Շահ Իսմայիլի հեղինակությունն Իրանում ու Փոքր Ասիայի տարածքի շիաների մոտ այնքան մեծ էր, այնուհետև կարդում ենք Ռոտայի մոտ, որ նրա բանակը կազմված է կամավորներից, որոնք ծառայում էին առանց ոռճիկի և պատրաստ են պայքարելու «անհավատների», այսինքն սյունիների դեմ¹⁴²: «Եվ այս պատճառով,—գրում է իտալացի հեղինակը,—Ասիայի բոլոր անկյուններից նրա մոտ են շտապում ամեն տեսակի մարգիկ իրենց ունեցվածքով և ընտանիքով, եթե, իհարկե, նրանք չեն ձերբակալվում ու հետ վերադարձվում իրենց իշխանների կողմից, ինչպես դա արեց սրանից վեց-յոթ տարի առաջ Թուրքիայի թագավոր Բայազետը, որը լսելով շահ Իսմայիլի օրավոր ահող հռչակի տարածումը, նրա ռազմական հզորության մեծացումը Անատոլիայից ու Թուրքիայից թվով տասը հազար նրա կողմնակիցներին ձերբակալել տվեց ու խարանեց դեմքը, որպեսզի նրանցից չուրաբանչյուրը անմիջապես ճանաչվի և նրանց աքսորեց Ռումելի»¹⁴³:

Նպատակ ունենալով, ինչպես դա անում էր մի ժամանակ Ուզուն Հասանը, դաշինք կնքել եվրոպական պետությունների հետ, ինչպես այդ մասին վկայում է դարձյալ Ռոուան, նա Արևմուտք ուղարկեց հա-

տուկ պատվիրակություն: Մյուս կողմից Թուրքիայի դեմ պայքարում նա հպատակ հայերին սիրաշահելու համար, ինչպես արդեն տեսանք, բարյացակամ վերաբերմունք է ունեցել նրանց նկատմամբ: Ռոտայի վկայությունները հայերի նկատմամբ Իսմայիլի բարյացակամ վերաբերմունքի մասին հաստատվում են հայկական աղբյուրներով: 1506 թ. գրված մի հիշատակարանում Թադեոս գրիչը Խիզանից հաղորդում է հետևյալ ուշագրավ վկայությունները. «...Շահ Սմայիլ ելաւ ի մահմեդական յազգէն և եղև քակտումն թուրքաց ազգին (սուննիներին—Մ. Զ.) և պղտորումն եղև յարեւիլից մինչև ի շամբատունն: Եւ զթաւրէզ քաղաքն քակեաց և զվաղուց փտեալ ոսկերս պարոնացն՝ եհան և այրեաց հրով, և զմակիթն ամենայն արար փութկայս և զմընարէքն քակեաց մինչև յատակս... ևւ եկաւ ի խոյ և շինեաց նոր թաղթ և կոչեաց առ ինքն զկաթողիկոսն և ասաց. լսել եմ թէ յԵրուսաղեմ լոյս ելանէ ասէ այո, ասէ շահն աղօթս արարէք՝ որ ես երթամ տեսնամ, և վերացոյց քահանայիցն զգլխադրամն զորոյ զվճարն Աստուած գիտէ»¹⁴⁴: 1514 թ. մի այլ հիշատակարանում Մարտիրոս գրիչը հայտնում է, որ շահ Իսմայիլը պաշտպանում էր քրիստոնյաներին ու հանդես էր գալիս սուննիների դեմ¹⁴⁵:

Շահ Իսմայիլի հզորության առաջ ունեցած վախից դրդված, սուլթան Բայազետը թույլ տվեց շահ Իսմայիլին 1507 թ. Կարամանիայի տիրակալ Ալաուդդեվլեյի դեմ արշավանքի ժամանակ անցնել օսմանյան տարածքով: Ալաուդդեվլեյն եվրոպական բոլոր աղբյուրներում անվանվում է հայերի, Հայաստանի թագավոր: Դա, գուցե, բացատրվում է այն հանգամանքով, որ Կարամանիայում և նրա սահմանների մեջ մտնող Կիլիկիայում հայերն առաջվա նման կազմել են բնակչության զգալի մասը:

Բայազետ 2-րդի սուլթանության տարիներին օսմանյան պետության և Եգիպտոսի մամլուկների միջև ծայրահեղորեն սրվել էին հարաբերությունները Կիլիկիայում և Կարամանիայում գերիշխանություն հաստատելու նպատակով¹⁴⁶: Դեռ 1486 թ. թուրքական զորքերը պարտություն կրելով Եգիպտացիներից, վերջիններիս հանձնեցին Ադանան

¹⁴⁰ Raphael du Mans, appendice, էջ 269: Ռոտան նշելով, որ «Շահ Իսմայիլը այնպիսի խորություն է ատում հրեաներին, որ ամենուր, ուր հանդիպում է նրանց, փոքր էլ է տալիս նրանց աչքերը ու բաց թողնում», շարունակում է. «Սակայն նա առավել հալածում է թուրքերին, քանզի բոլոր նրանց, ովքեր ընկնում են նրա ձեռքը առանց բացառության տանջամահ է անում, և խորտակել է տալիս նրանց տաճարներն ու մզկիթները» (նույն տեղում, էջ 274):

¹⁴¹ Նույն տեղում, էջ 267:

¹⁴² Նույն տեղում:

¹⁴³ Նույն տեղում:

¹⁴⁴ Շահ Իսմայիլի Հունդարիա ուղարկած պատվիրակությունը Կ. Պոլսում ձերբակալվում ու սպանվում է: Կղբաշների առաջնորդը մտադրվել էր դիմել նաև եվրոպական մյուս պետությունների ներկայացուցիչներին, սակայն հանդիպել է անհաջողության (տե՛ս նույն տեղում, էջ 275):

¹⁴⁵ Մատենադարան, ձեռ. № 4515, էջ 259:

¹⁴⁶ Այդ մասին մանրամասն տե՛ս Fischer S. W. The foreign relations of Turkey 1481—1512. Urbana, 1948.

և Տարսնը¹⁴⁷։ Կատաղած Բայազետը Կարամանիա ուղարկեց նոր բանակ՝ մեծ վեզիր Դաուդ փաշայի զլխավորությամբ։ Երբ մեծ վեզիրի զորքերը մտնեցան Կարամանիային, ապա այստեղի տիրակալ Ալաուդդեվլին նրան խորհուրդ տվեց հարձակվել եգիպտացիների հենարանը հանդիսացող վարսակ ցեղերի դեմ, որը և կատարվեց։ Մեծ վեզիրը հրով ու արով իրեն ենթարկեց այդ ցեղերի զբաղեցրած տարածքը¹⁴⁸։ Հաջորդ տարիներին թուրքերի և եգիպտացիների միջև Կիլիկիայի և Կարամանիայի համար պատերազմն ընթացավ փոփոխակի հաջողություններով։ Եթե զուլբադարյան թուրքմենական ցեղին պատկանող Ալաուդդեվլեյին պաշտպանում էր թուրքական սուլթանը, ապա նրա եղբորը՝ Բուդակին, որը նույնպես հավակնում էր գահին, Եգիպտոսը։ Սակայն, նկատի ունենալով Կիլիկիայի և Կարամանիայի ռազմաստրատեգիական նշանակությունը, իր քաղաքական հզորություն գազաթնակեաին հասած Սեֆյան Իրանը 1507 թ. նույնպես ներկայացրեց իր հավակնությունը։ Ջ. Անջիոլեյուն հետևյալ կերպ է ներկայացնում շահ Իսմայիլի դեպի Կարամանիա արշավելու զրգապատճառները. «Սոֆին (Իսմայիլը) իր իշխանության ներքո ուներ Դիարբեքերի երկիրը, այսինքն Ուրֆա (Orfa), Մերդին (Mardin) և Հիսնքեյֆ (Arsunchief) և ուրիշ տեղերը, և լսելով, որ Աբնադուլաթ (Abnuduleit) (Ալլա-էդ-Դուլե) շարունակաբար ավերում ու կողոպտում էր այդ երկրամասը և գրավել է Խարբերդ (Cartieberd) քաղաքը և իր որդիներից մեկին դրել այնտեղ, որոշեց մի արշավանք կատարել այս Ալլա-էդ-Դուլեյի դեմ, քանի որ այս վայրերը միշտ եղել են Պարսկաստանի իշխանության տակ, մինչև որ այս Ալլա-էդ-Դուլեն Յազուրի (Jacob) մահից հետո, գրավել էր այս տեղերը, այն միջոցին, երբ Պարսկաստանը անիշխանական վիճակումն էր։ Հետո, հավաքելով յոթանասուն հազար հոգի, նա առաջացավ դեպի Երզնկա (Arsingan) մի գեղեցիկ քաղաք Տրապիզոնի և Անատոլիայի (Natolia) սահմանի վրա»¹⁴⁹։ Այնուհետև Ջ. Անջիոլեյուն ընթերցողներին է պատմում շահ Իսմայիլի դեպի Կարամանիա կատարած արշավանքի ընթացքը։ Երզնկայից, ասում է նա, շահ Իսմայիլը գնաց «...Կեսարիա, մի քաղաք, որ պատկանում է օսմանյան պետությունը... Այս քաղաքում նա մնաց շորս օր, և ապա առաջացավ դեպի Ալբուստան (Alboustan), գետեղված մի գետի (Ջիհան) վրա և գեղեցիկ դաշտում, որ պատկանում է Ալիգուլին։ Այստեղից Մարաշ (Maras)

147 J. Hammer, IV, էջ 19:

148 Նույն տեղում, էջ 20—24:

149 Հավն. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 279:

երկու օրվա ճանապարհ է և Ալբուստանի երկիրը այցելելուց հետո, առաջացավ Մարաշ։ Բայց Ալիգուլին անհետացել էր, և քաշվել էր լեռների ամրոցները... Իսմայիլն ավերեց ու կողոպտեց երկիրը և կոտորեց բազմաթիվ զինվորների, որոնք երբեմն-երբեմն լեռներից իջնում էին հարձակվելու համար սեֆեյիների վրա, բայց որոնք հայտնաբերվում էին նրա պահակների և երկրի ժողովրդի կողմից։ 1507 թ. հուլիս ամսումն էր, որ Իսմայիլ մտավ Ալիգուլիի երկիրը և այնտեղ մնաց մինչև նոյեմբերի կեսերը։ Հետո, ձյունի ու ցուրտի պատճառով, որոշեց վերադառնալ Պարսկաստան»¹⁵⁰։

150 Նույն տեղում, էջ 280:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ XVI—XVII ԳԱՐԵՐՈՒՄ

Մենք արդեն նշեցինք, թե ինչպես շիա դավանանքը տարածվում էր Փոքր Ասիայում և թե ինչպես էին օսմանյան տիրակալներն ահաբեկված այդ հանգամանքից: Մերթ ընդ մերթ սոցիալական բուռն ընդվզումները դրսևորվում էին շիիզմի շղարշով: Դեռ Մեհմեդ Յաթիհի ժամանակ օսմանյան հասարակությունը ցնցվեց դերվիշ թորակ Հուքեմալիևի և շեյխ Բեդրեդդեն Սիմավիի հզոր գյուղացիական ելույթներից: Ուստի Սելիմ Յավուզը, անցնելով իշխանություն գլուխ, որոշեց հաշվեհարդար տեսնել շիիզմի հետնորդների հետ: Շիա դավանանքին պատկանող քառասուն հազար անձինք ձերբակալվեցին ու մահապատժի ենթարկվեցին: Ի պատասխան դրան, շահ Իսմայիլը մեծ բանակով շարժվեց դեպի օսմանյան տարածքը, մի կողմից իր դավանակիցների վրեժն առնելու, իսկ մյուս կողմից՝ իր մոտ ապաստանած Սելիմի եղբորորդի Մուրադի հավակնություններին սատար կանգնելու նպատակով: Սելիմը պատերազմ հայտարարեց կղզիաշերտին և Իսմայիլին հղած նամակում շահին մեղադրում էր «իսլամի դոգմաների անաղարտությունը պղծելու», «սուննիների սրբավայրերը քանդելու և այլ բազմաթիվ «չարագործությունների» մեջ և հայտարարում էր, որ ուլեմաները և շարիաթի մեկնաբանները նրա դեմ մահվան դատավճիռ են կայացրել» և որ, ինչքան էլ դա տարօրինակ հնչի, ինքը՝ Սելիմը, իր հզոր բանակով գալիս է «...զատագրելու այն երկրներն ու ժողովուրդները, որոնք տնքում են քո (Իսմայիլի) լծի տակ»¹ և «...որ մենք պահանջում ենք քեզանից անհապաղ հեռանալ մեզանից բռնություններ խլված երկրից (իմա՝ Հայաստանից—Մ. Զ.), որի նկատմամբ դու ունես ապօրինի հավակնություններ»²:

Արշավանքի ընթացքում սուլթանը Կարամանիայի տիրակալ Ալաուդ-Դեվլեից պահանջեց օգնել օսմանյան բանակին, սակայն զուլքադարի իշխանը պատրվակ բռնելով իր առաջացած տարիքը ոչ միայն

¹ J. Hammer, IV, էջ 180.

² Նույն տեղում, էջ 182:

շարձազանքեց Սելիմին, այլև, ինչպես վկայում են աղբյուրները, համարձակվեց նույնիսկ անհանգստացնել արշավող օսմանյան բանակը³:

Հայաստանի տարածքով Սելիմի ռազմական այս արշավանքի նկատարագրությունը տրված է եվրոպացի հեղինակների կողմից, որոնք հանդես են գալիս մերթ որպես ականատեսներ և մերթ էլ, որպես ականջալուրներ: Հատկապես արժեքավոր են իտալացի Պաոլո Զիովիի վկայությունները, որոնք մեջ են բերված Խալկոնդիլիսի ժամանակագրության շարունակողի կողմից:

Թուրքական բանակի արշավանքի ընթացքում իտալացի հեղինակի պատմելով, «...Հայերը մի կողմից թուրքերի գալստի վախից, իսկ մյուս կողմից՝ Իսմայիլի տված հրահանգից լքել էին թուրքական բանակի անցման հնարավոր ուղիների բոլոր վայրերը»⁴ և որ «իրենց հետ միասին վերցրել էին անասուններն ու անասնակերը և հեռանալով հայրենի տներից այրել էին ամեն ինչ, որը կենսական նշանակություն ուներ», և որ երկիրը «...պարզապես վերածվել էր անապատի»⁵: Նման պայմաններում թուրքերը «...չէին հանդիպում ոչ մարդու և ոչ էլ ձիու որևէ մի հետքի և կասկածում էին, որ իրենց ուղեկցող հայերը դիմել են դավաճանություն»⁶:

Թուրքական բանակը մեծ դժվարությամբ անցնում է Արաքս գետը, տալով բազմաթիվ զոհեր: Բուն իրանական տարածքը մտնելուց հետո էլ, շահ Իսմայիլի բանակը չէր երևում ու խուսափում էր ճակատամարտել օսմանցիների հետ: Պաոլո Զիովիի հաղորդմամբ, ռազմական նման տակտիկա առաջարկել էր նրա աջ թևը հանդիսացող Ուստաջու խանը: «Ուստաջու խանը այն կարծիքին էր, ...որ անհրաժեշտ է, ինչքան դա հնարավոր է, հետաձգել ճակատամարտը, որպեսզի թուրքական այս մեծ բանակը ինքնաբերաբար ոչնչանա»⁷:

Չհանդիպելով թշնամուն, զաղազած Սելիմը շահ Իսմայիլին հղած նոր նամակում ասում է. «եթե վախենում ես, կանչիր բժշկին, որ քեզ բուժի», իսկ եթե տղամարդ չես, հազիր կանացի հագուստ⁸: Մի քանի անգամ ենիչերիները բարձրաձայն բողբոջեցին սուլթանին և պահանջեցին հետ վերադառնալ⁹: Սուլթանը, սակայն, անհողողող էր: Ի վերջո, 1514 թ. օգոստոսի 23-ին Խոյից ոչ հեռու Չալդիրանի դաշտում տեղի

³ Նույն տեղում, էջ 184:

⁴ Chalcondyles, XIII, էջ 361.

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում, էջ 365:

⁸ J. Hammer, IV, էջ 189—190:

⁹ Նույն տեղում, էջ 191:

ունեցաւ մեծ ճակատամարտ, որն ավարտվեց թուրքերի հաղթանակով: Ճակատամարտում վճռական դեր խաղաց թուրքական հրետանին, որից գեռևս զուրկ էին կալբաշները: Գրավելով Քավրիզը, Սելիմը այն ենթարկեց սարսափելի կողոպուտի:

Սելիմը նպատակադրվել էր շարունակել պատերազմը և նվաճել Իրանը, սակայն հանդիպեց ենիչերիների կատաղի դիմադրութանը: Նա ստիպված եղավ հետ նահանջել: Հեռանալով Քավրիզից, ինչպես վկայում են իտալացի հեղինակները, «իր հետ վերցրեց Քավրիզի լավագույն արհեստավորներին՝ թվով շուրջ երեք հազար ընտանիք, Կ. Պոլիս տանելու համար, քանզի բոլոր տեսակի կառուցյունները, ճարտարապետական հուշարձանները իրենց ստեղծագործությունները շեն: Թուրքերը կոպիտ են ու անտաշ, ու հետևաբար, հեռու հոգևոր կյանքից»¹⁰: Այդ արհեստավորների մեջ, ինչպես նշում է Մ. Չամչյանը, կային շատ հայեր¹¹:

Պատը Ջիովիոն Սելիմի նահանջի պատճառը տեսնում է ոչ միայն ենիչերիների ըմբոստություն, այլև շահ Իսմայիլի հետ երկրորդ ընդհարման հնարավորության հետ: «Լուր տարածվեց այն մասին, — հաղորդում է նա, — որ Իսմայիլը հավաքել էր իր զորքի մնացորդներին, վրացի, ալբանացի, ադրբեջանցի — պարթև (պարսիկ) ձիավորներին, և գալիս է նրան (Սելիմին) գտնելու, և (սուլթանը) մտաբերելով, թե ինչ անհանգստություն պատճառեց իրեն այս վերջին ճակատամարտը, վախեցավ երկրորդ ցնցումից»¹²:

1514 թ. սեպտեմբերի 22-ին Սելիմի բանակը գտնվում էր Նրևանի և Էջմիածնի շրջակայքում: Հոկտեմբերի 28-ին սուլթանին ներկայացան մի խումբ, հավանաբար, հայ գյուղացիներ՝ բողոքելով իր զինվորների կատարած խժոժությունների դեմ¹³: Գալով Կարսի մոտակայքը, սուլթանը նպատակադրվել էր հարձակվել վրաստանի վրա, պատրվակ ընդունելով այն, որ իրանական արշավանքի ժամանակ նրանք չէին օգնել թուրքական բանակին: «Սելիմը մեծ ցանկություն ուներ, — կարդում ենք Խալկոնդիլեսի շարունակողի մոտ, — հարձակվել վրացիների վրա, չնայած մոտավորապես գիտեր, որ յուրայինները դեմ են լինելու ար-

¹⁰ Chalcondyles, XIII, էջ 371:

¹¹ Մ. Չամչյան, հ. 9, էջ 511, «Եւ ժողովեալ դամենայն արուեստագետս քաղաքին՝ առաքեաց ի Կոստանդինուպոլիս, յորս բազումք էին յազդէ հայոց»: «Սելիմը քիչ մնաց Քավրիզում, — կարդում ենք ժ. Շարդենի մոտ — բայց իր հետ վերցրեց հարուստ ավար և երեք հազար ընտանիք արհեստագործներ, մեծամասամբ հայերից, որոնց տեղավորեց Կոստանդինուպոլսում (J. Chardin, II, էջ 340):

¹² Chalcondyles, XIII, էջ 371:

¹³ J. Hammer, IV, էջ 206:

շավանքին: Նա նրանց (վրացիներին) մեծապես սպառնաց, թե անպայման, ինչ գնով էլ լինի, կկատարի այդ հարձակումը»¹⁴: Սակայն այստեղ սուլթանը նույնպես տեղի է տալիս ենիչերիների ընդվզումին, նամանավանդ, շուտով վրացիները թուրքական բանակի ճամբարն են ուղարկում «հսկայական քանակությամբ սննդամթերքի պաշար»¹⁵:

Սելիմը այնուհետև մուտք գործեց «Հայաստանի քաղաք՝ Ամասիա և հենց զարնան սկզբին»¹⁶ դուրս դալով Ամասիայից՝ եկավ և պաշարեց Փոքր Հայքում գտնվող Կամախը, որը պատկանում էր Իսմայիլին¹⁷: Սելիմը գրավեց քաղաքը և այն ամենը, ինչ գտնվում էր այնտեղ, և իր գալուցից թափելով այս խեղճ քաղաքի բնակչության վրա սրի անցկացրեց նրանց մինչև վերջին մարդը¹⁸:

1515 թ. հունիսին զուլբադարյան տիրակալ Ալա-ուդ-Գեվլեյի անհնազանդությունը պատժելու նպատակով Սելիմի բանակները ներխուժեցին Կարամանիա ու Կիլիկիա և հունիսի 12-ին Գյուկսուլի դաշտում տեղի ունեցած ճակատամարտում նրան մատնեցին պարտություն: Ռազմի դաշտում սպանվեց նաև ինքը՝ Ալա-ուդ-Գեվլեյն, և ողջ երկրամասն ընկավ օսմանյան տիրապետության տակ¹⁹: Զուլբադարյան երկիրը գրավելուց հետո, ինչպես վկայում է Խալկոնդիլեսի շարունակողը, թուրքերը երկրում անցկացնում են աշխարհագիր, «որպեսզի թուրքերն իմանան, թե ինչ եկամուտներ կարող էր տալ այս նահանգը»²⁰:

Այս բոլորից հետո Սելիմն իր ողջ ուշադրությունը սևեռեց Քրդստանի նվաճման վրա: Այս հարցում նրան մեծ օգնություն ցույց տվեց ռիթ-լիսեցի մուլլա Իզրիսը, որը քրդական ցեղերի առաջնորդների մոտ մեծ համբավ էր վայելում: Նրա կոչով շահ Իսմայիլը գերիշխանությունը թոթափելու նպատակով Քրդստանի տարբեր մասերում բռնկվեցին ապստամբություններ: Սուլթանը բուրդ բեգերին խոստացել էր ավատներ ու բազմապիսի առանձնաշնորհումներ: Եվ այդ բոլորը տվեց իր արդյունքը: Քրդստանի ծայրագույն արևելքից՝ Ուրմիո լճից մինչև Մա-

¹⁴ Chalcondyles, XIII, էջ 372:

¹⁵ J. Hammer, IX, էջ 205:

¹⁶ Թուրքական աղբյուրների վկայությամբ մայիսի 5-ին (տե՛ս J. Hammer, IV, էջ 212):

¹⁷ Chalcondyles, էջ 373:

¹⁸ Նույն տեղում, էջ 375: 1515 թ. արտագրված հայերեն մի ձեռագրում Մարտի-րոս գրիչը այս դեպքերի մասին հայտնում է, որ Սելիմն «...էառ զբերդն Կամախայ և զբազումն կատարեաց ի քրիստոնէից և անհատարեց» (Մատենադարան, ձեռ. № 4515, էջ 269):

¹⁹ J. Hammer, IV, էջ 212—213:

²⁰ Chalcondyles, XIII, էջ 375:

լաթիա ընկած տարածքի վրա գտնվող բուրգ բեգերի ղգալի մասը շուտով մեկը-մյուսի հետևից իրենց հավատարմությունը հայտնեցին թուրքական սուլթանին²¹: Ի պատասխան դրան, շահ Իսմայիլը Կարախանի գլխավորությամբ Արևմտյան Հայաստանի վրայով Արժկե, Արճեշ (Ճապաղզուրի), Քրդստան ուղարկեց կղերաշների մի քանակ, որի առաջ խնդիր էր դրված վերանվաճել Աղձնիքը: Կղերաշների և թուրքերի միջև պատերազմն ընթանում էր փոփոխակի հաջողությամբ: Ի վերջո հաղթեցին թուրքերը և Քրդստանի տարածքի ղգալի մասն ընդգրկվեց օսմանյան պետության սահմանների մեջ:

Սուլլա Իդրիսը Օսմանյան կայսրության մատուցած հատուկ ծառայության համար Սելիմից ստացավ ոչ միայն եկամտարեր ավատներ, այլև երկու հազար վենետիկյան ոսկի դուկատ²²:

Քրդստանի միացումը օսմանյան պետությանը խիստ բացասական հետևանք ունեցավ հայ ժողովրդի հետագա ճակատագրի վրա: Արևմտյան Հայաստանում զորեղացավ բրդական տարրը, և հայ ժողովուրդն ընկավ կրկնակի՝ թուրք ու բուրգ ավատատերերի լծի տակ:

* * *

Չալդերանի ճակատամարտից հետո՝ շնայած Օսմանյան կայսրության և Սեֆյան Իրանի միջև լուրջ ռազմական ընդհարումներ տեղի չունեցան, երկու երկրների միջև լարվածությունն ու թշնամությունը երբեք չդադարեցին: Այդ մասին է խոսում այն նամակը, որ սուլթան Սուլեյման Կանունին (1520—1566 թթ.) ուղղեց Իրանի նոր տիրակալ՝ Քահամասպ 1-ինը (1524—1576 թթ.), որի մեջ, իմիջիայլոց, հայտնում էր, թե «ես որոշել եմ զենքերը փոխադրել թավրիզ և Աղբբեջան, և իմ վրանը խփել Իրանում»²³:

Ի պատասխան սուլթանի սպառնալիքներին, շահ Քահամասպը, ինչպես դա արել էր մի ժամանակ շահ Իսմայիլը, հատուկ պատվիրակություն ուղարկեց Եվրոպա՝ հունգարական թագավորի և գերմանական կայսր Կարլ 5-րդի մոտ, պաշտպանական և հարձակողական դաշինք կնքելու նպատակով²⁴:

1529 թ. հսկայական բանակի գլուխ անցած Սուլեյմանը ապագատակում էր Հունգարիան, նույնիսկ պաշարեց Վիեննան: Ուստի նա առ ժամանակ հետաձգեց Իրանի վրա արշավելու իր նախնական ծրագիրը:

1527—1529 թվականների ընթացքում Կիլիկիայի և Կարամանիայի հայությունը կրկին ավելոծության մեջ էր: Թուրքմենները նորից բարձրացրել էին ապստամբության դրոշը, որին առիթ էին ծառայել ընդհանուր աշխարհագիր անցկացնելու ժամանակ բնակչության նկատմամբ թույլ տրված ծայրահեղ անարդարություններն ու խժոժությունները²⁵: Մի քանի անգամ կանոնավոր օսմանյան զորքերը պարտություններ էին կրել ապստամբներից, որոնք, ոգևորված հաջողություններից, պաշարել էին Թոխաթը²⁶: 1527 թ. սեպտեմբերի 16-ին Թոխաթից ոչ հեռու՝ Հեյուկլու կոչված վայրում տեղի ունեցած ճակատամարտում օսմանյան բանակը կրում է նոր պարտություն²⁷: Շուտով ապստամբում են նաև Աղանայի և Տարսոնի թուրքմենները²⁸: Ապստամբությունը կառավարության համար այնպիսի վտանգավոր ընթացք է ստանում, որ մեծ վեզիր Իբրահիմ փաշան ստիպված է լինում անձամբ ղեկավարել պատերազմական գործողություններն ապստամբների դեմ²⁹: Մեծ վեզիրին հաջողվում է խաբեությունը, հրի ու սրի միջոցով ճնշել թուրքմենական ցեղերի ապստամբությունը և հաշվեհարդար տեսնել նրանց հետ³⁰: Սակայն 1528 թ. Կիլիկիայի թուրքմենները նորից են ապստամբում թուրքական տիրապետության դեմ և Աղանան, Միսը, Այասը դառնում են ռազմական ընդհարումների հիմնական թատերաբեմ³¹: Ի վերջո այս ապստամբությունը նույնպես դաժանորեն ճնշվում է³²:

Շուտով բռնկվում է նաև պատերազմ Իրանի հետ, որի ծագման համար անմիջական առիթ ծառայել էր հետևյալը. 1530-ական թվականներին Բիթլիսի բուրգ էմիր Շարաֆ խանը, դժգոհ թուրքական կառավարությունից, ապստամբեց ու անցավ շահ Քահամասպի կողմը. միաժամանակ Աղբբեջանի կառավարիչ Ուլամեն, դավաճանելով շահին, ապաստան գտավ թուրքերի մոտ: Սուլթանական կառավարությունը սիրով ընդունեց Ուլամենի և նրան նշանակեց Բիթլիսի ու նրա շրջակայքի կառավարիչ՝ Շարաֆ խանի փոխարեն, տարեկան երկու միլիոն

²⁵ Նույն տեղում, V, էջ 93:

²⁶ Նույն տեղում, էջ 94:

²⁷ Նույն տեղում:

²⁸ Նույն տեղում:

²⁹ Նույն տեղում, էջ 93:

³⁰ Նույն տեղում, էջ 95:

³¹ Նույն տեղում, էջ 100—101:

³² Նույն տեղում:

²¹ J. Hammer, IV, էջ 222—224.

²² Նույն տեղում, էջ 258:

²³ Նույն տեղում, էջ 64:

²⁴ Նույն տեղում, էջ 65:

ակշն (չորս հարյուր հազար ոսկի դուկատ) եկամուտով³³։ Ուլամեն թուրքական հիսուն հազար հեծյալների գլուխ անցած գալիս պաշարում է Բիթլիսը, սակայն Շարաֆ խանը նրան ուժեղ դիմադրություն է ցույց տալիս, ու միաժամանակ դիմում շահին՝ հայցելով օգնություն։ Այս իրադարձությունները հետևյալ կերպ են նկարագրվում ժամանակակից իտալացի հեղինակների մոտ։ «Ուլամեն կոչում էր Սուլեյմանի, իսկ Շարաֆ (խանը) Սոֆիի հովանու ներքո, յուրաքանչյուրը իր օգնությունն էր ցույց տալիս իր կողմնակցին, քանզի պատերազմը, իմիջիպետց, ծագեց այս երկուսի միջև, բայց ի վերջո՝ Ուլամեն սպանեց Շարաֆ (խանին) և գլուխն ուղարկեց Սուլեյմանին... Այս դեպքերը տեղի ունեցան հազար հինգ հարյուր երեսուն երեքին... Ուլամեն ամեն օր ավելի ու ավելի ոգևորում էր Սուլեյմանին սկսել պատերազմը (Իրանի դեմ)»³⁴։

1533 թ. գարնանը մեծ վեզիր Իբրահիմ փաշան Հալեպի վրայով շարժվեց դեպի Վան, Արծկե և Խլաթ³⁵։ Այս քաղաքները, ինչպես և Ավնիկի ամրոցը, շուտով հանձնվեց մեծ վեզիրին։ Թուրքական բանակը Խոյի և Սալմաստի վրայով 1534 թ. հուլիսի 14-ին մուտք գործեց Թավրիզ³⁶։ Շուտով անձամբ ղեկավարելով մի մեծ բանակ, դեպի Թավրիզ շարժվեց նաև ինքը՝ սուլթան Սուլեյմանը։ Սուլթանի արշավանքը նույնպես ընթանում էր Հայաստանի վրայով (էրզրում-Կարս-Թավրիզ)³⁶։ Թուրքական բանակը Թավրիզ է մտնում սեպտեմբերի 27-ին, սակայն այստեղ երկար չի մնում. սուլթանը այնտեղ թողնում է մեծ կայազոր (Ուլամեի, Յադիգյար բեգի ու այլոց ղեկավարությամբ) և շարժվում դեպի Բաղդադ³⁷։

Օգտվելով դրանից, շահ Թահմասպը տասը հազարանոց բանակով գալիս է Թավրիզ, ջարդում թուրքական կայազորը և մուտք գործում մայրաքաղաք³⁸։ Ուլամեն փախչում է Վան, իսկ կզլբաշները հետապնդում են նրան, որի հետևանքով ամրոցը Վասպուրականը ենթարկվում է մի մեծ փորձություն, և պատահական չէ, որ այդ դեպքերը հայ ժողովրդի պատմության մեջ են մտել «Վանի աղետ» ընդհանուր անունով։ Դրանք մանրամասն նկարագրված են այդ տարիների ձեռագրերի հիշատակարաններում և Հովհաննես Արճիշեցու տարեգրու-

թյան մեջ³⁹։ Այսպես, ձեռագրի մի հիշատակարանում կարդում ենք հետևյալը. «Ի սոյն ամի, յորում էր թիւն և 229 (=1534) սուլթան Սուլեյմանն եկաւ ի վերայ կարմիր գդակին և նա ոչ կարաց զդեմ առնել փախաւ յարեւելս, իսկ նորա հետամուտ եղեալ և էառ զբազում քաղաքս, ընդ նմին և զՎան քաղաք, զամուրն շուայլին Շամիրամայ և գնաց մինչ ի Սո(լ)թանիա, դարձեալ ի յետ գնաց ի Բաղդատ, և զձմեռն անց եկաց և կարմիր գդակն դարձաւ ի վերայ Վանայ և դ(4) ամիս խտարեաց, աւաղ և վայ է զիս հազար բերան, թե որքան անձինս կորեան, հաւատացեալ և անհաւատ, զի կարծես էր, թե քան զԺԶԴ (16.000 անձիս մեռան, աւելի և ոչ պակաս)»⁴⁰։

1535 թ. ապրիլին սուլթան Սուլեյմանը իր բանակը Քրդասանի և Մարաղայի վրայով նորից շարժեց դեպի Թավրիզ։ Սա անակնկալի է բերում Թահմասպին։ «Թահմասպը կարծելով, որ թուրքերը կբավարարվեն իրեն հասցված վնասներով և բազմիցս համոզված լինելով, որ (թշնամի) մի մեծ բանակ չի կարող երկար մնալ Պարսկաստանում, այլ աստիճանաբար կոչնչանա, գտնվում էր այն ժամանակ Թավրիզ քաղաքում»⁴¹։ Շահը Թավրիզ էր եկել, անշուշտ, թողնելով Վանի պաշարումը, «սակայն լսելով իր թշնամիների գալուստը,—այնուհետև կարդում ենք Խալկոնդիլեսի շարունակողի մոտ,—անհապաղ դուրս եկավ այնտեղից ու դիմեց փախուստի և որպեսզի խափանի թշնամու հետապնդման բոլոր հնարավորությունները, նա համընդհանուր ավերածություն ենթարկեց այն վայրերը, որտեղից որ անցնում էր՝ իր հետ տանելով տեղի բնակչությունը ու հետևը թողնելով ամայի ու անմարդարենակ մի անապատ»⁴²։ «Թուրքական կայսրը,—այնուհետև գրում է ժամանակագիրը,—տեսնելով, որ ինքը չի կարող հասնել պարսիկներին (les Azémities), և այսպես երկարաձգվող պատերազմը ի հաճույս թշնամիների կոչնչացնել իր բանակը, որոշեց հետ նահանջել»⁴³։ Նա այդ կատարեց քաղաքը չսված ավարի ու ավերի ենթարկելուց հետո⁴⁴։

Գարձյալ Հայաստանի վրայով նահանջի ճանապարհին «հրկիզեցին դաշտերն ու բնակելի վայրերը... Եվ այս բոլոր զժբախտություններին որպես լրացում՝ իրենց հետ միասին արհեստի որոշ ճյուղերի մարդ-

³³ Նույն տեղում, էջ 204։

Chalcondyles, XIV, էջ 527։

³⁴ Նույն տեղում, էջ 205։

³⁵ Նույն տեղում, էջ 209։

³⁶ Նույն տեղում, էջ 211—212։

³⁷ Նույն տեղում, էջ 528։

³⁸ Նույն տեղում։

³⁹ Մանրամասն տե՛ս Մ. Կ. Զուլայան. Արևմտյան Հայաստանը XVI—XVIII դդ., էջ 26—28։

⁴⁰ Յուզակ հայերեն ձեռագրաց Մատենադարանի Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց Ե. Յակովլովո Տաշեան, Վիեննա, 1895, էջ 434։

⁴¹ Chalcondyles, XIV, էջ 530։

⁴² Նույն տեղում։

⁴³ Նույն տեղում։

⁴⁴ Նույն տեղում։

կանց ցմահ ծառայութեան մատնելու նպատակով տարան Կ. Պոլիս՝ ամբողջ ընտանիքներով: Ի վերջո, Կ. Պոլիս ուղարկեցին նաև ծաղկուն հասակ առած այս ժողովրդի երկսեռ գեղեցկադեմ երիտասարդներին, դարձնելով նրանց հաղթողի զոհերը»⁴⁵:

Վերադառնալով Քավրիզ և մայրաքաղաքն ու նրա շրջակայքը տեսնելով ավերված ու կողոպտված վիճակում շահը «երդվեց վրեժ առնել»⁴⁶: Կղբաշների բանակը նորից ներխուժում է Արևմտյան Հայաստան և, «օգտագործելով երկրի բնակչության ատելությունը թուրքերի նկատմամբ»⁴⁷, ասպատակություն է սփռում երկրում: Նահանջող թուրքական բանակի նկատմամբ կղբաշները կիրառում են պարտիզանական կռիվներ ու մեծ վնաս պատճառում նրանց⁴⁸:

Այս բոլորը նշանակում է, որ 1531—1535 թվականների պատերազմների ընթացքում թուրքերին շահողվեց կղբաշներին շոշափելի հարված հասցնել: Բացառությամբ Բարձր Հայքի (Դերջան, էրզրում, Կարս և այլն), ամբողջ Արևմտյան Հայաստանը փաստորեն շարունակում էր մնալ Սեֆյանների ձեռքում: Երկու պետությունների միջև եղած լարվածությունն էլ ավելի էր մեծանում:

* * *

1547 թ. շահ Քահանայի եղբայր Ալիսա Միրզան ասպտամբեց նրա դեմ և Շիրվանն ու Վրաստանը ասպատակելուց հետո Սև ծովի վրայով մեկնեց Ստամբուլ ու ասպախինեց սուլթան Սուլեյմանին, արժանանալով պատշաճ մեծարանքի: Ալիսա Միրզան շահական գահին տիրանալու ձգտումով սուլթան Սուլեյմանին զրդում էր Իրանի դեմ սկսել պատերազմ:

1548 թ. մարտի 28-ին հակայական բանակի գլուխ անցած սուլթան Սուլեյմանը Կոնիա—Սեբաստիա—Ամասիա—էրզրում—Արժկե ճանապարհով շարժվեց դեպի Քավրիզ⁴⁹: Թուրքական բանակի արշավանքին ուղեկցող ֆրանսիական թագավորի դեսպան դ'Արամոնի վկայությամբ, թուրքական բանակը կազմված էր «300 հազար զինվորներից և 300 թնդանոթից», ի դեպ՝ դ'Արամոնը սուլթանի ռազմական խորհրդատուն էր և մեծապես շահագրգռված էր իրանական այս արշավանքի շուտա-

փուլի ավարտման մեջ, որպեսզի Ֆրանսիան հնարավորություն ունենար օգտագործելու օսմանյան ռազմական ուժերը Եվրոպայում, իր գլխավոր թշնամու՝ Հաբսբուրգների դեմ: Ֆրանսիայի և Օսմանյան կայսրության միջև դաշնակցային կապերը, որոնք հաստատվել էին 1535 թվականին, իրենց ազդեցությունն են թողել դ'Արամոնի՝ թուրքական արշավանքի նկարագրությանը նվիրված աշխատության վրա: Իրական փաստերի մասին դ'Արամոնը գիտակցաբար լռում է և փորձում է սուլթանին վերադարձնել «հոգատարություն» քրիստոնյա հպատակների նկատմամբ:

Ողջ Արարատյան դաշտավայրի և Իրանական Քրդստանի մի մասը նվաճելուց հետո սուլթան Սուլեյմանը գալիս, պաշարում ու գրավում է Քավրիզը և մի քանի օր հետո շարժվում է դեպի Վան ու 1548 թ. օգոստոսին գալիս միանում է Վանը պաշարած թուրքական զորքերին: Ամբողջ մի շաբաթ Վանը ոմբակոծվելուց հետո գրավվում է թուրքական բանակի կողմից⁵⁰: Այդ առթիվ ֆրանսիական թագավոր Հենրիխ 2-րդին հղած նամակում սուլթանը հանդես է գալիս հպատակ քրիստոնյա բնակչության (հայերի) հովանավորողի դիրքերից և բացատրում իրանյան այս արշավանքի զրդապատճառները: Ավելորդ շենք համարում այստեղ բերել այդ նամակի կարևորագույն հատվածները: «Հայտնի է,—գրում է Սուլեյմանը,—որ վերջին ժամանակներս պարսիկ ժողովուրդը կուրացած իր աղանդով՝ ըմբոստացավ կրոնով նախատեսված պարտականությունների և ավանդույթների դեմ և փարվեց շիիզմի արգահատելի վարդապետությանը:

Գիվային ոգի ունեցող Ալիսաը՝ Քահանայի եղբայրը, այս ժողովրդի ներկայիս առաջնորդը, վերջերս եկավ խնդրելու մեր հովանավորությունը և մեր կողմից գտավ պատշաճ ընդունելություն: Մենք լսեցինք նրա բողոքները և իր հորդորանքների վրա մեր հաղթական դրոշը բարձրացրեցինք և մեր զենքի հզորությամբ աշխատեցինք փարատել կրոնին հասցված վնասն ու անարգությունը: Մենք շարժվեցինք դեպի Արևելք և երբ մեր զորքերը ծածանվեցին Ադրբեջանում և մեր զորքերը մուտք գործեցին Քավրիզ, պարսիկները դիմեցին փախուստի և հեռացան այս նահանգից ու նրա ենթակա շրջաններից: Նրանք ցույց չտվեցին ո՛չ քաջություն և ո՛չ էլ իրենց իշխանի հանդեպ հավատարմություն: Մեր զորքերի համբավը ստիպեց նրանց մրջյունների նման հողի տակ թաքնվել, այս երկրամասի բոլոր բնակիչները հոգատարությամբ շրջապատվեցին: Նրանք ոչ միայն զերծ մնացին խժոժություններից, կողոպուտից, այլև արժանացան մեր հատուկ համակրանքին և մեր կայսերական հովանավորությանը:

⁴⁵ Նույն տեղում, էջ 531:

⁴⁶ Նույն տեղում:

⁴⁷ Նույն տեղում:

⁴⁸ Նույն տեղում:

⁴⁹ J. Hammer, V, էջ 40—41:

⁵⁰ Նույն տեղում, VI, էջ 12:

Մեր արշավանքի հիմնական նպատակն էր Ադրբեջանի նվաճումը ու նրա կցումը կայսրությանը: Այս ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ է... նախ և առաջ, Պարսկաստանի ամենանշանավոր և ամենաանառիկ ամրոցին՝ Վանին, տիրանալը: Մենք հաջողությամբ հասանք այս վայրը 955 թվականի ութերորդ օրերը (1548 օգոստոս): ...Ես հարձակման ազդանշանը տվի, իմ մոտն ունենալով իմ հռչակավոր մեծ վեզիր Ռուստամ փաշային, մյուս վեզիրներին, սանջակբեգերին, բեկլեյբեգերին, նազիրներին և իմ հաղթական զինվորներին: Նախախնամություներ մեզ նախատեսել էր այս վայրի նվաճումը, որը կարճ ժամանակամիջոցում ընկավ մեր ձեռքը իր բոլոր շրջակայքով հանդերձ: Ես այնտեղ թողեցի պահակազոր և կարգուկանոնի պահպանման համար ոստիկաններ ձի ջոկատ»⁵¹:

Թև ինչ ապահովություն էր բերում սուլթանը հայերին, երևում է ներսես Վարագեցու 1548 թ. հետևյալ հաղորդագրությունից. «...քակեցին առհասարակ զգիւղս և զքաղաքս՝ դժառս և դտունկս առ ի յայրել զփայտս ի խանութ և յայլ ինչ պետս իւրեանց»⁵²: Եվ, վերջապես, հակառակ թուրքերի նկատմամբ իր տածած համակրանքին, դ'Արամոնք ստիպված է խոստովանել, որ ճանապարհին՝ արշավող բանակի հնարավոր վտանգներից խուսափելու համար Հայաստանի շատ վայրերում բնակչությունը ստիպված է եղել լքել հայրենի վայրերը ու ապաստան փնտրել սարերում ու քարայրներում: Այսպես խոսելով Արճեշի մասին, նա գրում է. «Հուլիսի 6-ին և 7-ին (1548) մոտենալով քիչ թե շատ մի բերքառատ երկիր, մտանք Սոֆիի փոքրիկ մի քաղաք՝ Արճեշը, որը լքված էր բնակչությունից և ուր և ոչ մի մարդ չէր ապրում»⁵³: Այնուհետև խոսելով Խոյի մասին, նա շարունակում է. «Այս վատ ճանապարհներից (մինչ այդ թուրքական բանակը շարժվել էր ամալի ու քարքարոտ վայրերից—Մ. Զ.) մենք հասանք Խոյ կոչվող մեծ ու գեղեցիկ գյուղին, որը լավագույնն էր մինչ այդ մեր տեսածների մեջ, պակաս բոլոր բնակիչները դիմել էին փախուստի»⁵⁴: Սուլթանական բանակի նահանջից անմիջապես հետո, շահ թահմասպը իր ուժերը մտցրեց Արևմտյան Հայաստանի տարածքը, մեծ ավերածություններ գործելով Վանի, Մուշի, Բիթլիսի, Արծկեի և Խլաթի շրջաններում: Հայկական և արևելյան աղբյուրներում այդ մասին պահպանվել են ընդարձակ տե-

ղեկություններ⁵⁵: Երբ սուլթանը գտնվում էր Սեբաստիայում, կարդում ենք դ'Արամոնի մոտ, «...լուր ստացվեց, որ նրա (շահ թահմասպի—Մ. Զ.) գործերը մտել էին իր երկրի խորքերը և կողոպտել էին գավառներն ու գյուղերը»⁵⁶:

Պաշարված Խլաթը համառ դիմադրել էր շահ թահմասպին: Խարված Իրանի տիրակալի կեղծ խոստումներից, պաշարվածները բաց արեցին քաղաքի դռները և կզլբաշները անասելի կոտորած կազմակերպեցին⁵⁷: Խլաթից շահի որդի Իսմայիլ Միրզան շարժվեց դեպի էրզրում և պարտություն մատնեց տեղի թուրքական կայսրը⁵⁸: Իսմայիլ Միրզան, համաձայն հայերեն մի ձեռագրի հիշատակարանի, ասպատակում է նաև Վանն ու իր շրջակայքը. «Զի յաուրս ձեռնայնոյ՝ ի տոնի սուրբ Տակոբին ելաւ որդին շահ Դահմանին Իսմայիլ Միրզեն բազում հեծեթ (ի վերայ երկրին Վանայ) երեք մասունս արարեալ՝ (զգօրս իւր) զմին մասն ի յԱմուկ ուղարկեալ, և զմին մասն ի Հայաձորն և ինքն մնաց ի Խոջապն և զօրքն սփռեցաւ առհասարակ, զոմանս սպանանելով, զայլսն թալանելով՝ բայց գերի ոչ արարին և դարձան բազում ավարաւ ի տեղիս իւրեանց»⁵⁹:

Արևմտյան Հայաստանում կզլբաշների այս նոր ասպատակությունները թուրքերի առաջ հրամայական պահանջ էին դնում ևս մեկ անգամ հարձակվելու Սեֆյան Իրանի վրա: Իրանական նոր արշավանքի համար սերասքեր նշանակվեց մեծ վեզիր Ռուստամ փաշան⁶⁰: Միաժամանակ սուլթանը Փոքր Ասիայի բոլոր կառավարիչներին հայտնում էր, որ ինքը շուտով անձամբ ղեկավարելու է կզլբաշների դեմ ուղղված նոր արշավանքը:

1553 թ. ամռանը սուլթան Սուլեյմանը ձեռնարկեց իր նոր արշավանքը դեպի Իրան, որն այս անգամ իրագործվեց էրզրումի, Կարսի, Շորաբայի վրայով դեպի Երևան և Նախիջևան: Էրզրումից թուրքական սուլթանը շահ թահմասպին հղեց, ինչպես մի ժամանակ իր հայրը շահ Իսմայիլին, սպառնալիքներով և հայհոյանքներով լի մի նամակ: Սպառնալիքներին շուտով հաջորդեցին Շորաբայի (Շիրակի), Երևանի, Նախիջևանի ու Ղարաբաղի աննկարագրելի ավերումն ու կողոպուտը: Այդ

⁵¹ Le voyage de Monsieur d'Aramon, appendice, p. 262—263.

⁵² Մատ., ձեռ. № 6273, էջ 438:

⁵³ D'Aramon, էջ 78—79:

⁵⁴ Նույն տեղում, էջ 80—81:

⁵⁵ Տե՛ս Մ. Կ. Զուլպյան, Արևմտյան Հայաստանը XVI—XVIII դդ., էջ 41—42:

⁵⁶ D'Aramon, էջ 94:

⁵⁷ J. Hammer, VI, էջ 54:

⁵⁸ Նույն տեղում:

⁵⁹ Մատ., ձեռ. № 6273, էջ 452—453:

⁶⁰ J. Hammer, VI, էջ 55:

մասին են գրում հենց իրենք՝ թուրք պատմիչները և, մասնավորապես, Ի. Փենզլիին⁶¹։

Գնուև 1549 թ., երբ թուրքական բանակը էրզրումում էր, սուլթանը զորամասեր ուղարկեց Վրաստան՝ երկիրը նվաճելու նպատակով։ Հենրիխ 2-րդին հղած նամակում սուլթանը հետևյալ կերպ է բացատրում Վրաստանի վրա հարձակվելու շարժառիթները. «Նենգ ցեղին պատկանող վրացիները սահմանակից են մեր կայսրությանը, մերթ ընդոտում են մեր հովանավորությունը, մերթ էլ անցնում են մեր թշնամիներ պարսիկների կողմը։ Նրանց ապօրինություններն ու քսամենլի վարվելաձևը մեզ ստիպեցին նրանց նկատմամբ ձեռնարկել խիստ միջոցներ»⁶²։ Այնուհետև սուլթանը մանրամասն թվարկում է Վրաստանի այն ամրոցները (Սերիլիզան, Թորթում, էմրիտ, Ակչեկալե և այլն), որոնք նվաճվեցին թուրքերի կողմից և ավելացնում՝ «կարճ՝ թշնամուց վերցված երեսունհինգ ամրոցներից տասնչորսը հողին հավասարեցվեցին, իսկ քսամենկում նշանակվեցին պահակազորեր և ռազմական կառավարիչ։ Երկիրը վերածվեց (օսմանյան) բեգլերբեգության և բաժանվեց չորս սանջակների և ամրոցում միացվեց կայսրությանը»⁶³։ Խոսքը վերաբերում է Արևմտյան Վրաստանին, որը հետ այսու կոչվելու էր «Վիլայեթ-ի Գյուրջիստան»։ Սակայն Սուլեյմանի 1553—1554 թթ. արշավանքի ժամանակ Վրաստանի հասցեին արված նոր սպառնալիքները վկայում են, որ թուրքերը այս հարցում հպարտանալու քիչ տեղ ունեին։

Գրավելով Արևելյան Հայաստանի մի զգալի մասը, թուրքերը ստիպված եղան դադարեցնել բանակի հետագա առաջխաղացումն ու հետ նահանջել։ Երկչուղ կրելով, որ հաջորդ՝ 1555 թ. թուրքերը նորից կհարձակվեն Իրանի վրա, շահ Թահմասպը հատուկ պատվիրակություն ուղարկեց Ամասիա՝ սուլթանի հանգստավայրը, օսմանյան տիրակալից հայցելով հաշտություն։

Երկար բանակցություններից հետո⁶⁴ 1555 թ. մայիսի 26-ին Ամասիայում արևելյան երկու պետությունները հաշտություն կնքեցին, համաձայն որի հարավարևմտյան Հայաստանը (Վան, Մուշ, Բիթլիս և այլն) անցավ Օսմանյան կայսրությանը, իսկ Արևելյան Հայաստանը, Արևելյան Վրաստանն ու ամբողջ Ադրբեջանը մնացին Սեֆյանների տիրապետության տակ։ Պայմանագրով նախատեսված էր երկու պետու-

⁶¹ Տե՛ս Մ. Ղուլայան, Արևմտյան Հայաստանը XVI—XVIII դդ., էջ 44—45։

⁶² D'Aramon, appendice, էջ 264։

⁶³ Նույն տեղում, էջ 265։

⁶⁴ Մանրամասն տե՛ս J. Hammer, VI, էջ 65—70։

թյունների սահմանագծում գտնվող Կարս քաղաքը դարձնել ամայի ու անմարդաբնակ։

* * *

1555 թ. մայիսի 26-ին Ամասիայում կնքված հաշտության պայմանագրերը, ըստ էության, ժամանակավոր զինադադար էր, քանզի արևելյան երկու պետությունների միջև տնտեսական և քաղաքական բնագավառում գոյություն ունեցող սուր հակասությունները շարունակում էին լարված վիճակում պահել նրանց փոխհարաբերությունները։ Ողջ Անդրկովկասի նկատմամբ թուրքերն առաջվա նման տածում էին ագրեսիվ նկրտումներ։ Նրանց հիմնական ստրատեգիան էր անմիջական շփման մեջ մտնել միջինասիական թուրքերի հետ ու համատեղ ոչնչացնել «կրոնի ու պետության թշնամի» Սեֆյան Իրանը։ 1609 թ. կրոնում հրատարակված ու Օսմանյան կայսրության պատմությանը նվիրված աշխատության մեջ հատուկ նշվում է, որ «Իրանի հետ պատերազմի պատճառը ոչ թե կրոնական հին հակասություններն են, այլ Մուրադ 3-րդի կայսրության սահմաններն ընդարձակելու գոռոզ ձգտումները»⁶⁴։

1576 թ. մահացավ շահ Թահմասպը, մի տիրակալ, որն ինչպես և իր հայրը պաշտվում էր իրանական հասարակության կողմից, որպես աստված, շնայած նա իր ողջ ներքին հակաժողովրդական քաղաքականությունը արժանի էր արգահատանքի։ «Ժողովրդի հարգանքն ու սերը տիրակալի հանդեպ,—կարդում ենք Վինչենցո դ'Ալեսանդրիի մոտ,—հակառակ վերև հիշված բաների (իմա՝ դաժան ներքին քաղաքականության—Մ. Ձ.), որ խորհել է տալիս, թե նա պետք է որ ասվեր,—անհավատալի է, որովհետև նրանք պաշտում են նրան ոչ իբրև թագավորի, այլ որպես աստուծո»⁶⁵։

Շահ Թահմասպը Մերձավոր արևելքի երկրների նկատմամբ ոչ պակաս զավթողական նպատակներ ուներ, քան թուրքերը։ Այդ մասին է խոսում իր զեկուցագրի մեջ նույն Վինչենցո դ'Ալեսանդրին։ «Այս թագավորը,—գրում է նա,—հավակնություն և պահանջ ունի այն երկրների հանդեպ, որ օսմանյան կայսրերը առել են նրանցից մի կողմից՝ Եփրատ գետից մինչև Բաբելոն (Babelonia—Բաղդադ), արևմուտքում Բենբեքի (Դիարբեքիր) երկրները և Փոքր Հայաստան, որ պարունակում է Ուրֆա (Urfa), Մերդին (Merdin), Եփր (Bira), Ադիլիգադ (Adiligus), Բիթլիս (Bitis), Վան, Ոստան (Vastan), Խիզան (Cassan), Ալաշկերտ

⁶⁴ Histoire des ottomans ou empereurs des Turcs, p. 306.

⁶⁵ Հովհ. Հախոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 346։

(Calas.i), Հալիջան (Haligan), Բայբուրդ (Bairburd), Բարեյի և ուրիշ վայրեր»⁶⁵: Այս քաղաքականությունից չէին կարող հրաժարվել նաև նրա հաջորդները:

Սակայն շահ թահմասպի մահից հետո քաղաքական իրազրույթունն Իրանում այլ էր: Կառավարման ղեկը, իր իշխանությունն վերջին տարիներին, ձեռունի թահմասպը պահում էր միայն անվանապես: Երկրի փաստական տերը թյուրքական ցեղերի ավազանիներն էին: Թահմասպի մահից հետո այդ ուժերն արդեն դարձան երկրի լիիրավ տեր ու տնօրեններ: Տարբեր հոսանքների պատկանող ավազանիների խմբերը ձգտում էին իրենց թեկնածուին բազմեցնել իրանական գահի վրա: Գահակալական այդ ներքին երկպառակությունները մեծապես թուլացրել էին Իրանը: Սահմանում գտնվող վանի թյուրքական կառավարիչ Խոսրով փաշան, որն ուշի-ուշով հետևում էր Իրանի ներքին խառնակ վիճակին, իր կառավարությունը հղած անվերջ զեկուցագրերում հորդորում էր օսմանյան ղեկավար շրջաններին՝ անհապաղ օգտվել Իրանի թուլացումից ու հարձակվել նրա վրա⁶⁷: Եվ սահա այսպես է, որ ծագեց հերթական թյուրք-իրանական պատերազմը, որի հիմնական թատերաբեմն այս անգամ էլ դարձան Հայաստանն ու ողջ Անդրկովկասը:

Դեռևս պատերազմը բացահայտ բնույթ չստացած, ինչպես վկայում են աղբյուրները, սահմանային բնույթով բնույթով երկու պետությունների միջև ընդունել էին հանապազօրյա բնույթ: Երկու կողմերն էլ իրար հասցնում էին շոշափելի վնասներ: Իսկ երբ 1578 թ. գարնանը հսկայական բանակի գլուխ անցած թյուրքական զորքերի գերագույն հրամանատար (սերասքեր) Մուստաֆա փաշան շարժվեց դեպի Հայաստան, ապա Երևանի կառավարիչ Թոքմաք խանը երեսուն հազար սեֆյաններով ասպատակեց սահմանագծում գտնվող Արդահանն ու Չղբը⁶⁸: Իր հերթին վանի կառավարիչը Վասպուրականից ներխուժեց Սեֆյան Իրանի սահմանները, պարտություն մատնելով նրանց առաջապահ ուժերը⁶⁹:

⁶⁶ Նույն տեղում, էջ 352:

⁶⁷ J. Hammer, VII, էջ 75: Վանի Խոսրով փաշան, կարգում ենք եվրոպական մի զեկուցագրում, սուլթանին սպառիչ տեղեկություններ էր հաղորդում Պարսկաստանի վիճակի մասին և ողբերգում նրան սկսել պատերազմը, ասելով, «որ նա իր զենք գտնելու է», ոչ թե «...Եվրոպայի լավ պաշտպանված ամրոցների, թնդանոթների ու զենքերի, այլ թուր ու նիզակների, Ասիայի անպաշտպան ու բաց քաղաքների» (Histoire des ottomans..., էջ 308):

⁶⁸ J. Hammer, VII, էջ 80:

⁶⁹ Նույն տեղում, էջ 81:

1578 թ. օգոստոսի 9-ին Արդահանից շարժվելով, սերասքեր Մուստաֆայի զորքերը կանգ առան Չղբրի մոտ, ուր և հաջորդ օրը թշնամի երկու կողմերի միջև տեղի ունեցավ մեծ ու արյունալի ճակատամարտ: Մեծ կորուստների գնով թյուրքերը վճռեցին այն իրենց օգտին⁷⁰:

Պատերազմական գործողություններն աղետալի հետևանքներ ունեցան հայ ժողովրդի համար և արտացոլվեցին այդ տարիներին արտազրված հայերեն ձեռագրերի հիշատակարաններում: Մի հիշատակարանում մասնավորապես ասված է, որ թյուրքերը «...զբաղում քաղաքս և զգեղս և զգաւառս աւերեալ քանդեցին, զարսն սրով սպանին, և զկանաչսն և զտղայսն գերի վարեցին»⁷¹:

Դեռևս մինչև Չղբրի ճակատամարտը սերասքեր Մուստաֆան Վրաստանի ղեկավարներին ուղղված հատուկ նամակով պահանջեց ամեն տեսակի կապերը խզել Սեֆյան Իրանի հետ և թեքվել օսմանցիների կողմը: Այդ նամակին արձագանքեց միայն Արևմտյան Վրաստանում իշխող Մանուչարը, իսկ դրան հակառակ Թիֆլիսում թագավորող Դավիթը, որն ազգակցական կապեր ուներ Սեֆյան պալատի հետ, անպատասխան թողեց Մուստաֆայի առաջարկը: Ուստի վերջինս Չղբրի ճակատամարտից հետո ներխուժեց Վրաստան և, գրավելով Թումեք (Թմուկ), Ախալքալաք բերդերը, մտավ Թիֆլիս: Նա քաղաքի երկու եկեղեցիները վերածեց մզկիթների⁷²:

Թիֆլիսի վրայով օսմանյան բանակը շարժվում է դեպի Շիրվան: Սեֆյան բանակը դիմում է պարտիզանական կռիվների հնարներին: 1578 թ. օգոստոսի 29-ին Կուրի վտակներից Կանակ գետն անցնելիս օսմանյան բանակը տալիս է ծանր կորուստներ: Թյուրքական բանակին հետապնդող Թոքմաք խանի, էմիր խանի և Իմանկուլի խանի զորքերը նրան կորուստներ են պատճառում՝ թակարդի մեջ զցելով թշնամուն⁷³:

⁷⁰ Histoire des ottomans..., էջ 311:

⁷¹ Մատ., ձեռ. № 6273, էջ 510—511: Հայերեն ձեռագրերի հիշատակարանները խոսում են հայերի զանգվածային զերեվարության երևույթների մասին: 1578 թ. մի ձեռագրում նշված է. «Ի թվին Ռեհ (1578) Հոռոմեցին (թյուրք—Մ. Զ.) սաֆար արավ ի Սոֆուն (ձեռագրում ի Սոլուն) վրայ և երեքանայ Կի (60.000) զերի առին հայ ազգ, թող կոտորածն»: Բարսեղ Վարագեցու տարեգրության մեջ նշվում է, որ «Երևանայ աշխարհի քաղաքն և երկիրն, և ամենայն շուրջազայ դաւառքն և ամենայն աշխարհս քրիստոնէից ի յանօրէն աղագացն պարսից և իսմայիլացոց սրբաշինջ եղև» (Մանր ժամանակագրություններ, հ. 1, Երևան, 1951, էջ 172): 1579 թ. նախիջևանից և այլ գավառներից զերեվարության ենթարկված հայերի թիվը նշված է ավելի քան «դարասուն հազար» (Ղ. Ալիշան, Այբարատ, Վենետիկ, 1890, էջ 300 և հետ):

⁷² J. Hammer, VII, էջ 68:

⁷³ Նույն տեղում, էջ 87: Histoire des ottomans, էջ 312—313:

Այսուհանդերձ, պատերազմի հենց առաջին տարում՝ 1578 թ., թուրքերին հաջողվեց զավթել Վրաստանի ու Շիրվանի մի մասը: Դեռևս այս երկու երկրների նվաճումը չավարտած, սերասբեր Մուստաֆան այս երկրամասերը վերածելով սովորական օսմանյան նահանգների, դրանք բաժանեց առանձին բեգլերբեգությունների⁷⁴: Միայն Շիրվանը, որի կառավարիչը նշանակվել էր թուրքական առաջապահ զորքերի մի այլ հրամանատար՝ Ուլղեմիր Օսման փաշան⁷⁵, զավթիչներին տարեկան քսանհինգ միլիոն երկու հարյուր հազար ոսկու եկամուտ էր բերելու⁷⁶:

1578 թ. ձմռանը թուրքական բանակը վերադառնում է էրզրում՝ հանգստանալու: «Եվ որովհետև ձմեռը բավականին խորացել էր, և (գեպի էրզրում) վերադարձի ճանապարհը չափազանց երկար էր, ուստի նա (Մուստաֆան—Մ. Զ.) որոշեց հետ քաշվել էրզրում, և նախքան մեկնելը Օսման փաշային նշանակեց Շիրվանի նահանգի կառավարիչ, հրահանգելով նրան զավթել Շամախին և Դերբենդը, միանալ թաթարական զորքերին, որոնք ըստ հասած տեղեկությունների արգեն հասել էին Դերբենդ քաղաքի մոտակայքը»⁷⁷:

Օգտվելով այն հանգամանքից, որ օսմանյան հիմնական բանակը նահանջել էր դեպի էրզրում, 1578 թվականի դեկտեմբերին սեֆյան զորքերն անցան համընդհանուր հարձակման մի շարք ուղղություններով՝ Արարատյան դաշտավայրով դեպի Կարս և էրզրում, Շիրվան և Բաղդադ⁷⁸: Շիրվանում և Ղարաբաղում միայն Ա.Գիլ-Գիրայի Ղրիմի թաթարական զորքերի օգնությամբ Ուլղեմիր Օսման փաշային հաջողվեց ոչ միայն ետ շարժել իրանյան բանակը, այլև նրան հասցնել շոշափելի պարտություն⁷⁹: Սակայն շուտով պարտություն կրած սեֆյան բա-

⁷⁴ J. Hammer, VII էջ 88—89:

⁷⁵ Այս Ուլղեմիր փաշան մինչև իրանական արշավանքը, համաձայն հայերեն ձեռագրի մի հիշատակարանի, իր բանակով գտնվելիս է եղել էրզրումում ու խժոժություններ է կատարել հայ բնակչության նկատմամբ: Օսման փաշան, կարգում ենք հիշատակարանում «...եկեալ բազմութեամբ զօրօք ի Թեոդակօլիս՝ որ է Աղզրում և զարիսն զոր արար ով կարէ պատմել կամ գրով արկանել կացեալ անդ աւուրս բազում, որ և զայր մարդիկ ի զուրս յգէին և կանայս և զկոյս աղջկանս և զտղայս խայտառակին, այսպիսի պիղծ գործավք էին անօրինքն ազն մահեղի» (Մատ., ձեռ. № 4515, էջ 319):

⁷⁶ J. Hammer, VII, էջ 90:

⁷⁷ Histoire des ottomans, էջ 314:

⁷⁸ J. Hammer, VII, էջ 93:

⁷⁹ Նույն տեղում, էջ 94: Օսման Ուլղեմիրի Շիրվան և Ղարաբաղ կատարած այս արշավանքի մասին ահա թե ինչ է հաղորդում Իսրայել գրիչը «...երեկ Աւսման փաշէն Հոռոմացոց (թուրքերի—Մ. Զ.) Դամուր գապուն էառ ի աշխարհն, Շիրվանայ և կո-

նակին օգնության է հասնում տաղանդավոր զորավար, թագաժառանգ Համզա Միրզան և Արեշի մոտ խուճապի մատնում թշնամուն, սարքում մեծ կոտորած ու գերի վերցնում Ադիլ-Գիրային⁸⁰:

1579 թ. գարնանը, տեսնելով Արևելքում թուրքերի կատարած նվաճումների հեղհեղուկ վիճակը, սուլթան Մուրադ 3-րդը կարգադրեց իր սերասբերին, հակառակ Ամասիայի հաշտության պայմանագրի, վերակառուցել Կարս քաղաքում ամրոցը: Կարսի ամրոցի վերակառուցումը կատարվել է տեղական բնակչության (հայ) բռնի աշխատանքի լծելու պայմաններում: Մի հիշատակարանում կարգում ենք, որ սերասբեր Մուստաֆան «...եկեալ և բնակեցաւ ի դաշտն Բասենու և հրաման էլ յաշխարհս, և ժողովեցան բազում ճարտարք և քարագործք, և ձեռնարկեալ շինեցին զբերդն և զքաղաքն առ ի հակառակութիւն կարմիր գլխուն»:

Վինչենցո դ'Ալեքսանդրիի վկայությունից երևում է, որ XVI դարի կեսերից ամայացված էր ոչ միայն Կարսը, այլև թուրք-իրանական սահմանամերձ շրջանները. «Թագավորի (իմա՝ շահ Թահմասպի—Մ. Զ.) ուժը այն է, որ նա երկիրը ավերակ է դարձրել թուրքական սահմանների վրա՝ ամեն կողմ վեց օրվա ճանապարհ հեռավորությամբ, և շրջանում քանդած է բոլոր ամրոցները, որպեսզի զորացնել իր դիրքերը և թուրքերը հակում շունհենան գրավելու և պահելու այն»⁸¹:

Իտալացի դիվանագետ Մարիանին նույնպես նշում է Կարս բերդամրոցի ավերակ լինելու և Օսմանյան կայսրության պաշտպանության համար ունեցած մեծ նշանակության մասին⁸²: «Ղազվինում, — գրված է եվրոպական մի զեկուցագրի մեջ, — չգիտեին, թե որն էր թուրքերի և Մուրադի նպատակը վերակառուցելով Կարսի ամրոցը, սակայն ենթադրում էին, որ նա կարող էր ծառայել Թիֆլիսի պաշտպանության գործին: Պարսկաստանի թագավորը որոշեց Վրաստան ուղարկել Միմոն բեկին, որն իրենց մոտ գտնվում էր գերության մեջ և Ալիկուլի խանին, որը պարսից զորքի գերագույն հրամանատարն էր՝ մի քանի հազար զինվորներով և մեծ թվով թնդանոթներով՝ Կարսի ամրոցի վերակառուցումը խանգարելու նպատակով: Մուստաֆան գալով Կարս (մեծ) վեզիր

տրեաց ազգս զիզիլպաշին, բազում խանս և սուլթանս և արար փախտական: Երեկ ազգ մի կար զայտաղ կու ասեն և գերեաց բազում տեղիս Ղարապաղն, Ղարազայն, Խաչն, Վարանդայ մինչև Տիգրակ» (Մատ., ձեռ. № 173, էջ 95^ա):

⁸⁰ Histoire des ottomans, էջ 315—316:

⁸¹ Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 352:

⁸² Fernand Braudel. Le Méditerranée et le monde méditerranéen à l'époque de Philippe II, Paris, 1949, p. 1013.

Մեհմեդի (իմա՝ Սոկոլլիի—Մ. Զ.) որդի Հասան փաշային բաժն հազար զինվորներով, ամեն տեսակի զենքի ու զինամթերքի, դրամի և պարենի հետ ուղարկեց Քիֆլիս (թուրքական կայազորին) օգնելու:

Հասանը գնաց օգնելու այս վայրին, սակայն անցնելով Դմանխի կիրճը անսպասելիորեն հարձակման ենթարկվեց Ալիկուլիի և Սիմոնի կողմից, որոնք թաքնվել էին մոտակա անտառներում: Նրանք մեծ կորուստներ պատճառեցին Հասանին: Սակայն տեսնելով որ իրենք պաշարված են մեծ թվով զինվորներով, փախուստի դիմեցին: Արիասիրտ շահանգիսացող Ալիկուլիին գերի ընկավ: Այնուհետև Հասանը մտավ Քիֆլիս և ոգևորեց զինվորներին պերճախոսությամբ, դրամով, զենքով ու զինամթերքով ու հետ վերադարձավ: Այնուհետև ղեկուցագրում պատմվում է, որ վրաց թագավոր Սիմոնը բազում թնդանոթներով սպասում էր Քիֆլիսից վերադարձող Հասանին մի կիրճի բերանում: Սակայն լրտեսների միջոցով Հասանը տեղեկանում է Սիմոն Լուարսաբի ձեռնարկմանը և վերադարձը շարունակում է այլ ճանապարհով: Սիմոնին մնում էր միայն հետապնդել թշնամուն և հարվածներ հասցնել նրան⁸³:

Այսպիսով, թուրքերին հաջողվում է սովի ճիրաններին մատնված թուրքական կայազորին ցույց տալ ժամանակավոր օգնություն: Սակայն իրենց համար տխուր իրավիճակը թուրքերն անզոր էին փրկել: Եվրոպական մի այլ զեկուցագրի մեջ այդ մասին ասված է. «Չնայած թուրքերին հաջողվեց գրավել մի շարք շրջաններ, սակայն ինչպես Վրաստանում, այնպես էլ Շիրվանում նրանք ունեցան մարդկային մեծ կորուստներ: Բացի այդ թուրքերի գրաված շրջանների մի կարևոր մասը վերանվաճվեց պարսիկների կողմից: Ավելին՝ համաճարակը և ավելի հաճախ սովը թուրքական բանակի մեծ մասի անբաժան ուղեկիցն էր և որոշ տեղեկությունների համաձայն մահացել էին ավելի քան յոթանասուն հազար թուրքեր, ոմանք սրից, մյուսները՝ համաճարակից և սովից»⁸⁴: Մարիանիի մի այլ տեղեկությունից իմանում ենք, որ 1579 թ. ամռանը իրանցիները «...նպատակահարմար գտան մնալ պաշտպանական դիրքերում՝ թուրքերի բանակում համաճարակի տարածման պատճառով»⁸⁵:

Կարսի ամրոցի վերակառուցման աշխատանքներին զուգընթաց օսմանյան բանակը Ջաֆեր փաշայի ղեկավարությամբ ասպատակում է Երևանի շրջակայքը և գերեվարում մեծ թվով հայեր և թյուրքեր: Թուրք պատմագիր Ի. Փեչեվիի ասելով, գերիները հարց հարուցեցին, թե ար-

դյո՞ք խաղաղ բնակչության գերեվարումը օրինակա՞ն է: Մուֆտի Քեմալ-փաշա զադեն իր ֆեթմաներով (մեկնություններով) հաստատեց դրա «օրինականությունը»: Մուֆտին մինչև իսկ գտավ, որ «շարիաթով թույլատրվում է կանանց հետ միասին գերի վերցնել նաև նրանց փոքրահասակ երեխաներին»⁸⁶:

Նկատի ունենալով թուրքերի կրած ծանր կորուստներն Արևելքում, սուլթան Մուրադ 3-րդը շուտով Մուստաֆային մանզուլ (պաշտոնազուրկ) է անում և նրա փոխարեն սերասբեր նշանակում Սինան փաշային⁸⁷: Հասնելով Սեբաստիա, նոր սերասբերը նկատելով, որ թուրքական բանակը գտնվում է անմխիթար վիճակում, նամակ է հղում սուլթանին, պահանջելով եվրոպական մասում գտնվող թուրքական բանակի մի մասը անհապաղ տեղափոխել Փոքր Ասիա⁸⁸:

Շահ Խուլաբանդան (1578—1585), օգտվելով Սինան փաշայի սերասբեր նշանակվելու առիթից, փորձեց հաշտության եզրեր գտնել վերջինիս հետ: Այդ նպատակով նա Մաքսուդ խանի զլխավորությամբ Սինան փաշայի մոտ ուղարկեց հատուկ ղեկանագիտական պատվիրակություն՝ թուրքերին առաջարկելով Քիֆլիսն ու Կարսը հանձնել նրանց⁸⁹: Բանակցությունները վերջանում են ասպարդյուն⁹⁰:

Այս բոլորից հետո Սինան փաշան որոշում է իր առաջին հարվածն ուղղել Վրաստանի դեմ, նպատակ ունենալով, մի կողմից օգնության հասնել աղետալի վիճակում գտնվող Քիֆլիսի թուրքական կայազորին, մյուս կողմից, շեղոթացնել պրոտրանական ուժերին: Սեֆյաններն, իրենց հերթին, անում են ամեն ինչ, խափանելու թուրքերի մտադրությունները: Ահա թե ինչ ենք կարգում այդ մասին եվրոպական զեկուցագրերից մեկում: «Այս ժամանակ Պարսկաստանի թագավորը քաշվել էր Շիրվանի և Թավրիզի արանքում գտնվող ու անհրաժեշտ ամեն ինչով առատ, Ղարաղաջ կոչեցյալ վայրը և այնտեղ հավաքելով երեսուն հազարանոց մի բանակ սպասում էր Սինանին, քանզի կարծում էր, որ նա շարժվելու է դեպի Թավրիզ կամ Շիրվան և գերազանցելու է Մուստաֆայի փառքը, և համոզված լինելով, որ անհրաժեշտ է Վրաստանի Քիֆլիս քա-

86 Որ զերյալների մեծ մասը հայեր էին, երևում է նաև XVI դարի անգլիացի վաճառական ճանապարհորդ Ջոն Նյուրբրիի հետևյալ վկայությունից. «Պարսկաստանի վերջին պատերազմներում (1578—1584 թթ.—Մ. Զ.) շատ քրիստոնյա զերիներ էին վերցրել Երևանում և ուրիշ տեղերում», (Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 544):

87 «Histoire des ottomans», էջ 420, Chalcondyles, XVI, էջ 768:

88 Chalcondyles, նույն տեղում, էջ 769:

89 Նույն տեղում, Histoire des ottomans, էջ 320:

90 Նույն տեղում:

83 Histoire des ottomans, էջ 319—320:

84 Chalcondyles, XVI, էջ 768:

85 Fernand Braudel, էջ 1014:

ղաքին օգնութեան (հասնել) կարգադրեց իր երկու գլխավոր զորավարներին՝ Քոքմաք խանին և Իմանկուլի խանին, իրենց զորքերով միանալ Սիմոնին և հարվածել թուրքերին, քանի ղեռ նրանք այդ բանը չեն արել (մեզ): Սինանը գալով էրզրում և հավաքելով իր հիմնական բանակը և զինամթերքը շարժվեց դեպի Կարս և Կարսից էլ անձամբ Վրաստան՝ Թիֆլիս, նպատակադրվելով Դմանիսի կիրճի մատուցում կառուցել մի ամրոց: Գալով Դմանիս, բանակը մնաց ութ օր և ութ գիշեր տեղացող հորդառատ անձրևի տակ, նա ստիպված եղավ թողնել Դմանիսը և շարժվել դեպի Թիֆլիս, որին (կայազորին) նա պիտի օգներ նյութապես և զինամթերքով, սակայն հասնելով Տրիալի, նա տեղեկացավ, որ Պարսկաստանի թագավորը մեծ բանակով գալիս է իր դեմ⁹¹: Սինան փաշան շարժվում է դեպի Արդահան և Չլզըր⁹²: Սերասքերի այս քայլը, համաձայն զեկուցագրի, ոչ այլ ինչ էր, քան մի փորձ՝ ահաբեկելու շահական զորքերին, բանդի, ինչպես ասված է վավերագրում, Սինանը ձգտում էր խաղաղութեան, համոզված լինելով, որ «...Պարսկաստանի հետ պատերազմի ամբողջութեամբ ոչնչացնելու էր թուրքերին»⁹³:

Շահ Խուդաբանդան թուրքական ճամբար ուղարկեց նոր պատվիրակություն՝ Իրրահիմ խանի գլխավորությամբ⁹⁴: Հաշտության բանակցությունները, սակայն, այս անգամ ևս շոշափելի արդյունք չտվեցին: Ուստի Սինան փաշան նորից շարժվեց դեպի Թիֆլիս և քաղաքի ղեկավարությունը հանձնեց մուսուլմանություն ընդունած Լուարսարի որդի Գորգինին, որը հետ այսու կոչվելու էր Յուսուֆ փաշա: Փառասիրական նպատակներով իսլամին փարվեց նաև Մանուշարը, ընդունելով Մուստաֆա անունը: Սակայն վաթսուն հազարանոց բանակի գլուխ անցած շահի դեպի Վրաստան կատարած արշավանքի լուրը սերասքերին ստիպեց դիմել նահանջի ու մեկնել մայրաքաղաք: Առաջվա նման Վրաստանը չէր ենթարկվում սուլթանի կամքին ու նման էր ժայթքող հրաբխի:

1582 թ. օգոստոսին թուրքական բանակն էրզրումից նորից շարժվեց դեպի Կարս և Ախալքալաք⁹⁵: Վերջին վայրում Մուստաֆան (Մանուշարը) միացավ թուրքական բանակին: Գորիի մոտ տեղի ունեցած ճակատամարտում թուրքերը պարտություն կրեցին վրացական և իրանական ուժերից: Գորիի մոտ կրած պարտությունը, եվրոպական աղբյուրների վկայությամբ, գայրացրեց սուլթան Մուրադ 3-րդին և նրա

մեծ վեզիրին ուղղած այն հարցին, թե ինչ պետք է լինի այսպես կոչված «պարսկական արշավանքի» հետագա ճակատագրը, վերջինս պատասխանեց. «Անհրաժեշտ չէ շատ մեծ ծախսերի հետ կապված պատերազմի շարունակությունը այդքան ամրոցներով ու պաշտպանական շինություններով պատված թշնամու երկրում սպառել պետական միջոցները և ժողովրդին հասցնել ծայրահեղ աղքատություն, այլ ավելի ճիշտ կլիներ, որ նորին մեծությունը անձամբ մեկնելով Կարսամիտ, Հալեպ կամ թեկուզև Ամասիա գլխավորեի պարսկական արշավանքը»⁹⁶:

Սուլթանը պաշտոնազրկում է մեծ վեզիրին և իրանյան արշավանքի նոր սերասքեր է նշանակվում Ֆերհադ փաշան (1582 թ. դեկտեմբերի 5), որը և վաթսուն հազարանոց բանակով շարժվում է դեպի Երևան և ձեռնամուխ լինում նրա նոր բերդի կառուցմանը: «Ֆերհադը, — կարդում ենք եվրոպական զեկուցագրի մեջ, — իր բանակը հավաքելով Ամասիայի ու էրզրումի ճանապարհով եկավ Կարս ու դիմավորվեց տեղում եղած բանակի կողմից, այնտեղից անցավ Ակչեկալի և, տեղում թողնելով հինգ հարյուր հոգուց բաղկացած կայազոր և որոշ քանակությամբ հրետանի, շարժվեց դեպի Քոքմաք խանի նստավայր հանդիսացող Երևան»⁹⁷: Երևանի այս նոր բերդի (Կալա-ի ջեդիդ) կառուցման առթիվ Յոզ. Համմերը, հենվելով թուրքական աղբյուրների վկայության վրա, նշում է, որ Երևանի «բեզլեբեզի, դաֆթարդարի (ֆինանսների վերակացուի) տարեկան եկամուտները... կազմում էին քսանվեց միլիոն ալչե»⁹⁸:

1583 թ. գարնանը Ֆերհադ փաշան իր բանակը շարժեց դեպի Նախիջևան, ուր լուր ստացվեց այն մասին, որ Խուդաբանդա շահը մի մեծ բանակի գլուխ անցած նույնպես մտադրվել է գալ Նախիջևան և ճակատամարտել⁹⁹ Ֆերհադ փաշայի հետ: Սակայն Թիֆլիսում գտնվող թուրքական կայազորի աղետալի վիճակը Ֆերհադին ստիպում է նորից բանակն ուղղել դեպի Վրաստան, ուր և հանդիպում է լուրջ անհաջողության: Սիմոն խանի (այդպես է նշված աղբյուրում) և քրիստոնեություն

⁹¹ Chalcondyles, XVI, էջ 769.

⁹² Նույն տեղում, Histoire des ottomans, էջ 324.

⁹³ Chalcondyles, XVI, էջ 770.

⁹⁴ Նույն տեղում:

⁹⁵ J. Hammer, VII, էջ 106.

⁹⁶ Chalcondyles, XXI, էջ 773.

⁹⁷ Նույն տեղում, էջ 774.

⁹⁸ J. Hammer, VII, էջ 109: Երևանի բերդի կառուցումը ծանր է անդրադառնում հայ բնակչության համար և այլ իմաստով: Մառ գյուղում արտագրված մի ձեռագրի հիշատակարանում գրիչը տեղեկացնում է մեզ, թե Երևանի բերդը կառուցելու համար, «բազում եկեղեցիք, խաչ և տապանք քակեցին և քարն ի բերդն տարան, քրիստոնեից ազգս ամէն թալանուեցաւ, որ առաջ քան հասունել փաշային ի քաղաքն Երևան, թաչալ ազգն արձակեց ի վերայ քրիստոնեից ազգիս, որպէս գայր ի վերայ ոչխարաց՝ բռնեցին տարան մինև Գանձայ ի հետ իրեանց և անդ թալանեցին, բազումս սպանին և բազումս զերեցին: Եւ ես անարժան զժողոս անդ թալանած, փախստական եկի և գրեցի սուրբ աւետարանս» («Էջմիածին», 1950, XI—XII, էջ 87):

⁹⁹ Chalcondyles, XVI, էջ 773.

գիրկը վերադարձված Մանուշարի զորքերը Սեֆյանների հետ համատեղ լուրջ հանրաժաններ են հասցնում թուրքերին¹⁰⁰։ Շուտով Ֆերհադ փաշայի դեմ ըմբոստանում է նաև թուրքական բանակը, և սերասքերին ոչինչ չի մնում անել, քան նահանջել դեպի էրզրում՝ արդյունքում ստանալով պաշտոնազրկման մասին սուլթանի հրամանը¹⁰¹։ Նրա փոխարեն «պարսկական արշավանքի» սերասքեր է նշանակվում Ուզղեմիր Օսման փաշան¹⁰², որն աչքի էր ընկել Գաղստանում և Շիրվանում կատարած վայրագ ասպատակություններով¹⁰³։

1584 թ. օգոստոսին գալով էրզրում, Ուզղեմիր Օսման փաշան Կարսի և Չղրբի վրայով շարժվում է դեպի Չաղբրան, այնուհետև՝ Խոյը, Մարանդը և Սոֆյանն անցնելով հայտնվում է Թավրիզի առաջ։ «Օսմանը գալով էրզրում և իր բանակի կարիքների համար հավաքելով մարդիկ ու պարենամթերք,—կարդում ենք եվրոպական մի գեկուցագրում,—օգոստոսի սկզբին մեկնեց (քաղաքից) աղմուկ հանելով, թե ինքը գնում է Նախիջևան և անցնելով Կարսի և Չղրբի ճանապարհներով, հասավ Չաղբրանի դաշար... և սուր կրող հարյուր հիսուն հազար զինվորներով, չհաշված ծառայող անձնակազմը և արհեստավորները, անցնելով Խոյը, Մարանդը ու Սոֆյանը, հայտնվեց Թավրիզի առաջ»¹⁰⁴։ Շահ Խուդաբանդայի զորքերը «...այնքան հզոր չէին, որպեսզի կարողանային դիմել բաց ճակատամարտի, ուստի որոշեցին մղել մանր մարտեր, թուլացնել թշնամուն ու նրան ստիպել հետ նահանջել»¹⁰⁵։ Հիրավի, այդ նույն աղբյուրներում մանրամասն նկարագրվում են պարտիզանական այն կռիվները, որ մղում էին Սեֆյանները դեպի Թավրիզ շարժվող թուրքական բանակի դեմ՝ նրան հասցնելով շոշափելի հարվածներ¹⁰⁶։ Այսուհանդերձ, 1584 թ. սեպտեմբերի 21-ին թուրքերը մտնում են Սեֆյանների մայրաքաղաքը՝ անասելի կողոպուտի և կոտորածի ենթարկելով նրա բնակչությանը¹⁰⁷։

Սակայն շուտով օգտվելով սերասքեր Օսման Ուզղեմիրի հիվանդությունից պատճառով թուրքական բանակում տիրող անորոշությունից, Սեֆյանները նորից անցնում են հակահարձակման և Թավրիզի մոտակայքում տանում են «կատարյալ մի հաղթանակ... սպանելով շուրջ երե-

սուն հազար թուրքերի»¹⁰⁸։ Սպանվում է նաև Օսման Ուզղեմիրը, և թուրքերը ստիպված են լինում նահանջել դեպի Վասպուրական՝ ասպատակելով Վանն ու իր շրջակայքը, ինչպես մեզ այդ մասին տեղեկացնում է Արճեշում արտագրված մի ձեռագրի հիշատակարանում Կարապետ եպիսկոպոսը, որտեղ մասնավորապես գրված է. «...Եւելեալ ի յըստըմպօլայ Վեզիր փաշայ մի Աւաման անուն ի վերայ Արզումայ գնաց երելով ու աւերելով, և զհայոց ազգս կողոպտելով՝ գնաց ի Շահաստան ի Քարէզ և ի տեղն բերդ պատրաստեաց և ինքն (անդ) սատակեցաւ և հեծելազօրքն անգուլիս ի յետ դարձան, և եկեալ զծովու բոլորս (Վանայ) երելով և աւերելով՝ և զհայոց ազգս կողոպտելով և զորն բռնէին իսկանջէին (տանջէին) և զօրպահաց թէ թագուցած կեր, թե ի հացէ, թե ի փարթալէ (ի շորեղենէ) թե ինչ որ գումանք (կանկած) ունէին դամէն ի ձեռներն տային, դեռ չէին ազատեր, և զորն Փար ու Ֆասադ (զրպարտանք) անէին և զհայոց ազգս խիստ դառն ու դիժար նեղէին. միթե Աստուած զվերջն բարի առնէ և զհայոց ազգս ազատէ»¹⁰⁹։

Սուլթան Մուրադ 3-րդն այս բոլորին տեղեկանալով երկրորդ անգամ սերասքեր է նշանակում Ֆերհադ փաշային և 1585 թ. դարնանը նրան ուղարկում «պարսկական արշավանքի», որը նույնպես անզոր է դառնում բեկում մտցնել պատերազմական գործողությունների մեջ։ Եվրոպական աղբյուրի վկայությամբ «պարսիկների բոլոր հաջողությունները ամենևին չընկճեցին Մուրադի սիրտը, քանզի նա, հարելով Ֆերհադ փաշային և Օսման փաշայի մահից հետո նրան տալով բարձրագույն աստիճանի պաշտոնի կնիքը, մի նոր բանակով ուղարկեց նրան Պարսկաստան, և ի պատասխան դրան Պարսկաստանի թագավորը դեպի Վան առաքեց 24.000-անոց պարսկական մի բանակ Վելի Սուլթանի և Իմանկուլի խանի ղեկավարությամբ, քանզի Ամասիայի վրայով նրա (Ֆերհադ փաշայի) զորքերը հասել էին արդեն այս շրջանները»¹¹⁰։ Այս անգամ թուրքական բանակը խուսափում է Սեֆյանների հետ ուղիական ընդհարումներից։ Եվրոպական աղբյուրում այս իրողությունը բացատրվում է թուրքերի ունեցած ֆինանսական և այլ կարգի ղեկավարություններով։ Ռազմական գործողությունների ժամանակ, ասվում է այնտեղ, «բանակը յուրաքանչյուր տարի հավաքում էր մեծ քանակությամբ հացահատիկ՝ ժողովրդին պատճառելով մեծ շարիք՝ հուսահատության տրամադրություններ առաջացնելով նրա մոտ։ Գտնում էմ, որ այս հանգամանքներն են (մի քիչ վերևում նշված է, որ միայն Հակապի վաճա-

100 նույն տեղում, էջ 776։

101 նույն տեղում։

102 նույն տեղում։

103 Մանրամասն տե՛ս J. Hammer, VII, էջ 116—120։

104 Chalcondyles, XVI, էջ 777։

105 նույն տեղում։

106 նույն տեղում։

107 նույն տեղում։

108 նույն տեղում, էջ 778։

109 Մատ., ձեռ. № 8939, էջ 274ա, 274բ, ձեռ. № 6273, էջ 517, 518։

110 Chalcondyles, XVI, էջ 780։

աականները պատերազմական կարիքների համար պիտի տրամադրեն մինչև 60.000 զուկատ գումար—Մ. Զ.), ահա, որ պատճառ հանդիսացան այն բանի, որ այս բանակը թողնելով ամեն ինչ՝ վերադարձավ Կոստանդնուպոլիս»¹¹¹:

Հիրավի՝ երկարատև պատերազմներն Իրանի հետ հյուծել էին պետական դանձարանը: Եվ երբ օսմանյան բանակը վերադառնում է Կոստանդնուպոլիս, սուլթանը, ի վիճակի չլինելով վճարել նրա ոսճիկները, «...ցանկացավ ժողովրդի վզին փաթաթել նոր արտակարգ հարկեր, որին Մուֆթին կտրականապես ընդդիմացավ»¹¹²:

1585 թ. շահ Խոդաբանդայի մահից հետո Իրանում ծայր առան նոր գահակալական կռիվներ, որից և օգտվեցին թուրքերը ու երեք տարվա ընթացքում՝ մինչև 1588 թ., ամբողջ Անդրկովկասը Հարավային Ադրբեջանի հետ միասին իրենց ենթարկեցին:

1587 թ. Բաղդադի մոտ՝ «Կոունկների հովիտ» անվանված վայրում, Ֆերհադ փաշան, որն իր բանակը համալրել էր քրդական զորաջոկատներով, ծանր պարտության է մատնում իրանցիներին: Հունիսին Սեֆյան Իրանի գահին բազմեց երիտասարդ ու հեռատես քաղաքագետ շահ Աբասը (1587—1629), որը հաշվի առնելով երկրում առաջացած ծայր աստիճան ճգնաժամային վիճակը (ամբողջ Իրանում թյուրքախոս ցեղերի կենտրոնախույս ավազանները գլուխ էին բարձրացրել) հաշտության առաջարկով դիմեց թուրքական կողմին, որը և, ի վերջո, կնքվեց Կոստանդնուպոլիսում 1590 թ. մարտի 21-ին: Դրա համաձայն օսմանյան նվաճողների արյունոտ տիրապետության տակ անցան ողջ Անդրկովկասը և Հարավային Ադրբեջանը՝ Թավրիզի հետ միասին: Երկու պետությունների սահմանները, որոնք որոշվեցին թուրքերի պատվիրակ Հրզր փաշայի և Սեֆեվիդների ներկայացուցիչների կողմից, հետևյալն էին՝ Թավրիզի հասանգն Իրանից սահմանաբաժանվում էր Մարաղայի մոտով՝ Դելիկիտաշ կոչված կիրճով, Արաքսի և Կուրի հոսանքներով¹¹³:



1590 թ. մարտին կնքված Կոստանդնուպոլիսի պայմանագրով թուրքերային հաջողվեց իրականացնել իր տնտեսական ու քաղաքական ծրագրերը:

¹¹¹ Նույն տեղում, էջ 780:

¹¹² Նույն տեղում, էջ 781:

¹¹³ Bekir Kütükoğlu. Les relations entre l'empire ottoman et l'Iran dans la seconde moitié du XVI^e siècle, — "Turcica", Revue d'études turques. T. VI, Paris—Strasbourg, 1975, p. 143.

գրի մի մասը՝ զավթելով Անդրկովկասի ու Հյուսիսային Իրանի կարևորագույն առևտրական ուղիները: Ազդարային երկիր հանդիսացող ու ֆեոդալական մասնատվածությունից ուժասպառ եղած Իրանին հասցվեց շոշափելի հարված: Նվաճված երկրամասում օսմանցի ֆեոդալները սկսեցին անողոք շահագործման ենթարկել տեղի բնական ու մարդկային հարստությունները: Հողերը ենթարկվեցին վերաբաժանման, որի հետևանքով Անդրկովկասի շատ ֆեոդալներ զրկվեցին իրենց տիրույթներից: Հարկերը եռապատկվեցին: Բնակչությունը ենթարկվեց թուրքերի կողմից կիրառվող կրոնական անհանդուրժողականության քաղաքականությանը: Եվ, բնականաբար, այս բոլորը երկրում առաջացրեց համընդհանուր դժգոհություն թուրք զավթիչների նկատմամբ: Խույս տալով թուրքերի քրիստոնեահալած քաղաքականությունից, հայ ավատական ավագանու և բնակչության մի մասը օսմանյան տիրապետության տարիներին ապավեն էին փնտրում Վրաստանում ու այլուր:

Մղձավանջային իրադրությունը վրաց Սիմեոն թագավորին ստիպում է նամակով օգնության հայցով դիմել Իսպանիայի Ֆիլիպ 2-րդ (1555—1598) թագավորին: 1596 թ. օգոստոսի 14 թվակիր գրված աշխարհաբար այդ նամակում մասնավորապես կարդում ենք. «Այսբան ժամանակ թուրքի հետն ի մէջ նեղութեան կայեաք, այս ժամանակիս կու հայեաք թէ քրիստոնէից ի թագավորութիւն ի ոտք ելանէ և շարժի. հիմի մեծ գոհութիւն և փառք անմահ թագաւորին Յիսուսի Քրիստոսի, որ ետ զորութիւն և հզոր կարողութիւն քոյին մեծ թագաւորութեան իշխանութեանդ և քոյին սիրելի մայեսդաղ շեղար ինփեռատորին որ զմեզ մեծարեց և ուղարկեց մեզ թուղթ ու գիր սիրոյ միարանութեան, վասն յամենայն հաւատացելոց ի Քրիստոս, որ զայս այլազգի և թշնամի հաւատոց զթուրք ազգս ի միջոյ վերացելոյ, նայ ես, Սիմեոն խանս Կուրծիստանու, Ալեքսանդր խան Լուանդինոյ (Լևանի որդի), շահ Աբաս Փերսիանին, երեքանքս միարանեցաք, և խորհուրդ և թատպիր արարք, որ մենք այլ հիմակուց ի վեր առաջ գանք և զթուրքին զուխն կոտրեմք և զսուրբ յերուսաղէմ և զքրիստոնեայքն ի թուրքի ձեռաց ազատենք»¹¹⁴:

Եվրոպական պետություններից և ոչ մեկն այդ ժամանակ ի զորու չէր հայերին և վրացիներին իրական օգնություն ցույց տալ: Թուրքիայի դեմ պայքարում նրանք, ինչպես դա առաջներում էր, ձգտում էին Սեֆյան Իրանի հետ դաշինքի: XVI դարի վերջին Իրանին թուրքերայի դեմ պատերազմի հրահրողների առաջին շարքերում մենք տեսնում ենք

¹¹⁴ Տե՛ս Աշ. Հովհաննիսյան, Գրվագներ... 5. 2, էջ 75:

անգլիացիներին: Իրան ժամանած Անտոն և Ռորերտ Շերլի եղբայրնե-
րի հրահանգով շահ Աբասը վերակառուցում էր իր բանակը: Նախքան
թուրքերի դեմ պատերազմ ձեռնարկելը, իր հերթին, կենսականորեն
շահագրգռված լինելով Եվրոպայի հետ զինակցության, շահ Աբասը,
ինչպես տեսանք, դեսպանություններ ուղարկեց Եվրոպա՝ Ռուսաստան,
Գերմանիա, Իտալիա և, մասնավորապես, Հոլանդիա պապի մոտ:

Այս պայմաններում, շատ բնական է, որ հայ ու վրաց ավագանին
օգնության հայցով դիմեր անմիջապես իրեն՝ Իրանի տիրակալին: Չէր
բացառված այն, ինչպես այդ մասին նշում է Աշ. Հովհաննիսյանը, որ
Իրանին ապավինած հայ խոջայության ներկայացուցիչներն իրագրել լի-
նեին Եվրոպայի հետ շահ Աբասի վարած բանակցություններին¹¹⁵:

Դիմելով շահ Աբասի օգնությանը, Անդրկովկասի ավատատերերն
Իրանի երիտասարդ տիրակալին դիտում էին որպես հույսի ու փրկու-
թյան ապավենի, որպես «չարյաց փոքրագույնի» անտանելի թուրքա-
կան տիրապետության պայմաններում: «Բազումք ոմանք,—գրում է
Առ. Դավրիժեցին,—յաշխարհէս Ատրպատականի իշխանք և կողմնա-
կալք մահմեդականք և քրիստոնեայք, գնացեալ էին առ թագաւորն
Պարսից, վասն զի յոյժ շարաշար նեղութեամբ նեղէին զնոսա ազգն օս-
մանցւոց ծանր հարկապահանջութեամբ, և կեղեքմամբ զրկէին և կո-
ղոպտէին, և հաւատոց կուռէճութիւն (խստութիւն) առնէին, և այլ բա-
զում տառապանօք շարաշարէին ոչ միայն զազգս հայոց, այլև զազգս
վրաց և զՄահմեդականաց (ազգրեջանցիներ) և վասն այնր նեղութեան
գնացին առ թագաւորն պարսից, զի թեղևս նովաւ դիրութիւն գտցեն
զեղծեալք ի ծառայութենէն օսմանցւոց»¹¹⁶:

Կոստանդնուպոլսի հաշտության էնքոմից հետո ընկած կարճ ժա-
մանակամիջոցում շահ Աբասին հաջողվել էր ընկճել Իրանում կենտրո-
նախույս թուրքախոս ավագանու դիմադրությունը, ստեղծել կենտրո-
նացված ուժեղ պետական ապարատ և, ինչպես տեսանք, Եվրոպայի
օրինակով, վերակառուցել իրանական բանակը: Այս նույն ժամանակ
Թուրքիան անկման հայտանիշեր էր ցույց տալիս՝ ընկնելով ճգնաժա-
մային վիճակի մեջ: Դրանից դուրս գալու ելքն օսմանյան ղեկավար շր-
ջանները փնտրում էին պատերազմական արկածախնդրությունների
մեջ: Մինչև 1606 թ. ընկած ժամանակաշրջանը Թուրքիան ռազմական
ընդհարման մեջ էր Ավստրիայի հետ, որը բերում էր միայն անհաջո-
ղություններ: Ամեն օր նորանոր լուրեր էին հասնում մայրաքաղաք՝

թուրքերի կրած ծանր պարտությունների մասին: 1593 թ., որը թուր-
քական տարեգրություններում հայտնի է որպես «կազմալուծման կամ
պարտության տարի» («Возздиш senesi»), Բոսնիայում ամբողջությամբ
ոչնչացվեց Հասան փաշայի զորքը: Եթե ավստրիական ճակատում
թուրքերը լրիվ չախչախվեցին, ապա դրա պատճառը Գերմանիայում
ծայր առած կրոնական ներքին վեճերն էին: Այս հանգամանքը թույլ
չտվեց օսմանցիների դեմ ընդհանուր հարձակում կազմակերպել: «Ամեն
առումով այս պետության գործերը անկում են ապրում,—զեկուցում է
իր կառավարությանը Կոստանդնուպոլսի ֆրանսիական դեսպան Բարոն
դե Սալինյակը,— և բավական է մի փոքր հարված, որ նա կործան-
վի»¹¹⁷: Իսկ 1607 թ. մարտի 13-ին գրած նամակում ֆրանսիական դես-
պանը հետևյալ կերպ է զարգացնում իր այս միտքը: «Այս մեծ կայս-
րության գործերը միանգամայն վատ ընթացք ունեն: Երկիրը կառա-
վարում են ապիկար մարդիկ, պակասում է զրամբ: Եվ այդ պակասը
լրացնելու համար, նրանք (կառավարողները—Մ. Զ.) անում են հազար
ու մի անարդարություններ: Եթե Հունգարիայի պատերազմը շարունակ-
վի, հավանական է, որ ամեն ինչ ինքնիրեն խորտակվի»¹¹⁸:

Սալինյակի այս եզրահանգումները հիմնված էին այն փաստի վրա,
որ XVI դարի վերջում Թուրքիայում ծայր առած ջալալիների¹¹⁹ հակա-
պետական շարժումները փաստորեն կաթվածահար էին դարձրել սուլ-
թանական պետությունը և մեծ հարված հասցրել նրա ռազմական ու
քաղաքական հզորությանը: Շահ Աբասը, որն ուշի-ուշով հետևում էր
Թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունների ընթացքին, չհապա-
ղեց օգտագործել բարենպաստ պայմանները պատերազմ սկսելով
թուրքերի դեմ, հանուն իր ժառանգական «Հայրենի աշխարհի» հետ
նվաճման: Ահա թե ինչ ենք կարգում այդ մասին Անտոնիո դե Գուվեա-
յի մոտ: Շահ Աբասը, գրում է նա, «բոլոր քրիստոնյա իշխանութուն-
ների մոտ դեսպանություններ ուղարկեց նրանց միացնելու ու թուրքե-
րի դեմ համատեղ պատերազմ սանձահարելու համար այն հաշվով, որ
վերջինները զբաղված լինեն երկու կողմից՝ Եվրոպայից ու Ասիայից
և այդ միջոցով նա կարողանա վրեժ լուծել իրենց հասցված վիրավո-
րանքների համար և վերանվաճել այն քաղաքներն ու ամրոցները,
որոնք կորցրել էին իրենց նախնիները»¹²⁰: Հետագայում, անդրադառ-

117 Baron de Salignac, էջ 56:

118 Նույն տեղում, էջ 124:

119 Այդ մասին տե՛ս Մ. Զուլայան, Զալալիների շարժումը և հայ ժողովրդի վի-
ճակը Օսմանյան կայսրության մեջ, Երևան 1966:

120 Antonio de Gouvea, էջ 104:

115 Նույն տեղում, էջ 80:

116 «Պատմութիւն Առաքել վարդապետի Դարիժեցւոյ...», Վաղարշապատ, 1896, էջ
15 (հետ աչտու՝ Առ. Դավրիժեցի):

նալով եվրոպական պետությունների հետ շահ Աբասի դաշնակցելու հարցին, ժ. Շարդենը գրում է հետևյալը. «Մեծն Աբասը, որն ուներ լայն ծրագրեր, և որ առանց դաշնակիցներ ունենալու և որևէ մի տեղից օգնություն, մեծ պատերազմների մեջ էր մտել թուրքերի հետ՝ շափազանց լավ ընդունելություն էր ցույց տալիս բոլոր նրանց, ովքեր փրկություն էին իր բարեկամությունը, մասնավորապես եվրոպացիների, որոնց համարում էր իր մեծ թշնամու՝ թուրքի թշնամիները: Եվ, իմիջիայլոց, պապին նա դիտում էր իրեն մի մարդու, որն առավել շահագրգռված էր օսմանյան այդ հզոր պետության կործանումով կամ գեթ նրա ընդարձակմանը խոչընդոտելով: Այդ էր պատճառը, որ նա սիրալիր ընդունում էր նրա ղեսպաններին: Համաձայն երկրի սովորության, նա նրանց պահում ու կերակրում էր բազմաթիվ տարիներ, իր ամբողջ կյանքի ընթացքում նա նրանց օգտագործում էր որպես ղեսպաններ քրիստոնյա իշխանների մոտ, կոչ անելով վերջիններին (համատեղ) պատերազմել թուրքերի դեմ, ինչպես որ նրանք շարունակ խոստանում էին»¹²¹:

Շահին մնում էր միայն մի պատրվակ՝ սկսելու պատերազմը թուրքերի դեմ: Եվ այն շուտով ներկայացավ: Գծագհ օսմանցիների տիրապետությունից՝ Սալմաստի բեկ քուրդ Ղազին ապստամբում է և շահի օգնությունը դիմում՝ նրան հորդորելով շարժվել դեպի Թավրիզ: Քուրդ բեկերը, որոնք թուրքերի և Սեֆյանների միջև ծագած պատերազմների սկզբից ի վեր սովորել էին թեքվել դեպի հզոր կողմը, տեսնելով, ըստ երևույթին, Թուրքիայի ներքին խառնակ վիճակը սկսեցին կասկածանքի տակ վերցնել հետագայում էլ օսմանյան տիրապետության տակ մնալու նպատակահարմարությունը: Այս առումով, անշուշտ, քուրդ Ղազին ապստամբությունը եզակի երևույթ չէր:

1603 թ. օգոստոսի 3-ին վեց հարյուր հեծյալ զինվորներով շահ Աբասն Իսպահանից շարժվեց դեպի Թավրիզ: Ճանապարհին նրան միացան Արդեբիլի կառավարիչ Զուլֆիզար խանի զորքերը: Եթե հավատանք Գեորգ Տեկտանդերի վկայությանը, ապա նրա բանակի թիվը շուտով հասնում է հարյուր քսան հազարի, որը մեզ թվում է կասկածելի, որովհետև նա խոսում է հետին թվով: «Թագավորը, — գրում է նա, — Թավրիզ շարժվեց հարյուր քսան հազար մարդկանցով, և արդեն յոթ օրվա ընթացքում տեր էր արձավ քաղաքին: Ես այնտեղ հասա ղեկտեմբերի 15-ին»¹²², իսկ շահի զորքերը Թավրիզ մտան հոկտեմբերի

21-ին¹²³: Թավրիզի գրավմանը նախորդել էր 1603 թ. սեպտեմբերի 25-ի Սոֆյանի ճակատամարտը¹²⁴:

Թավրիզի գրավումն ականատեսների վկայությամբ ցնծություն էր առաջացրել նրա բնակչության շրջանում: «Քաղաքի բնակիչները, — կարդում ենք դե Գուվեաչի մոտ, — ուրախացան թոթափելով թուրքական լուծը և իրենց բնական տիրոջը ենթարկվելով, սակայն վախենալով, որ Ալի փաշան (Թավրիզի կայազորի պետը — Մ. Զ.) կարող է հաղթանակել, գտնվեցին զուսպ, սակայն հենց որ իմացան նրա պարտությունը և ամրոցի դատարկվելը զինվորներից, մեծ ցնծությամբ դուրս եկան թագավորին ընդառաջ և կերակրեցին նրա զինվորներին ու ձիերին, և չբավարարվելով այս բարյացակամ ելույթներից, որպես հավատարիմ հպատակության նշան, նրանցից շատերը թագավորին բերեցին իրենց փեսաների կամ աներձագերի զուխները... և որ ամենազարմանալին է, մայրերը սպանեցին թուրքերից ծնած իրենց հարազատ զավակներին, ասելով, թե անհրաժեշտություն չկա, որ այս շար ժողովրդից որևէ հիշողություն մնա: Ահա այս աստիճան մեծ էր թուրքերի նկատմամբ նրանց տածած ատելությունը»¹²⁵:

Թավրիզի գրավումը մի տեսակ ազդանշան հանդիսացավ Ադրբեջանում և Հայաստանում հաստատված քուրդ բեկերի համար: Նրանք բոլորը իրենց հայտարարելով շահիսեվեններ (շահը սիրողներ)՝ անցան Սեֆյանների կողմը, ավելի ևս ծանր կացության մեջ թողնելով այստեղ հաստատված թուրքական կայազորներին:

Դեպի Երևան շահ Աբասի բանակի արշավանքին ականատես Տեկտանդերի վկայությամբ, հայերը և տեղացի մահմեդականները նույնպես դիմավորում էին ոգևորությամբ: «Բոլոր քաղաքներն ու գյուղերը, որ մենք հանդիպում ենք մեր ճանապարհին, — գրում է նա, — շտապում էին ընդունել պարսիկների գերիշխանությունը: Ես անձամբ ականատես եղա Մեդիայում (Ադրբեջանում)՝ Մարանդի, Հայաստանում՝ Նախիջևանի և Զուլֆայի ու այլ բազմաթիվ քաղաքների հպատակությանը, որոնք հանձնվեցին առանց դիմադրության: Երբ թագավորն անցնում էր մի որևէ քաղաքից կամ գյուղից, ապա բոլոր կողմերից խառնիճաղանջ բնակչությունը վազում էր՝ տղամարդիկ, կանայք, երեխաները ձեռք ձեռքի բռնած շուրջալար էին կաղմում և իրենց սովորության համաձայն երգում ու պարում... Ժողովրդական այս ելույթը նպատակ ուներ հաճոյանալ թագավորին և նրա գալուստը նշել ուրախությամբ ու եր-

¹²¹ Jean Chardin, VII, էջ 434—435.

¹²² Iter Persicum, էջ 47.

¹²³ J. Hammer, VIII, էջ 40.

¹²⁴ Նույն տեղում, էջ 39.

¹²⁵ Antonio de Gouvea, էջ 220—221.

գերով: Հայաստան մեր ժամանակից հետո դեպքերը զարգանում էին նույն հաջողությամբ, թագավորը ոչ մի դիմադրության չհանդիպեց: Զուլֆայում, որը բազմամարդ էր և բացառապես բնակեցված հայերով, սրտագին ընդունելություն տեղի ունեցավ: Թագավորին մեծարելու համար ջահեր վառեցին, այստեղի տները, որոնք կտուրներ շունեն և դարդարված են պատշգամբներով, պճնվեցին ավելի բան հիսուն հազար ջահերով, որոնք վառվեցին ամբողջ գիշերվա ընթացքում»¹²⁶:

Այս դեպքերը մի քիչ այլ նրբերանգներով հետևյալ կերպ է նկարագրում Անտոնիո դե Գուլեան: Նախիջևանը, ասում է նա, «... Հեշտությամբ ենթարկվեց թագավորին, որը ողջ բնակչության կողմից դիմավորվեց ցնծությամբ: Այնտեղից թագավորը իր ամբողջ բանակի հետ շարժվեց դեպի Օրդուբադ քաղաքը, որը նրան հանձնվեց առանց որևէ դիմադրության: Այս (քաղաքը) ունի յոթից ութ հազար բնակիչ, մեծ մասամբ հայեր, որոնք ենթարկվում են Երևանի փաշային: Տեղի կայազորի այստեղ գտնվող թուրքերը պարփակվեցին ամրոցի մեջ: Թագավորը շուգեց կանգ առնել այստեղ և պաշարել այն: Ճիշտ կռահելով, որ այս բոլոր փոքր վայրերի նվաճումը կախված կլինի մայրաքաղաքի՝ Երևանի, գրավումով: Օրդուբադից հետո թագավորն ուղիղ շարժվեց հայերով բնակեցված Ագուլիս (Iglis) քաղաքը, որը հանձնվեց նույնպիսի դյուրությամբ, ինչպես և նախորդը:

Ագուլիսից շարժվեց դեպի Զուլֆա, որը բնակեցված է երկրամասի ամենահարուստ հայ վաճառականներով և այդ պատճառով տարանցիկ առևտրի հանգուցակետ է և Մեծ Տիրակալը (սուլթանը) այն հանձնել էր իր մորը՝ եկամուտն ըստ հայեցողության ծախսելու, և ահա երեք տարի է, ինչ եկամուտը նա (մայրը) առանձնացրել էր իր կողմից նախատեսված ծախսերի համար: Զուլֆայի բնակիչները միշտ էլ արժանացել էին թագավորի բարեհաճ վերաբերմունքին, քանզի նրանցից շատերն իրենց սովորական առևտուրն էին անում (Իրանում) և արդեն ծանոթ էին թագավորին ու հովանավորվում էին նրա կողմից: Ուստի որպեսզի ցույց տան, որ իրենք ավելի են ոգեշնչված, քան ուրիշները շահի գալուստով, վերջինիս քաղաքին մոտենալու լուրը ստանալով հարձակվեցին մոտավորապես հարյուր հոգուց բաղկացած թուրքական կայազորի վրա, բոլորին սպանեցին և վերցնելով Մեծ Տիրակալի մոր պահեստում դրված դրամը, վերոգրյալ թուրքերի գլուխների և բանակի վարիքների համար սննդամթերքների հետ գնացին թագավորին ընդատալ և այս բոլորը քաղաքի բանալու հետ միասին հանձնեցին թագա-

վորին: Նա ընդունեց նվերը և իր նկատմամբ ցուցաբերված բարի կամքի համար նրանց խոստացավ ըստ արժանվույն հովանավորել:

Զուլֆայում թագավորը մնաց երեք օր, որի ընթացքում փայփայվեց ժողովրդի կողմից, որից հետո նա այնտեղից շարժվեց դեպի Զուլֆայից հինգ մղոն հեռավորության վրա գտնվող Նախիջևան քաղաքը, որը համարյա նույնպես ամբողջությամբ բնակեցված էր հայերով»¹²⁷:

Նախիջևանից հետո շահական բանակը շարժվեց ուղիղ դեպի Երևան և պաշարեց այն: Քաղաքի ամրոցում գտնվում էր 12.000-ոց թուրքական կայազորը Շերիֆ փաշայի գլխավորությամբ:

Երևանն այդ ժամանակվա ռազմական տեխնիկայի համար բավականին ամրացված քաղաք էր: Ուներ երկու ամրոցներ: Մեկը՝ Հին բերդը (Կալա-ի ատիկ) և նորը (Կալա-ի ջեդիդ), որը կառուցվել էր, ինչպես տեսանք, 1583 թվականին, Ֆերհադ փաշայի կողմից: Ուստի բերդի պաշարումը տևեց շուրջ մեկ տարի, չնայած Գ. Տեկտանդերի մոտ ասվում է, որ այն գրավվեց մի քանի շաբաթվա ընթացքում: Ավստրիական կայսեր ներկայացուցիչը, հավանաբար, նկատի ունի քաղաքի, և ոչ թե ամրոցի գրավումը: Նա գրում է. «Քաղաքը դիմադրեց հինգ շաբաթ, մինչև որ պարենի պակասը ստիպեց նրան անձնատուր լինել պարսիկներին, որոնք կոտորեցին բնակչության զգալի մասը»¹²⁸:

Ավելի ընդարձակ ու ավելի ստույգ են Երևանի գրավման առթիվ Անտոնիո դե Գուլեայի հաղորդած վկայությունները: Շահը, ասում է նա, հրամայեց վերցնել Երևանը, «որն ամբողջովին բնակեցված է հայերով, քաղաքի հողը մշակելի ու բերրի է և հարուստ ամեն տեսակի մթերքներով: Ամենահիշարժանն այն է այստեղ, թե ինչպիսի դյուրությամբ թագավորը նվաճեց այդքան մեծ քաղաքներ, էլ չենք խոսում նրանց կցված ավանների ու գյուղերի մասին, քանզի նրա թավրիդ մուտքից մինչև Երևանի պաշարումը նա հասցրեց կատարել երկու ամսից էլ պակաս ժամանակում»¹²⁹: Հետևաբար, Երևանի պաշարումը պետք է սկսված լինի 1603 թ. դեկտեմբերի սկզբներին:

Այնուհետև Անտոնիո դե Գուլեան շարունակում է. «Երևան քաղաքը հանդիսանում է ամբողջ Մեծ Հայքի կարևորագույն քաղաքը ու մայրաքաղաքը, ուր թուրքերը մեծ նշանակություն ունեցող մի ամրոց էին կառուցել տվել, ինչպես նրանք այդ բանն անում են նվաճված մյուս բոլոր նահանգներում, նրանց կարծիքով, որպես երկրամասի պաշտպանության լավագույն միջոց: Այսպես (Ուզդեմիր) Օսման փա-

¹²⁶ Iter Persicum, էջ 52:

¹²⁷ Antonio de Gouvea, էջ 223—224:

¹²⁸ Iter Persicum, էջ 62:

¹²⁹ Antonio de Gouvea, էջ 225:

շան, նվաճելով Մեդիան (Ատրպատականը), կառուցել տվեց փաշայի նստավայր Քավրիզի ամրոցը: Դրանից ևս մի քանի տարի առաջ, նախքան թուրքերի գրավումը, Խորաբանդա շահի և Մեծ Տիրակալ՝ Մուրադ 3-րդի ժամանակ, Ֆերհադ (Cadet) փաշան, նվաճելով Մեծ Հայքը, Երևանում կառուցել տվեց մի ամրոց, որը, իր կարծիքով, ի զորու էր ամբողջ նահանգը պաշտպանել: Երբ թագավորը եկավ այնտեղ, տեղի կայազորի պետն էր Շերիֆ փաշան՝ տասներկու հազար թուրք զինվորներով, որը քաշվեց ու պատսպարվեց ամրոցում: Այնտեղ ապստամբվեց նաև քաղաքի ու նրա շրջակայքի բնակչության մի մասը: Ամրոցից դուրս մնացին միայն ամենաաղքատներն ու թըշվառները...

Թագավորն իր այստեղ ժամանումից հետո անմիջապես չուզեց մտնել քաղաք, այլ տեղավորվեց մեկ մղոն հեռու գտնվող վայրում և հետախուզական նպատակով հեծյալ գունդ ուղարկեց իմանալու՝ ընդհանուր վիճակի և նոր բերդի տեղակայման հարցերի շուրջ: Հետախուզվածները նրան հաղորդեցին, որ քաղաքը խաղաղ էր և շնկատեցին որևէ մեկին, որ զենք կրած լիներ, և որ ամրոցը գտնվում էր պաշտպանական առումով բարվոք վիճակում ու նպատակադրվել է պաշտպանվել: Եվ այդ բոլորը ստույգ էր... Թագավորը... նկատի ունենալով այդ բոլորը, եկավ այն եզրակացություն, որ (Երևանի) ամրոցը հնարավոր է վերցնել միայն երկարատև պաշարումից հետո»¹³⁰:

Սկսելով պաշարումը, շահական զորքերը բոլոր կողմերից կրակ են տեղում Երևանի ամրոցների վրա: «Ամրոցը,— գրում է զե Գուվեան,— այնպես էր պաշարված, որ բացառված էր որևէ մեկի ելքն ու մուտքը... Եվ պաշարվածների համար ամենամեծ դժվարությունը ջրի հարցն էր, որը չէր կարող երկար բավարարել ամրոցի ներսի մարդկանց պահանջները»¹³¹: Իր հերթին, «թագավորը կանգնած էր երկու մեծ դժվարությունների առաջ. մեկը ձմեռնամուտն էր, քանզի այն երկրում ձմեռը խստաշունչ է և առատ ձյուն է տեղում: Երկրորդն այն էր, որ եթե թողներ պաշարումը, ապա ամրոցում պաշարվածներին հնարավորություն ու ժամանակ կտար Կոստանդնուպոլսից ուղարկված մի փաշայի միջոցով օգնություն ստանալ, ինչպես այդ մասին լուրեր էին տարածվում»¹³²: Սակայն շուտով Սեֆյանների ձեռքն ընկած մի թուրք հետա-

խույզից իմանում են, որ «...Մեծ Տիրակալը ծանր հիվանդ է և որ ոչ Կոստանդնուպոլսում և ոչ էլ սյուր այլևս խոսք չկա իր (շահի) դեմ բանակ ուղարկելու մասին»¹³³: Հիրավի «1012 թ. (ըստ մահմեդական տոմարի) և մեր տոմարի 1603 թ. դեկտեմբերի 15-ին թագավորը տեղեկացավ Կոստանդնուպոլսում թուրքերի կայսր Մեհմեդ 3-րդի մահանալու մասին, որին առանց որևէ միջոցառման հաջորդել էր, շնայած երիտասարդ տարիքին, Ահմեդը: Նրա մահը ցավով ընդունվեց իր պետության մեծամեծների կողմից: Թագավորը նույնպես վշտացածի տեսք ընդունեց, իսկ նրբ ոմանք հարցրին իրեն դրա պատճառը, նա պատասխանեց, թե իրեն զայրացնում է այն, որ նա (սուլթանը) մահացել է, առանց սեփական աչքերով տեսնելու (Սեֆյան Իրանի) վրեժը»¹³⁴:

Երևանի պաշարման ժամանակ ուղղման կարիքներից դրդված, շահը բաժան թշնամու կրակոցի ներքո կառավորության է լծել Երևանի հայ բնակչությանը: «Ամենից շատ տուժողները,— կարդում ենք զե Գուվեանի մոտ,— այս խեղճ ու դժբախտ հայերն էին, որոնք ձմեռվա այս բաժան իրականության պայմաններում լծվել էին կոռավորության»¹³⁵: Անշուշտ, միայն պատերազմի արհամարհից կամ կոռավորությունից չէ, որ հայ զանգվածները տուժում էին: Շահական զորքերը չէին եկել հայ ժողովրդին փրկելու ստրկական կապանքներից, այլ հաստատելու թուրքական լծից թիշ տարբերվող իրենց իշխանությունը: Ամրոցի պաշարման ժամանակ, ինչպես վկայում են հայ աղբյուրները, Մարառայան դաշտավայրի ու մերձակա շրջանների գյուղերն անխնա կողոպտվում էին, բնակչությունը գերեվարվում, իսկ աղջիկներին վերցնում էին զավթիչների հեշտանքին ծառայեցնելու համար: Նախավկայի վանքում արտագրված մի ձեռագրի հիշատակարանում ասված է, որ «...որդի Խուտապանտային (շահ Աբաս—Մ. Ջ.) երեկ ի Սպահան... գերեաց զազն քրիստոնէից և խիզանն հայկական ազգին որպէս գառինս վաճառէին միմիանց և... անմեղ մարդիկ կոտորեցին և շատ անմեղ տղայք ի գրկից մարն խլէին... և զազն հայոց վաճառէին»¹³⁶:

Երևանի պաշարման ժամանակ շահի մոտ ժամանեցին վրաց պատվիրակությունները՝ հպատակություն հայտնելու. նրանց մեջ էին

130 Նույն տեղում, էջ 234:

131 Նույն տեղում, էջ 237:

132 Նույն տեղում, էջ 238:

136 Ս. Տեր-Ավետիսյան, Յուզախ: Հեռագրաց նախավկայի, Հայկ. ԽՍՀ պատմության փնտխոտուտի արխիվ, ձեռ. էջ 36, հմմտ. Աջ. Հովհաննիսյան, Գրվազներ... հ. 2, էջ 83:

130 Antonio de Gouvea, էջ 227 - 228:

131 Նույն տեղում, էջ 230:

132 Նույն տեղում, էջ 230—231:

Կախեթի իշխան Ալեքսանդրը, Միմոնի որդի Գեորգին¹³⁷։ Այս իշխաններն իրենց պատրաստակամությունը հայտնեցին Սեֆյանների հետ համատեղ հանդես գալու թուրքերի դեմ։ Հետաքրքիր է այստեղ նշել այն, որ շահի մոտ մեկնելիս «Վրաստանի թագավորը», որի անունը չի հիշատակվում, ճանապարհին հանդիպում է Ավետրիա վերագարձող Գ. Տեկտանդերին և թարգմանչի միջոցով նրան տալիս է հետևյալ հարցը. «...Ինչու նորին կայսերական մեծությունը իրեն՝ քրիստոնյային, նույնպես դեսպանություն չի ուղարկում, այն ժամանակ, երբ Պարսկաստանի թագավորը մի հերետիկոս է, և իր կողմից ավելացրեց, որ ինքը կուզենար լավ հարաբերություններ հաստատել նորին մեծության հետ»¹³⁸։ Սրանից դժվար չէ կռահել, որ վրաց տիրակալն ակամա է մեկնում շահի մոտ ծառայության։

Երևանը դեռ պաշարված էր, երբ շահ Աբասն իր զորավարներից մեկին՝ Հոսեյն խան Զիյադողլու Կաշարին, ուղարկեց Երվանն ու Ղարաբաղը ասպատակելու։ Հոսեյն խանն ասպատակության ժամանակ «...սկսեց այրել գյուղերը, հնձել բերքը և ավերել ամեն ինչ, որ գտնվում էր Գյանջայի շրջակայքում ու այս միջոցով ստիպել ամբողջում ապաստանած փաշային բռնվել մարտի»։ Թուրքերի դեմ տարած հաղթանակից հետո «...սպանվեցին շորս հազար թուրքեր... և շրջակա գյուղերի ու ավանների ավարի հետ ներկայացան թագավորին՝ նրան նվիրելով բազմաթիվ այլ իրերի հետ տասներկու հազար ստրուկ կանայք, մեծ մասամբ աղջիկներ»¹³⁹։

Գանձակի անկումը Երիֆ փաշային ստիպում է դիմելու շահին՝ հաշտության բանակցությունների առաջարկով։ Երբ թուրքական կայսրը պետք էր, գրում է դե Գուվեան, «...իմացավ Գյանջայի պարտու-

¹³⁷ Antonio de Gouvea, էջ 239—240։ Շահի ծառայությունն ընդունած պապիկությունների մասին ահա թե ինչ է գրում Անտոնիո դե Գուվեան. «Երբեք երկիրը, որը մենք այսօր Գյուրջիստան ենք անվանում, բաժանված է շորս փոքրիկ թագավորների միջև, որոնցից մեկը և ամենազխավորը Միմոն խանն (Saman han) է, որը դեռևս կենդանի է ու գտնվում է Կոստանդնուպոլսում գերության մեջ։ Վերջին պատերազմներում պարսիկների կողմն անցնելով թուրքերի դեմ կովելու համար, իր հոր բացակայության ժամանակ նրա ավագ որդի Գեորգի խանը (Gorgin han) կառավարում էր պետությունը։ Այս իշխանը, որի երկիրն այնքան մոտ է Մեծ Հայքին, տեղեկանալով հարևան թագավորի հաղթանակների մասին հարևան մի երկրում նրա մոտ ուղարկեց դեսպանություններ և մեծ քանակությամբ սննդամթերք, պատրաստակամություն հայտնելով ծառայել նրան այս պատերազմում և կատարել նրա ցանկացած հրամանները։ Այս նույն երկրի մի այլ թագավոր՝ Ալեքսանդր խանը, որի որդին երկար տարիներ ի վեր ընդունել էր մահմեդականություն և գտնվում էր թագավորի կողքին, արեց նույնը»։

¹³⁸ Iter Persicum, էջ 64—65,

¹³⁹ Antonio de Gouvea, էջ 246,

թյան լուրը, որոշեց նետվել նրա (շահի) գիրկը և իր ներկայացուցչներին միջոցով ներում հայցել»¹⁴⁰։

Մտնելով Երևան, շահն «ամբողջում գտավ մեծ հարստություններ՝ ոսկի, արծաթ, մետաքս և այլ ապրանքներ, և բացի այդ՝ 400 թնդանոթ, որից 25-ը ահռելի մեծության էին»¹⁴¹։

Երևանը գրավելուց հետո շահը 1604 թ. ամռան սկզբին մեկնում է Սևան՝ հանգստանալու¹⁴², միաժամանակ Ղարաբաղ ուղարկելով 15 հազարանոց մի բանակ՝ Ալաշկուլի բեկ Կաշարի գլխավորությամբ, որը համաձայն շահից ստացած հրահանգի, երեք օր շարունակ հրի ու սրի է մատնում երկիրը ու մեծ ավարով վերադառնում շահի մոտ։

Գեռ մինչև Երևանի բերդի անկումը, 1603—1604 թվականների ձմեռվա ցուրտ պայմաններում իր գլխավոր զորավարներից մեկին՝ Ժագումով հայ¹⁴³ Ալլահվերդի խանին շահը հրամայում է ասպատակել Արևմտյան Հայաստանի գավառները և բնակչությանը բռնի տեղափոխել Արարատյան դաշտավայր։ Ալլահվերդի խանն ասպատակեց ու ավերեց Երկրամասը (Արծկեն և Արճեշը)¹⁴⁴։ Ալլահվերդի խանի՝ արևմտյան գավառները կատարած արշավանքի ու այնտեղ ստեղծված աղետալի վիճակի մասին մասնամասն տեղեկություններ են հաղորդում հայկական աղբյուրները։ Այսպես Ա. Գավրիսեցու մոտ կարդում ենք. «Իսկ շահն միշտ նստեալ ի վերա բերդին Երևանու պատերազմէր, ոչ դադարէր յաւերելոյ զաշխարհս, և գերելոյ զազոս Հայոց. քանզի առաջեաց զորագուլիս բազում զօրօք ի կողման Արզրումայ, որք գնացեալ աւերեցին զերկիրն Բասենու, և դնուսայ՝ և զղաշտն Արզրումայ՝ և զայլս, ուր և կարացին հասանիլ, քանդեալ՝ աւերեալ, այրեալ՝ և ապականեալ զերկիրն և զշէնսն, զինչս և զստացուածս կողոպտեալ, և զարս սպանեալ, և զկանայս և զմանկունս գերեցուցեալ բերին չմրեան ի բանակն իւրնանց»։

Սոյնպես և յերկիրն Արճիշու առաքեաց զօրս՝ որք գնացեալ այրարին շատ վերոյասեցելումդ աւար և գերութիւն և ապականութիւն ազգին հայոց ի ժամանակս ձմեռայնոյ»¹⁴⁵։ Իսկ մի քիչ ներքև պատմագրի մոտ կարդում ենք հետևյալ մանրամասնությունները. «...և յարձակեցաւ (խանն) ի վերայ

¹⁴⁰ Նույն տեղում, էջ 241։

¹⁴¹ Նույն տեղում, էջ 248։

¹⁴² Նույն տեղում։

¹⁴³ Նույն տեղում, էջ 69։ Դե Գուվեայի վկայությամբ շահ Աբասը սիրել է ասել, որ «Ամբողջ Պարսկաստանը ենթարկվում է ինձ, իսկ ես՝ Ալլահվերդի խանին»։ Ալլահվերդի խանի հայկական ծագման մասին խոսում են եվրոպական և այլ աղբյուրներ։

¹⁴⁴ Antonio de Gouvea, էջ 253։

¹⁴⁵ Ա. Գավրիսեցի, էջ 30։

գաւառաց աշխարհին, և զամենայն երկիրն Արծկէոյ հաւասար աւերեաց, և հրդեհ արկեալ այրաց, և զամենայն արս կոտորեաց՝ և զինչս, և զստացումս՝ զուստերս և զզստերս և զկանաչս յաւար և ի գերութիւն առեալ: Եւ եղեալ անտի եկն յԱրճէշ՝ և ի Բերկրի, և ի Վան, և յամենայն գաւառս նոցա արար այնպէս ... և ժողովեալ ամենայն գերեալսն, և հօրանս անդեոց, և ջոկս ոչխարաց, և երեմակս ձիոց, իբրև մեծ և յորդեալ հեզեղ զամենեսան վարեալ ածեալ բերեալ հասուցին, յԵրևան ի լիութիւն բանակին Պարսից»¹⁴⁶: Արևմտյան Հայաստանից Արարատյան դաշտ քշված բնակչության թիվը մի հիշատակարանում հաշվում է 60.000 մարդ, առանց սպանվածների ու մահացածների¹⁴⁷: Միայն Արճեշից, Բերկրիից ու Վանից Ալլահվերդի խանը տեղահան արեց 23.000 հայերի¹⁴⁸:

1604 թ. ապրիլին շահի հրամանով սեֆյան մի այլ բանակ՝ Համադանի կառավարիչ Հյուսեյն խանի և ծագումով հայ Կարլխա խանի գլխավորությամբ ասպատակում է Կարսն ու իր շրջակայքը, որին շուտով միացավ նաև ինքը՝ շահը: «Այդ նույն ժամանակ, — կարդում ենք դարձյալ դե Գուվեայի մոտ, — թագավորը Երևանից հինգօրվա ճանապարհին գտնվող Կարս քաղաքի մոտակայքն ուղարկեց հեծյալ մի բանակ Համադանի կառավարիչ Հյուսեյն խանի և Կարլխա սուլթանի գլխավորությամբ: Փաշան, որը գտնվում էր (Կարսի ամրոցի) ներսում, շէր ուզում դուրս գալ այնտեղից: Պարսիկները ասպատակության ընթացքում այրեցին հացահատիկը, ավերեցին ու քարուքանդ արեցին երկիրը, ինչքան որ կարողացան: Հասցված վնասը շատ մեծ էր... Այս բոլորից հետո բանակը հետ վերադարձավ: Թագավորը կանգ առավ Կարսից յոթ մղոն հեռավորության վրա գտնվող Շորագլալի ամրոցի մոտ և Շահկուլի խանին հրամայեց Իսպահանի զորքով հարձակվել (Կարսի ամրոցի վրա), որը և կատարվեց հաջողությամբ»¹⁴⁹:

Այս բոլոր իրադարձությունների ժամանակ ջալալիների շարժումներից կաթվածահար եղած Թուրքիան պարզապես դիտողի դերում էր: Այս հանգամանքը հատուկ շեշտում է դեպքերին մոտիկից հետևող դե Գուվեան: Նա գրում է. «Արդեն մեկ տարուց ավել էր, ինչ թագավորը տիրացել էր Թավրիզին և բազմաթիվ այլ քաղաքների, որոնք չունենալով հանդերձ այն մեծ նշանակությունը, ինչ ուներ առաջինը, այնուամենայնիվ կորուստն այնքան մեծ էր, որ թուրքին զգալ պետք էր տալ,

սակայն (սուլթանի կողմից) շուղարկվեց և ոչ մի օգնություն և ոչ մի զորավար, որը կարողանար ի չիք դարձնել Օսմանյան կայսրության կրած հանապազօրյա կորուստներն ամբողջ Ասիայում: Եթե մեկն ուզենա դրա պատճառն իմանալ, ապա պետք է նշել, որ դա ոչ թե Մեծ Տիրակալի կամ նրա զորավարների անհոգության հետևանքով էր, այլ ինչպես այդ մասին միաձայն վկայում էին այս պատերազմի ժամանակ գերի ընկած (թուրք) սպաները, ուներ բազմաթիվ պատճառներ: Առաջինն ու գլխավորն այն էր, որ բոլոր քրիստոնյա պետություններին Պարսկաստանի թագավորի ուղարկած դեսպանությունները Մեծ Տիրակալին պահում էին խոտվահույզ վիճակում: Այդ դեսպանություններին ցուցաբերված լավ ընդունելությունը Մեծ Տիրակալին պատկերացում էր տալիս, թե ինչ էր նշանակելու նրանց միջև կայանալիք դաշինքը, երբ Եվրոպայի վրայով կատարվելիք հարձակումը սպառնալու էր նրա եվրոպական տիրույթներին կամ գեթ նրա մեծ մասին... Նախ՝ նրա վիճակը խառնաշփոթ էր և թուլացած քաղաքացիական պատերազմներից այնպես, որ բանակը բաժանելով առանձին փոքրիկ մասերի (սուլթանը) դրանց ուղարկում էր տարբեր անկյուններ: Եվ այս ժամանակ Մեծ Տիրակալը ծանր հիվանդացավ այնպես, որ իր վեզիրներն ու բարձրաստիճան պաշտոնյաները չէին հանդգնում նրան հաղորդել Կոստանդնուպոլիս հասնող՝ Պարսկաստանի թագավորի տարած յուրաքանչյուր հաղթանակի ու քաղաքների գրավման մասին վատ լուրերը: Այսուհանդերձ, երբ իմացան Մեծ Հայքի մայրաքաղաք Երևանի պաշարման ու օգնության կարիքի մասին, որոշեցին այդ մասին հայտնել Մեծ Տիրակալին, որը ասիական ճակատի համար գերագույն հրամանատար նշանակեց Սինան փաշային, որին թուրքերն անվանում են Ջղալեի որդի, և որը զորավարների մեջ ամենատեղյակն էր (պարսկական գործերին), հետևաբար՝ ամենակարողը այս հարցում: Օսման փաշայի (Ուզղեմիր) հետ գտնվելով Թավրիզում ու Ֆերհադ փաշայի հետ Երևանում՝ պարսկական գործերին քաջատեղյակ էր, կուտակել էր ռազմական փորձ»¹⁵⁰:

Մեհմեդ 3-րդի մահից հետո սուլթանական գահին բազմած Ահմեդ 1-ինը Ջղալազադեին թողնում է իր պաշտոնում¹⁵¹:

1604 թ. նոյեմբերի 8-ին Ջղալազադեի զորքերն արդեն հասել էին Կարսի մատույցները¹⁵²: Շահին թվում էր, թե սերասքյարը կարող է իր դեմ ռազմական գործողություններ ծավալել միայն հաջորդ տարվա

146 Նույն տեղում, էջ 32—33:

147 Մատ., ձեռ. № 5315, էջ 208ա—208բ:

148 Առ. Դավրիժեցի, էջ 33 («...դերեցան այսրան անձինք քրիստոնեից զորոց թիւն իրոն (23.000), ասն զոլ՝ թող զսպանեալսն»):

149 Antonio de Gouvea, էջ 254:

150 Antonio de Gouvea, էջ 260—261:

151 J. Hammer, VII, էջ 57:

152 Նույն տեղում, էջ 61:

գարնանը, սակայն նրա ենթագրություններն ի դերն ելան: Ուստի նրան մնում էր ամենակարճ ժամանակամիջոցում կազմակերպել նահանջը, երկիրը ամայացնել, բնակչությանը տեղահան անել այնպես, որ թուրքական բանակն այլևս ցանկություն չունենա շարունակելու արշավանքը դեպի Իրանի խորքերը: Շահի հրեշտակն այս հրամանը ամենայն դաժանությամբ ի կատար ածվեց: Ամբողջ երկրամասը Կարսից մինչև Արաքս գետը ամայի ու անմարդարնակ դարձավ: Տեսնելով այս վիճակը, Սինան փաշան որոշեց մեկնել Շիրվան՝ իր որդու մոտ և գարնանը վերսկսել պատերազմական զործողությունները շահի դեմ: Սակայն ներկայիս ասպետամբեցին ու սերասրյարին ստիպեցին նահանջել դեպի Վան¹⁵³: Նահանջը կատարվում էր Արաքսի ու Մակվի վրայով, ցրտաշունչ ձմեռվա պայմաններում: «Առանց հանդիպելու թշնամուն, — գրում է ղե Գուվեան, — նրանք (թուրքերը) ծանր կորուստներ ունեցան: Շատերը մահացան ցրտից ու գետահեղձ եղան, եղանակը կոտորում էր նրանց: Վերջապես նրանք խուճապի մատնված Վանի ամրոցը հասան կիսամեռ վիճակում»¹⁵⁴:

Այս խժգժություններից ամենից շատ, անշուշտ, տուժեցին բրոնազաղթի կամ, ինչպես ընդունված է ասել, «Մեծ սուրբունի» ենթարկված հարյուր հազարավոր հայեր: Տեղահանման էր ենթարկվում գերազանցապես Արարատյան դաշտավայրի հայ և մահմեդական բնակչությունը, իսկ Արևմտյան Հայաստանի տարբեր մասերից՝ Վանից, Մուշից, Արճնից, Բերկրից, Առծկեից, Երզնկայից, Դերջանից, Բարբերդից, Սպերից, Էրզրումից, Ալաշկերտից, Շիրակից, ինչպես նաև Մակվից, Խոյից, Սալմաստից, Ուրմիայից, բռնագաղթվածները, ինչպես այդ մասին նշում է Առ. Դավրիժեցին, բացառապես հայեր էին¹⁵⁵:

Այդ բռնագաղթին, որպես ականատես, տասնյակ էջեր է նվիրել ղե Գուվեան¹⁵⁶, Որպես ականջալուրներ, բռնագաղթի մասին սրտաձմլիկ տողեր են թողել նաև այդ դեպքից մի տասը-տասներկու տարի հետո Իրանում գտնվող իտալացի Պիետրո դելլա Վալլեն և իսպանացի Գարսիա դե Սիլվան, ինչպես և ուրիշ հեղինակներ: Վերջիններս իրենց տեղեկությունները հիմնականում քաղել են բռնագաղթված հայերից:

Անտոնիո դե Գուվեային ընթերցելիս մի պահ թվում է, թե ինքը էլ մասնակից ես այդ աներևակայելի տառապանքներին, այն աստիճան վառ են նկարագրությունները: Սակայն ղե Գուվեայի՝ բռնագաղթի մա-

սին թողած պատմվածքը հիշարժան է նաև հայ ժողովրդի ազգային ճակատագրի շուրջը հեղինակի դատողություններով: Ավելորդ չենք համարում քաղվածաբար բերել այդ հատվածները:

Շահի հրամանն այնպիսին էր, որ հայերին տեղահանության ենթարկվելու համար տրված էր ընդամենը երկու օր: «Եթե մենք փնտրելու լինենք մի ժողովրդի՝ խլված իր սեփական երկրից և հին բնակավայրից, ապա մենք նրան կգտնենք հայերի մեջ: Նրանք բռնությամբ ու ուժով հանված են պարսից թագավորի հրամաններով և նրանք, ովքեր ի կատար են ածել այդ հրամանները, այնպիսի քմահաճույք ու կատաղություն էին դրսևորել, որ հայերը երկու սովորական օրվանից ավել ժամանակ չունեցան թողնել այն ծննդավայրերը, ուր մեծացել էին, եկեղեցիները, ուր նրանց հայրերն ու մայրերը թաղված էին, տները, որ իրենք կառուցել էին, այգիները, որ տնկել էին, ժառանգությունը, որ ստացել էին, կարճ՝ այն ամենը, ինչ մարդուն գոհացում կարող է պատճառել և հաճելի հիշողություններ արթնացնել»¹⁵⁶:

Դե Գուվեան եվրոպացի ընթերցողին է ներկայացնում հայ ժողովրդի դառը վիճակն իր բիրելիական հայրենիքում՝ թուրք ու պարսիկ տիրապետողների կրնկի տակ. «Եթե մենք (աշխարհում) փնտրենք հարստահարված ու ոտնակոխ արված մի ժողովուրդ, ապա ահավասիկ քեզ այս ժողովուրդը, երբ նրանք թուրքերի հպատակներն էին, հարկերի հետ միասին տալիս էին իրենց ամենաբնտիք զավակներին գինվորականության համար (ինչպես դա թուրքերի սովորությունն է), վտանգ, որից ապահովված չեն նաև Պարսկաստանի թագավորի գերիշխանութան տակ, եթե Աստուած մի ճար շանի: Այս խեղճ ժողովուրդն այնպես է շրջապատված անագորուն ազգերով, ինչպիսիք են մի կողմից՝ թուրքերը, մյուս կողմից՝ պարսիկները, այլ կողմերից նրանց հարևաններ են թաթարներն ու արաբները, որոնց ասպատակություններին և ավազակություններին ենթակա են ամեն օր»¹⁵⁷:

Թուրք-իրանական այս պատերազմում, կարդում ենք ղե Գուվեայի մոտ, «պատերազմի հիմնական թատերաբեմը Մեծ Հայքն է»: Ուստի Սեֆյանները Հայոց հինավուրց երկրի վրա հարձակվելիս և նահանջելիս «ավերեցին և ամայի դարձրին ողջ երկիրը, այնպես որ քսանից ավելի հարուստ ու մարդաշատ քաղաքներ անգութ ու տմարդի եղանակով ավարի ենթարկվեցին, առանց հաշվի առնելու ավաններն ու գյուղերը, որոնք բազմաթիվ են և այնքան բազմամարդ, որ միայն Երևանի գավառում հազար հինգ հարյուրից ավել են, որոնցից մի քանիսը

¹⁵³ Նույն տեղում, էջ 62—63:

¹⁵⁴ Antonio de Gouvea, էջ 260:

¹⁵⁵ Առ. Դավրիժեցի, էջ 450—451:

¹⁵⁶ Antonio de Gouvea, էջ 342—343:

¹⁵⁷ Նույն տեղում, էջ 343:

շորս հարյուրից մինչև հինգ հարյուր բնակիչ ունեն: Գլխավոր քաղաքներն են՝ Երևանը, Նախիջևանը, Շարուրը և Գիլսը (Ագուլխը)»¹⁵⁸:

Երբ ընթանում էր պատերազմը ու քաղաքները պաշարված էին, ասում է պորթուգալացի դիվանագետը, «մոտավորապես հարյուր հոգուց բաղկացած պարսից զորագնդերը մտնում էին գյուղերը և այնպիսի ավերածություններ էին գործում, որ անհնարին է պատկերացնել»¹⁵⁹: Այնուհետև, շարունակում է նա, «ամեն ինչ կողոպտելուց հետո նրանք սկսեցին գերեվարել երկսեռ երեխաներին՝ իրենց ծառայեցնելու կամ վաճառելու համար, ապա սկսեցին գերեվարել կանանց և աղջիկներին ու իրենց զգայական ստոր ցանկություններին հագուստը տալուց հետո վաճառել կամ տեղավորել հասարակաց տներում, որպեսզի նրանք իրենց համար դրամ վաստակեն: Այս ճանապարհով գերեվարված ու տարբեր տեղեր ուղարկված կանանց և աղջիկների թիվն անհավատալի չափով մեծ է և ավել է, քան հարյուր հազար հոգի և բոլորովին ստույգ է, քանզի եթե նրանք յուրաքանչյուր տեղից վերցրած լինեին տասը հոգի (դա նվազագույնն է, որ նրանք կարող էին վերցնել): այս թիվը հեշտությամբ կմեծանար, եթե նկատի ունենանք այս երկրում նրանց ավերված քաղաքների, ավանների և գյուղերի թիվը: Ողորմելի մի տեսարան էր այս, որ կարող էր ժափկացնել ամենակարծր սիրտն անգամ»¹⁶⁰:

Երբ սերասբեր Սինան փաշան մոտեցավ Կարսին, այնուհետև կարդում ենք դե Գուլեայի մոտ, «հրամայեց ամբողջովին անմարդաբնակ դարձնել երկիրը, որտեղից պիտի անցնեին թուրքերը, որպեսզի նրանք չկարողանային գտնել և ոչ մի ապաստարան և ոչ էլ ուտելիք իրենց և իրենց ձիերի համար: Նա (շահը) զորագնդեր ուղարկեց գլխավոր քաղաքներն ու գյուղերը և ամենայն խստությամբ պատվիրեց կատարել բնակիչներին (տեղահան անելու) իր հրամանը: Նրանք այնպես կատարեցին (շահական) հրամանը, որ ինչպիսի ցավ էլ պատճառած լիներ այս թշվառականներից յուրաքանչյուրի համար հինավուրց հայրենիքի սերը և ինչպիսի դժվարություններ էլ ներկայացներ այս տեղահանումը, այսուհանդերձ, որոշեցին ճամփա ընկնել, քանզի նրանց հրամայում էին ոչ միայն խոսքերով ու սպառնալիքներով, այլև (պարսիկ զինվորները) սուրը ձեռներին իրենց մոտ էին բերում յուրաքանչյուր բնակավայրի ավագներին և շահի անունից երդվելով սպառնում, որ

158 Նույն տեղում, էջ 347—348:

159 Նույն տեղում, էջ 348—349:

160 Նույն տեղում, էջ 349:

եթե որոշակի ժամերին նրանք ճանապարհ չընկնեն և չդատարկեն քաղաքներն ու գյուղերը, ինչպես իրենց հրամայված էր, ապա կկտրեն և նրանց, նրանց կանանց և երեխաների գլուխները, կայրեն քաղաքները ու կոշնչացնեն նրանց...

Այս խեղճ հալածվածների տարակուսանքը, ողբն ու կոծն այնպիսին էր և այնքան մեծ, որ կարող էր շարժել անգամ ամենամոտեցած մարդկանց սիրտը, քանզի ոչ ոքի մնալն անհնարին էր ու նրանք զուրկ էին դրա ճարը տեսնելու որևէ մարդկային հնարից... նրանց ողբերը սիրտ էին շարժում. անհրաժեշտ էր տեսնել, թե ինչ էին անում նրանք քաղաքների դռների առաջ, ոմանք գետին էին ընկնում և բազմիցս գրկում ու համբուրում էին հողը, ուրիշները հրաժեշտ էին տալիս իրենց հայրենիքին և բնակարաններին այնպիսի սրտամոռմոք բառերով, կարծեք թե պատերը զգացում ունեին»¹⁶¹:

Դե Գուլեան 60 հազար ընտանիքից բնակավայրից բռնագաղթածների թիվը: Մեծ սուրբունից զերծ են մնացել միայն այն գյուղերը, որոնք հեռու են գտնվել թուրքական բանակի արշավանքի երթուղուց¹⁶²:

Հազարավոր զոհերի գնով բռնագաղթվածների զանգվածն անցավ Արաքս գետը: Նրանց կրած անլուր տառապանքների, սովի ու դրա հետևանքով առաջացած մարդակերությունների, կամայականությունների, սեֆյան հրամանատարների կատարած վալրագությունների, ջրահեղձման դժնդակ պատկերների մասին պատմում են դե Գուլեան, եվրոպացի մյուս հեղինակները, հայկական ձեռագրերի հիշատակարանները¹⁶³, Առ. Գալբրիթեյին, Գր. Գարանաղյան, հայ կաթողիկե քահանա Ավգուստինոս Քաջեցին¹⁶⁴ և այլք: «Ինչպիսի դժբախտությունների տեղի տվեց այդ ողբերգական տեղահանումը,— բացականում է դեռևս վալլեն,— ինչպիսի սպանությունների, ինչքան մարդիկ մահացան սովից, ինչպիսի հափշտակումներ, աղջիկների ու կանանց բռնաբարումներ, ինչքան երեխաներ հուսահատություն պատճառով խեղդվեցին կամ ջրա-

161 Նույն տեղում, էջ 354—364:

162 Նույն տեղում, էջ 355: „On compte plus de soixante mil mesnages“.

163 Պատմական վեճի են բռնի տեղահանումը նկարագրող զգալի քանակությամբ հիշատակարաններ, որոնցից ամենաընդարձակն, ըստ երևույթին, Ն. Ալիյանի հրատարակածն է (տե՛ս Ն. Ալիյան, Բաղեշի դպրոցը» (1500—1704 թթ.), Վիեննա, 1952, էջ 185—187): Մյուս հիշատակարաններից տե՛ս Մատ., ձեռ. № 5345, էջ 206բ—207բ, № 4692, էջ 613բ, № 6093, էջ 3556, № 3843, էջ 189բ, № 5057, էջ 293ա, № 4721, էջ 655բ—656բ, № 4515, էջ 363, 364—365, 369, 373—374 և այլն:

164 Itinéraire du très révérend frère Augustin Badjéisi, traduit par M. Brosset, Journal Asiatique, Paris, 1837.

հեղձ արվեստին իրենց հարազատ հայրերի աչքի առաջ, այլք սպանվեցին պարսիկ ղեկավարների կողմից կամ խլվեցին իրենց մոր գրկից ու նետվեցին փողոցներն ու ճամփաները՝ դառնալու համար կենդանիների սնունդ, կամ տրորվեցին բանակի ձիերի և ուղտերի ոտքերի տակ մի ամբողջ օր։ Հայրերի՝ իրենց երեխաներից, ամուսինների՝ իրենց կանանցից, եղբայրների՝ իրենց քույրերից ինչպիսի դժոխային բաժանում, որոնք ուղարկվեցին Պարսկաստանի հեռավոր նահանգները՝ հույս չունենալով այլևս իրար գտնելու։ Կազմվեցին տղամարդկանց ու կանանց ճամբարներ, որոնց ղգալի մասն էժան գնով վաճառվեցին, ինչպես անասուններ»¹⁶⁵։

Նման վկայությունների շարանը մեծ է, սակայն բավարարվենք այսքանով։ Նշենք ևս մի անգամ, որ տեղահանման գլխավոր ստրատեգիական պատճառը երկրի այն մասերի ամայացումն էր, որտեղից պիտի անցներ օսմանյան բանակը և, որ ամենագլխավորն էր, բռնի տեղահանվող բնակչությունն ամեն կերպ պիտի նպաստեր Իրանի տնտեսության ու առևտրի զարգացմանը։ Առ. Գավրիժեցին միանգամայն ճիշտ բացատրություն է տալիս շահի դիվային այդ հրամանի հետամտած նպատակներին. «Զի եկեալ օսմանցւոցս,— գրում է նա,— անբնակ գտանիցեն զերկիրն ի մարդկանէ։ Եւ ոչ գացի կերակուր և ուճիկ և այդ ինչ պիտոյք նոցա՝ և անասնոց նոցա, և առ ի շոյէ հարկաւորաց վտանգեսցեն զօրքն օսմանցւոց։ Նաև ժողովուրդին լինիցին նմա անզերծանելի հարկատու՝ ծառայք, և հողագործք մինչև զյաւիտեան» (ընդգծումը մերն է—Մ. Զ.)¹⁶⁶։ Ժան Շարդենն իր հերթին անդրադառնալով այս նույն հարցին, գրում է հետևյալը. «Աբաս Մեծն էր, որ ավերեց Զուլֆան և այն ամեն ամրությունները, ինչ ուղղաբանաց ալիքի ստեղծել էր. նույն այդ պատճառով նա ավերեց նախիջևանը և Հայաստանի նույն գծի վրա գտնվող այլ վայրերը, որպեսզի թուրքական բանակին զրկեր պարենից։ Այս նուրբ քաղաքական գործիչն ու մեծ գորավարը, տեսնելով իր ուժերի թուլությունը թշնամու նկատմամբ, և մտածելով, թե ինչ միջոցներով է հնարավոր խոչընդոտել յուր քաղաքային տարի թուրքական զորքերի մուտքը Պարսկաստան, նվաճումներ կատարել այնտեղ ու իր գերիշխանության տակ պահել, որոշեց ամայացնել էրզրումի և Թավրիզի արանքում ընկած Երևանի ու նախիջևանի ուղղությունը ձգված երկիրը, որ թուրքերի արշավանքի սովորական ուղին էր և նրա բանակի պարենավորման վայրը։ Նա այնտեղից տեղափոխեց բնակչությունն ու անասնահոտերը, ավերեց ամեն

տեսակի շինությունները, հրկիզեց դաշտերն ու այգիները և թունավորեց նույնիսկ ջրի աղբյուրները»¹⁶⁷։

Վերագրանանք թուրք-իրանական ուղղաբանական ընդհարումների պատմությանը։ 1605 թ. գարնանը շահ Աբասը թուրքերին լարված վիճակում պահելու նպատակով Շիրվան ուղարկեց սեֆյան մի բանակ վրաց Ալեքսանդր թագավորի որդի Կոստանդինի գլխավորությամբ, վերջինին նվաճումից հետո նշանակելով երկրի կառավարիչ։

Այդ նույն ժամանակ շահը վանում գտնվող Սինան փաշայի դեմ ուղարկեց երեսուն հազարանոց ընտրյալ հեծելազոր Ալավերդի խանի գլխավորությամբ, մեծ նշանակություն տալով ապագա ճակատամարտի ելքին, որը որոշելու էր իր՝ շահի, հետագա ճակատագիրը։ Նա դե Գուվեանի հավաստիացումով Ալլահվերդի խանին հայտնեց որ «...այս հանձնարարությունը լինելու է մինչ այդ տվածների մեջ ամենակարևորագույնը, որից կախված է լինելու իր բոլոր նվաճած երկրների հարցը՝ կորուստը կամ պահպանումը»¹⁶⁸։ 1606 թ. մայիսի 21-ին Ալլահվերդի խանը երևում է վանի պատերի տակ¹⁶⁹։ Տեղի է ունենում մեծ ճակատամարտ, որը վերջանում է սեֆյանների հաղթանակով։ «Թվական առումով պարսիկները,—գրում է դե Գուվեան,—գերազանցում էին թուրքերին և ավելի լավ էին զինված»¹⁷⁰։ Այդ ճակատամարտում թուրքերը ուղղի դաշտում թողնում են հինգ հազար սպանված. թշնամու ձեռքն է անցնում մեծ բանակությամբ զենք ու զինամթերք, որոնց թվում 150 հրանոթ¹⁷¹։

Նա չի ընկճում սերասքեր Սինան փաշային, որը նահանջում է Արևելք։ Նա շտապ կարգով ձեռնամուխ է լինում նոր բանակի ստեղծմանը, «ենթադրելով, որ եթե պարսիկների դեմ հաղթանակ տանի, ապագա մեծապես մոռացնել կտա անցյալը»¹⁷²։ Կարճ ժամանակամիջոցում Սինան փաշային հաջողվում է ստեղծել հարյուր հազարանոց մի բանակ, որը սկզբում որոշ երկյուղ է առաջացնում շահի մոտ։

1605 թ. աշնանը թուրքական բանակը Վասպուրականից շարժվում է դեպի Իրանական Աղբյուրան։ Շահը, իր հերթին, բանակով շարժվում է դեպի Խոյ։ Նրա նպատակն էր թվական առումով գերազանցող թուրքական բանակի նկատմամբ վարել պարտիզանական կռիվներ։ Սա-

167 Jean Chardin. II, էջ 304—305.

168 Antonio de Gouvea, էջ 269.

169 նույն տեղում.

170 նույն տեղում, էջ 270.

171 նույն տեղում, էջ 274.

172 նույն տեղում, էջ 284.

¹⁶⁵ Pietro della Vallé, էջ 338.

¹⁶⁶ Առ. Գավրիժեցի, էջ 38.

կայն Սոֆիանի մոտ տեղի տալով Ալլահվերդի խանի խորհուրդներին, որոշում է վճռական ճակատամարտ տալ թուրքերին: Ճակատամարտն ավարտվում է թուրքական բանակի լիակատար ջախջախումով: Օրվա հերոսն Ալլահվերդի խանն էր: Թուրքերը ուզում էին դաշտում թողնելին ավելի քան 20 հազար սպանված: Սինան փաշան նահանջում է վան, որտեղ նրան է ներկայանում քրդական մի զորաբանակ՝ Հուսեյն Ջանփուլադի գլխավորությամբ: Պատրվակ բռնելով, որ վերջինս ժամանակին օգնություն չի եկել, Սինան փաշան անհապաղ գլխատել է տալիս քուրդ ցեղապետին, որը և Հուսեյն Ջանփուլադի եղբայր Ալի Ջանփուլադին առիթ է տալիս բարձրացնելու ապստամբության դրոշ, մի ապստամբություն, որը այնպես թուրքական մեջ պահեց Արևմտյան Հայաստանի մի զգալի հատվածը:

Օսմանցիների պարտությունն այն աստիճան ազդեց Սինան փաշայի վրա, որ նա Դիարբեքիրում, ուր նահանջել էր, ինքնասպանություն մեջ վերջ տվեց իր կյանքին: Բարոն դե Սալինյակը 1606 թ. մարտի 29-ին թագավորին գրած նամակում նրա մահը բացատրում է որպես հետևանք այն ծանր հոգեկան ապրումների, որ նա ունեցավ Սոֆիանում կրած պարտությունից հետո: «Ասում են,— գրում է ֆրանսիացի դեսպանը,— որ նա մահացավ ծայրահեղորեն վշտացած այն դժբախտություններից, որ պատահեցին իր հետ»¹⁷³:

1607—1608 թթ. ջալալիների նոր հուժկու ապստամբությունները օսմանցիներին հնարավորություն չտվեցին պատերազմական գործողություններ ձեռնարկել Սեֆյանների դեմ: Իսկ այդ նույն ժամանակամիջոցում օգտվելով այս բարենպաստ քաղաքական իրավիճակից, Սեֆյանները շարունակում էին իրենց նվաճումները Անդրկովկասում, թուրքական կայսրները դուրս վտարելով Շիրվանից ու Վրաստանից: Այդ ուղղման գործողությունների ընթացքում շահը կարգադրում է, ինչպես վկայում է դե Գուվեան, վերակառուցել Երևանի բերդը և քաղաքում թուրքական ցեղերին վերաբնակեցնել: «Երբ Թուրքիա փախած Երևանի բնակիչները տեսան, որ թագավորը վերակառուցել էր տվել ամրոցը,— կարդում ենք դե Գուվեայի մոտ,— «...մարդիկ ուղարկեցին թագավորի մոտ թույլտվություն խնդրելով վերադառնալու իրենց գյուղերն ու տները, որը և թագավորն արեց ընդհանրապես բոլորի նկատմամբ, այնպես որ, կարճ ժամանակվա ընթացքում քաղաքը վերաշինվեց ու վերաբնակվեց մահմեդականներով և ոչ քրիստոնյա հայերով, որոնց թագավորը արտրել էր Պարսկաստանի խորքերը»¹⁷⁴:

Ի դեպ, Իրան տեղափոխված հայերի մասին բավականին ընդարձակ վկայություններ են թողել ժամանակակից ականատեսներից Պիետրո Գելլա Վալլեն, Գարսիա դի Սիլվա Ֆիգուերան և ուրիշներ: Ավելորդ չենք համարում այստեղ անդրադառնալ այդ հարցերին: Գիլան ու Մազանդարան տեղափոխված հայերին շահը նպատակադրվել էր օգտագործել որպես այգեգործներ, շերամապահներ, կառուցող վարպետներ և այլն: Իրանի այս նահանգների ճահճուտներն արտաքսված մոտ 50 հազար հայ ընտանիք, շրջմանալով կլիմայական ծանր վիճակին, մահացավ: Մի մասն էլ ընդունեց իսլամը և ենթարկվեց էթնիկական դիմահեղման:

Հայ բնակչության մի զգալի մասը տեղափոխվեց նոր կառուցված Մազանդարանի Ֆարրահաբադ քաղաքում ու նրա շրջակայքում: Ֆարրահաբադ քաղաքը Մազանդարանում կառուցելու շահի որոշումն ըստ Գելլա-Վալլեի պայմանավորված էր այն հանգամանքով, որ թուրքերն ի վիճակի չէին գրավելու այդ երկրամասը, նկատի ունենալով նրա բնական կտրվածությունը և հեռավորությունը¹⁷⁵: Մազանդարան բռնի տեղափոխվածների միջից «...նրանց ովքեր զբաղվում էին այգեգործությամբ, օրինակ հայերին... թագավորը... հատկացրեց հողամասեր: Քրիստոնյա վրացիներն ու հրեաները, որոնք նախկինում ևս շերամապահներ էին, շարունակեցին իրենց մասնագիտությունը»¹⁷⁶: Շահն իր նոր քաղաքացիներին հատկացնում էր ոչ միայն առանձին հողակտորներ, այլև վարկ՝ համոզված լինելով, որ նրանք ի վիճակի չեն լինելու վճարելու իրենց պարտքը, և ի վերջո, ինչպես նշում է Գելլա Վալլեն, իսլամանալու են: Հիրավի, ի վիճակի չլինելով վճարել իրենց պարտքերը, հայ գյուղացիներն ընկնում են ծանր կացության մեջ: Իսկ երբ առիթից ուզում են օգտվել եվրոպացի միսիոներները և նրանց պարտքերի վճարման դիմաց կաթոլիկացնել, շահը, Գելլա Վալլեյի ասելով, հայտարարեց. «փոխանակ ֆրանկներ, այսինքն լատինականներ դառնալու, ինքը շատ կուզենար, որ նրանք (հայերը—Մ. Զ.) ընդունեին իր հավատքը և դառնային մահմեդականներ»¹⁷⁷:

Իրան բռնադաղթված հայերի վիճակը Գելլա Վալլեն համեմատում է Բարելոնում հրեաների բերլիական ստրկության հետ և նշում, որ նրանք այնտեղ գտնվում են «...բարբարոսների անտանելի լծի տակ, մի դաժան ստրկության պայմաններում»¹⁷⁸: Այս իրավիճակում, ան-

¹⁷⁵ Piétro della Vallé, III, էջ 222.

¹⁷⁶ Նույն տեղում, III, էջ 225:

¹⁷⁷ Նույն տեղում, էջ 227:

¹⁷⁸ Նույն տեղում, էջ 230:

¹⁷³ Baron de Salignac, էջ 30.

¹⁷⁴ Antonio de Gouvea, էջ 312.

շուշտ, գտնվում էին նախ և առաջ ժողովրդական զանգվածները: Տանկ-
լի վիճակ ու քիչ թե շատ բարենպաստ պայմաններ ստեղծվեցին հայ
խոջայության ներկայացուցիչների համար: Կասկածից վեր է, որ հենց
այդ խավի ներկայացուցիչներին նկատի ունի Դելլա Վալլեն, երբ գրում
է, թե նրանց շահը «...տալիս է ոչ միայն հողակտորներ ու անասուն-
ներ, այլև դրամ»¹⁷⁹: Թե ինչ հետևանքներ ունեցավ այդ վարկի բաց-
թողումը, վերևում ասվեց: Հայերի նկատմամբ շահ Աբասի ցուցաբերած
«սերը» թելադրված էր, նախ և առաջ, Իրանի գերագույն պետական
շահերով: Եվ բոլորովին պատահական չէ, որ Դելլա Վալլեն գրում է,
թե ջուղայեցիները պարսից թագավորի նկատմամբ հավատարիմ են
մինչև վերջ և նրանք շահ Աբասի համար այն են, ինչ ջենովացիներն
իսպանական թագավորի համար: Երկու դեպքում էլ առևտրական թա-
գավորները կապված են առևտրական բուրժուազիայի հետ:

Արդ, նորից վերագտնանք թուրք-իրանական պատերազմների հե-
տագա ընթացքի նկարագրությունը: Շահ Աբասը քաջ գիտեր, որ թուր-
քերի դեմ իր տարած հաղթանակների համար պարտական է նախ և
առաջ ոչ այնքան իրանական զենքի հզորությունը, որքան Փոքր Ասիայում
շարունակվող ջալալիների ապստամբությունը¹⁸⁰: Հենց օսմանյան ներ-
քին խառնակ վիճակն էր թուրքերին ստիպել 1606 թ. Սիտվորտոկում
հաշտություն կնքել Ավստրիայի հետ՝ վերջինի համար բարենպաստ
պայմաններով: Ֆրանսիական թագավորին այդ մասին է գրում դե Սա-
լինյակն իր 1606 թ. մարտի 14-ի նամակում¹⁸¹: Սինան փաշայի մա-
հից հետո ջալալիների շարժումն էլ ավելի ծավալվեց և արդեն ընդգր-
կում էր Փոքր Ասիայի ողջ տարածքը՝ Իրանի և Սիրիայի սահմաններից
մինչև Բոսֆորի ափերը: Կալենդար օլլին և Ջանփուլադն ասպատակում
էին երկրի կենտրոնական ու հարավարևմտյան, իսկ այնուհետև հարավ-
արևելյան մասերը, Կարա Սաիդը՝ Այդրնի և Սարուխանի շրջանները,
Կրնալըն՝ Բուրսայի շրջակայքը, Ջեմշիդը՝ Ադանայի, Թավիլ Ահմեդ
Սալլըն՝ Կարամանիայի ու հարակից շրջանները: Շուտով ապստամբա-
կան շրջանների մեջ ներգրավվեցին նաև քրդական շրջանները: Կարճ
ասած՝ Օսմանյան կայսրությունում տիրում էր կատարյալ քաոսային
մի վիճակ, որից շարունակում էր օգտվել շահ Աբասը: Վերջինս 1606—

179 Նույն տեղում, էջ 225:

180 Ջալալիների շարժումների մասին տե՛ս Մ. Զուլյալան, Ջալալիների շարժումը
և հայ ժողովրդի վիճակն Օսմանյան կայսրության մեջ 16—17-րդ դդ., Նույնի՝ «Արև-
մբայան Հայաստանը XVI—XVIII դդ.», էջ 135—175:

181 Baron de Salignac, էջ 24:

1607 թթ. ընթացքում շարունակում էր իր նվաճումները Շիրվանում,
Վրաստանում և Դաղստանում¹⁸²:

1606 թ. թուրքերն իրանական կողմին հաշտության առաջարկներ
արեցին 1590 թ. կոստանդնուպոլսյան պայմանագրի հիման վրա, որը
մերժվեց շահ Աբասի կողմից, քանզի վերջինս «...պահանջում էր նվաճ-
ված բոլոր հողերը ճանաչել որպես իր տիրույթը»¹⁸³:

1607 թ. գարնանը սուլթան Ահմեդը մեծ վեզիր Կուլուջի (հոր փո-
րող) կոչված Մուրադ փաշային նշանակելով սերասքերի պաշտոնում,
ուղարկեց Արևելք՝ Իրանի դեմ պատերազմելու: 1607—1608 թթ. ըն-
թացքում մեծ վեզիրը զենքի ու դիվանագիտության միջոցով մեկը
մյուսի հետեից հաշվեհարդար է տեսնում ջալալի ապստամբ ղեկավար-
ների հետ ու արժանանում «կայսրության սուրբ» և «սուլթանաթի վե-
րականգնող» տիտղոսներին¹⁸⁴: Յոզեֆ Համմերի հաշիվներով կառա-
վարական զորքերի հետ ընդհարվելիս ոչնչանում են ավելի քան հար-
յուր հազար ապստամբներ¹⁸⁵: Ապստամբների հետ վերջին ճակատա-
մարտը տեղի է ունենում էրզրումի մոտակայքում, որից հետո պար-
տություն կրած ջալալիների բեկորները, թվով 15 հազար մարդ, անց-
նում են Իրանի սահմանը, գալիս Երևան՝ Ամիրգոսնա խանի մոտ,
իրենց հայտարարում շահիսելեններ և իրենց ծառայությունն են առա-
ջարկում շահ Աբասին:

1609 թ. սերասքեր Կուլուջի Մուրադի իրանական արշավանքը ձա-
խողվեց ենիչերիների ցուցաբերած կատաղի դիմադրության պատճա-
ռով, որոնք վախենում էին արշավանքի ընթացքում ընկնել սովի ճի-
րանների մեջ: «Ինչպես է հնարավոր պարեն գտնել էրզրումում, երբ
այնտեղ սով է ու մեկ կիլոգրամ գարին արժե հինգ դուկատ և պաքսի-
մատի կիլոն մեկ դուրուշ»¹⁸⁶,—ասում էին նրանք:

Եվ, այսուհանդերձ, 1610 թ. գարնանը սերասքեր Կուլուջի Մուրա-
դի բանակն էրզրում-Չալդրան-Խոյ-Սալմաստ ճանապարհով շարժվեց
դեպի Թավրիզ: Շուտով Կուլուջի Մուրադը մահանում է և նրան փո-
խարինում է Նասուհ փաշան, որի սերասքերության ժամանակ էլ՝
1612 թ. նոյեմբերի 20-ին, արևելյան երկու պետությունների միջև
կնքվում է հաշտության պայմանագիր, համաձայն որի վերականգնվում
են 1555 թ. Ամասիայի հաշտության պայմանագրի կետերը, այսինքն՝

182 Այդ մասին որպես ղեկավարի ժամանակակից և ակնառես մանրամասն
պատմում է դե Գուվեան: Antonio de Gouvea, էջ 304—336:

183 Նույն տեղում, էջ 314:

184 J. Hammer, VIII, էջ 134:

185 Նույն տեղում, էջ 141:

186 Նույն տեղում, էջ 158:

ամբողջ Ադրբեջանը, Արևելյան Հայաստանն ու Արևելյան Վրաստանը մնում են Սեֆյան Իրանի տիրապետության ներքո: Իրանը պարտավորվում էր տարեկան 200 բեռ մետաքս հանձնել թուրքիային, որպես հարկ, սակայն, շուտով, նաև դրանից հրաժարվեց: Ըստ էության թուրքիան այդ պատերազմում պարտություն կրեց: Որպես պարտության փոխհատուցում, թուրքիան հաշտության պայմանագրում Իրանին ստիպում էր Ռուսաստանի դեմ որևէ հնարավոր գործողությունների ընթացքում խոչընդոտ չհարուցել, այլ, ընդհակառակը, օգնել: Ինչպես նշում է թուրք պատմագիր Նախման, Դադաստանի ու Դերբենդի շրջանում ռուսական զորքերի երևալը խափանելու և ռուսի այս կողմերում երևալը կանխելու համար նրա կողմից կառուցված թերեք ամբողջ խորտակման գործում... շահի զինվորներից ու ոչ մեկը արգելք չպիտի հանդիսանա»¹⁸⁷: Սա, հիբավի, Իրանի կողմից զիջում էր թուրքիային: Հավանաբար և՛ Իրանը, և՛ թուրքիան ահաբեկված էին Ռուսաստանի հզորացումից:

1612 թ. հաշտությունը լուրջ զինադադար էր: Երկու պետությունների միջև լարվածությունը շարունակվում էր: Թուրքիան չէր ուզում հաշտվել Անդրկովկասը կորցնելու գաղափարի հետ, իսկ Իրանը՝ մետաքսահարկն իր համար համարում էր ստորացուցիչ: Ուստի և 1612 թ. հաշտությունից հետո էլ թուրք-իրանական սահմանում հաճախ տեղի էին ունենում ռազմական ընդհարումներ, և երբեմն էլ թշնամի կողմերը խորանում էին հակառակորդ կողմի երկրի խորքերը՝ հուր ու ավերածություն սփռելով երկրում, գերեզմարելով բնակչությանը: 1614 թ. արտագրված մի ճառընտիրի հիշատակարանում գրիչը հայտնում է, որ «...վասն մեղաք իմոց ի նոյն ամն (1614 թ.) եկն ազգն պարսից ի վերայ Տարոնոյ բազում արիւն հեղին և գերի վարեցին»¹⁸⁸: Պիետրո Դելլա Վալեն, իր 1617 թ. գեկտեմբերի 8-ի նամակում որպես ականջալուր տեղեկացնում է, որ «...նախիջևանի կուսակալը (սուլթանը) հազորդել էր թագավորին, թե այստեղի սահմանների մոտ բնակվող ու թուրքերի դաշնակիցները հանդիսացող բրդերը ներխուժել էին Պարսկաստան՝ Արաքսի հովիտը ու դրադվում էին հայերի մի քանի քաղաքների կողոպուտով: Ավելի թույլ զինվորական ուժ ունեցող կուսակալը, ինչպես նաև այստեղի զորքերի գերագույն հրամանատար, Պարսկաստանի նորագույն պատմության մեջ հռչակավոր, ներկայումս ծերունազարդ Երե-

վանի Ամիրգունա խանը զիմադրություն չէր կազմակերպել: Թագավորը տեղեկանալով թշնամու ասպատակությունների հետևանքով հասցված մեծ վնասների մասին կարգադրել էր նախապատրաստվել հակահարձակման»¹⁸⁹:

Տեղական բնույթի այս առանձին ընդհարումներին հաջորդեցին հայկական հողում մեծ ընդգրկումով նոր պատերազմական գործողությունները: Ուշագրավ է պատերազմի ծագման այն պատճառաբանությունը, որ տալիս է Դելլա Վալեն. «Ես կարծում եմ,—գրում է նա,— որ թուրքերի կողմից պատերազմի հայտարարման այլ պատրվակ չկա, քան այն, որ Աբաս թագավորը երկար ժամանակ է, ինչ հրաժարվել է յուրաքանչյուր տարի, որպես նվիրատվություն, (թուրքիա) ուղարկել հարյուր հիսուն կամ երկու հարյուր բեռ մետաքս: Եվ չնայած թագավորը պատերազմի դեպքում շատ ավելի ծախսեր է անում, քան եթե ուղարկեր նվիրատվությունը, այնուամենայնիվ, պատվասիրությունից դրդված, նա ցարդ նախընտրում է պատերազմը, քան մետաքսի առաքումը, քանզի թուրքերը, որոնց առաջարկված էր հաշտությունը, երբեք էլ չհամաձայնվեցին տարեկան այս հարկատվության միջոցով հաշտվել թագավորի կողմից զավթած հողերի կորստի գաղափարի հետ»¹⁹⁰:

Դեռևս մինչև թուրքերի հետ ռազմական գործողություններ ծավալելը, շահ Աբասը, պատրվակ բռնելով վրաց թագավոր Թեյմուրազի անհնազանդությունը, ասպատակում էր Վրաստանում ու գերեզմարում բնակչությանը: «Թեյմուրազը,—գրում է Դելլա Վալեն,— կորցնում է իր տիրույթները և Աբբաս թագավորը դրանք հիմնովին ավերեց ու բնակչության զգալի մասը, ինչպես ես այլ առիթով ասացի, աքսորեց Պարսկաստանի տարբեր մասերը, նրանց մատնելով ողորմելի ստրկության»¹⁹¹: Գարսիա դե Սիլվա Ֆիգուերան, իր հերթին, նշում է, որ շահ Աբասը «...ամբողջ իր (Թեյմուրազի—Մ. Զ.) երկիրը կողոպտելուց ու ավերելուց հետո իր հետ տարավ «...ավելի քան ութսուն հազար գերիններ»¹⁹²:

Ուստի և նոր պատերազմի նախօրեին, ինչպես նշում է իսպանացի այս նույն հեղինակը, վրացիները, ինչպես և բրդերը նպատակադրվել էին ապստամբել Իրանի դեմ: «Իման Կուլի խանը,—գրում է նա,— ուղարկված էր Հայաստան,— որպեսզի մոտիկից վերահսկողություն

¹⁸⁶ նույն տեղում, էջ 158:

¹⁸⁷ „Tarih-i Naima“, II, Istanbul, 1260 (1863), էջ 113—114:

¹⁸⁸ «Մայր ցուցակ հայերեն ձևազարգ Մատենադարանի Մխիթարյանց ի վեհն-տիկ, Կ. 1, Վենետիկ, 1914, էջ 476:

¹⁸⁹ Piéto della Vallé, III, էջ 290:

¹⁹⁰ նույն տեղում, էջ 330:

¹⁹¹ Piéto della Vallé, III, էջ 334:

¹⁹² Garcia Sylva de Figuera, էջ 133:

ահամաներ քրդերի և վրացիների գործողությունների վրա, որոնք թուրքերի կողմից սպասում էին մի օգնական ուժ՝ ապստամբելու համար»¹⁹³։

Համոզված լինելով, որ պատերազմը թուրքերի դեմ անխուսափելի է, շահ Արասը որոշեց անակնկալի բերել թուրքական բանակին։ Նա իր զորքերն ուղարկեց Վան և էրզրում կարգադրելով ևս մի անգամ ավերածություն տարածել ողջ շրջակայքում։ Այս պարտականությունը դրվեց ծագումով հայ Կարչխա խանի վրա, որը նշանակվեց սիպահսալար՝ գերագույն հրամանատար։ Շուտով իրանյան բանակը պաշարեց էրզրումը, սակայն քաղաքը գրավել չհաջողվեց։ Ուստի նա երկրամասը հրի ու սրի ենթարկելով շարժվեց դեպի Վան, որը պաշտպանում էր Թեքելու փաշան։ Վերջինս, իմանալով էրզրումի Կարչխա խանի կողմից պաշարվելու մասին, որոշեց իր 12 հազար հեծյալ բանակով ասպատակել Թավրիզի շրջակայքը։ Սակայն տեղեկանալով Վանը Կարչխա խանի կողմից պաշարվելու մասին, ստիպված եղավ նահանջել դեպի Վան։ Թեքելու փաշան Կարչխա խանից կրում է ծանր պարտություն և ընդհարման ժամանակ ինքն էլ սպանվում է։ Այլևս չհանդիպելով որևէ դիմադրության Կարչխա խանն անպատիժ ավերում ու կողոպտում է Վանն ու Վասպուրականը և վերադառնում Թավրիզ շահին զեկուցելու։ Իրանյան բանակի կողմից Արևմտյան Հայաստանի գավառների ասպատակումը հայերեն մի ձեռագրի հիշատակարանում վերագրվում է Ամիրգունա խանին. «Ի թուին հա(յ)ոց ՌԿԶ (1617) յամսին մարգաց, — կարդում ենք հիշատակարանում, — գումարեցաւ զարն պարսից՝ ևսի (40...) թիւ զարքին, և զաւարագլուխ — Ամիրգունին, ելաւ զնաց յաշխարհ Հոռոմին, վայ և եղուկ հայոց ազգին և մեղաւոր Ղազար իրիցս որ տեսայ»¹⁹⁴։

Սուլթան Ահմեդի մահը և խելակորույս Մուստաֆայի իշխանության գլուխ անցնելը կաթվածահար էին դարձրել թուրքերին, որոնք ստիպված էին ժամանակավորապես հաշտվել իրանական զորքերի ասպատակությունների փաստերի հետ։ 1618 թ. փետրվարի 26-ին սուլթան Մուստաֆան գահընկեց է արվում և սուլթան է դառնում Ահմեդ 1-ինի որդի Օսման 2-րդը։ Եահան ամրոցը երկրով մեկ հայտարարում է ընդհանուր զորահավաք։ Սակայն շուտով թուրքերի կողմից ստացվում են հաշտության առաջարկներ։ Բայց տեղի ունեցած բանակցությունները չեն հասցնում դրական արդյունքի¹⁹⁵։ Պատերազմական գործողությունները

երկու պետությունների միջև վերսկսում են։ Թուրքերը Թեյմուրազի տրամադրությամբ տակ են թողնում «...մի մեծ բանակ, բաղկացած թաթարներից»¹⁹⁶, որոնք ասպատակում են հայաբնակ շրջանները։

Թուրքերի թվական գերակշռության առաջ սեֆյան բանակը, ինչպես միշտ, ստիպված էր նահանջել դեպի Թավրիզ։ Այսուհանդերձ, Կարչխա խանը թաթարների բանակին հասցնում է ծանր պարտության, գլխատել է տալիս հինգ հարյուր գերիների և գլուխներն ուղարկում շահին։ Ի դեպ, պետք է նշել, որ Պիետրո գելլա Վալլեն, անդրադառնալով թուրք-իրանական այս նոր պատերազմին, բերում է հոգեցունց մի փաստ այն մասին, որ շահին հաճոյսնալու համար, իրանական որոշ զորավարներ շահին են ուղարկել կոտորածի ենթարկված հայ խաղաղ բնակիչների սրի քաշված գլուխները, որպես թշնամու բանակից գերեվարյալների։ Նկարագրված փաստը եզակի երևույթ չի եղել։ «Այս շարագուշակ սովորույթը, — կարդում ենք Գելլա Վալլեյի մոտ, — հաճախ շատ մեծ դժբախտությունների պատճառ է դառնում, քանզի խոստացված վարձատրության դիմաց զինվորները բերեմն ոտնձգություններ են կատարում իրենց իսկ հայրենակիցների կյանքի նկատմամբ և կտրում թշվառ անմեղների գլուխները՝ հոգ չէ, թե թշնամիներ չեն... Ինձ հավաստիորեն պատմեցին, թե ինչպես մի ոմն շար ու նենգ խան, նպատակադրելով թագավորին ինչքան հնարավոր է շատ սրի քաշված գլուխներ ուղարկել, սպանել է իր հպատակ քրիստոնյա հայերին, որոնք իրենց երկար մորուսներով նմանվել են թուրքերին ու գերեվարյալների գլուխներ անվան տակ ներկայացրել թագավորին»¹⁹⁷։ Ասպատակությունների ժամանակ, այնուհետև շարունակում է իտալացի հեղինակը, միշտ էլ վտանգավոր է արշավող բանակի աչքին երևալը¹⁹⁸։

Գրավելով Թավրիզը, թուրքական բանակը շարժվեց դեպի Իրանի խորքերը։ Ինչպես վկայում են եվրոպացի հեղինակները¹⁹⁹, բնակչությունը մատնված էր ահ ու սարսափի։ Դրությունը փրկում է Կարչխա խանը, որը «Փուշ-ի շիկեստե» կոչված վայրում և Թավրիզի մոտակայքում պարտության է մատնում թուրքական, թաթարական և Թեյմուրազի վրացական բանակը²⁰⁰։ Կարչխա խանի այս հաղթանակը մեծ վեճի է հանդիսանում 1618 թ. սեպտեմբերի 26-ին Սերավում, հա-

¹⁹³ Նույն տեղում, էջ 136։

¹⁹⁴ Մատ., ձեռ. № 2775, պահպանակ Բ։

¹⁹⁵ Հաշտության բանակցությունների ընթացքի մասին մանրամասն տեղեկացնում է Պիետրո Գելլա Վալլեն իր 1619 թ. հոկտեմբերի 21-ի թվակիր նամակում (Pietro della Vallé, IV, էջ 10, 15)։

¹⁹⁶ Նույն տեղում, III, էջ 356։

¹⁹⁷ Pietro della Vallé, III, էջ 177։

¹⁹⁸ Նույն տեղում, էջ 178։

¹⁹⁹ Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 155—168։

²⁰⁰ Garcia de Sylva, de Figuera, էջ 260—270,։

մաձայն որի իրանական կողմն այս անգամ պարտավորվում է թուրքերին տարեկան ուղարկել ոչ թե 200 բեռ մետաքս, ինչպես դա 1612 թ. հաշտության պայմանագրով էր նախատեսված, այլ 100: Սա, անշուշտ, նշանակում էր իրանական կողմի հաղթանակը:

* * *

1618 թ. աշնանը կնքված հաշտությունը այս անգամ ևս երկար չտևեց: Վերսկսված պատերազմական գործողությունների հիմնական թատերաբեմ դարձավ Միջագետքը: Օգտագործելով Բաղդադի թուրքական կայազորի հրամանատարի դավաճանությունը, շահ Աբասը գրավեց քաղաքը:

Սուլթան Օսմանի մահը պատրվակ բռնելով, կենտրոնական կառավարության դեմ ապստամբություն բարձրացրած Աբազա փաշայի²⁰¹ նոր բուռն ելույթները (1623—1627 թթ.), Եգիպտոսում ծայր առած ընդվզումները, Միջագետքում սեֆյան բանակի առաջխաղացումը թուրքիային կաշկանդում էին ձեռնարկելու պատերազմական գործողություններ իրանի դեմ՝ Անդրկովկասին տիրելու համար:

Թուրքերի համար միանգամայն անբարենպաստ այս հանգամանքները հետևյալ ձևով է ներկայացնում անգլիական դեսպան Ռիկոն. «Պարսկաստանի հետ պատերազմը բավականին անհանգստացնում էր (թուրք) կառավարողներին: Աբազայի ապստամբությունը գնալով դառնում էր ավելի ու ավելի վտանգավոր, քան ենթադրում էին: Բարելոնի (Բաղդադի) կառավարիչ Բեշիր փաշայի դաշինքը ապստամբների հետ (վերջիններին) թույլ էր տալիս դիմելու ամեն տեսակի ելույթների, և նրանք արդեն ճամբար էին դրել Կոստանդնուպոլսից ընդամենը հինգ օրվա հեռավորության վրա: Միաժամանակ, ղրքերի ընդհանուր հրամանատար Հաֆիզ փաշան, որը գտնվում էր Բաղդադի նահանգում, տեղեկացրեց արքունիքին, որ Պարսկաստանի թագավորը մի մեծ բանակի գլուխ անցած մտել է թուրքիա: Այս լուրը կառավարողներին նետեց սարսափելի ահազանգման մեջ: Եվ նրանց անհրաժեշտ էր արի թզի և խոհեմություն՝ ելք գտնելու բոլոր կողմերից հարձակման ենթարկված պետությունը փրկելու»²⁰²:

²⁰¹ Աբազա փաշայի ապստամբության մասին մանրամասն տե՛ս Մ. Կ. Զուլպյան, *Ջալալիների շարժումը...*, էջ 191—220, նույնի՝ «Արևմտյան Հայաստանը XVI—XVIII դդ.», էջ 160—173:

²⁰² Histoire des trois dernières empereurs des Turcs, էջ 17:

Հաշվի առնելով իրանական ասպատակությունների նոր վտանգը, թուրքական կառավարող շրջանների մեջ գտնվեցին մարդիկ, որոնք կողմնակից էին Աբազա փաշային որոշ զիջումներ անել և նրան սիրաշահելով համատեղ հանդես գալ իրանի դեմ: «Այսուհանդերձ ամենախոհեմները,—գրում է Ռիկոն,—գտնում էին, որ ավելի լավ է Աբազայի բոլոր պահանջները բավարարելով զինաթափ անել նրան և նրա ռազմական ուժն օգտագործել պետության թշնամիների դեմ: Սակայն ենիչերիներին հնարավոր չեղավ համոզել բանակցել մի մարդու հետ, որի նկատմամբ ունեին անսքող առելություն, և որը, իր հերթին, ատում էր նրանց (ենիչերիներին) ոչ պակաս, քան իրենք՝ պարսիկները»²⁰³:

Երբ թուրքական ղեկավար շրջաններն արժարժում էին Աբազայի հետ բանակցելու հարցը, 1626—27 թվականների թուրքերի գործերը թե Միջագետքում և թե Արևմտյան Հայաստանում զնալով ավելի ու ավելի էին վատանում: «Աբազան ասպատակում էր Փոքր Ասիան: Պարսկաստանի թագավորը տեր էր դառնում կարևոր նշանակություն ունեցող Բարելոնին և համանուն նահանգին, թուրքերից խլում իրենց ամենաաչքի ընկնող զորավարներից մեկին՝ Քյոր Հասան փաշային, զավթում էր Մոսուլն ու Լեսկան ... և որևէ դիմադրության չհանդիպելով իր բանակը բաժանում էր շորս մասի: Առաջինը, որը անձամբ ղեկավարում էր թագավորը, շարժվում էր դեպի Միջագետք: Երկրորդը ներխուժելու էր Սրբազան հողերը (Երուսաղեմը): Երրորդն ասպատակում էր Սև ծովի ափերը: Չորրորդը շարժվում էր դեպի Մեկկա: Այս ամենի նպատակն էր անդամահատել օսմանցիների կայսրությունը և նրա արևելյան մասերը միացնել պարսկական գահին»²⁰⁴,—կարդում ենք Ռիկոյի մոտ:

«Գործերի վատ վիճակն ի վերջո իշխանություններին ստիպեց,—այնուհետև հանդիպում ենք Ռիկոյի մոտ,—չեզոքացնել Աբազային, նրան տալով այն ամենը, ինչ նա կարող էր պահանջել: Սակայն միանգամայն անհնարին եղավ համոզել ապստամբներին Գիվանի (կառավարության) բարի կամքի մասին ... Մյուս կողմից օրը օրին ավելի բացահայտ էին դառնում նրա (Աբազայի) կապերը Պարսկաստանի²⁰⁵ հետ, որտեղից նա ստանում էր մեծ օգնություն: Նա նկատելիորեն ամրացրել էր

²⁰³ Նույն տեղում:

²⁰⁴ Նույն տեղում, էջ 18:

²⁰⁵ Աբազա փաշան իրանական կողմի հետ հարաբերությունների մեջ է մտնում միայն այն ժամանակ, երբ զգում է, որ իր պարտությունն անխուսափելի է. նա երբեք էլ ապստամբության չի դիմել իրանի կողմից զրգված, նրա նպատակը երբեք էլ չի եղել տապալել օսմանյան գահը: Ավելի մանրամասն տե՛ս Մ. Կ. Զուլպյան, *Ջալալիների շարժումը...*, էջ 197—199:

էրզրում քաղաքը և այնտեղ տեղակայել մի մեծ կայազոր: Սակայն դա ենիշերիներին չխանգարեց, որ ցանկանան հարձակվել նրա վրա: Վեզիրը²⁰⁶ ստիպված եղավ բավարարել նրանց: Քաղաքը պաշարվեց: Ամենաքաջները նետվեցին առաջ ու փորձուքյան ենթարկեցին կայազորի զինվորների ռազմական ոգին, որոնք պաշտպանվում էին արիաբար ու թույլ չէին տալիս որևէ մեկի առաջխաղացումը, քանզի նրանք գիտեին, որ ամոթալի մի մահ է սպասում բոլոր նրանց, ովքեր կընկնեն պաշարողների ձեռքը. ուստի գերադասում էին պատվով ընկնել ռազմի դաշտում, քան թե արժանանալ տանջալի մահվան... Մյուս կողմից քաղաքն այն աստիճան լավ էր ամրացված ու ապահովված մեծ քանակի ռազմամթերքով, որ որևէ մի հույս չկար այն վերցնելու, եթե զանց առնենք սովի վտանգը: Սակայն այդ հույսն էլ ի դերև ելավ ապստամբների հոգատարության պատճառով, որոնք տեղում մեծ քանակությամբ սննդամթերք էին պահեստավորել: Անհաջողության մատնված թուրքերը մեծ խուճապով թողեցին պաշարումը, հետևում թողնելով իրենց հրետանու մի մասը: Կայազորը հետապնդեց նրանց ու սպանեց մեծ թվով զինվորներին: Այս անհաջողության լուրը մեծ հուսախարություն առաջացրեց Կոստանդնուպոլսում»:

Թուրքական ղեկավար շրջանների համար գնալով ավելի ու ավելի պարզ է դառնում, որ առանց Աբազայի ապստամբության հարցը լուծելու անհնարին է Իրանի դեմ հաջող ռազմական գործողություններ ծավալել: Այդ մասին է նշում ղեկավարի ժամանակակից Ռիկոն: «Դիվանի կարևորագույն խնդիրն էր,— գրում է նա,— վերջ տալ Աբազայի ապստամբության հետևանքներին ու փառքով ավարտել պարսիկների դեմ մղվող պատերազմը»:

Մեծ վեզիր Մերխոշ փաշան²⁰⁷ 1628 թ. սկզբներին ղեկավարում էր բանակը: Նրա ճամբարը գտնվում էր այսօր Կոնիա կոչվող Իկոնիայում: Ծարժվելով ղեկի Աբազայի զավթած վայրը՝ Կեսարիա, ենիշերիները միահամուռ ցանկություն հայտնեցին հարձակվել նրա վրա: Մեծ վեզիրը, որը հրաման ուներ հարցը լուծել խաղաղ ճանապարհով, առանց զիմելու բախտի քմահաճույքին խուսափեց, ինչքան դա իրեն հաջողվեց տեղի տալ իր զորքերի մտադրություններին: Այս ձգձգումից կատաղած ենիշերիները, որոնք անտեղյակ էին բուն պատճառներին, ըմբոստացած, կտրեցին մեծ վեզիրի վրանի պարանները, քարկոծեցին նրան ու վիրավորեցին նրա գլուխը: Այս բռնությունը մեծ վեզիրին

ստիպեց նրանց ծանոթացնել իր ստացած հրամանների հետ: Հավաքված ենիշերիների և սիփահինների սպաներին նա ասաց, որ սուլթանը մտադիր է ներքին պատերազմին վերջ տալու, պարսիկների դեմ հաջող պատերազմներ մղելու և կորցրածը ետ վերադարձնելու նպատակով՝ նրա հետ բանակեցել, ու ցանկանում ներքին պատերազմին վերջ տալ խաղաղ ճանապարհով: Ռազմական խորհուրդն իրավացի համարեց մեծ վեզիրին, գտնելով, որ նա առաջնորդվում է սուլթանի հրամաններով: «Սակայն դժվար էր փափկացնել այն մարդկանց սիրտը, ովքեր միայն վրեժ էին տենչում և ղեկավարվում էին միայն սեփական կրքով: Այսուհանդերձ սպաները այն աստիճան մշակեցին զինվորների միտքը, որ նրանք հարկադրվեցին լսել բանականությունը: Ծնիշերիները հասկացան, թե ինչքան էր այս պատերազմն իրենցից պահանջում անհանգստություն, հոգնություն ու արյուն և համաձայնվեցին, որ բանակեցն Աբազայի հետ ու նրան դարձնեն իրենց զինակիցը: Ապստամբները սկզբում խուսափեցին թուրք զորահրամանատարի հետ բանակցելուց, վախենալով, որ հարցի խաղաղ լուծման անվան տակ նրանք կարող էին իրենց համար թակարդ լարել: Սակայն մեծ վեզիրը ցրեց նրանց մտավախությունները՝ իրենց մոտ պատանդ թողնելով իր եղբայր Կարամանիայի բեկլերբեկին և Փոքր Ասիայի փաշային: Համաձայնություն կայացավ բանակցությունների տեղի և օրվա մասին, որի ընթացքում ստորագրվեց հետևյալ պայմանագիրը՝ էրզրումի կառավարումը թողնվում է Աբազային, Բասրային՝ իր որդուն, իսկ Մարաշին՝ իր Քեդիսուղային՝ թիկնապահին, ընդհանուր ներքում է շնորհվելու ինչպես իրեն՝ Աբազային, այնպես էլ իր կողմնակիցներին... Մեծ տիրակալը՝ (սուլթանը) հավանություն տվեց իր մեծ վեզիրի այս համաձայնագրին և ստորագրեց այն: Էրզրում քաղաքը նորից հանձնվեց իր նախկին տիրոջը և Աբազայի բանակն օգտագործվեց պարսիկների դեմ»²⁰⁸:

Կոստանդնուպոլսում սուլթան Մուրադ 4-րդը Աբազային ընդունում է արքայալի՝ դրանով ընդգծելով վերջինիս վաստակն օսմանյան գահին, «սակայն վախենալով, որ այդքան շքեղ մեծարանքների արժանացնելը կարող է զայրացնել ենիշերիներին և Աբազայի հակառակորդներին, որոշվեց, որ նա մասնավորապես հեռու պահվի Մեծ Տիրակալից»²⁰⁹:

Իրանի դեմ պատերազմը և Աբազա փաշայի ապստամբությունը ճնշելու համար կատարված արտակարգ ծախսերը փակելու համար Ռի-

²⁰⁶ Հավանաբար, հեղինակը նկատի ունի մեծ վեզիր Խալիլ փաշային:

²⁰⁷ Ռիկոնի ողջ շարադրանքներից երևում է, որ խոսքը գնում է մեծ վեզիր Խոսրով փաշայի մասին: Տե՛ս Ա. Կ. Զուլպյան, Զալալիների շարժումը..., էջ 208—214:

²⁰⁸ Ricaut, էջ 39:

²⁰⁹ Նույն տեղում, էջ 41:

կոյի հաղորդամբ ... Մեծ վեզիրը քրիստոնյաներին և հրեաներին ծանր հարկատվութեան ենթարկեց»²¹⁰: Այս նույն հեղինակի վկայութեամբ՝ դա էլ շօգնեց գործին և Օսմանյան կայսրութեան ներքին վիճակը զնալով ավելի ու ավելի էր վատանում: «Ի վերջո բոլոր գործերն այնպիսի վիճակում էին, որ մի պահ թվում էր, թե պետութունը պետք է կործանվի: Միակ բանը, որը կարող էր շտկել դրութունը, Պարսկաստանի դեմ որոշ հաղթանակներ տանելն էր»²¹¹:

Եվ ահա, օգտվելով շահ Աբասի մահից (1629 թ.), 1630 թ. սկզբին թուրքերը Միջագետքից Համադան ձեռնարկեցին մի շարք ասպատակիչ ու ավերիչ արշավանքներ: Դեպքերին ականատես հայր Ֆրիլիպ Ավրիլը այդ մասին գրում է. «Այս ժամանակ Մեծ տիրակալը ցանկանալով ետ նվաճել Բաբելոնի թագավորութունը, ուղարկեց մի մեծ բանակ, որն ինչպես ասում էին, բաղկացած էր չորս հարյուր հազար մարդուց, և որը նիսի ասպատակեր ու ավերիչ ողջ Պարսկաստանը: Հենց որ այստեղի անտանելի շոգերն անցան, բանակը մտավ Խաղեա (Միջագետք) ... Եվ հիրավի, թուրքերի այս բանակը այն աստիճան խորացավ (դեպի Պարսկաստան), որ եկավ ու ավերեց Իսպահանից վեց օրվա հեռավորության վրա գտնվող Համադան քաղաքը»²¹²: Համադանում թուրքերի բարբարոսութունը սահման չունեց: Սերասեքեր Խոսրով փաշայի հրամանով, որ ստացել էր «Անգուլի Խոսրեվ» մականունը, թուրքերը հրի մատնեցին քաղաքը, քանդեցին տները, իսկ բնակչությանը զանգվածորեն կոտորեցին: «... Յայսմ ամի (1630), — ասված է հայերեն մի ձեռագրի հիշատակարանում, — ազգս հայոց ի մեծ վրտանգի է, զի այլազգիքն զօրացեալ են ի վերայ քրիստոնէից ... զի էլ ողիրն Ըստրմբօլայ բազում զօրօք և զնաց ի Բաբելոն, որ այժմ այսի Բաղդատ, և հասեալ գետն Տիգրիս, որ պատէ զԱսորեստան, և այլ ճանապարհաւ զնաց ի յարեւելս մինչև ի դուռն պարսից, և բազում ոճիր գործեաց զԱմատուն և զՔաղբու և Շարագուլ. զամէն քանդեաց և անբեաց դայն, (այնպէս) արարին, որ մարդ ոչ կարէ մեկնել կամ (ընդ) գրով արկանել զարհաւիրքն և զպատերազմն, որ անդ եղև»²¹³:

Այս նույն ժամանակ թուրքական մի այլ բանակ ասպատակում էր Նախիջևանն ու նրա շրջակայքը: Ղ. Փիրդալեմյանի հրատարակած վերոհիշյալ հիշատակարանում այնուհետև կարդում ենք հետևյալ տեղեկությունները: «Եւ Ալի փաշան Վանայի ելեալ բազում հեծելօք և զնաց ի

վերայ Նախիջևանայ և շատ աւեր ետուր և բազում արիւնահեղութիւն արար, և բազում առ և աւար և գերին բերեալ ի Վան: Ո՛հ թէ զինչ տեսաք աշօք մերովք՝ զգառն կսկիծ և զաղիողորմ արտասուքն քրիստոնէից գերելոցն, զլալումն, զողբումն և զհառաշումն նոցա ոչ կարեմք հայել»²¹⁴: Մեծատուն հայ վաճառականները փրկագնով ազատում են հայ գերիներին²¹⁵: Ի պատասխան թուրքերի այս արշավանքի, Սեֆյանները ևս մի քանի անգամ ասպատակում են Արևմտյան Հայաստանի գավառները. «Ես յետոյ ազգն պարսիցն զօրացն, — կարդում ենք այդ նույն հիշատակարանում, — և եկին ի վերայ Արճիշու և յերկիրն Արճիշու բազում աւերս արարին զառ և զաւար, և զգերին քան զՆախիջևանայն երկու աւելի տարան, և այլ ոչ երեւցան»²¹⁶: Հետագա տարիներին թշնամի կողմերը շարունակում էին ասպատակութունները թուրքիրանական սահմանի տարբեր մասերում: Գրիշ Մարութան խոսելով իրանական ոմն՝ Ռուստամ խանի դեպի Վան կատարած արշավանքի մասին հայտնում է հետևյալը. «Եւ դարձեալ եկն անտի (Ռուստամ խանն) և զնաց ի վերայ Վանայ և դ(4) ամիս պաշարեաց, և նստաւ ի վերայ նորայ, և ոչ կարաց առնուլ զնա և շատ աւերութիւն արար: Եւ դարձեալ, յետս զնաց ի Քավրէզ առ թագաւորն իւր շահ Սեֆին, և անդ նստաւ, այլ ոչ զիտեմք վերջն զինչ է լինելոյ...»:

Հենվելով թուրքական ժամանակագրութունների վրա, Կանտեմիրը Ռուստամ խանի դեպի Վան կատարած արշավանքի մասին գրում է հետևյալը. «Պարսիկների զորավար Ռուստամ խանը ասպատակութուն սփռեց (Օսմանյան) կայսրութեան տարածքում և Վանի շրջակայքն ավերելուց հետո պաշարեց այս քաղաքը: Ասիայում չկար մի բանակ, որ ի զորու լիներ դիմադրելու պարսիկներին: Եվ քաղաքն այն աստիճան պաշարված էր, որ չէր կարող երկար դիմանալ: Եվ ահա այս ժամանակ Ռումելիի Բեկլերբեկը իր Եվրոպայում տեղակայված զորքերով եկավ ու ստիպեց պարսիկներին հեռանալ Վանից, որն արդեն գտնվում էր հանձնվելու շեմին»²¹⁷: Այս նույն դեպքերի մասին Գրիգոր Երեցը Վանից, որպես ակնատես, շափաձո պատմում է հետևյալը.

²¹⁴ Նույն տեղում:

²¹⁵ Նույն տեղում: Նախիջևանի շրջակայքի ավերման ու ավարման, բնակչության գերեվարման մասին վկայում է նաև Հովսեփ Թացոնցի գրիչը. «Յանկարծ շարժեցաւ Յամանլուն ի Վանայ, զնաց ի նախշուանայ երկիր, — գրում է նա, — քանդեցին, անբեցին, զառ ու գերին բերին ի Վան, ի Մահմբուտնք, ի Բերկրի ի չԱրճէշ, ի Պաղէշ ԳՌ (4000) եմ (5000) հարիւր գերի բերին, թող ոչխար և տաւար: Սուղ Փարթալ աւաղ զհայոց ազգս ի բերել Տաճկաց: Ով կարէ պատմել կամ ընդ գրով արկանել զաղիողորմ հայոց ազգիս» (Լ. Ղ. Փիրդալեմյան, Նշխարք..., հ. Բ, էջ 413—415):

²¹⁶ Նույն տեղում:

²¹⁷ Cantémir, Histoire ottomane, էջ 84:

²¹⁰ Նույն տեղում:

²¹¹ Նույն տեղում, էջ 52:

²¹² Voyage d'orient du R. P. Philippe, էջ 39:

²¹³ Ղ. Փիրդալեմյան, Նշխարք..., հ. Ա., № 733, էջ 204բ—205ա:

«Ի յայսմ դառն և նեղ ժամանակիս
Յիսար ընկաւ Վան քաղաքիս,
Կարմրագդակն պատեց, նստաւ վերայ քաղաքիս,
Շատ նեղութիւն հասոյց ի մեզ,
Մզ (56) օր պաշարեց զմեզ,
Ի Բվականութիւնս հայոց ազգիս,
ՌՁ և երեքիս (1634)
Ըստամբօյայ հասաւ ի մեզ,
Աղգին տաճկաց ճՌ (100.000)-իս
Ժողովեցան քառափոսիս (Գլուղ Վանի մտտ)
Խմբեցան մեծ պատերազմիս,
Փախուցին կարմրագդակն,
Աւարն առին հասին ի մեզ,
Աւետիս մատուցին մեզ,
Կարմրագդակն փախեաւ ի յետս»²¹⁸;

1635 թ. կրկին պատերազմական գործողությունների հիմնական թատերաբեմը դարձավ Հայկական լեռնաշխարհը: Նույն տարվա գարնանը հսկայական օսմանյան բանակի գլուխ անցած սուլթան Մուրադ 4-րդը երևաց էրզրումում: Այդ առթիվ Ռիկոն հայտնում է հետաքրքիր մանրամասնություններ: Նա գրում է. «Այս ժամանակ (1635 թ.) Մեծ Տիրակալը եկել էր Պարսկաստանի սահմանում գտնվող էրզրում քաղաքը: Արդարություն առաջին գործը, որ նա այստեղ կատարեց, հանդիսացավ քաղաքի կառավարիչ փաշայի գլխատումը (ժողովրդի նկատմամբ) թույլ տված շարաշահումների և թալանի պատճառով: Այնուհետև տեսնելով, որ պատերազմի արհամարհները հատկապես տարածվել էին վերին ու Ստորին Հայքերում ու այս երկու նահանգներն ամբողջությամբ ամայացված էին, նա հրամայեց (երկիրը լքած) բոլոր բնակիչներին վերադառնալ իրենց բնակավայրերը: Այդ բանն անելու համար նրանց տրվեց ընդամենը քսան օր ժամանակ: Սակայն քանի որ նրանցից ոմանք իրենց գաղթած նահանգներում գնել էին տներ ու հողեր, ուստի հնարավոր չեղավ նրանց նկատմամբ կիրառել հրամանն իր ամբողջ խստությունը: Սակայն տեղում մնացողներն ստիպված եղան պետական դանձարանին վճարել որոշակի գումար ու ստանալ անդորրագիր:

Հուլիսի սկզբներին Մուրադը էրզրումի շրջակայքում անցկացրեց գորահանդես: Միացյալ բանակը... բաղկացած էր խիստ կարգապահ

շուրջ երեք հարյուր հազար մարտիկներից»²¹⁹: էրզրումից թուրքական բանակը Կարսի, Գլուղ-Կլումբեթի (Գեղանխատ) վրայով եկավ ու պաշարեց Երևանը: Ամբողջ մի շաբաթ պաշարողների հրետանին կրակ էր տեղում պաշարված քաղաքի վրա, քանզի իր նրա կավե պարիսպները: Երևանի հողե պարիսպները, Ժ. Բ. Տավերնիեի սրամիտ արտահայտությամբ, ավելի շուտ կարող էին քանդվել անձրևից, քան թե թնդանոթից»²²⁰:

Երևանի պաշարումն ու գրավումն ահա թե ինչպես է ներկայացնում իր ընթերցողներին Ռիկոն: Սուլթանը, ասում է նա, իր ենթականերին «...ծանոթացրեց իր նպատակադրումները, այն է՝ պաշարել Երևանը: Նա ավելացրեց, որ եթե տասն օրվա ընթացքում քաղաքը չբերավ զի, ապա քառասուն հազար մարդկանց թողնելով պաշարման գծում, ինքը իր բանակի մնացորդով ներսուժվելու է Պարսկաստան: Բանակը բաժանելու է երեք մասերի և ուղարկելու է տարբեր երեք ուղղություններով: Անմիջապես վրանները զրվեցին, ռազմական ճամբարը կազմվեց, թմբուկները զարնվեցին, խրամատները փորվեցին, պաշարումը սկսեց: Ամիրգունայի հրամանատարությունն անցրեց գտնվող (Երևանի) կայազորը բաղկացած էր տասնհինգ հազար մարդուց: Ամրոցը ապահովված էր ամեն տեսակի զինամթերքով, այնտեղ չէին պակասում ոչ անդամները և ոչ էլ արիասիրտ պաշտպանները: Այսուհանդերձ նա հանձնվեց իններորդ օրվա վերջին՝ պայմանով, որ զինվորները ու քաղաքաբնակիչները կենդանի կմնան և իրենց ինչքերը կմնան անձեռնամխելի: Այս կամավոր անձնատվությունը, որը կատարվեց Պարսկաստանի ամենանշանավոր երևելիների մեկի կողմից, առաջացրեց սուլթանի բարեհաճ վերաբերմունքը (Երևանի) կուսակալի նկատմամբ, վերջինն էլ, իր հերթին, սկսեց ավելի ու ավելի կուրորեն հաճոյանալ նրան: Այսպես նա մասնավորապես նրան հաճոյանում էր այդքան նշանակալի հաջողություններից հետո Մեծ Տիրակալի տված խնջույքների ժամանակ: Կոստանդնուպոլիս ուղարկվեց Երևանի գրավման լուրը... Դոնալման (հանդիսությունները) նշվեց փառահեղ շքեղությամբ: Նույնիսկ բրիտանոյա զինանազեղներին ստիպեցին մասնակցել հանդիսություններին այն պատրվակով, որ եթե իրենք հանդիսանում են սուլթանի բարեկամները, ապա պարտավոր են երևալ և ցուցաբերել իրենց ուրախությունը նորին մեծության հաջողությունների նկատմամբ»²²¹:

²¹⁹ «...Ces murailles n'estant que de terre la pluye y feroit plus de ma que le canon» (J. B. Tavernier, I, էջ 38)։

²²⁰ Նույն տեղում։

²²¹ Ricaut, էջ 105.

Ռիկոյի այն հայտարարությունը, թե քաղաքի հարստությունները, իբր չպիտի հափշտակվեն թուրք զավթիչների կողմից, չի համապատասխանում իրականությանը: Հակառակն են վկայում նույնիսկ թուրք պատմագրության ներկայացուցիչները: Այսպես, պատմագիր Նախման այդ մասին գրում է, որ սուլթանական դաֆթարդարները (ֆինանսական հաշվառուները) «...Ներսի ու զրսի բոլոր գույքերը, ինչպես և առկա ու պահված բոլոր հարստությունները հաշվատման ենթարկեցին ու վերցրեցին: Նրանք հափշտակեցին իրենց համար անսպասելի այն գանձերն ու անհաշիվ հարստությունները, որ երեսուն տարվա ընթացքում կուտակել էին Երևանի տիրակալն ու նրա հայր Ամիրգունախանը: Մտնելով խազինան (պետական գանձարանը) ու պահեստները (դաֆթարդարները) այնտեղ այնքան հարստություն ու մթերք հայտնարեցին, որ բանակին երկու տարի կրավարարեք»²²²:

1657 թ. Քյոնյում հրատարակված ու թուրքիայի պատմությանը վերաբերող մի աշխատության մեջ ասված է, որ «թուրքերը ոչ միայն չրավարարվեցին քաղաքի բնակչության կոտորածով, այլև ամենավայրագ ձևով կենդանի կանանց մորթագերծ արեցին»²²³: Թուրքական բանակը Երևանից Մարանդի վրայով շարժվեց դեպի Թավրիզ և սեպտեմբերի 12-ին մտավ և հրկիզեց քաղաքը՝ կողոպտելով ու կոտորելով բնակչությանը: Հայաստանի վրայով արշավող թուրքական բանակի կատարած գազանությունների մասին ընդարձակ տեղեկություններ դարձյալ պահպանված են Ռիկոյի մոտ: Ավելորդ չենք համարում բերել այդ վկայությունները: «Պարսկաստան արշավելիս,— գրում է նա,— թուրքերն անզուշորեն ընկան ծուղակի մեջ և հենց տեղում կորցրեցին յուրայիններից տասներկու հազար: Մակայն այս անհաշողությունը չընկճեց նրանց կամքը և զորաբանակի մնացորդներով շարունակեցին առաջխաղացումը՝ ահռելի ավերածություններ սփռելով ամենուր, որտեղից որ անցնում էին: Ահազանգված ու ահաբեկված գյուղական բնակչությունը ժամանակ էր գտնում փախչելու՝ իր հետ տանելով ամենաթեթև անհրաժեշտ իրերը, մնացածը թողնելով թշնամու տնօրինմանը: Այսուհանդերձ, թուրքերը կանգնեցին շնախատեսված մեծ դժվարությունների առաջ: Սրի օգտագործմանն ու հեծելավարությունը հմուտ պարսկական հեծելազորը անվերջ հարվածներ էր հասցընում նրանց, մաս առ մաս ոչնչացնելով արյունալի ընդհարումներից

հետո ...Աշխարհի ամենաարգավանդ այս շրջաններում բնակչությունը դրանից հետո զրկվեց սննդամթերքից»²²⁴: Թուրքական բանակն ընկնում է սովի ճիրանների մեջ: Մյուս կողմից, մոտալուտ ձմեռը սուլթանին ստիպում է անհապաղ նահանջել դեպի Դիարբեքիր, այնտեղից էլ մայրաքաղաք: «Մուրադի հեռանալը,— այնուհետև կարգում ենք Ռիկոյի մոտ,— սրտապնդեց պարսիկներին: Հազիվ էին թուրքերը դիմել նահանջի, երբ նրանք վերսկսեցին ռազմական գործողությունները և վերանվաճեցին կորցրած երկիրը»²²⁵: Շահ Սեֆիի կողմից շուտով պաշարվում է Երևանը և գրավվում: Հայերեն մի ձեռագրի հիշատակարանում Երևանի պաշարումը շահ Սեֆիի կողմից թվագրված է 1635-ի դեկտեմբերի 15-ով, իսկ գրավումը՝ 1636 թ. մարտի 15-ով. «ի թուին ՌՁԵ (1636) ի դառն և դիժար ժամանակիս,— կարգում ենք հիշատակարանում,— որ սուլթան Մուրատ թագաւորն ելաւ ի Բիւղանդիայ քաղաքէն եկաւ ի վերայ Արարատեան գաւառին յԵրևան քաղաքն էառ, գնաց ի Թավրէզ աւերեաց, յուլիսի ամսոյ ելն քաղաքն էառ և դարձաւ: Զաշխարհս վրդովեաց որ վանայ երկիրն գարին ամառն ԺԾ (15) դուռուչ եղև: Դարձեալ պարսից շահն եկաւ անշափ հեծելուք ի վերայ Երևանայ քաղաքին, դեկտեմբերի ամսոյ ԺԾ (15) քաղաքն ծեծեց մինչև ի մարտի ամսոյն ԺԾ (15) առաւ զքաղաքն»²²⁶: Ադամ Յլեարիուսի ու այլոց վկայությամբ, շահ Սեֆին Երևանը նվաճում է մեծ կորուստների գնով: «Թագավորը տեսնելով, որ շուրս ամիս պաշարումից հետո ոչինչ առաջ չէր գնում,— գրում է եվրոպացի հեղինակը,— անհամբերությունն ու հուսահատությունը մղեցին նրան անձամբ գլխավորելու քաղաքի պաշարումը, ասելով, որ ավելի լավ է այստեղ մեռնել, քան թե ամոթալի նահանջի դիմել մի վայրից, որը սրանից առաջ թուրքերը գրավել էին երեք օրվա ընթացքում: Նա արդեն հագել էր իր մի ծառայի հագուստը, որպեսզի շահանշվեր ամբոխի մեջ և հարձակման հրաման էր արձակել, երբ իշխանները շահնդանելով հանդերձ նրան հակաճառել, նրա իշխանուհի մորը աղաչեցին հասկացնել նրան, որ անհնարին էր ամբողջի գրավումը առանց ճեղքվածք բաց անելու, և որ պատահականությունը կարող էր նրա մահվան և ամբողջ բանակի ամոթալի կորստյան պատճառ հանդիսանալ:

Նա (մայրը) որպես պատասխան ստացավ վիրավորանք: Եվ թագավորը մուրճը վերցրած ուզեց ուղիղ նետվել հարձակման: Սակայն մեծամեծ իշխանները նետվեցին նրա ոտքը և աղաչեցին, որ իրենց

²²² „Tarikh-i Nâima“, I, էջ 264:

²²³ Vincent Stochow, L'Ottoman ou l'abrégé des vies des empereurs turcs depuis Ottoman I jusques à Majomet IV à présent régnant, Cologne, 1657. p. 106.

²²⁴ Ricaut, էջ 106:

²²⁵ Նույն տեղում, էջ 107:

²²⁶ Ղ. Փիրզալեմյան, Նշխարք... հ. Ա, էջ 209ա—209բ:

տրվի ևս մի օր, որի ընթացքում նրանք վերջին ճիգերը կթափեին ամբողջը գրավելու համար: Ամբողջ բանակը գործի գրվեց ու գրոհով գրավեց քաղաքը, բայց և տեղում կորցրեց ավելի քան հիսուն հազար մարդ (ընդգծումը մերն է—Մ. Զ.)»²²⁷: Բացի այդ, Երևանը գրավելու համար նույն Ադամ Օլեարիուսի վկայությամբ, սեֆյան զինվորները նետերի միջոցով ամբողջ են նետել հեղձուցիչ թունավոր նյութեր, «...սըլանք այն աստիճան վարակեցին օդը, որ ամբողջ կայազորը շարքից բուրս եկավ և ի վիճակի չեղավ պաշտպանել քաղաքը»²²⁸: Սա, հավանաբար, տեղի է ունեցել պաշարման վերջին օրերին, այլապես դիմաւորութիւնը թուրքերի կողմից չէր կարող չորս ամիս տևել: Թե ինչքանով են հավաստի Ադամ Օլեարիուսի այս հաղորդած վկայությունները, որոնք, անշուշտ, քաղված էին իրանական աղբյուրներից, դժվար է ասել: Մի բիշ այլ կերպ է նկարագրված շահ Սեֆիի կողմից Երևանի գրավումը Ժ. Բ. Տավերնիեի մոտ: «Մութաղը Երևանում թողեց,— գրում է նա,— քսաներկու հազարանոց մի կայազոր... Սակայն շուտով Պարսկաստանի թագավոր շահ Սեֆին մի մեծ բանակի հետ եկավ և ամրանալով քաղաքի վրա իշխող բլուրներից մեկի վրա, ութ թնդանոթների միջոցով կրակի տակ վերցրեց: Թնդանոթները տեղակայված էին շատ կարճ ժամանակվա ընթացքում կառուցված մի փոքրիկ ամբողջի վրա: Չորրորդ օրվանից սկսած նա ձեռք առաջացրեց և այս իշխանը, որն առաջներում շէր վայելում քաջի համբավը, առաջինը նետվեց հարձակման ու վերցրեց քաղաքը»²²⁹:

Արևելյան Հայաստանն ու Արևելյան Վրաստանը վերանվաճելուց հետո, Ադամ Օլեարիուսի վկայությամբ, շահ Սեֆին Իրան բռնագաղթված հայերի և վրացիների մի մասին թույլ է տվել վերադառնալ հայրենիք: «Միակ լավ արարքը, որ նա (շահ Սեֆին) կատարեց իր իշխանության ժամանակ,— գրում է նա,— այն էր, որ թույլ տվեց այս թշվառ մարդկանց, որոնց շահ Արասը քշել էր Երևանից, Նախիջևանից, Շիրվանից և Վրաստանից, թվով յոթ հազարից ավել մարդիկ, որոնց տեղավորել էր Ֆարրահաբադում, ուր նրանք աշխատում էին խոշոր կառույցների վրա և ապրում էին ողորմելի ստրկության մեջ, վերագրանալ իրենց տուն: Եվ սակայն միայն երեք հարյուր հոգի կարողացան օգտվել այս առանձնաշնորհումից, քանզի մնացածները մահացել էին քաղցից ու թշվառությունից»²³⁰:

Երևանի գրավումից հետո շահական զորքերը նորից ասպատակում են Արևմտյան Հայաստանի գավառները: «Երբ թուրքական բանակը նահանջելուց հետո գտնվում էր էրզրումում,— գրում է Ռիկոն,— լուր ստացվեց, որ պարսիկները պաշարել են Դիարբեքիրի կամ Հին Միջագետքի սահմանում գտնվող ու անմատչելի մի ժայռի վրա կառուցված, կարևորագույն քաղաք հանդիսացող Վանը: Քաղաքը պաշտպանվեց համառոտ, և պարսիկները չկարողացան տիրել նրան ոչ ուժով, ոչ էլ սովի միջոցով: Սակայն պաշարումը նրանց թույլ տվեց ասպատակելու ամբողջ երկրամասը և այն աստիճան այն ավերելու, որ թուրքերը չկարողացան ոչ ձմեռել այստեղ և ոչ էլ սննդամթերք ձեռք բերել: Այս անհաջողությունը հաջորդեց մի ուրիշը, որը (սուլթանի համար) նույնպես զայրացուցիչ էր, քանզի Մեծ Տիրակալը կորցրեց ևս տասնհինգ հազար մարդ: Ոմն մի քուրդ պատճառաբանելով, որ ինքը Պարսկաստանի թագավորի կողմից հալածանքի է ենթարկվել, հանձնվեց թուրքերին: Սկզբում նա նրանց բավականին օգտակար եղավ, առաջնորդելով նրանց (թուրքերին) վտանգավոր ու անձանոթ կածաններով: Ըններշան ծառայություններով նա այնպիսի հավատ վաստակեց, որ նրան համարում էին վստահելի անձնավորություն, որին կարելի էր հաղորդակից դարձնել կարևորագույն հարցերի: Կուրացած այդ հավատով, թուրքերը առաջնորդվելով (քրդի կողմից) շարժվեցին դեպի թշնամու ճամբարը: Նոր էին մտել մի լեռնանցք, ընկան ծուղակի մեջ, իսկ նա միացավ պարսիկներին: Այս դավաճանությունը պատճառ հանդիսացավ տասնհինգ հազար թուրքերի կորստին»²³¹:

Այս ռազմական գործողություններից առավել տուժողը, անշուշտ, հայ խաղաղ բնակչությունն էր: «Եւ ի շարժմանէ այս երկուց ինքնակալ թագաւորաց,— գրում է Առ. Դավրիժեցի,— աւերեալ ագաւկանեցան աշխարհք՝ արևելք և արևմուտք և մանաւանդ աշխարհն Արարատա իւր շրջակայ գաւառքն»²³²:

1637—1638 թթ. պատերազմական գործողությունների թատերաբեմը կրկին տեղափոխվեց Միջագետք: Ի վերջո՝ Բաղդադն ընկավ թուրքերի ձեռքը (15 դեկտեմբերի 1638 թ.):

Բաղդադի պաշարման ընթացքում սուլթանի հրամանով էրզրումի կառավարիչ Քենան փաշայի զորքերն օգնական թաթարական զորքերի հետ միասին ասպատակեցին Արարատյան նահանգը: «Դարձյալ յայսմ և թուին ՌՁէ (1638),— գրում է Գր. Դարանաղցին,— կրկին զԵրևան և զըրջակայ գաւառին գերեցոյց տաթարն, այլ յորժամ թագաւորն գը-

²²⁷ Ad'm Oléarius, էջ 646.

²²⁸ Նույն տեղում, էջ 650:

²²⁹ J. B. Tavernier, էջ 40—41.

²³⁰ Adan Oléarius, էջ 646:

²³¹ Ricaut, էջ 115:

²³² Առ. Դավրիժեցի, էջ 317:

նաց անհուն զօրօք դեպի կողմն Պաղտատու, հրաման արար տաթար խանին ամենայն զօրօք գնալ ի յԱրզրումն, իսկ տէր Արզրումին Քենան փաշան զօրագլուխ լիցի ամենայն զօրաց անդ հաւաքելոցն, զի միաբանութեամբ գնասցեն ի վերայ Երևանա գաւառացն և գերեւսցեն առհասարակ զամենայն հայք և զտաճկահաւատսն, և զամենայն անասունք զորս գտցեն՝ յաւարի առցեն, որպէս և արարին իսկ»²³³: Քենան փաշայի դեպի Երևան կատարած ասպատակութեան մասին խոսում է նաև Ռիկոն²³⁴:

Բաղդադը գրավելուց հետո սուլթան Մուրադ 4-րդը նպատակադրվել էր նորից հարձակվել Երանի վրա, սակայն հրաժարվում է այդ մտքից, նկատի ունենալով մարդկային ու նյութական այն մեծ կորուստները, որ թուրքական բանակը ունեցավ Բաղդադի արշավանքի ժամանակ: Բաղդադի գրավումից հետո, գրում է Ռիկոն, «...բանակի ընդհանուր ստուգումից հետո, նա (սուլթանը) նկատեց, որ այն նվազել է հարյուր հազար մարդով, որից երկու երրորդը սպանվել, իսկ մնացած մասը մահացել է համաճարակից և ճամբարում տարածված այլ հիվանդություններից»²³⁵: Ուտի և սուլթանը, այս անգամ ստիպված է լինում ունեն ղենել թշնամու կողմից առաջ քաշված հաշտութեան առաջարկներին: «Պարսիկներն ու թուրքերը հավասարապես ձգտում էին խաղաղության: Առաջինները հոգնել էին մի պատերազմից, որը նրանց կործանում էր: Մյուսները, այդքան կորուստներից հետո, երբ ի վերջո հասել էին հաշտության, չէին ուզում իրենց կայսրության փառքը ղենել բախտի քմահաճույքին»²³⁶:

1639 թ. մայիսի 17-ին Կասր-ի Շիրին կոչված վայրում երկու պետությունների միջև կնքվում է հաշտության պայմանագիր, որի համաձայն վերականգնվում են 1555 թ. մայիսի 26-ի Ամասիայի հաշտության պայմանները: Թուրքերին չի հաջողվում իրենց ձեռքում պահել Երևանը: Բանակցությունների ընթացքում նրանք համառորեն պահանջել են իրենց թողնել Արևելքում ստրատեգիական կարևորագույն նշանակություն ունեցող այդ վայրը: «Գոյություն ունեք մի խոչընդոտ, դա էլ այն հարցն էր, թե ում է պատկանելու Երևանը, — գրում է դարձյալ Ռիկոն, — որին հավակնում էին ինչպես մեկ, այնպես էլ մյուս կողմը: Սակայն այդ խոչընդոտը հանվեց (թուրք) վեզիրի կողմից... և Երևանը մնաց պարսիկներին, իսկ Բարեխոնը (Բաղդադը) թուրքերին»²³⁷:

Պատերազմից շարաշար տուժած հայ ժողովուրդը, բնակուրախությունը ընդունեց հաշտության լուրը: «Փառք իւր առաւրարութեան, — գրում է գրիչ Մարտիրոսը, — 1639 թ., — իւր աւթութեամբն գթութիւն ձգեալ ի սիրտս թագաւորաց վասն ողորմելւոյնց ազգիս և արարեալ սահման ի խաղաղութիւն և բարիշուքիւն: Եւ ետուր թագաւորն արևել(ե)ան Բարեխոնի բերդն ի ձեռն արևմտյան թագաւորին և եղև բարիշուքիւն հայոց ՌՁԼ (1639)»²³⁸: Պետք է ուրախանային, անշուշտ, հայերը, քանզի, ինչպես կարդում ենք ժ. Շարդենի մոտ, «Աշխարհում չկա մի այլ երկիր, ուր տեղի ունեցած լինեին այդքան շատ արյունալի ճակատամարտեր... Նա հանդիսացավ ռազմական գործողությունների թատերաբեմը թուրքերի և պարսիկների մըղած վերջին պատերազմներում: Թուրքերը կոչվում էին ամբողջ Հայաստանը նվաճելու համար, սակայն բավարարվեցին այն բաժանելով պարսիկների հետ, աչգուհանդերձ նրանք տիրեցին նրա մեծագույն մասին»²³⁹:

* * *

Հաշտության կնքումից հետո, եթե Արևելյան Հայաստանում ստեղծվում են քիչ թիվ շատ խաղաղ պայմաններ և երկիրը, որոշ առումով, բռնում է վերելքի ուղին, ապա արևմտահայ բնակչության քաղաքական անդորրը հաճախակի խանգարվում էր փաշաների հակակառավարական ապստամբություններով, ինչպես նաև էրզրումի, Վանի փաշաների ու քուրդ ցեղապետերի ընդհարումներով, վերջիններիս թալանչիական արշավանքներով դեպի հայկական գավառներն ու, երբեմն, վանքերը և այլն:

1646 թ. Արաղա անունով մի ապստամբ, որն իրեն ներկայացնում էր որպես էրզրումի նախկին կուսակալ, բարձրացրեց խռովության ալիքը և պատճառ հանդիսացավ արյունալի ընդհարումների²⁴⁰:

Նույն թվականին սուլթանական կառավարության դեմ խռովություն է բարձրացնում Կարսի կառավարիչը: Մեծ վեզիր Ահմեդ փաշան էրզրումի կուսակալ Մուհամմեդ փաշային կարգադրում է ձեռնել ապստամբությունը, սակայն վերջինս վախենալով, որ դա իր դեմ ուղղված թակարդ է, ապստամբում է և գալով Սեբաստիա՝ միանում է մեծ հռչակու հեղինակություն ձեռք բերած Զարդար Ալի փաշայի հակակառավարական գործերին²⁴¹: Վերջինիս ապստամբության շարժառիթների մա-

233 Կր. Գարանազի, էջ 579:

234 Ricaut, էջ 143:

235 Նույն տեղում, էջ 153:

236 Նույն տեղում:

237 Նույն տեղում, էջ 154:

238 Մատ., ձեռ. № 7087, էջ 367բ:

239 Jean Chardin, II, էջ 158:

240 J. Hammer, X, էջ 129—130:

241 Նույն տեղում, էջ 145—146:

մին Յոզ. Համմերի մոտ կարգում ենք հետևյալը. «Շիտակ անձնավորություն հանգիստացող ու անկախությունը սիրող Ալի փաշան որոշեց իր ենթականերին ոտքի հանել օսմանյան բռնակալության անտանելի լծի դեմ: Այլևս չկարողանալով հանդուրժել հարեմի կանանց գերիշխանությունը, կառավարիչների անվերջ փոփոխության պատճառով անիշխանությունը, որ տիրում էր կայսրության մեջ, նա մի շարք կառավարիչների հետ համատեղ դիմեց (սուլթան) Իբրահիմին, որ նա հրովարտակ հրապարակի այն մասին, որ հետ այսու քաղաքացիական և վարչական բարձրագույն պաշտոնյաները փոփոխվելու են յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ»²⁴²:

Կառավարությունը, դրան ի պատասխան, նենգության միջոցով սեպ խրեց ապստամբների շարքերում և դաժանորեն ճնշեց ապստամբությունը:

Հազիվ էր սուլթանը ճնշում մի ապստամբությունը, երբ այն սկզբվում էր մի այլ վայրում, գերազանցապես հայաբնակ շրջաններում: Պատճառը միշտ և բոլոր դեպքերում միևնույնն էր՝ սուլթանական կառավարության բռնակալությունները և առանձին ֆեոդալների նկատմամբ վարած հալածանքի քաղաքականությունը: «Հարեմական բռնակալությունը, սուլթանի անիմաստ պննանքն ու մեծ վեզիրի բռնակալությունն աճում էին օրավուր»²⁴³, գրում է Յոզ. Համմերը: «Վաճառքի հանելով պետական պաշտոնները,— այնուհետև շարունակում է նա,— մեծ վեզիրը կառավարչության մեջ ստեղծել էր ավազակության մի համակարգ... որը և ծնունդ էր տալիս ամեն տեսակի շարաշահունների ու քաղաքականությունների»²⁴⁴:

Նույն այդ՝ 1646 թվականին Ակշահիրի շրջանում ապստամբություն բարձրացրած Հայդար օղլին և Կաթրըշի օղլին իրենց խռովության շրջանակը ծավալեցին մինչև Ապարտա: Ապստամբները, ինչպես վկայում է Երեմիա Չելեբի Քյոմյուրճյանը, սպառնում էին նույնիսկ մայրաքաղաքին:

Ընդ աուրս ոմն Հայտար օղլի
զզորայս ընդ իւր ժողովեալ.
Եւ բազում անգամ փաշայք
վերայ երթան, զորս աւերեալ:

²⁴² Նույն տեղում, էջ 139—140:

²⁴³ J. Hammer, X, էջ 156:

²⁴⁴ Նույն տեղում, էջ 162:

... Ղաթրըճի օղլին խրոխտայր,
ուր հանդիպէր՝ զվնաս բերեալ,
Մուրատ փաշան պատգամ յըզէ,
որոյ բանիցն ոչ յաւանեալ:

Մուրատն ասեր. «Յըրուես՝ ըզզօրսդ,
մանսուպ (պաշտոն) տացուք, լիցիս նըստեալ,
Եւ նա գայր մինչ յուսկիւտար
ընդ վեզիրին պատերազմ տալ»²⁴⁵:

Այս Կաթրըշի օղլին շուտով իր ապստամբ զորքերը միացնում է ներքի Գյուրջի անվանված մի այլ ապստամբի զորքաների հետ, որոնք Փոքր Ասիայի տարբեր մասերում կողոպտում էին գյուղերը, ավանները ու առևտրական կարավանները²⁴⁶: 1649 թ. ամռանն ապստամբ զորքերը մի քանի անգամ ծանր պարտության մատնեցին կառավարական զորքերին, սակայն, ի վերջո, ստիպված եղան զենքերը վար դնել:

1651 թ. հակակառավարական այս ապստամբություններից առանձնապես տուժեցին Վանն ու Վասպուրականը, որի մասին մանրամասն տեղեկություններ են հաղորդում Առ. Դավրիժեցին և այլ հայկական աղբյուրներ: Այդ տարին, կարգում ենք Մ. Չամչանի մոտ, «...գրգռուեալ էր խռովութիւն ի կողմանս Վասպուրականի ի մէջ երկուց տաճիկ իշխանաց, որոց մին էր հրամանատար Վանայ երկրին՝ Հիւսեյին անուն, և միսն իշխան Խոշարայ բերդին՝ Սիւլեյման անուն, առ որ յարեցաւ և իշխան ոմն Չոմար անուն՝ անկեաի բոշխուլթենէ՝ և ապրստամբեալ ի թագաւորէն օսմանցոց՝ այր անյաղթ և անգութ: Երկուքին սորա Սիւլեյման և Չոմար յարձակեալ զօրօք իւրեանց ի գիւղօրէս և յաւանս Հիւսեյին իշխանին՝ յաւարի առին զամենայն»²⁴⁷:

Ապստամբ զորքերը, ինչպես դա արդեն սովորույթ էր, զբաղվում էին առևտրական կարավանների կողոպտումով: Նրանցից մեկի՝ Սուլեյման-բեկի մասին Առ. Դավրիժեցին գրում է. «...Եղև երբեմն զի զճանապարհորդ կարաւանս, որ ի Վանայ գնային ի Թարվէզ և ի Թարվիզու ի Վան, սա (Սուլեյման բեկը) զկարանաւանաց բեռինսն բռնութեամբ բանայր և որ ինչ իրաց և հաւանէր, սուղ ինչ գին ձգէր ի վերայ տիրոջն և կորզեալ ի տիրոջէն յինքն առնոյր զինչսն, և պատճառէր թէ գնով գնեցի»²⁴⁸:

²⁴⁵ Երեմիա Քյոմյուրճյան, Պատմութիւն... էջ 241:

²⁴⁶ J. Hammer, X, էջ 212—213:

²⁴⁷ Մ. Չամչան, Գ, էջ 643:

²⁴⁸ Առ. Դավրիժեցի, էջ 494:

Այս Սուլեյման բեկն ու վերոհիշյալ Չոմարը համատեղ հարձակվում են Վարազա վանքի վրա ու կողոպտում նրա հարստությունները: Ի վերջո, մի քանի տարի տևած այս ապստամբությունները ճնշվում են: Վանքի կողոպտված հարստությունը Վանի մեծահարուստ հայ խոջաները, և նախ և առաջ, Մարխաս Չելեբին, այդ «...այր երեկելի և փարթամ»-ը քսակի ուժով զնում ու վերադարձնում են Վարազա վանքին:

1654 թ. ծանր ու մղձավանջային օրեր են ապրում նաև Բաղեշի ու նրա շրջակայքի հայ բնակիչները՝ Վանի կուսակալ Մելիք փաշայի և Բաղեշի ցեղապատ Աբդալ խանի զինված ընդհարումների ժամանակ: Այդ մասին մանրամասն տեղեկություններ են պահպանված Վարդան Բաղիշեցու մոտ²⁴⁹: Ընդհարման համար գլխավոր պատճառն էր ջիզիե հարկի գումարի զավթումը քուրդ ցեղապետի կողմից²⁵⁰: Զինված ընդհարումն ավարտվում է Աբդալ խանի պարտությունով: Մելիք Փաշայի զորքերը մտնում են Բաղեշ և կողոպտում քաղաքը. «...իսկ զօրք փաշային ... մտին ի քաղաքն և յաւարի առին, և կողոպտեցին զքրիստոնեայս, և աստ էր տեսանել զաղաղակ և զողբն մեր, զի զբազումս սպանին, այսինքն քառասուն այր քրիստոնեայ սպանին»²⁵¹:

Այս դեպքերը հետևյալ արտահայտությունն են գտել Երեմիա Քյոմյուրճյանի օսմանյան պատմությանը նվիրված աշխատության մեջ:

«Ի Պիթիս քաղաք Մարաց
այն, որ Բաղեշն է կոչեցեալ,
Ապտալ խան ոմն անդ նստեր,
Ի վաղ ամաց մեծ օճաղ լեալ:
Օսմանցոց արքայք ոչ ոքն
զնոսա նեղէ և կամ սպանեալ,
Վանայ ինչ սուղ պատճառաւ
ի մէջ զօրաց դաւ ինչ ցուցեալ:
Վանայ փաշայն կարծես էառ,
Վընասապարտ զնա գերացեալ,
Յանկարծ կոխէ զյար Ապտալին
և Իստամպօլ ըզնա յըշեալ»²⁵²:

XVII դարի 50-ական թվականների վերջերին Փոքր Ասիայի և Հայաստանի տարածքի տարբեր մասերում առանձին ֆեոդալների հակա-

կառավարական ելույթները նոր թափ ու նոր երանգ ստացան: Պա կապված էր մեծ վեզիր Մեհմեդ Քյոփրյուլյուի հետամտած կենտրոնացված պետություն ստեղծելու քաղաքականության հետ: Նա անխնա ոչնչացնում էր ամեն տեսակի կենտրոնախույս ուժերին, հաճախ ռազմական ընդհարումների թատերաբեմ դարձնելով Փոքր Ասիայի մերթ այս, մերթ այն մասը:

1657 թ. քաղաքական դեպքերին անդրադառնալիս, Մ. Չամչյանը գրում է. «Ի նոյն աւուրն հրաման յղեաց Եպարբոսն (Մ. Քյոփրյուլյուն) առ այլևայլ Բղեշսօ կողմանց ... զալ ժողովել զօրօք առ ինքն՝ ի պատրաստութիւն պատերազմի ընդդեմ մաճառաց, և յանսաստ գտանիլ նոցա՝ իբրև սկսաւ փոխել զոմանս ի նոցանէ, ապստամբեցան բազումք թոտվ ութ և տասն, և եղեն ելուզակք, այսինքն՝ ճելալիք»²⁵³:

Ելնելով աղբյուրների հաղորդած կցկտուր տեղեկություններից, կարելի է եզրակացնել, որ թուրք-իրանական սահմանը հաճախակի խախտվել է նաև 1639 թ. հաշտությունից հետո: Հաճախ նման խախտումներն արդարացվել են ավազակախմբերին հետապնդելու իրավունքի պատրվակով: Հայաստանում ճիզվիտ միսիոներների գործունեությունը նվիրված աշխատությունից իմանում ենք, որ թուրք-իրանական ընդհարումների պատճառով միսիոներներից ոմանք շեն կարողացել Երևան մեկնել Բայազետի վրայով: «Երբ նրանք (միսիոներները) գտնվում էին Բայազետի մերձակայքում, նրանց տեղեկացրին, որ Երևանի խանը Բայազետի բեգի կամ իշխանի հետ պատերազմի մեջ է և որ նրանց վտանգ էր սպառնում գերեվարվել և կողոպտվել պատերազմող կողմերի որևէ մեկի կողմից»²⁵⁴:

1699 թ., Կարլովիցի հաշտության պայմանագրի կնքումից հետո, երբ Օսմանյան կայսրությունը Եվրոպայում մեծ տարածքային կորուստներ ունեցավ ու էապես թուլացավ, կենտրոնախույս խռովարար տարբեր Փոքր Ասիայի տարբեր մասերում նորից գլուխ բարձրացրին՝ ըստեղծելով վերին աստիճանի ծանր իրավիճակ: Հատկապես հաճախակի դարձան քուրդ բեգերի ապստամբությունները Քրդստանում և քրդական ազդեցության ոլորտի տակ ընկած արևմտահայ գավառներում: 1702 թ. մայիսին խոշոր ապստամբություն բարձրացրեց Շեհրիզորի բրդերի առաջնորդ Բեբե Սուլեյմանը: Մեծ վեզիր փաշային միայն մեծ զոհողությունների զնով հաջողվեց ճնշել ապստամբությունն ու հաշվեհարդար տեսնել ապստամբների հետ²⁵⁵: Շուտով ապստամբություններ

249 «Մանր ժամանակագրություններ», Կ. II, Երևան, 1956, էջ 395—397:

250 Նույն տեղում, էջ 396:

251 Նույն տեղում, էջ 397:

252 Երեմիա Քյոմյուրճյան, էջ 275—276:

253 Մ. Չամչյան, Գ, էջ 668:

254 „Etat présent de l'Arménie“, էջ 257:

255 J. Hammer, XIII, էջ 59:

բանկվեցին նաև Ուրֆայում, Մալաթիայում և այլուր, որոնք երկար ժամանակ լարված վիճակում պահեցին կառավարությունը:

Համաձայն հայկական աղբյուրների վկայությունների, նույն 1702 թ. քրդական ապստամբական ելույթներ են տեղի ունեցել Վանում ու Վասպուրականի տարբեր վայրերում՝ Արճեշում, Արժկեշում, Բերկրիում, Բաղեշում և այլուր²⁵⁶: Քրդական բեգերի ապստամբություններ Վանում-Վասպուրականում արձանագրված են նաև 1711 և 1715 թվականներին²⁵⁷:

1703 թ. ենիշերինները գահընկեց արեցին Մուստաֆա 2-րդին: Սուլթան հուշակվեց Ահմեդ 3-րդը (1703—1730), որը դաժանորեն հաշվեհարդար տեսավ իրեն գահ բարձրացրած «խռովարարների» հետ: Կա Մոտրեյի վկայությամբ, մի քանի տարվա ընթացքում սուլթանի հրամանով սպանվեց ավելի քան 30 հազար մարդ: Անընդհատ փոփոխվում էին մեծ վեզիրները: Քաղաքական կյանքը երկրի ներսում շարունակում էր մնալ անկայուն և խռովահույզ:

Սուլթան Ահմեդի օրոք ռուս-թուրքական հարաբերությունները ծայրաստիճան սրվեցին: Պալատական վերնախավի հետադիմական թևը ձգտում էր ամեն գնով ետ վերագարձնել Կարլովիցի հաշտության պայմանագրով կորցրած տարածքը, այլ կերպ ասած՝ ծարավ էր պատերազմի:

Սուլթանական պալատի հետադիմական ուժերին ոգեշնչում էին օսմանյան մայրաքաղաքում Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչները: Նրանք Ռուսաստանին մեղադրում էին թուրքիայի կողմից ստորկացված քրիստոնյաներին հովանավորելու մեջ:

Ռուսաստանի միջազգային հեղինակությունը XVIII դարի սկզբներին խիստ մեծացել էր: 1696 թ. Ազովը գրավելուց հետո Ռուսաստանն արդեն աստիճանաբար մոտենում էր Կովկասին ու Անդրկովկասին և, քնականաբար, թուրքիայի և Իրանի կողմից ստրկացված Անդրկովկասի ժողովուրդները, նախ և առաջ քրիստոնյաները, Հյուսիսի այդ նոր հրակային դիտելով որպես իրենց ամենահուսալի հովանավորն ու դաշնակիցը, օգնություն ու հովանավորություն էին հայցում նրանից:

1701—1703 թվականներին թուրքական տիրապետության տակ գտնվող Վրաստանում, Բոսնիայում, Չերնոգորիայում և Բալկանյան թերակղզու այլ վայրերում անվերջ ապստամբություններ էին տեղի ունենում:

1711 թ. բանկված ռուս-թուրքական պատերազմը նոր ոգևորություն առաջացրեց թուրքերի կողմից ստրկացված քրիստոնյա ժողովուրդների մոտ, սակայն Պրուտ գետի ափին ռուսական զորքերի կրած անհաջողությունը նրանց ստիպեց առժամանակ հետաձգել իրենց փախված երազանքների իրականացումը: Այնուամենայնիվ, առաջվանման հայերն ու վրացիները շարունակում էին փրկություն սպասել Ռուսաստանից, որը մնում էր Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակների միակ հովանավորն ու հետևողական պաշտպանը:

²⁵⁶ «Մանր ժամանակագրություններ», հ. I, էջ 362:

²⁵⁷ նույն տեղում, էջ 363:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԸ
XVIII ԴԱՐՈՒՄ

XVIII դ. սկզբին, եթե հայության արևելյան հատվածը իրանական պետության անկման պայմաններում գտնվում էր ծայրահեղ ծանր վիճակում ու քաղաքական նոր փոփոխիկների շեմին, ապա արևմտահայ հասարակական խավերն ալեկոծվում էին ներհամայնքային պայքարից: Հայ կաթոլիկների ու չուսավորչականների միջև սուր տարածայնությունները քաղաքական որոշ հոսանքների խմորումների արգասիք էին: Եթե հայ կաթոլիկները իրենց գործունեությամբ հաճախ անգիտակցաբար ընդառաջում էին Եվրոպայի կաթոլիկ աշխարհի՝ Արևելքում հետամտած գաղութային նպատակներին, ապա հայադավան եկեղեցին, իր հակակաթոլիկական դիրքորոշումով, ոչ միայն արևմտահայ լայն զանգվածներին հեռու էր պահում կաթոլիկ Եվրոպայի՝ Արևելքում վարած քաղաքականության վնասակար ազդեցությունից, այլև դրանով իսկ փորձում էր շարել հայ համայնքի և օսմանյան պետության փոխհարաբերությունները:

Արևմտահայ համայնքի շրջաններում առանձնապես քայքայիչ գործունեություն էին ծավալել Լյուդովիկոս 14-րդի գործակալ միսիոներները: «Կես դարուց ի վեր, — գրում է Ֆրանսիացի հայտնի պատմաբան Ա. Վանդալը, — մեր միսիոներները ողողել էին Արևելքը: Կապուչինները ու ճիզվիաները այլևայլ դարտուղի ճանապարհներով թափանցել էին արևելյան համայնքի ներսը: Նրանք քրիստոնյա ժողովուրդների մոտ թմբկահարում էին թագավորի (Լյուդովիկոս 14-րդի) անպարտելիությունը¹: Միսիոներների հիմնական նպատակը ոչ թե հայերին իրական օգնություն ցույց տալն էր, այլ Արևելքում Ֆրանսիայի նվաճողական քաղաքականությանը ծառայելը»: «Եթե Կոլբերը կազմակերպում էր Օսմանյան կայսրության տնտեսական նվաճումը, — գրում էր եվրոպացի մի հեղինակ, — ապա Լյուդովիկոս 14-րդը երազում էր գաղափարապես,

քարոշապես նվաճել այն»², այսինքն՝ Արևելքում ստեղծել կաթոլիկական հենարան:

Արևելքում Ֆրանսիայի վարած քաղաքականությունը քրիստոնյա համայնքների շրջանում առաջացնում էր ազգային երկպառակություն, որը հղի էր լուրջ քաղաքական հետևանքներով: Ֆրանսիայի այդ քաղաքականությունը դատապարտվում է նույնիսկ Ֆրանսիական բուրժուական պատմագիտության ներկայացուցիչների կողմից: Այսպես, Ա. Վանդալի մոտ կարդում ենք. «Լյուդովիկոս 14-րդի իշխանության վերջին տարիներին այն հետաքրքրությունը, որ Ֆրանսիան ցուցաբերում էր դեպի (Արևելքի) կաթոլիկները, ընդունեց նեղմիտ ու անտանելի բնույթ... Միսիոներների բոցավառ եռանդը շուտով անցավ ամեն մի շափ ու սահման և նրանց դեմ հանեց հերձվածող հոգևորականությանը (իմա՝ հայերին ու հույներին): Սրանց (միսիոներների) ազդեցության ներքո, մեր քաղաքականությունը հարձակումներ թույլ տվեց այլախոհների նկատմամբ, դիմեց բռնությունների ու զզվելի արարքների, որոնք պատճառ հանդիսացան կաթոլիկների նկատմամբ սկսված դաժան հալածանքների. Լյուդովիկոս 14-րդը շուրջում էր Արևելքի բոլոր եկեղեցիները հոռմեական եկեղեցուն միացնելու գաղափարով. նա դրանց բողբոջ ստակալի խոտվուրջան ու երկպառակուրյան վիճակում» (ընդգծումը մերն է — Մ. Զ.)³:

1703 թ. Ավետիք պատրիարքը հալածանք ձեռնարկեց հայ կաթոլիկների դեմ և նրանցից շատերին բանտարկել տվեց: Եվ քանի որ հայ կաթոլիկները մինչ այդ պատրիարքից բողբոջել էին կառավարությանը, ինչպես այդ մասին գրում է Մ. Զամչյանը, պատրիարքն ստիպված է լինում մեկնել Ազրիանապոլիս՝ մեծ վեզիրին բացատրություններ տալու նպատակով: Երբ Ավետիք պատրիարքը ներկայացավ մեծ վեզիրին վերջինս, թուրքական ազբյուրների վկայությամբ, կատաղած նրան դիմեց հետևյալ խոսքերով. «Շուն, չգիտե՞ս որ միայն սուլթանն իրավունք ունի իր հպատակներին բանտ նետել»: Եվ հրամայեց պատրիարքին բանտ նետել, սակայն Մուֆթի Ֆեյզուլշահի միջնորդությամբ ստիպված եղավ շուտով նրան ազատել և նրա փոխարեն շորս մեծահարուստ հայ կաթոլիկների դատապարտեց թիավարության: Ավելին, պատրիարքին հաջողվեց մեծ վեզիրից հրովարտակ կորզել ու բացահայտ հալածել հայ կաթոլիկներին. «Յետ այսօրիկ առեալ Աւետիք վարդապետ ձեռամբ դենպիտէ հրովարտակ ի դրանէ՝ առաքեաց զարբունի սպա-

¹ Les voyages de marquis de Nointel, էջ 8.

² G. Pellissé de Rausas. Le régime des capitulations dans l'empire ottoman*, Paris, 1910, էջ 47-48.

³ A. Vandal, էջ 14.

սաւորս լամենայն քաղաքս Անատոլիոյ և Յունաստանի՝ շարշարելոց զազգն, և առնուլ յիւրաքանչիւրոց բազում ինչ, պատճառելով՝ թէ նորի Ֆրանկացեալ իցեն, զորս և կոչէր կաթողիկոս: Եւ յայս տուգանս էարկ ոչ միայն զհայս, այլև ի բազումս՝ ի յունաց եղելոց ի հեռաւոր քաղաքս, և անկաւ շփոթ և շշուկ մեծ ի մէջ ազգին. և ընծայեցաւ այլոց ազգաց ամենայն նիւթ ծանակելոյ զազգ մեր»⁴:

Կոստանդնուպոլսի Ֆրանսիական դեսպան Ֆերիոնը թուրքական կառավարութեան միջոցով 1706 թ. Ավետիք պատրիարքին արտօրել տրվեց և ապա՝ բանտարկեց սկզբում Մարսելի մի վանքում (1707—1709 թվականներին), իսկ այնուհետև Բաստիլի բերդում, ուր նրան բռնի կաթողիկ դարձրին: Պոլսահայ լուսավորչական համայնքը ցասումով դիմավորեց կաթողիկ աշխարհի ներկայացուցչի նման արարքը:

1705 թ., գրում է Յոզեֆ Համմերը, կառավարութեան կողմից կաթողիկոսների նկատմամբ սանձազերծված հալածանքները սաստկացան: Կաթողիկոսական հայերը Կոստանդնուպոլսում հիմնել էին մի տպարան, ուր «...ֆրանսիական դեսպանի անմիջական հովանավորութեան ներքո թուրքիկներ էին տպում պատրիարքի և ոչ կաթողիկ հայերի դեմ: Մեծ վեզիրը խիստ հսկել տվեց ճիզիվիտների տունը և հրամայեց ձերբակալել այն բոլոր հայերին, որոնք հաճախում էին այնտեղ»: Այնուհետև, «...սուլթանական մի խաթիբ-ի շերեֆ (հրովարտակ) արգելում էր նրանց (ճիզիվիտներին) ամեն մի պրոպագանդա ու հրամայում ձերբակալել բոլոր կաթողիկոսական հայերին»:

Այս վերջինների պատրիարքը և վեց այլք, որոնք տքնում էին բանտերում, մահվան դատապարտվեցին մեծ վեզիրի (Չորլուու Ալի փաշայի) կողմից: Ձերբակալվածներից վեցը գլուխը փրկեցին ուրանալով իրենց կրոնն ու ընդունելով իսլամը: Միայն մեկը՝ Կոմիտաս վարդապետը⁵, քաջութուն ունեցավ մնալու որպես կաթողիկ և պատրաստակամութուն հայտնեց ընդունել մարտիրոսի դասնակապակը⁶:

Կաթողիկոսական հայերի դեմ կառավարութեան սանձազերծած հալածանքները գործադրվում էին ոչ միայն մայրաքաղաքում, այլ արևմուտահայ բոլոր գավառներում: Մայրաքաղաքում և արևմտահայ գավառներում կաթողիկ միսիոներների առաջ բերած հուզումները, երկպառակություններն ու թշնամությունները Ալեքսանդր Չուղայեցի կաթողիկոսին ստիպեցին դիմել Կլիմենտ պապին՝ 1709 թ. փետրվարի 25

թվակիր նամակով, ուր մասնավորապես նշում էր, որ պապի քարոզիչները «...ոչ պարտին աշխատ լինել առ մեզ, այլ առաւել առ այնոսիկ՝ որք ոչ կարդան զանուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի», մինչդեռ կաթողիկ քարոզիչները «ատելութեամբ են լցված հայ քրիստոնյաների հանդեպ: Նրանք «...զմեծք շրջապատեալ պաշարեն, արկանելով ի մէջ քրիստոնէիցս աղմուկ խոտովութեան և փոխանակ շինութեան և հաստատութեան արկանեն յուրով գայթակղութիւնս»: Հիշեցնելով, որ պետութիւնը «...այլազգի է և ոչ պաշտոնեայ քրիստոնէութեան, զթով գթայ և նախախնամեալ պահպանէ զմեզ թարց զգուանաց, իսկ առ մեզ եկեալ պատրիքն ոչ այսպէս, այլ ներհակաւ վարին ընդ մեզ», հայոց կաթողիկոսն առաջարկում է, որ կաթողիկ քարոզիչներին «թուղթ առաքես ի ձեռս մեր, և մեք ցուցցուք պատրոցն, թերևս կասեցին յատելութենէ քրիստոնէից»⁷: Սակայն կաթողիկոսի այս նամակը մնում է առանց արդյունքի:

1720 թ. թուրքական կառավարութիւնը հայոց պատրիարքին տալիս է նոր հրովարտակ՝ նրան թուլատրելով կայսրութեան բոլոր շերտաններում ամենախիստ պատժի ենթարկել հայ կաթողիկոսներին: Պատրիարքը, գրում է Մ. Չամչյանը «...էստ ի նմանէ (սուլթանէ) հրովարտակ՝ ըմբռնել և մատնել ի գանս կամ ի ծառայութիւն թիոյ զայնոսիկ՝ որք ոչ գնան յեկեղեցիս հայոց: Եւ իբրև տարածեցաւ հրաման այսր հրովարտակի լամենայն գաւառս թագաւորութեան, բազում տառապանք հասանէին ի վերայ բազմաց, ի Կոստանդնուպոլսի կարգեցան սպասաւորք յիշխանէն Ղալաթիոյ, որք սպասեալ լանցս ճանապարհաց մոտ ի դրունս եկեղեցեացն լատինացոց՝ ըմբռնէին զորս միանգամ տեսանէին՝ ի հայոց գնալ անդր: Եվ ապա առեալ գրամս ի նոցանէ՝ ըստ իւրաքանչիւր կարի՝ յոմանց յիսուն դահեկան, յոմանց հարիւր և աւելի ևս էր զի ի բաց թողուին, և էր զի ի բանտ և ի կոճեղս մատնէին և զոր միանգամ գտանէին ուրէք կաթողիկ անուամբ ոչ թողուին առանց վնասու և տուգանաց: Սոյնպես էր և առաւել ևս ճան յայլ քաղաքս ի Բերիա, ի Կարին, յԵղոկիա, Անկիւրիո, ի յԱմիդ և այլն (ընդգծումը մերն է — Մ. Չ.)»⁸:

1721 թ. էրզրումի կառավարիչն իր նահանգում համատարած հալածանք է սկսում հայ կաթողիկոսների դեմ: Հայերի միջհամայնքային պայքարից օգուտ էին քաղում փաշաներն ու կուսակալները, Մ. Չամչյանը նշում է, որ յուրաքանչյուր պատժի ենթակա հայից փաշաները գանձել են 35000 դահեկան⁹:

⁴ Մ. Չամչյան, Գ, էջ 743:

⁵ Հիշատակված Կոմիտաս վարդապետը՝ Երեմիա Չելբիի Քյոմյուրճյանի եղբայրն էր (տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 2756):

⁶ J. Hammer, XIII, էջ 185:

⁷ Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 2752—2753:

⁸ Մ. Չամչյան, Գ, էջ 777:

⁹ Նույն տեղում:

Հալածվում էին, անշուշտ, ոչ միայն հայ կաթողիկոսները: Մարքիզ դե Վինյովին նվիրված աշխատության մեջ Ս. Վանդալն այդ մասին գրում է: «Կես հարյուրամյակից ի վեր, քաղաքացիական պատերազմը տիրում էր հայ ազգի մեջ: Հայադավաններն ու կաթողիկոսները հաջորդաբար գնում էին աշխարհիկ բռունցքը, այսինքն՝ թուրքական իշխանության հովանավորությունը, փոխադարձաբար իրար հալածելու նըպատակով: Բռնությունը (թուրքական պետության հովանավորության ձեռքբերումը—Մ. Զ.) որոշ իմաստով դրված էր աճուրդի»¹⁰:

Կոստանդնուպոլսի ֆրանսիական դեսպանները, քաղաքական նկատումներով ու օգտվելով թուրքական կառավարության վրա ունեցած իրենց ազդեցությունից, անվերջ միջամտել են արևմտահայերի ներհամայնքային պայքարին, սակայն նրանց այնպես էլ չի հաջողվել հայ զանգվածների մոտ առաջացնել ֆրանսիական կողմնորոշում, ինչպես դա ուզում են իրենց ընթերցողներին հրամցնել ֆրանսիացի բուրժուական պատմաբանները:

* * *

XVIII դարի 20-ական թվականներին Սեֆյան Իրանն անկում էր ապրում: Այդ պրոցեսը վառ գույներով նկարագրված են Յուզե Կրուշինսկու և եվրոպացի այլ հեղինակների աշխատություններում: Շահ Աբասի օրոք ստեղծված ավատատիրական կարգուկանոնից ոչինչ չէր մնացել: Պետական պաշտոնները բացահայտորեն դարձել էին առուծախի առարկա: Տեղական իշխանության մարմինների ներկայացուցիչների կատարած կամայականություններին և պարզապես ոճրագործություններին շափ ու սահման չկար: Շահական պալատում իշխանությունն ամբողջությամբ անցել էր այսպես կոչված սև ու սպիտակ ներքինիների ձեռքը: «Թագավորը (շահ Հուսեյնը—Մ. Զ.),— գրում է Յուզե Կրուշինսկին,— ամբողջովին կլանված էր հարեմական հաճույքներով, և բոլորովին չէր մտահոգվում պետական գործերով... Պաշտոնները բաժանելիս հաշվի չէր առնվում ոչ տվյալ անձնավորության արժանիքը և ոչ էլ նախկինում տվյալ անձնավորության մատուցած ծառայությունները: Իշխանությունը ձեռքբերելու միակ ճանապարհը մնում էր թագավորի վստահությանն արժանացած մարդկանց սիրաշահելը: Այս մարդիկ... ոսկու կշռով հրապարակորեն վաճառում էին պետական պաշտոնները, որոնք տրվում էին ոչ թե ամենաարժանավորին, այլ ամենից շատ վճարողին»¹¹: Անցնելով իրենց պաշտոնին, իշխանավորներն

¹⁰ A. Vandal, էջ 426:

¹¹ Y. Krusinski, էջ 44—45:

աշխատավոր զանգվածների նկատմամբ «կատարում էին ամեն տեսակի բռնագանձումներ»¹²: «Ամեն ինչ կատարվում էր խեղճ ժողովրդի հաշվին»¹³, այնուհետև գրում է Յուզե Կրուշինսկին: Իրենց իշխանությունը դիտելով որպես ժամանակավոր երևույթ, այնուհետև շարունակում է լեհ հեղինակը, նրանք «մտածում էին ավելի շատ կողոպտել իրենց իրավասության ենթարկված քաղաքներն ու գյուղերը՝ առանց որևէ մի անհանգստության նշանի, քանզի գիտեին, որ մնալու են անպատիժ»¹⁴:

Անվերջ կողոպտումների ու ավազակությունների պատճառով խափանվել էր երկրի ներքին ու արտաքին առևտուրը: Կարավանային առևտրով զբաղվող վաճառականները, կարգում ենք Յուզե Կրուշինսկու մոտ, «չկարողանալով ոչ ազատվել գողերի մեքենայություններից և ոչ էլ արդարություն տեսնել իշխանավորների մոտ, ստիպված գիմում էին մի տեսակ գործարքի գողերի հետ, նախապես նրանց տալով սրոշակի մի գումար և իրենց զերծ պահում կողոպտվելուց»¹⁵:

Շահ Հուսեյնի իշխանության տարիներին ազգային փոքրամասնությունների և, մասնավորապես, հայ քրիստոնյաների նկատմամբ հալածանքը դարձավ սովորական երևույթ: Սեֆյան Իրանի անկման պայմաններում իշխանությունների կողմից թույլ էր տրվում սպանել հայ քրիստոնյային և սպանվածների հարազատներին վճարել ընդամենը մի էշաբեռ ալյուր: «Բոլոր նահանգներում,— կարգում ենք Յուզե Կրուշինսկու մոտ,— այս նոր արդարադատությունը գոհերի պատճառ է դառնում, քանզի երբ մի մուսուլման սպանի մի հայի, ապա կարող է դատապարտվել միայն հանգուցյալի ընտանիքին կերակրելու համար մի ավանակի բեռ ալյուրով»¹⁶:

Հայերի նկատմամբ իրանական իշխանությունների գործադրած հալածանքներին անդրադառնում են նաև եվրոպացի այլ հեղինակներ: «Անհավատները,— գրում է ճիզվիտ մի միսիոներ,— հայերի նկատմամբ գործադրում են դաժան իշխանություն: Նրանց ծանրաբեռնում են զանազան տուրքերով ու հարկերով և դրանք հավաքում բռնությամբ»¹⁷: Մի ուրիշ միսիոներ՝ Լա Մացը, անդրադառնալով թավրիզի հայության իրավական վիճակին, նշում է, որ «...հայ քրիստոնյաները խիստ ճնշվածների են ենթարկվում, հայերին մշուսներից լավ տարբերելու հա-

¹² Նույն տեղում, էջ 46:

¹³ Նույն տեղում, էջ 50:

¹⁴ Նույն տեղում, էջ 79—80:

¹⁵ Նույն տեղում, էջ 103:

¹⁶ Նույն տեղում, հ. Բ, էջ 88:

¹⁷ „Lettres édifiantes“, էջ 104:

մար հրամայված է, որ իրենց մահուդն գլխարկներին մանիշակագույն կտոր կարեն, և նրանց արգելում են տներին դուրս գալ անձրևի ժամանակ կամ երբ ցեխ է լինում: Ե՛վ Սպահանում, և՛ Իրանի մյուս կողմերում ըստ ամենայնի ջանք են թափում, որպեսզի մարդիկ հրաժարվեն քրիստոնեական կրոնից... Անգամ Շամախում հայերին կործանելու զարմանալի միջոցների են դիմում: Անհիմն տուգանքներ են բարդում նրանց վրա, իսկ գյուղացիներն այն աստիճան են ճնշված, որ գրեթե բոլորն էլ մտածում են իրենց երկրից հեռանալու մասին և եթե ունենային ապահով ապաստան՝ այստեղ չէր մնա ոչ ոք»¹⁸:

Հուլիական աղբյուրների վկայությունները համահնչուն են օտար հեղինակների հաղորդումներին: Խոսելով «պարսից երկդիմի գազանաց մասին», 1726 թ. գրած իր հիշատակարանում Ղազար Զահեկեցի գրելը հաղորդում է հետևյալը. «Չարաչար և զանազան տառապանօք ջանին, կեղեքմամբ և զանազան տառապանօք ամբարշտացան ընդ ազգս հայոց, թարց ամբաստանութեան և վկայի քմբունէր զանմեղս և կապէր զարդարս պրկեցուցանելով ի վերայ յերկրի, ակցի և բոլնցի: Խոշոր և ստուար փայտոց կբռնէին և հարկանէին, զոմանս զընկունս ոտիցն հանէին և զոմանս մատունս և զթաթս ի գարշապարաց թափէին, զոմանց զսրունքն և զբարձս խորտակէին և զայնպիսի անողորմ և դառն ջանին տանջանօք կիսամահ արարեալ եղեալ ի բանդի, առնէին զինչս և վաճառէին զտունս և զամենայն կարասիս տանն ի վաճառանացս, յղեցուցանէին: Ի խանութս և ի կիսագին ծախմամբ զգինս վաճառելոցն առնէին և ապա արձակէին զբանտարկեալսն: Քանզի զարդարն ընդ ամբարիշտքն կորուսանէին և զանմեղսն ընդ մեղանշականքն պատժէին: Զի ոչ գոչ քննութիւն ի մեջ նոցին: Եւ զայնպիսի գործս անօրենութեան որով գործեցին ի յորբս և յայրիս, ի վանս և ի յանապատս, ի կարգաւորս և ի ճգնակիր կրօնաւորան Աստուծոյ և ո՞ կարողացի բաւել զանշափութիւն շարեաց շանց կատաղելոց»¹⁹:

Ինչպես մի ժամանակ՝ V դարում ևս դաժան հալածանքի էին ենթարկվում հասարակության բոլոր խավերը, ներառյալ նաև հայ հոգեվորականության ներկայացուցիչները, որոնց մասին ակնարկում է ժամանակի պատմիչ, Աղվանից հայոց կաթողիկոս Եսայի Հասան Զաւալյանը: «Ընդ ամին,—գրում է նա,—կաշտոս յուրվս, և տասանորդս և զկարգեալ վարձս զինուարացն առաւել քան զշափն առնուին և ապա զգրեալն կրկնէին, ապա յետ այսորիկ՝ զբեցին (նկատի ունի 1699—

1702 թվականների մարդահամարը—Մ. Զ.) և զվանորայս, զանապատս և զգիւղօրէից եկեղեցիսն, ընդ ամին և զեպիսկոպոսունս և զաբեղայս և զերիցունս առհասարկ ի թիւ արկին և աւարտելով զնոսա սկսան գրել և զվաճառականսն և ճանապարհորդսն և զորս սուղ ինչ առևտրոյ տեսարքն էին, զամենեսեան ի համարաթիւն գրելով. գլխոցն երեքպատիկ յաւելմամբ ի վերայ առաջնոյ սահմանին»²⁰:

Եվ այս պայմաններում է, ահա, որ իր քաղաքական գործունեությունը ծավալեց Իսրայել Օրին՝ հանուն հայ ժողովրդի ազատագրման: Նա, որպես Պետրոս I-ինի և Հոռմի պապի դիվանագիտական ներկայացուցիչ, մեծ շքախմբով մեկնեց Իրան, որի մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում նույն ինքը՝ Յուզե Կրուշինսկին: Միսիոներ այս հեղինակը ոչ միայն Իսրայել Օրիի ժամանակակիցն էր, այլև անձնապես ծանոթ էր հայ քաղաքական գործչին ու նույնիսկ ուղեկցել էր նրան, երբ վերջինս Ռուսաստան էր վերադառնում Իրանից:

Յուզե Կրուշինսկու հուշապատումները սկզբնաղբյուր էին դարձել եվրոպացի բոլոր այն հեղինակներին²¹ համար, որոնք նկարագրում էին XVIII դարի առաջին քառորդի Իրանի քաղաքական դեպքերը: Հետևաբար բոլոր նրանք Իսրայել Օրուն ներկայացնում են բնավորության բացասական գծերով օժտված քաղաքական մի արկածախնդրի դերով, այնպես, ինչպես վարվել է Յուզե Կրուշինսկին: Իսրայել Օրու կյանքի ու քաղաքական գործունեության մեծագույն հետազոտող Աշ. Հովհաննիսյանը նշում է, որ եվրոպական պատմագիտության ներկայացուցիչները հաշվի չեն առել «...արժեքավոր այն ուղղումներն ու լրացումները, որ արել է հեղինակը մեմուարների 1740 թվականի հրատարակության մեջ»²²: «Գրքի վերջին հրատարակության մեջ,— այնուհետև կարդում ենք Աշ. Հովհաննիսյանի մոտ,— նա (Յուզե Կրուշինսկին—Մ. Զ.) ոչ միայն պաշտպանեց գիրքն ուրիշների անտեղի հարձակումներից,

²⁰ Եսայի կաթողիկոս, Պատմութիւն կամ լիշատակ ինչ ինչ անդից գիպելոց յաշխարհին Աղուանից, Շուշի, 1839, էջ 17—18:

²¹ Յուզե Կրուշինսկու մեմուարները առաջին անգամ լույս են տեսնում Հոռմում լատիներեն ճեռնյալ վերնագրով՝ «Relatio de mutationibus memorabilis Regni Persarum». Հաջորդ՝ 1728 թվականին Փարիզում և Լոնդոնում ֆրանսերեն և անգլերեն լեզուներով. տե՛ս Du Cerceau. Histoire de la dernière révolution de Perse «The History of the Revolution of Persia, taken from the memoirs of Father Krusinski»: Գրքի առաջին խմբագրության մեջ Իսրայել Օրուն վերաբերող մասը օգտագործվել են անգլիացի Զոն Հանվելի, An historical account of the British Trade of the Caspian Sea with the Revolutions of Persia*, London. 1753 թ. և 1757 թ. Հոռմում իտալերեն լեզվով լույս տեսած «Viaggio in Palestina* Persia et Mesopotama» վերնագրված աշխատության մեջ:

²² Աշ. Հովհաննիսյան, Գրվագներ..., հ. Բ, էջ 564:

¹⁸ «Письма и донесения изумтов о России», СПб, 1904, էջ 106 և 107, հմմտ Աշ. Հովհաննիսյան, Գրվագներ..., հ. Բ, էջ 542—543:

¹⁹ Մատ., ձեռ., № 2121, էջ 267ա:

այլև հրաժարվեց իր իսկ անիրավ մի շարք մեղադրանքներից»²³: Իր մի շարք թերություններով հանդերձ Յուզե Կրուշինսկու հուշապատումները «...Օրիի գործունեությունն անդրադարձող նրան ժամանակակից գրեթե միակ պատմողական աղբյուրն է»²⁴: Իսրայել Օրու մասին տեղեկությունները Յուզե Կրուշինսկին քաղել է մասամբ հայ քաղաքական գործչի «բերնի խոստովանություններից», մասամբ ուրիշների արած դիտողություններից:

Յուզե Կրուշինսկու՝ Իսրայել Օրու մասին հաղորդած տեղեկությունները հիմնականում հանգում են հետևյալին: 1708 թ. Շամախի կառավարիչը հայտնում է (շահական) պալատին, որ «...պապի և հոռմեական կայսեր հանձնարարական նամակներով հանդերձ սահման է ժամանել Ռուսաստանի ցարի դեսպանը, որին ուղեկցում է մեծ թվով արտասավոր մի բազմություն: Միաժամանակ լուր ստացվեց, որ Հայաստանի Ղափան քաղաքում ծնված այս դեսպանն իրեն հայտարարում էր այս երկրի հին թագավորություններից սերած և հասկացնել էր տալիս, որինքը չի հրաժարվում իր տոհմական իրավունքներից: Այսքան անիմաստ այս աղմուկները ահազանգեցին շահ Հուսեյնին և իր վեզիրներին... Հայաստանի թագավորների այս հավակնոտ ժառանգը մի արկածախնդիր էր, որը նախ՝ եղել էր Լեոպոլդ կայսեր բանակին սուրճ մատակարարող զինվոր և ցածրաստիճան սպա: Ծանոթ լինելով արեւմտյան լեզուներին, նա ուղարկվել էր Կոստանդնուպոլիս՝ հետազայում Կարլովիցում հաշտության պայմանների նկատմամբ թուրքերի բռնելիք դիրքը շոշափելու համար: Վերադառնալով Կ. Պոլսից, նա անցել էր ցարի ծառայությանը և իր այս նույն ընդունակությունների համար ցարից ստացել էր գնդապետի աստիճան և դարձյալ ուղարկվել (Կ. Պոլիս) ու բանակցությունների միջոցով համաձայնությունն ձեռք բերել Ռուսաստանի և Բ. Գոան միջև և շեղոքացնել վերջինին այն ժամանակներից Ռուսաստանը պատերազմ էր հայտարարելու շվեդական թագավորին:

Կատարելով ցարի կարևոր այս հանձնարարականը և շահելով նրա բարեհաճ վերաբերմունքը, Իսրայել Օրին իր մատուցած ծառայությունների փոխարեն պահանջել էր Սպահանի դեսպանությունը: Նա ոչ անհիմն այդ դեսպանությունը նայում էր որպես հարստանալու միջոցի, քանզի դեսպանները Պարսկաստանում օգտվում են մաքսահարկեր վճարելու իրավունքներից: Իր դեսպանությունն ալելի մեծ փայլ տալու նպատակով նա ուղևորվեց Վիեննա ու Հոռմ և իրեն պապին ներ-

կայացնելով որպես մի մարդու, որն ազդեցություն ունի հայ հերձվածողների նկատմամբ, ստացավ Կղեմես 11-րդ պապի հանձնարարականները՝ ուղղված Շահ-Հուսեյնին»²⁵:

Նվ ահա ունենալով բոլոր այս վավերագրերը, Իսրայել Օրին իր մեծ շքախմբով ժամանում է Շամախի ու արժանանում տեղի խանի պատվավոր ընդունելությանը: Երբ Շամախիում էր գտնվում Իսրայել Օրին, այդ նույն ժամանակ Սպահանի պալատում էր գտնվում Իրանի դեմ ապստամբած աֆղանների առաջնորդ Միր-Վեիզը: Սկսած 1690 թվականից աֆղաններն անվերջ ապստամբական դրություն մեջ էին Իրանի նկատմամբ: Միայն XVIII դարի սկզբներին Կանդահարի կառավարիչ, վտարանդիության մեջ գտնվող վրաց Արշիլ թագավորի եղբայր Գուրգին խանին հաջողվել էր ձնշել նրանց դիմադրական ուժը, ձերբակալել Միր-Վեիզին և ուղարկել Սպահան: Վերջինս իր շողոքորթությունները կարողացել էր նվաճել շահական պալատի ներկայացուցիչների և շահի վստահությունը ու նրանց լարել Գուրգին խանի և Իսրայել Օրու դեմ: Յուզե Կրուշինսկու վկայությամբ, Իսրայել Օրու դեսպանության և Գուրգին խանի Կանդահարում ծավալած հակաաֆղանական գործունեության միջև կա որոշակի կապ, որը կազմակերպվում էր ցարի կողմից և որի նպատակն էր Իրանի անկախության վերացումը: Միր-Վեիզը, գրում է Յուզե Կրուշինսկին, շահական պալատին «Գուրգին խանին ներկայացնում էր որպես Պարսկաստանի ամենավտանգավոր մարդու, որին չի կարելի վստահել մանավանդ ներկա իրադրությունների պայմաններում»²⁶: Նա Իրանի դեկավար շրջաններին «հարեկում էր մոսկովցիների հզորություններ, որոնք շվեդական թագավորի պարտությունից հետո ի զորու էին իրենց կամքը թելադրել իրենց բոլոր հարևաններին: Ի՞նչ կլինի, շարունակում էր նա, եթե բնականորեն մըշտապես անհանգիստ ու հուզաթաթախ վրացիները, որոնք միևնույն հավատալիքների ու դավանանքի համար հակում ունեն դեպի մոսկովցիները օգտվեին ներկայիս (բարենպաստ) պայմաններից և զենքի միջոցով հասնեին ազատագրման»²⁷: Ռուսների հետ Իրանի դեմ համատեղ ռազմական գործողությունների կոչ են անում, ասել է Միր-Վեիզն Իրանի պալատականներին, Գուրգին խանի Պետերբուրգում հաստատված մերձավորագույն ազգականները: Անհրաժեշտ է ուշադրությունը սևեռել,— այնուհետև խորհուրդ է տրվել աֆղանների առաջնորդը,— Պարսկաստանում մեծ թիվ կազմող հայերի վրա: Առևտրի միջոցով

²³ Նույն տեղում, էջ 584:

²⁴ Նույն տեղում, էջ 567:

²⁵ „Histoire de Perse“, I, էջ 46—49:

²⁶ Y. Krusinski, էջ 221:

²⁷ Նույն տեղում:

ձեռք բերած հսկայական հարստությունները, ինչպես և իրենց կյանքը հայերը պատրաստ են պատե՛հ առիթի դեպքում օգտագործել իրենց համար անտանելի լուծը թոթափելու և իրենց թագավորությունների ժամանակ վայելած ազատությունը վերականգնելու համար: Եվ վերջապես,—ամելացնում էր նա,—երբ մի կողմից մոսկովցիները մտնեին իրենց գրկաբաց դիմավորող Վրաստան, մյուս կողմից հայերն ապրատամբություն բարձրացնեին թագավորության մեջ, և իր հերթին՝ Գուրգին խանը աֆղաններին ապստամբեցնելով Կանդահարը հանձնե՛ր մոնղոլ տիրակալին և նրա ուժերի հետ դաշնակցած արդեն հարձակվե՛ր մոսկովցիներին և հայերին դիմակայող Պարսկաստանի վրա: Ինչ կլինե՛ր այն ժամանակ բոլոր կողմերից հարձակման ենթարկված թագավորության վիճակը»:

Հավանաբար, ուսանողի օգնությամբ հայկական թագավորություն ստեղծելու հեռանկարներն այս ժամանակ այնքան շոշափելի էին դարձել, որ Միր-Վերգին առիթ էին տվել անելու նման եղրահանգումներ: Նամանավանդ, որ Ի. Օրին Անդրկովկասում, մասնավորապես հայերի մոտ, ծավալել էր ազատագրական տրամադրություններ: Նման պայմաններում շահ Հուսեյնը նպատակահարմար գտավ արագացնել Ի. Օրունդունելությունը, շնայած ֆրանսիական դեսպան Միշելի մեքենայություններին, որը փորձում էր Իսրայել Օրուն ներկայացնել որպես կեղծ դեսպանի, միաժամանակ ամելացնելով, որ «եթե պապը, կայսրը և ցարը, որոնց ներկայացուցիչը լինելու հավակնություն ունի, կարևոր գործեր ունենային Պարսկաստանի արքունիքի հետ, դրանք չպիտի հանձնեին թագավորին ստրուկ մի հայի. իմ նամակի հետևանքով էր, որ արգելեցին նրա մուտքը Սպահան մինչև որ ստուգվե՛ր նրա դեսպանության օրինականությունը»²⁸:

Շահ Հուսեյնը, ինչպես այդ մասին վկայում է նաև Յուզե Կրուշինսկին, ուսական դեսպաններին ընդունեց մեծամեծ պատիվներով: Իսրայել Օրին շահին է ներկայացնում Պետրոս 1-ի նամակը, ուր մասնավորապես ասված էր, թե շահի դեմ ըմբոստացած քրիստոնյա հպատակների նկատմամբ իրանական տիրակալը կցուցաբերի գթասրտություն և ներման կարժանացնի նրանց²⁹:

Իսրայել Օրուն քաղաքական առաքելության մանրամասնությունները և շահի հետ նրա վարած բանավարությունների մասին հայ և օտար ազդյուններում, ինչպես նշում է Աշ. Հովհաննիսյանը, վկայություններ չեն պահպանված: «Օրին,— այնուհետև գրում է նա,— խոստանում էր Իրանում ունեցած իր գործունեության մասին անձամբ զեկուցել Մոսկվա հասնելուց հետո»³⁰:

Դեպի Իրան ուղևորվելիս և վերադարձին, Իսրայել Օրին երկու անգամ տեսակցվել էր էջմիածնի կաթողիկոս Ալեքսանդր Զուղայեցու հետ: Կաթողիկոսի հետ բանավարությունների ժամանակ Իսրայել Օրին հանդես է եկել որպես ուսական պետության քաղաքական շահերի և հայերի ուսական կողմնորոշման արտահայտիչ: Ողևորված այս բանակցություններից, կաթողիկոսը հատուկ նամակ է հղում Պետրոսի 1-ինին: «Բայց մեր սիրելի որդի և եղբայր Իսրայելիս գնալն և գալն ի Պարսկաստան,— գրում էր կաթողիկոսը ցարին,— յոյժ զարմացոյց ամենեքեան»: «Քան զշափն աւելի սէր և բնդունելութիւն արաք և քո հրամանայդ որպիսութիւնն և կատարեալ սէրն, որ ունիս առ յազգս մեր, ամէնն մի ըստ միոջէ պատմեաց մեզ՝ և մեք ուրախացեալ ընծացաք»³¹:

Իսրայել Օրին և՛ Հայաստանում, և՛ Անդրկովկասի այլ հայաշատ վայրերում հանդիպումներ էր ունեցել նաև հայ հասարակության տարբեր ներկայացուցիչների հետ, որոնք օգնության ակնկալություններ ունեին Ռուսաստանից: 1710 թ. կանցլեր Գուրովինին գրած նամակում Իսրայել Օրին գրում էր, թե «մեր երկրի մեծն ու փոքրը ողջուն են ուղարկում մեծ թագավորին»: Իսրայել Օրուն դիվանագիտական այս առաքելությունը մեծ ոգևորություն է առաջացնում հատկապես Ղարաբաղի հայության մոտ: Իր հուշապատումների թուրքերեն հրատարակության մեջ, կարդում ենք Աշ. Հովհաննիսյանի մոտ, Յուզե Կրուշինսկին այդ մասին հաղորդում է ուշագրավ տեղեկություններ: Նա գրում է հետևյալը. «Պատահեց այդ ժամանակ տարօրինակ այն բանը, որ դարաբաղցի հայ իշխանավորները ժողովրդի հետ միասին հայտարարեցին, թե, ինչպես ասված է իրենց գրքերում, հայազգի այն թագավորը (խոսքը լեգենդի խոստացած ազատարար թագավորի մասին է) գալու է Իրան, որպեսզի գրավելով Ղարաբաղի երկիրը և իշխանություն հաստատելով այնտեղ, վերականգնի Հայաստանի նախկին վիճակը, այս բանը հայտնի է լինելու նաև իրեն, այդ թագավորին, երբ որ հանդիսավոր կերպով Շամախի մտավ դեսպանը (քանի որ 300 հայ ուղեկից ուներ և

²⁸ „...Le pape, l'empereur et le czar dont se disait ministre avait eu des affaires de conséquences à traiter à la cour de Perse. ils ne les auraient pas confiées à un Arménien esclave du Roi, et c'est sur ma lettre qu'on lui défendit d'entrer dans Hispahan, jusque à ce qu'on est bien vérifié le vérité de sa légation" (Mémoires du sieur Michel sur son voyage en Perse. — Bibliothèque Nationale, Fonds français, № 7200, 220—221):

²⁹ Աշ. Հովհաննիսյան, Գրվագներ..., հ. Բ, էջ 600:

³⁰ Նույն տեղում, էջ 604:

³¹ Նույն տեղում:

100 մարդ էլ նոր միացավ դրանց), հայտարարելով, թե ինքը ծագում է հայ թագավորների սերնդից, հռչակվեց, թե հենց նա է իրենց գրքերի նախագուշակման թագավորը, ուստի, ասացին, սա է մեր թագավորը, եկել է իր երկիրը և պիտի պաշտպանություն գտնի մեր կողմից»³²:

Ենթադրվում է, որ հենց այս ժամանակ էլ Ղարաբաղում և Անգրրկովկասի այլ շրջաններում կազմակերպվում են հայկական զինվորական միավորումները՝ սղնախները, որոնք ուղղակի օգնություն ակրնկալիքներ ունեին Ռուսաստանից: 1716 թ. Պետրոս 1-ինին գրած նամակում Գանձասարի հայոց կաթողիկոս Ծոսախ Լասան Զալալյանն ամբողջությամբ ապավինում էր Ռուսաստանին և պատրաստակամություն էր հայտնում համատեղ հանդես գալ թշնամու դեմ: «Եւ յօժար սրտիւ կամիմք ընդ հովանեաթեկոց քոց լինել,— գրում է կաթողիկոսը,— «մեր պատրաստ եմք ընդ առաջ բո ըստ իմում կարողութեանս, և մեր նաահնգիս մելիքովք մեծամեծովք և փոքուրք և յորժամ կամեսցի հզօր և մեծ թագաւորութիւնդ յաջապարել այսր կամօքն աստուծոյ. յայնժամ զնշան գործոյն խնդրեմք ցուցանել մեզ, զի առաւել հաստատ լիցուք ի վերայ խորհրդեանս, և ապա զամենայն հանգամանք երկրիս, ծանուցուք առաջի քոյ...»³³:

Սեֆյան Իրանի թուլացումից փորձեցին օգտվել ոչ միայն աֆղանները, ինչպես տեսանք, այլև հպատակ շատ ժողովուրդներ, նախ և առաջ, քրդերը, արաբները, ինչպես և ուրիշները: Այդ մասին մեզ մանրամասն տեղեկացնում են եվրոպացի հեղինակները: Նույն Յուզե Կրուշինսկու վկայությամբ, 1719 թ. քրդերն ապստամբելով, ուղղակի գործողությունները տեղափոխեցին Համազանի մատույցները և «նույնիսկ երևացին Սպահանի մոտ»³⁴: Ուզբեկներն ասպատակում էին Խորասանի ընդարձակ նահանգը³⁵, Կովկասում ապստամբել էին լեզգիները³⁶: Վերջապես ապստամբության գրոշը երկրի հարավում՝ Խուզիստանում, բարձրացրին արաբները:

Լուրջ իրադարձություններ ծավալվեցին նաև Վրաստանում ու նրբան հարավից կից շրջաններում: Վրաց Վախթանգ թագավորը, որն ուրանալով քրիստոնեական հավատքը, նշանակվել էր Վրաստանի վալի, 1719 թ. Իրանից վերադառնալով հայրենիք՝ Քարթլի, «հուզված այն ավերածություններից, որ կատարել էին լեզգիներն իր տիրույթ-

ներում, որոշեց վրեժ լուծել նրանցից և ապահովել իր թիկունքը այդքան վտանգավոր հարևանությունից»³⁷: Սակայն հետագա իրադարձությունները գործը հասցնում են նրան, որ շահական պալատը ստիպված 1720 թ. հաշտվում է Քարթլիում Վախթանգ թագավորի քաղաքական դիրքերի ամրապնդման գաղափարի հետ:

Վախթանգ 6-րդն այն հեռատես քաղաքական գործիչն էր, որ առաջ քաշեց վրաց-հայկական համատեղ ապստամբության գաղափարը, և նկատի ունենալով Ռուսաստանի, Վրաստանի ու Հայաստանի շահերի համընկնումը, նույն այդ 1720 թվականին Պետրոս 1-ինի հետ համաձայնագիր կնքեց Իրանի դեմ համատեղ ուղղակի գործողություններ ծավալելու մասին:

1721 թ. օգոստոսի 7-ին լեզգիները հարձակվեցին Շամախի վրա և սպանեցին այնտեղ գտնվող ուսու վաճառականներին, որը Ռուսաստանն առիթ դարձրեց իր զորքերը մտցնելու Անդրկովկաս և Հյուսիսային Իրան: Օսմանյան պետության գործակալներ հանդիսացող լեզգի ֆեոդալները, տեղ գտնալով Շամախիին, ապստամբեցրին Շիրվանը, անցան Կուր գետը և Գառու խանի գլխավորությամբ պարտության մատնեցին Երևանի խանի զորքերին, հրի ու սրի մատնեցին երկիրը և պաշարեցին Գանձակը³⁸: 1723 թ. հունվարի 31 թվակիր Սպահանի ֆրանսիական դեսպանորդ դե Լա Գարգանի գրած զեկույցագրից իմանում ենք, որ լեզգիները Շամախիում մեծ ավերածություններ ու կոտորածներ սարքելուց հետո «ասպատակել էին երկրի մյուս մասերը, րածներ սարքելուց հետո «ասպատակել էին երկրի մյուս մասերը, ստրկության մատնել մեծ քանակությամբ տղամարդկանց ու կանանց և սարսափելի ավերածության ու կողոպուտի էին ենթարկել ողջ շրջակայքը»³⁹: Ահա Անդրկովկասի ժողովուրդների համար այսպիսի ծանր օրերին էր, որ Ռուսաստանն օգնության ձեռք մեկնեց նրանց:

1722 թվականին Սեֆյան Իրանը հոգեվարքի մեջ էր: Կանդահարի կառավարիչ Միր-Վեիզին հաջորդած Մահմուդն իր ապստամբ զորքերի հետ ներխուժեց Իրան և եկավ ու պաշարեց Սպահանը: Ծանր օրհասական ժամանակ ապրեցին, ինչպես դարձյալ վկայում է Յուզե Կրուշինսկին, ջուղահայերը: Ինքը՝ կաթոլիկ այս հեղինակը, այդ օրերին, ինչպես արգեն նշվեց, գտնվելիս է եղել նոր Զուղայում՝ հայերի մեջ: Նա խոսում է նոր Զուղայի երբեմնի բարգավաճ վիճակի, ջուղահայերի XVII դարի ընթացքում ձեռք բերած այլևայլ արտոնությունների

32 Նույն տեղում, էջ 607:

33 Նույն տեղում, էջ 611:

34 «Histoire de Perse», II, էջ 121:

35 Նույն տեղում, էջ 121—122:

36 Նույն տեղում, էջ 122—123:

37 Նույն տեղում, էջ 176:

38 Նույն տեղում, էջ 208—209:

39 Н. Н. Табагуа, Материалы для исто ни Гру.ни п рв й четв рты VII века. Тбилиси, 1962, հավելված № 1, էջ 367:

մասին, սակայն նկատում, որ «Հուսեյնը գահ բարձրանալով վերջ տվեց այն բոլոր արտոնություններին, որոնք տարբեր հանգամանքներում շնորհվել էին իր նախորդների կողմից»⁴⁰: Համաձայն Յուզե կրուշինսկու, շահ Հուսեյնը օգտվելով Մահմուդի արքայազանքից, ձգտել է վերջնականապես հարվածել չուղահայերին: Նա պահանջել է նրանցից զինված ներկայանալ պալատ և ուղղամաճակատ մեկնած բանակի փոխարեն ապահովել իր անձի պաշտպանությունը: Հայերը նման վստահություններից մեծապես շոյված ներկայանում են արքունիք և անմիջապես զինաթափվում: «Այդպիսին էր գործերի վիճակը, երբ աֆղանները հայտնվեցին Զուղայի առաջ և անմիջապես սկսեցին հարձակումը. այն սկսեց զիշերը և տևեց մի ամբողջ երկու ժամ: Պաշարվածները, որպեսզի այն տպավորությունը թողնեն, թե իրենց թիկունքում կանգնած է կանոնավոր բանակը, մեկը մյուսին պարսկական անուններով էին կոչում: Եվ համարյա առանց զենքի նրանք այնպիսի համառությունը պաշտպանվեցին, որ թշնամին կարողացավ միայն ամրապնդել շտապ կարգով ձեռք բերած փոքրիկ դիրքը:

Ոգևորված այս հաջողություններից, հայերը սպասում էին Արաբիայի վալիի գալստին, որպեսզի, իրենց հերթին անցնեն հարձակման, սակայն այս զորապետն արդեն հասկացնել էր տվել, որ ինքը քիչ է հակված ընդհանուր շահագրգռություն ներկայացնող հարցերի լուծմանը: Այս տարօրինակ մտտեցումը, հայերին զինաթափելու նախաձեռնությունը, և նրանց օգնական կայազոր ուղարկելու կոչն անուշադրության մատնելը մարդկանց հանգեցրին այն մտքին, որ թագավորի մտադրությունն է Զուլֆան և նրա բնակիչներին զոհաբերել հանուն մայրաքաղաքի փրկության: Ենթադրվում էր, որ աֆղանները կողոպտելով արվարձանի մեծ հարստությունները, բավարարված կլինեն և կմտածեն վերադառնալ Կանդահար»⁴¹:

Զուղահայերը ստիպված Մահմուդ շահի հետ մտնում են բանակցությունների մեջ: Աֆղանական տիրակալը համաձայնվում է հայերի առաջարկի հետ, այն է՝ աֆղանները կոտորածի ու կողոպուտի չպիտի դիմեն, իսկ դրա փոխարեն հայերը պարտավորվում են վճարել 70 հազար թուման ռազմատուգանք⁴²: «Ինչքան էլ ծանր լինեք այս պայմանը, — այնուհետև հաղորդում է Յուզե կրուշինսկին, — Մահմուդը դրան ավելացրեց ավելի ծանրը: Դեռ նոր էր տեր դարձել Զուղային, երբ հայերից պահանջեց տոհմիկ ընտանիքներից իր հայեցողությամբ

ընտրված որոշակի քանակությամբ երիտասարդ աղջիկներ»⁴³: Սպահանի ֆրանսիական դեսպանորդ զե Լա Գարդանը իր հերթին հայտնում է միևնույնը: Ըստ նրա հայերը պարտավորվել են Միր Մահմուդին վճարել 1.400 հազար էքրու:

Աֆղանցի բռնակալը գրանով էլ չի բավարարվում: Շուտով շեղյալ համարելով չուղահայերի հետ կնքված համաձայնագիրը, նա իր բանակին հրամայում է մտնել հայերի տները և կողոպտել ամեն ինչ: «Ոսկի, արծաթ, թանկագին քարեր, կահույք, թանկարժեք կերպասեղեն ամեն ինչ կողոպտվեց և բնակիչները հոգեվարքին հասած իրենց վրա կրեցին հարձակումով զավթված մի քաղաքին սպառնացող ամեն տեսակ բռնությունները»⁴⁴:

Այսբան հարստությունները չկարողացան բավարարել հաղթողի ընչաքաղցությունը և դրանք բազմապատկելու համար նրանք դիմեցին տանջանքների: Չէին զաղարում փայտով հարկանել չուղայեցի երեկիներին, մինչև այն աստիճան, որ նրանք խոստովանում էին, թե իրենք և իրենց բարեկամները որտեղ են թաքցրել իրենց հարստությունները⁴⁵: Նոր Զուղայի անկմանը հաջորդեց մայրաքաղաքի զավթումը աֆղանցիների կողմից:

Թուրքիան ուշի-ուշով հետևում էր Արևելքում տեղի ունեցող իրադարձություններին: Իրանի անցուղարձերի մասին մայրաքաղաք անընդհատ զեկուցագրեր էր ուղարկում էրզրումի վալի Սիլահդար Իրահիմ փաշան, որը միաժամանակ իր կառավարությանը խորհուրդ էր տալիս անհապաղ գործի անցնել: Առաջարկում էր նախ զաշինք կնքել Դաղստանի խաներ Հաջի Դավուդի և Սուրխայի հետ և ապա հարձակվել Իրանի վրա:

Պետրոս 1-ինի կասպիական արշավանքն ամենևին ձեռնադրել էր Թուրքիային: Դիմելով կասպիական արշավանքին, Ռուսաստանը ոչ միայն օգնության էր հասնում Անդրկովկասի ժողովուրդներին, այլև ապահովում էր իր թիկունքը Կովկասում, մի հանգամանք, որ ծայրահեղորեն սրում էր սուա-թուրքական քաղաքական հարաբերությունները:

Օսմանյան կայսրությունը կարողացավ օգտագործել Իրանի թուլացումը և շուտով զավթողական պատերազմներ սկսել Արևելքում: Այս հանգամանքը չեն կարողանում հերքել ժամանակակից թուրք պատմագիտության ներկայացուցիչները: «Այս անգամ արդեն պատերազմը ոչ թե իրանական ժողովուրդը աֆղաններից պաշտպանելու համար հայ-

⁴⁰ „Histoire de Perse“, I, էջ 271:

⁴¹ Նույն տեղում, էջ 274:

⁴² Նույն տեղում, էջ 276:

⁴³ Նույն տեղում, էջ 271—272:

⁴⁴ Նույն տեղում, էջ 279:

⁴⁵ Նույն տեղում:

տարարվեց, այլ որոշվեց իրանական հողերը զավթել ու միացնել օսմանյան երկրին»⁴⁶, — գրում է ժամանակակից Քուրբիայի խոշորագույն պատմաբաններից մեկը՝ Ի. Հ. Ուզունչարը՝

Քուրբիայի կողմից Իրանին պատերազմ հայտարարելը Անդրկովկասում ստեղծեց բոլորովին նոր քաղաքական իրադրություն: Հյուսիսային երկարատև պատերազմից նոր դուրս եկած Ռուսաստանը դժվարանում էր ընդհարվել Քուրբիայի հետ, մանավանդ, որ վերջինիս թիկունքում կանգնած էին Անգլիան և Ֆրանսիան: Բացի այդ, ռուսները Մերձկասպյան շրջաններում հանդիպել էին զորքերի փոխադրման, պարենավորման և այլ կարգի մեծ դժվարությունների: Ուստի Պետրոս 1-ինը ստիպված էր ընդհատել իր հետագա արշավանքը և 1724 թ. հոկտեմբերի 5-ին վերադառնալ Աստրախան:

Ռուսական զորքերի Անդրկովկասում երևալու առթիվ մեծ վեճեր Դամադ Իբրահիմ փաշան, որը, ի դեպ, ծագումով հայ էր, նիշլի Մեհմեդ ազալի գլխավորությամբ Պետերբուրգ ուղարկեց դիվանագիտական մի միսիա, որի նպատակն էր բացատրություններ ստանալ ռուսական զորքերի կասպիական արշավանքի մասին և շոշափել ռուսների հետագա մտադրությունները: Նիշլի Մեհմեդը ցարին էր ներկայացնում նաև սուլթան Ահմեդ 3-րդի նամակը, որտեղ սուլթանը հայտնում էր ցարին, թե նա թույլ չի տա ռուսական զբրիշխանության հաստատումը սուննի դավանանքին պատկանող լեզգիների նկատմամբ և պահանջում, որ Պետրոս 1-ինը ոչնչացնի Հյուսիսային Կովկասում կառուցած մի շարք ռազմական ամրություններ⁴⁷: Մյուս կողմից, իր առանձին հայտարարության մեջ սուլթանական կառավարությունը բացահայտ հովանավորության տակ վերցնելով Դաղստանի Ֆեոդալ Դաուդ խանին, սպառնում էր Վրաստանին, որ հանդգնել էր թույլ տալ ռուսական զորքերին՝ անցնելու վրացական տարածքով⁴⁸:

Կանցլեր Գոլովկինը և Կ. Պոլսի ռուսական դեսպան Ի. Նեպլյուևը եռանդուն դիվանագիտական գործունեություն ծավալեցին Քուրբիայի հետ ռազմական ընդհարումից խուսափելու համար: Ֆրանսիան առաջարկեց իր միջնորդությունը և 1723 թ. հուլիսին, երբ արդեն թուրքերի կողմից Անդրկովկասում ծավալվել էին լայն ռազմական գործողություններ, ռուս-թուրքական քաղաքական հարաբերությունների շուրջ Կ. Պոլսում հրավիրվեց միջազգային կոնֆերանս: Բաց անելով կոնֆերանսը, Ռուսաստանի ներկայացուցիչն Օսմանյան կայսրության

նկատմամբ ցարի խաղաղ նպատակների մասին հաղորդելուց հետո հայտարարեց, թե ցարը «...դիմել էր այդ քայլին, որպես հավաստիացում Բարձրագույն դուան նկատմամբ ունեցած բարի մտադրությունների մասին և Ֆրանսիային հարգանք մատուցելու նրա բարեկամության ու խորհուրդների համար»⁴⁹: Այդուհանդերձ, բանակցությունների ընթացքում սուր հակասություններ զրսևորվեցին երկու կողմերի միջև: Ի պատասխան ռուսական կողմի պահանջի՝ դադարեցնել պատերազմական հետագա գործողություններն Իրանի դեմ, թուրքական կողմը հայտնում էր, թե այն պահին, երբ Իրանը կատարյալ անկում է ապրում, նա չէր կարող կորցնել այդքան զեղեցիկ մի առիթ՝ իր հին ժառանգական տիրույթները հանդիսացող Վրաստանը, Հայաստանը, Աղբյուրբեջանն ու Դաղստանը նվաճելու համար⁵⁰: Ռուսական կողմն իր հերթին, բանակցությունների հետագա ընթացքի ժամանակ թուրքական կողմին հիշեցնում էր այն պայմանագրի գոյության մասին, որ ստորագրվել էր ցարի ներկայացուցիչների և շահ Հուսեյնի գահազրկումից հետո Իրանի շահ հռչակված թահմասպի միջև⁵¹:

Ի վերջո՝ 1724 թ. հուլիսի 8-ին, Կ. Պոլսում Ռուսաստանի և Քուրբիայի միջև կնքվում է 6 կետից բաղկացած մի պայմանագիր, որի բովանդակությունը հետևյալն է՝ Անդրկովկասը բաժանվում էր ազդեցության ոլորտների: Հատուկ հանձնաժողովը պատրաստելու էր դեմարկացիոն գիծը: Ծամախին հայտարարվում էր չեզոք գոտի: Որոշվում էր Իրանի և Քուրբիայի միջև սահմանագիծը և ընդգծվում, որ եթե շահ թահմասպը չենթարկվի պայմանագրի սույն հոդվածին, ապա պայմանավորվող կողմերը կարող են ծավալել համատեղ ռազմական գործողություններ: Մյուս հոդվածներում նշվում է, որ եթե շահ թահմասպը ցանկանա, ապա պայմանավորվող կողմերը իրանական տիրակալին ռազմական օգնություն ցույց կտան երկիրը խաղաղեցնելու համար⁵²:

⁴⁶ Mémoire historique sur l'ambassade de France à Constantinople, էջ 202—203:

⁴⁹ J. Hammer, XV, էջ 91:

⁵¹ Այդ պայմանագրի կետերը համաձայն Մամիյ-զե Կլերակի բերած փաստաթղթի հետևյալն են. 1. ցարը հանձն է առնում մինչև վերջ Իրանը մաքրել խոտվարաններից. 2. շահ թահմասպը Ռուսաստանին ընդմիջող գիծում է Մերձկասպյան առափնյա շրջանները, ներառյալ նաև Հյուսիսային Իրանի նահանգներ հանդիսացող Գիլանը, Մազանդարանը և Աստրաբադը. 3. իրանական կողմը պարենամթերքով կպահանջի ռուսական ռուսակը. 4. ապագայում Իրանը կստեղծի բոլոր բարենպաստ պայմանները, Իրանում ռուսա՝ առևտրի ծավալման համար և 5. յուրաքանչյուր պայմանավորվող կողմի բարեկամը լռենալու է բարեկամ մյուս կողմի համար, իսկ թշնամին՝ թշնամի («Histoire de Perse», էջ 129):

⁵² Նույն տեղում, էջ 195—199:

⁴⁶ J. H. Uzuncarşili. Osmanlı tarihi, IV, մաս 1, էջ 175:

⁴⁷ „Histoire de Perse“, II, էջ 107:

⁴⁸ Նույն տեղում, էջ 169, „...et vangeroit des géorgiens qui avoient favorisé leur entrée dans son (Daoud Khan) pays“.

Այսպիսով, կնքված պայմանագրի համաձայն, Շիրվանը, Արևելյան Հայաստանը, Հարավային Ադրբեջանը և Պարսկական Իրաքն անցնելու էր թուրքական տիրապետության ներքո:

Այն ժամանակ, երբ Կ. Պոլսում բանակցությունները շարունակվում էին, թուրքերը, ինչպես ասվեց, ծավալել էին լայն ռազմական գործողություններ: Նրանք երեք ճակատով հարձակվել էին Անդրկովկասի ու Իրանի վրա: Էրզրումի կառավարիչ Սիլահար Իբրահիմ փաշան ներխուժել էր Վրաստան, Վանի վալիի՝ Քյոփրյուլու զադե Արզուլահի փաշայի զորքերն ասպատակում էին Արևելյան Հայաստանն ու Ադրբեջանը: Մեծ Մյուսթին սրբազորժել էր պատերազմը ու գրել, որ քրիստոնյա հպատակների գերեվարումը միանգամայն օրինական է: «Ինչպիսի վերաբերմունք պետք է որդեգրել Իրանի հերձվածողների և այս երկրի բնիկ անհավատների, օրինակ, Վրաստանի բնակիչների ու այլոց նկատմամբ,—հարցնում է Մուսթին Արզուլահի էթենզիի ֆեթվան:—Պատասխան, ինչ վերաբերում է հերձվածողներին, պետք է սրի անցկացնել տղամարդկանց, ստրկության մատնել կանանց ու երեխաներին և տիրանալ նրանց ինչքերին: Պետք է ստիպել կանանց ու երեխաներին ընդունելու իսլամը, սակայն ոչ թե թրի, այլ ուրիշ միջոցներով: Չի թույլատրվում ամուսնանալ նրանց կանանց հետ, մինչև որ վերջինները ուղղափառ (սուննի—Մ. Ջ.) չդառնան: Ինչ վերաբերում է տեղաբնիկ անհավատներին, պետք է նրանց կանանց ու երեխաներին ստրկության մատնել ու տիրանալ նրանց ունեցվածքին: Առանց ուժ գործադրելու կարելի է ստիպել այս ստրուկներին գրկելու իսլամը, այսուհանդերձ թույլատրվում է ամուսնանալ դեռ իսլամը չընդունած կանանց հետ»⁵³:

Թուրքական բանակի արշավանքը, ըստ երևույթին, վախժանգ 6-րդին ստիպում է առժամանակ հրաժարվել ուսուցիչների հետ համատեղ ռազմական գործողություններ ծավալելու ծրագրից⁵⁴: Դրանից հետո «էրզրումի կառավարիչ Իբրահիմ փաշան Դիարբեքիբի, Տրապիզոնի, Սվազի, Ախալցխայի, Կարսի, Կարահիսարի և այլ ուժերի հետ, ընդամենը քառասուն հազարանոց բանակով, հարձակվեց Վրաստանի վալի Մեհմեդ Կուլիխանի⁵⁵ դեմ նրան օսմանյան տիրապետությանը ենթարկելու և Թիֆլիսի ամրոցը նվաճելու համար:

⁵³ Mohammed Ali Hekmet. Essai sur l'histoire des relations politiques irano-ottomanes de 1722 à 1747, Paris, 1937, էջ 119.

⁵⁴ J. Hammer, XV, էջ 92—93.

⁵⁵ Շահ Քահանապը Վրաստանի վալի էր նշանակել Հերակի թագավորի որդի Կասանզին 3-րդին, որը մուսուլմանություն ընդունելով հայտնի էր դարձել Մոհամմեդ Կու-

Այս վալին, որին չէր պակասում ոչ համառությունը և ոչ էլ կենսափորձը, շունք սակայն պատրաստի զորքեր և բնակչության այն ատելությունը, որ նա վաստակել էր նրանց հարկատվության ենթարկելու պատճառով, նրան զրկում էր նրանց օգնությունն ապավինելու հույսից: Այս պայմաններում նա զիջեց ամեն ինչ (թուրքերին) պայմանով, որ սերասքյարը ճանաչի իր իշխանությունը: Թուրքական պատվիրակը երզվելով, խոստացավ նրան այդ անել և նույն գիշերը վերադարձավ զորահրամանատարին հաշվետվություն ներկայացնելու բանակցությունների ընթացքի մասին:

Այս համաձայնագրի հիման վրա օսմանյան բանակը հունիսի 12-ին երևաց Թիֆլիսի մոտակայքում: Մեհմեդ Կուլիխանը մի մեծ շքախմբով ընդունաջ դուրս եկավ և Իբրահիմ (փաշային) հանձնեց քաղաքի և ամրոցի բանալին: Այս զորահրամանատարը նրան ընդունեց մեծ բարեկամական գրսևերումներով և նրան մեծարեց խալաթով, սակայն հենց որ տեր դարձավ ամրոցին, նրան ձերբակալել տվեց:

Գահընկեց արված խանը (Մոհամմեդ Կուլիխանը—Մ. Ջ.) մի քանի օր հետո հնարանքով կարողացավ փախչել բանտից և նահանջել Կախեթ: Այս ժամանակ Բ. Դուռը Վախթանգի ավագ որդի Բակուրին նըշանակել էր նրա փոխարեն: Այս իշխանը շտանելով նոր լուծը, որ սորդուլյան պատրվակի տակ լքեց քաղաքը և հրաժարվեց տիրակալի ձեռնարկից:

Սերասքյարը Թիֆլիսի գրավումով ոգևորված մտածում էր նոր հարձակումներ ձեռնարկել: Ի վերջո, նա իր հայացքը սևեռեց Ղարաբաղի մայրաքաղաք Գանձակի վրա և հաջորդ աշնանը պաշարեց այն: Սկզբում այս արշավանքը իր համար բարեհաջող ելք ունեցավ: Նա նախ առանց դիմադրության հանդիպելու գրավեց հայերի սրվարձանը, սակայն քաղաքի բնակիչները գոտեպնդվելով եկան հարձակվեցին մինչև իսկ իր ճամբարը: Այս հանգուզն գործողությունը իր անսպասելի արդյունքն ունեցավ: Բոլոր կողմերից պաշարված թուրքերը թողեցին հրետանին ու իրենց բեռները և բացահայտորեն բռնեցին փախուստի ճանապարհը: Այս ճակատամարտի ժամանակ թուրքերը կորցրին երեք հազար մարդ և խուճապի մատնված նրանց զորահրամանատարն իր բանակի մնացորդների հետ ստիպված նահանջեց էրզրում՝ իր կառավարչության վայրը»⁵⁶:

լիխան աճունով: Սա լեզգիների օգնությամբ կարողացել էր պարտության մատնել Վախթանգ 5-րդին և տիրանալ Թիֆլիսին:

⁵⁶ „Histoire de Perse“, II էջ 121—122.

Թուրքերին այսպիսի խայտառակ պարտության մատնողները, ինչպես հայտնի է, Ղարաբաղի սղնախներն էին: Իբրահիմ փաշայի պարտությունը զայրույթով ընդունվեց թուրքական մայրաքաղաքում: Նա պաշտոնազրկվեց և թուրքական զորքերի նոր սերասքյար նշանակվեց Ասրիֆ կամ Արիֆի Ահմեդ փաշան⁵⁷:

Հայերը ոչ միայն հերոսական դիմադրություն էին ցույց տալիս թուրքերին, այլև իրենց երկրի անկախությունը ձեռք բերելու նպատակով ապստամբեցին Սեֆյան Իրանի դեմ: «Ղափանի և Սիսիանի հայերը, որոնց հետ թշնամաբար էին վերաբերվում, բացահայտորեն դիմեցին զենքի և 40 հազարանոց զորք հավաքելով շարժվեցին դեպի լեռները», — ասված է Յուզե Կրուշինսկու հուշերում: «Թահմասպը որոշեց ճնշել (ապստամբությունը) և դիմել բռնության այն ժամանակ, երբ անհրաժեշտ էր խոհեմություն ցուցաբերել, — այնուհետև կարգում ենք նույն հեղինակի մոտ, — սակայն յուրաքանչյուր անգամ նա հանդիպեց համառ դիմադրության ու կրեց պարտություններ և ստիպված եղավ, ի վերջո՝ բանակցությունների մեջ մտնել նրանց հետ: Այս իշխանին հաջողվեց անուշ վերաբերմունքով ձեռք բերել այն, ինչի չէր հասել զենքի ուժով:

...Ո՛չ այս ապստամբները, ոչ էլ թագավորության մյուս վայրերի խռովարարները չէին հանդիսանում Թահմասպի ամենավտանգավոր թրջնամիները: Օսմանյան կայսրությունը նախանձելով այն առավելություններին, որ տալիս էր ցարին Պետերբուրգի համաձայնագիրը, ոչինչ չէր խնայում իր (Անդրկովկասում) նվաճումներով հավասարակշռություն ստեղծել: Այս նպատակով վրաստանում նոր ամրոց կառուցելուց հետո, թիկունքն ապահովելով մեծ բանակ էր կենտրոնացրել սահմանում: Օսմանյան զորահրամանատարներից մեկը՝ Վանի կառավարիչ (Քյոփրյուլու) Արգուլահ փաշան, այս տարվա (1724 թ.) սկզբներին մուտք էր գործել այս երկիրը (Վրաստան—Մ. Զ.), ուր Թիֆլիսը (թուրքերին) հանձնված Մեհմեդ Կուլիխանը դեռևս երևում էր որոշ զորագնդերի ղուլիս կանգնած: Փաշան տեղական կայսզորներն ուժեղացնելով 35 հազար մարդով հարձակվեց նրա վրա և լեռներում նրա հետ մարտի բռնվելով փախուստի մատնեց նրան: Այնուհետև այս զորապետը փետրվարի վերջին նահանջեց Ադրբեջան, պաշարեց Խոյի ամրոցը և պաշարվածների երկու ամիս ցուցաբերած դիմադրությունից հետո գրավեց այն»⁵⁸:

Եվրոպացի հեղինակի այս վկայությունները հաստատվում են արեվելյան և հայկական աղբյուրների տվյալներով: Սեֆյան Իրանի դեմ

Ղարաբաղի հայերի բարձրացրած ապստամբության մասին է խոսում նաև Նադիր շահի պալատական պատմիչ Մուհամմեդ Կազիմը: Նա գրում է, որ շահ Թահմասպի Իրանի նոր տիրակալ հռչակվելուց հետո նրա մոտ են եկել Գանձակի Ղարաբաղի կողմերից եկած պատգամավորներ, որոնք ահաբեկված շահին պատմել են հայերի ապստամբության մասին, ավելացնելով միաժամանակ, որ ապստամբությունը սպառնալից բնույթ ընդունել, և եթե շտապ միջոցներ ձեռք չառնվեն, շուտով Գանձակի և Երևանի բերդերը ևս նրանց ձեռքը կանցնեն⁵⁹:

1136 թ. Վիլհելմ ամսի (1724 թ. օգ. 21) թվակիր Շահ Թահմասպ 2-րդի Բարգուշատի Ֆաթհ-Ալի սուլթանին ուղղված մի հրովարտակից, որը վերջերս հայերեն թարգմանությամբ հրատարակեց արևելագետ Հ. Փափազյանը, իմանում ենք, որ շահը վերոհիշյալ ֆեոդալին լայն արտոնություններ է շնորհել հայերի ապստամբությունը ճնշելու գործում և սեֆյան մյուս իշխանավորներին կոչ է արել համատեղ հանդես գալ հայերի դեմ: «Անհրաժեշտ է նաև, — ասված է հրովարտակում, — որ նա (Ֆաթհ-Ալի սուլթանը—Մ. Զ.) հավաքի, սիրաշահի և հուսազորի Զիվանշիր և Քաբիրլու ցեղերին և սրտապնդելով, անհրաժեշտ հոգատարություն դրսևորի նրանց նկատմամբ, և թող իրեն այս պարտականություններից ազատ չհամարի: Քանզի մեր արքայական մեծությունը հայերի և մյուս հակառակորդների սաստումը նրանից է պահանջվում, և թող իմանա, որ հայերին սաստելու գործում նրան ազատություն է արված իրերի լավ կամ վատ ընթացքի համար մենք նրան ենք պատասխանատու ճանաչում: Անհրաժեշտ է, որպեսզի բոլորը միատեղ, նվիրյալ ծառայություն մատուցեն և այս գործում լիերանան»⁶⁰:

Եթե 1724 թ. շահը, ինչպես երևում է այս հրովարտակից, իր ենթականներին կոչ էր անում ճնշել հայերի ապստամբությունը, ապա մի երկու տարի անց՝ 1726 թ. այդ նույն շահն իրեն հավատարիմ մնացած խաներին հրամայում էր օգնել Դավիթ Բեկի զլխավորած հայերի ռազմազոկատներին՝ ընդդեմ օսմանցիների ու նրանց կողմն անցած առանձին աղբյուրական ֆեոդալների:

Այս բոլոր պատմական տվյալները համահնչյուն են նաև սերաստացի Ղուկաս Ստեփանոսյանի գրի առած պատմությանը, որը վերջերս Վենետիկում վերահրատարակվեց ու ընթերցողներին ներկայացվեց

59 Հ. Գ. Փափազյան, Դավիթ Բեկի պաշարը օսմանյան ներխուժման դեմ և հարաբերությունները իրանական հակաօսմանյան դիմադրության ուժերի հետ, ՊԲՀ, 1987, № 1, էջ 92:

60 նույն տեղում, էջ 93:

57 J. Hammer, XV, էջ 97:

58 „Histoire de Perse“, II, էջ 150—151:

ճշգրտված համապատում բնագրերով՝ «Պատմութիւն Ղափանցոց» վերնագրով⁶¹:

1724 թ. ամռանը սերասբեր Արիֆի Ահմեդ փաշայի զորքերը շարժվում էին դեպի Երևան: Եղվարդի մոտ տեղի ունեցած ճակատամարտում թուրքերը հաղթանակ տարան և նրանց թվում էր, թե հեշտովյամբ կգրավեն Երևանը: Սակայն Կարբի գյուղի մոտ նրանք հանդիպեցին տեղի հայերի լուրջ դիմադրությանը, որը զարմացրել էր թուրքական փաշային: Գյուղն զրավելուց հետո նա հարցրել էր բնակիչներին. «Զի՞ կայ ձեր զինուորի վասն երկրիս, որոնց տէրութիւնն ոչ է ձեր»⁶²:

Թուրքերի երևանյան արշավանքի մասին եվրոպացի հեղինակները մոտ պահպանվել են ընդարձակ տեղեկություններ: Ավելորդ չենք համարում դրանք այստեղ աննշան կրճատումներով ներկայացնել ընթերցողներին: «Դիարբեքի կառավարիչ Արիֆի Ահմեդ փաշան, որին օսմանյան արքունիքը նշանակել էր սերասբյար, շուտով ձեռնարկեց ավելի նշանակալի ռազմական գործողություններ: Այս գորապետն Հիջրեյի Ենվալ ամսի 5-ին, որն այս տարի համընկնում էր հունիսի 26-ին, անցնելով Արաքսը, 35 հազարանոց բանակով մտավ Երևանի նահանգ: Գծվար է բառերով արտահայտել այս ներխուժման հետեւանքով (թուրքերի կողմից) կատարված գազանությունների և այլ ոճրագործությունների մասին: Ճանապարհին գտնվող բոլոր գյուղերն ու ավաններն ավերվեցին ու կողոպուտի ենթարկվեցին, ինչպես մեկ, այնպես էլ մյուս սեռից վերջված գերիների թիվն այնքան մեծ էր, որ էջմիածնի կաթողիկոսների՝ Պարսկաստանի հայերին ուղղված նամակներում հայերից գերեվարյալների թիվը հասցվում է մինչև երեսուն հազարի:

Այս բարբարոս թշնամական արարքներից հետո, որի նպատակը, հավանաբար, թշնամուն ահաբեկելն էր, այդ նույն ամսվա վերջին նա հասավ նահանգի մայրաքաղաք Երևան ու պաշարեց քաղաքը:

Այս քաղաքը, որը Պարսկաստանի ամենակարևորագույն հենակետն է Հայաստանում, գտնվում է Արարատ լեռից ընդամենը հինգ-վեց վերստ հեռավորության վրա:

Ինչպես տեսանք հունիս ամսվա 30-ին էր, որ օսմանյան բանակը երևաց այս քաղաքի պատերի տակ: Հարյուր թնդանոթներից բաղկացած (թուրքական) հրետանին գործի դրվեց, շուտով թուրքերին հաջողվեց ճեղք առաջացնել խոցելի ամրությունների մի մասում և սե-

րասբյարին թվաց, թե ինքն ի վիճակի է կայազորին պարտության մատնել, սակայն նա այնտեղ հանդիպեց շնախատեսված դժվարությունների: Չնայած նրա զորքերը կռվում էին քաջաբար, սակայն հանդիպեցին այնպիսի համառ դիմադրության, որ նրան շփոթեցրեց: (Թուրքերը) նույնպիսի դիմադրության հանդիպեցին այլ մասերում: Երեք անգամ ամբողջ բանակը դիմեց գրոհի և սպանվածների թիվն այս գրոհների ընթացքում այնքան մեծ էր, որ օղբ դարձահոտությունից ապականվեց: Զորապետը (սերասբյարը—Մ. Զ.) ստիպված եղավ երբ օրվա զինադադար խնդրել նրանց թաղելու համար:

Կուտայի բանակի գալուստն ու բանակին միանալը սերասբյարին հնարավորություն տվեց ևս մեկ անգամ փորձելու բախտը: Սեպտեմբերի 10-ին նա շորրորդ ընդհանուր հարձակման հրաման տվեց, սակայն թուրքերը սասանվեցին, որովհետև անտեղի ավելի շատ կորուստներ ունեցան, քան նախորդ բոլոր հարձակումների ժամանակ: Այս պաշարումը յուրայիններից ավելի քան քսան հազար մարդ խլեց, որոնք մահացան ռազմի դաշտում կամ օդի ապականումից: Սրանք (թուրքերը) անվերջ համալրումներ էին ստանում և ութ հազար ռումբեր մոխրի էին վերածել քաղաքի մի մասը, սակայն կայազորը, ինչպես միշտ, համառորեն դիմադրում էր, ոչ մի առաջխաղացում չէր նկատվում: Երբ երկարատև այս անհաջողությունն ի վերջո զինվորներին ստիպեց բացահայտորեն հրաժարվել հետագա մարտերից և բարձրաձայն հայտնել իրենց մտադրությունը (ղեկավարությանը), եզրիպտական օգնական զորքերի ժամանումը փոխեց գործերի ընթացքը: Այս (եզրիպտական) զորախմբերը իրենց օրինակով և խոսքով կարողացան հետ պահել երբորոշ բանակը և էրզրումի կառավարիչ Սարը Մուստաֆա փաշայի սեպտեմբերի վերջին զգալի օգնական ուժ բերելուց հետո վերջ տրվեց զինվորների շրջանում տիրող ահին ու տրտուներին և խնդիր գրվեց հարձակումը հաջողությամբ ավարտին հասցնել:

Այդքան մեծ ու այդքան հաճախ օգնական ուժերի երևալն ի վերջո վախեցրեց տեղում հրամայող խանին: Պակասում էր սննդամթերքը, մեծ թվով զինվորներ ու բնակիչներ մահացել էին թշվառությունից, հիվանդությունից կամ զենքից: Այլևս շահ թահմասպի մասին խոսք չէր լինում և նրանից ոչինչ չէին սպասում ... Այս հանգամանքները ... խանին ստիպեցին անձնատուր լինել: Հոկտեմբերի 1-ին նա իր ներկայացուցչին ուղարկեց բանակցությունների և որոշ դժվարություններ հաղթահարելուց հետո համաձայնություն կայացավ այն մասին, որ կայազորն ու նրա հրամանատարական կազմը միանգամայն ապահով կարող են զնալ մինչև Կարադաղի սահմանը, որ ամրոցի բնակիչները և նրանք, ովքեր ապաստան էին գտել պաշարման ժամանակ և ոչ մի

61 Գավիթ Բեկ, կամ «Պատմութիւն Ղափանցոց», աշխ. 2. Սամվել, վրդ. Արամյանի, Վենետիկ, 1978:

62 Ա. Երևանցի, Պատմութիւն պատերազմացն, Երևան, 1938, էջ 11:

մասնակցութիւն չէին ունեցել քաղաքի պաշտպանութեանը, կարող էին դուրս գալ ամրոցից և բնակվել Երևանում իրենց նախկին բնակավայրում, նրանցից և ոչ մեկը կարող էր շանհանգստանալ ո՛չ իր անձի և ոչ էլ ունեցվածքի համար»⁶³:

Ականատեսի վկայութիւնների հիման վրա գրված Մամիչ դե Կլեյրակի բերած այս նյութերը Երևանի հերոսամարտի մասին ամբողջական պատկերացում տալ չեն կարող: Թուրքերի դեմ կռիւները, ականատես Աբրահամ Երևանցու վկայութեամբ, հիմնականում հայերն էին և ոչ թե խանի կայազորը, ինչպես դա երևում է վերոհիշյալ շարադրանքից: Թուրքերը ոչ թե խնայեցին Երևանի բնակիչներին, այլ կատաղի ատելութեամբ հաշվեհարդար տեսան նրանց հետ: Հայ մարտիկները կամ սրի քաշվեցին և կամ գետահեղձ եղան, կանայք և երեխաները գերեզմարվեցին: «Կոտորեցան զօրքն հայոց ի սուր, սուների և գետահեղձ եղեն բազումք ի նոցանէ: Ի գերութիւն վարեցին օսմանցիքն զկանայս նոցա և զմանկունս և տարեալ լցին զնոսա ի բանակ իրեանց, և շար գործովք ապականեցին զնոսա»⁶⁴, — կարդում ենք Ա. Երևանցու մոտ: Անանուն վանեցու տարեգրութեան մեջ թուրքերի կատարած փայրագութիւնների և հայ բնակչութեան գերեզմարման մասին ասված է. «Բայց թէ ո՞րչափ անողորմ արիւնս հեղին և գերի բերին, որ ի թիւ և ի գիր ոչ մտանէ, զի ոչ մնաց աշխարհ, որ ԴՃ, ԵՃ (400—500) գերի ոչ տարան, մինչ զի, յՍտամբուլ Անկիւրեցի նորընծայ կաթողիկոս ԸՃ (800) գերի գնեալ ազատեաց, թող զայն որ ուրացուցին»⁶⁵:

Ոչ միայն Երևանում, այլև փաստորեն ամենուր, ուր երևում էին թուրքերը, հայերը նրանց ցույց էին տալիս համառ դիմադրութիւն: Իրենց հայրենիքը ստրկացնելու, բնակչութեանը գերեզմարելու նպատակով արշավանքի դուրս ելած օսմանյան զորքերի դեմ պայքարող հայերը, մասնավորապես Ղափանում, Սյունիքում ու Ղարաբաղում ակամա դառնում էին Իրանի զինակիցները, սակայն նրանք պայքարում էին ոչ հանուն Իրանի, այլ հանուն սեփական հայրենիքի: «Պատմութիւն զափանցոց» հուշապատումից ակնհայտ է դառնում, որ բացի Խոտանանի կռիւից և Բարգուշատում Մելիք Ֆրանգյուլի զավաճանութեան հետեանքով հայերի կրած պարտութիւնից մնացած բոլոր մարտերում չնչնակա՞ն հաղթանակը միշտ էլ եղել է հայերի կողմը:

Եվրոպական աղբյուրների վկայութեամբ, Թավրիզի մատուցներում և հենց Թավրիզում թուրքերի դեմ համառ դիմադրութիւն կազմակեր-

պողները հայերն էին: «Ղափանի հայերը, — կարդում ենք եվրոպացի հեղինակի զեկուցագրում, — միացան Քահմասպի բանակին և այս տիրակալին հնարավորութիւն տվեցին շարժվելու դեպի Թավրիզ, հարձակվելու թուրքերի վրա ու նրանց պարտութեան մատնելու»⁶⁶: Այս առումով հետաքրքիր է իտալացի դե Սագրեդոյի վկայութիւնը. «Թուրքական բանակի մյուս թևը, — գրում է նա, — որ մուտք գործեց Պարսկաստան Երևանի կողմից, գրավեց գրոհով այս վայրը առաջին իսկ հարձակումից կոտորվեցին երեսուն հազար հայեր: Պաշարված բերդը դիմադրեց երկու ամիս, իսկ մերձակա շրջանների բնակիչներն ավելի քիչ դիմադրութիւն ցույց տվեցին: Թուրքերի դեմ Ղափանի լեռների հայերը բաշտութեամբ կռվեցին ... հենց այս հայերն էին, որ անցյալ տարի միտնալով շահ Քահմասպին, իրենց մեծ լուսան էին ներդրել Թավրիզի պատերի տակ թուրքական բանակի կրած պարտութեան գործում: Թուրքերը հանդգնեցին երկրորդ անգամ պաշարել Թավրիզը միայն այն ժամանակ, երբ իմացան, որ նրանք (իմա՝ հայերը) չեն մասնակցում (պաշտպանութեանը)»⁶⁷: Եվրոպացի մի այլ հեղինակի՝ Մ. Օտտերի մոտ կարդում ենք հետևյալը. «Նրանք (իմա՝ հայերը) բավականին մեծ թվով միացան շահ Քահմասպին և կազմեցին մի բանակ, որի օգնութեամբ նա (շահ Քահմասպը) հարձակվեց թուրքերի վրա ու ստիպեց նրանց թողնել Թավրիզի պաշարումը»⁶⁸:

Թավրիզը երկարատե դիմադրութիւնից հետո, ի վերջո 1725 թ. օգոստոսի 1-ին անձնատուր եղավ, որը և Կ. Պոլսում տեղիք տվեց մեծ խրախճանքների: Թուրքերը գրավեցին նաև Համադանը և հյուսիս-արևմտյան Իրանի զգալի մասը: «Բարձրագույն դուռը, — կարդում ենք եվրոպացի հեղինակի մոտ, — անդամահատել էր Վրաստանը, համարյա ամբողջ Հայաստանը և Համադանի շրջակայքը: Ցարը բացառութեամբ լեզգիների կողմից գրավված Շամախիի (տիրացել էր) Կասպից ծովի արևմտյան առափնյա շրջաններին: Խորասանը, Կերմիանը, Կանդահարը, Սպահանի ու Շիրազի իշխանութիւնները գտնվում էին աֆղան և այլ խոտվարանների գերիշխանութեան ներքո: Քահմասպի իրավասութիւնը տարածվում էր միայն Մազանդարանի, Աղբբեջանի և Պարսկական Իրաքի մի մասի վրա: Այն նահանգները, որոնց բնակչութիւնը բացահայտ ապստամբութեան չէր դիմել, արհամարհում էին այս իշխանի հրամանները, կազմում էին առանձին անկախ փոքրիկ գորաշո-

⁶⁶ „Histoire de Perse“, II, էջ 131—133:

⁶⁷ D. Sagredo. Histoire de l'empire ottoman, t. VII, Paris. 1732, էջ 345—346:

⁶⁸ M. Otter, II, էջ 332:

⁶³ „Histoire de Perse“, II, էջ 153—159:

⁶⁴ Ա. Երևանցի, էջ 22:

⁶⁵ ԵՄՏՆԻ Ժամանակագրութիւններ, հ. II, էջ 370—371:

կատներ և առանց խտրութեան հարձակում էին սուսների, թուրքերի և խոտվարանների վրա»⁶⁹:

Այդ նույն ժամանակ (1725 թ.) «...Նրևանի (թուրքական) կայազորի ենիչերիները, զժողովելով Արիֆի Ահմեդից, ապստամբութիւն բարձրացրին նրա դեմ: Նրանք կողոպտեցին նրա պալատն ու արքունական գանձարանը և խոտվարան ժամանակ վիրավորված այս զորապետը ստիպված եղավ շտապ կարգով փախչել ու ազատվել ապստամբների զայրույթից»⁷⁰:

Ապստամբ հայերը շարունակում էին թուրքական հորդանների դեմ իրենց հերոսամարտերը: Միայն առանձին տեղերում, ինչպես դա արտացոլվել է եվրոպացի հեղինակների մոտ. Էլնելով իրենց նեղ դատակարգային ձգտումներից և դիմելով բացահայտ դավաճանութեան, որոշ իշխաններ համագործակցել են օսմանցիների հետ: Այդպիսիք են Էղել, օրինակ, Ագուլխի մեծահարուստ առևտրական խավի ներկայացուցիչները, որոնք նախապես «ծածկապես դաշնագիր էին ընդ օսմանցոց», իսկ հետագայում, ինչպես գրված է «Պատմութիւն զափանցւոց»-ի մեջ «յետ այսորիկ իբրև երկու աւուրք ի վերայ անցին, արքն Ագուլխի և Մելիք Մուսին զդաւաճանութիւնս իւրեանց յայտ արարեալ, գրոհ տուին ի մէջ քաղաքին և արձակել սակայն ի վերայ զօրացն Գաթի թօփ: Իսկ նոցա խնայել ի նոսա (վասն զի ամենայն քաղաքացիքն էին հայ, և ոչ որ այլազգի գոյր անդ)»⁷¹:

Այս դեպքերի արտացոլումը չէ՞ արդյոք այն խուլ արձագանքը, որ մենք կարդում ենք եվրոպացի հեղինակի զեկուցագրում: Թուրքական բանակի զորահրամանատարը, — ասված է այնտեղ «...ընդունեց նախիջևանի հայերի մի պատգամավորութիւն, որը ժամանել էր կամ վրեժ լուծելու համար շահ Թահմասպից, որն այրել էր տվել իրենց ազգակիցների մի շարք բնակավայրերը և կամ այն երկյուղից, թե մոտակայքում գտնվող օսմանյան բանակներն ավերածութիւններ կզործեն: Այս պատգամավորութեան նպատակն էր փաշային համոզել նվաճելու իրենց երկիրը: Շոյված նման առաջարկից, այս զորահրամանատարը քուրդ բեգերին հրամայեց 12 հազարանոց զորքով, որին միացրեց Իբրահիմ աղայի զխավորութեամբ հազար հոգուց բաղկացած ջոկատը, հարձակվել: Այս զորաշոկատները հենց նոր էին երևացել երկրամասում, ինչ հայերը ապստամբեցին, կարճ ժամանակամիջոցում պարսիկները վտարվեցին որպես մետաքսի և կերպասեղենի առևտրի

կենտրոն հռչակված նախիջևանից և Օրդուբադից: Այս քաղաքները կողոպտվեցին: Նրանց բնակիչների մի մասը և շրջակայքի գյուղացիները մատնվեցին ստրկութեան»⁷²:

Եթե այս դեպքերը որոշ տարակուսանքի տեղի են տալիս, նամանավանդ որ թվագրվում են 1724-ով: Սակայն կասկածից վեր է այս նույն հեղինակի մի այլ վկայութիւնը՝ լեռներում թուրքական զորքերի դեմ Ղափանի հայերի տարած փախչումն հաղթանակի մասին: Որոշակիորեն այնտեղ խոսքը Հալիձորում Գավիթ բեկի մղած մարտերի մասին է: «Եվ ապա լուրեր տարածվեցին այն մասին, — կարդում ենք այնտեղ, — որ վեց հազար հոգուց բաղկացած և հիմնական բանակից առանձնացված (թուրքական) զորքերը, որոնք ուղարկվել էին Շամախի մերձակայքում գտնվող ապստամբ հայերին հնազանդեցնելու համար, կատարյալ պարտութիւն էին կրել նրանցից և այդ հանգամանքը խնամքով թաքցնում էին Կ. Պոլսի բնակիչներից, որպեսզի նրանք շարունակեն տոնել հաղթանակը»⁷³:

«Պատմութիւն զափանցւոց» աշխատութիւնից հայտնի է, որ 1727 թ. զարնանը Հալիձորի մոտ տեղի ունեցած վճռական ճակատամարտում իր հավատարիմ զինակիցների փոքրաթիվ ուժերով Գավիթ բեկը կարողացավ ոչ միայն դիմակայել բազմահազարանոց թուրքական բանակին, ու նրան դաշնակցած տեղացի որոշ խաների զորաշոկատներին, այլև շախախիչ պարտութեան մատնել նրանց: Սարսափահար թշնամին մարտի դաշտում թողնելով բազմաթիվ սպանվածներ, խուճապահար փախուստի դիմեց և Գավիթ բեկին հաջողվեց ամբողջ Ղափանը մաքրել թշնամուց:

Գահակալական պայքարը և ներքին խոտվորութիւններն Իրանին հնարավորութիւն չէին տալիս հակահարված տալու թուրքերին: 1725 թ. աֆղանական տարբեր խմբավորումների միջև ծավալված պայքարի հետևանքով Մահմուդ շահը սպանվեց և իշխանութիւնն անցավ նրա հորեղբորորդի Աշրաֆին: Իշխանութիւնն իր ձեռքը վերցնելուց հետո, աֆղանական նոր տիրակալը թուրքերի հետ վարած դիվանագիտական բանակցութիւններում վերջիններիս հասկացնել էր տալիս, որ աֆղանները լինելով թուրքերի նման սուլթաններ՝ նրանց միջև պատերազմը անարդար է և որ երկու կողմերի միջև հակասութիւններն անհրաժեշտ է լուծել Իրանի հաշիվին:

1727 թ. հոկտեմբերի 3-ին աֆղանական տիրակալ Աշրաֆի և թուրքերի միջև Համազանում Իրանի համար խիստ ստորացուցիչ պայմանագիր է կնքվում, համաձայն որի 1) շահը ընդունում էր թուրքիայի

69 „Histoire de Perse“, II, էջ 165—166.
70 Նույն տեղում, էջ 167:
71 «Պատմութիւն զափանցւոց», էջ 141:

72 „Histoire de Perse“, II, էջ 160—161:
73 Նույն տեղում, էջ 323:

սուլթան Ահմեդ 3-րդին (1703—1730)՝ որպես բոլոր մուսուլման-սուննիների հոգևոր պետ՝ Խալիֆ, 2) շահը ճանաչում էր սուլթանից իր վասալութունը և 3) բացի 1724 թ. հունիսի 24-ին Կ. Պոլսում կնքված ռուս-թուրքական պայմանագրով նախատեսված տարածքից, Աշրաֆը Թուրքիային էր զիջում նաև Իրանի 2/5-րդ մասը⁷⁴: Օսմանյան կայսրությունը, անշուշտ, բոլոր հիմքերն ուներ գոհ լինելու այս պայմանագրից: «Աշրաֆի հետ կնքված պայմանագիրը,— գրում է Մ. Մինյոն,— ամենափառահեղիններից էր, որ երբևիցե կնքել էին օսմանցիները Պարսկաստանի հետ, քանի որ այդ պայմանագիրը Բարձրագույն դռանն էր հանձնում այս ընդարձակ թագավորության (Իրանի—Մ. Զ.) զգալի մասը»⁷⁵:

Շուտով Աշրաֆը 1729 թ. փետրվարի 13-ին Ռեշտում Ռուսաստանի հետ ևս կնքեց պայմանագիր, համաձայն որի Իրանը ճանաչում էր մերձկասպյան տարածքի միացումը Ռուսաստանին, բացառությամբ Մազանդարանի ու Աստրաբադի, այն պայմանով, որ Աշրաֆն այդ նահանգները չէր հանձնելու որևէ մի այլ երրորդ պետությանը⁷⁶:

Թվում էր, թե կնքելով 1727 թ. Համադանի պայմանագիրը, Թուրքիայի գործերը միանգամայն բարեհաջող էին ընթանում: Իրականում, սակայն, և՛ պատերազմական տարիներին, և՛ Աշրաֆի հետ հաշտություն կնքելուց հետո երկրի ներքին վիճակը ծայրահեղորեն վատացել էր: Փոքր Ասիայում գլուխ էին բարձրացրել ավազակաբարո լեվենդներն⁷⁷ ու սեկպանները⁷⁸, որոնք կատարյալ աղետ ու պատուհաս էին դարձել գյուղացիության գլխին: Կայսրության դեմ ապստամբել էր անկախության ձգտող Եգիպտոսի ժողովուրդը, խռովություններ էին ծագել Ղրիմում⁷⁹:

Համադանի հաշտության կնքումը ցատում ու վրդովմունք էր առաջացրել Իրանի ժողովրդի մոտ: Շուտով Իրանի Հյուսիսում, Հյուսիս-

արևմուտքում թուրքերի ու նրանց հետ համագործակցող աֆղանական զավթիչների դեմ իրանական ժողովուրդը ապստամբություն բարձրացրեց: Ապստամբ զորքերի գլուխ կանգնեց եռանդուն և ընդունակ ռազմական առաջնորդ Նադիրկուլին: 1726 թ. նա Մազանդարանում իր ջոկատով ծառայության մեջ մտավ շահ Քահանասպի մոտ և երեք տարում աֆղան զավթիչների զորքերը ջարդելով փաստորեն տիրացավ Իրանին: 1729—1730 թթ. ընթացքում նա գլխավին ջախջախեց Աշրաֆին:

Նադիրի հաջողությունները պայմանավորված էին ժողովրդական զանգվածների աշտկցությամբ: Թուրքերի նկատմամբ ատելությունն այնքան մեծ էր, որ նրանք այնտեղ երկար մնալ չէին կարող: Այս առումով ուշագրավ են այդ տարիներին Կ. Պոլսում գտնվող եվրոպացի մի զիվանագետի՝ Դե Սոմերիի, դատողությունները. «Մուտք գործելով (Իրանի) խորքերը,— գրում է նա,— թուրքերը երբեք էլ չէին մտածում, որ Պարսկաստանը նրանց համար դառնալու է անհաղթահարելի մի պատնեղ ու գերեզմանոց: Հիրավի, ոչ մի բան այնքան դժվար չէր օսմանցիների համար, որքան այս ընդարձակ թագավորության նվաճումը: Նախ և առաջ շատ դժվար է խոշոր բանակներ ուղարկել Պարսկաստան, քանզի անհրաժեշտ է անցնել անապատներով, ուր ոչ ջուր կա, ոչ էլ ուտելիք բանակի կենսական պահանջների համար. ընդհանուր մուսուլմանական կրոնին պատկանելով հանդերձ, պարսիկները հերձվածողներ են համարվում և որը հանդիսանում է անհաղթահարելի մի խոշընդոտ, մեկը մյուսի նկատմամբ տածում են տևական ատելություն այնպես, որ մի պարսիկ կնախընտրեր հազար անգամ մահանալ, քան ընդունել մահաճակատ կրոնը (իմա՝ սուննիզմը—Մ. Զ.) և մի իսկական թուրքը միևնույն զգվանքի զգացումն է տածում պարսիկի նկատմամբ: Եթե թուրքերը գրավեն Պարսկաստանը, որը մարդկային բանականությամբ անհնար է, թուրքերի համար նույնպես անհնար կլինեն, քանզի նկատի ունենալով կրոնի միջև գոյություն ունեցող պառակտումը, անհրաժեշտություն կզգացվեր հանգստության համար ոչընչացնել ամբողջ պարսկական ազգը»⁸⁰:

1730 թ. Իրանը հատուկ զիվանագիտական մի պատվիրակություն ուղարկելով Կ. Պոլիս, թուրքերից պահանջում էր անհապաղ «Պարսկաստանին հանձնել աֆղանական տիրապետության ժամանակ Պարսկաստանից նվաճված բոլոր երկրները: Սակայն միաժամանակ շահը, որը հույսեր չէր տածում բանակցությունների հաջող ելքի վերաբերյալ, իր բանակին հրամայեց հարձակման անցնելու վաթսուն հազարա-

74 1727 թ. Համադանի հաշտության պայմանագրի մասին, ավելի ընդարձակ, տե՛ս «Histoire de Perse», II, էջ 354—356.

75 M. Mignot. Histoire de l'empire ottoman depuis son origine jusqu'à la paix de Belgrade en 1740, Paris, 1742, էջ 306—307.

76 Mohammed Ali Hekmet, էջ 184.

77 Ենթադրվում է, որ լեվենդ բառը ծագել է իտալերեն levantius բառից, այսինքն «արևելցի» և կամ ֆրանսերեն «levée» «զինվորագրում» բառից (տե՛ս Islâm ansiklopedisi, c. VII, էջ 46—48: XVII դարում թուրքական բանակի տառնձին մասը կազմող լեվենդները խլամացած նախկին տեղաբնիկներն ու գերազանցապես հույներ էին:

78 Սեկպանները կազմում էին ենիչերական զորքի մի մասը, որի պաշտականությունն էր հսկել արքունի որսորդական շներին:

79 J. Hammer, XIV, էջ 175.

80 Mémoires et aventures secrètes et curieuses d'un voyage du Levant, par M. de Saumery, t. III, Liège, 1732, էջ 204—205.

նոց բանակի գլուխն անցած Պարսկաստանի ամենամեծ ու ամենահամարժեք իշխաններից մեկի՝ զորահրամանատար Սեֆի Կուլի խանի օգնությունը եկավ և պաշարեց Քավրիզը ...

Բարձրագույն դուռը մերժեց պարսիկների պահանջը և, տեղեկանալով, որ նրանց բանակը ներխուժել է Հայաստան, հրամայեց ձերբակալել պարսիկ ղեկավարներին... Թուրքական ղիվանը որոշեց Պարսկաստան ուղարկել երկու հարյուր հազարանոց մի բանակ, որին ղեկավարելու էր սուլթանի ավագ որդին։ Մինչ բանակը կհավաքվեր, պարսկական զորքերի հրամանատար Քյոփրյուլյու փաշային կարգադրվեց իր տրամադրության տակ գտնվող բոլոր թուրքական զորամասերի հետ շարժվել դեպի Քավրիզ»⁸¹։ Քյոփրյուլյու փաշայի 40 հազարանոց բանակը «պարտություն կրեց և ստիպված եղավ հետ նահանջել դեպի Երևան»⁸²։

Եվրոպացի հեղինակների վկայությամբ, Քավրիզի մոտ թուրքերի կրած պարտությունը առիթ է տվել 1730 թ. սեպտեմբերին Կ. Պոլսում բռնկված քաղաքային արհեստավորության մեծ ապստամբությանը, որի հետևանքով երկար տարիներ իշխանության ղեկն իր ձեռքում պահած մեծ վեզիր Նեվշեհիրլի Գամաղ Իբրահիմ փաշան սպանվեց, իսկ սուլթան Ահմեդ 3-րդը ստիպված եղավ գահից հրաժարվել հօգուտ իր եղբորորդի Մահմուդի։ Այդ ապստամբության ծագման հիմքում եվրոպացի բոլոր հեղինակները տեսնում էին կառավարության կողմից բնակչության նկատմամբ կիրառվող բազմապիսի ու բազմաբնույթ բռնությունները, ռազմական ծախսերն ապահովելու համար բնակչությանից գանձվող հարկերի ու տուրքերի շափի կտրուկ աճը, առևտրի խափանումը, կենսականորեն անհրաժեշտ ամեն տեսակի ապրանքների գների բարձրացումը և այլն⁸³։

Պատրոնա խալիլի գլխավորությամբ բարձրացված այս հակակառավարական ապստամբության ուսումնասիրությունը մեր նպատակից դուրս է։ Նշենք միայն, որ եվրոպական աղբյուրների վկայությամբ, ապստամբության ժամանակ պոլսահայ համայնքը ծանր, մղձավանջային օրեր է ապրել։ Ընկնելով ծանր կացության մեջ, սուլթան Ահմեդ 3-րդը փորձել է Կ. Պոլսի քրիստոնյաներին, ի թիվս որոնց հայերին, օգ-

տազործել ապստամբների դեմ, մյուս կողմից, ապստամբներն իրենց հերթին, փորձել են քրիստոնյաներին մասնակից դարձնել կատարվող կողոպուտներին։ «Պատրոնա խալիլի խոսվարարները,— գրում է Մ. Մինյոն,— կողոպտեցին նաև Գալատայի և Պերայի կառավարչի տունը, երկու թաղամասեր, որոնք համարյա ամբողջությամբ բնակեցված են քրիստոնյաներով և հրեաներով։ Քրիստոնյաները մշտապես վախենում էին խոսվարչանը որևէ կերպ մասնակցություն ունենալուց։ Կառավարչի տունը խուզարկող ու կողոպտող ենիչերիները նրանց համարյա հարկադրում էին պատուհանների տակից հավաքել այն ոսկյա ու արծաթյա իրերը, որոնք առանց որևէ խտրության նետվում էին փողոց»։ Իր հերթին, նույն հեղինակի վկայությամբ, Պատրոնա խալիլը «հրամայեց, որ քրիստոնյաները ոչ մի տեղ չհավաքվեն, և ոչ մի գնով մասնակցություն չունենան ընթացիկ իրադարձություններին։ Միայն այդ դեպքում նրանց նկատմամբ բռնություն չի նատարվի։ Պատրոնան այս նախազգուշական քայլին դիմեց, որովհետև արդեն հայտարարված էր, թե կայսրը (սուլթանը) մտածում էր դիմելու քրիստոնյաների օգնությանը»⁸⁴։

Պատրոնա խալիլի ապստամբության հետևանքով գահ բարձրացած Մահմուդ 1-ինը հաշտություն կնքելու նպատակով ղիվանագիտական բանակցություններ սկսեց Իրանի հետ. «Նոր սուլթանի մեծ վեզիր դարձած Թոֆալ Օսմանը համոզում էր Մեծ տիրակալին, որ պատերազմն Իրանի հետ կործանարար է կայսրության համար, և Ասիայի այս մասերը համարյա միշտ էլ ճակատադրական հանդիսացող աղետներ են պատճառել թուրքերին»⁸⁵։ Երբ թահմասպար թուրքական պատվիրակության ղեկավարին առաջարկեց, որ «թուրքերն իրեն հանձնեն Պարսկաստանից նվաճած ամբողջ տարածքը և իրեն վճարեն երեք հարյուր հազար թուման, այսինքն՝ քսան երեք միլիոն (լիվր) հատուցում այն վնասների համար, որ նվաճված նահանգները կրել էին ռազմակալման տարիներին։ Եվ առանց պատասխանի սպասելու, թագավորն իր բանակը շարժեց դեպի Երևան։ Դա 1731 թ. հունվարին էր։ Ցրտաշունչ եղանակը նրա առաջխաղացումը դարձրեց շատ ավելի երկար, քան նա ենթադրում էր։ Նա մեծ դժվարություններ կրեց Հայաստանի ձյունածածկ բարձր լեռներն անցնելիս։ Արաքս գետը, որ պետք է անցնեիր, սառած էր, սակայն սառույցի շերտը բարակ էր և դժվարանցելի, այնպես որ, ստիպված եղան կամուրջներ գցել։ Բանակը տասնհինգ օր մնաց գետաբերանում և անցավ գետը Հին Զուղայի մոտ ... Պարսկական բանակը Երևանի մոտակայքը հասավ միայն փետրվարի վերջին։

⁸¹ „Histoire de Thamas Kouli Khan, roi de Perse“, էջ 96.
⁸² Այդ մասին մանրամասն տե՛ս „Histoire de la dernière révolution arrivée dans l'empire ottoman le 28 septembre de l'année, 1730, էջ 2. Relation des deux rebellions arrivées à Constantinople, էջ 6—8 և այլն։
⁸³ Այդ մասին մանրամասն տե՛ս „Histoire de la dernière révolution arrivée, 1730, էջ 4—4, „Relation des deux rebellions arrivées à Constantinople“, էջ 6—8 և այլն։

⁸⁴ M. Mignot, III, էջ 335. Մ. Մինյոյի այս վկայությունները վերցված են դե Գրուզինսկիից և այլ եվրոպացի հեղինակների վկայություններից։
⁸⁵ „Histoire de Thamas Kouli Khan“, էջ 101.

Ալի փաշան Երևանի երկրամասի սերասքյարն էր: Նրան անվանում էին Հեթմ-օղլի, այսինքն՝ բժշկի որդի: Նրա հայրը վենետիկցի էր և կոչվում էր Կորնեբո, որը գերի էր ընկել Կանդիայում, ուր նա զբաղվում էր բժշկությամբ...

Երևանի փաշան քաջ իմանալով, որ Քավրիզի գրավումից հետո պարսիկները հարձակվելու են իր վրա, ոչ միայն նախապատրաստվեց պաշտպանվելու, այլև բարենպաստ հանգամանքների դեպքում հարձակվելու պարսիկների վրա: Եվրոպայից և Սև ծովի շրջակայքից օգնական ուժ ստանալուց և Քյոփրյուլյուի ու Քավրիզի կայազորի մնացորդներից հիսուն հազարանոց բանակ կազմելուց հետո, նա դիրք գրավեց Երևանի մոտակայքում: Շահ Քահմասպը մոտենալով քաղաքին, արեց ամեն ինչ, որպեսզի թուրքական բանակի սերասքյարին ստիպի մարտի բռնվելու: Շատ օրեր անցան փոխադարձ հրաձգություններով, որտեղ ոչ մի կողմն առավելություն չուներ. թուրքական զորահրամանատարը չէր դիմում ընդհանուր ճակատամարտ տալու հանդրգնությունը, քանի դեռ չէր ստացել օգնական ուժ, որին սպասում էր⁸⁶: Ի վերջո ընդհարումը տեղի է ունենում, որի ընթացքում «պարսիկները շատ քաջագործություններ ցուցաբերեցին, սակայն ընկնելով երկու կրակների արանքում երկար դիմադրել չկարողացան և կորուստներով հետ նահանջեցին դեպի իրենց ճամբարը»⁸⁷: Շահ Քահմասպին լսնձի ապահովության նպատակով տեղափոխում են էջմիածին⁸⁸: Երեվանի կառավարիչ Հեթմիմբաշի Ալի փաշան «մի քանի օր հետո ստանալով 4. Պոլսից սպասված օգնական ուժը հարձակվեց պարսիկների վրա, պարտության մատնեց նրանց և ստիպեց նահանջել դեպի Արաքսի վտակներից մեկը հանդիսացող Զանգուն: Շատերը խեղդամահ եղան, սակայն մեծ մասը փրկվեց ու եկավ էջմիածնում միացավ թագավորին: Պարսիկների համար այս ընդհարումը աղետաբեր եղավ, նրանք տվին ութ հազար սպանված և բազմաթիվ գերիներ, որոնց թվում էր զորքերի հրամանատար Սեֆի Կուլի խանը»⁸⁹:

Շահ Քահմասպը էջմիածնում փորձում է վերադասավորել իր ուժերն ու անցել հակահարձակման, սակայն «վախկոտություն ցուցաբերելով նահանջում է դեպի Քավրիզ»⁹⁰: Այստեղ իրանական տիրակալը փորձում է ևս մի անգամ համարել բանակը և թուրքերի դեմ անցնել

հակահարձակման. սակայն «երբ տեղեկանում է, որ Բաբելոնի (Բաղդադի) փաշան մի մեծ բանակով եկել ու պաշարել է Համադանը, վախենում է ու նրան մի պահ թվում է, թե թշնամին արդեն Իսպահանի դռների մոտ է, որոշում է թողնել Քավրիզը և շտապել օգնելու մի քաղաքի, որը մայրաքաղաքը պաշտպանող միակ պատնեշն էր»⁹¹: Համադանի մոտ տեղի ունեցած ճակատամարտում շահ Քահմասպը ծանր պարտություն է կրում⁹²: Իր հերթին, Երևանի կառավարիչ Հեթմիմբաշի Ալի փաշան Երևանից շարժվում է դեպի Ադրբեջան, որը վերանվաճեց այնպիսի դյուրություններ, ինչպես այն նվաճել էր նախորդ տարին: Այսպիսով, շահ Քահմասպը կարճ ժամանակամիջոցում կորցրեց իր առաջին հաջողությունների պտուղները:

Պարտություն կրած շահը թուրքերին է դիմում հաշտության բանակցությունների առաջարկով: 1732 թ. հունվարի 10-ի կնքված պայմանագրով իրանական կողմը թուրքերին է հանձնում Երևանը, Գանձակը, Նախիջևանը, Քիֆլիսը, Շիրվանը, Շամախին, Գաղստանը, Քարթլին: Ամբողջ Հյուսիսարևմտյան Իրանը, ներառյալ Քավրիզը, թուրքերը զիջում էին շահ Քահմասպին:

Գտնվելով խորասանում ու իմանալով կնքված ստորագույնից պայմանագրի հետևանքով Իրանում ծայր առած դժգոհության մասին, Նադիրկուլին գալով Իսպահան գահընկեց արեց շահ Քահմասպին և իր խնամակալության ներքո Իրանի շահ հռչակեց նրա նորածին որդուն՝ Աբաս 2-րդին: Փաստորեն Նադիրկուլին դարձավ Իրանի ինքնիշխան տիրակալը: Այնուհետև նա թուրքական կողմին հաղորդեց, որ շեղյալ է համարում թուրքերի հետ կնքված պայմանագիրը և շարունակելու է պատերազմը:

Իրանում կատարված այս քաղաքական նոր փոփոխությունները տրոշ շտկումներ մտցրեցին նաև ռուսական արևելյան քաղաքականությունից: Ռուսական արտաքին քաղաքականությունը ձգտում էր իր կողմը գրավել Նադիրին, որպեսզի կանխեր թուրքերի հետ դաշինք կնքելու որևէ մի հնարավորություն: Եվ Աննա Իվանովնայի կառավարությունը 1732 թ. հունվարի 21-ին Ռեշտում Իրանի հետ կնքեց պայմանագիր, համաձայն որի Գիլանը, Մազանդարանը և Աստրաբադը հանձնվում էին Իրանին:

Անցնելով հարձակման, Նադիրկուլին պատերազմական գործողություններ սկսեց 1733 թ. ամռանը՝ Բաղդադի շուրջը: Սկզբում հաջողություն ուղեկցեց թուրքերին և թուրքական զորքերի գերագույն հրա-

86 Նույն տեղում, էջ 104:

87 Նույն տեղում, էջ 106:

88 Նույն տեղում, էջ 107:

89 Նույն տեղում, էջ 108:

90 Նույն տեղում, էջ 110:

91 Նույն տեղում, էջ 111:

92 Նույն տեղում, էջ 112—113:

մանատար Քոփալ Օսմանը 1733 թ. հուլիսին Բազդազի մոտ պարտոթյան մատնեց Նադիրի զորքերին: Այդ մասին են հաղորդում եվրոպացի շատ հեղինակներ, որոնց թվում և Կ. Պոլսում Ֆրանսիայի դեսպան Մարկիզ դե Վիլնյուվը⁹³: Սակայն նույն տարվա նոյեմբերին Քերթուկի մոտ տեղի ունեցած վճռական ճակատամարտում թուրքերը ծանր պարտություն կրեցին: Ճակատամարտում իր մահը գտավ նաև սերասքյար Քոփալ Օսմանը:

Քոփալ Օսմանի պարտությունը Քուրքիայի ղեկավար շրջաններին ստիպում է Իրանից հաշտություն խնդրել՝ «ինչ գնով էլ դա լինի»⁹⁴: Սակայն մեծապետական տրամադրությամբ համակված որոշ բարձրաստիճան պաշտոնյաներ, նախ և առաջ մեծ վեզիրը, շուտով նորից հակվում են Իրանի դեմ նոր պատերազմի գաղափարին: Քոփալ Օսմանի փոխարեն սերասքյար է նշանակվում Աբդուլլահ Քյոփրյուլյուն⁹⁵: Սուլթանական կառավարության պահանջով Ղրիմի թաթարների 30 հազարանոց մի բանակ Գաղստանի վրայով ներխուժում է Վրաստան ու Ադրբեջան: Թաթարների արշավանքների «ճանապարհն ընթացավ Վրաստանով, Թիֆլիսի մոտակայքով, Կուրի վրայով դեպի Շամախիի շրջակայքը, որտեղ նրանց սպասում էին լեզգիների գինված ջոկատները:

Այս լուրերը ստանալով, Կուլի խանը վճռեց պատերազմական գործողությունների թատերաբեմը տեղափոխել Հայաստան և Վրաստան: Սահմանի վրա դեռ նախորդ տարին արդեն կար 30 հազարանոց կանոնավոր բանակ՝ Թավրիստանի, այսինքն՝ Արաքսի երկայնքով տարածքը պաշտպանելու համար: Խնամակալը (Նադիրը — Մ. Զ.) Խորասանից ու Կանդահարից իր ավագ որդու կողմից բերված բանակին հրամայեց շարժվել առաջ: Այս երիտասարդ իշխանազունը ամբողջ արշավանքի ընթացքում որպես զորահրամանատար մեծ ծառայություններ մատուցեց հորը»⁹⁶: Իրանական բանակի երևալը թաթարներին և լեզգիներին ստիպում է դիմելու փախուստի⁹⁷:

«Հաղթական բանակի կեսը թողնելով Խորասանում՝ Քուրքեստանի սահմանագծում, խնամակալը ժամանեց Թավրիզ և այնտեղից իր որդուն հրամայեց անցնել Արաքսը, շարժվել դեպի Երևան և պաշարել այն: Բանակի մյուս մասը, որը կանգնած էր Զուղայի դեմ-դիմաց, շարժվեց Նախիջևանի վրա և գրավեց այն, այդտեղից էլ բանակը գնաց

պաշարելու Գյանջան: Կուլի խանը իր առաջ խնդիր դրեց պատժել լեզգիներին և իր բանակը Մուղանի վրայով ուղիղ շարժեց դեպի Շամախի, նպատակադրվելով ավերել: այն: Շամախիի մոտ Նադիր Կուլիի բանակի երևալը ստիպում է «...քաղաքի բնակչության կեսը կազմող թաթարներին, որոնք վախենում էին իրենց ըմբոստության պատճառով պատժել, իրենց ինչքերով փախչել լեզգիների բնակեցած լեռները: Հայերը և եվրոպացիները, որոնց ձեռքում էր այս քաղաքի ողջ առևտուրը, մնացին տեղում և պատրաստ էին ենթարկվել թշնամուն, հենց որ նա ներկայանար: Գյանջայի փաշան Շամախիին օգնության ուղարկեց Ղրիմի թաթարների մի մասը և էրզրումում գտնվող օսմանյան զորքերի գերագույն հրամանատարին տեղեկացրեց այն վտանգի մասին, որ սպառնում էր Շամախիին և նույնիսկ Գյանջային, որը շուտով պաշարվելու էր (իրանական) մեծ բանակներով:

Այսուհանդերձ Կուլի խանը եկավ Շամախի, որի դռներն անմիջապես բացվեցին նրա առաջ: Նա ձեռքակալել և կոտորել տվեց քաղաքում գտնվող փոքրաքանակ թուրքերին և այնուհետև քաղաքի բնակիչներին հայտնեց, որ իր ծրագիրն է ավերել քաղաքն ու նրա միջնաբերդը... Ինչպիսի պաղատանք էլ որ շարեցին բնակիչները՝ փոխելու նրա որոշումը, ոչինչ չստացան բացի հետաձգումից, որի ընթացքում նրանք ժամանակ պետք է ունենային իրենց ընտանիքներով և ինչքերով ըստ հայեցողության տեղափոխվել Վրաստան կամ Հայաստան՝ խոստանալով նրանց բնակարաններ տալ թուրքերին վտարելուց հետո: Նա միջնաբերդը պաշարեց շուրջ երկու ամիս և, ի վերջո, սրի անցկացրեց ամբողջ կալազորը, գլխատել տվեց փաշային ու համաձայն իր հրամանի այնպես ավերեցին քաղաքը, որ շուտով նրանից հետք անգամ չմնաց: Նա ուզում էր լեզգիներին հետապնդել մինչև իրենց վերջին հանգրվանը, սակայն լեռնանցքներով ու ոլորապտույտ ճանապարհներով լի լեռնաշղթայում նրանց հետապնդելն անհնարին էր, ճանապարհները հայտնի էին միայն տեղի բնակիչներին: Նա իր վրեժը բավարարեց մի շարք գյուղեր այրելով, դաշտավայրի բնակավայրերն ասպատակելով և որոշ քանակի անասուններ հափշտակելով:

Այս արշավանքից հետո նա իր բանակով շարժվեց դեպի Գյանջա, որը երկու ամիս և առանց որևէ մի արդյունքի պաշարված էր... Երբ Կուլի խանը պատրաստվում էր տալ ընդհանուր գրոհի հրաման, Երևանի ճամբարից մի սուրհանդակ ընդունեց, որի բերանով իր որդին տեղեկացնում էր, թե Աբդուլլահ Քյոփրյուլյուն մի մեծ բանակով եկել է Երևանի կալազորին օգնության և որի պատճառով պաշարողները ստիպված են եղել նահանջել: Խնամակալն անհապաղ որոշեց թողնել Գյանջայի պաշարումն ու բոլոր ուժերով շտապել միանալու իր որդուն

⁹³ Այդ զեկուցագիրն ամբողջությամբ բերված է Յոզ. Համմերի մոտ, տե՛ս J. Hammer, XIV, էջ 514—528.

⁹⁴ „Histoire de Thamas Kouli-Khan“, էջ 125.

⁹⁵ Նույն տեղում, էջ 230:

⁹⁶ Նույն տեղում, էջ 236:

⁹⁷ Նույն տեղում, էջ 238:

և ճակատամարտ տալ թուրքերին՝ համոզված լինելով, որ հաղթանակի դեպքում նա այնուհետև առանց դժվարությունների կգրավի Երևանը, Գյանջան, Թիֆլիսը և Վրաստանի մյուս քաղաքները: Նրա միացյալ բանակը հասնում էր 90 հազար մարդու, թուրքերինը ավելի ուժեղ էր»⁹⁸:

1734 թ. հունիսի 2-ին Երևանի մոտակայքում թշնամի կողմերը տալիս են հանդ ճակատամարտ, որը վերջանում է թուրքերի ծանր պարտությունով: Համաձայն եվրոպական մի գեկուցագրի «թուրքերի կորուստը հաշվվում է 50 հազար սպանված ու վիրավոր, առանց նկատի ունենալու գերեվարյալներին: Պարսիկները կորցրին մոտավորապես ութ հազար մարդ: Ճակատամարտը, ավելի շուտ սպանողը, տեղի էր թամ: Քյոփրյույու գորահրամանատարը հինգ այլ փաշաների հետ հայտնվում է սպանվածների թվում, և հինգ փաշաներ գերի են ընկնում: Ամբողջ թուրքական հրետանին, ամեն տեսակի իրեղեն ապրանքները, զինվորական գանձարանը դարձան հաղթողի ավարը ...

Այս հաղթանակը տվեց Կուլի խանի հպարտությունը շարժող մեծ առավելություններ: Երևանը Հայաստանի քաղաքն է, որ ընկավ հաղթողի լծի տակ կամ ճանաչեց նրա գերիշխանությունը: (Երևանի) կայազորն այլևս օգնություն որևէ մի հույս չունենալով և վախենալով, որ իրեն չեն խնայի, եթե որևէ գիմադրություն կազմակերպի, խընդրեց թույլ տալ նահանջել դեպի Կարս, որը և թույլատրվեց ... Հետագա տագմական գործողությունների ընթացքում վերանվաճվեցին Վրաստանն ու Հայաստանը»⁹⁹:

Եվրոպացի հեղինակներից բերված այս վկայությունների մեջ կան որոշ անճշտություններ: Երևանի մոտ Կուլի ունեցած ճակատամարտ ասելով նկատի է առնված Եղվարդի նշանավոր ճակատամարտը, իսկ Նադիրի և Աբդուլլահ Քյոփրյույուի միջև ռազմական ընդհարումները տեղի են ունեցել ոչ թե 1734 թ., ինչպես ներկայացված է եվրոպացի հեղինակի գեկուցագրում, այլ 1735 թվականին: Այս իրադարձություններն ավելի ճշգրիտ նկարագրված են Աբրահամ Կրետացի կաթողիկոսի մոտ: Ըստ հայ հեղինակի հաղորդած վկայության, Նադիրի և Աբդուլլահ փաշայի միջև առաջին ընդհարումը տեղի է ունենում 1735 թ. ապրիլին, իսկ համաձայն թուրքական աղբյուրների՝ մայիսի 25-ին Կարսի մոտ, որը կողմերից որևէ մեկին առավելություն չի տալիս: Պատերազմող երկու կողմերի միջև վճռական ճակատամարտը, ինչպես ասվեց, տեղի է ունենում 1735 թ. հունիսի 8-ին, Եղվարդի մոտ: Ճակատամարտի գունեղ ու մանրամասն նկարագրությունը տալիս է Աբրահամ

Կրետացին: Չնայած թուրքերի թվական բացարձակ գերակշռության Նադիրը գլխովին ջախջախեց նրանց: Ջ. Մալկոլմը, հենվելով Նադիրի կենսագիր Մուհամմեդ-Կյադիմի վրա, գրում է. «Աբդուլլահ (փաշան) վստահ իր զորքերի դերազանցության վրա, պարսիկների վրա հարձակվեց Երևանի մոտ գտնվող Բեհավենդի (պետք է լինի Եղվարդի—Մ. Ջ.) հովտում: Պարսիկ հրամանատարը (Նադիրը), տեսնելով նրա առաջխաղացումը, մեծ ոգեշնչությամբ դիմեց իր զորքերին: «Թըշնամիները,— ասաց նա,— մեկի դեմ ութն են, սա առավել ևս պատճառ պետք է հանդիսանա, որ տանենք փառահեղ ճակատամարտ»¹⁰⁰:

Ինչպես ասվեց, այս հաղթանակի անմիջական հետևանքը պարսիկների կողմից համարյա ամբողջ Անդրկովկասի զավթումն էր: Նադիրը ոչ միայն զավթում է Անդրկովկասը, այլև, Ա. Կրետացու վկայությամբ, ասպատակիչ արշավանք է ձեռնարկում դեպի Արևմտյան Հայաստանի նահանգները՝ ավերելով երկրամասը ու գերեվարելով բնակչության մի մասին: Նա գրում է. «Ես անց անց գնացի ի վերա Գարսայ և պաշարեաց զնա ամսօրեայ ժամանակ: Արգելեաց զգետն որ որոգանէր և արբուցանէր զքաղաքն, կտրեաց զջուրն, որ ի վերուստ գայր խողովակով ի բերդն: Եւ յամենայն կողմանց նեղ էարկ զքաղաքն: Եւ պատեալ պաշարեցան յամենայն դիմաց:

Այլև ասպատակա արձակեաց երկուց կողմանց, մինչ գնայր ի Հարսայ և յահեակ, զմի կողմն ի վերա Պայագիտու կրկին և զմիւս կողմն ի վերա Կաղզուանայ և ինքն ի միջի: Յորում գնացեալ բանդեցին զերկիրն, այրեցին զշինուածսն, գերեցին զմարդիկը և զանասունս և բազում աւարաւ դարձան ի բուն բանակն՝ ի Գարս: Եւ անտի կրկին արձակեաց ասպատակս, որ գնացեալ հասին մերձ Թէրգուպօլսոյ: Եւ գերեցին զնարիմանու նահանգն զՋավախեթու, զՉլտրու և զԼայի Դուլու, որք էին բովանդակ ի մեր ազգէ: Եւ բռնեցին զայր և զկին, զժէր և զտղայ և տարան ի Խորասան թուով Զն (6000), որպես և լսեմք»¹⁰¹:

Թուրքերը շուտով Իրանից հաշտություն են խնդրում: «Երկու պետությունների լիազորները հավաքվեցին էրզրումում և ամբողջ 1735 թ. վարեցին ապարդյուն բանակցություններ: Թուրքական պատվիրակներն անվերջ վիճում էին հողային տիրապետությունների շուրջ, երբ ի վերջո՝ տեղեկանալով պարսկական բանակի Հայաստանում և Վրաստանում ունեցած հաջողությունների մասին, վերջնականապես որոշեցին

¹⁰⁰ John Malcolm. էջ 86:

¹⁰¹ Ա. Կրետացի, Պատմութիւն անցիցն իւրաց և նադր-շահին պարսից, օրնական բնագիր, ռուսերեն թարգմանություն, առաջաբան և ծանոթագրություններ Ն. Կ. Գորգանյանի, Երևան, 1973, էջ 67:

⁹⁸ Նույն տեղում, էջ 245:

⁹⁹ Նույն տեղում, էջ 249—250:

այս երկու երկրները զիջել (պարսիկներին): Սակայն դա Պարսկաստանի պահանջի մի մասն էր միայն:

Կուլի խանը ռազմական ծախսերի համար հսկայական գումարից բացի, պահանջում էր, որ իրեն զիջեն Դիարբեքիբը, Բաբելոնը (Բաղդադը) և ողջ այսրեփրատյան տարածքը՝ Եփրատի ակունքից մինչև նրա գետաբերանը, հավակնելով, որ դրանք հին պարսկական գահի տիրապետության տակ են եղել և որ գետը պետք է երկու երկրների սահմանագիծը հանդիսանա»¹⁰²:

Հետագայում, սակայն, նազիր շահը շափավորում է իր պահանջները և 1736 թ. էրզրումում երկու պետությունների միջև կնքվում է հաշտության պայմանագիր, համաձայն որի Թուրքիան Իրանին էր զիջում ողջ Անդրկովկասը: 1736 թ. էրզրումի պայմանագիրը որոշ առումով ուղղված էր Ռուսաստանի դեմ: Թուրքիան հակվեց Իրանի հետ հաշտություն կնքել այն պատճառով, որ նա, ըստ էության, ուղղված էր Ռուսաստանի դեմ: Հիրավի, հաշտության պայմանագրի կնքման նախորդող տարիներին Ռուսաստանը ուշի-ուշով հետևելով Թուրքիայի դիվանագիտական քայլերին, որոնք հաճախ թելադրված էին Ֆրանսիայի ու Անգլիայի կողմից, բանակցությունների մեջ մտավ նազիրի հետ, հասկացնելով նրան, որ ռուսական զորքերը մուտք են գործել Մերձկասպյան շրջանները «միայն պարսկական պետության շահի ու գոյության պահպանման համար», և որ Ռուսաստանը պատրաստ է իր գրաված տարածքը հանձնելու Իրանին¹⁰³: Երկար բանակցություններից հետո 1735 թ. մարտի 10-ին Գանձակում ստորագրվեց նոր իրանա-ռուսական պայմանագիր, համաձայն որի Ռուսաստանն Իրանին վերադարձրեց Մերձկասպյան երկրամասը: Իրանը պարտավորվեց այդ երկրամասը երբեք չհանձնել մի երրորդ պետության, համաձայնվեց Ռուսաստանի հետ «հավերժ բարեկամության» դաշինքին ու պարտավորվեց անջատ պայմանագիր չկնքել Թուրքիայի հետ¹⁰⁴: Ենթադրեն դրժելով իր պայմանագրով հանձն առած պարտավորությունը, նազիր շահը, ինչպես տեսանք, Թուրքերի հետ պայմանագիր կնքեց այն ժամանակ, երբ արդեն Ռուսաստանը Թուրքիայի հետ գտնվում էր նոր պատերազմի մեջ: Դեպքերին ժամանակակից եվրոպացի հեղինակներից Մ. Օտտերը նշում է, որ Թուրքերի հետ հաշտության կնքումը «հակա-

սում էր այն պարտավորություններին, որ նա (իմա՝ նազիր շահը—Մ. Չ.) հանձն էր առել մոսկովցիների նկատմամբ»¹⁰⁵:

* * *

1735 թ. բռնկվեց հերթական ռուս-թուրքական պատերազմը: Եթե հավատարու լինենք Մ. Օտտերի վկայություններին, որն այդ օրերին գտնվում էր Կ. Պոլսի ֆրանսիական դեսպան Մարկիզ դե Վիլնյովի մոտ, եվրոպական երկրները, իբր, արել են առավելագույնը՝ կարգավորելու Ռուսաստանի և Թուրքիայի միջև ծագած կոնֆլիկտը¹⁰⁶: Իրականում, սակայն, հենց նույն եվրոպական պետություններն էին և, մասնավորապես, Ֆրանսիան ու Անգլիան, որոնք կանգնել էին Թուրքիայի թիկունքում և աշխատում էին նրա միջոցով հարվածել իրենց գլխավոր ախոյան Ռուսաստանին: Այս պատերազմը ևս մեծ հույսեր ներշնչեց Թուրքիայի կողմից ստրկացված քրիստոնյա ժողովուրդներին, որոնք Ռուսաստանին դիտում էին իբրև իրենց փրկարարի: Այդ է վկայում Կ. Պոլսում ռուսական դեսպան Վիլնյովի կայսրուհի Աննա Իվանովնային ուղղած նամակում. «նահանգների հույները և նամանավանդ բուլղարները, վալախները, մոլդավացիները և այլք,— գրում է նա,— մեծ եռանդով ձգտում են ազատագրվել բռնատիրությունից և այն աստիճան են նվիրված Ռուսաստանին, որ երբեք չեն տատանվի զոհաբերել իրենց կյանքը Ձերդ Մեծության համար, սպասում են Ձեզ որպես ազատագրողի»¹⁰⁷:

Ռուսական դեսպանը կայսրուհուն հորդորում էր պատերազմը սկսել Թուրքիայի դեմ՝ այդ երկիրը ներկայացնելով որպես խիստ թուլացած ու անկման եզրին գտնվող: «Ելնելով իրականությունից,— գրում էր նա,— այնուհետև անվարան հավաստիացնում եմ Ձեզ, որ Թուրքիայում այսօր չկա աչքի ընկնող ոչ մի քաղաքական գործիչ, ռազմական առաջնորդ կամ ֆինանսական վերակացու: Ամեն ինչ սարսափելի քաոսի մեջ է գտնվում: Փոքրիկ մի հարվածը բավական է, որպեսզի երկիրը գլորվի անդունդը: Այն վախը, որ դեռևս ներշնչում են Թուրքերը, պայմանավորված է անցյալով և հիմնված է ավանդույթի վրա: Նրանք այսօր բոլորովին այլ են, քան էին մի ժամանակ: Ինչքան մի ժամանակ գազաններ էին ու փառքի սիրուն ծարավ, նույնքան նրանք այսօր փոքրոգի են վախկոտ»¹⁰⁸: Թուրքիայի վիճակը մոտավորապես նույն ոգով էր ներկայացնում մի ժամանակ Կ. Պոլսում Ֆրանսիայի

¹⁰² „Histoire de Thamas Kouli-Khan“, էջ 273—274.
¹⁰³ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Գ. Գ. Բայչաձե, Русско-грузинские отношения в 1725—1735 гг., Тбилиси, 1965, էջ 150—151.
¹⁰⁴ Նույն տեղում, էջ 161:

¹⁰⁵ M. Otter, 1. էջ 31.
¹⁰⁶ Նույն տեղում, էջ 33:
¹⁰⁷ A. Vandal, էջ 248.
¹⁰⁸ Նույն տեղում:

դեսպան պարոն Լե Շատոնեֆը իր կառավարութեանը. «կարելի է ընդհանրապես նշել, որ այս կայսրութիւնը գտնվում է այնպիսի թուլացած վիճակում, որը չէր կարելի նախատեսել»¹⁰⁹; Ֆրանսիան հանդես էր գալիս, ահա, այդ թուլացած պետութեան պաշտպանի դերում: Ինչպես գրում է Ա. Վանդալը, ֆրանսիական կառավարութիւնը Մարկիզ դե Վիլնյովից պահանջում էր դիմել «ամեն մի հնարավոր միջոցի, որպեսզի թուլ շտրվի մոսկովցիներին Սև ծովում ազատ նավարկութեան ազատութիւն, որը կարող էր շուտով տարածվել մինչև Միջերկրական ծովը»¹¹⁰:

1735—1739 թթ. ռուս-թուրքական պատերազմի վերջին տարում, չնայած Ռուսաստանի դաշնակից ավստրիացիների որոշ անհաջողութիւններին, ֆելդմարշալ Մյունխը վստահ էր, որ ռուսական զինքը և Օսմանյան կայսրութեան հպատակ քրիստոնյաների զինված ապստամբութիւնն ի վերջո խորտակելու են Թուրքիային: «Պետք է հենվել,— գրում էր նա կայսրուհուն,— ապստամբ քրիստոնյա հպատակների ոգևորութեան վրա և քայլել ուղիղ դեպի Կոստանդնուպոլիս»¹¹¹: Սակայն ռուսական արքունիքի ներկայացուցչի իղձերը շիրականացան:

1739 թ. սեպտեմբերի 18-ին Մարքիզ դե Վիլնյովի միջնորդութեամբ Բելգրադի մոտ հաշտութեան պայմանագրի կնքվեց Ռուսաստանի և Թուրքիայի միջև, որով, փաստորեն, անհետևանք մնաց Ղրիմում և Բալկաններում ռուսական զինքի տարած փայլուն հաղթանակը Թուրքերի նկատմամբ: Չնայած Ազովը անցնում էր Ռուսաստանին, սակայն վերջինս այդ պայմանագրով Սև ծով ազատ ելք ունենալու իրավունք ձեռք չէր բերում: Մինչ այդ, 1739 թ. սեպտեմբերի 1-ին կնքվել էր թուրք-ավստրիական հաշտութեան պայմանագիրը, որը Ավստրիայի համար, Յոզեֆ Համմերի բառերով ասած, «...ունեցավ այն նույն նշանակութիւնը, ինչպիսին ունեցավ 1711 թ. Պրուտյան հաշտութիւնը Ռուսաստանի համար»:

Բելգրադյան հաշտութեան պայմանագրի կնքումը մեծապես ուժեղացրեց Ֆրանսիայի ազդեցութիւնը Թուրքիայի վրա: «Ֆրանսիայի ազդեցութիւնը Օսմանյան կայսրութեան վրա ոչ առաջներում և ոչ էլ հետագայում այնքան վճռորոշ չէր եղել, ինչպես այժմ: Մարքիզ դե Վիլնյովի դիվանագիտական առաքելութիւնը, անկասկած, ամենահիշարժանն է Ֆրանսիայի և Թուրքիայի դիվանագիտական պատմութեան մեջ»¹¹², կարողում ենք դարձյալ Յոզեֆ Համմերի մոտ:

Եվրոպական պետութիւններն իրենց հակառուսական քաղաքականութեամբ առժամանակ հետաձգում էին ներքնապես խիստ թուլացած Օսմանյան կայսրութեան անխուսափելի կործանումը:

* * *

XVIII դարի 40-ական թվականներին Նադիր շահը, խախտելով 1736 թ. էրզրումի հաշտութեան պայմանագիրը, հարձակման անցավ Թուրքերի դեմ: Այդ պատերազմների ընթացքում Հայաստանի երկու մասերի բնակչութիւնը շարաշար տուժեց: Հնդկաստան կատարած արշավանքից հետո Նադիր շահը՝ հղփացած իր հաջողութիւններով, 1743 թ. սեպտեմբերին պաշարեց Մոսուլը: Նա Բաղդադի վալի Ահմեդ փաշայից պահանջեց հանձնել քաղաքը¹¹³: Նադիրը միաժամանակ հիսուն հազարանոց բանակ ուղարկեց էրզրում՝ ասպատակելու Բարձր Հայքի գավառները¹¹⁴:

Թուրքերն իրենց հերթին ներխուժեցին Վրաստանի սահմանները, սակայն պարտութիւն կրեցին Կախեթի իշխան Քեյմուրազից: Վերջինս պարզևատրվեց Նադիր շահի կողմից, իսկ նրա որդին՝ Հերակլը, նշանակվեց թագաժառանգ: Ինքը՝ Նադիր շահը, շարժվեց դեպի Կարս: 1744 թ. մայիսի 31-ին և օգոստոսի 24-ին թշնամիները երկու անգամ ճակատամարտում են, սակայն կողմերից և ոչ մեկը չի կարողանում ապահովել հաղթանակը¹¹⁵: Կարսի շրջակայքում Նադիր շահի բանակը մնում է մինչև հոկտեմբերի 9-ը, որից հետո նահանջում է:

Օգտվելով քրդական որոշ ցեղերի աջակցութիւնից, Աբդուլլահ փաշայի զորքերը մուտք էին գործել Մոկսի շրջանակը և սկզբնական շրջանում ձեռք բերել որոշ հաջողութիւններ: Մայրաքաղաքում այդ առթիվ տեղի ունեցան հանդիսութիւններ, որոնք շուտով վերածվեցին համընդհանուր սուգի: Թուրքական զորքերի սերասքյար Եգեն Մեհմեդ փաշան հարյուրհազարանոց բանակով Կարսի վրայով ներխուժել էր Արևելյան Հայաստան և Եղվարդի մոտ ճամբարելով կարծում էր, թե թուրքական ասքյարների փոշիներով անգամ կարող է հաղթել թշնամուն: 1745 թ. օգոստոսին տեղի ունեցավ Եղվարդի շրջաօր ու գիշեր տեսած արյունալի ճակատամարտը, որը վերջացավ Թուրքերի լիակատար պարտութեամբ: Ճակատամարտում իր մահը գտավ նաև սերասքյար Եգեն Մեհմեդ փաշան: Նրան փոխարինեց էլիշաջ Ահ-

¹⁰⁹ M. de Bonnac, էջ 90—91:

¹¹⁰ A. Vandal, էջ 276:

¹¹¹ J. Hammer, XIV, էջ 470:

¹¹² Նույն տեղում, XV, էջ 2:

¹¹³ Նույն տեղում, էջ 71—72:

¹¹⁴ Նույն տեղում, էջ 82—83:

¹¹⁵ Նույն տեղում, էջ 86:

մեղ փաշան¹¹⁶: Թուրքերի պարտութունը թուրք պետական պաշտոնական պատմագիրները բացատրում են լեվենդական զորքերի հրամանատարների դասալքությամբ ու դավաճանությամբ: Փախուստի դիմած լեվենդական զորամասերը, սփռելով Արևմտյան Հայաստանի տարբեր մասերում, պատուհաս դարձան արևմտահայ բնակչության համար: «Ասիայի բոլոր կառավարիչները հրաման ստացան ամենուր փնտրել փախստական լեվենդներին, որոնց ամոթաբեր դավաճանութունը պատճառ էր հանդիսացել Երևանի ճակատամարտի կորստին... և նրանց գլուխներն ուղարկել Բարձրագույն դուռ», գրում է Յոզ. Համմերը:

Եղվարդի ճակատամարտից հետո նադիր շահը նոր սերասքյար էլհաջ Ահմեդ փաշային առաջարկում է հաշտություն՝ պահանջելով Իրանին հանձնել Վանը, Քրդստանը, Բաղդադը, Բասրան ու շիաների սրբավայրեր հանդիսացող Նեջեֆն ու Կերբելան: Սակայն բանակցությունների ընթացքում նադիր շահն ստիպված է լինում չափավորել իր պահանջները և 1746 թ. սեպտեմբերի 4-ին կնքվում է նոր հաշտություն, որի հիմքում ընկած էին 1639 թ. Կասրե Շիրինի պայմանագրի հիմնական կետերը, այսինքն՝ Արևմտյան Հայաստանն ու Արևմտյան Վրաստանը մնում էին Թուրքիայի, իսկ Արևելյան Վրաստանը, Արևելեյան Հայաստանը և Ադրբեջանը՝ Իրանի տիրապետության ներքո:

* * *

Թուրք-իրանական ընդհարումների ժամանակ արևմտահայ զանգվածները տուժում էին ոչ միայն ծավալված ռազմական գործողություններից, այլև, աղբյուրների տվյալներով, թե՛ պատերազմի ընթացքում և թե՛ հատկապես պատերազմից հետո լեվենդների, քրդերի, ենիչերիների («ղուլերի») ապստամբական ելույթներից: Ամբողջ Փոքր Ասիայում համարյա չկար մի շրջան, որ ենթարկված չլիներ ապստամբ ելուզակների կամայականություններին: Սերաստիայի շրջակայքում լեվենդների կատարած խժոժությունների մասին մանրամասն գրում է Հովհ. Սեբաստացին: Թե ինչ շարիքներ են գործել Եղվարդի ճակատամարտում փախուստի դիմած լեվենդներն Արևմտյան Հայաստանում, երևում է հայ հեղինակի հետևյալ վկայությունից. «...Եւ զորքն (Եգեն Բղեշոյ) փախստական եղեալ և անզուխ սփռեալ յամենայն տեղիս, բազում վնասս հասուցին ազգիս մերոյ, զի ի Սեբաստիոյ մինչև ի Մարզուան անապատ արարին, ընդ որս և զվանս Մարզուանի, ինքեանք այրեսցին անջինջ հրով գեհնին:

Յաջորդ ամին (ՌՃԶԵ—1746) մայիսի 18 Եղիական կիրակէին եկն ի քաղաքս Հեթիմօղլի Ալի Բղէշին՝ անուամբ սպարապետութեան, և ժողովեաց առ ինքն զբազում զօրս իբրև ԲՃՌ (200.000) զի 38 երկդուզեան նախարարք եկին, թող զայլսն: Եկին և Ղափուսուղ կոչեցեալ պիղծ լեվենտին իբրև ԺՌ (10.000)՝ հանդերձ զօրագլխովք իւրեանց, որք էին Կէնճալի Կենճ Օսման Կէմալագ, Աւարօղլին և այլն: Եւ բանակեցան մօտ իրերաց՝ յեզր քաղաքիս և ամենից սոցա զպիտոյսն սպարապետն հոգայր, բայց ոչ շատացեալ պիղծ լեվենտքն՝ անկանէին ի գիւղօրայս և բազում վնաս գործէին, որ և ի գիշերի միում գնացեալ ի գիւղն բոգնիկ բազում ոճրագործութիւնս արարին, զկանայս յղացուցին, աղջկունս ապականեցին, ինքեանք եկեալ պատմէին ի քաղաքին: Եւ գիւղօրայքն ամենայն փոխուցեալ եկն ի քաղաքն, բայց սուրբ վանս, շնորհիւ տեառն և զօրութեամբ սրբոյ նշանին անխախտ անվնաս մնաց ի տեղուջ իւրում, դրունքն բաց և եկեալքն կերակրեալք զնային: Եւ յետ քանի մի ամսոյ՝ կոտորեցին աստ ի Սեբաստիա զամենայն լեվենտսն և գնացին իւրաքանչիւր ոք ի տեղի իւր»¹¹⁷:

Եվրոպացի հեղինակներից Մ. Օտտերը որպես ականատես հետևյալ ձևով է նկարագրում լեվենդների խժոժությունները Փոքր Հայքում. «Նրանք (լեվենդները) հայհոյանքների ու հարվածների տարափ էին հասցնում նրանց (իմա՝ հայերին—Մ. Օ.), փետում էին նրանց մորուսներն ու ստիպում տալ այն ամենը, ինչ պահանջում էին: Նրանք սկսում էին նրանց բնակարաններում տեղավորվելով, այնուհետև երկու և երեք անգամ սեղաններին զնել էին տալիս այս երկրի ամենալավագույն ուտելիքները, պահանջում էին, որ իրենց համար մորթեն ոչխարներ ու զառներ, որը նրանք դուրբան էին անվանում, այսինքն՝ զոհաբերություն: Մինչ կանայք զբաղված էին լինում նրանց ընտիր ճաշեր պատրաստելով, մարդիկ վազում էին շորս կողմը՝ նրանց ձիերի համար թարմ խոտ ու գարի հայթհայթելու»¹¹⁸:

1746 թ. հաջորդած տարիներին տարբեր ելուզակախմբերի հակակառավարական ելույթները ոչ միայն չեն դադարում, այլև գնալով ավելի ու ավելի են բորբոքվում: 1758 թ. դարձյալ Հովհ. Սեբաստացու վրկայությունից տեղեկանում ենք, որ «...յայտնեցան բազում անդուռն լեվենտք, աւելի քան գերկու հազարս ի կողմանս վիճակիս Սեբաստիոյ, որք սփռեալք ի գիւղօրայս խոշտանգանօք կեղեքէին զխճալիսն և անողորմաբար տանջելով՝ պահանջէին ի նոցանէ զինչս ևս ի չկա-

117 Հովհաննես Սեբաստացի, Պատմութիւն Սեբաստիոյ, աշխատասիրությամբ Բ. Լ. Չուգասոյանի, Երևան, 1974, էջ 88:
118 M. Otter, I, էջ 316:

116 Նույն տեղում, էջ 100—101:
222

Պարսկաստանը փոխեց իր դիմագիծը և սկսեց անդամահատվել: Քաղաքավորության ներսում խաները հռչակեցին իրենց նահանգների անկախությունը, Վրաստանի իշխաններ Քեյմուրազն ու Հերակլը զավթեցին Երևանի ու Նախիջևանի նահանգները և շարժվեցին մինչև Քավրիզ ու իրենց կողմը գրավեցին աֆղաններին ...սրանք, որոնց մասին ես խոսելու եմ, նազիր շահի թիկնապահ զորքերի մնացորդներից են, որոնք այս իշխանի մահից հետո չհանդգնելով այլևս վերադառնալ իրենց հայրենիքը, անցնելով այն երկրամասերը, որտեղ իրենց վատ կարող էին ընդունել, ստիպված եղան Երևանի ու Նախիջևանի նահանգներում ապրելու՝ ավազակաբարո փնտրելով հաստատվել որևէ տեղ»¹²⁸:

Շուտով Իրանում գլուխ են բարձրացնում բախտիարները: «Այս խռովարարները իրենց առաջնորդ նշանակեցին ուրբանամյա Ալի Մերդան խան կոչված մի ծերունի զորավարի, որը հանդես եկավ իբր սեֆյան ծաղում ունեցող և գահի վրա ամենաօրինակա՛ն իրավունք ունեցող ոմն Իսմայիլ իշխանի օգտին»¹²⁹: Այս հանգամանքն ավելի է բորբոքում ներքին գահակալական կռիվներն Իրանում:

Բուն Արևելյան Հայաստանում աֆղաններն ապստամբում են Թեյմուրազի դեմ ու նորից շարունակում իրենց ավազակային ելույթները: «Նրանք շուտով ձանձրացան Վրաստանի իշխանին ենթարկվելու և հնազանդվելու մասին տված խոստումից, վտարեցին Քեյմուրազի կողմից նշանակված զորավարին և իրենց համար առաջնորդ ընտրեցին Կասում խանին: Նրանց սանձարձակությունը չափ ու սահման չկար և նրանք նորից սկսեցին ասպատակել երկիրը»¹³⁰:

Իսկ Իրանում բախտիարները «... ոչ մի խոչընդոտի չհանդիպելով շարունակեցին իրենց արշավանքը մինչև Սպահան: Ալի Մերդան խանը զավթեց մայրաքաղաքը և գահին բազմեցրեց իր հովանավորյալ Իսմայիլին: Իր դիրքերն ամրապնդելու համար զրամի անհրաժեշտությունը շուտով նոր արքային ստիպեց Սպահանի բնակչության նկատմամբ կիրառել ամեն տեսակի բռնություններ: Նա դանձեց արտակարգ հարկեր, նրանց հարստությունները հափշտակելու նպատակով սպանել տվեց բազմաթիվ մեծահարուստ վաճառականների, որոնց թվում նշանավոր հայ միլիոնատեր Շահրիմանյան եղբայրներից մեկին: Այս ընտանիքը դեռևս նազիր շահի ժամանակ իր վրա կրել էր ամեն տեսակի հալածանքներ»¹³¹: Այս նույն դեպքերի մասին Մ. Չամչյանի

մոտ կարգում ենք հետևյալը. «Եւ արձակեաց ըստ ամենայն տեղիս տէրութեան իւրոյ մանաւանդ ի Հայաստան (խոսքը նորընծա թագավորի մասին է—Մ. Չ.) այս խստաբարոյս, ժողովել հարկս վասն ծախսուց պատերազմի. եւ մինչդեռ հանդերձեալ էին հարկահանէ ելանել ի Գարիժայ, աղդ արար նոցա Հեյտար, որ յանհնարինս թշնամացեալ էր ընդ հայս, և ասէ, զի՞ է՞ զի երթայք ժողովել տուրս ի քաղաքաց Հայաստանա. ոչ ահա երևելի իշխանք հայոց ի քաղաքի աստ են, զորս կալայք և տարայք ընդ ձեզ, և ի ձեռն սոցա մարթասջիք գտանել և առնուլ՝ զոր խնդրէքդ»¹³²:

Արևելյան Հայաստանի տարածքում աֆղանների բարձրացրած ապստամբության լուրն առնելով «1751 թ. սկզբներին Թեյմուրազ և Հերակլ իշխանները իրենց բանակը շարժեցին նրանց դեմ՝ փորձելով նորից ենթարկել իրենց: Հայերը միացան վրաց զորազինորին: Այս բանակը կազմող բոլոր զինվորներն իրենց հագուստի ու դրոշակների վրա կրում էին խաչի նշանը: Այս յուրահատուկ խաչակիրները շարժվեցին աֆղանների վրա և նրանց հանդիպելով Օղուար (հավանաբար Օրդուբադ—Մ. Չ.) քաղաքի մոտ՝ պարտություն մատնեցին և նրանց մի զգալի մասին սրի անցկացրեցին»¹³³:

Վրաց-հայկական բանակի համատեղ այս ռազմական գործողության հետևանքով «թուրքերը գնալով ավելի ու ավելի սկսեցին անհանգստանալ ու կասկածել, որ խաչակիրները գործակցում են մոսկովցիների հետ ... Բարձրագույն դուռը ենթադրում էր, որ մոսկովցիներն ուզում են օգտվել Պարսկաստանի խառնակ վիճակից և իրենց ազդեցությունը տարածել այս թագավորության վրա»¹³⁴: Սակայն թուրքերը չեն հանդգնում գործը հասցնել ուսուների հետ ռազմական ընդհարումների:

Աֆղանների դեմ տարած հաղթանակից հետո Հերակլը «շարժվեց մինչև Քավրիզ ու գրավեց այն: Նա այս առաջին հաջողություններով չբավարարվեց: Նա շարժվեց լեզգիների, Գյանջեի ու Ուրմիայի խաների դեմ, որոնք աֆղաններին ցույց էին տվել օգնություն և հովանավորություն: Նա նրանց դեմ տարավ կատարյալ հաղթանակ ...

Հերակլը շավարտեց իր ռազմական արշավանքն այնպիսի հաջողությամբ, ինչպես որ սկսել էր: Աֆղանները դաշինք կնքելով լեզգիների հետ՝ հարձակվեցին Նախիջևանի նահանգի վրա: Ոչինչ չի կարող հավասարվել այն գազանություններին, որ նրանք այստեղ արեցին:

128 Նույն տեղում, էջ 120:

129 Նույն տեղում, էջ 121:

130 Նույն տեղում, էջ 122:

131 Նույն տեղում:

132 Մ. Չամչյան, հ. 9, էջ 842:

133 M. Peyssonnel, էջ 124:

134 Նույն տեղում, էջ 125—126:

Այս երկրամասի բնակիչներն այս առթիվ կրեցին այն բոլոր սարսափները, որ ընդունակ է կատարելու պատերազմի մտրակը: Այս անսանձ զնդերը սկսեցին պահանջել շորս հազար թուման կամ մեր փողով ութսուն հազար էքյու ուղմատուզանք և վեց հազար բեռ հացահատիկ: Նախորդ պատերազմներից ուժասպառ եղած բնակչությունն անկարող լինելով բավարարել այդքան մեծ պահանջը, դարձավ այս բռնակալների ընչաքաղցության ու բարբարոսությունների զոհ: Հայրերը ստիպված եղան իրենց հալածողների ազահույթները բավարարելու համար իրենց զավակներին վաճառելու՝ համարյա ձրի: Իրենց անասնական կրքերին հագուրդ տալուց հետո, այս կատաղիները կանանց ստինքները և մարմնի բոլոր մասերը այրվող շամփուրով դաղում էին ու ստիպում խոստովանել, թե որևէ մի անկյունում գրամ շեն թաքցրել և երբ այլևս ոչ մի խոսք չէին կարողանում պոկել, ավարտում էին իրենց ոճիրը՝ նրանց խեղդելով: Նրանք կրակի սվեցին բոլոր գյուղերը, իրենց գազանությունը հասցրին մինչև բերքի ոչնչացումն ու ամբողջ շրջակայքի թալանն ու կողոպուտը»¹³⁵:

Առանձնապես, ըստ ֆրանսիացի հեղինակի, տուժում է նախիջևնի հայ կաթողիկ համայնքը: «Այս նահանգում գտնվող բազմաթիվ կաթողիկական գյուղերն ամբողջովին ամայնեցվեցին», — գրում է նա: «Տներն այրվեցին, վանքերը կողոպտվեցին: Զահուկի դոմինիկյանների և նահանգի (հայ համայնքի) հոգևոր առաջնորդ հայր Հովսեփ Վարտիկն իր եկեղեցու ու հոգետան բոլոր բյուրեղամանները, զարդարանքներն ու արծաթեղենը տալուց հետո ձերբակալվեց աֆղանների կողմից և երկար ժամանակ նետվեց բանտի նեղ խցիկը. կրակի սպառնալիքով նրան շարշարեցին՝ հույսով, որ ևս որոշ բան կարելի է կողոպտել: Սարսափելի տանջանքների ազդեցության տակ, նա ստիպված եղավ խոստանալ, թե կգրի (Հոռոմ), որ իրեն փրկագին ուղարկեն: Զգիտեմ թե ինչ տեղի ունեցավ այժմ այդ հոգևորականի հետ»¹³⁶:

«Աֆղանները, — այնուհետև կարգում ենք նույն հեղինակի մոտ, — իրենց ասպատակությունը տարածեցին մինչև Ագուլիս: Վրացիները նրանց համառ դիմադրություն ցույց տվին, բայց չկարողացան խանգարել նրանց մուտքը քաղաք, որը հրի ու սրի մատնեցին: Այնտեղ երկու հազար (հայ) բրիստոնյաներ կոտորվեցին և հազար հինգ հարյուր հոգի գերեզմարվեցին: Մինչև Երևան ընկած ճանապարհը նրանք ամայացրին: Այդ նույն ժամանակ նրանց դաշնակից լեզգիները Շիրվանի շրջակայքում պարտություն էին մատնում վրացիներին: Հերակլն այս

անգութ մրրիկի առաջ ստիպված եղավ նահանջել դեպի իր մայրաքաղաքը»¹³⁷: Այս դեպքերը տեղի ունեցավ 1751 թ. վերջերին: Հերակլի նպատակն էր համարել իր նոսրացած բանակը և հակահարձակման անցնել թշնամու դեմ:

Վրացական զորքի նահանջից հետո «...աֆղաններն օրըստօրե դառնում էին ավելի ու ավելի անտանելի: Դրանց զորավար Ազատը զավթել էր Ուրումի ամրոցը ...1752 թ. հունվարին նա տեղ դարձավ Թավրիզին: Հավաստում են, որ նախորդ Արսլան խանի օրինակով նա իրեն հորջորջեց Ադրբեջանի թագավոր: Իրենց տիրապետության տակ ընկած բոլոր երկրամասերում այս ավազակները կատարում էին բռնություններ: Ինչպես ամենուր, այնպես էլ Թավրիզում (բնակչության համար) դարձան զզվելի»: Նրանց տիրապետությունը տապալելու նպատակով «...Ղարաբաղի, Գյանջեյի և Շամախու խաները դաշինք կնքեցին Թեյմուրազի հետ»¹³⁸, որի նպատակն էր «շարժվել դեպի Թավրիզ, ամբողջովին ոչնչացնել աֆղաններին և այնտեղից ուղղություն վերցնել դեպի մայրաքաղաք ու վերջ տալ կայսրությանը խորտակող դժբախտություններին»¹³⁹:

«Այս դաշինքը, — այնուհետև գրում է դե Պեյսոնելը, — անկասկած կունենար խոստացված հաջողությունը, եթե մասնակից խաները վարվեին նույնպիսի եռանդով ու նվիրվածությամբ, ինչպես դա անում էր Թեյմուրազը», սակայն «խաները հեռու լինելով իրենց իսկ կազմած ծրագիրը կյանքում իրականացնելուց՝ դավաճանեցին Թեյմուրազին և նույնիսկ սկսեցին խոչընդոտել նրա գործունեությունը»¹⁴⁰:

Իմանալով խաների դավաճանության մասին, Թեյմուրազը «չի հրաժարվում իր ծրագրից» և որոշում է մինչ Թավրիզ արշավելը գրավել Գանձակը¹⁴¹: Վրաց իշխանագույնը բանակում է Գանձակի մոտակայքում. «Սակայն, բանի որ Հերակլը դանդաղկոտություն էր ցուցաբերել, աֆղանների դաշնակիցներ լեզգիների զորավարին հնարավորություն էր տվել տաներկու հազարանոց բանակով նույնպես մոտենալ այս վայրին: Հավանաբար նա այստեղ էր հրավիրվել Գյանջեյի խանի կողմից, որը դաշնակցության գլխավոր հեղինակներից մեկը լինելով հանդերձ, դավաճանել էր Թեյմուրազին»¹⁴²:

137 Նույն տեղում, էջ 131:

138 Նույն տեղում, էջ 134:

139 Նույն տեղում, էջ 135:

140 Նույն տեղում, էջ 136:

141 Նույն տեղում, էջ 137:

142 Նույն տեղում, էջ 138:

135 Նույն տեղում, էջ 128:

136 Նույն տեղում, էջ 129:

Գանձակի մոտ թշնամի կողմերը հանդիպում են միմյանց: Ճակատամարտն ավարտվում է վրաց զորքի պարտության: Տալով երեքից չորս հազար մարդու կորուստ, Հերակլը շտապ նահանջում է դեպի Քրիլխս: «Լեզգիներն այլևս չհանդիպելով որևէ խոչընդոտի, մտնում են Գյանջև և իրենց բարբարոսության մասին ու գերազանցում են իրենց դաշնակից աֆղաններին: Այս քաղաքի քրիստոնյաները (իմա՝ հայերը—Մ. Զ.) իրենց վրա կրեցին այն նույն գազանությունները, ինչ աֆղանները նախորդ տարի կատարել էին նախիջևանի նահանգում: Այս տարբարխտների կոտորածը զարհուրելի էր, մեծ թվով մարդիկ ստրկության մատնվեցին»¹⁴³:

«Հերակլի նահանջը ժամանակ ու ազատություն տվեց լեզգիներին՝ շարունակելու իրենց ասպատակությունները և նույնիսկ մուսք գործելու վրաստան: Նրանք ոչ մի խոչընդոտի չհանդիպեցին: Նրանցից ոմանք անցան հերկով մեկ, ամայացրին իրենց ճանապարհին գտնվող գյուղերը և հասան մինչև Ախալցխա ու (Յուրք) փաշայից պահանջեցին իրենց ստրուկներին վաճառել Մեծ Տիրակալի տիրույթներում: Փաշան շուղեց համաձայնվել և պատասխանեց, որ Բարձրագույն դուռը հատուկ հրահանգով արգելել է այն: Նրանք մեկնեցին այս մերժումից խիստ վիրավորված և վերադարձին ավարի ու ավերի ենթարկեցին Յուրքական տիրապետության տակ գտնվող ավաններն ու գյուղերը և որոշեցին ստրուկներին տանել Դաղստան՝ իրենց հայրենիքը»¹⁴⁴:

Այս անգամ ևս Հերակլը կարողանում է համարել իր բանակը և 1752 թ. օգոստոսին անցնել թշնամու դեմ հարձակման: Վճռական ռազմական գործողությունները տեղի են ունենում Բորչալուի շրջակայքում¹⁴⁵: Չնայած թշնամու թվական բացահայտ գերակշռությանը, ճակատամարտը, որին անձամբ մասնակցում էր Հերակլը, ավարտվեց վրացական բանակի փայլուն հաղթանակով¹⁴⁶:

Լեզգիների դեմ տարած այս հաղթանակը վճարող ազգեցություն ունեցավ նաև վրաց-աֆղանական հարաբերությունների վրա: «Լեզգիների պարտությունը այն աստիճան թուլացրեց առանց այն էլ մի մեծ խումբ դաշնակից ավազակների հեռանալուց հետո նվազած աֆղաններին, որ նրանք նպատակահարմար գտան հաշտություն խնդրել Հերակլից: Նրանց առաջնորդ Ազատը որոշեց ենթարկվել և ընդունել այս իշխանի համար բոլոր ցանկալի պայմանները: Հերակլը հավանու-

թյամբ ունկնդրեց առաջարկները և նրան խաղաղություն շնորհեց այն պայմանով, որ աֆղանները այսուհետև այլևս չեն անցնելու Արաքսը, ոչ էլ ասպատակելու են Երևանի նահանգը»¹⁴⁷:

Շուտով Երևանի խանը ևս ճանաչեց Հերակլի սուվերեն իրավունքներն իր նկատմամբ, պարտավորվելով վրաց թագավորին վճարել տարեկան եկամտի 1/5-րդ մասը կազմող մի հարկ*: Երբ Երևանի խանը հրաժարվում էր վճարել (օրինակ 1765, 1769 և 1779 թթ.) Հերակլն արշավում էր դեպի Երևան: Փաստորեն, երբ վրաց հաղթական զորքերը գրավում էին Երևանի խանության տարածքը, Հերակլը բոլոր գեպքերում խուսափում էր այդ երկրամասը պահել իր գերիշխանության ներքո, բավարարվելով միայն հարկերով: Նույն ձևով նա վարվում էր նաև Գանձակի խանի նկատմամբ:

Վրաց թագավորության ուժեղացումը շափազանց ձեռնառու էր հայ ժողովրդական զանգվածներին, որոնք, հանձինս Հերակլի ու նրան հոժով ավորող հզոր Ռուսաստանի տեսնում էին իրենց բնական փրկարարներին: Առավել ևս, որ Հերակլի թագավորությունը, ըստ էության, վրաց-հայկական պետություն էր: Եվրոպայի համարյա բոլոր ճանապարհորդները միաբերան վկայում են, որ Քրիլխսին ավելի շուտ հայկական քաղաքի տպավորություն էր թողնում:

* * *

1768 թ. պատերազմ ծագեց Քուրքիայի և Ռուսաստանի միջև, որը նոր հույսեր առաջացրեց թուրքերի կողմից ստրկացված քրիստոնյա ժողովուրդների, այդ թվում և հայերի մոտ: Պատերազմի ծագման գրեթե խավոր պատճառներից մեկն այն էր, որ Ռուսաստանը համառոտն ձգտում էր Սև ծովում ազատ նավարկության իրավունք ստանալ, որին ընդդիմանում էին թուրքերն ու նրանց թիկունքում կանգնած եվրոպական պետությունները: Թուրքերի հետ Ռուսաստանի հարաբերությունների սրման հարցում ոչ պակաս դեր էր կատարում ռուսների կողմից թրքահայտակ քրիստոնյա ժողովուրդների հովանավորումը: 1765—1766 թթ. վրաստանում բռնկված ապստամբությունների ժամանակ վրացիներն անվերջ դիմում էին Ռուսաստանի օգնությանը: Վրաստա-

¹⁴⁷ Նույն տեղում, էջ 149—150:

* Գանձակի խանի հարկի հետ միասին, անգլիական աղբյուրների համաձայն, այդ հարկը տարեկան կազմում էր 7000 ֆունտ ստերլինգ (տե՛ս «Memoir of a map of the countries comprehended between the Black sea and Caspian. With an account of the Caucasian Nations and vocabularies of their languages», London, 1788, p. 50):

¹⁴³ Նույն տեղում, էջ 139:

¹⁴⁴ Նույն տեղում, էջ 143—144:

¹⁴⁵ Նույն տեղում:

¹⁴⁶ Նույն տեղում, էջ 145—147:

նում բռնկված ապստամբությունները, գրում է Յոզ. Համմերը, «...հանդիսացան Բարձրագույն դուան ու Ռուսաստանի միջև պատերազմի ծագման գլխավոր պատճառներից մեկը»¹⁴⁸:

Թուրքերի դեմ ապստամբությունները հիմնականում ծավալվել էին Իմերեթիայում՝ աշուրբաշիների երկրում: Ապստամբության գլխավոր պատճառը թուրքերի կողմից Իմերեթիայից գանձվող տարեկան հարկի շափի խիստ ավելացումն էր: Մայրաքաղաքից ստացած հրահանգների համաձայն Ախալցխայի փաշաներն ասպատակում էին վրաց հողը՝ արյուն ու ավեր սփռելով շրջապատում¹⁴⁹: 1768 թ. Իմերեթիայի թագավոր Սոլոմոնը հատուկ պատվիրակություն ուղարկեց Եկատերինա 2-րդի մոտ՝ կայսրուհուց խնդրելով «իրենց ազատել այլադավան օսմանցիներից և տարածել Ձեր ամենազոր ձեռքը մեր երկրի ու մեր ժողովրդի վրա: Դեռևս 1762 թ. նույնպիսի խնդրով Եկատերինա 2-րդին դիմել էին շեռնոգորցիները: Հուլյաները իրենց հերթին կայսրուհուն հավաստիացնում էին, որ պատերազմի դեպքում սուլթանի դեմ 50 հազարանոց բանակ կհանեն:

Ստեղծված իրավիճակից ձգտում էին օգտվել նաև հայերը: Ռուս-թուրքական պատերազմը և Կովկասում ռազմաճակատ բացելու հեռանկարը ոգեշնչում էին Ռուսաստանում ապրող հայրենասեր հայերին, որոնք վաղուց ի վեր երազում էին ռուսական զենքի օգնությամբ իրենց հայրենիքը փրկված տեսնել: 1768 թ. պատերազմի ընթացքում նրանք ռուսական արտաքին գործերի կոլեգիային ներկայացրին մի ծրագիր, որով նախատեսվում էր հայկական մարզերի ազատագրումը և Ռուսաստանի հովանավորության ներքո հայկական պետության ստեղծումը¹⁵⁰:

Չնայած եվրոպական պետությունների գործադրած բոլոր մեքենայություններին, այդ պատերազմում Ռուսաստանը հաղթող դուրս եկավ: Պատերազմի ժամանակ ոչ միայն Ռուսաստանի ավանդական հակառակորդներ Անգլիան և Ֆրանսիան, այլև Ավստրիան հանդես եկան թուրքերի թիկունքում: Վերջինս նույնիսկ 1771 թ. Կ. Պոլսում թուրքերի հետ կնքեց գաղտնի համաձայնագիր, համաձայն որի ավստրիացիները պարտավորվում էին անել ամեն ինչ՝ Ռուսաստանի տարածքային նվաճումները ի չիք դարձնելու համար: Դրա փոխարեն Թուրքիան, բացի զրամական մեծ գումարից, Ավստրիային էր հանձնելու

Հալախիայի և Տրանսիլվանիայի մի մասը¹⁵¹: Սակայն այդ բոլորը չույնեցան և ոչ մի արդյունք: Ռուսական սվինը և պատերազմի ընթացքում բալկանյան քրիստոնյա ժողովուրդների բարձրացրած ապստամբությունները Թուրքիային ստիպեցին Ռուսաստանից հաշտություն խնդրել:

Որ Բալկանյան ժողովուրդների համակրանքը պատերազմի ընթացքում ռուսների կողմն էր, վկայում է XVIII դարի թուրք պատմագիր Վասըֆը: Մոլդավիայի իշխան Լիգորն անցել էր թշնամու կողմը և ձերբակալվել ու գլխատվել էր: «Մոլդավիայի հույն բոյարներն ամբողջությամբ նվիրված էին Ռուսաստանին», «Մեծ վեզիրը հրամաններ էր արձակում Մոլդավիայի նոր իշխանին՝ խստագույնս պատժել այն հպատակներին, որոնք համակրում են ռուսներին»: 1770 թ. ձմռանը Մոլդավիայում և Վալախիայում «հազիվ սկսել էին մարտերը, երբ տեղում գտնվող (քրիստոնյա) հպատակներն ապստամբեցին թուրքերի դեմ ու սպանեցին խաղնեղարին (ֆինանսական կառավարիչին) և մուսուլման այլ պետական գործիչների», «Գալացի իշխանը ռուսների առաջ բաց էր արել Վալախիայի դռները»¹⁵² և այլն: Վասըֆի տարեգրությունը լի է այսպիսի վկայություններով:

Հետաքրքիր է նշել, որ այդ նույն պատմագիրը ռուսներից թուրքերի պարտությունը բացատրում է աստուծո զայրույթով, քանի որ նրանք պատերազմի ընթացքում ամենուր գործադրել էին բռնություններ, սպանություններ և զբաղվել թալանով ու կողոպուտով: «Դա մի պատիժ էր,— գրում է նա,— որ նախախնամությունը վերապահել էր իսլամական զորքերին այն խժոժությունների ու ավազակությունների համար, որ նրանք կատարել էին իրենց անցած բոլոր նահանգներում»¹⁵³: Մի այլ տեղ նույն պատմագրի մոտ կարդում ենք. «Այն ավազակությունները, որ նրանք (թուրքերը—Մ. Զ.) կատարել էին ամենուր՝ ամեն տեսակի խրժոժություններ ու այլ հանցագործություններ, իր վրա էր սևեռել բարձրալն Աստուծո զայրույթը, որն ուղեց նրանց գլխին պայթեցնել իր պատիժն ու ընտրեց անհավատներին, որպես գործիք»¹⁵⁴:

¹⁵¹ Dmitri Boukharov. La Russie et la Turquie depuis le commencement de leurs relations politiques jusqu'à nos jours, Amsterdam, 1877, էջ 18:

¹⁵² Précis historique de la guerre des Turcs contre les Russes par Vassif-effendi*. Traduit par P. A. Caussin de Perceval, Paris, 1820, էջ 28—29, 31—35, 66—68 և այլն:

¹⁵³ Նույն տեղում, էջ 59:

¹⁵⁴ Նույն տեղում, էջ 109:

¹⁴⁸ J. Hammer, XVI, էջ 108:

¹⁴⁹ Նույն տեղում, էջ 108—112:

¹⁵⁰ А. Р. Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия; Ереван, 1947, էջ 266:

Թուրքերի դեմ անվերջ ապստամբությունների մեջ էր Վրաստանը, որի նկարագրությունն այդքան ընդարձակ էջեր է նվիրել նույն ինքը՝ Վասրֆը:

1774 թ. հուլիսի 21-ին՝ 1711 թ. Պրուսիան հաշտության պայմանագրի ստորագրման 63-րդ տարեդարձի օրը (այդ քայլով ռուսական դիվանագիտությունն ուզում էր վրեժ լուծել թուրքերից Պետրոս 1-ինի կրած պարտության համար), ստորագրվեց Քյուլյուկ Կայնարջիի պայմանագիրը, բաղկացած 28 հոդվածներից: Համաձայն այդ պայմանագրի, Թուրքիան պարտավորվում էր չորսուկես միլիոն ռուբլի ռազմատուգանք վճարել Ռուսաստանին: Վերջապես՝ Ռուսաստանը իրավունք էր ձեռք բերում իր առևտրական նավերի համար ազատ երթևեկություն ունենալ Թուրքիայի առափնյա ջրերում և անցնել նեղուցներով: Պայմանագիրը Ռուսաստանի հպատակներին տալիս էր այն նույն կապիտուլյացիոն իրավունքները, ինչպիսիք ունեին Անգլիայի և Ֆրանսիայի հպատակները: Պայմանագրի ամենակարևոր կետերից մեկն այն էր, որ Ռուսաստանն իրավունք էր ձեռք բերում հյուպատոսություններ բացել Օսմանյան կայսրության ցանկացած քաղաքում (սրա հիման վրա առաջին անգամ լինելով Արևմտյան Հայաստանի մի քանի կենտրոններում բացվեցին ռուսական հյուպատոսարաններ): 7-րդ և 16-րդ հոդվածներով Թուրքիան պարտավորվում էր ներում շնորհել բոլոր քրիստոնյա հպատակներին, որոնք պատերազմի ժամանակ կամ համագործակցել և կամ համակրել էին ռուսներին: Ռուսաստանի և Թուրքիայի միջև նախկինում կնքված բոլոր դիվանագիտական պայմանագրերը, բացառությամբ 1700 թ. կնքվածի, շեղյալ էին համարվում: Հետ այսու, Քյուլյուկ Կայնարջիի պայմանագիրը հիմք էր ծառայելու երկու պետությունների ապագա ամեն տեսակի հարաբերությունների համար և այլն¹⁵⁵:

Յուզեֆ Համմերը հետևյալ գնահատականն է տալիս Քյուլյուկ Կայնարջիի պայմանագրին: «Եթե Կարլովիցի պայմանագիրը վերջ էր տվել բացառապես նվաճողներ հանդիսացող թուրքերի ասպատակություններին, — ապա Կայնարջիի պայմանագիրը հռչակելով (Ղրիմի) թաթարների անկախությունը ու սահմանային ամրոցներ հանդիսացող Օչակովի և Կիլբուրունի, Կերչի և Ենիկալեյի հանձնումը Ռուսաստանին, Օսմանյան կայսրությանը թողեց այս հղոր պետության ողորմածությունը: Այս հաշտությունը, կրկնում ենք, պատճառ հանդիսացավ Թուրքիայի

զլխին պայթած բազմաթիվ աղետների ու սկիզբն այս կայսրության ապագա կործանման, համենայն դեպս եվրոպայում»¹⁵⁶:

Հիրավի, Քյուլյուկ Կայնարջիի հաշտության պայմանագիրը շրջադարձային կետ հանդիսացավ ռուս-թուրքական հարաբերությունների մեջ: 1768—1774 թթ. ռուս-թուրքական պատերազմը ցույց տվեց, որ Ռուսաստանն ընդունակ է միայնակ Թուրքիային հասցնել մահացու հարվածներ, և որ Ռուսաստանը միակ երկիրն է, որի վրա իրենց երկրի ազատագրման խնդրում կարող են հույս դնել Թուրքիայի կողմից ստրկացված քրիստոնյա ժողովուրդները, որոնց թվում հայերը: Այս տեսակետից ուշագրավ է այն զեկուցագիրը, որ Կ. Պոլսի ավստրիական դեսպանն ուղարկել էր իր կառավարությանը. «Ամենաուշագրավն այս պարագաներում այն է, որ Արևելքի կայսրության անձեռնմխելիությունն այլևս կախված չի լինելու մյուս պետությունների բարի ցանկությունից, այլ միայն և միայն Ռուսաստանի կամքից»¹⁵⁷:

Պատերազմի տարիներին արևմտահայ գավառներն առավել, քան առաջ էր, տուժում են լեվենդ ավազակախմբերի ասպատակություններից, Հարավային Հայաստանում քրդերի մեջ հաճախակի ծագած միջավատական ընդհարումներից, քուրդ ավատատերերի հակակառավարական ելույթներից: «ՈՄԻ (1771) ոչ եղև խաղաղութիւն յամենայն տեղիս, — կարդում ենք Հակոբ Տիվրիկեցու մոտ, — վասն պատերազմի թագաւորաց, զի հրաման թաղաւորին սաստիկ էր ոլորտս տիեզերաց: Եւ բազում զօրք կայր ի վերայ երկրի և լէվէնտ թշնամի հակառակ մեր քաղաքին և զալիթն ժողովեալ զամենայն գունդս գնացին պատերազմեցան ի դուրս քաղաքէն, բերեալ սակաւ զլուխ և մարդ, զմարդսն կախեալ, և այլազգիքն որ ոչ երթային սեֆեր (իմա՝ պատերազմ—Մ. Ձ.), վասն լեվենտնուն համար և թշնամիքն օր ըստ օրէ շատանային»¹⁵⁸: Այսպիսի իրավիճակ գոյություն ունեւ որ միայն Գեվրիկի շրջակայքում, այլև արևմտահայ բոլոր գավառներում:

Սուլթան Աբդուլ Համիդ 1-ինի ժամանակ Արևմտյան Հայաստանի հարավային քրդաբնակ դարձած շրջաններում բռնկվեց մի մեծ ապստամբություն, որը ղեկավարում էր իրեն «Մահդի» (Մեսիա, առաքյալ—Մ. Ձ.) հորջորջած նախկինում իտալացի կաթոլիկ մի կրոնավոր: Նա իր առաջ նպատակ էր դրել զավթել ամբողջ Փոքր Ասիան¹⁵⁹: 1785 թ. նա քրդական զորքերի գլուխ անցած գրավում է Արևմտյան Հայաստա-

¹⁵⁶ J. Hammer, XVI, էջ 399—400:

¹⁵⁷ Dmitri Boukharov, էջ 37:

¹⁵⁸ «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 450:

¹⁵⁹ Jonquière, Histoire de l'empire ottoman, t. 1, Paris, 1914, էջ 317—318:

¹⁵⁵ Այս մասին տե՛ս A. Shoroff. Les réformes et la protection des Chrétiens en Turquie (1673—1904), Paris, 1904, էջ 3—11:

բազուկներին, հետևաբար անհնարին է, որ նա կործանվի, եթե նույնիսկ նվթրապալի բոլոր արքաներն ու արքայիկները (այսպիսի արհամարհանքով են նրանք անվանում թրիստոնյա պետություններին) միացյալ ուժերով ու միահամուռ հանդես գային իրենց դեմ»¹⁶⁷:

Նրանք համոզված էին նաև, որ օսմանյան պետությունը երբեք չի կործանվի, «քանզի, ինչպես արևին ժամանակավորապես ամպերը կարող են մթազնել և որ այդ ամպերի ցրվելուց հետո արևը կլինի ավելի վառ, քան երբեք»¹⁶⁸, այնպես էլ Օսմանյան կայսրությունը շուտով վրեժ է լուծելու Ռուսաստանից:

Չնայած անգլիացի հեղինակը Ռուսաստանի նկատմամբ տածում է անբարյացակամություն, այսուհանդերձ, ստիպված է ընդունել, որ «Օսմանյան կայսրությունն իր գոյության համար պարտական է մի քանի թրիստոնյա պետությունների»¹⁶⁹, և նախ և առաջ, անշուշտ, Անգլիային ու Ֆրանսիային: Եվ այդ էր պատճառը, որ Քուրբիան պատերազմից հետո չէր ցանկանում իրականացնել Քյուլչուք-Կայնարջի պայմանագրից բխող կետերը, նամանավանդ հաշտվել Ղրիմի կորստի գաղափարի հետ: Միայն միջազգային անբարենպաստ պայմանները (Անգլիան և Ֆրանսիան իրար դեմ պատերազմում էին Հյուսիսային Ամերիկայում, Իրանը պատերազմ էր հայտարարել Քուրբիային՝ Բասրան նրվաձնելու համար և այլն), ստիպեցին Քուրբերին 1779 թ. մարտի 21-ին Ռուսաստանի հետ կնքել այսպես կոչված Այնալը Կավակի կոնվենցիան և հանձն առնելու անհասպաղ կյանքում իրականացնելու Քյուլչուք-Կայնարջի պայմանագրից բխող բոլոր կետերը: Ավելին, 1783 թ. Քուրբական կառավարությունը Կ. Պոլսում ռուսական դեսպան Գ. Բուլզակովի հետ ստորագրեց առևտրական մի համաձայնագիր՝ Ռուսաստանին տրամադրելով նորանոր առևտրական արտոնություններ¹⁷⁰:

1783 թ. հուլիսի 24-ին Հյուսիսային Կովկասի Գեորգիևսկ ամրոցում Ռուսաստանի և Վրաստանի միջև կնքվեց համաձայնագիր գաղափարի ու հովանավորության մասին: «Գեորգիևսկյան տրակտատը, — գրում է Գ. Ա. Գալուանը, — հանդիսացավ կարևոր իրադարձություն ոչ միայն վրաց, այլև Անդրկովկասի մյուս ժողովուրդների կյանքում: Այդ իմաստուն արարքով Հերակլ 1-ինը սկզբնավորեց Ռուսաստանի հովանավորության ամուր հիմքը և զբանով իսկ ապահովեց Վրաստանի անվտանգությունը Քուրբիայից և Պարսկաստանից»¹⁷¹:

Պատմական այս ակտը մեծ ոգևորություն առաջացրեց հայ հասարակության բոլոր խավերի մոտ: Մասնավորապես Ղարաբաղի հայ մելիքները եռանդուն բանակցությունների մեջ մտան ռուսական արքունիքի ներկայացուցիչների հետ՝ ռուսական բանակի դեպի Ղարաբաղ և Երևան ծրագրվող արշավանքի ժամանակ համատեղ գործողություններ ծավալելու մասին¹⁷²:

Երևանի խանության հայությունը 1779—1782 թվականների ընթացքում ծանր, մղձավանջային օրեր էր ապրել 1779 թ. սեպտեմբերին Երևանի Հյուսեյն — Ալի խանի կողմից տարեկան հարկը չվճարելու պատճառով Հերակլը արշավանք էր կազմակերպել դեպի Երևան: Վրացական զորքերի հետ քաշվելուց հետո Երևանի խանը հայ բնակչության անխտիր բոլոր ներկայացուցիչների նկատմամբ վարել էր դաժան հալածական քաղաքականություն: Հետևաբար, ռուսական բանակի ծրագրվող արշավանքի մասին լուրը Երևանի հայության կողմից ընդունվեց մեծ ցնծությամբ: Այդ մասին գեներալ Գ. Ա. Պոտյոմկինը Եկատերինա 2-րդին հղած զեկուցագրում հայտնում է հետևյալը. «Երեկոնքինա 2-րդին հղած զեկուցագրում հայտնում է հետևյալը. «Երեկոնքինա 2-րդին հղած զեկուցագրում հայտնում է, որ հայերը սպասում են ռուսական զորքերին և որ նրանք պատրաստ են միանալու նրանց: Հայոց կաթողիկոսը (Ղուկասը) և երևելի մելիքներն իրենց նամակում ռուսական զորքերին խոստանում են ամեն տեսակի պարենամթերք»¹⁷³:

1784 թ. գարնանը պարսկական արշավանքի նախապատրաստությունը լայն ծավալ ընդունեց, սակայն հենց այս նույն ժամանակ Իրանում տեղի ունեցան դեպքեր, որը ռուսական արտաքին քաղաքականությանը ստիպեց ջտկումներ մտցնել պարսկական արշավանքի ծրագրերի մեջ:

Ջենդ Բերիմի մահից հետո Իրանում նորից ծայր առած գահակալական կռիվներն ուժեղացրին Ալի Մուրադ խանի դիրքերը, որը գրավելով Սպահանը, տեր դարձավ Իրանի մեծագույն մասին: Իրեն շահ հայտարարելով, Ալի Մուրադ խանը համոզված էր, որ իր քաղաքական դիրքերն Իրանում կարող են ամրապնդվել միայն Ռուսաստանի հետ բարեկամական հարաբերություններ հաստատելով: Այդ բարեկամությունը կարող էր Իրանին պաշտպանել Քուրբիայի ոտնձգություններից, որը Անդրկովկասի ու Ադրբեջանի թյուրքախոս խաներին բացահայտորեն պաշտպանում էր Իրանի դեմ և ձգտում էր անդամահատել երկիրը: Ալի-Մուրադ խանը Ռուսաստանի հետ մտիկանալու նպատա-

167 Նույն տեղում, էջ 5:

168 Նույն տեղում, էջ 9:

169 Նույն տեղում, էջ 10:

170 Նույն տեղում, էջ 37:

171 Դ. Ա. Գալուան, Россия и народы Закавказья, Ереван, 1976, էջ 103.

172 Այդ մասին մանրամասն տե՛ս А. Р. Иоаннисян, Россия и армянско-освободительное движение. էջ 81—117:

173 Նույն տեղում, էջ 130—131:

կով առաջարկում էր Ռուսաստանին հանձնել ոչ միայն Պետրոս 1-ինի ժամանակ գրավված Մերձկասպյան առափնյա շրջանները՝ Գերբենդը, Բաքուն, Գիլանի, Մազանդարանի ու Աստրաբադի նահանգները, այլև Կարադաղի, Ղարաբաղի, Նախիջևանի և Երևանի խանութայինները:

Ռուսական կողմի համար խիստ շահավետ էր առանց ռազմական գործողություններ ծավալելու տիրանալ Անդրկովկասին և Մերձկասպյան նահանգներին: Մյուս կողմից, Իրանը դադարելով թշնամի երկիր լինելուց, դառնալու էր Թուրքիայի դեմ Ռուսաստանի դաշնակիցը: Ուստի, որոշվեց պարսկական արշավանքը հետաձգել մինչև Ալի-Մուրադ խանի հետ բանակցությունների ավարտը:

Բանակցությունների ժամանակ առաջ էր քաշվում հետևյալ ծրագիրը. Իմերեթիան և Արևմտյան Վրաստանի մյուս իշխանությունները պետք է անցնեին ռուսական հովանավորության ներքո: Ախալցխայի մարզը պետք է հանձնվեր Հերակլին, «իսկ թուրքական Հայաստանը պիտի միացվեր իր կորպուսին, այսինքն՝ հայկական պետականությանը, որը պիտի կազմվեր պարսկական նախկին նահանգներից: Հետևաբար, վերջին հաշվով նախատեսված էր ստեղծել ընդարձակ հայկական պետականություն, որը պիտի ընդգրկեր հին հայկական բոլոր հողերը»¹⁷⁴:

Ռուս-իրանական այս բանակցությունների լուրն անհանգստացրեց Անգլիային ու Ֆրանսիային, որոնք սկսեցին դավել լարել Ռուսաստանի դեմ: Քյուլյուբ-Կայնարջի պայմանագիրը, ավատո-ռուսական դաշինքի կնքումը, Ղրիմի միացումը Ռուսաստանին, ռուսական կողմի ծրագրերը Անդրկովկասում մեծ հարված էին հասցնում Ֆրանսիայի փաստական դաշնակից Թուրքիային: Այդ հանգամանքը վտանգի տակ էին դնում Ֆրանսիայի առևտուրը ոչ միայն Թուրքիայում, այլև Իրանում: Անդրկովկասի խանությունների միացումը Ռուսաստանին և Իրանի ռուսական ազդեցության ոլորտի տակ ընկնելը հակասում էին Ֆրանսիայի ոչ միայն առևտրական, այլև քաղաքական շահերին: Ուստի Ֆրանսիան 1784 թ. մարտին կոմս Ֆերրիեր Սովբեֆի գլխավորությամբ Իրան ուղարկեց հատուկ քաղաքական պատվիրակություն, որը հետագայում հրատարակեց իր երկու հատորանոց հուշամատյանը: Դրանում նա կանգ է առնում իր ժամանման նախօրեին Իրանում ստեղծված քաղաքական վիճակի վրա: Նրա ասելով Ալի-Մուրադ խանը բանակցություններ սկսելով Ռուսաստանի հետ, խիստ թշնամաբար էր տրամադրված Թուրքիայի նկատմամբ: «Ես Պարսկաստանում էի գտնվում այն ժամանակ, — գրում է նա, — երբ Եկատերինա 2-րդը բանակցություն-

ներ էր վարում Վրաստանի սահմանակից պարսիկ իշխանությունների ներկայացուցիչների հետ, որոնք ստացան արժեքավոր նվերներ: Ռուսաստանի մի պատվիրակ այս ժամանակ եկավ Սպահան՝ բանակցություններ վարելու իր տիրակալի ծրագրերին համամիտ Ալի-Մուրադ խանի հետ: Զենքի ուժով Պարսկաստանի մեծ մասին տիրացած ու մնացած մասի կողմից հարգված այս իշխանը որոշեց առանց վարանելու անհանգստացնել թուրքերին: Հին պատրվակներով նա սպառնաց Բաղդադին և Շիրազի խանին ու հրամայեց հարձակվել Բասրայի վրա»¹⁷⁵:

Ֆերրիեր-Սովբեֆի առաքելությունն ուղղված էր, ինչպես ասվեց, Ռուսաստանի դեմ: Դա ակնհայտ է դառնում Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Վերտենին ուղարկված զեկուցագրից, որից պարզվում է, որ նա Իրանի ղեկավար շրջաններին ղգուշացրել է «...խուսափել Ռուսաստանի և Գերմանիայի հետ բանակցություններից և հակադրվել նրանց փառասիրական նկրտումներին»¹⁷⁶: Իր զեկուցագրի վերջում Ֆերրիեր-Սովբեֆը խնդրում է արտգործմինիստրությունից իրեն ուղարկել դրամական միջոցներ ու դրանց միջոցով իր կողմը գրավել Ալի-Մուրադ խանին:

Այդ բոլորն ունենում է իր հետևանքը: Եթե հավատալու լինենք ֆրանսիացի հեղինակին, ապա շուտով «Ալի-Մուրադ խանը գտնելով, որ նպատակահարմար չէ դաշնակցել ռուսների հետ ի վնաս թուրքերի, ազատ արձակեց իրեն Մեծ Տիրակալի (սուլթանի) նամակը բերած (թուրք) պատվիրակին: Հարուստ նվերներով նա նրան ճամփու դրեց, մոռացնել տալու համար իր կրած տհաճությունը և նորին Մեծությանն իր նոր ծրագրերի մասին պատասխանեց աներկմտորեն»¹⁷⁷:

Ինչ վերաբերում է Ռուսաստանի հետ Իրանի տիրակալի վարած բանակցություններին, ապա համաձայն ֆրանսիացի հեղինակի, Ալի-Մուրադ խանը «Պետերբուրգ ուղարկեց երկու խաների, որպես պատասխան կայսրուհու նախաձեռնություն, սակայն գաղտնի հրահանգներով նա հրաժարվեց անխոհմաբար (Ռուսաստանին) տված իր խոստումներից ... քիչ մտահոգվելով այն հովանավորությունից, որ վերջերս ձեռք էր բերել Հերակլ իշխանը, նա դիմեց սովորական միջոցների՝ նրանից գանձելու երեք տարվա տուրքը, որ նա չէր վերցրել երեք տարի ի վեր, նրան ուղարկելով խլաթ»¹⁷⁸:

¹⁷⁵ Mémoires historiques, politiques et géographiques des voyages du comte de Ferrières-Sauvebeuf, faits en Turquie, en Perse et en Arabie, depuis 1782, usqu'en 1789, Paris, t. I, p. 202 (Այսուհետև՝ Ferrières-Sauvebeuf).

¹⁷⁶ Նույն տեղում, էջ 133:


¹⁷⁷ Նույն տեղում, էջ 203:

¹⁷⁸ Նույն տեղում, էջ 204:

¹⁷⁴ А. Р. Иоаннисян, էջ 130—131.

Մյուս կողմից, «Գերբենդի կառավարիչ Բաբա-Փաթհ-Ալի խանը Ալի Մուրադ խանից հրաման ստացավ խզել ուսանների հետ ամեն տեսակի կապերը»: Այս բոլորը հիմք են տալիս ասելու, որ ուս-իրանական բանակցություններն ի վերջո ձախողվեցին:

Շուտով Ալի-Մուրադ խանը մահանում է. եվ դա այն ժամանակ, երբ Իրանում գործերը նրա համար վատ ընթացք էին ստացել: Նրա որդու գլխավորած բանակը ծանր պարտություն է կրում Աղա Մուհամմեդ խանից: Նրա մահից հետո իշխանությունն իր ձեռքը վերցրած որդին ևս մի անգամ պարտություն է կրում Աստրաբադի ներքինի կառավարիչ Աղա Մուհամմեդ խանից, որը վաղուց որդեգրել էր հակառուսական բաղադրականություն: Շուտով Վրաստանը զոհ է դառնում այս դաժան բռնակալի արշավանքին: Եվ աչպես, XVIII դարի 80-ական թվականների արևելահայ ղեկավար շրջանների փայփայած երազանքները ևս մի անգամ շեն գտնում իրենց տրամաբանական վախճանը:



Գևորգիեյան դաշնագրի կնքումը և ուսական զորքերի մուտքը Վրաստան Քուրբիան դիտում էր որպես սպառնալիք իր փոքրասիական արևելյան նահանգներին: Ուստի նա արեց ամեն ինչ, որպեսզի Անգլո-կովկասում իսլամի դրոշի ներքո, իրանական խաների գլխավորությամբ ստեղծվի հակառուսական և հակավրացական դաշինք: Այս առումով եռանդուն գործունեություն ծավալեց Չլդրի կառավարիչ Սուլեյման փաշան, որին կառավարության կողմից հրաման տրվեց «լինել աշալուրջ և կրոնամոլությամբ, քաջությամբ ու խիզախությամբ հայտնի Գաղստանի ժողովուրդներին ամեն կերպ սիրաշահել, նրանց առաջնորդներին հանձնել մայրաքաղաքից ուղարկված նվերներն ու կայսերական շնորհագրերը՝ նրանց կոչ անելով ջիհադի (սրբազան պատերազմի)»¹⁷⁹ ընդդեմ Ռուսաստանի:

Այնպիսի Կավակի կոնվենցիայի ստորագրումից հետո սուլթանական պալատում Ռուսաստանի հանգեպ ատելությունը գնալով ավելի ու ավելի էր աճում: Ռազմատենչ հակառուսական հոսանքը գլխավորում էր մեծ վեզիր Կոչա Յուսուֆ փաշան: Անգլիան և Ֆրանսիան ամեն կերպ հովանավորում ու ոգեշնչում էին պատերազմի հրձիգներին: «Ֆրանսիան,— գրում է Ֆերրիեր-Սովբեֆը,— կեվանտում իր առևտրի շահերի և հավասարակշռությունը պահպանելու համար ընդգրկմանում էր Ռուսաստանի հզորացմանը և նկատի ունենալով այն աղետալի հետևանք-

ները (անշուշտ Ֆրանսիայի համար—Մ. Ջ.), որ կարող էր պատճառել թուրքերի տգիտությունը, ուղարկեց (ռազմական) ինժեներներ՝ Սև ծովում պաշտպանական ամրոցներ կառուցելը սովորեցնելու համար»¹⁸⁰: Կ. Պոլիս ուղարկվեցին նաև մաթեմատիկայի ու ֆիզիկայի մասնագետներ¹⁸¹: Սակայն պալատի ռեակցիոն ներկայացուցիչների մի մասը հակադրվում էր դրան, ասելով, որ իրենք ոչինչ չունեն սովորելու գյավուրներից (անհավատներից)¹⁸²:

Քուրբական ղեկավար շրջաններն առանձնապես ծանր ընկալեցին Ղրիմի վերջնական կորուստը: Արդեն 1785 թ., ինչպես գրում է Ֆերրիեր-Սովբեֆը, Քուրբիայի մայրաքաղաքում մթնոլորտն այն աստիճան շիկացած էր, որ օրավուր սպասվում էր պատերազմի ծագումը¹⁸³: Իսկ եթե Քուրբիան մի երկու տարի հետաձգեց ընդհարումը ուսանների հետ, ապա դա կատարվեց այն պատճառով, որ նրա երկու եվրոպական դաշնակից-հովանավորողները, ինչպես ասվեց, գտնվում էին Հյուսիսային Ամերիկայում պատերազմի մեջ: «Երկար ժամանակից ի վեր Բարձրագույն դուռն ամբողջովին վստահում էր Ֆրանսիայի դեսպաններին: Բոլոր պարագաներում և կարևոր որոշումներ ընդունելիս նա Կ. Պոլսում ոչինչ չէր անում առանց նրանց մասնակցության»¹⁸⁴: Սակայն, եթե հավատալու լինենք ֆրանսիացի դիվանագետին, ապա այս անգամ Քուրբիան Ռուսաստանին պատերազմ է հայտարարել առանց նախօրոք իր դիրքը Ֆրանսիայի հետ համաձայնեցնելու¹⁸⁵: Հազիվ թե դա այդպես եղած լիներ:

Այդ պատերազմում Քուրբիան ևս մեկ անգամ պարտություն կրեց: Եվ, անշուշտ, դա նկատի ունի Ֆերրիեր-Սովբեֆը, երբ գրում է, թե «թուրքերին դատապարտում են այն բանի համար, որ նա փոթորկին անիծելու փոխարեն դա իր վրա ուղղեց»¹⁸⁶:

Գլխավոր խնդիր համառելով Ղրիմի վերանվաճումը, թուրքերն իրենց հիմնական ուժերը կենտրոնացրին այստեղ և միաժամանակ Չլդրի կառավարիչ Սուլեյման փաշային հրաման արձակվեց Անգլո-կովկասի իրենց դաշնակիցների հետ համատեղ «ջիհադ» սկսել Վրաստանի և Ռուսաստանի դեմ: Սակայն բոլոր ճակատներում էլ Քուրբիան կրում էր պարտություն պարտության հետևից: Գեներալ Ա. Մ. Սովորո-

180 „Mémoires...“, I, էջ 44:

181 Նույն տեղում, էջ 45:

182 Նույն տեղում, էջ 46:

183 Նույն տեղում, էջ 51:

184 Նույն տեղում, էջ 63:

185 Նույն տեղում, էջ 57:

186 Նույն տեղում, էջ 62:

¹⁷⁹ „Tarih-i Cevdet“, II, էջ 149:

վր Ֆոկչանում և, հատկապես, Ռիմնիկ գետի ափին, թուրքերին ծանր հարվածներ հասցրեց: Մուրափիայում, Վալախիայում և Կովկասում տաքած հաղթանակներով ուսական զորքերն իրենց առաջ բաց արեցին Ռումելիի և Փոքր Ասիայի ճանապարհները, մի հանգամանք, որը թուրքիայի համար հղի էր ռազմական և քաղաքական ծանր հետևանքներով:

1789 թ. ֆրանսիական հեղափոխությունը որոշակի ուղղումներ մտցրեց դեպի Ռուսաստանը եվրոպական մի շարք պետությունների տաժած քաղաքականության մեջ: Այսպես, Լոնդոնի և Բեռլինի կարինետները հակում ցուցաբերեցին վերջ տալու ուս-թուրքական պատերազմին՝ զիջումներ անելով Ռուսաստանին:

1792 թ. հունվարի 10-ին Յասում Ռուսաստանի և թուրքիայի միջև ստորագրվեց հաշտության պայմանագիր, որի համաձայն օսմանյան պետությունը ճանաչում էր 1774 թ. Քուլուջուք-Կայնառջիի պայմանագրի բոլոր կետերը: Կովկասում ուսական պետության սահմանները հասնում էին մինչև Կուբան գետը: Թուրքիան հանձն էր առնում հետախույզմիջամտել Վրաստանի ներքին գործերին: Բոլոր պայմանները ստեղծվել էին հզոր Ռուսաստանին Վրաստանի միացման համար: Հերթը Հայաստանինն էր:

1787—1797 թթ. ուս-թուրքական պատերազմը ևս ծանր անդրադարձավ արևմտահայ հատվածի համար: Մեծ վեզիր Կոչա Յուսուֆ փաշան ռազմական կարիքներն ապահովելու համար ոչ միայն սուլթանական հատուկ հրամանով ամբողջ երկրին ստիպեց զարգեղներ, ոսկին ու արծաթը հավաքել, այլև համաձայն Պողոս Կաղզվանցու տաքեգրության, որպես աննախադեպ երևույթ, մայրաքաղաքի հայերից և հույներից ռազմական ծառայության համար մարդիկ հավաքագրել, քրիստոնյա ու հրեա հպատակներին ենթարկել ծանր հարկատվության. «Արդ՝ յաւուրս թագաւորութեան սուլթան Համիդի և ի թուականութեան հայոց ՌՄԼԶ (1787) յարեաւ պատերազմն Օսմանցոց ընդ երկուց տէջութեանցն՝ Մօսկովու և Նեմցեի (Ավստրիայի), յորում ժամանակի էր Եպարքոսն Ծուաուֆ փաշայն, որ էր այր նախանձախնդիր դէնի իւրեանց, և ըստ մեծի մասին՝ պատճառ պատերազմին, որ ոչ սակաւ բանիւք յորդորեալ զթագաւորն զրգոեաց յայս գործ մեծ, և երարձ զգեսպանն ուսաց և արգել ի կալանս ի յեօթն կլայն ըստ նախնի սովորութեան իւրեանց: Ի վերադրեալ թուականին յօգոստոսի Ե (5)-ին, և թէպէտ սկսաւ պատերազմն յորմէ ի տրտմութիւն մեծ պաշարեցաւ բոլոր աշխարհ Օսմանցոց, այլ և ինքն Ծուաուֆ փաշայն անկաւ ի տազնապ տարակուսութեան, յաղագս սակաւութեան զօրաց ուստի և հնարս եգիտ այսպէս՝ նախ՝ առաքեալ կոչեաց զմեծամեծս հայոց, և խնդրեաց ի նոցանէ

զհազար այր հզօր ի պատերազմի, յորում յոյժ բազում պաղատելով՝ հազիւ կարացին իջուցանել ի հինգ հարիւրն»¹⁸⁷:

* * *

Ինչպես նշվեց, Ալի-Մուրադ խանի մահից հետո Իրանում սկսված նոր գահակալական կռիվների հետևանքով իշխանությունը զավթում են կաջարները, որոնք ձգտում են իրենց տիրապետությունը նորից հաստատել Անդրկովկասում: 1795 և 1797 թթ. իրականացրած երկու արշավանքների հետևանքով Աղա Մուհամմեդ խանին (1743—1797 թթ.) հաջողվում է իրեն ենթարկել Արևելյան Անդրկովկասի մի մասը, ներառյալ նաև Երևանի խանությունը:

Իրանական նոր տիրակալի այդ արշավանքներն ավերիչ հետևանքներ ունեցան Անդրկովկասի ժողովուրդների և, մասնավորապես, հայերի համար: 1795 թ. արշավանքի նախօրեին Երևանից, Նախիջևանից ու Ղարաբաղից բնակչության հոծ զանգվածներ լքում են իրենց բնակավայրերն ու փախուստ տալիս դեպի Վրաստան:

1795 թ. հունիսի վերջերին՝ 50 հազարանոց բանակով Աղա Մուհամմեդ խանը ներխուժում է Անդրկովկաս: Նա իր եղբայրներ Ալի Կուլի և Զաֆեր խաներին ուղարկում է պաշարելու Երևանը, իսկ ինքն ուղղություն է վերցնում դեպի Շուշի: Իրանական զորքերն ասպատակում են Արարատյան երկիրը և այնտեղ կատարում մեծ ավերածություններ: Այդ մասին Վարդան Օձնեցու մոտ կարդում ենք հետևյալը. «Իսկ Ալի դուլի խան սարգար, յետ բազում անգամ յորդորելոյ զխանն Երևանայ գալ ի հնազանդութիւն շահին և ընդդիմանալոյ նորա, զայրացեալ յոյժ, պատերազմեցաւ ընդ բերդականացն Երևանայ յաւուրս ինչ և անդէն սփռեալ զգօրս իւր յԱրարատ գաւառ ասպատակեաց զամենայն երկիրն Գառնոյ առ Հրազդան գետով քանդեալ աւերեաց զշինուածս յանց և հուր արկեալ այրեաց զամենայն արմտիս երկրիս նոցա, զոր յանժամ հնձեալ դիզեալ էին»¹⁸⁸:

Շահը մեծ ավերածություններ է գործում նաև Ղարաբաղում: Մեկ ամսից ավել Շուշին համառ դիմադրում է Աղա Մուհամմեդ խանին: Զկարողանալով գրավել բերդը, Իրանի տիրակալը կարգադրում է ավերել շրջակայքը: 1795 թ. օգոստոսի վերջերին Երևանն ընկնում է թշնամու ձեռքը:

Ալի Կուլի խանի զորքերը Երևանը գրավելուց հետո մեկնում են Գանձակ, միանում Աղա Մուհամմեդ խանի բանակին ու համատեղ ար-

187 «Իրան Հայոց պատմութեան», հ. Ժ, էջ 331—334:

188 Մատ., ձեռ. № 4331, էջ 85 ա—85 բ:

շավանք կազմակերպում դեպի Վրաստան և նույն թվականի սեպտեմբերի 12-ին գրավում են Քրիլիսին: Բնակչության մի մասին սրի են անցկացնում, իսկ մյուս մասին՝ գերեվարում: Ըստ ավանդության զոհվածների մեջ էր նաև մեծ Սալաթ-Նովան:

Աղա Մուհամմեդ խանի այս արշավանքից հետո Արևելյան Հայաստանը փաստորեն դուրս եկավ վրաց պետության ազդեցությունից և կրկին դարձավ իրանական պետության սահմանամերձ խանություններից մեկը:

1795 թ. դեկտեմբերին ռուսական երկու հազարանոց մի ջոկատ ժամանում է Քրիլիսի՝ Վրաստանը Աղա Մուհամմեդ խանի նոր ասպատակություններից պաշտպանելու նպատակով: 1796 թ. ռուսական զորքերը համարումներ ստանալով՝ Իրանի դեմ Անդրկովկասում ծավալում են ռազմական գործողություններ և ունենում որոշ հաջողություններ: 1796 թ. նոյեմբերի 6-ին, սակայն, Եկատերինա 2-րդը մահանում է և նոր կայսր Պավել 1-ինը, որը իր ուշադրությունը սևեռել էր եվրոպական գործերին, ցանկություն չի հայտնում շարունակելու «Պարսկական արշավանքը»:

Անդրկովկասից ռուսական զորքերի հեռանալը երկրամասում ծանր իրավիճակ ստեղծեց: Օգտվելով ռուսական զորքերի հեռանալուց, 1797 թ. գարնանը Աղա Մուհամմեդ խանը նոր արշավանք ձեռնարկեց դեպի Անդրկովկաս: Անցնելով Արաքս գետը, այս անգամ էլ նա նորից շարժվեց դեպի Շուշի: Գրավելով քաղաքը, իրանական զորքերը մեծ ավերածություններ են գործում Ղարաբաղում: Սակայն շուտով շահը սպանվում է և իրանական զորքն անկանոն նահանջում է դեպի Իրան, ուր սկսվել էր զահակալական նոր պայքար: Ժամանակակից եվրոպացի հեղինակներից մեկը՝ Ա. Դյուպրեն, հետևյալ ձևով է ներկայացնում քաղաքական այդ անցուղարձեքը. «1797 թ. ուզուրպատորը Թեհրանում նորից իր դրոշի ներքո հավաքեց բանակը՝ երկրորդ անգամ Քրիլիս արշավելու և Դերբենդում ու Բաքվում հաստատված ռուսներին վտարելու համար: Շուշիի բնակիչները նրա բանակի մոտենալուն պես փախան դեպի լեռները: Աղա Մուհամմեդը ճամբարելով (Շուշու) բերդի մոտակայքում, հրամաններ էր արձակում իր ծրագիրն ի կատար ածելու նպատակով: Սակայն մի օր, երբ նա գտնվում էր իր վրանում, դաշունահարվեց իր ամենավստահելի ծառաների կողմից»¹⁸⁹:

Շահի սպանությունից հետո Արևելյան Հայաստանում և, մասնավորապես, Արարատյան երկրում ստեղծվում է հեղհեղուկ վիճակ: Տարբեր հոսանքներ ներկայացնող խաները հավակնում են տիրել Երևանի

խանությունը: Ներքին այդ կռիվներից հայ բնակչությունը մեծապես տուժում է: Հրին ու սրին շուտով հաջորդում է ժանտախտը:

Իրանում շահ է հռչակվում Փաթհ-Ալի շահը (1797—1834), որը նույնպես փորձեր է կատարում իրեն ենթարկել ողջ Անդրկովկասը: Ստեղծված ծանր կացության պայմաններում Վրաստանն ապավինեց ռուսական զենքին: 1801 թ. Ալեքսանդր 1-ինի հատուկ հրովարտակով Վրաստանը վերջնականապես միավորվեց Ռուսաստանի հետ, որը և քտավ դարերով երազած իր անդորրը: Հերթը Արևելյան Հայաստանին էր:

* * *

XVIII դարի վերջին Օսմանյան կայսրությունը, ըստ ամենայնի, շարունակում էր գոյություն ունենալ միայն ձևականորեն: Արաբական երկրները փաստորեն դարձել էին անկախ: Արաբայում հաստատված վահհաբիները բացահայտ թշնամական դիրք էին գրավել թուրք ղեկավար շրջանների նկատմամբ: Բալկաններում և Փոքր Ասիայում առանձին թուրք ֆեոդալներ ոչ միայն հռչակել էին իրենց անկախությունը, այլև սեփական դրամ էին հատում: Փոքր Ասիայի ու Հայաստանի մի մասը ընկել էր Չապանօղլուների, Թայարօղլուների, Կողանօղլուների և այլ ֆեոդալների գերիշխանության ներքո: Ի վերջո Քրդստանում և քուրդ ֆեոդալների ազդեցության ներքո գտնվող Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններում առաջացել էին քրդական դերբեյություններ, ուր իշխում էր քուրդ բեգերի սանձարձակ կամայականությունը: Կառավարական զորքերի հետ ընդհարումները դարձել էին սովորական երևույթ: Ապստամբներն ավերում ու ոչնչացնում էին ամեն ինչ: XIX դարի սկզբներին Հայաստանով անցած Ամեդե Ժորերն որպես ականատես գրում է այն մասին, որ Տրապիզոնից մինչև Էրզրում գտնվող ճանապարհը հրկիզված էր. «մեր ճանապարհին,— կարդում ենք նրա մոտ,—բոլոր կամուրջները քանդված, գյուղերը կողոպտված ու հրկիզված էին ապստամբների կողմից»¹⁹⁰:

Առանձնապես ծանր վիճակ էր ստեղծվել քրդաբնակ շրջաններում: Այդ նույն Ա. Ժորերի վկայությամբ, Եփրատի հովտի հայ գյուղացիների սենեցվածքը «ենթակա է քրդերի ասպատակություններին: Գյուղացիներն իզուր ցանում են մի փոքր հացահատիկ: Նրանք կողոպտվում են (քրդերի կողմից) ղեռուս չհասունացած: Նա (հայ գյուղացին—Մ. Զ.)

¹⁸⁹ A. Jaubert, Voyage en Arménie, էջ 8.

¹⁸⁰ A. Dupré. Voyage en Perse, II, էջ 335—336.

ստիպված է թողնել իր արտը, փախչել իր կնոջ, երեսանների ու անասունների հետ»¹⁹¹։

Աղբյուրների վկայությամբ հայ գյուղացու վիճակը գիշատիչ փաշաների կրնկի ներքո անտանելի էր։ Եթե հավատալու լինենք Ջոն Մակդոնալդ Կիննեյրին, ապա XVIII դարի վերջին հայ գյուղացիները փորձել են ապաստան գտնել նույնիսկ ապստամբ ֆեոդալների մոտ։ «Մենք նկատեցինք նաև,— գրում է եվրոպացի հեղինակը, որ Չապնոլլունների և այլ անկախության հասած փաշաների տիրապետության տակ ընկած շրջաններն ավելի լավ են բնակեցված, քան Թուրքական կայսրության այլ շրջանները։ Գյուղատնտեսության այդ շրջանները ծաղկուն են, քանզի նրանք (ապստամբ ֆեոդալները—Մ. Ջ.) հառակացել են, որ գյուղացիների հովանավորումն ու քաջալերումը բխում է իրենց իսկ սեփական շահերից»¹⁹²։

Հավանաբար, այդ է պատճառը, որ տեղ-տեղ, օրինակ, Բայազետի նահանգում հայ գյուղացիները փաշաների ոճրագործությունների դեմ ըմբոստացել են ու դարձել կիսանկախ։ «Դա առաջին անգամն էր, որ մենք Հայաստանում հանդիպում էինք քրիստոնյաների, որոնք վճռել էին որոշ զիմազորություն ցույց տալ թուրքերին։ Ուստի Հայաստանի այս մասերում կառավարության իշխանությունը համարյա զերոյի է հավասար։ Գյուղացիները զինված են և քրդերի դեմ հաճախակի մղվող մարտերում կոփված, չեն վախենում ո՛չ սպանալիքներից, ո՛չ շոյանքներից, և ոչ էլ մահից»¹⁹³։

XVIII դարի վերջերին Բայազետով անցած Ֆերրիեր-Սովբեֆը վկայում է, որ նկատի ունենալով Բայազետի հայության մարտական ոգին, տեղի փաշան նրանց ներգրավում էր զինվորական ծառայության¹⁹⁴։ Սա, անշուշտ, բացառիկ երևույթ էր կայսրության մեջ։ Արևմտյան Հայաստանի մյուս մասերում վիճակն ավելի քան տխուր էր։ Եվ Ֆերրիեր-Սովբեֆը բացականշում էր. «Հայաստանի հին փառքից ոչինչ չէր մնացել և իրենց երկրում թշվառության գիրկը նետված կամ հայրենիքից հեռացած հայերը այլևս ոչինչ չունեն տեսնելու իրենց նախնիների մեծությունից»¹⁹⁵։

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ

ՀԱՅ-ԱՐԵՎՄՏԱՆՎՐԱՊԱԿԱՆ
ԲԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, XVI—XVIII ՊՊ.

(Փ ա ս տ ա ր ղ ք ե ր)

Թարգմանությունը և խմբագրությունը՝
Է. Խ. ԹԱԶԻՐՅԱՆԻ և Մ. Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ

191 Նույն տեղում, էջ 20։

192 John Macdonald Kinneir, էջ 91։

193 A Jaubert, էջ 109։

194 „Mémoires...“, II, էջ 217։

195 Նույն տեղում։

Վերը բերվում է Պարսկաստանի և Մեդիայի ու բազմաթիվ այլ հողերի և գավառների արեա, Սոֆի մականունը կրող Արդեբիլցի իշխան Շահ Իսմայիլի ժամանակակից պատմությունը

Հետևելով նախորդ երկի (traicté) հերթականությանը, այս մեկը կբաժանենք երեք փոքր մասի: Առաջին մասում կլուսաբանվի իշխան Սոֆիի ծագումն ու տոհմաբանությունը, երկրորդում՝ նրա ապրելակերպն ու առաջին հաջողությունները, իսկ երրորդում՝ նրա ձևոր բերած փառահեղ առաջընթացն ու ուղղմական հաջողությունները:

Իշխան Շահ Իսմայիլի կամ նույնն է թե Արդեբիլցի Սոֆիի, Ղզլբաշի (Ruselbas) և Նագերի հոր կողմից հնագույն ծագումնաբանության, նրա կողմից այդ մականունը ստանալու և մայրական կողմից նրա բարձրագույն ազնվականական ծագման մասին

Մուհամմեդը՝ կախարհն ու սուտ մարգարեն, ինչպես նաև մահմեդական օրենքի հիմնադիրը, ուներ Հալի (Haly) անունով մի եղբայր, որն իր հոր մահից հետո դեռ մի փոքրիկ երեխա էր, և սնվեց ու դաստիարակվեց Մուհամմեդի կողմից: Վերջինս նրա նկատմամբ բարյացակամ գտնվեց և հնարավորին շափ բարձր պատվի արժանացրեց: Այդ նույն Հալիից արական իսկական և ուղղակի գծով սերում է նա, ում այսօր գոհեկաբար Սոֆի անունն են տալիս: Ինչպես բոլոր նրանք, ովքեր արական գծով Մուհամմեդից են սերում, կոչվում են Մուհամմեդի Շերիֆ (Seriphy), այնպես էլ Հալիից սերվածները Հալիի Շերիֆ են կոչվում: Եվ նրանք պարսկական տերության մեջ ժողովուրդների կողմից նույն պատվին են արժանանում, ինչ մյուսները, և Հալին էլ նրանց կողմից հարգված է նույնքան, որքան Մուհամմեդը:

Ի միջի այլոց, Սոֆին նրա իսկական և ճիշտ անունը չէ, դա նրա կրոնի ու աղանդի անունն է, որը պահանջում և հրամայում է, որ գլուխը համեստորեն ծածկվի: Բուրդն էլ դրա իրագործմանը ծառայող ամե-

նաթանկարժեք բանն է, իսկ բրդին արաբերենով Սոֆի են ասում և (ըստ այդմ) այդ աղանդի մարդկանց ևս Սոֆի են կոչում: Նրանք պետք է աղքատ ապրեն, գինի և մսեղեն չօգտագործեն, մշտապես հսկողութեան և պահեցողութեան մեջ լինեն, բայց այսօր նրանցից շատերը վատ են հետևում այդ ամենին:

Նրա իսկական և ճիշտ անունը Շահ Իսմայիլ է, այսինքն Իսմայիլ մարգարե, որի նախնիները, նույնիսկ՝ հայրը, մշտապես Արդեբիլ (Ardval) կոչվող մի փոքր երկրամասի տերերն են եղել և այդ պատճառով էլ սոֆիները կոչվում են նաև Արդեբիլցիներ:

Մինչդեռ ուրիշները նրանց կոչում են էթնազեր (Etnazer), որովհետև նրանք տասներկու շերտերի բաժանված փաթթոց (tocque) կրելու սովորություն ունեն: Էթնազեր արաբերեն նշանակում է «տասներկու», և քանի որ այդ փաթթոցը կամ գլխարկը ամբողջովին կարմիր է, այդ պատճառով էլ կոչվում է Ղլբաշ (Ruselbas), այսինքն՝ կարմրագլուխ: Այս աղանդը տարբեր պատճառներով և ժամանակի բերումով տարբեր անուններ է ստացել:

Սոֆիի հայրը խոշոր գրագետ է եղել ինչպես իրենց օրենքի, աստվածաբանության, նույնպես և գիտության այլ բնագավառներում, հատկապես աստղագիտության ասպարեզում: Նա ապրեց խեղճ ու համեստ կյանքով: Սրանք էլ եղան այն պատճառները (որոնց շնորհիվ) նա սիրվեց ու հարգվեց Կազեմբեկ (Razembek) թագավորի կողմից, որին մենք Ուզուն Հասան (Usun Cassan) ենք անվանում: Այդ սերը հասավ այնպիսի աստիճանի, որ վերջինս նույնիսկ իր աղջկան ամուսնացրեց նրա հետ, այս ամուսնությունից էլ ծնվեց այդ Շահ Իսմայիլը, որին Սոֆի ենք կոչում և որը մոր կողմից սերում է շատ ազնվական ու թագավորական տոհմից:

Արդեբիլցի, էթնազերի, Ղլբաշ տարբեր մականուններով կոչվող իշխան Շահ Իսմայիլի առանձին հաջողությունները, քե ինչպես իր հօր մահից հետո նա արսուրվեց և հետո վերադարձավ իր կավածքը. նրա բարբերի և խաբուրվածքի մասին, նրա արտաքինի և մեծ ասպտամբության մասին, ինչպես նաև բարբ ազգի նկատմամբ նրա անասելի ատելության մասին

Այնքան ժամանակ, քանի դեռ Շահ Իսմայիլի հայրը կենդանի էր, նա միշտ աշխատեց իր զավակին սովորեցնել ազնիվ սովորություններ և ապրելակերպ, ինչպես նաև լավ գրել և, նույնիսկ՝ իրենց օրենքի մասին տեղեկություններ տալ: Ասում են, որ երբ որդին ծնվեց, աստղա-

գիտության ասպարեզում ունեցած իր իմացությունների շնորհիվ հայրը գուշակեց, որ նա հիանալի մարդ է լինելու: Այնուամենայնիվ, խեղճ հորը թույլ չտվեցին երկար ժամանակ զբաղվել իր որդու դաստիարակությունով, որովհետև կարճ ժամանակ անց մահացավ Կազեմբեկ Ուզուն Հասանը, ում մոտ Ֆիլիպ դը Բուրգոնյը ուղարկել էր իր դեսպաններին՝ նրան թուրքերի դեմ զբաղելու համար: Ահա այսպես է, որ Ուզուն Հասան թագավորը մայրական կողմից լինում է ներկայիս Սոֆիի պապը:

Ուզուն Հասանից հետո պարսկական տերության գահին նստում է նրա որդի Յազուբ բեկը (Jacobbech), որը մեծ ատելություն ուներ Սոֆիի հոր հանդեպ, որովհետև իրեն թվում էր, թե իր քրոջ հետ նրա ամուսնությունը պետք է համարել արկածախնդրություն, ինչպես նաև անազնիվ և միաժամանակ անարգ բան: Ուստի տերության գլուխ անցնելուց հետո, նրան թողնելով (միայն) մի փոքրիկ երկիր, աննախագեսը հալածանքի ենթարկեց և, ի վերջո, սպանել տվեց:

Իսկ Շահ Իսմայիլն իր հոր մահվան ժամանակ շնայած ընդամենը ութ տարեկան էր, բայց զգաց, որ մահվանից խուսափելու համար հարկավոր է փախել: Նա գնաց շատ հեռու՝ մինչև Գիլանի (Geylan) գավառ, Կասպից ծովի մոտ, Թաթարստանի հարևանությամբ: Նա կանգ առավ Լեզիան (Leshian) կոչվող քաղաքում, որտեղից Վենետիկ են ուղարկվում բազմաթիվ մետաքսյա կերպասներ և խավոտ գորգեր:

Այստեղ, Պիրքիլ (Pirkail) կոչվող մի պարոնի արքունիքում նա մնաց երկար ժամանակ. այդ ամբողջ ընթացքում, այսինքն՝ ութ տարուց ավելի, որքան էլ նրան հորդորում էին, չուզեց ընդունել ոչ մի տեսակի արքունական մսեղեն (ուտեստ): Նա ապրում էր միմիայն իրեն տրվող ողորմությամբ, իսկ իր ճաշի ավելցուկը, հանուն աստծու, բաժանում էր աղքատներին: Ներկայումս նա պետք է որ լիներ քսանութ կամ երեսուն տարեկան: Կազմվածքով փոքր էր, բայց մարմնեղ ու գեղ, արտաքինով բավական գեղեցիկ էր, իր արդարադատությամբ այն աստիճան խիստ և անաշտ էր, որ եթե կառավարության կողմից քաղաքներում և զավառներում նշանակված պաշտոնյաները (cappitaines) յուրացնում էին հպատակների կամ մասնավոր անձանց ունեցվածքը, կամ որևէ այլ հանցանք էին գործում, նրանց բոլորին սպանել էր տալիս, իսկ պաշտոնները տալիս էր ուրիշներին:

Նա անշափ ազատամիտ էր և չէր վազում ոչ ոսկու և ոչ էլ հարստության հետևից: չէր էլ գնահատում դրանք և, գեռ ավելին, այնքան շատ էր տալիս ուրիշներին, որ մարդիկ զարմանում էին ու մտածում, որ նա տեղյակ է աշխարհում գոյություն ունեցող բոլոր թանգարանների մեջ եղած հարստություններին, նույնիսկ զրամական ասպարեզում կարող է տիրանալ ցանկացած պաշտոնին: Նա գինի է խմում, բայց

գաղտնի, խոզի միս է ուտում: Սրանք այնպիսի բաներ են, որոնք արգելվում են մահամեղական օրենքով: Եվ քանի որ թուրք զզգի նկատմամբ մեծ ատելությունը է լցված, ուստի իր տնտեսության մեջ նա պահում է մի խոշոր ու գեր խոզ: Եվ որպեսզի զայրացնի ու նսեմացնի թուրքերի թագավորին, այդ խոզի անունը դրել էր Բայազիտ, որը ներկայումս իշխող թուրքի անունն է: Նա հաճույք է ստանում ամեն տեսակի առաքինի բաներից, ինչպես, օրինակ, ձեռքի, նույնպես և մտավոր ու ուսումնական աշխատանքներից: Եվ եթե որևէ մեկը արժեք ներկայացնող մի բան բերի իր մոտ, դրա համար նա վճարում է կրկնակի, նույնիսկ՝ իր արժեքից երեք անգամ ավելի և ամեն ոք նրա մոտից հեռանում է գոհ ու բավարարված:

Իր պալատի մարդիկ և հպատակները նրան պաշտում են որպես մարգարեի, իսկ ինքն ավելի մեծ հեղինակություն ձեռք բերելու համար իրեն չի ցուցադրում կամ, հակառակ դեպքում, հանդես է գալիս ծածկված, քողարկված դեմքով՝ ինչպես ժամանակին Մովսեսն էր վարվում Իսրայելի զավակների հետ:

Ինչ վերաբերում է շքեղությանը, նա բավական համեստ է և ապրում է երկրի սովորության ու օրենքի համաձայն: Նա ստրուկ չի պահում, ոչ էլ կին, կապված չէ ամուսնական կապերով: Այստեղ էլ մենք ավարտում ենք երկրորդ մասը:

Այս երկասիրության երոզը մասը վերաբերում է Սոֆի մականունով իշխան Շահ Իսմայիլի մեծ նվաճումներին և ռազմական իրադարձություններին. նախ իր երկրին և Ադրբեյլ կալվածքին վերստին տիրանալուն, ապա՝ թե ինչպես նա նվաճեց Սիմիաք (Simiacque) քաղաքը:

Իսկ այժմ մնում է երրորդ և վերջին մասը, որը Սոֆի մարգարեի պատերազմական հռչակապ քաջագործություններից է: Ուրեմն, մենք գիտենք, որ նա իր երիտասարդական վաղ տարիներին փախստական էր և արտոնված իր Արդեբիլ երկրից և ապրում էր, ինչպես վերևում ասվել է, Թաթարիային հարակից Կասպից ծովին մոտ՝ Լեզիան քաղաքում: Այդ ժամանակամիջոցում մահացել էր նրա մորեղբայր, միաժամանակ և իր որսերիմ թշնամի Յաղուբ բեկ թագավորը, որը, ինչպես վերևում ասվեց, սպանել էր տվել Սոֆիի հորը և զավթել նրա երկիրն ու հողերը: Վերոհիշյալ Յաղուբ բեկ թագավորի՝ Սոֆիի մորեղբոր մահվանից հետո ամբողջ պարսկական տերությունը զենք առավ իր ձեռքը և երկիրն այնպիսի պատերազմների ու խմբավորումների բեմ դարձավ, որ երկու տարուց էլ պակաս ժամանակամիջոցում թագավորական

այդ տերությունը առնվազն հինգ անգամ ցնցումներ ապրեց և ձեռքից ձեռք անցավ: Ահա օգտվելով այս իրավիճակից, այսինքն՝ իր հիմնական թշնամու մահից և պարսկական տերության զինվորականների ու աղնվականության իրար դեմ վարած տևական կռիվներից, Շահ Իսմայիլը հեշտությամբ կարողացավ վերադառնալ իր երկիր, տեր դարձավ իր ժառանգությանն ու հոր ունեցվածքին, այսինքն՝ Արդեբեյլի շրջանին, որտեղ նա անշափ սիրված ու հարգված էր իր հպատակների կողմից:

Իր հողերին խաղաղորեն տիրանալուց և որոշ ժամանակ անցնելուց հետո, նա հավաքեց մի փոքրիկ բանակ (եթե դա կարելի է բանակ անվանել), այսինքն՝ ընդամենը երեք հարյուր հոգի, և գնաց իր երկրից ոչ հեռու (գտնվող) Սիմիաք քաղաքը, ուր վենետիկցիները բերում են շմշակված մետաքս և այլ նույնանման ապրանքներ: Նա շատ արագ ու հանկարծակի վերցրեց Սիմիաք քաղաքը և այն ամբողջովին ամայացրեց, այսինքն՝ սրի ու հրի մատնեց այն. և դա հրաշք էր, որ կատարվեց, քանի որ այդ սակավաթիվ մարդկանցով նա կարողացավ վերցնել այն քաղաքը, որտեղ կար երեք հազար հեծյալից ավելի մի հզոր բանակ:

Թե ինչպես են պարսիկները վերաբերվում իրենց օրհնով նախատեսված մարգառն՝ Սոֆի մականունի կրող Շահ Իսմայիլին, ինչպես նաև նրա նկատմամբ քուբի ունեցած վախի մասին

Այս իրադարձության ավարտից հետո, Սոֆիի հուշակը մեծանում և այնքան է տարածվում, որ շատ տեղերից, ինչպես նաև հարևան երկրներից նրա մոտ են գալիս իր աղանդին ու օրենքին պատկանող մարդիկ: Դրա պատճառն այն էր, որ համաձայն իրենց գրքերի, նրանք իրականացված էին համարում այն մարգարեությունը, որով նախատեսվում էր նոր մարգարեի գալուստը և իրենց իղձերի կատարումը, իսկ մնացած բոլորը պիտի ոտնակոխ արվեր, նսեմացվեր և ոչնչացվեր:

Հայտնի է, որ Մուհամմեդի հերձվածը բաժանված է LXXII հիմնական աղանդների, այսպես է գրված իրենց օրենքի հիմքը հանդիսացող Ալլուրանի մեջ: Ստացվում է այնպես, որ այդ LXXII-ից միայն մեկն (հետնորդն) է դրախտին արժանանում, իսկ մնացածը՝ դժոխքի կրակին: Իսկ եթե որոշակի ոչինչ չկա, ուրեմն մնում է այն, որը դրախտ է գնում: Այստեղից էլ բխում է այն իրողությունը, որ ամեն մեկը համոզված է իր ճիշտ լինելու մեջ: Այդ յոթանասուներկուսի փոխարեն Սոֆիի աղանդը մեկն է: Հավատացյալը մտածում է, որ հենց այդ մեկն

էլ բավական է, որ մարդիկ դրախտ գնան, ապա ավելացնում է, որ Շահ Իսմայիլը աստօժ կողմից է ուղարկված, որպեսզի այդ մեկ (աղանդը) հրապարակի և ծանուցի բոլորին, բարձրացնի այն ու փառաբանի և ամբողջովին ոչնչացնի մնացած յոթասուունմեկը՝ այն հաշվով, որ եթե հնարավոր է, դրանցից ոչ մեկը չմնա:

Եվ դրա համար էլ Շահ Իսմայիլի բանակը ծախսերի և դրամական պարտավանների կարիքը շունի, ճիշտ այնպես, ինչպես մեզ մոտ արվում է խաչակիրների համար՝ անհավատների դեմ կովելիս: Եվ այդ նպատակի համար է, որ Ասիայի բոլոր անկյուններից, նրա աղանդի մարդիկ վազում են նրա մոտ, հետևերը բերելով իրենց ողջ ունեցվածքն ու ընտանիքը, եթե, իհարկե, նրանց արգելք չեն հանդիսանում պարոնները (սինյորները), ինչպես վեց-յոթ տարի առաջ արել էր թուրք թագավոր Բայազիտ Ծրամանը. սա իմանալով Շահ Իսմայիլի օրեցօր աճող հռչակը և միաժամանակ նրա բանակի ու երկրի հզորանալը, Անատոլիայից և Թուրքիայից հավաքեց բոլոր նրանց, ովքեր պատկանում էին նրա աղանդին, որոնց թիվը կազմում էր տասը հազար հոգի, և նրանց բոլորի հրեսին խարան դնել տվեց, որպեսզի ճանաչվեն բոլորի կողմից, որից հետո նրանց տեղափոխեց Ռոմենիա (Ռոմելի), այսինքն՝ Հունաստանի մի քանի գավառներ: Եվ որպեսզի նրանց թույլ չտա հեշտույթյամբ իրար մոտ գալ, նրանց բոլորին ցրեց տարբեր հեռավոր վայրեր, այսինքն Հունաստանի, Ալբանիայի, Բոսնիայի և Սերբիայի հեռավոր անկյունները: Հավաստի տվյալների համաձայն, մարդիկ պատմում են, որ նրանց տեսել են Մորեանում՝ Մոզոնի մեջ և որ թուրքերը սրանից տասը տարի առաջ այն (Մորեան) թողել են վենետիկցիներին: Ընթերցողներին ենք թողնում եզրակացնելու, թե որտե՞ղ է լսված, որ Թուրքիայի նման մի հզոր պետություն վախենար Շահ Իսմայիլից, և որ ամբողջ աշխարհով մեկ շրջող լուրերը պարզ կատակներ չէին: Բայց ավելի լավ է վերադառնանք մեր պատմությանը:

Պարսկաստանում Թավրիզ մեծ ֆաղափի նվաճումը և Ալվանդ քաղաքի գահընկեցությունը, և թե ինչպես Սոֆին քանդել տվեց իր մորեղբոր գերեզմանը և իր խսկ ձեռքով սպանեց մորը

Միմիաք քաղաքի գրավումից և հաղթանակելուց հետո Շահ Իսմայիլի բանակը աճում է՝ հասնելով մինչև հազար մարդու՝ հեծյալ և հետևակ: Այդ բոլորից հետո նա համարձակություն է ունենում գալու մեծ ու հարուստ Թավրիզ քաղաքը, որը միաժամանակ պարսկական տերության աթոռանիստն էր, և քաջաբար հարձակում է գործում Ալվանդ թա-

գավորի վրա, որն այդ ժամանակ նաև այդ քաղաքի թագավորն էր: Նրանց միջև տեղի ունեցած կռիվը պարտություն է բերում Ալվանդ թագավորին և իր բանակում գտնվող հինգ հազար հեծյալներին, չհաշված հետևակը: Եվ այսպես, Շահ Իսմայիլը վերցնում է Թավրիզի պարոնությունը (սենյորությունը): Միաժամանակ վստահեցնում են, որ նա կատարյալ ջարդ ու դաժանություն է ցուցաբերում երկրի զինված մարդկանց ու զինվորների նկատմամբ, որոնք թյուրքմեններ են կոչվում, և այդ կոտորածը իրագործվեց ոչ միայն տղամարդկանց, այլ նաև կանանց ու փոքր երեխաների նկատմամբ. նրանց տարբեր ձևերի մահ էր վիճակված:

Եվ քանի որ իր մորեղբոր մահվանից շատ ժամանակ էր անցել և նրա նկատմամբ վրեժխնդիր լինել չէր կարող իր հորը սպանելու և իր երկիրը զավթելու համար, նա գնում է մեծ իշխանի համար պատշաճ ձևով շինված շքեղ ու հույակերտ գերեզմանը և այն հիմնահատակ քանդում ու վերածում ավերակի՝ այն աստիճան, որ այդ գերեզմանի հետքը նույնիսկ չի մնում: Գեո՝ավելին, ոսկորները հանել է տալիս գերեզմանից, վառում և մոխիրը քամուն տալիս: Կսելով այդ, Շահ Իսմայիլի մայրը՝ Յազուբ բեկ թագավորի քույրը, որդուն ընդառաջ է գալիս և հանուն այն բանի, որ նրան ինքը կրել է իր որովայնում, սկսում է նրան մեղադրել իր մորեղբոր գերեզմանի հետ այդքան դաժանությամբ ու անմարդկայնությամբ վարվելու համար: Պարսավանքի արժանի մոր կատարած արարքն այնպիսի արհամարհանք է առաջացնում նրա նկատմամբ և այնքան է ազդում իր վրա, որ հանկարծ հրամայում է բռնել իր հարազատ մորը և սպանել: Ոմանք էլ ասում են, որ ինքն անձամբ է սպանել նրան:

Թե ինչպես է իշխան Շահ Իսմայիլը կռիվ ժամանակ սպանում իր հակառակորդ Ալվանդ քաղաքից, և թե դրա հետևանքով որքան է հզորացնում Շահ Իսմայիլի բանակը

Վերոհիշյալ պատճառներով Սոֆիի բանակն օրեցօր աճում էր ու մեծանում և՛ թվով, և՛ հզորությամբ. և թյուրքմեն զինվորների ու ալլոց վրա իր գործադրած ահավոր խիստ վերաբերմունքի շնորհիվ, շատ էին վախենում Սոֆիի անունից: Այս բոլորն իմանալով հանդերձ, Ալվանդ թագավորը չի հուսահատվում ու չնայած կռիվ մեջ իր կրած պարտությանը և իր երկրից վտարվելուն, ինքը, լինելով բավական մեծ քաջության տեր, ինչպես նաև խելացի մարդ, ձեռնարկում է մի նոր՝ նախորդից էլ՝ ավելի հզոր բանակ կազմելուն և, ազնվականների օգնությամբ ու հովանավորությամբ, ինչպես նաև երկրի զինված մարդկանց

ու գին՝ վորնեքի աջակցութեամբ, գալիս է Պարսկաստանի մեծ քաղաք Քավրիդ, որը, ինչպես վերևում ասվեց, նվաճված էր Սոֆիի կողմից: Եվ երբ արդեն մոտեցել էր քաղաքին, բաց դաշտում կռվի հրավեր է ուղարկում Սոֆիին: Դա այդ երկրի ռազմական հին սովորույթներից էր՝ գյուղացիներին վնաս չպատճառելու համար նրանք երբեք հերկված դաշտերում չէին կռվում. կռիվը տեղի էր ունենում շմշակվող դաշտում և հաղթողը դառնում էր երկրի տերը:

Լսելով այդ լուրը, խեղճ Սոֆին հավաքում է իր բանակը, որը և՛ զորութեամբ, և՛ մարդկանց քանակով Ալվանդ թագավորի բանակից երկու-երեք անգամ փոքր էր: Այդ վիճակով էլ նա քաջաբար կռվեց նրա դեմ ու հաղթանակեց՝ փախուստի մատնելով նրա բանակի մեծ մասը: Իր բանակն էլ քիչ զոհեր չտվեց: Իսկ այդ հաղթանակն այնպես վախեցրեց ու հուսահատեցրեց թյուրքմենն զինվորներին (որոնք, ինչպես վերևում ասվեց, երկրի գինված ուժերն են և որոնց՝ ձեռքում են դտնրվում երկրի ռազմավարական արվեստն ու ռազմական գործողությունների ղեկավարությունը), որ նրանք սարսափահար փախուստի դիմեցին. չէին գտնում մի տեղ, ուր կարողանային իրենց քիչ թե շատ ապահով զգալ: Եվ այսպես, Շահ Իսմայիլը հաղթականորեն մուտք գործեց Քավրիդ քաղաքը. և այնպիսի մեծ փառքով ու շուքով, որ այդ հաղթանակին հաջորդած մի քանի օրվա ընթացքում ավելի մեծ թվով մարդիկ եկան-միացան իր բանակին, որի մարդկանց թիվը հասավ մինչև վեց հազար և դեռ ավելի հոգու:

Այն մասին, թե որքան զայրացավ Մուրադ խանը իշխան Շահ Իսմայիլի կամ Սոֆիի վրա

Այնպես ստացվեց, որ Մուրադ խանը (որը այդ կողմերում մեծ իշխան էր) իմացավ իր զարմիկ, իսկ ուրիշներն էլ ասում են՝ իր եղբորորդի Ալվանդ թագավորի մահվան լուրը, ում, ըստ իրենց միջև կայացած համաձայնությունների, տվել էր Քավրիդի պարոնությունը (սենյուրությունը) և դրա դիմաց որպես պարգև ստացել Պարսից երկրի մի այլ, շատ փառահեղ քաղաք՝ Սիրաս անունով: Այս քաղաքը շատ առատ էր նուրբ մետաքսից պատրաստված կերպասներով, որոնցից թե՛ մարդկանց, թե՛ ձիերի համար պատրաստում են հանդերձ ու լծասարքեր, որոնց ով նույնիսկ ծանոթ է, միևնույն է՝ այնքան լավ չգիտե, որպեսզի կարողանա նկարագրել դրանք: Ուրեմն, այդ Մուրադ խանը, լսելով Շահ Իսմայիլի կողմից թյուրքմեններին ու նրանց կանանց և երեխաներին հասցված կորուստն ու անպատվությունը, ինքը որպես ռազմական գործին բավական քաջատեղյակ մարդ՝ իմանալով, որ Սո-

ֆիի դեմ բանակ հանելու ղեկարում իր ուժը գնալով կմեծանա, որոշեց իրագործել իր մտադրությունը, և այն էլ հնարավոր շափով շուտ, ու ոտքի հանեց շատ հզոր մի բանակ: Նա իր բոլոր ուժերը հավաքեց, միացրեց իրար և ելնելով իր փորձվածությունից, մտածեց որ վերջնականապես Սոֆիին պարտություն մատնելով, ինքն առանց որևէ արգելքի կդառնա ամբողջ Պարսկաստանի թագավորը, եթե, անշուշտ, ամեն ինչ իր համար բարեհաջող ավարտվի:

Եվ այսպես, կարճ ժամանակում Մուրադ խանը հավաքում է 12 հազար ձի ունեցող մի հզոր հեծելազոր՝ զինված զենք ու զրահով: Նա իր հետ տանում էր նաև մեծ թվով հետևակ զորքեր, որոնք կռված էին կռիվներում: Այդ բանակով նա ճանապարհ ընկավ դեպի Քավրիդ մեծ քաղաքը՝ իր հետ տանելով նաև իր բոլոր կանանց ու երեխաներին: Այդ լուրը Շահ Իսմայիլին հասնելուց անմիջապես հետո, նա դառնում է գազազած մի վիշապ կամ առյուծ և, ամբողջովին ոգևորված, քիչ ժամանակում հավաքում է այն մի բուռ մարդկանց, որոնք կազմում էին իր բանակը, որի հեծյալների ու հետևակի թիվը ութ հազարից չէր անցնում և որը Մուրադ խանի մարդկանց թվի հետ համեմատած համարյա ոչինչ էր:

Եվ թեև Սոֆիի այդ ոգևորությունը կռվի նկատմամբ շատ էր ուժեղ, բայց նա կարողացավ համբերել, որ թշնամին Քավրիդը պաշարելու մտադրությամբ մոտենա, իսկ ինքը քաջաբար գնաց դեպի Սիրաս՝ նրան դիմադրելու: Այդ երկու քաղաքները իրարից քսան օրվա հեռավորության վրա են: Եվ այսպես, նրանք իրար ընդառաջ գնացին և երբ համարյա ճանապարհի կեսին հանդիպեցին, Շահ Իսմայիլը, հաշվի չառնելով այն հանգամանքը, որ իր ուժը Մուրադ խանի ուժից ավելի փոքր է, նախահարձակ եղավ ու ներխուժեց թշնամու բանակի մեջ: Բայց առաջին ընդհարման ժամանակ Սոֆին կորուստներ ունեցավ, քանի որ իր մարդկանցից շատերը մահացան կամ վիրավորվեցին: Այդուհանդերձ նրանք ձևացրին, թե փախուստի են դիմում: Նրանցից և ոչ մեկը մահից չէր վախենում, որովհետև միշտ հուսով էին, որ մահից հետո իրենք պետք է ապրեն հավերժական կյանքով: Եվ այդ էր պատճառը, որ Սոֆիի մարդիկ այնպիսի կատաղություններ էին կռվում, որ նույնիսկ քայքայում էին իրենց վիրավոր ընկերների վրայով և ոչ մի վախ չունեին: Նրանք կռվում էին այնպիսի ոգևորությամբ և եռանդով, որ Մուրադ խանի ամբողջ բանակը խուճապի մատնվեց: Դա իսկապես կարելի էր համարել հրաշք, ավելի շուտ աստվածային, քան մարդկային բան:

Մահացածների թիվն անշափ շատ էր: Այս անգամ գերիներ չեղան, բացի կանանցից, որոնց իշխան Սոֆին ամուսնացրեց իր մարդկանց հետ և վերցրեց ունեցվածքի մի մեծ ավար, ինչպես նաև բավական մեծ

բանակութեամբ զենք ու զրահ: Իսկ Մուրադ խանը փախավ Բաղդադ և, ինչքան ինձ հայտնի է, նրանից այլևս ոչ մի տեղեկութիւն չի ստացվել:

Իշխան Շահ Իսմայիլի ալլ հաղթանակների ու նվաճումների մասին /

Եվ այսպէս, երջանիկ, բախտավոր ու քաջ Սոֆին շարունակում է իր հաղթարշավը, և իր բանակը ուղղութիւն է վերցնում դեպի Սիրաս, ուր և հասնում է մի քանի օր հետո: Այսպիսով, առանց որևէ դիմադրութեան, նա տիրանում է պարոնական (սենյորական) այդ հողերին: Եվ քանի որ այդ քաղաքում մեծ բանակութեամբ զինամթերք կար՝ մի ամբողջ բանակ զինելու համար, նա այդտեղ էլ մնում է բավական երկար ժամանակ: Նա սկսում է իր մարդկանց ավելի կատարելագործել զինվորական ծառայութեան մէջ և նրանց բանակը հասցնում է մինչև հիսուն հազարի և նույնիսկ ավելի: Եվ այսպէս, մարդիկ, որոնք առաջ զինված էին պարզունակ զենք ու զրահով, սկսեցին կրել ավելի զեղեցիկ ու թանկարժեք զենքեր՝ այնպէս որ նրանց տեսողները հիացական գնահատականի խոսքեր էին ասում:

Այսուհետև, իշխան Սոֆին տեսավ, որ Պարսկաստանում այլևս մեծ հեղինակութիւն ունեցող որևէ պարոն չի մնացել, բացի մի պաշտոնյայից, որը առաջնորդն էր մի քաջ ազգի և տերն էր յոթ անառիկ դըղջակների, որոնք իրենց անմատչելի դիրքի շնորհիվ նրան հնարավորութիւն էին տվել չենթարկվելու որևէ պարսիկ թագավորի, բացի Սոֆիի մայրական պապ Ուզուն շասանից. ուստի Սոֆին որոշեց նրա դեմ դուրս գալ, որովհետև դա համարում էր ավելի շուտ պատվի գործ, քան այդ ծրագիրը իրագործելն ամենևին հեշտ շեղավ, քանի որ երկու տարի շարունակ նա ստիպված եղավ պաշարել այդ յոթ բերդերը և պատերազմական գործողութիւնների մէջ լինել: Այստեղ նա կորցրեց իր մարդկանցից շատերին, ինչպէս նաև իր գլխավոր կապիտանին: Եվ, ի վերջո, նա տիրացավ այդ յոթ բերդերին ու վերագործավ հաղթանակով: Գրանից հետո Մեդիայում և Պարսկաստանում նվաճեց էլի մեծ թիվով խոշոր քաղաքներ, որոնցից ամենամեծն ու կարևորը Հերն էր, մնացածների անուններն ինձ անհայտ են: Այնուհետև նա իր ճանապարհն ուղղեց դեպի Տրավա և Խորասան: Ճանապարհին նա ջարդեց թուրքմենների ուժեղ դիմադրութիւնը, որոնք թալանում և փախուստի էին մատնում այն բոլոր առևտրականներին, որոնք այնտեղից անցնելով գալիս էին Թավրիզ: Այդ հաղթանակից հետո նա տիրացավ մի մեծ հարստութեան և մեծ բանակութեամբ տարբեր տեսակների մետաքսից

պատրաստած կերպաների, որոնք թյուրքմենների պաշտոնյաների կողմից հափշտակվել էին՝ տարբեր ազգերի վաճառականներից:

Բացի դրանից, նա նվաճում է նաև բազմաթիվ այլ երկրներ և տիրույթներ, որոնց անունները, սակայն, մեզ հայտնի չեն, բայց մյուս կողմից Պորտուգալիայի թագավոր էմմանուելը դեպի Հնդկաստան տանող իր ճանապարհին նրանից վերցնում է ծովափի (Պարսից ծոցի) վրա գտնվող մի քանի բնակավայր:

Նա, ումից ես իտալերենից ֆրանսերեն թարգմանեցի պատմութեան այն մի հատվածը, որ գրվել էր վենետիկի ներկայիս դքսին հաղար հինգ հարյուր ութ թվականին, ասում է այն մասին, որ երբ ինքը Հալեպ քաղաքից գնում է Սիրիա, իշխան Սոֆին և իր բանակը գտնվում էին Թավրիզից ութ օրվա հեռավորութեան վրա և կանգնած էին այն միակ բերդի առաջ, որը դեռևս գտնվում էր թյուրքմենների ձեռքում: Կարելի է վստահ լինել, որ նա նվաճած կլինի նաև դա, քանի որ իր բանակն անշափ հղոր էր և հաշվվում էր մոտավորապես չորս հարյուր հազար մարդ, որոնցից հարյուր հազարը լավ զինված էին զենք ու զրահով: Այն տեղեկութիւնները քաղվել են այդ շրջաններից՝ եկած առևտրականների բերանից. նրանք նաև տեղեկացրել են, որ նույն Սոֆին սուլթանից և թուրքերից իր նվաճած հողերն արդեն բաժանել էր իր բարոնների և սպանների միջև:

Այդ նույն վաճառականները նաև ավելացնում էին, որ Սոֆի թագավորը մտադիր էր այդ բերդաքաղաքի առումից հետո գնալ՝ դեպի Բաղդադ, ապա դեպի Միջագետք, որտեղից կգար դեպի Բարձր Հայք և Ներքին Հայք, ուր նա ընդհանրապես մեծ դիմադրութեան չէր հանդիպի: Եվ այս ծրագիրը իրագործելուց հետո նա սահմանակից կլիներ մի կողմից Սուդանի իշխան Ալագուլագին, իսկ մյուս կողմից՝ թուրք թագավորին. և այդպիսով կկարողանար հիմնել իր կայսրութիւնն այնպէս, ինչպէս ինքը կցանկանար, կամ էլ կարող էր որոշ ժամանակ մնալ այնտեղ, որտեղ ինքը ներկայումս գտնվում էր:

Այն մասին, թե ինչպիսի խտելություն է տաժում իշխան Սոֆին հրեաների և բուրբերի նկատմամբ և թե ինչպէս է նա օժանդակում քրիստոնյաներին իր հաղթանակներից հետո, քրիստոնյա իշխաններին յուրաքանչյուր դեպքումս յայնչեմբ և իր գործողութիւնների վերաբերյալ բարձր տեղեկություններ

Շահ Իսմայիլն այնքան խորն էր ատում հրեաներին, որ որտեղ էլ նրանց հանդիպեր, աչքերը հանել էր տալիս և ազատ արձակում: Բայց նա էլ ավելի հալածում էր թուրքերին և բոլոր նրանց, ովքեր ընկնում

են իր ձեռքը, չեն խուսափում վատթարագույն մահից: Նա նույնիսկ քանդել էր տալիս նրանց տաճարներն ու մզկիթները: Նա ասում է, որ իր թրի սուր ծայրը երբեք չի դադարի կտրելուց և շարդելուց մինչև այն ժամանակ, երբ որ ինքը վերջ կտա բոլոր նրանց, ովքեր իրենց պաշտամունքը կատարում են կեսօրին՝ ինչպես թուրքերը և մահմեդականներն են անում, փոխանակ մեր՝ քրիստոնյաներիս պաշտամունքի, որը կատարվում է արևածագին: Քրիստոնյաների նկատմամբ նա բարյացակամ է, որովհետև որևէ թշնամական վերաբերմունք չի ցուցաբերում նրանց եկեղեցիների և մատուռների նկատմամբ: Իր հետ տանում է նաև հայ պատրիարքին և մեր դավանանքին պատկանող բազմաթիվ քահանաների ու կրոնավորների, դրանով ցանկանալով ցուցադրել մահմեդական օրենքը խորտակելու, տակնուվրա անելու և կործանելու իր ունեցած մեծ ցանկությունը: Այդ նպատակով նա բազմիցս համոզում է քրիստոնյա իշխաններին, որպեսզի Եվրոպայի հետ համատեղ պատերազմ հայտարարեն Թուրքիային, իսկ ասիական կողմից իրեն օգնություն հարկավոր չէ:

Սոֆիի դեսպաններից մեկը, որն այդ հարցով Սոֆիի կողմից ուղարկված էր Հունգարիայի թագավորի մոտ, հայտնաբերվել և տարվել էր Կոստանդնուպոլիս, որտեղ թուրք ղեկավարության հրամանով կտոր-կտոր էր արվել: Մնացածները, ովքեր դիմել էին քրիստոնյա ալլ իշխաններին, ինչպես, օրինակ, կայսրին կամ թագավորին, կողոպտվեցին վենետիկցիների կողմից, որի համար նրանք զգուշացվեցին վերսկսելու ծնված մեսսիր լոյս Հելիանի կողմից՝ իր հանդիսավոր ձառի մեջ, որ նա թագավորի անունից արեց Մաքսիմիլիան կայսրին: Կարճ ասած, իշխան Սոֆին մեծ սիրով լծվում է Մուհամմեդի օրենքի կործանմանը, որը կաթոլիկական սուրբ հավատի հիացմունքին է արժանանում: Եվ իսկապես, նա արդեն բավական մեծ վնաս է հասցրել թուրքին և մեկ օրվա մեջ կովի ժամանակ սպանել է տասներեք հազար թուրքերի, որոնց առաջնորդն է եղել ներկայիս իշխող թուրք Բայազիտ Օթոմանի* զավակներից մեկը: Այդ Սոֆի կոչեցյալը գրավում էր Արզիմին բազաբը**, որը գտնվում է բուն թուրքական հողի վրա, և այստեղ ամբացել է Կարամանի մեծ պարոն (սենյոր) Ալադուլազ կոչվող մեծ իշխանի օգնությամբ, որը իրեն թույլ էր տվել անցնելու իր հողերի վրայով:

Թուրքը շատ է ցանկանում բանակցությունների մեջ մտնել Սոֆիի հետ՝ իրեն հանգիստ թողնելու խնդրով, դրա փոխարեն տալիս էր ամ-

բողջ Տրապիզոնի կայսրությունը*, սրան ավելացրած նաև երկու միլիոն ոսկի, որպեսզի Սոֆին իր ամբողջ բանակով ետ գնա Պարսկաստան, բայց Սոֆին մերժեց այդ առաջարկությունը, ասելով՝ ինչպես Ալեքսանդրը՝ Դարեհին, որ ինքը ուզում է ամբողջը ունենալ:

Իշխան Սոֆիի հռչակի մասին հասած առաջին տեղեկությունները հայտնի դարձան այն ժամանակ, երբ պայծառափայլ Ռավեստենի կոմս Ֆիլիպը հազար հինգ հարյուր մեկին գնում է Մաթրլեն կղզի՝ թուրքերի դեմ: Իսկ վերջին լուրերը ստացվեցին Հոդոսի պայծառափայլներից, դեմ: Իսկ վերջին լուրերը ստացվեցին Հոդոսի պայծառափայլներից, որոնք դրա մասին նամակով հայտնում էին Քանդըլորին, որն այդ ժամանակ գտնվում էր Յասի կիրճում: Այդ նամակի թվականն էր՝ քսաներկու օգոստոսի հազար հինգ հարյուր տաս, այնտեղ ծանուցվում էր, որ Սոֆին իրեն բանակատեղի է ընտրել Սիրիայի Հալեպ բաղաբի մոտակայքը, որը վերահիշյալ Յասի կիրճից երեք օրվա հեռավորության վրա է գտնվում և Երուսաղեմից շատ հեռու չէ, և որ այդ Հալեպ բաղաբի բնակչությունն օգնություն է խնդրել Սուլթանից, և որ այս վերջինս իր մահմեդականներով և մամլուկներով շատ էր վախենում Սոֆիի հզորությունից, և որ պարզ էր մի բան, որ այդ Հալեպ բաղաբը հավանաբար երկար ժամանակ չէր կարող դիմադրել նրա հզորությանը: Քացի այդ, Հալեպի պարոնը (սենյորը) Սոֆիի կողմից ուղարկված ոչ մի վենետիկցի դեսպանի չէր ընդունել և այդ դեսպանին ուղարկել էր մեծն Կահիրեում նստած Սուլթանին՝ Սոֆիի նամակներով, որոնց միջոցով նա վենետիկի պարոնուհուն (սենյորիային) կոչ էր անում մի ուժեղ բանակ կազմել և ծովի վրայով այն (մի կողմից) հասցնել Բարյութի (Բեյրութի) ափերը և մյուս կողմից էլ դեպի Սուլթանի հողերը: Այդ նույն Սոֆին քրիստոնյա իշխաններին ամեն գնով հորդորում էր բնաջնջելու անհավատներին, եթե, անշուշտ, Պապն էլ հավանություն տար այդ ծրագրին:

P. Raphaël du Mans. Estat de la Perse en 1660. Publié avec notes et appendice par Ch. Schefer. Paris, 1890, Appendice; pp. 259—276.

* Տրապիզոնի հունական կոմենասների կայսրությունը (1204—1461) հարատևեց մինչև 1461 թ., երբ նվաճվեց թուրքական սուլթան Մեհմեդ II-ի կողմից:

* Խոսքը վերաբերում է Բայազետ II-ին (1481—1512 թթ.):

** Նկատի ունի Կարինը (էրզրումը):

Գ Ի Բ Բ Ե Ր Ր Ո Ր Գ

Որտեղ պատմվում է հայերի գերության և արտագաղթի մասին և այն մասին, թե ինչպիսի շախատանքներ են ծավալվել ավգուստինյան ս. հայրերի կողմից՝ նրանց հոռմեական եկեղեցուն հնազանդեցնելու համար:

Գ Լ Ո Ւ Խ 1

որտեղ պատմվում է, թե ովքեր են հայերը և թե որքան են առածել նրանք այդ պատերազմի ընթացքում

Այստեղ նպատակահարմար է խոսել հայերի տանջանքների մասին, որ նրանք կրեցին Պարսկաստանի թագավորի և Մեծ Սուլթանի միջև տեղի ունեցած պատերազմից, ինչպես նաև նրանց բռնագաղթի մասին: Սա կարևոր է այն իմաստով, որ բոլորին պարզ դառնա, թե ինչպիսի դժբախտություններ են եկել այս տանջված ու հալածված խեղճ ազգի գլխին: Ես սա ասում եմ այն մտքով, որ կլինեն մարդիկ, որոնք կարողալով իմ այս գրածը, երևի կխղճահարվեն ու կմտածեն օգնության ձեռք մեկնել կամ սփոփանքի ձև գտնել այդ ժողովրդի ցավը թեթևացնելու, կամ էլ գոնե աստծու ողորմածությունը դիմել, որպեսզի նա այդ ազգի մարդկանց տա ինչպես ժամանակավոր կորով, նույնպես և Երկնայինի նկատմամբ հոգևոր հույս ու հավատ, որոնք ներկայումս բացակայում են նրանց մոտ, բայց նրանք դրա կարիքը մեծապես զգում են: Ես նաև հուսով եմ, որ Աստծու եկեղեցու բազմաթիվ առաջատար ղեկավարներ ժամանակ ու միջոցներ կգտնեն նման մի միջոցառում ձեռնարկելու համար, համոզված լինելով այն բանում, որ Եսայի մարգարեն 18-րդ գլխում այսպես է ասում. «դի երթիցեն հրեշտակք երագունք յազգ հպարտացեալ, յազգ օտար եւ ի շար. զի ոչ եւս որ իցէ քան զնա անդր, յազգ անյոյս եւ ի կոխեալ» (Եսայի, ԺԸ, 2—3): Որովհետև ավետարանի այն քահանաները, որոնց մասին մենք խոսում ենք, դրանք հրեշտակներ են երկրի վրա, և մարգարեն նրանց հետ է խոսում, ուստի և դժվար չէ հասկանալ, որ նրանք Սուրբ Հոգու կողմից են ուղարկված: Եվ մենք այստեղ գործ ունենք այնպիսի մի ազգի հետ, որն ապրում է իր հնագույն հողի վրա և իր իսկ տան մեջ, ու ահա հենց այնտեղից է, որ նա բռնի ուժով ու հարկադրաբար տեղահան է արվում Պարսկաստանի թագավորի կողմից, ինչպես նաև նրանց կողմից, ովքեր նրանց շարունակաբար հալածել են այնպիսի մեծ բավականու-

թյամբ ու այնպիսի կատաղությամբ, որ նրանք ստիպված են եղել և այսօր էլ ստիպված են հեռանալու այն վայրերից, որտեղ իրենք ծնվել ու մեծացել են, թողնելու այն եկեղեցիները, որտեղ իրենց նախնիներն են թաղված, տները, որոնք նրանց ձեռքերով են կառուցված, նրանց ձեռքերով մշակված կանաչին տվող այգիները, պապերից ձեռք բերած ժառանգությունը, մի խոսքով այն ամենը, ինչ նրանց ուրախություն է պատճառում և հաճելի հիշատակներ է արթնացնում: Եվ այս բոլորից հրաժարվելու համար, ընդամենը երկու օր ժամանակ է տրվում: Եվ եթե մենք փնտրում ենք բզկտված ու շափից դուրս շարձարված մի ազգ, ահա նա, այդ ազգը, որը երբ դեռ թուրքերի վասալն էր, նրան վճարում էր բոլոր տեսակի տուրքերը և դեռ դրան գումարած, պատերազմի ժամանակ տալիս էր իր զավակներին (այդպես էր կարգը): Գտնվելով Պարսկաստանի թագավորի իշխանության տակ, ոչ մի տեսակի ապահովության մասին խոսք լինել չէր կարող, եթե անշուշտ Աստծու կողմից որևէ օգնություն չհասներ նրանց: Եթե թեկուզ հնարավոր լինի հօգուտ այս խեղճ ու թշվառ ազգի միջամտել այդ ահարկու ու դաժան ժողովուրդների մոտ, այնուամենայնիվ դրա իրագործումը դժվարությունների հետ է կապված, քանի որ այդ ազգն իր մի կողմում ունի թուրքին, իսկ մյուս կողմում՝ պարսկին, կան նաև թաթարներ և արաբներ, որոնց կողոպուտներն ու հափշտակումները տևական բնույթ են կրում: Իսկ նրանց (հայերի) մոտ գնալու համար հարկավոր է անցնել այդ ազգերի միջով: Ուրեմն, պետք է իմանալ, թե նրանցից ո՞ր մեկն է առավել դաժանը (չնայած բոլորն էլ ծայրաստիճան այդպիսին են): Բայց ամենադաժանները նրանք են, ովքեր նրանց հանդեպ քարեհամբույր վերաբերմունք ցույց տալով հանդերձ, հետապնդում են սակայն մի գլխավոր նպատակ, դա այն է՝ նրանց ներգրավել իրենց աղանդի մեջ: Գեո ավելին, մարգարեն նրանց ասում է, որ դա մի ազգ է Expectantem et conculatam*: Եթե նույնիսկ խեղճ մարդը փոքր ինչ հույսով է ապրում, այս խեղճ ժողովուրդը սակայն այդքանն էլ չունի: Նրանց համար լավի նկատմամբ հույսն այնքան հեռու է, որ դրա մասին նույնիսկ չեն էլ ուզում մտածել: Նրանք իրենց հույսը դնում են միայն մի որևէ քրիստոնյա թագավորի վրա, որը կգա և այդ բոլոր մահմեդականներին կպատժի: Նրանց այդպես է պատգամել սուրբ Գրիգոր Լուսավորիչը, որին «հայերի հայր» են անվանել: Եվ որպեսզի ցույց տամ, թե հայը որքան է արհամարհված և ոտքերի տակ տրորված, ես պետք է նաև ավելացնեմ այն, որ մահմեդականները գոհանում են այնքանով, որ նրանց անվանում են հայ, բայց դա անում

* Այդի ընկած ու ոտնահարված:

են արհամարհանքով, հաշվի չառնելով այն իրողութիւնը, որ դա իսկապես նրանց ազգի անվանումն է: Նրանք (մահմեդականները) ավելի շահագրգռված են հավատափոխ անելու մի օտարի, քան հային, որովհետև օտարներին հավատափոխ անելը բավական դժվար է, իսկ հային մահմեդական դարձնելը իրենց համար այնքան էլ հետաքրքիր չէ: Քե գետերի հուններից դուրս գալը որքան վնաս է հասցրել այդ երկրին, դա շատ պարզ պատկեր է նրանց համար, ովքեր գիտեն, թե Հայաստանի համար ինչ նշանակութիւն ունի լինել թուրքերի և պարսիկների միջև, քանի որ այդ երկու երկրների իշխանների ընդհարումների վայրը սովորաբար եղել է Մեծ Հայքը: Եվ քանզի խոշոր մարտերը տեղի են ունեցել այս երկրում և այս երկրի համար, ուստի դժվար չէ պատկերաւորել, թե քանի-քանի անգամներ է ավերվել այն, իսկ վերջին անգամ նա այդ նույն բախտին է արժանացել Պարսկաստանի թագավորի կողմից:

Վերադառնալով մեր պատմութեանը, մենք պետք է ասենք, որ Հայաստանը բաժանված է Մեծի և Փոքրի: Մի կողմ թողնելով Փոքրը, քանի որ նրա մասին տվյալ պարագայում ոչինչ չունենք ասելու, մենք կպատմենք Մեծի մասին: Որոշ աղբյուրների համաձայն, նա իր անունը կրեցրել է Արմենուս բառից (Յասոնի բարեկամը): Պարսկերեն նրան ասում են Արարատ, Լորենս Անանիացին, Փան Բոտերոն, Անտուան դե Հերբերան Հայաստան նահանգին տալիս են թուրքոմանիա անունը, չնայած որ ամբողջ Ասիայում ոչ մի նահանգ չես գտնի, որ այդպես կոչվեր, չնայած որ այնտեղ դեռևս որոշ քանակութեամբ թուրքմեններ կան: Նրանք (թուրքմենները) իրենց անունը ո՛չ տալիս են, ո՛չ էլ ստանում որևէ հատուկ գավառից: Այս անվանումը պարզապես իրարից տարբերում է ռասաները (ցեղերը): Նրանց անվանում են թուրքմեններ, այսինքն մարգիկ, որոնք չքել են իրենց օրերը: Այն առաջանում է թարքի (Tarqui) և իման (yman) բառերից, որոնք նշանակում են՝ լքել և օրենք: Եվ քանի որ նրանք ծագումով քրիստոնյաներ են եղել, բայց լքելով իրենց օրենքը, դարձել պարսիկներ, ուստի և նրանց անվանել են թուրքմեններ*: Նրանք ավելի մեծ հարգանքի են արժանանում հենց նրա համար, որ թողնելով իրենց քրիստոնեական հավատը, ընդունել են մահմեդականություն: Կան ուրիշներ, որոնց ուումելի (Rumeli) են անվանում, որովհետև սրանք ռասայով թուրքեր են, որոնց կոչում են

* Անտոնիո դե Գոուվեայի այս բացատրությունը գիտական հիմք չունի: Հայաստանը թուրքոմանիա առաջին անգամ անվանում է Մարկո Պոլոն՝ նկատի ունենալով երկրի որոշ մասերում թուրքական ցեղերի սովորացումը:

(նակ) ուումներ (Rumès)*: Մյուսները սուննիներ են՝ նրանք աղանդով արաբներ են: Կան նաև շիաներ, որոնք իրենց համար որպես մարգարե ընդունել են Ալիին: Բայց սրանցից և ոչ մեկը առանձին գավառի չեն կցված, քանի որ այդպիսին գոյութիւն չունի: Այս բոլորը հատուկ ռասաների կամ աղանդների անուններ են, ինչպես օրինակ թուրքմենները, որոնք իրենց անունը ստացել են հենց իրենց թողած օրենքից և ոչ թե ինչ-որ գավառից, որտեղ նրանք ապրելիս են եղել և որտեղից քոչել են:

Հայաստանի նահանգը գտնվում է երկու Մեդիանների (Medies) միջև: Մեծը, որին պարսիկները Ադրբեջան (Adelbejon) են անվանում և փոքրը, որին Շիրուան (Siruan) անուն են տալիս, իսկ ժամանակակիցները Շերուան (Seruan) են ասում: Այն մի կողմից սահմանակից է Ասորեստանին (Assirie), որն այսօր էրգրում անունն է կրում**: Գլխավոր քաղաքի (մայրաքաղաքի) անունը Երևան (Eruan) է և ոչ թե Վան, ինչպես անվանում են վերոհիշյալ հեղինակները: Սա հայ թագավորների բնակատեղին է և այստեղ է գտնվում նրանց արքունիքը: Այստեղից էրեք մղոն հեռավորութեան վրա գտնվում է այն վայրը, որին թուրքերը Ուշքլիսա*** (Vtch clia), կամ Երեք եկեղեցի անուն են տալիս, որովհետև իսկապես այնտեղ այդքան եկեղեցիներ կան, կառուցված իրենց հոգևոր առաջնորդ ս. Գրիգոր Լուսավորչի կողմից: Այս վայրը հանդիսանում է նաև իր բնակատեղին: Ճիշտ է, որ Վան քաղաքը թուրքերի գրավումից հետո մեծացել և սիրունացել էր, որովհետև այս վերջիններս այնտեղ կառուցել են մեծ նշանակութիւն ունեցող մի բերդ: Այստեղ է նաև թուրք փաշայի նստավայրը: Նշված քաղաքը սահմանակից է Ասորեստանին և Հայաստանին:

Այդ ամբողջ նահանգը նվաճվեց համարյա միաժամանակ Մեդիայի հետ: Այդ ժամանակ Պարսկաստանում թագավորում էր Մեհմեդ Խոնդարանդան (Codabandā), ներկայումս իշխող Շահ Աբասի հայրը: Այս ժողովուրդը անընդհատ հալածանքների ու տանջանքների է ենթարկվել այդ երկրներում (Թուրքիա և Պարսկաստան) իշխող տերերի՝ մեկը մյուսին փոխարինելու ու նրանց միջև տեղի ունեցող պատերազմների պատճառով: Թուրքերն իրենց դաժանութեամբ մեծապես ավելացրել էին գանձվող հարկերը, որի պատճառով էլ հայերը նախընտրում էին լինել ավելի մեղմ իշխանություն գործադրող պարսիկների ազդեցութեան ներքո: Սակայն այդ խեղճերին շատ քիչ է պատահել

* Օսմանցիները հույներին անվանում էին «ուումեր», նկատի ունենալով, որ Բյուզանդիան իրեն հին Հռոմի ժառանգորդն էր համարում, իսկ թուրքերն, իրենց հերթին, հավարում են բյուզանդացիների հետնորդները:

** Նման անվանումը կրողացր հեղինակների մոտ ավանդաբար է տրվում, որը ակնհայտ սխալ է: Բարձր Հայքը Հայաստանի անբաժանելի մասն է:

*** Ուշքլիսան արևելյան աղբյուրներում էլ միաձայն տրված անունն է:

իրենց ցանկութիւնն իրականացած տեսնել: Ընդհակառակը, հաճախ է պատահել, որ փոխանակ լավանալու, նրանց վիճակն ավելի է վատացել, և այդ մարդիկ մշտապես նվաճված են եղել և գերեզարկված:

Հազիվ հայերը մի քիչ շունչ էին քաշում տեղի ունեցած պատերազմներից ու սկսում վերականգնել թուրքերի կողմից ավերված իրենց քաղաքներն ու տները, երբ Պարսկաստանի թագավորի խելքին փշում էր վերստին ձեռք բերել իր նախնիների կորցրածը: Եվ քանի որ կորուստների հիմնական մասը գտնվում էր Հայաստանում, ուստի և Մեդիան իր մայրաքաղաք Թավրիզով (Tanaï) գրավելուց անմիջապես հետո նա ձեռնարկեց մյուս արշավանքը: Եվ չնայած հանձնվող քաղաքներն ավերելու ու կողոպուտն արգելելու մասին հրամանի առկայութիւնը, ինչպես պատահել է Զուլֆայում (Yulfai), որտեղ բնակիչները այնտեղ ապրող շատ քիչ թվով թուրքերին սպանել ու մարմինների մնացորդները ցցերի վրա խրելով գնացել էին թագավորին դիմավորելու, այստեղ, սակայն, չկարողացան նույն ձևով վարվել, ինչպես Զուլֆայում՝ կամ անկարողութեան պատճառով, կամ այնտեղ գտնվող թուրքական զուսարտակի ներկայութեանց վախեցած, կամ էլ սրբապետ շջանկանալով նույնանման բարի կամեցողութիւն ցուցաբերել թագավորի հանդեպ, ինչպես դա արվել է Զուլֆայում, ուստի և դա շարժեց նրա (թագավորի) դայրույթը և բանակի կողմից իրագործվեցին այնպիսի ավերածութիւններ, դաժանութիւններ ու կոտորածներ, որ այս նահանգի խելճ բնակիչները զրկվեցին իրենց ամբողջ ունեցվածքից: Աչքի բնկնող և մարդաշատ քսան քաղաքներ անմարդկայնորեն ամբողջովին կողոպտվեցին, զեռ չհաշված այն փոքր քաղաքներն ու գյուղերը, որտեղ մեծ թվով մարդիկ էին ապրում: Միայն Երևանի տարածքի վրա ապրում էր հազար հինգ հարյուր մարդ, իսկ մնացածներում՝ չորս կամ հինգ հարյուր բնակիչ: Գլխավոր քաղաքները հետևյալներն էին. Երևանը (Eruan), Նախիջևանը (Nachivan), Շարուրը (Charur) և Ազուլխը (Glis):

Այս քաղաքները կողոպտվեցին ու ավերվեցին, եկեղեցիները սրբապղծվեցին և վերածվեցին ախոռների, նկարները տեղերից հանվեցին ու կրակի զոհեր դադան, Et sanctum carum concuicatum*: Ինչը որ սուրբ էր այդ բոլորի մեջ, արժանանում էր վատթարագույն վերաբերմունքի: Մահմեդականը սուրբ նշխարը ձեռքին բռնած ու ձին հեծած, վազում ու բարձրաձայն գոչում էր՝ ահավասիկ քրիստոնյաների աստվածը: Այստեղից ինձ համար պարզ երևում է, որ մեր Տերը բանտ մուտք չի գործում միմիայն արդար մարդկանց հետ, ինչպես նա

արեց Հովսեփի նկատմամբ, այլ նաև մեծ մեղքեր գործած հայերի հետ: Ես այսպես եմ մտածում, որովհետև նկատել եմ, որ նրանք (հայերը) ավելի քիչ են ազդվում իրենց հասցված վիրավորանքներից (կրոնական հարցերի շուրջ), քան նրանցից, որոնք ուղղակիորեն ուղղված են լինում իրենց անձի դեմ:

Ուստի և մի կողմ թողնելով այն բոլոր վիրավորանքները, որոնք հասցվեցին եկեղեցիներին և այլ սրբութիւններին և խոսելով յուրաքանչյուր անհատին հասցված վնասների մասին, մենք պետք է խոստովանենք, որ շատ երկար ժամանակ տեւած կողոպուտները այդ խելճերին զրկեցին նույնիսկ իրենց մարմինները ծածկող հագուստներից: Գողերը նրանց վրա թողնում էին միայն այն, ինչ համարվում էր անարժեք: Այդ խելճերը ոչինչ չէին կարող թաքցնել, քանի որ սուրբ ձեռներին նրանք դաժանորեն խելճ կանանց սպառնում էին սպանել, եթե չխոստովանեին իրենց թաքցրած արժեքների տեղերը: Նույն ձևով էին վարվում նաև գյուղերում, և դա շարունակվում էր այնքան, որքան ժամանակ նրանք նստած էին լինում քաղաքներում: Նրանք հարյուրից ոչ պակաս խմբերով՝ կողոպտելու նպատակով գնում էին գյուղերը և անասելի վնասներ հասցնում խելճ ու թշվառ ժողովրդին:

Ամեն ինչ կողոպտելուց հետո, նրանք ստրկացնում էին ինչպես արու, այնպես էլ էգ երեխաներին՝ կամ իրենց ծառայեցնելու համար, կամ էլ վաճառելու նպատակով: Սրանից հետո հերթը գալիս էր երիտասարդ կանանց ու աղջիկներին, որոնց գերեզարում էին ու վայրենաբար իրենց զգայարանների սահանջը ազահորեն բավարարելուց հետո կաս վաճառում էին, կամ էլ տանում հանրատները, որտեղ նրանց միջոցով փող էին վաստակում: Նման ձևով ստրկացած կանանց ու աղջիկների թիվը, ըստ որոշ մարդկանց բերած վկայութիւնների, հարյուր հազարից ավելի էր: Եվ իսկապես, եթե նկատի ունենանք, որ յուրաքանչյուր տեղից առնվազն տասը հոգի են վերցնում (և սա նվազագույնն է), այդ թիվն անպայման ապահովված կլինի, քանի որ այս նահանգում քաղաքները, գյուղաքաղաքները և գյուղերը մեծ թիվ են կազմում: Սա սրտաճմլիկ մի տեսարան է, որը կարող է հուզել ամենաքարսիրտ մարդուն անգամ, երբ նա տեսնի, թե ինչպես չորս մեջ բաժանում երեխաներին, երիտասարդ աղջիկներին ու կանանց, որոնք իրենց գեղեցկութեամբ ու վսեմ կեցվածքով կարող են հմայել նրանց դիտող ամեն մարդու: Արդարև, այդ ազգին պատկանող կանանց մեծամասնութիւնը շատ գեղեցիկ է: Մարերը փաթաթվում էին իրենց զավակներին, իսկ այս վերջիններն իրենց մայրերին, և նրանց ճիչերն ու ազաղակները կսկիծ էին առաջացնում բոլորի սրտերում:

* Եվ իրենց հոգու համար անգնահատելի սրբութիւնների ոտնահարումը:

գլխավոր գյուղերն ուղարկվեցին զինվորական գումարտակներ, որպես-
զի նրանք այդ խեղճերին ստիպեն կատարել հրամանը: Եվ այդ թշվառ
մարդիկ ստիպված եղան ճանապարհ ընկնել, իրենց ետևում թողնելով
սիրած հայրենիքը: Նրանք գնում էին, որպես առաջնորդ ունենալով ոչ
թե բերանից դուրս եկող հրամաններն ու սպառնալիքները, այլ սրի
սպառնալիքը: Երբ քիչ թե շատ հանգստանալ էր պետք, երդվելով
թագավորի անունով, զինվորները չէին թողնում այդ խեղճերին մի
քանի ժամ ավել հանգստանալ ու ստիպում էին շուտ ճանապարհ
ընկնել, հակառակ դեպքում, ըստ իրենց տրված հրամանի, իրենք
կկտրեին և նրանց, և իրենց կանանց ու երեխաների գլուխները ու
կրակ տալով նրանց բնակավայրերը, բոցերի մեջ կոշնչացնեին նաև
իրենց: Եվ գործը հասավ այնտեղ, որ նրանք, ովքեր ձգձգում էին
իրենց գնալը, հենց իրենք էլ սկսեցին աճապարել, գնալով փողոցից
փողոց ու հորդորելով մյուսներին, որպեսզի թողնեն քաղաքները, գյու-
ղաքաղաքներն ու գյուղերը:

Այդ խեղճ իրարանցումը, լացը, ճիչերն ու աղաղակներն այնպիսի
չափի էին հասնում, որ ամենաքարսիրտ մարդու սիրտը կսկիծով էր
լցվում: Այդ վիճակն ստեղծվել էր այն պատճառով, որ արդեն հնա-
րավոր չէր այնտեղ մնալ, իսկ այնտեղից հեռանալը անմարդկային մի
երևույթ էր: Պատահում էին մեծ թվով կանայք, որոնց ամուսինները
մահացել էին հանքերում աշխատելիս կամ հողային աշխատանքներ
կատարելիս (այդ մասին արդեն խոսել ենք) ու նրանք մնացել էին
հինգ-վեց երեխաներով, որոնք բավական մեծ էին՝ գրկած տանելու
համար, կամ շատ փոքր՝ ոտքով գնալու համար: Ինչպիսի խղճահա-
րություն էին առաջացնում մարդկանց մոտ, երբ լսում էիր նրանց ու
տեսնում նրանց, արարքները քաղաքի դռների մոտ: Նրանցից դմանք
փոխվում էին գետնին, անընդհատ համբուրում փոքրիկներին: Ուրիշները
հրաձեռն էին տալիս իրենց հայրենիքին ու հայրենի տանը: Այս ամե-
նը զուգակցվում էր ցավալի խոսքերով ու խղճահարում ծխականնե-
րին: Եվ այսպես, ճիչերով ու աղաղակներով իրենց նախկին հայրենի-
քից դուրս գալուց հետո, նրանք ուղղութուն վերցրին դեպի Քավրիզ
քաղաքը, այդտեղից էլ դեպի Պարսկաստանի խորքը: Նրանք բոլորը
միասին չէին գնում, որովհետև դա հնարավոր չէր: Եվ այդ արտագաղ-
թող թշվառ մարդկային զանգվածը, առաջանալով մեկ տեղ, խուսա-
փում էր այն վայրերից, որտեղ թուրքերը են ապրում: Տեղափոխվում
էր ավելի քան վաթսուներեք հազար ծուխ: Նրանք ճանապարհին հանդի-
պում էին բազմաթիվ քաղաքների, գյուղերի և 2000-ից ավելի բնակիչ
ունեցող գյուղաքաղաքների: Այս ժողովուրդը (ինչպես ասում էինք)
բոլորը միասին չէին քայլում և չէին էլ կարող քայլել: Նրանք գնում

էին խմբերով և քարավաններով ու գնում այն ուղղութուններով, որոնք
իրենց կտանեին նշանակված քաղաքները, գյուղաքաղաքները և գյու-
ղերը:

Ճանապարհ ընկնելուց հետո, այդ խեղճերի համար առաջին ան-
պատեհությունը մոտալուտ ձմեռն էր, որն այս շրջանում բավական
խիստ է լինում: Եվ քանի որ նրանց մեծ մասը կողոպտվել էր ճանա-
պարհին, հետևաբար հագուստի տեսակետից խեղճ վիճակում ստիպ-
ված լինելով գիշերել դաշտերում, բաց երկնքի տակ, նրանցից շա-
տերը չգիմացան մոտալուտ ձմեռվա պայմաններին և կնքեցին իրենց
մահկանացուն: Շատերի ոտքերի մատները ցրտահարվեցին՝ դրանց
մասյին մասը թափվեց, մնացին ոսկորները: Հավաստիացնում են նաև,
որ մի շարք կանայք, ցանկանալով քիթը մաքրել, պոկեցին ցրտահար-
ված քթի մի մասը: Ես չեմ կարող շճավատալ այս բոլորին, որովհետև
ես անձամբ գիտեմ, թե նույնիսկ լավ հագնված մարդը որքան է ցըր-
տից տանջվում այս շրջաններում:

Չնայած ցրտի ազդեցությունը բավական մեծ էր նրանց վրա, այ-
նուհանդերձ դա այնքան ծանր հետևանք չունեցավ (քանի որ ապրելով
այս շրջաններում, նրանք քիչ թե շատ սովոր էին այդ ցրտին), որքան
սովը, որը, տնից ուտելիքի քիչ պաշար վերցրած լինելու հետևանքով,
նրանց ընկերակցում էր ողջ ճանապարհին: Եվ այժմ, երբ մեզանից
յուրաքանչյուրն ուզենա պատկերացնել, թե ի՞նչ է տեղի ունեցել այդ-
պիսի պայմաններում, պետք է փառք տա Աստծուն, որ ինքը հեռու է
մնացել այդ պատուհասից, այդ մեծագույն շարիքից: Մենք այդ տանջ-
վող ժողովրդի մեջ պետք է տեսնենք մի քրիստոնյա ժողովրդի, որը
երկար ժամանակներից ի վեր հավատ է ընծայել սուրբ երբորություն-
ները, աստծու որդու մարմնացումին և եկեղեցական խորհրդի կատար-
մանը: Նրանք թափառել են և այսօր էլ թափառում են ոչ միայն այն
պատճառով, որ հնազանդ չեն եղել Հռոմի Պապին, այլ նախևառաջ
տգիտության պատճառով: Եվ նայելով այս խեղճ մարդկանց տան-
ջանքներին, որոնց վրա կարծես իջել էր աստծու պատիժն ու մտրակը,
մենք, այդ նույն աստծուն պիտի փառաբանենք այն բանի համար, որ
մեզ զերծ պահեց նման տանջանքներից: Մենք պետք է կարեկցենք հա-
լածված և իրենց հայրենիքից վտարված այդ խեղճ քրիստոնյաներին,
որոնք, շարունակելով իրենց ճանապարհը, ընկան այնպիսի անելանելի
դրություն մեջ, որ ոչ իրենք, ոչ էլ իրենց փոքր երեխաները, ոչինչ չու-
նեին ուտելու, քանի որ այն ճանապարհներով, որոնցով իրենք գնում
էին ըստ թագավորի հրամանի, զինվորների կողմից ամբողջովին կո-
ղոպուտի էր ենթարկված, և այդ վայրերում գտնվող բոլոր գյուղերն ու
քաղաքները ավերվել ու հրո ճարակ էին դարձել: Տեղափոխության ժա-

մանակ այդ խեղճ կանանց զգալի մասն իրենց ուսերի վրա երեխաներ էին տանում, մեկը՝ մի ուսի, իսկ երկրորդը՝ մյուսի: Այդ կանանց կողքով գնում էին մի քիչ ավելի մեծ տարիք ունեցող ու հետիոտն զնացող էրեխաներ: Նրանք բոլորն առավոտյան արթնանալիս հաց կամ մայրական ստինքներ էին փնտրում, որոնք սակայն չորացած էին մի քանի օր ոչինչ կերած չլինելու պատճառով: Այնքան եմ հուզվում, որ շեմ կարող զսպել իմ արցունքները, երբ վերհիշում եմ այն ամենը, ինչ պատահեց ճանապարհին այդ կանանցից շատերին: Նրանք, արդեն մահու շափ հոգնած ու դադրած՝ իրենց երեխաներին ուսերի վրա տանելուց, կանգ էին առնում ճանապարհի կեսին ու իրենց երեխաների հետ նստում գետինին: Մնացածները շարունակում էին իրենց ճանապարհը: Ճանապարհի կեսին սակայն նրանցից շատերն իրենց կյանքին վերջ էին տալիս սովի ճիրանների մեջ: Նրանք դեռ պետք է երախտապարտ լինեին, եթե մինչ իրենց մահկանացուն կնքելը, ականատես չլինեին իրենց զավակների մահվանը, որոնց ապրեցնելու համար այդ խեղճ մայրերը ոչնչով չէին կարող օգնել: Ուրիշները իրենց մի կերպ անտառներն էին գցում, հույսով, որ միգուցե այնտեղ ուտելու մի որևէ բան կճարեն իրենց և երեխաների համար: Սովորաբար, սակայն, նրանք նույնպես զատապարտված էին մահվան:

Բայց ի՞նչ պատկերացում կարելի է ունենալ այն մայրերի մասին, որոնք շարունակելով իրենց ճանապարհը, տեսնում էին ընդհանուրից հտ մնացած և քայլելու այլևս անկարող երեխաներին: Ինչպե՞ս վարվեին այդ մայրերը, երբ իրենց կրծքի վրա ունեին նաև մի ուրիշին, և դեռ մեկն էլ ուսերի վրա: Ո՞ր մեկին տանեին իրենց հետ: Եվ այդպես, շատ էրեխաներ մնում էին կես ճանապարհին ու մահանում: Ինչպե՞ս կարելի է շպտամել այն ցավերի ու տանջանքների մասին, որոնց ենթարկվում էին այդ խեղճ կանայք, երբ այդ անմեղ էակներին տեսնում էին մեռնելիս՝ շկարողանալով նույնիսկ փոքր-ինչ սփոփել ու օգնել նրանց: Կարիքն ու սովը զնալով ավելի էին սաստկանում...

Տեղահանությունից շոք տարի անց ես այցելեցի այն գյուղերը, որտեղ Թագավորի հրամանով այդ գաղթականները տեղավորվել էին իրենց ընտանիքներով, և նրանց գտա ծայրաստիճան աղքատության մեջ: Կարելի է ենթադրել, որ եթե այդ խեղճերը այդպիսի վիճակում էին այս մարդաշատ վայրերում, ինչպիսի թշվառ ժամանակներ են նրանք անցկացրել անապատներում՝ սով, հիվանդություն, աղքատություն: Նբանցից առավել հարմարվածներն ուտում էին մի հաց, որը պատրաստված էր այնպիսի մի հատիկից, որը հողի գույն ու համ ունեք, բայց ավելի դառն էր: Նրանք կրում էին աղքատիկ հագուստ՝ իրար կողքի կարած՝ կարկատած զանազան կտորներ: Վաստակ ձեռք

բերելու համար տղամարդիկ գնում էին հարևան գյուղերը, իրենց հետ տանելով նաև երեխաներին, որոնք սնվում էին փողոցներում գետնին գցած սեխի կեղևներով, ինչպես նաև տարբեր խաշած խոտերով, այսպես քարշ տալով թշվառականի իրենց կյանքը: Սպահանի մեր հայրերը նրանցից մի քանիսին առն բերեցին: Նրանց մեջ կար մի փոքրիկ կույր երեխա. երբ նրան հարցրին, թե ինչու էր նա ողորմություն խնդրում ոչ թե Աստծու, այլ՝ Ալլիի անունով, նա պատասխանեց, որ մարդիկ ավելի հոժարակամ (ողորմություն) են տալիս ի սեր Ալլիի (Մահամեդի փեսան և նրա հաջորդը խալիֆաթում), քան՝ Աստծու: Շիրազի սուլթանի միջոցով ես արտոնություն ստացա հոգ տանել երեք գյուղի, որոնք իրար միացնելով դարձրի մի մեծ գյուղ, և այնտեղից կարողացա հեռացնել բոլոր մահամեդականներին, որպեսզի հողը մշակեն միայն հայերը, և ինչպես մահամեդականներն էին անում՝ ըստ տեղի սովորության, պարոնին վճարեն հողի վարձն ու տուրքը: Ծա գիտեմ, որ Պարսկաստանում այդպիսի վիճակում են գտնվում շատ ու շատ գյուղեր, որոնք հոգևոր սննդի անշափ մեծ կարիք են զգում: Այդ նպատակով էլ, զոհելով իմ հանգիստն ու անվտանգությունը, ես սիրահոժար մեկնում եմ Իսպանիա և Հնոմ՝ փորձելու համար որոշակի օգնություն հասցնել աղքատներին արված այդ ժողովրդին և Աստծուց խնդրելու մի ինչ-որ ձևով սփոփել նրան:

Հաղթահարելով բոլոր դժվարությունները, այդ խեղճ մարդիկ, վերջապես, խմբերով հասան Թավրիզ, որտեղ Թագավորը փորձեց ամեն ձևով նրանց օգնել և պաշտպանել: Նույնիսկ, երբ մի հայ նրա մոտ գալով զանգատվեց, թե մի մահամեդական գերեվարել է իր կնոջը և, փող շահելու նպատակով նրան հասարակության տրամադրությանն է հանձնել, նա (Թագավորը) նրան իր մոտ բերել տվեց և մի լավ պատժելուց հետո, այդ կնոջը վերադարձրեց ամուսնուն և մի հրաման արձակեց, որով ծանուցվում էր, որ ոչ մի հայ կամ հայուհի գերեվարվելու ենթակա չէ: Նման հրամանագիրը, իսկապես որ, մի մեծ լավություն էր այդ խեղճերի համար: Այդ հրամանը, սակայն, բավական ուշացումով էլ լույս ընծայվել, որովհետև հազարավոր մարդիկ ցրվել էին ամբողջ տերություն մեջ, նույնիսկ և շատ հեռու վայրեր և այդ պատճառով էլ, մեծ թվով աղջիկներ և փոքր երեխաներ, անտեղյակ լինելով այդ հրամանին, իրենց ազատությունը գտնելու համար շկարողացան դիմել արդարադատությանը: Բայց նրանք, ովքեր արքունիքին մոտ էին, կարողացան օգտվել այդ հրամանից և գտան իրենց այնքան երազած աղատությունը:

A. de Gouvea. Relation des guerres et victoires obtenues par le roy de Perse Cha Abbas contre les empereurs de Turquie Mahomet et Ahmet son fils. Rouen, 1646, pp. 341—362.

Սպաճան, 15 փետրվար 1665 թ.

Իմ շատ սիրելի պարոն եղբայրս,

Ժամանել եմ այստեղ անցած տարվա դեկտեմբերի 14-ին, առողջությունս շատ լավ էր և ինձ ընկերակցում էր մի շատ համեստ մարդ, ազամանդի գործով զբաղվող մի ֆրանսիացի: Թավրիզից մինչև այստեղ քսաներկու օր ճանապարհ ենք անցել: Ինձանից տասներկու օր առաջ այստեղ էր եկել նաև պարոն Տավերնիեն: Նա օթևանել էր ֆրանսիացի մի ոսկերչի մոտ և ինձ հասկացրեց, որ ես չեմ կարող նրա մոտ մնալ, ուստի և ստիպված էի գնալ պորտուգալացիների սուրբ Ալգուատինյան հայրերի վանքը: Այստեղ ես ինձ շատ ավելի լավ եմ զգում, քան այլուր, քանի որ հարկադրված չեմ լինի ցոփությամբ զբաղվել, ինչպես անում են, օրինակ, ֆրանկները, որոնք բնակվում են Զուլֆալում և այդպիսով նրանք մեզ հաճախ այցելելու հնարավորություն չունեն: Մենք նրանցից հեռու ենք այնքան, որքան Մոնտուարը Գրանտից: Այս վանքը բավական գեղեցիկ է և լավ է պահպանվում: Տան շուրջ բոլորը գեղեցիկ պարտեզ է, իսկ ինչ վերաբերում է եկեղեցուն, այն բավական մեծ է այդ երկրի համար և նույնիսկ կնսեմացների Ֆրանսիայում գտնվող բավական մեծ թվով եկեղեցիների, որոնք, ի միջի այլոց, գեղեցիկ են համարվում: Վերևից մինչև ներքև այն զարդարված է մահմեդական ոճով (moresques), ուր ոսկեզօծումը չի խնայված: Եկեղեցու խորանի զարդեղենները բավական հարուստ են, իսկ հատակը ծածկող գորգերը նույնպես շատ գեղեցիկ են: Վերջապես, այստեղ ակնհայտ է վեհությունը նախկին պորտուգալացիների, որոնցից այստեղ մնացել են միայն հիշողություններ, քանի որ հոլանդացիներն ամենուրեք դրանք ոչնչացրել են: Այնուհանդերձ, այստեղ դրանցից մի հատ (գորգ) կա՝ հարուստ մի տան մեջ, որի տերը Պորտուգալիայի թագավորի ինտենդանտն (հավատարմատար) է Բանդար Կոնգոն: Նա մի շատ աղնիվ անձնավորություն է և ես նրա հետ բարեկամական կապերի մեջ եմ մտել: Սա այստեղ հաստատված կրոնավորների առաջին տունն է:

Այստեղ երեք սուրբ հայրեր կան և մեկ եղբայր (ֆրանցիսկյաններ): Բոլորն էլ հոլակապ մարդիկ են, առատաձեռն և բարեբար: Քաղաքում կա նաև երկու վանք, որոնցից մեկը Բոկոտն Կարմելիտյան սուրբ հայրերին է պատկանում, իսկ մյուսը՝ Կապուցին (վեղարավոր)

սուրբ հայրերին, որտեղ էլ գտնվում է պարոն Թեվենոն: Նա փարիզեցի ազնվական է, որն արդեն երեք ամիս է, ինչ գտնվում է այստեղ և մեզ հետ միասին անցնելու է Հնդկաստան, որի համար ես անշափ ուրախ եմ, քանի որ նա կաթոլիկ է, միաժամանակ՝ իմ բարեկամը: Հիսուսյան (ճիզվիտ) սուրբ հայրերը քաղաքից հեռացել ու գնացել են բնակություն հաստատելու Զուլֆալում, որտեղ, ինչպես ասացի, գտնվում են մեր ֆրանկները, թվով յոթ հոգի՝ երկու ժամազործ, մեկ ոսկերչ և երեք ամուսնացած զինագործ: Այստեղ է նաև պարոն լիթուալը, որը հնագույններից է, իրեն շատ լավ է զգում և ապրում է իշխանական կյանքով: Նա թագավորի ծառայության մեջ չէ: Այդ յոթ ֆրանսիացիներից միայն երկուսն են կաթոլիկ: Բոլորն էլ թագավորին վստահություններ չեն մարդիկ են: Ինչ վերաբերում է քաղաքի նկարագրությանը, դուք դրա մասին մանրամասն կգտնեք պարոն Դելլա Վալլեի մոտ*, որն այն կատարել է բժախնդրորեն: Աչքի ընկնող այլ շինություններ չկան, բացի մի կամուրջից՝ Շիրազի ճանապարհի վրա, որը նույնքան գեղեցիկ է, որքան Զուլֆալինը և կառուցված է նույն ձևով:

Թագավորին տեսել եմ մեկ անգամ: Նա լավ կազմվածք ունի և կլինի մոտավորապես երեսուն տարեկան: Նա զբոսնելու էր գնում գետափ և հետո ուներ մոտ երկու հարյուր ձիավոր, որոնք անկազմակերպ առաջանում էին: Նա միանձնյա իշխան է, բայց այն ձևով, ինչ ձևով այստեղ կառավարում են, մեր մոտի հետ համեմատած, կարելի է ասել ավելի շուտ դաժանություն է, քան իշխանություն: Պարոն Տավերնիեն նրան հայելիներ և զարդեղեն է ծախել 4000 թուման գումարով: Թումանը արժե տասնհինգ պիաստր, իսկ մեկ պիաստրը՝ երեք ու մեկ քառորդ արասի: Նա արժանացել է հազար շնորհակալության, ինչպես նաև մի շատ գեղեցիկ խալաթի: Դա պարսկական ոճի մի ամբողջ հագուստ է: Այդ գումարը նրան վճարվել է կանխիկ և դրա հետ մեկտեղ նրան է հանձնվել մի գեղեցիկ անձնագիր, որը նրան ու իր ցանկացած մարդկանց արտոնություն է տալիս ձրի շրջելու ողջ երկրով մեկ: Իր վաճառականներից ես մեր հաշվի համար ոչինչ չեմ ստացել, որովհետև այնտեղ չեմ եղել: Իր առևտրական ընկերն է եղել վեղարավոր (Կապուցին) հայր սուրբ Ռաֆայելը, որը նրան ծառայել է որպես թարգմանիչ: Չնայած նա հեռու է ապրում, բայց դա ինձ չի խանգարում գնալու Զուլֆա նրան այցելության: Կարծում եմ, երբ իր գործերն ավարտի, յոթ-ութ օր հետո մենք կգնանք Բանդար դ՛Հորմուզ, կամ միգուցե գնանք ուղիղ Սուրաթ կամ Բենգալ, որպեսզի վերջնակա-

* Նկատի ունի XVII դարի 20-ական թվականներին Իրանում Շահ Աբասի մոտ գտնվող իտալացի Պիետրո դելլա Վալլեի՝ Իրանի ու Մերձավոր արևելքի կացությունը վերաբերող բազմաճառոր աշխատությունը:

նապես վաճառենք մեր ունեցածը, որովհետև ասում են, որ Շէաստա-
բանը կամ այն իշխանը, ում հետ առևտուր է արել պարոն Տավերնին,
այնտեղ կառավարիչ է: Եթե այնտեղ գնալու լինենք, մեր ճանապար-
հորդությունը կերկարի մոտ մեկ տարով: Ես այստեղ ապրում եմ ին-
կոգնիտո (ծպտյալ), վախենալով ծախսերից, հատկապես հագուստե-
ղենի, որը շատ թանկ է: Պարսկաստանում երբեք այսպես չի եղել,
այդ պատճառով էլ ներկայումս ես բավարարվում եմ հասարակ գու-
ղական մի հագուստով, առանց տոգայի և քաղբրի, որը մի բաճկոնակ
է՝ մեջը գառնուկի գեղեցիկ մորթով ծածկված, բայց այս բոլորը թանկ
հաճույք է և կարելի է եղբակացնել, որ այստեղ հագուստեղենը ավելի
թանկ է, քան Ֆրանսիայում և պատճառն էլ այն է, որ այս կողմերում
բոլորն էլ այդ մորթեղեններից են հագնում: Թավրիզից հետո մենք
հանդիպել ենք միայն երկու գեղեցիկ քաղաքների, որոնք բավական
մեծ են՝ Գոմը (Gom), որը հաճելի դիրք ունի, եթե շհաշվենք շոգը:
Այստեղ, Պարսկաստանում, կարելի է կլոր տարի առատորեն ճաշա-
կել նուս ու սեխ: Այս քաղաքը նշանավոր է նաև նրանով, որ այստեղ
է գտնվում Մուրթուզալիի կնոջ աղջկա՝ Ցաթիմայի գերեզմանը: (Երկ-
րորդը)՝ Քաշանը ավելի մեծ քաղաք է: Այստեղ հիմնականում զբաղ-
վում են մետաքսի առևտրով, որն ամենաորակովն է երկրում: Թագա-
վորի սեփականությունն են գեղեցիկ պարտեզները կամ ավելի ճիշտ,
դրանք անտառներ են, որտեղ աճում են սոսի (չինար) կոշիկո երկա-
րաձիգ ծառերը: Այդ ծառերի տերևները ձեռքի մեծություն ունեն,
կտրտված են սխտորաձև և ձմռանը թափվում են: Գաշտերում երբեք
ծառերի չես հանդիպի: Դրանք քաղաքներում ու գյուղերում են: Բայց
այդ բացը լրացվում է բազմազան ծաղիկներով, որոնք աճեցվում են
ցանկապատերով շրջապատված տների պարտեզներում: Հեռվից նայե-
լիս այդ ցանկապատերը քաղաքին տալիս են խոշոր անտառների տպա-
վորություն: Քանի որ երկիրը խիստ չորային է և հազվադեպ է անձրև
գալիս, նրանք ջրերը հավաքում են և ջրանցքների օգնությամբ տա-
նում-հասցնում են հեռուները: Այս երկրի բոլոր շինությունները պատ-
րաստված են արևի տակ շորացրած աղյուսներով: Կան նաև մի քանի
շինություններ, ինչպես, օրինակ, թագավորի պալատը և բարձրագու-
րաները, որոնք կառուցված են թրծած աղյուսներից: Եվ դա է պատ-
ճառը, որ ձմռանը, որն այստեղ չափազանց խիստ է, երբ շատ անձրև-
ներ ու ձյուն է գալիս, և տանիքները ձյունից չեն մաքրվում, պատերը
փլվում են: Բոլոր սենյակները կամարաձև են, և այս գործում պար-
սիկները վարպետ են, քանի որ նրանք ոչ մի տեսակի գործիք չեն օգ-
տագործում, ինչպես քրիստոնյաներիս մոտ է արվում: Եթե տները ար-
տաքինից գեղեցիկ տեսք չունեն, ներսից, սակայն, հակառակն է:

Դրանք զարդարված են ոսկեզօծումներով և ճենապակիներով, սքան-
չելի գորգերով, որոնց վրա նստում են ծալապատիկ, իսկ կոնակը հե-
նում գեղեցիկ բարձերին: Հարկավոր է, սակայն, կոշիկները հանել
դռան առջև: Սենյակները փոքր են, և բոլոր կողմերից դռներ կան,
իսկ վերևի կողմից կան բազմաթիվ լուսամուտներ, որոնք ցանց հի-
շեցնող գեղեցիկ քանդակներ են: Կան տներ, որոնց ցանցի տեսք ունե-
ցող լուսամուտները գիպսից են՝ այստեղ քառակուսի անցքերին տե-
ղադրում են գուլնզգուլն ապակիներ: Այսպիսով, նրանց բոլոր սեն-
յակները շատ լուսավոր են և լավ դասավորություն ունեն: Թագավորի
պալատի ներսը հնարավոր չէ տեսնել: Ես այնտեղ նկատեցի միայն մի
խոշոր բազմոց, հրաշալիորեն զարդարված երկրի սովորությունների հա-
մաձայն, նա այնտեղից էր դբտում ձիերի վարժանքները: Ինչպես
Ռուբրիայում, բոլոր շինությունները հարթ տանիք ունեն: Չի կարելի
ասել, որ մզկիթներն ամենագեղեցիկներից են: Դրանք նման են Ռուբ-
րիայի մզկիթներին: Նրանց գմբեթները ծածկված են գուլնզգուլն ճե-
նապակիով և մեկ կամ երկհարկանի կլոր աշտարակներով, որոնք բա-
վական բարձր են և չափազանց փոքր: Վերջապես, հայր Գելա Վալեն
մանրամասնորեն գրել է այս երկրի մասին և շահ Աբբասի թագավո-
րության օրոք, ինչպես այստեղ իմացա, բավականին մոտիկ է եղել
նրան: Մասնիի (Գելա Վալենի կինը) մասին, որի բույրը Շիրազում
է, բավական մեծ թվով պատմվածքներ ունի գրած: Այն, ինչ նա գրել
է պարսիկների քաղաքակրթության մասին, դա այնքան էլ ճիշտ չէ,
քանի որ նրանք այդպիսին են հատկապես այն ժամանակ, երբ իրենց
շահեցն այդպես են պահանջում, որովհետև նրանց կրոնը լինելով ավել-
ի անտիպապաշտ, քան օսմանլուներինը, նրանց հրամայում է մեզ նա-
յել քրպես պղծվածների, և դա է պատճառը, որ նրանք չեն ցանկա-
նում, որ որևէ քրիստոնյա իրենց դիպչի, այնպես որ, եթե նրանք մեզ
հետ որևէ գործ չեն ունենում, կարելի է պատկերացնել նրանց վերա-
բերմունքը մեր նկատմամբ: Այս քաղաքը բավական մեծ է իր պարտեզ-
ների շնորհիվ: Այստեղ, մեյդանի շուրջը գեղեցիկ քաղաքներ կան և թա-
գավորի կողմից կառուցված երկու երկհարկանի քաղաքներ: Այս
շինությունները համարյա նման են վանքի և այնտեղ կարող են բնակ-
վել ավելի քան երկու հարյուր հոգի: Գինին առատ է և համով: Հացը
նման է մեր կարկանդակներին, բայց շատ սպիտակ է: Խաղողն ու սե-
խը հարելի է կլոր տարի ուտել: Լավ տանձ ու խնձոր չկա, բայց կա
հիանալի սերկևիլ: Քաղաքում որպես քրիստոնյաներ միայն կրոնա-
վորներն են: Զուլֆայում մահմեդական գոյություն չունի: Բոլորն էլ
հայեր են և նրանք մեծ թիվ են կազմում ու նրանցից ոմանք հետևում
են հոռոմեական ծիսակատարությանը, որովհետև լուսավորվում են կրո-

նավորների կողմից: Եթե աստված տա և ես փերադառնամ, մնացածի մասին Ձեզ կպատմեմ: Այնուամենայնիվ, դուք կարող եք կարդալ Պրիտոր դելլա Վալլեին, որից շատ գոհ կմնաք: Անկասկած, Դուք մեծ համույթով եք ստանում իմ նամակները, բայց ինչպիսի գոհունակություններով ունենալի: Բայց, քանի որ շուտով մեկնելու ենք, ես, այնուամենայնիվ, պետք է համբերող լինեմ, որովհետև գոնե մի տարի հույս չունեմ նամակ ստանալու և բացի այդ նման հարմարություններ չնդկաստանում չկան: Աղոթեք և աստված թող նույնպես աղոթի ինձ համար: Բարեներ եղբորս՝ Անտուանին, եղբորս՝ Դյուպարկին, քրոջս, զարմուհուս և մեր բոլոր ազգականներին: Ես կցանկանայի նաև արժանանալ պարոն քահանայի աղոթքներին, ինչպես նաև պարոն Դյուարի, պարոն էպիկարի և պարոն Մարդինի, ինչպես նաև մեր ամբողջ հարևանություն, շնորհակալով հանդերձ պարոն դե Գրանլիի ընտանիքը, պարոն դե Բլանշֆոնտենին և պարոն Դյուգեին և պարոն Բյուսոնին: Մնաք բարով, ես կմնամ միշտ ձերը:

Գեյլանդ

Ավագ հինգշաբթի օրը մենք դարձյալ կանչված էինք թագավորի մոտ, որտեղ նույն թամաշան արեցինք ինչ որ առաջ:

2. Գ. Այս գրությունից հետո, Տեառնընդառաջի հաջորդ առավոտյան, թագավորի խելքին փշեց իր մոտ կանչել պարոն Տավերնիեին, նրա հետ նաև մի այլ հուլանդացի առևտրականի և երկու այլ երիտասարդ՝ դարձյալ հուլանդացիներ, ինչպես նաև մեր զինագործի և մի ոսկերչի՝ երկուսն էլ Ֆրանսիացիներ, և վեղարավոր (կապուցին) հայր Ռաֆայելին, որը թարգմանչի դեր էր կատարում: Այս բոլորի պատճառը նրա հետ գինի խմելու թագավորի փափազն էր: Խնջույթը շատ ուրախ է անցել, և թագավորն այնքան լավ տրամադրություն մեջ էր, որ ամբողջ օրն իրեն (թագավորին) գինի մատուցելու համար զինագործին տվեց կանխիկ 50 թումանի քսակ, որը մոտ 2000 ֆրանկ է: Խնջույթն սկսվել էր առավոտյան ժամը իննին և քանի որ թագավորը նվազել տվեց մոսկովիտներից ստացած ինքնուրույնաբար նվազող երգեհոնները. (օրգանը), պարոն Տավերնիեն, հայր Ռաֆայելի միջոցով, թագավորին հասկացնում է, որ ես կարող եմ փոքր կլավեսին (épinette) նվագել, և քանի որ այստեղ այդ գործիքից էլ մի հատ կար, թագավորը հրամայում է, որ ինձ անմիջապես բերեն իր մոտ: Մի սոֆի կլավ իմ ետևից ու ձիու գավակին ինձ նստեցրած տարավ (նրա մոտ): Թագավորի դռանը սպասել եմ մինչև ուշ գիշեր, իսկ դա ինձ համար հաճելի էր, քանի որ ես ազատ էի մնում բաժակներով գինի խմելուց, մի բան, որ

մնացածները պարտավոր էին անել: Բացի այդ, այս խնջույթին թագավորը բերել էր տվել գործիքներով նվագող խումբը, ինչպես նաև տասնհինգ-տասնվեց աղջիկ, որոնք ժամանակ առ ժամանակ պարում էին համաձայն իրենց սովորություն՝ դափի հնչյունների տակ: Այստեղ էր նաև մի փոքրիկ վրացի (Gurgien), որը հիանալի նվագում էր տավիլի վրա: Վերջապես ինձ հրավիրեցին ներս, ուր ինձ առաջնորդեց թագավորի ինտենդանտ (հավատարմատար) նազերը: Խորին խոնարհությամբ թագավորին ողջունելուց հետո, գնացի նստեցի պարոն Տավերնիեի մոտ՝ թագավորից երեք քայլ հեռավորության վրա, որից հետո, սկսեցին ձեռք տալ ինձ համար բերված փոքր կլավեսինին (épinette): Եվ քանի որ նրանք վատ էին տիրապետում այդ գործիքին, ես ավելի վստահորեն էի նվագում, իսկ թագավորը կարծում էր, որ դա հիանալի է: Եվ վերջապես, տեսնելով, որ թագավորը մեզ լիակատար ազատություն է տալիս, սկսեցի երգել այդ խնջույթի համար մի երգ, որը հետևյալն է.

Ավագ հինգշաբթի օրվա զավակներ,
Ահա լավ հարեցողների խնջույթը:

Երգում էի ես այս երգը և դա այնքան էր դուր գալիս թագավորին, որ երկու-երեք ժամ տևողությամբ ես անընդհատ երգեցի, մեկ առանձին, մեկ պարոն Տավերնիեի և ոսկերչի ընկերակցությամբ: Իսկ այս վերջինս այնքան կապիկություններ էր անում, որ թագավորը ծիծաղից պայթում էր: Այնուհանդերձ, ոսկե տասանոցը իր գործն անում էր. մենք երկու-երեք անգամ խմեցինք թագավորի սափորով: Մեզ հանգրստացնելու համար աղջիկները պարում էին, որոնց հետ մեկտեղ պարում էր նաև ոսկերիչը: Այնուհետև, գործիքներով նվագողներն սկսեցին շատ հաճելի երաժշտություն նվագել: Եվ վերջապես, հաղարու մի այլ կապիկություններ անելուց հետո, և որովհետև այստեղ ավելի երկար մնալը միտք չունեի՝ քանի որ պետք է շարունակեինք խմել, ուստի խնդրեցինք մեզ ազատ արձակել, և թագավորը դա թույլ տվեց: Եվ այսպես, մոտ կեսգիշերին մենք այնտեղից հեռացանք: Ահա թե ինչպես եղավ, որ ես տեսա թագավորին:

Հասցեն հետևյալն է. Պարոն Դուլիե

Արքունական արևմտյան ընկերության քարտուղար,

հարգով Մ. Պարոն

Ռյուվիեյի

P. Raphaël du Mans. Op. cit., pp. 292-297.

ԳԵ ԼԱԼՆԵՒ ԵՎ ԳԵ ԼԱ ՔՈՒԼԵ ԼԵ ԳՈՒԶԻ ԵՄՄԱԿՆԵՐԸ
ՏՐԱՆՍԻՏԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐԵՆ

Երևան, 20 մայիսի 1665 թ.

Տեր իմ,

Երևանում մեծ հաճույքով մենք հանդիպեցինք մի քարավանի, որը գնում էր Զմյուռնիա, և ուրախ ենք, որ մեզ հանկարծակի առիթ ներկայացավ Ձերդ պաթառափայլությանը տեղեկացնելու, որ մենք մտել ենք պարսից թագավորի տիրույթների մեջ: Էրզրումով անցումը քիչ դժվարություններ չպատճառեց մեզ, քանի որ փաշան (Bassa) բավական կասկածներ ունեցավ հինգ Ֆրանսիացիների Պարսկաստան անցնելու առթիվ՝ հատկապես այնպիսի մի ժամանակ, երբ հայտնի են Մեծ Պարոնի (Սուլթանի) և քրիստոնյաների փոխհարաբերությունների վիճակը և այդ պատճառով էլ իր մարդիկ և մաքսատան աշխատողները բավական շատ հարցուփորձ արեցին պարզելու համար, թե մենք իրականում ովքեր ենք: Եվ վերջապես ամեն ինչ բարեհաջող ավարտվեց այն ժամանակ, երբ մաքսատան աշխատողը, որը մեծ հեղինակություն է վայելում երկրում, նրան (փաշային) հավաստեցրեց, որ նա քարավանաշույց և կարևոր առևտրականներից իմացել էր, որ մեր նպատակը միայն ու միայն հետաքրքրասիրությունն է. նա համոզվել էր հատկապես այն ժամանակ, երբ ինքը նրա (փաշայի) մոտ էր տարել Կոստանդնուպոլսում մերոնցից մեկի ձեռք բերած այն անձնագիրը, որով նա ու իր ցանկացած մարդիկ, անկախ նրանց քանակից, իրավունք ունեն ազատ շրջելու Մեծ Պարոնի ամբողջ տերության մեջ: Եվ այսպես, այս գլխացավանքը տեղեց երկու օր, և Ֆրանսիացից մեզ հետ բերած որոշ ուշադրավ իրեր բավական եղան փաշայի գլխավոր սպաների ու մաքսատան աշխատողի սրտերը շահելու՝ երբ նրանք խուզարկում էին մեր ճամպուրակները, ինչպես նաև բոլոր նրանց, ովքեր հարցաքննվում էին մեր մասին տեղեկություններ ստանալու համար: Նրանք, ավելի քան Սեն-Փրանսիսի տոնավաճառում (է լինում), շտապում էին գալ ու տեսնել օպտիկական մի ապակի, մի կիզիչ հայելի, մի գլան և այլ շնչին բաներ, որոնցից անպայման նրանց հարկավոր էր տալ մի քանի հատ, որովհետև բացի ամեն ինչ վերցնելու իրենց ունեցած սովորությունից, նրանց համար այդ առարկաների նորություն լինելն ավելի մեծ տպավորություն էր թողնում: Բայց մեզ մոտ եղածները տեսնելուց չէ, որ նրանք ավելի շատ էին զարմացած մնացել:

Նրանք մեր ճամպուրակների մեջ գտել էին Ձերդ Մեծության համար նանտոյում պատրաստված վերջին էստամպները և նկատելով Ձեր վեհ կեցվածքն ու դեմքի վսեմ արտահայտությունը, նրանք այնքան հաճելի տպավորություն էին ստացել, որ մի ակնթարթ մոռացել էին նկարներին նայելու Ալլոբրանի արգելքը: Նրանց մեջ գտնվեցին նաև մարդիկ, որոնք եկել էին մյուսների հետ և կարծես լավ մարդիկ էին երեւում: Նրանք ցանկանում էին բոլոր (էստամպները) վերցնել և նույնիսկ ուզում էին մեկն էլ տանել տալ փաշային: Էրզրումում մեր մնալու հինգ օրվա ընթացքում բավական մեծ թվով այցելուներ ունեցանք և բարեհաջող կարողացանք նրանց ձեռքից ազատվել: Նույնիսկ մաքսատան աշխատողը պատրաստակամություն հայտնեց վճարելու իր վերցրած առարկաների դիմաց, որին մենք պատասխանեցինք ասելով, որ Ֆրանսիայում այդպիսի սովորություն չկա, և նույնիսկ նազիրը, որը փաշայից իր հասանելիքն է վերցնում, այսինքն՝ տեղափոխվող դրամի հագարից ութը, շուրջ երեք բան վերցնել մեր հայտնած բոլոր իրերից, ոչ էլ նույնիսկ այն վեց պիաստրը, որը վերցվում է յուրաքանչյուր ապրանքատար ձիու դիմաց: Նույն հաջողությամբ մենք կարողացանք անցկացնել մեզ մոտ եղած զենքերը՝ դրանք հայերին բաժանելով, որովհետև եթե մոտքի և ելքի բոլոր կետերում դրանք մեր ձեռքին տեսնեին, կասկածանքի առիթ կտայինք՝ մանավանդ որ այդ զենքերը բավական զեղեցիկ էին: Եվ, ի վերջո, կցանկանայինք ասել Ձերդ մեծությանը, որ այդ սահման կոչեցյալից ավելի վատ բան չկա: Էրզրումը, որը միակ տեղն է պարսիկներին դիմադրելու համար, գտնվում է մի դաշտավայրի արևելյան մասում, շրջապատված է լեռներով, որոնք նրան ձվաձև տեսք են տալիս և որոնք տարածվում են արևմուտքից արևելք: Այդ ձվաձև դաշտավայրը շատ մոտ է լեռներին և հյուսիսից անցնող Նփրատից մոտավորապես կես մղոն հեռավորության վրա է, իսկ որպես ամրություն նա ունի հին ձևով շինված կրկնակի պարիսպ, տեղ-տեղ՝ աշտարակներ, որոնք, սակայն, շատ փոքր են և անկարող այնտեղ պահեստավորելու այն ամենը, ինչ հարկավոր է դրանք պաշտպանելու համար: Դրանց վրա մենք տեսանք տաս-տասներկու թնդապաններ ամենամեծը ութ լիվրից ավելի չէր: Դրանից ավելի մենք ուրիշ ուրեք բան չտեսանք, չնայած մեզ համոզելու համար ասված այն խոսքերին, թե այնտեղ ավելի քան հարյուր ծանր հրանոթ կա՝ մի բան, որին մենք ամենևին չենք հավատում: Քաղաքի մեջ, մի փոքր բարձունքի վրա, կա նույն ձևով ամրացված մի բերդ, բայց դա այնքան անկարևոր բան է, որ փաշան դրա մեջ չի ապրում: Նա ապրում է մի այնպիսի տան մեջ, որը (բերդից) բավական հեռու է գտնվում և միշտ էլ բնակեցվել է նույն պաշտոնում իրեն նախորդած մարդկանց կողմից:

Կայազորը բաղկացած է մոտավորապես հազար մարդուց, բացի այն շորս կամ հինգ հարյուրից, որոնք ցրված են մոտակա գյուղերում։

Էրզրումից մոտ մեկ օրվա հեռավորության վրա է գտնվում Հասան-Ղալան, որը մի փոքրիկ քաղաք է իր բերդով և գտնվում է նույնպիսի բարձունքի վրա և պաշտպանված է երեք հարյուր հոգուց բաղկացած կայազորով։ Բայց այստեղից այն կողմ, մինչև պարսկական հողերը, որոնք բարավանով գնալու դեպքում յոթ օրվա ճանապարհի վրա են, կարելի է հանդիպել միմիայն անապատների և մի փոքր ավելի մեծ մի քաղաքի, որը բնակեցված է հայերով։ Դա Կաղզվանն (Casūān) է, ուր կա ամբողջովին փլատակ դարձած մի բերդ, որն ավելի շուտ ոչ թե պաշտպանվում է, այլ բնակեցված է հարյուր հիսուն թուրքերի կողմից։ Այս երկիրն ամբողջովին ավերված է Շահ Աբասի կողմից, որը այրել ու անմարդաբնակ է դարձրել բոլոր գյուղերը՝ բնակիչներին իր երկիրը տեղափոխելու նպատակով, իսկ մնացած սակավաթիվ մարդիկ, ինչպես նաև բոլոր գաղթեցվածները քրիստոնյաներ են։ Մենք այդ թշվառների երկրից դուրս եկանք և նույն ամսվա 13-ին մտանք Պարսկաստան։ Ամսի 14-ին Արաքսն անցանք ծանծաղ տեղով, և դա մեզանից շատ ջանքեր ու ժամանակ խլեց ոչ այնքան նրա լայնությունից, այն մոտավորապես Լուարի լայնությունն ունի, որքան նրա արագընթաց հոսանքի և ջրի առատությունից պատճառով։ Ամսի 15-ին մուտք գործեցինք լավ մշակված դաշտերը և գնացինք գիշերելու Ուչքիլիսայում, որը հայերի պատրիարքի բնակավայրն է, իսկ ամսի 16-ին հասանք Երևան, որը մի մեծ և վատ կառուցված գյուղաքաղաք է։ Այստեղ պարիսպներ չկան, բայց հաճելի են նրանց լեռնային սյուրիսներն ու պարտեզները։ Քաղաքի արևմտյան մասում կա մեծ տարածություն զբաղեցնող մի բերդ, որը քաղաքին է միանում երկարաձիգ մի պողոտայով, որի երկու կողմերում դասավորված են խանութներ ու ծառեր։ Այդ բերդը կառուցված է բավական բարձր մի տաքածրի վրա, որի տակով անցնում է մի փոքր գետակ, որը նրա համար ծառայում է որպես խանդակ, իսկ այդ գետակի մյուս ափին գտնվում է մի փոքրիկ բարձունք։ Բայց քանի որ այն (բարձունքը) բավական հեռու է և նրա հակադիր կողմում գտնվող պատերը գտնվում են բավական թեք մի ժայռաբեկորի վրա, որը և գետակի համար ծառայում է որպես գետափ, ուստի և այդ մասում զղլակին վտանգ սպառնալ չի կարող։ Մնացած բոլոր կողմերից այն շրջափակված է երեք շորս ոտք հաստություն ունեցող կրկնակի պարսպով, բազմաթիվ բավական մեծ աշտարակներով, բայց դրանց վրա ոչ մի տեսակի ավելորդ աշխատանք չի կատարված, որպեսզի կարողանայինք քիչ թե շատ նմանեցնել մեր ժամանակակից ամրություններին։ Ահա սա է վիճակը

այն ամենակարևոր և, նույնիսկ, կարելի է ասել այն միակ տեղի, որ Պարսկաստանի թագավորն ունի իր սահմանների մոտ։ Նրա հրամանատարն է Աբասկուլի խանը, որի հայրը ժամանակին եղել է նրա կառավարիչը, իսկ հոր մահից հետո այն տրվել է նրա ավագ որդուն, իսկ այս վերջինս՝ վերջին պատերազմների ժամանակ, սրանից երեսուն տարի առաջ, երկշտաբար վերադարձրել է Սուլթան Ամուրադին*։ Ընդամենը երկու տարի է, ինչ Աբասկուլի խանը նստած է այստեղ, և նրանից գոհ են և՛ իր տերը, և՛ ժողովուրդը։ Պատերազմի ժամանակ այստեղ լինում է տասներկու հազար մարդ, իսկ խաղաղ ժամանակ՝ ընդամենը երեք հազար։ Բայց այն այնքան ամրացված է, որ կարիք չկա այդքան մեծ թվով մարդ պահելու։ Մարդկանցից շատերն ապրում են դաշտերում, վրանների տակ՝ համարյա կլոր տարի և ապրում են իրենց ստացած աշխատավարձով կամ էլ մանր գործերից ստացած եկամուտով, և նրանք ոչ զլուղերում, և ոչ էլ ճանապարհների վրա թեկուզ և մեկ սոլ արժողութամբ որևէ բան չեն կարող ձեռք բերել առանց դրա դիմաց վճարելու, և մի գուցե դա է պատճառը, որ ամենուրեք կարելի է գնալ առանց որևէ վտանգի ենթարկվելու։ Ինչպես բերդում, նույնպես և քաղաքում մեծ բանակություն հայեր կան, որոնք, ինչպես թուրքիայում, տներում են օսմանյան հրեշավոր լծի տակ, ամեն օր սպասելով Ձերդ Մեծության հաղթական զենքին, որը կարող է վերջ դնել իրենց թշվառություններին։ Նրանք քաջ տեղյակ են Ձերդ Աեծության հզորությանը, և հատուկ պաշտամունք ունեն Ձեր առաքինությունների ու արժանիքների հանդեպ, քանի որ ժողովրդի մեջ տարածված է Ձեր հուշակի լուրը, և նրանք մտածում են, որ արդեն մոտեցել է իրենց մարգարեությունների կատարման ժամանակը. նրանք դրանում այնքան համոզված են, որ Ձեր մասին խոսում են որպես ազատությունը վերականգնողի և իրենց եկեղեցիների ու հավատի պաշտպանի։ Մշտապես մաղթանքներ են հղում, որպեսզի իրենց հույսերը իրականանան և չկա մի այլ հեռավոր երկիր, որտեղ չկարողանա հասնել Ձերդ Մեծության բանակների ուժը, ինչպես նաև Ձեր փառավոր անունը։ Մենք նույնպես ամենայն սիրով Ձեզ ենք հղում մեր լավա-

* Խոսքը վերաբերում է Մուրադ IV-ին (1623—1640 թթ.)։

գույն մաղթանքները և կշարունակենք նույնն անել մեր ողջ կյանքի ընթացքում, և պատիվ ունենք լինելու,

Տեր իմ,

Զերդ մեծության:

Ամենախոնարհ, ամենահնազանդ և ամենահավատարիմ հպատակները:

Դե Լալեն, Դե Լա Բուլե Լե Գուգ:

P. Raphael du Mans. Op. cit., pp. 299—302.

V

Դե ԼԱԼԵՆԻ ԵՎ ԴԵ ԲՈՒԼԵ ԼԵ ԳՈՒԳԻ ՆԱՄԱԿԸ ԳԵ ԼԻՈՆԵՆ

Նրևան, 20 մայիսի 1665 թ.

Զերդ պայծառափայլություն,

Պատիվ ունենք թագավորին տեղեկացնելու մեր Պարսկաստան ժամանելու և այն փորձիկ անհանգստություն մասին, որ ունեցանք էրզրումում՝ Մեծ Պարոնի հողերից դուրս գալու ժամանակ: Զեզ տեղյակ ենք պահում նաև այն մասին, թե ինչ վիճակում են երկու կայսրությունների սահմանները և, միաժամանակ, հայերի այն հույսի մասին, որ նրանք ունեն իրենց մարգարեությունների ի կատար ածվելու համար: Մենք այս բոլորի մասին մի քիչ ավելի մանրամասն ենք գրում, գանց առնելով, անշուշտ, շատ ուրիշ բաներ, որոնք համարում ենք պակաս կարևոր, մտածելով, որ մեր նամակը կամ շատ երկար կատարվի կամ էլ չափից դուրս կարճ: Այս հանգամանքը մեզ ստիպում է ամենայն խոնարհությամբ Զեզ աղաչելու, որ մեր գրածներն անգուր չլինեն Զերդ Մեծությանը, ու մեզ պատիվ անեք Զեր պաշտպանությամբ և մեզ ազատություն ընձեռեք հավերժորեն հարգանք տածելու Զեր նկատմամբ,

Զերդ Մեծության

Ամենախոնարհ և ամենահնազանդ ծառաները,

Դե Լալեն, Դե Լա Բուլե Լե Գուգ:

P. Raphael du Mans. Op. cit., pp. 302—303.

VI

ԴԵ ԼԱ ԲՈՒԼԵ ԼԱ ԳՈՒԳԻ ԴԵ ԼԱԼԵՆԻ ՆԱՄԱԿԸ ՅԲԱՆՍԻԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐԵՆ

Թավրիզ, Մեղիայի մայրաքաղաք,
18 հունիսի 1665 թ.

Տեր իմ,

Երևանից, որը հանդիսանում է Պարսկաստանի սահմանը, մեկնեցինք մայիսի 28-ին և հասանք Թավրիզ, նախկին թագավորանիստ քաղաքը, ընթացիկ ամսվա 8-ին: Այս երեկո մեկնում ենք՝ մեզ հետ ունենալով հանից կամ փոխարքայից ստացած անձնագիրը և հույս ունենք քսանհինգ օր հետո լինել Սպահանում, ուր Մողոլից ժամանել է մի դեսպան, որը և շուտով մեկնելու է այնտեղից: Մենք կարող ենք օգտվել այդ հարմար առիթից և ընկերակցել նրան, որպեսզի մեզ համար հեշտ լինի կատարել Զերդ Մեծության հրամանները որպես

Շատ խոնարհ, շատ հավատարիմ ու շատ հնազանդ հպատակներ՝
Դե Լա Բուլե Լե Գուգ, Դե Լալեն:

P. Raphael du Mans. Op. cit., p. 304.

VII

ԴԵ ԼԱ ԲՈՒԼԵ ԼԵ ԳՈՒԳԻ ԵՎ ԴԵ ԼԱԼԵՆԻ ՆԱՄԱԿԸ ՅԲԱՆՍԻԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐԵՆ

Սպահան, 8 հոկտեմբերի 1665 թ.

Տեր իմ,

Հուլիսի տասնմեկին հասանք Սպահան՝ Պարսկաստանի մայրաքաղաքը: Քանի որ արբունիքը բացակայում էր այստեղից, մեր ժամանելու մասին տեղեկացրինք գլխավոր մինիստրներին: Մեզ առաջարկեցին սպասել թագավորի վերադարձին և սեպտեմբերի 26-ին մեզ կանչեցին մեջլիս (megelis) կամ, այսպես ասած՝ տոնակատարությունների վայրը: Թագավորը պարզ ձևով զգեստավորված նստած էր գահին, իսկ երկրի մեծամեծները նստած էին ավելի ցածր, ըստ կարգի: Նրան հանձնեցին Զերդ մեծության նամակները: Նա տարբեր ժամանակներում հինգ անգամ մեզ իր մոտ կանչեց և իր խորին գոհունակությունը հայտնեց երկու թագերի միջև եղած միահամուռ համաձայնությունը ու միությունը: Նա մեզանից մանրամասն տեղեկություններ ստացավ Զեր ընտանիքի վերաբերյալ և ասաց, որ անմիջապես, երբ մեր նա-

վերը կժամանեն Բանդար Աբասի, ինքը Ֆրանսիա կուղարկի իր գլխավոր սպաներից մեկին: Այս հանդիպմանը հաջորդեց մի շատ գեղեցիկ հրավառուժյուն և ճաշկերույթ՝ երաժշտության ընկերակցութեամբ, և մենք թագավորի մոտ նստած մնացինք ինը-տաս ժամ: Հաջորդ օրը թագավորի հրամանով ճաշկերույթ կազմակերպեց մեծ վեզիրը, իսկ երկու օր հետո՝ նազիրը կամ ֆավորիտը: Հուլյս ունենք վաղը ճանապարհ ընկնել՝ մեր խալաթներն ու բաճկոնները ստանալուց հետո, որ մեզ պետք է հանձնվեն թագավորի հրամանով: Ասում են, որ մեր խալաթները ոսկուց են, իսկ պատվիրակներինը՝ արծաթից: Ձերդ Մեծութեանը տեղյակ պահելուց հետո մենք կմեկնենք Ձեր շատ հավատարիմ, շատ խոնարհ և շատ հնազանդ հպատակները՝

Դե Լա Բուլե Լե Գուգ, Դե Լալեն:

P. Raphael d'i Mans. Op. cit., pp. 304—305.

VIII

ՊԱՐՈՆ ԳՅՈՒ ՊՈՆԻ ՄԻ ՆԱՄԱԿԻ ՊՍՏՃՆԵՐ՝ ՈՒՂԱՐԿՎԱՍ ՊԱՐՍՎԱՍԱՆ
ԵՎ ՉՆԴԿԱՍԱՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՑ

16 նոյեմբերի 1665, Սպանա

Սույն նամակով, ինչպես նաև Զմյուռնիայի ճանապարհով Ձեզ ուղարկված նամակով Ձեզ հայտնվում է, որ ժամանակի պակասություն հնք ղգում: Մեկ կամ երկու ժամից ձի ենք նստելու՝ գնալու համար Բանդար Աբասի:

Մենք այստեղ ենք ժամանել հուլիսի 13-ին՝ ամենաշոգ օրերին: Չորս-հինգ օր առաջ թագավորը մեկնել էր լեռները, որտեղ ավելի զով էր: Նա վերադարձավ միմիայն սեպտեմբերի 12-ին և մի քանի օր հետո ընդունեց մեզ: Նա մեզ շատ լավ ընդունեց, և երբ պարոն Լալենը նրան հանձնեց մեր անպարտելի արքայի նամակը, նա այնպիսի արտակարգ գոհունակություն ցույց տվեց, որ ի նշանավորումն զրան կազմակերպվեց մեծ հրավառություն, որը խորը տպավորություն թողեց իր գեղեցկությամբ և արտակարգ ճոխությամբ: Երեկոյան ժամը տասի մոտերը, նորին Մեծութեանը, ինչպես նաև մեզ ուտելու բան հրամայրին, իսկ կեսգիշերից հետո, մոտ ժամը 3-ին թագավորը մեզ ազատ արձակեց: Նրանց գործիքներից ու երաժշտությունից մենք այնքան էինք շշմել, որ նույնիսկ երեք-չորս օր հետո, կարծես թե դրանք դեռևս մեր գլխի մեջն էին: Նազիրը, որը տերություն երկրորդ անձնավորությունն է, մեզ իր

մոտ կանչեց ու ասաց, որ ինքը նշանակված է թագավորի կողմից՝ մեզ լսելու, և միաժամանակ իրեն հրամայված է մեզ հյուրասիրել: Որոշ ժամանակ մեր գործերի մասին խոսելուց հետո, մնացած ժամանակը լավ զվարճացանք, քանի որ արդեն զրավոր նրան հանձնել էինք մեր խնդրանքները: Նա խոստացավ, որ այդ գրությունները կհանձնվեն թագավորին, և ինքը, հնարավորության սահմաններում, այդ հարցում մեզ կօգնի: Մեր կանչվելուց մեկ օր հետո թագավորը մեկնեց Մազանդարան, որը տաս օրվա ճանապարհ է: Երբ ինքը իր քաղաքամերձ վայրերից մեկում էր գտնվում, որը այստեղից երեք օրվա հեռավորության վրա է գտնվում, իր սպաներից մեկին հրամայել էր մեզ տանել իր մոտ: Նա մեզ անմիջապես արբունիք տարավ, տեղավորեց մեր սենյակներում, որից հետո մեզ մոտ եկավ թագավորի կողմից ուղարկված ծիսակատարությունների տնօրինողը, որը բարի գալուստ մաղթելով հանդերձ, մեզ հրամայեց տարբեր տեսակի մրգերով լեցուն երկու խոշոր փիսեններ, ինչպես նաև Շիրազի հիանալի գինու բազմաթիվ սրվակներ: Մեր այստեղ գտնվելու ամբողջ ժամանակամիջոցում մենք սնվում էինք թագավորի սեղանից: Իսկ վերջին գիշերը ծիսակատարությունների այդ նույն տնօրինողը մեզ բերեց մեր կոնցեսիաների նամակները և տվեց պարոններ Բեբերին, Մարիաթին ու ինձ, անձնագրերի հետ միասին, ինչպես նաև թույլտվություն՝ մի քանի ձիեր Հեղկաստան անցկացնելու համար: Որից հետո թագավորը յուրաքանչյուրին համար ուղարկեց մի խալաթ, որը պարսկական ոճով պատրաստված զգեստ է: Այս նվերը ցույց է տալիս հարգանքի սյն շափը, որ ցուցաբերվում է մարդկանց նկատմամբ: Հաջորդ օրը, առավոտյան այդ նույն հագուստներով, հրաժեշտ տալու համար ներկայացանք թագավորին, և նա պարոն դե Լալենին տվեց մի նամակ՝ մեր թագավորին հանձնելու համար:

Մեզ չհաջողվեց կարդալ կոնցեսիաներին վերաբերող մեր նամակը՝ իմանալու համար, թե արդյոք բավարարվում էին մեր բոլոր խնդրանքները: Մեր այստեղ վերադարձից և դրանց մասին բացատրություն ստանալուց հետո պարզվեց, որ այնտեղ պակասում էր ինչ-որ հողված: Հավաքվեցինք որոշելու համար, թե ինչպե՞ս պետք է վարվեինք այդ հարցին լուծում տալու համար: Որոշեցինք, որ պարոն դե Լալենը, նրա հետ միասին նաև պարոն Մարիաթը, որոնք արդեն պետք է մնային Պարսկաստանում, անհրաժեշտ խնդրանքները կատարելու համար կգնան արբունիք, իսկ պարոններ Լա Բուլեյը, դե Բեբերը և ես պետք է գնայինք Հեղկաստան: Ժամանակի սղութիան պատճառով ես չեմ կարող Ձեզ տեղեկացնել մեր գործերի շուրջ կատարված որոշ մեքենայությունների մասին:

Ժամանելով այստեղ, մեզանից յուրաքանչյուրին մնում էր մոտ հարյուր պիաստր: Շատ էինք ուրախացել այստեղ գտնելով պարոն դե Լեթուալին, որը մեզ ապահովեց անհրաժեշտ բաներով: Ստիպված էինք ծախսեր կատարել հափուտեղենի համար, որովհետև այստեղ այն արքունիքն է, որտեղ, աշխարհի բոլոր արքունիքների հետ համեմատած, ամենից շատ ծախսեր են արվում: Այստեղ կարելի է հանդիպել միմիայն ասեղնագործությունների, ոսկե ու արծաթե դիպակների և յոթուկ ֆրանսիացիների, որոնք աշխատում են որպես ժամագործներ, զինագործներ, հղկողներ և որոնք քայլում են ամբողջովին ոսկով ու արծաթով ծածկված բաճկոններով ու հափուտներով, նրանք նույնիսկ կրում են փետուրներ և այդ ձևով էլ ամեն օր աշխատանքի գնում:

P. Raphael du Mans. Op. cit., pp. 30—307.

IX

ԼԵՌՈՒԱԿԻ ԱՄՄԱԿԸ՝ ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ԱՐՔԱՌՆԻՔԻ ԱՆՎԱՐՄԱՆԵՐԻՑ ՄԵԿԻՆ

Սպահան, 18 դեկտեմբերի, 1665 թ.

Պարոն,

Սույնով գալիս եմ Ձեզ հայտնելու իմ խորին շնորհակալություններն այն հաջողության համար, որ ինձ ընձեռեցիք Նորին Մեծության մոտ և այն նեղության համար, որ դուք հանձն առաք նրա կողմից ինձ ասելու, որ հնարավորության սահմաններում ես իմ օգնությունը բերեմ այս երկրում հիմնադրելու համար այդ նշանավոր ընկերությունը, որի համար նա բարեհաճում է հանդես բերել իր հովանավորությունը: Ես չեմ խնայում այն փոքր վստահությունը և իշխանությունը, որ ես ունեմ այդ մեծ գործը հաջողացնելու համար, և շատ շոքված կզգայի ինձ, եթե կարողանայի օգնել իմ հայրենիքին և իմ անձնական խորը զգացմունքը ցուցաբերել իմ տիրոջ՝ թագավորի նկատմամբ: Ուրախ եմ, որ կարողացա իմ կարողացածն անել Ձեր ուղարկած պարոնայք պատվիրակներին օգնելու համար այն հարցերում, որոնցով նրանք հետաքրքրվում էին այս արքունիքում, միաժամանակ՝ ես պատրաստ եմ շարունակելու իմ օգնությունը ցույց տալ ընկերության գործերի հարցում: Ես նրանց ներկայացրի իմ ավագ որդուն, որին, շնորհիվ Նորին Մեծության և պարոնայք դիրեկտորների բարեհաճության, ընդունեցին որպես թարգմանչի: Եթե ես վստահ չլինեի, որ նա իրեն կարողարացնի այդ

պաշտոնում, երբեք նրա թեկնածությունը չէի առաջարկի: Ես գիտեմ, որ նա քաջ ծանոթ է վաճառականությունը վերաբերող հարցերին հիանալի խոսում է ֆրանսերեն, պարսկերեն, թուրքերեն, ինչպես նաև հայերեն ու հնդկերեն: Իմ երեսխաներին ես դաստիարակել եմ իսկական ֆրանսիացու հոգեբանությամբ և ինձ համար հաճելի է նրանց տեսնել սերտ կապված Ֆրանսիային՝ որպես լավ հպատակներ:

Ինչ վերաբերում է բանակցությունների մեջ այդ պարոնների հաջողությանը, պետք է ասեմ, որ ընդհանուր առմամբ նրանք ստացան այն, ինչ որ ուզում էին, բացառությամբ մի քանի հոգու նկատմամբ որոշ արտոնությունների սահմանափակումից: Թագավորը նրանց շատ լավ ընդունեց և անշափ ուրախացավ իր տերության մեջ ֆրանսիացիների հայտնվելու համար. մի բան, որ ինքն ու իր նախորդները մշտապես ցանկացել էին: Ես այդ պարոնների իրավունքները ոտնահարած կլինեի, եթե մանրամասն զրբի ողջ տեղի ունեցածի մասին: Եվ ես քաջ գիտեմ, որ իրենք դա ինձանից ավելի լավ կանեն:

Եվ բանի որ այստեղ դեսպանների էին սպասում, հարց հարուցվեց նվերի մասին. և հանուն Ֆրանսիայի պատվի, ինչպես նաև հաշվի առնելով, որ ես լավ գիտեմ այս երկիրը, ինձ պարտավորված եմ զգում Ձեզ տեղեկացնել, որ այստեղ եթե որևէ բան արտակարգ տպավորություն չի թողնում, ապա նրանց կողմից գնահատանքի չի արժանանում: Անցյալ տարի Մոսկովիայի դեսպանը եկել է շատ հարուստ նվերներով և 200 հոգով, ինչպես նաև Մոզովի դեսպանը՝ մի հնդիկ, որը ներկայումս այստեղ է, իր հետ բերել է 400 մարդ և շատ հարուստ նվերներ, որոնց արժեքը, ինչպես ասում են, կազմում է մոտավորապես 15000 էկյու: Բացի այդ, այստեղ հարկավոր է լավ հագնվել՝ լավագույն ձևով, ինչպես պահանջվում է այս արքունիքում: Ոսկե և արծաթե կտորներն ընդունված բան են մեծերի մոտ, իսկ այստեղ ժամանած պատվիրակները, որոնք նախապատրաստված չէին վերոհիշյալ ձևով, ստիպված էին հնարավորին շափ լավ հագնվել ֆրանսիական ոճով: Ֆրանսիայում, արքունիքի լավագույն մարդիկ չեն կարող հագնվել այնպես, ինչպես արքունիքի պատվիրակները, բայց դրա անելն անհրաժեշտություն էր, քանի որ հատուկ կարծիք և հարգանք են տածում ֆրանսիական ազգի նկատմամբ: Հուսով եմ, որ նման բարեհաջող սկիզբը կունենա ավելի բարեհաջող շարունակություն, և շուտով ահանատես կլինենք ֆրանսիացիների անվան ու մեծության ծաղկմանը Ասիայում: Սա իմ խոր սրտով արտահայտած մաղթանքն է և, ինդրելով Ձեզ, Պարոն, վստահեցնելու նորին Մեծությանը, որ հանձին ինձ ու իմ զավակների

նա ունի հավատարիմ հպատակներ, ես կցանկանայի առավելագույն ջերմությամբ Ձեզ ասել, որ ես Ձեր,

Պարոն,

Շատ խոնարհ և շատ հնազանդ ծառան եմ.

Լեքուալ:

P. Raphael du Mans. Op. cit., pp. 308—309.

X

ԳԵ ԼԱ ԲՈՒԼԵ ԼԵ ԳՈՒՋԻ ՆԱՄԱԿԸ ԳԵ ԼԵՈՒՆԵ

Բանբար Կանգո, 9 մարտի 1666 թ.

Պատիվ ունեցա նորին Մեծությանը գրելու այն մասին, որ Հնդկաստան գնալու համար նստել եմ հայկական նավ, որի կապիտանը դանիացի է, իսկ պատվիրակներից մեկը Շիրազի մոտ մահացած՝ ճանապարհի հոգնեցուցիչ և դժվարին լինելու պատճառով: Բայց կարելի է ամեն ինչ հաղթահարել, եթե սիրով ես կատարում քո պարտականությունը: Այստեղ լուրեր են հասնում, թե այս ամբարի մեր նավերի մոտենալը մեծ տագնապ է առաջացրել Հնդկաստանում: Մեր ազգի թըշնամիները լուր են տարածել, որ իբր կամբերտ Հյուզոն, Ֆրանսիացի ծովահենների ծովակալ կամբերտ Հյուզոն գալիս է այստեղ ամեն ինչ արյան և կրակի մեջ խեղդելու, որի պատճառով էլ հանդգնություն ունեցա օգտվելու այս փոքր նավից՝ շտապելու համար այնտեղ, որպեսզի հանգստացնեմ այդ ծողովուրդներին և արտոնություն ստանամ մեր նավերի ազատ մուտքի համար: Ավելի մանրամասն կգրեմ Սուրաթից, եթե Աստծո օգնությամբ բարեհաջող տեղ հասնեմ: Հավիտյանս ես կամնամ,

Ձերդ պայծառափայլության

Շատ խոնարհ և շատ հնազանդ ծառան՝

ԳԵ ԼԱ ԲԱՎԵ ԼԵ ԳՈՒԳ ԳԱՆԱՊԱՐԻՈՐԴ

P. Raphael du Mans. Op. cit., pp. 309—310.

XI

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐԻ ՆԱՄԱԿԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇԱՂԻՆ

23 հունիսի 1667 թ.

Ամենաբարձր, ամենասքանչելի, ամենահզոր, ամենալեհ՝ և անպարտելի Իշխան, Պարսկաստանի կայսրին

Ամենաբարձր, ամենասքանչելի, ամենահզոր, ամենալեհ՝ և անպարտելի Իշխան, հայր Մաթյոն, սուրբ զոմինիկյան միաբանության վանահայրը Մեծ Հայքում, նախիջևան գավառի հայ կաթողիկոսների կողմից մեզ մոտ էր ուղարկվել որպես պատվիրակ, հիշեցնելու համար այն պաշտպանության մասին, որ Պարսկաստանի հիշարժան և փառք վայելող հանգուցյալ կայսեր կողմից նրանց խոստացվել էր իր կենդանության օրոք, և դա արվել էր մեր խնդրանքով: Մենք, կարծում եմ, նեղություն չպատճառեցինք Ձերդ Բարձրությանը՝ հիշեցնելով այդ մասին: Գուք երջանկություն ունեցաք հաջորդելու գահին և պետությանը և, անշուշտ, բոլորովին չէիք կասկածում, որ դրա հետ մեկտեղ պիտի նաև ժառանգեիք այդ մեծ իշխանի բոլոր առաքինություններն ու մտերիմ կապերը, քանզի նա ընդունում էր, որ կայսրությունները պահպանվում են հիմնականում արդարության միջոցով և դա իր կողմից իրագործվեց նաև վերոհիշյալ կաթողիկոսների նկատմամբ, նրանց օգտին հրապարակելով մի հրովարտակ, որով նա թույլ էր տալիս նրանց եկեղեցու ծոցը վերադարձնել բոլոր նրանց, ովքեր ուրացել էին կաթողիկական հավատը, և եթե որևէ մեկը համատու էր մնալ իր նախկին սխալ ուղու վրա, նա զրկվում էր այն իրավունքից, որից օգտվում էր առաջ (երբ կրոնափոխ էր եղել), վերցնելու և սեփականացնելու իր ընտանիքի ամբողջ ունեցվածքը: Բացի այդ, այդ նույն հրովարտակով արգելում էր այդ կաթողիկոսներից արտակարգ տուրքեր վերցնել, հիշեցնելով հարկահավաքներին, որ նրանք բավարարվեն այն շահով միայն, որքան վերցնում էին մինչև հրովարտակի հրապարակվելը և ոչ մի դեպքում դրանք չբարձրացնեն:

Նույն նկատառումները, որոնք մղեցին Պարսկաստանի հանգուցյալ կայսրին հրապարակելու տվյալ հրովարտակը, անշուշտ, բավական են, որպեսզի Ձերդ Բարձրությունը կյանքում իրագործի դա: Չնայած վերոհիշյալ կաթողիկոսները վստահ են Ձերդ Բարձրության արդարությանը, այնուամենայնիվ, մենք մտածեցինք, որ ավելի հարմար կլիներ նաև մեր կողմից հիշեցնել այդ լուրերն, ինչպես որ անում ենք ներկա գրությունով: Եւ մենք երախտապարտ կլինենք այն լավ վերաբերմունքի համար, որ կցուցաբերեք վերոհիշյալ կաթողիկոսների նկատմամբ: Այդ հույ-

այնպես արեց, որ հոլանդացիներին ձեռքից բռնած տարավ և ցանկացավ հաշվեհարդար տեսնել այդ արհամարված ազգի նկատմամբ: Եվ որպեսզի այդ ձեռքի հզորությունը յուրաքանչյուրի համար ավելի զգալի լինի, սկզբում նա այստեղ բերեց այնքան փոքրիկ ու աղքատիկ մի նավ, որ Սուրաթում նրա հրամանատարը, չկարողանալով ոչ մի տեսակի առևտրական կապերի մեջ մտնել, զղվանքից նրա (նավի) հետ վերջ տվեց իր կյանքին: Հաջորդ տարի եկան արդեն երկու նավեր, և այսպես՝ շարունակաբար աստված նրանց (հոլանդացիների) ձեռքը հանձնեց բոլոր քաղաքները, բերդերն ու կղզիները, որոնք պորտուգալացիների տնօրինության տակ էին, ու սրանք, իբրև իրենց սեփականությունը, այստեղից տանում էին նպարեղեն, մարգարիտներ, համպար, ազամանդ, էմբասեղեն, ներկեր և այդ բոլորից մեծ օգուտ էին ստանում: Աստված, շքանկանալով ամբողջովին ոչնչացնել ու վնասել Հրեղկաստանից, մի քանի քաղաքներ թողեց նրանց, սակայն դրանք պիտանի չէին առևտրի համար: Այսպիսով, նա ցանկացավ նրանց թողնել մի քանի արմատ այն մեծ ծառից, որի ստվերի տակ ապրում էին լիակատար առատության մեջ, և ուզեց, որ նրանք բաց անեին իրենց աչքերն ու տեսնեին, թե ո՞րտեղից է գալիս կացնի այն մեծ հարվածը, որը ոչնչացրեց ծաղիկները և պտուղը: Այն ձևը, որով հոլանդացիները պորտուգալացիներին դուրս շարտեցին Հնդկաստանից, այնքան տարօրինակ ու ակնհայտ է աստծուն, որն անընդհատ խանգարում էր նրանց ծրագրերը և նրանց ստիպում հենց իրենց ձեռքերով օժանդակելու իրենց իսկ կործանմանը, որ հոլանդացիները ոչ մի ձևով չէին ուրախանում, ոչ էլ գլուխ գոլում, թե այդ ռազմական արշավների խոշոր հարվածները միայն ու միայն իրենց ձեռքի գործն են: Նրանք նույնիսկ տարբեր հավաքությունների ժամանակ խոստովանում էին, որ իրենց աղքատությունն ու թուլությունը նրանց թելադրում էր ավելի շուտ փախչել այդ տեղերից, քան թե նվաճումներ անել: Պորտուգալացիների երկպառակությունն ու կուրությունը հաստատվում է նույնիսկ Սուրբ Գրքով՝ թե «մեկը փախուստի է մատնելու հազարին, իսկ երկուսը ճանապարհից դուրս են շարտելու տաս հազարին»: Սա արդյոք չի՞ նշանակում, որ աստված ծախել է նրանց և, ձեռքերն ու ոտքերը կապելով, հանձնել թշնամիների քմահաճույքին: Իմ շարադրությունը բավական երկար կատարվեց, եթե մեկ առ մեկ պատմեի թե ինչպես նրանք կորցրեցին Յեյլանը, Մալական, Շեյնանը և բազմաթիվ այլ խոշոր քաղաքներ, որոնցից վերջինը Կուչենն էր (Couchin), դեռ չհաշված այն առանձին հանդիպումները, երբ հոլանդական սովորական մի նավակ իրեն էր ենթարկում ծովային հսկա բերդերը՝ (իմա՝ նավ) պորտուգալական այդ մեծ նավերը (caraques), որոնց արկերը ինչպես ուղարկվում էին, այն-

պես էլ ետ էին վերադառնում: Ես հաճախ լսել եմ այն հոլանդացիներին, որոնք ներկա են եղել նման հանդիպումներին: Ես դեռ չեմ խոսում այն բազմաթիվ քաղաքների մասին, որոնք համարյա անառիկ են եղել և որոնք, սակայն, բռունցքներով են գրավվել ցամաքում ապրող կիսաբոքիկ մարդկանց կողմից, ինչպես, օրինակ, Մելաբուրն է (Melapour), Սուրբ Թոմասը (S. Thomé), Մասկատը (Masquati) և շատ ուրիշներ: Մենք, որ այս երկրում ենք և անշահախնդիր աչքերով ենք նայում այս բոլորին, համարում ենք, որ այս գործում անպայման կա երկնային ուժի վրեժխնդրությունը: Վերոհիշյալ պորտուգալացիներից ոմանք ասում են, որ այդ բոլորն իրենց մեղքերի հետևանքն է: Ուրիշները համոզված են, որ դա վատ ղեկավարման արդյունք է: Իսկ այլոք դա կապում են Քաստիլ-Իսպանիայի մտադրության հետ, որն այդ ժամանակներում տնօրինում էր Պորտուգալիայի իր գահին և ուզում էր վերջ տալ պորտուգալացիներին՝ թաղնելով, որ նրանք օգնություն չստանալու հետևանքով ամբողջովին ուժասպառ լինեն և ոչնչանան Հնդկաստանում, միաժամանակ նրանց ստիպելով, որպեսզի խոստովանեն իրենց անկարողությունը ղեկավարելու Հնդկաստանը, որի կառավարումը վերցրել էին իրենց ձեռքը՝ իսպանացիներին անձնատուր լինելուց հետո: Հոլանդացին տիրանալով պորտուգալացիների այդ գեղեցիկ ու հարուստ հողերին, սկսում է այնտեղից դեպի Եվրոպա, Թուրքիա և Պարսկաստան առաքել Հնդկաստանի հիմնական հարստություններից մեկը՝ համեմունքները, ինչպես նաև այլ մթերքներ. և իր առևտուրն այնքան լավ հիմքերի վրա է դնում, որ ոչ մի մասնավոր առևտրական իր համար նպաստավոր պայմաններ չէր կարող գտնել իր ապրանքները տեղափոխելու համար մի քաղաքից մյուսը, եթե այնտեղ հոլանդացի առևտրականը ոտք չէր դրել: Այստեղ՝ Պարսկաստան են բերում մնացորդն այն բարձրորակ համեմունքների, որոնցով մատակարարում են Արևմուտքը և որպեսզի ազատվեն մաքսերից և այլ վճարումներից, Պարսկաստանի հետ պայմանագիր են կնքել՝ ամեն տարի թագավորից գնելու նրեթ հարյուր բեռ մետաքս, յուրաքանչյուրը քառասունութ թումանով, երբ այն առհասարակ երեսուն թուման արժե, փոխանակ այդ ավելորդով փոխհատուցեն այն տաս տոկոս մաքսերը, որ նրանցից կպահանջվեց նավահանգիստներում: Իսկ ներկայումս, իրենց պարտավորված զգալով վերոհիշյալ պայմանագրով, նրանք Բատավիայից սպասում են մի արտակարգ գործակալի գալստյանը, որպեսզի իրենց թոթափեն ոչ ձեռքատու լծից ու կնքեն մի ուրիշը, որն իրենց համար ավելի նպաստավոր կլինի: Եվ դա նրանց կհաջողվի անել, քանի որ ներկայումս իրենք են հանդիսանում նավարկության ու Հնդկական օվկիանոսի արքաները: Հոլանդացիներից քիչ ժամանակ հետո, տեսնելով այդ հսկայական

օգուտները, անգլիացիներն իրենց հերթին առաջատար գործերն ղեկավարելու համար Լինկոլնի Լեյբնիցի անվան տակ: Սակայն սրանք հռչակագրի ներքին նման շրջանակներում բերդերի մեջ: Իրենց ձեռքում նրանք պարզապես ունեին Մադրասը, Պալանը և արդեն ութ-տաս տարի է՝ նաև Բոմբեյը, որը Պորտուգալիայի թագավորը նրանց էր տվել իր քրոջ ամուսնության առթիվ: Նրանք (անգլիացիները) թույլ տալով մասնավոր առևտուրը իրենց գործակալներին և ծառայողներին, այդուհանդերձ իրենց ընկերության շահերը շուրջին հաստատել այն ձևով, ինչ ձևով հռչակագրի ներքին էին անում, այսինքն՝ բռնագրավելով, անմարդկայնորեն տանջելով իրենց ծառայողներին՝ եթե նրանց նկատելի իրենց սեփական շահերի համար առևտուր անելիս: Վարվելակերպի այս ձևը, ընդհակառակը, ավելի հարստացրեց նրանց ընկերությունը: Ինչքան էլ մեծ լինի գետը, այն առու կդառնա, եթե նրան տեղ-տեղ արնաքամ անեն: Ահա և երրորդ անգլիական ընկերությունը, որը թևեր է պարզում Հնդկաստանում: Մասնավոր նավերն այստեղ են գալիս ընկերության գրոշի ներքո: Մեծն Շահ Աբաս Առաջինին նրանք (անգլիացիները) տալիս են և՛ մարդիկ և՛ նավեր՝ նրան օգնելով Հորմուզը պորտուգալացիներից վերցնելու միայն այն պայմանով, որ նա մաքսատունը տեղափոխի Փամմերոն, որը և ըստ այդմ կոչվեց Բենդեր Աբասի՝ Շահ Աբասի նախահանգիստ, և նա (Փամմերոնը) պետք է ստանա եկամտի (մաքսի) կեսը, որից մինչև օրս նա օգտվել էր, բայց այնպիսի նենգություններով և անարդարությամբ, որ (Փամմերոնի) հետ, որ փոխանակ նրան տալու իրեն բաժին ընկնող վեց կամ յոթ հազար թումանը, տվել էին վեց կամ յոթ հարյուր. և դեռ դրա մի մասը հարկավոր էր տալ պետական պաշտոնյաներին, որպեսզի մնացածը իրեն մնա: Կորցնելով Հորմուզն ու Պարսից ծովում Բահրեյն կղզին՝ Բալսորայի մոտ, որտեղ որսում են Արևելքի ամենագեղեցիկ մարգարիտները, պորտուգալացիները Պարսկաստանի հետ պայմանագիր են կնքում, որպեսզի Կոնգոյում կառուցեն ծովային մի մեծ նավահանգիստ և այնտեղ ներթաշեն վաճառականներին ու ապրանքները՝ այն պայմանով, որ իրենց վերցնեն մաքսի կեսը, որից նույն ձևով և նույն պայմաններում օգտվել են անգլիացիները: Իսկ այժմ արդեն երկու տարի է, ինչ իրենց զրկել են այդ իրավունքներից: Ներկա պայմաններում մեր պորտուգալացիներն իրենց նեղված են զգում Մասկատի արաբների պատճառով, որոնք տարբեր ժամանակներում վերցնելով նրանց նավերը, սկսել են լավ զգալ և հզորանում են ծովերում: Աստված տա՝ եթե կարողանան հաղթել այդ անհավատներին, հետագայում հնարավորություն կունենան իրենց թնդանոթներով անհանգստացնել Պարսկաստանին, քանի որ լեզվի ուժով այդ ազգի հետ ոչ մի քայլ առաջ չես գնա, հատկապես երբ ցամաքում ապրող մարդիկ այլևս ոչ

մի բանից չեն վախենում, քանի որ հնարավոր չի լինում ամեն տարի գալ այստեղ և իր բաժինը պահանջել. և որքան էս տեսնում եմ Պարսկաստանի վարվելակերպը, նա կարող է նույն ձևով վարվել նաև անգլիացիների հետ: Ահա արդեն քսան տարի է, ինչ ասում են, որ հաջորդ տարի գալու են մեր ռազմական նավերը, որից հետո կվերցնենք այն ամբողջ գումարը, որ մեզ է պատկանում, նույնիսկ տոկոսներով հանդերձ: Ահա երկու-երեք տարի է, ինչ Ֆրանսիական ընկերության ոչ մի նավ չի հայտնվել Պարսկաստանի նավահանգիստներում (նրանց մեծ թվով նավերն ուղղություն են վերցնում դեպի Բալսորա): Նրանք իրենց ապրանքները փոխադրել են ուղիղ դեպի իրենց տուն և չեն անցել մաքսատնից՝ վճարելու համար համապատասխան գումարները: Այս տարի մաքսատան աշխատողը (որն այս նավահանգիստները ինքն է վերցրել՝ տարեկան քսաներեք հազար թումանով, որովհետև մինչ այդ գումարների մի մասը ուտում էր այդ գործով զբաղվող պաշտոնյան, իսկ մյուս մասը տալիս էր թագավորին), ձանձրացած լինելով այն գեղեցիկ խոստումներից, թե Ֆրանսիական նավատորմը գալու է Պարսկաստան, իր հետ բերելով նվերներ և մի դեսպանի, որը պետք է վերջիվերջո բանակցություններ վարի վճարումների իրավունքների շուրջ, հավատացրեց, որ իրեն հետաքրքրում է միմիայն կանխիկ դրամ ստանալը և ոչ թե գեղեցիկ խոսքերը, որոնք իր ծախսերը հոգալ չեն կարող: Զգուշացվում էր, որ եթե այսուհետև էլ նույն իրավիճակը շարունակվի, եթե պարսիկներն առձեռն շտանան անցյալի ու ներկայի գումարները, քանի որ ապրում են այնպիսի մի դարում, երբ ամենակարևորը փողն է, ապա մեծ վեճերը բոլոր միջոցները ձեռք կառնի, որպեսզի այդ դրամը մուտք գործի թագավորի գանձարան: Ահա արդեն հինգ տարի է, որ ձեռք պարտնայք պատվիրակները, որոնք ժամանել են այստեղ ցամաքային ճանապարհով, գրծել են հանգուցյալ թագավորին տված իրենց խոստումները, թե իրենց նավերը ժամանելու են Պարսից ծոց նույն տարվա հոկտեմբեր ամսին և իրենց հետ բերելու են շատ թանկարժեք նվերներ, և թե իրենք ակնատես են եղել թագավորի մոտից այդ նվերը վերցնելուն: Ես, որ թարգմանչի դեր էի կատարում (որովհետև թագավորը ուրիշին չի ուզում), ավելացնում էի, որ ծովերը ընդհանրապես չէին ենթարկվում նավավարներին և որ փոթորիկը նրանց իրենց կամքից անկախ կարող է տանել այլ ափեր, բայց Ֆրանսիայի կամքն այնպիսին է, ինչպիսին Դուք գրում էիք Ձեր նամակներում: Ես նույնիսկ Ձեր պարտներին համոզել էի երեք տարվա արտոնություն խնդրել՝ ճանաչելու համար Պարսկաստանի ուժեղ ու թույլ կողմերը, որպեսզի հետագայում հնարավոր լինի արձակել գիտակցված ձևով համաձայնագիր կամ դաշինք կնքել: Եվ այդ խնդրանքը հավանություն

գտավ թագավորի կողմից, որը միաժամանակ տվեց իր հավաստիացումները, որոնք ես վերածեցի Ֆրանսերենի, իսկ պարոն դե Լալենը, որը այստեղ Ֆրանսիայի պատիվն է և արքունիքում նրա մասին շատ է խոսվում, գրանք ուղարկեց Ձերդ Մեծությանը: Այստեղ վերադարձած Ձեր գործակալներն ու պատվիրակներն իրենց պահեցին համաձայն ներկա ժամանակի պահանջների, որոնք տարբերվում են անցյալից: Այստեղ այլևս չեն գոհանում մի ծաղկով, հազվագյուտ ու հետաքրքիր մի իրով, մի որևէ գեղեցիկ աշխատանքով, որը վեր է և բնությունից և նյութից, այլ ներկայումս նրանց հարկավոր են ոսկի, արծաթ և այլ նման մետաղներ, որոնք մաս են կազմում իրենց կատարած ծախսերի: Մենք ի սրտե սպասում ենք այդ ընկերության հիմնադրմանն ու ամբապնդմանը: Մենք այստեղ ունենք բոլոր տեղեկությունները, թե այն (ընկերությունը) ինչպիսի մեծ հիմքերի վրա է զբվելու և թե ինչպիսի մեծ մասնագետներ են աշխատելու այն ոտքի կանգնեցնելու համար. և գլխավորը, անշուշտ, այն է, որ մեր մեծ արքայի եռանդը դրա առաջին շարժիչ ուժն է և դա ոչ թե հարստություն ձեռք բերելու իմաստով է, բանի որ նրա տերություն գավառները լեցուն են հարուստ հանքավայրերով, այլ՝ աստծու փառքն ու տիրությունը տարածելուց: Քանի որ բոտ Ձեզ, հանուն Ֆրանսիայի առկա են բոլոր նպաստավոր պայմանները, ուստի այս գեղեցիկ ընկերությունը կարելի է ակնկալել հետագա մեծամեծ հաջողություններ: Մենք այստեղ՝ Ասիայում գտնվողներս հանդիպում ենք Հնդկաստանում պորտուգալացիների կողմից կաթուղիկական տիրապետության մնացուկներին՝ ավերված եկեղեցիներին, պղծված խորաններին, գարշելիության վերածված պաշտամունքային վայրերին, պղծված սուրբ սկիհներին, համարյա ամբողջությամբ ոչընչացած կաթուղիկությունը, ինչպես նաև աստծու կողմից ուղարկված հազար ու մի տանջանքների հետքերին: Եթե ողորմածության ժամանակը հասել է, և երկնային արդարությունը լիովին բավարարված է, մենք հուսով ենք, որ Ֆրանսիայի՝ Ձեր ազնվական ընկերությունը վհանդիսանա աստծու կողմից առաջարկվածը, որպեսզի վերակառուցվեն իր տաճարն ու խորանները, և վերականգնվի իր պաշտամունքը Հնդկաստանում. և մենք այստեղ լսում ենք երկու ամիս մեզ համար աշխատած Ձեր հինգ պատվիրակների առարկությունները, վեճերն ու վճիռները, ինչպես նաև Սուրաթից մեզ հասած՝ Ձերոնց կողմից կատարված բոլոր անախորժությունների լուրերը: Այդ բոլորի պատճառները պետք է փնտրել և ազգությունների ու կրոնականների տարբերություն մեջ, և շահույթի մրցավազքի: Եվ այս բոլոր միջադեպերը տանում են դեպի կործանում: Բայց միևնույն է, դա մեզ չի խանգարում հուսալու, որ աստված իր նպատակների հաջողության համար ձեռք

կանկնի մեր Ֆրանսիական ազգին՝ ցույց տալու համար ապագա դարերին իր ամենահզոր ձեռքի ուժը, Հնդկաստանի առևտրի ղեկին կանգնեցնելով հրեղեն մի ազգի, որն ավելի ունակ է Մարսի ու Պալլասի թելադրանքները կատարելու, քան Մերկուրիինը: Այնուամենայնիվ, մենք մեր աղոթքները շարունակում ենք հղել երկնային այն բարի ուժին, որպեսզի հարատևեն մեր անպարտելի արքայի և՛ կյանքը, և՛ հաղթանակները և, ինչպես իր (թագավորի) հանգուցյալ հայրն իր արդարությունը եղավ հերետիկոսների տիրապետության առաջին բնաջնջող ուժը, թող ուրեմն իր Աստվածատուր զավակն այս երկրներում լինի բարեպաշտության հիմնադրողն ու պահպանողը: Թող նրա ջանասիրությունը տարածվի այդ երկրների, ինչպես նաև Ֆրանսիայի այն երեք գավառների վրա, որտեղ վեղարավորներ (Կապուլիններ) կան և որոնք իրար մեջ են բաժանել Արևելքի միսիանները: Մենք՝ սուրենդիներս, մեզ համար բաժին ենք ունեցել Կիպրոսը, Սիրիան, Քաղզիքը, Պարսկաստանն ու Հնդկաստանը: Մենք տեղավորված ենք բոլոր մեծ ճանապարհների վրա՝ Կիպրոսում՝ Նիկոզիա և Ռենեկա, Սիրիայում՝ Հալեպ և Դիարբեքիք, Իրաքում՝ Մոսուլ և Բաղդադ, Պարսկաստանում՝ Թավրիզ և Սպահան, Հնդկաստանում՝ Սուրաթ և Մադրասպատան, ինչպես նաև Եգիպտոսում՝ Մեծ Կահիրե: Երբ Ձեր ազնվական ընկերության ճեպագրերն անցնում են մեր գրասենյակներով, համապատասխան գրանց կարևորությանը, մենք մեր հնարավորության սահմաններում ամեն ինչ անում ենք և միշտ էլ ամեն ինչ կանենք, որպեսզի դրանք ուղարկվեն մեզ համար վստահելի երկրների սուրհանդակով և հասցվեն Հալեպ կամ Զմյուռնիա, որտեղ էլ նրանք հանձնվում են Ֆրանսիայի հյուպատոսներին և նրանց միջոցով Փարիզում անցնում են Ձեր ձեռքը: Իսկ երբեմն մեզ հանձնարարում են այդ նամակները դնել ծրարների մեջ, կնքել և ուղարկել Մարսելի, Լիոնի ու Փարիզի մեր նամակատարների միջոցով, որոնք բարի պատվիրակներ են և փորձառու՝ մեր նամակներն ուղարկելու, տեղ հասցնելու և ստանալու հարցերում: Նրանք խստագույն ճշտագահություն մեզ տեղյակ են պահում այդ նամակների ուղարկման և հանձնման ամսաթվերի մասին: Եվ որքան վեղարավորներ (կապուլիններ) կան այստեղ, բոլորն էլ պատրաստ են ծառայություն մատուցելու Ձեր պատվիրակներին և գործակալներին, ծառայողներին և առևտրական գրասենյակներին: Երբ Ձեզ հաճո կլինի, Ձերդ պայծառափայլություն, ինչպես նաև պարոններ գլխավոր տնօրեններին՝ մեզ հանձնարարություն տալ, ինչպես Ֆրանսիայում, Դուք հանձին մեզ կունենաք իրենց ամենախոնարհ պարտականությունը, այն էլ ամենայն անկեղծությամբ, կատարող ծառաներ: Մենք այս երկրներում ապրում ենք երկնային նախախնամության համար և բոլոր

րովին չենք մտածում նրան օգնել զարտուղի ճանապարհներով: Նաև դա է պատճառը, որ մենք այդ աշխատանքները կատարում ենք անշահախնդրորեն: Այն, ինչ վերաբերում է երկրի համեմունքի առևտրի վիճակին, ինչպես նաև արծաթի տեղափոխմանը և այլն, մենք այնքան ենք տեղյակ, որքան ընդհանրապես գիտեն մնացած մարդիկ: Ձեր կողմից ուղարկված ծառայողներն այստեղ քիչ մնալով հանդերձ, կարող են իրենց լավ հիշողությամբ Ձեզ սպառիչ տեղեկություններ տալ, մի բան, որ մենք չենք կարող: Իսկ ինչ վերաբերում է հավատի հարցին և աստծո փառքին, Մերձավոր Արևելքի, Թուրքիայի, Պարսկաստանի և Հնդկաստանի միսիանների կողմից կատարված աշխատանքին, ապա պետք է ասել, որ Արևելքի սխիզմատիկ (հերձվածող) և հերետիկոս քրիստոնյաների սիրտն էլ ավելի է ամրացել: Այն լեցուն է համառությամբ, մոլորությամբ և հոռմեական եկեղեցու դեմ թշնամանքով: Նրանց ամենաեռանդուն հոգևոր առաջնորդներից և եպիսկոպոսներից շատ-շատերը երբեմն անգիտակցաբար իրենց ժողովրդին այսպիսի քարոզներ են անում. «Ավելի լավ է մահանդականներ լինեք, քան Ֆրանկներ և հոռմեացիներ»: Եվ եթե նրանք մահանդականների նման այստեղ ձեռք բերեն ժամանակավոր տիրապետություն, այս երկրներում մեր ներկայությունը կրոնավորի հազուստի տակ անհնարին կդառնար. իսկ մի բան արդեն ակնհայտ է, որ այս ըմբոստ և մոլորված ժողովուրդների նկատմամբ աստվածային վրեժխնդրությունը դեռևս մոտալուտ չէ: Նրա (աստծո) արգարության ժամանակը և սուրբ պատրիարքներ Ներսեսի և եկեղեցու բաժանումից առաջ առաջին դարերի լուսավորիչ Գրիգորի մարգարեությունները, կարծես շատ լավ հաստատվում են հույների և հայերի ներկա ստրկական վիճակով և դրանք (մարգարեությունները) պետք է իրականանան: Նրանց (մարգարեությունների) էությունն այնպիսին է, որ տարիներ շարունակ նրանք ստրուկներ կմնան անհավատների հրեշավոր տիրապետության տակ՝ թագավորից և իսկական առաջնորդներից զուրկ, իսկ ազգը համարյա ոչնչացած կլինի. և դա մինչև այն ժամանակ, երբ ազատ մի իշխան (Ֆրանսիացի) կկարողանա կործանել այդ հրեշավոր հսկա կայսրությունը, վերամիավորել եկեղեցին, վերակենդանացնել առաջին դարերի բարեպաշտությունը, ջանասիրությունը, անմեղությունն ու պարզությունը: Եվ միայն այդ ժամանակ, վաչելելով այդ երջանիկ պահերը, քրիստոնյաները կբացականչեն. Ամոթ, ամոթ մեր նախնիներին, որոնք իրենց սերունդներին գերության և մոլորության վիճակում են թողել: Ավելի լավ տրամադրված պրեկատները, հայրերն ու եպիսկոպոսներն իրենց զրբերում և ձեռագրերում մեզ տեղեկացնում են այդ մարգարեությունների և դեռ շատ ուրիշ բաների մասին, որոնք ժամանակի կողմից արդեն ստուգ-

ված են: Ուրիշները թաքցնում են այդպիսի բաներն իրենց մոլորված ժողովուրդներից, որպեսզի նրանք տեսնելով իրենց հերետիկոսությունը, շեղվեն դեպի իսկական եկեղեցու լույսը: Իսկ ինչ վերաբերում է մահանդականներին, նրանց զգացմունքային կյանքը կախված է իրենց հավատի տված այն ապահովությունից, որ ապրելով արյունարբու բռնակալների նման միևնույն է իրենք մեղք գործած չեն լինում: Քրիստոնյաներին հալածելու իրավունքը և իրենց աղանդի աճի փաստը, այն ժամանակ, երբ մերը, ընդհակառակը՝ նվազում է, ինչպես նաև իրենց ժամանակավոր տիրապետության մասին գաղափարը, որը նման է կերպասի վրա ընկած մի կաթիլ յուղին, որը դրան կպած է և դուրս չի գալիս և, վերջապես, թուլատրելի բոլոր տեսակի ոճիրները, նրանց դիտում է որպես իսկական հավատացյալների և անպայմանորեն արժանացնում երկնքին և այլն: Եվ այս բոլորը պատրվակներ են, որոնք նրանց պահում են այդ վիճակում, շկարողանալով և շուգենալով նրանց ներքաշել այն հավատներին, որոնք վեր են իրենց բանականությունից. և դեռ ավելին, ավելացնելով, որ աստված թունավոր օձերը պահպանում է, որպես թույն և հակաթույն: Նրանց (մահանդականներին) պահանում են քրիստոնյաների կատարած մեղքերը. աստված նրանց հաղթանակ է տալիս ու տալու է մինչև այն ժամանակ, երբ մենք ինքներս լիովին կպատժվենք՝ անկախ այն բոլոր ապրանքային գումակներից, օգնությունից, բանականից և օժանդակություններից, որ կտանք մեկս-մյուսին: Այդուհանդերձ, ամբողջ Մերձավոր արևելքը լեցուն է Հիսուսյան (ճիզվիտ) միսիոներներով ու միսիաներով, կարմելիտներով, վեղարավորներով (կապուլիններով) և ուրիշներով: Եվ յուրաքանչյուրը ջանում է կատարել իր պարտականությունը: Աստված բոլորին եռանդ, ուժ և հետևողականություն է տալիս, որպեսզի կյանքի գնով և առանց վախենալու ու կարմրելու պաշտպանեն Ավետարանը: Զրուցում են, խորհրդակցում և այնքան հավատ ներշնչում, որքան յուրաքանչյուր ոք կարողություն ունի դա անելու, և նրան թույլ է տալիս լեզվի իմացությունը: Նրանք աշխատում են սուրբ ավետարանը մտցնել այնտեղ, որտեղ այն չկա, աշխատում են այն լսելի դարձնել բացատրությունների միջոցով, առաքյալների մեզ հաղորդած ճշմարտություններով ու դրանց իմաստներով, ինչպես նաև կիրառելով բոլոր տեսակի միջոցները՝ վերադարձնելու համար մոլորված հոգիները մեկ դեկավարի հովանավորության տակ, որը և է սուրբ Պետրոսի օրինական ժառանգորդը և երկրի վրա Հիսուս Քրիստոսի փոխանորդը, որ մեր սուրբ հայր Պապն է: Նրանք ջանում են նաև արմատախիլ անել արատները, սխալները և այլն և այդ բոլորը փոխարինել կյանքի և բարքերի ամբողջականությամբ, հնարավորություն ստեղծել օգտագործելու ավե-

տարանի գեղեցիկ գրվածքները, քաղել այնտեղից օգտակար պտուղները և առաջադեմ խրատները: Փարիզի մեր տպագրիչները հասարակությանը հաճախ տալիս են խոշոր և գեղեցիկ տառերով տպագրված հիշողություններ, ինչպես նաև նամակագրություններ, որ ես բոլորովին էլ չէի համարձակվի անել սովորական գրչով, որը գեղարվեստորեն հղկված չլինելու հետևանքով կարող է խզրզանք առաջացնել ու, այդպիսով, մեծ տարբերություն կլինի վերոհիշյալ այն տպագիր տառերի համեմատ, որոնցից օգտվում է ժողովուրդը: Ինչ վերաբերում է մեզ՝ խեղճ վեղարավորներին (կապուչիներս), ապա ամենայն հոգաբարձրաբար ընդունում ենք, որ մենք անօգուտ ծառաներ ենք՝ լինի Արևելքում, լինի Արևմուտքում, սակայն մենք անում ենք մեր կարելին, որը իրականում շատ քիչ բան է կամ բոլորովին ոչինչ է այն բանի կողքին, որ ինքներս կցանկանայինք անել: Մեր գտնված երկրների լեզուների իմանալն ու խոսելը, ավելացրած նաև եվրոպական գիտություններին որոշակի շափով տիրապետելը, մեզ, հավանական է, կբավարարեին թափանցելու ժողովուրդների մեջ, հետևաբար՝ կատարելու մեր առաքելությունը: Այն ժամանակ, երբ կսկսի գործել աստծու ամենահզոր ձեռքը, աչդ ժամանակ արդեն մենք հաղթանակ կգոչենք: Ահա, Ձերդ պայծառափայլություն, Ասիայի ամենախուլ վայրի վիճակը՝ այն, ինչը վերաբերում է ժամանակավորին և ամբողջ Արևելքին: Իսկ այն, ինչ վերաբերում է հոգևորին, հուսով ենք, որ ներկայումս կառավարող մեր մեծ արքայի ջանքերով և՛ մեկին (ժամանակավորին), և՛ մյուսին (հոգևորին) կտրվի նրանց նախկին փայլը և ինքը, կամ իր ժառանգորդներից որևէ մեկը կլինի այն արքան, որի մասին ներսեսը տեսիլք, ինչպես նաև աստվածային հայտնություն է ունեցել: Այդուհանդերձ, մենք, խեղճ վեղարավորներս (կապուչիներս)՝ Ձեր ամենախոնարհ հպատակները, այս երկրներում ենք գտնվում Ձեր արքայական հեղինակության և պաշտպանության սովերի տակ, պատրաստ մեր մասնագիտությանը վերաբերող ամեն տեսակի ծառայության, որը կհրամայի նորին Մեծության, Ձեր, Ձերդ պայծառափայլության և պարոններ գլխավոր տնօրենների կողմից: Դուք, հանձին մեզ, այս երկրներում ունեք անկեղծ ու ճշտախոս մարդիկ, որոնք իրենց աղքատիկ ու խոնարհ պաշտամաններով հանդերձ, պատրաստ են սրտանց ծառայելու մարդկանց, որոնց հետ կամովին նրանք կապված են: Այդուհանդերձ, աղոթում են

նախախնամությանը, որ պահպանի Ձեր անձը, Ձեր առողջությունը հանուն հասարակության ծառայության և բարօրության: Դա

Ձերդ պայծառափայլության ամենախոնարհ ծառան է՝

Հայր Ռաֆայել դյու Ման

Սպահան, Պարսկաստանի մայրաքաղաք:

P. Raphael du Mans. Op. cit., pp. 322—331.

XIII

ՎԵՂԱՐԱՎՈՐ (ԿԱՊՈՒՉԻՆ) ԺՈՋԵՖ ՄԱՐԻ ԳԵ ԲՈՒՐԺԻ ՆԱՄԱԿԸ
ԳԵ ԿՈՒՐՆԵՐԻՆ

Ձերդ պայծառափայլություն.

(Գրում եմ) սուրբ հայր Օնորե դ'Օքսեռի խորհրդի համաձայն որը Փարիզի գավառներից մեկի վեղարավորն (կապուչին) է և Մերձավոր արևելքի միսիանների գործակալը, և որն իր նամակներից մեկում մեզ գրում էր, որ Ձերդ Մեծությունը ցանկանում է տեղեկանալ, թե ինչով են զբաղված խեղճ միսիոներ հայր վեղարավորներն (կապուչիները) այս վայրերում՝ Մերձավոր արևելքում, որտեղ նրանք բնակելի տներ ունեն: Եվ ահա, որպեսզի մասամբ կարողանամ ի կատար ածել իմ պարտականությունը Ձերդ Մեծության հանդեպ, անմիջապես գրիչը վերցրի և անկեղծ սրտով ինքս ինձ ասելուց հետո, որ աշխարհի ո՞ր ծայրում էլ գտնվելիս լինեմ, ես ցկյանս ֆրանսիացի եմ, որ պատրաստ եմ կյանքս տրամադրել իմ թագավորի ու արքայի ծառայությանը, ուստի և հիմա Ձերդ Մեծությանը կտեղեկացնեմ Մեզիայի մայրաքաղաք Թավրիզի վիճակի մասին, որը Պարսկաստանի թագավորի նստավայրն է և որտեղ մենք մի փոքրիկ տուն ունենք իր եկեղեցիով: Այստեղ մենք պարսիկների և հայերի հետ միասին ապրում ենք այն աստիճանի ծայրահեղ աղքատության մեջ, որ նույնիսկ Յրանսիայի ամենաաղքատիկ վանքերում հնարավոր չէ հանդիպել: Աստված վկա է, որ մենք, թուրքերի երկրում մեզ նվիրում ենք նրա (աստծու) ծառայությանը, որպեսզի դատաստանի օրը նրանց (թուրքերի) հանդեպ լինենք testimonium contra illos, իսկական կրոնը ընդունած չլինելու համար, որովհետև մենք ոչ մի ջանք չենք խնայում նրանց ասելու մեր աստվածային տիրոջ Հիսուս Քրիստոսի, ինչպես նաև Ավետարանի ճշմարտությունները: Երբ պետք է նրանց բացատրել այս ճշմարտությունը, մենք բո-

չորովին էլ շենք ամաշում նրանց առաջ, ոչ էլ այն ժամանակ, երբ հարկ է լինում պատասխանել նրանց հարցերին: Փառք տիրոջը, մենք բաջ գիտենք, թե ինչպես պետք է կրոնի հարցերում վարվել սուրբ Գրքի հետ, որի մասին իրենք նույնքան տեղյակ են, որքան և մենք, գիտենք նաև, որ այդ սուրբ Գիրքը մարդկանց տրված է աստծու կողմից՝ մարգարենների միջոցով, որ այնտեղ տրամաբանական բաներ են գրված: Նրանք այդ բոլորի մասին գիտեն նաև համեմատելով իրենց Ալլուրանի հետ, որտեղ, լավ բացատրված հոգվածներում, նույնիսկ ընդունվում է Հիսուս Քրիստոսի աստվածությունը, նրա հիանալի կյանքը, նրա հրաշքները: Հենց նրանք էլ նրան (Քրիստոսին) ընդունում են բոլոր մարգարենների մեջ որպես ամենայն սրբի, մաքուրի և անբասիրի, որ նա կենդանի է և գտնվում է երկնքում, որ նա դարձյալ կգա և դեռ այսպիսի շատ բաներ, որոնք ընդունելի են իրենց կողմից: Ընդհատ է, որ Պարսկաստանում կրոնական հարցերի շուրջ վիճաբանությունների համար ավելի ազատություններ կան, քան Օսմանյանների մոտ, որոնք շատ ավելի խիստ են և պարսիկներին նայում են որպես հերետիկոսների, իսկ նրանք էլ իրենց հերթին նույն մեղադրանքն են անում նրանց նկատմամբ: Համոզում ենք խեղճ քրիստոնյաներին, խրախուսում, որ ինչ չափի հալածանքներ ու հրեշավոր խտություններ էլ լինեն, իրենք չկորցնեն իրենց հավատը: Նրանց համար մեր եկեղեցում պատարագի ժամանակ կարգում ենք բարոզներ, որոնց մասնակցում են ինչպես քաղաքի բնակիչները, այնպես էլ առևտրի հարցերով այստեղ ժամանած օտարերկրացիները, քանի որ թավրիզը մեծ առևտրական քաղաք է և նաև Պարսկաստանի խոշոր հանգուցային կենտրոն, որտեղից անցնում են և պարսկական հողեր մուտք գործում բազում ճանապարհներ: Այստեղ գալիս են Կոստանդնուպոլսից, Զմյուռնիայից, Բուրսայից, Թոխաթից (Tocat), Էրզրումից (Arserom), Երևանից (Erivan), Նախիջևանից (Anaxivan), Հալեպից, Գիարբեբիբից, Մերդինից, Ուրֆայից (Orfa), Բիթլիսից (Betlis), Վանից (Van), Չորսից (Chorsa), Ագուլիսից (Akoulis), Էգլիսից (Eglis) (°), Վրաստանի մայրաքաղաք ամբողջ Գուրջիստանից ու Քրդստանից, Գանջայից (Gängea), Շամախուց (Chamaké), Գիլանից (Guilan), Արդեբիլից, մի խոսքով բոլոր հեռու ու մոտիկ տեղերից՝ որպես Սպահան գնալու համար տարանցիկ վայր: Առևտրականներն այստեղից անցնում են գնալու համար նաև Շամախի, Գիլան, Գանջա: Սրանք այն երեք քաղաքներն են, որտեղ վաճառվում են պարսկական մետաքսները: Զուլֆայի (Julfa) հայ առևտրականներն այստեղ իրենց արհեստանոցներն ու խանութները ունեն Զմյուռնիայից ու Հալեպից ժամանող քարավանների համար, որոնք Պարսկաստան են բերում Լոնդոնի, Ֆրանսիայի և Վենետիկի կերպաս-

ները, մարջանը (le korail), դեղին սաթը, թուղթ, Վենետիկի հայելիներ, սպիտակ երկաթ և այլ՝ մահուկից ու կտորեղենից պատրաստված ապրանքներ, ինչպես նաև արդուզարդի իրեր, որոնք վաճառվում են Պարսկաստանում: Թավրիզը Սպահան գնացող բոլոր ապրանքների առաջնեկն է: Այդ ապրանքներն անցնում են Ղազվինով (Casbin), Զենջանով (Zengan), Ղումով (Kom), Քաշանով (Kascian), Սուլթանիեով (Sultanié), որոնք այստեղից Սպահան գնացող ճանապարհի վրա գտնվող խոշորագույն քաղաքներն են: Արդեբիլը, որն այստեղից շորս գտնվող խոշորագույն վրա է, նշանավոր է Պարսկաստանի հին թագափորներին այնտեղ գտնվող գերեզմաններով: Ղումում Սպահան տանող վորների այնտեղ գտնվող գերեզմաններով: Ղումում Սպահան տանող ճանապարհի վրա, գտնվում են Մեծ Շահ Աբասի և վերջերս մահացած նրա որդի՝ Շահ Աբասի գերեզմանները: Առանց չափազանցության կարող եմ առել, որ Թավրիզ քաղաքը Փարսիի չափ տարածություն ունի: Գա պարտեզներով լեցուն մի մեծ քաղաք է: Քիչ են այն տները, որոնք իրենց մեծ կամ փոքր պարտեզը չունենան: Շինությունները մեծ մասամբ պատրաստված են հողից՝ չթրծած սալեր են, որոնք ներսից սպիտակեցվում են գիպսով: Աչքի ընկնող մարդիկ իրենց բնակարանների ներսը պատրաստում են թրծած սալերով ու գիպսով, ավելացնելով նաև յուղաներկով նկարված մի քանի նկարներ: Պարսկաստանի բոլոր տները նման են սրանց: Ըստ իս, Թավրիզը նախկին էկբատանն է, որը կործանվել է պատերազմի ու երկրաշարժերի հետևանքով: Ավերակները նրա հնության ապացույց են: Ժամանակին այն շրջափակված է եղել պարսպաներով: Գրանց հետքերը դեռ երևում են: Սա Պարսկաստանի առաջին նահանգներից մեկն է, որի կառավարիչն է թագավորի բանակի գեներալը: Եվ քանի որ ինքն անձամբ չի կարող բնակվել այստեղ, ուստի նա այստեղ է ուղարկել իր ավագ որդուն, որը կառավարում է արդեն երկու տարի: Նա (որդին) վստահեցնում է, որ սիրում է ֆրանկներին, իսկ մեզ փաղաքշում են, նույնն են անում նաև սպաները: Կա նաև գավառների գլխավոր վերակացուն, որից նրանք կախում ունեն և որին Ադրբեջանի (Aderbegian) վեզիր են անվանում: Նա թագավորին հասանելիք փողերն է հավաքում: Նա ունի իր անկախ արդարագատությունը, բայց մահավճիռ արձակելու իրավունք չունի: Այդ իրավունքը կառավարիչին է: Այս վեզիրն ու նրա որդիները մեզ հետ սիրով են և խոսում են որպես հարազատների: Ես Զերդ Մեծուհետ սիրով են և խոսում են որպես հարազատների (կապուշիններ) նպատակը ավելի շուտ գաղտնասպահ լինելն է և ոչ թե գրքերի ու գրությունների միջոցով Մերձավոր արևելքում կատարած բարի գործերի հրատարակումը: Առանց որևէ հպարտության պետք է ասեմ, որ թուրքերը մեզ հարգում են և բարի ցանկություններ ունեն մեր նկատ-

մամբ: նրանց մեջ մենք ճանաչում ենք շատ խելոք մարդկանց, և դա պիտի բացատրել մեր զբաղմունքի բնույթով և բոլորի հետ վարվելու ձևի իմացութեամբ: Լավ օրինակը, ազնիվ կյանքը, խելոք զրույցներն ու խոսակցութիւնները նրանց մոտ միտք են առաջացնում, որ մեր կրօնի մեջ ինչ-որ լավ բան կա: Առայժմ մենք այստեղ ունենք երկու քարոզիչ հայրեր՝ սուրբ Ժուլեն Ժոզեֆ դե Նելերն ու ես. մեր երրորդ ընկերը՝ հայր սուրբ Ֆրանսուա Մարի դե Շինոնը մահացած ինն ամիս առաջ, սրբութեան մեջ: Նա իսկապես որ շատ արժանիքներ ունեցող կրօնավոր էր և շատ էր սիրում իր աշխատանքը և փառավորում մեր բարի տեր Հիսուս Քրիստոսին: Զերմեռանդ էր seraphin-ի նման և անկասկած նա հիմա պսակազրկված է երկնքում: Շատ հայեր աստծու դատաստանի առաջ պատասխան կտան, եթե կյանքում չօգտագործեն այն ճշմարտութիւնները, որ քարոզել է իրենց՝ ցույց տալու համար եկեղեցու միութիւնը մեկ հոգու ղեկավարութեան ներքո, որը և մեր տեր Հիսուս Քրիստոսին հաջորդողն է: Մենք նույնպես նրանց ամեն օր նույն քարոզներն ենք անում, որովհետև դա մեր պարտականութիւնն է: Զերդ պայծառափայլութիւն, պարտավոր եմ նախ և առաջ իմ կյանքն ու արյունը տալու ավետարանի ճշմարտութիւններին, ինչպես նաև իմ պարտականութիւնն է ծառայել Զերդ Մեծութեանը, կատարելով այն բոլոր հրամանները, որ պատիվ կունենամ ստանալու իրենից: Մա մի նշան է, որ Զերդ Մեծութիւնը սիրում է խեղճ վեղարավորներին (կապուչիներին), քանի որ իրեն թույլ է տալիս դիմելու նրանց ծառայութեանը: Հնդկաստանի ընկերութեանը վերաբերող հարցերում, որտեղ մենք ոչ մի այլ օգուտ չունենք, բացի աստծու համար հոգիները փրկելուց, ինչպես նաև ժողովուրդները՝ մեր արքայի համար, որին էլ ամեն օր նվիրում ենք մեր բարի մաղթանքներն ու աղոթքները: Թող աստված նրան պահպանի հանուն քրիստոնեական փառավորման և ի բարօրութիւն ամենքի: Թող նրա աստվածային մեծութիւնը Զեզ պարզի իր ողորմածութիւնները և Զեզ համար ապահովի երկար և երջանիկ տարիների կյանք: Այս աղոթքը ես անում եմ որպէս

Զերդ պայծառափայլութեան,

ամենախոնարհ և հարգող ծառա

Վանական եղբայր Ժոզեֆ Մարի դե Բուստ,

Վեղար կապուչին, գլխավոր միսիօներ:

P. Raphael du Mans. Op. cit., pp. 331—34.

Ամենաբրիստոնեյա նորին Մեծութեան դեսպան պարոն Ժոնշերի միջոցով 1671 թ.

Պարսկաստանի թագավորին հանձնված նվերների ցուցակ

Զարդեղեններ

Երկու ոսկե խնկաման՝ զարդարված թանկարժեք քարերով:

Երկու փետրափունջ՝ զարդարված թանկարժեք քարերով:

Մեկ դաշույն՝ զարդարված թանկարժեք քարերով:

Մեկ մատանի՝ զարդարված թանկարժեք քարերով:

Չորս հատ ժամացույց:

Ոսկյա շղթաներ, զարդարված քարերով, 45 մեդիկալ քաշով:

Ճենապակի

Հարյուր հատ ամենամեծ ճաշամաններից:

Յոթանասուն հատ միջին մեծութեան ճաշամաններ, եզրերը ծայրված:

Ութսունինը հատ թաս օշտակի համար:

Երկու հարյուր թաս սուրճի համար:

Վաթսուն հատ ճենապակուց պնակ:

Եվրոպական նկարչություն

Ֆրանսիայի կայսեր դիմանկարը:

Մի այլ դիմանկար:

Ութսուներկու բրիչ՝ զորագործութեան համար:

Ութ ոտք բարձրությամբ երկու մեծ հայելի:

Մեկ այլ մեծ հայելի:

Մեկ ջահ ժայռի բյուրեղապակուց:

Եվրոպական երկու մեծ երկարափող հրացան:

Ֆրանսիայում պատրաստված չորս թնդանոթ:

Նոր ստեղծված մեկ թնդանոթ:

Տնտեսական և մթերային լապրանֆներ

Պղպեղ՝ երկու հարյուր տաս լիվր:

Դարչին՝ տաս լիվր:

Մեխակ՝ ինն լիվր:

Կարգամոն՝ իննսուն լիվր:

Մշկընկույզ՝ երկու հարյուր լիվր:

Թեյ՝ երկու մեծ տոպրակ:

Պարսկաստանի էպեմադ-էդ-դոպէթին տրված նվերները:

Երկու մեծ ժամացույց:
Ութը ոսկեգործ շալմա:
Վեց հնդկական calamkar:
Հինգ հատ ալեձև կամլոտ:
Անգլիական կտոր՝ քսան կանգուն:
Պղպեղ՝ քառասուն լիվր:
Կարգամոն՝ տաս լիվր:
Ութսուն հատ մշկընկույզ:
Երկու լիվր դարչին:
Երկու լիվր մեխակ:

Նվերներ Նագերներին

Երկու մեծ ժամացույց:
Վեց հատ շալմա ոսկեթել կտավից:
Վեց հատ հնդկական calamkar:
Երեք հատ ալեձև կամլոտ:
Անգլիական կտոր, քսան կանգուն:
Մեկ լիվր թեյ:
Պղպեղ՝ քառասուն լիվր:
Կարգամոն՝ տաս լիվր:
Մշկընկույզ, քառասուն (հատ):
Երկու լիվր դարչին:
Մեկ ու կես լիվր մեխակ:

Նվերներ մեհմաճղաբին

Երկու հատ շալմա՝ ոսկեթել կտավից:
Ալեձև կամլոտ՝ երկու հատ:
Երեք հնդկական calamkar:
Պղպեղ՝ ութսուն լիվր:
Մեխակ՝ կես լիվր:
Կարգամոն՝ երկու լիվր:
Թեյ՝ կես լիվր:

Նվերներ Միրզա Թահիրին, գլխավոր ստուգողի հատուկ ծառայող Նագիրին

Երկու հատ շալմա՝ ոսկեթել կտավից:
Երկու շալմա՝ ոսկեթել կամ արծաթաթել կտավից:
Երկու հատ ալեձև կամլոտ:
Հնդկական calamkar:
Հինգ լիվր պղպեղ:
Մեկ լիվր դարչին:
Կարգամոն՝ երկու լիվր:
Թեյ՝ կես լիվր:

Վերջ՝ պարոն Ժոնշերի տված նվերներին:

P. Raphael du Mans. Op. cit. pp., 335—337.

XV

ՖԲԱՆՍԻԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐԻ ՆԱՄԱԿԸ ՆԱԽՋԵՎԱՆԻ ՀԱՅ ԿԱԹՈՒԼԻԿՆԵՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԵՆ

18 ապրիլի 1674 թ.

Նախիջևանի տեր եպիսկոպոս, մենք ընդունեցինք մեր շատ սիրելի եղբայր Պարսկաստանի թագավորի կողմից ուղարկված հայրեր Ազարիսին և Անտուանին միաժամանակ ստացանք այն նամակը, որ նրանց միջոցով մեզ էիք ուղարկել: Անհուն գոհունակությամբ իմացանք, որ վերոհիշյալ թագավորը Ձեզ, ինչպես նաև իր երկրներում գտնվող բոլոր քրիստոնյաներին բաշխում է ամեն տեսակի արտոնություններ և ազատություն: Մենք երախտապարտ ենք նրան և շնորհակալությամբ հետազայում նույնպես կշարունակվի նույն ձևով, քանի որ մենք նրան հավաստիացնում ենք, որ միշտ կգնահատենք ու զգայուն կլինենք նրա նկատմամբ: Հավատացեք, որ Ձեզ հատկապես առիթը ներկայանալու ղեպքում, հաճույքով կցուցաբերենք մեր պաշտպանություն ու բարեհոգություն նորանոր նշանները:

Այդուհանդերձ, աղոթում ենք աստծուն, և այլն:

Լուղովիկոս:

P. Raphael du Mans. Op. cit., pp. 338.

Սպանան, հունվարի 20, 1683 թ.

Տեր իմ,

Ես ինձ պարտավոր եմ զգում Ձերդ մեծութիւնը տեղյակ պահելու այն բոլոր անցքերի համար, որ տեղի են ունենում այն նամակի կապակցութեամբ, որ Դուք հոժարեցիք գրելու Պարսկաստանի թագավորին՝ նախնական դավառի խեղճ հայ կաթողիկոս-քրիստոնյաների մասին և Ձերդ Մեծութիւնն ինձ հանձնարարեց զբաղվել այդ հարցով: Ուստի՞ գալով այս քաղաքը, Շահի (այստեղ այսպես են ասում թագավորին) մինիստրներից մեկին ես տեղյակ պահեցի, որ նամակ ունեմ հանձնելու իմ տիրոջ՝ կայսրի կողմից: Այդ լուրը բոլոր կարգուկանոններին համապատասխան նախ հասցվեց էտեմադարուկեթին՝ պրեմիեր մինիստրին և ապա Շահին: Նախ ինձ հատկացրին մի բնակարան և աշխարհով մեկ Ձերդ մեծութիւն անշափ շատ պաշտոված անունով ինձ լիացրին շտեմնոված հարդանքներով: Բայց քանի որ այստեղ էր գտնվում թաթարների թագավորներից մեկը՝ Ուզբեկ (Yusbegs) անունով, որի մայրաքաղաքը ներկայումս Բուխարան (Bokara) է և ինքը մեծ թամերլանին հաշորդողն է, ուստի ինձ հասկացրին, որ հարկավոր է սպասել մինչև նրա Մեքքա գնալը: Բայց դարձյալ հետաձգումներ եղան, որոնց պատճառով դեսպանների ընդունելութիւնը տեղափոխվեց մինչև հոկտեմբերի երեքը: Եթե ես հոգնակի՝ դեսպաններ եմ ասում, դրա պատճառն այն է, որ այստեղ սովորութիւն է ընդունելութեան ժամանակ լսել բոլոր դեսպաններին միաժամանակ և այդպես էլ արվեց այս պարագային: Այստեղ էին Լեհաստանի, Սիամի, մի այլ թաթար թագավորի, որի մայրաքաղաքն է Բալխը, և արաբների դեսպանները: Լեհաստանի դեսպանը, կամ ավելի ճիշտ՝ Լեհաստանի թագավորի պատվիրակը, առաջինը հրաժեշտ տվեց, քանի որ նրան բավականին շուտ էին ընդունել և ըստ տեղի սովորութի՝ նվերներն արդեն հանձնված էին: Սիամի դեսպանը այնքան շատ բաներ նվիրեց, որ այդ բոլորը պատմելու համար մի խոշոր ցուցակի կարիքը կզգացվի: Թաթարներն ու արաբները ձիեր և շորիներ տվեցին: Իսկ ես, քանի որ տալու ոչինչ չունեի և այդ մասին նախօրոք հայտարարել էի, առաջացա մինչև Շահի մոտ ու նրան հանձնեցի Ձերդ Մեծութեան նամակը, որը շատ ավելի թանկարժեք էր, քան մնացած բոլոր նվերները միասին վերցրած: Արտասանեցի իմ ճառը: Նա բարի եղավ ինձ լսելու՝ բարի ու ուրախ դեմ-

քով, և դա այնքան ժամանակ, որքան ժամանակ ես արտասանում էի «Ֆրանսիայի կայսրը» բառերը: Նա ինձ հարցութորձ արեց Ձերդ արքայական Մեծութեան մասին, Ձեր մղած պատերազմների, Ձեր նվաճումների և դաշնակիցների մասին: Ես աշխատում էի պատասխանել նրա բոլոր հարցերին՝ հանուն իմ պարտականութեան, հանուն արդարութեան և ճշմարտութեան: Նա շատ գոհ մնաց և մեծապես զնահատեց Ձեր Մեծութիւնը, երբ նրան պատմեցի Ձեր մի քանի գործերի և Ձեր վերջին հաղթանակների մասին: Շիոյի գործը, որի մասին ես պատմեցի նրան, մեծ գոհունակութիւն պատճառեց, ինչպես նաև բոլորովին վերջերս իմ ստացած տեղեկութիւնները՝ Ալժիրի դեմ Ձեր կատարած արշավանքի պատմութիւնը: Երկար և անշափ յուրահատուկ զրույցը զարմանք էր պատճառել պալատականներին, ինչպես նաև դեսպաններին, որոնք իրենց հանդիսավոր ճառի դիմաց, ըստ սովորութեան պատասխան էին ստանում ընդամենը մեկ բառ. «բարով եք եկել» և երբեմն էլ նա (թագավորը) բավարարվում էր գլխի պարզ մի շարժումով: Անմիջապես հետո բաղմամբով սեղաններ պատրաստվեցին, ավելի ճիշտ սփռոցներ առանց սեղանների, քանի որ բոլորն էլ ծալապատիկ նստած էին գեղեցիկ գորգերի վրա: Շահը կերավ նույն դիրքում, բայց մյուսներից երկու աստիճանով բարձր էր նստած: Ծաղկերույթը երկար շտեկեց: Ըստ սովորութեան, երաժշտութիւնն ու գործիքները չէին պակասում: Որից հետո հրաժեշտ տվեցինք և յուրաքանչյուր որ հեռացավ: Ահա, տեր իմ, այն, ինչ կարող եմ պատմել Ձերդ Մեծութեանը այս առաջին հանդիպման մասին, որտեղ գործերի մասին խոսք իսկ չեղավ: Ինձ հասկացրին, որ երկրորդ հանդիպումը կարող է տեղի ունենալ միմիայն Ձերդ մեծութեան նվերները ստանալուց հետո: Իսկ մինչ այդ, փոխհանդիպումներ տեղի կունենան պարզաբանելու համար այն հարցերը, որոնց շուրջ հետազայում բանակցութիւններ են վարվելու: Ես պատասխանեցի, որ այդ նվերները սպասում եմ Ընկերութեան այն առաջին նավով, որ մոտենալու է Բանդար Աբասին: Ըստ երևութիւն, մտտակա օրերին այն հայտնվելու է, և հուսով եմ, որ այդ երջանիկ լուրը ես կստանամ: Ես իմ կարողացածը կանեմ, որ գլուխ բերվի այս գործը, ինչպես նաև բոլոր այլ պարագաներում ես միշտ պատրաստ կլինեմ Ձերդ մեծութեան հրամանները կատարելու ու դրսևորելու իմ խո-

նարհ ծառայութիւնը Ձեր հանդեպ, քանի որ պարտավոր եմ իմ ամբողջ կյանքի ընթացքում լինել:

Տեր իմ,
Ձերդ Մեծութեան,

Ամենախոնարհ, ամենահնազանդ և ամենահավատարիմ հպատակն ու ծառան,

Ֆրանսուա, Կեսարուպոլսի Եպիսկոպոս,
Առաքելական առաջնորդական տեղապահ:

P. Raphael du Mans. Op. cit., pp. 339—340; G. Goyau. Un précurseur: François Picquet. Consul de Louis XIV en Alep et évêque de Babylone. Paris, 19 2. pp. 292—294.

XVII

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇԱՀԻ ՆԱՄԱԿԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐԻՆ

5 նոյեմբերի 1685

«Աստծուն է տրված գերագույն փառքը»

Լուսովիկոս, կայսր, որ Ձերդ Մեծութեամբ պատիվ եք բերում թագավորներին, ինչպես նաև Ձեր փառքով և այն երջանկութեամբ, որ Դուք ունեք Ձեր մեջ Ձեր արքունիքով, որը նույնքան բարձր է, որքան Ամփիրեի տասներկու տները, Դուք, որ կոնվենտում առուծի առույգութիւնն ունեք և այնքան հանգիստ խիղճ, որը փայլ է տալիս Ձերդ Մեծութեան կայսերական գահին, որի վրա նստելու արժանի եք Դուք, ինչպես նաև արժանի եք կրելու այն պսակը, որը ծածկում է Ձեր գլուխը, որովհետև Դուք քաջ եք և արդար: Դուք քրիստոնյա թագավորների և կայսրերի մեջ ամենամեծն եք, ամենավեհը, ամենազատամիտը և ամենասքանչելին, ինչպես նաև ֆրանսիական տերութիւնների ամենահզոր արքան:

Ձերդ բարձր Մեծութեանը տեղակացնում ենք, որ Կեսարուպոլսի եպիսկոպոսի միջոցով ստացել ենք Ձեր գեղեցիկ նամակը, որտեղ արտահայտվում են Ձեր անկեղծութիւնը և այն մտադրութիւնը, որ Դուք ունեք ամբապնդելու այն կայսր, որ ձեռք է բերվել Ձերդ կայսերական Մեծութեան հայրերի և նախնիների, ինչպես նաև մեր շնորհաշատ և վսեմափայլ ընտանիքի միջև: Այսպիսով, այս նամակը մեր սրտում վերանորոգեց սերը, ինչպես նաև հին ու նոր բարեկամութիւնը, և քանի որ Դուք երաշխավորում եք Նախիջևան գավառի քրիստոնյա հայերին, և դա այնպիսի արտահայտութիւններով, որ հնարավոր

է մերժել, ուստի ես Ձեզ պետք է ասեմ, որ, իսկապես, երբեմն, այն էլ երբ Նախիջևանի կառավարիչները փոխվում են, նոր եկողները տեղյակ չեն լինում Ձեր ամենահիասքանչ Մեծութեան երաշխավորութեամբ, ոչ էլ այդ երաշխավորութեան կապակցութեամբ մեր կողմից տրված հրամանին, ուստի սրանք թերանում են հայերին պաշտպանելու իրենց պարտականութեան մեջ: Իսկ այն, ինչ վերաբերում է այն խնդրանքին, որ մեզ հղել եք, դա իրենից ներկայացնում է արտակարգ և շատ ուժեղ մի հանձնարարական, որն ուղղված է ի պաշտպանութիւն Կեսարուպոլսի եպիսկոպոսի և եվրոպական հոռմեական կաթողիկ քրիստոնյաների, հատկապես սևազգեստ հայրերի (նրանք ճիշդ վրա հայրեր են), ևս այդ մասին Ձեզ կպատասխանեմ, որ մեր բանականութիւնը, որը նման է ամենուր թափանցող արևին, լիովին տեղյակ է այդ բոլոր գործերին և մինչև Ձերդ բարձր և կայսերական մեծութեան բարեկամական գիրն ուղարկելը՝ ի պաշտպանութիւնն և՛ մեկի, և՛ մյուսների, մեր կողմից արդեն մի փոքրիկ հրաման էր արձակվել (որի շնորհիվ ամենայն խստութեամբ ենթարկվում է մեզ ազնվականութիւնը) ի պաշտպանութիւնն նրանց, ինչպես այլ առիթով այդ մասին մենք մեր բարեկամական նամակի մեջ Ձեզ գրել էինք: Այդ հրամանը իր լիակատար ուժի մեջ է և ներկայումս նոր կառավարիչների կողմից այն կետ առ կետ իրագործվում է: Այդ հարցի շուրջ ուրիշ նոր փոփոխութիւններ չկան:

Եթե Ձերդ մեծութիւնը այս երկրներում որևէ գործ ունի, իմաց տվեք մեզ այդ մասին և մենք մեր կողմից կարձակենք մեր հրամանները...

P. Raphael du Mans. Op. cit., pp. 340—342; G. Goyau. Op. cit., pp. 307—308.

XVIII

Պապական պատվիրակը և նորին կայսերական մեծութեան արտակարգ դեսպան՝ Անկյուրիայի աբեպիսկոպոսի քանապահուրոյացան մասին դեպի Պարսկաստանի մեծ Սոֆին Մենեֆ այստեղ ականատես կլինենեֆ, թե ինչպես սուրբ Աթոռի այս պատվիրակը ընդունվեց Պարսկաստան երկիրը և թե ինչպես նա մտաք գործեց Պարսկաստանի մայրաքաղաք Սպահան

Պարսկաստանի և Մեծ Մոզդի միսիանների համար, Մոսկովիայից պեպի այս երկիրն է ուղևորվում առաքելական եկեղեցու պատվիրակը՝

Անկյուրիայի (Ancyre) արքեպիսկոպոսը: Մեծ Սոֆին նրան ընդառաջ է ուղարկում մեհմանդարին (Mamandar)՝ նրան սահմանի մոտ դիմափորելու, ինչպես նաև նրան ազատելու համար բոլոր տեսակի հարկերից և ճանապարհորդության ժամանակ սպասարկելու, հրաման ունենալով նաև հայթայթելու երեսուն ձի՝ ինչպես իր, այնպես և իրեն ուղեկցողների համար: Սահմանամերձ առաջին քաղաքը հանդիսացող Շամախում (Camak) նրա կառավարիչն ըստ Սոֆիի հրամանի նրան գիմափորեց իրեն վայել բոլոր հարգանքներով: Նա մարտի 8-ին ընդունելություն կազմակերպեց ի պատիվ պատվիրակի, որը նրան նվերներ հանձնեց. բարձր լեռների և դժվարանցանելի ճանապարհների պատճառով հոգնեցուցիչ ճանապարհորդությունից հետո, մայիսի տասնմեկին նա հասնում է Ղազվին (Casbin)՝ Պարսկաստանի թագավորների երբեմնի նստավայրը, ուր և կանգ է առնում երեք օր: Ամսի 22-ին նա գալիս է Հազեն (Hāzen): Հաջորդ օրը ճանապարհին հանդիպում է մի թուրք դեսպանի, որն իր ութհարյուր ուղեկիցների հետ վերադառնում էր Կոստանդնուպոլիս: Իր վերջնական երթուղուց օրվա հեռավորության վրա նրան դիմափորում և հարգալից վերաբերմունք է ցույց տալիս Սպահանի հոռմեհական հոգևորականությունը, և (նա) կանգ է առնում Գեստում (Gest), որն այնտեղից մոտ երեք մղոն հեռավորության վրա գտնվող մի փոքր քաղաք է: Տեղի մեհմանդար բաշուն (Mamandar Bassy) տեղյակ է պահվում նրա ժամանման մասին, բայց մինչ այդ նա Գեստ էր ուղարկել իր քարտուղարին, ու մի քանի ծառաների՝ հարգանքներ մատուցելու Շվեդիայի թագավորի դեսպանին և Անգլիայի ու Հոլանդիայի հյուպատոսներին, որոնք այստեղ էին եկել պատվիրակի ժամանման կապակցությամբ՝ այդ առթիվ իրենց վեհապետներից նախօրոք ստացած հանձնարարական նամակների հիման վրա: 11-ին, լեզատը հարգալից ընդունելություն արժանացավ մեհմանդար բաշու կողմից, որը և միաժամանակ նրան՝ 14-ին, տեղեկացրեց, որ հաջորդ օրը Սոֆին նրա համար նշանակել է պաշտոնական ընդունելություն և որ Ջուլֆա (Sulfa) կոչվող արվարձանի հայերը, որոնք պատկանում են հոռմեհական եկեղեցուն, պատիվ կունենան նրան հանդիսանալու որպես առաջնորդներ: Սպահանի եպիսկոպոս՝ Կարմելիտների միաբանության անդամ հայր Եղիան (Père Elie), ծընյալ Monts en Heinault-ում, պատվիրակի հետ միասին կարգադրում է իր (պատվիրակի) հետագա անելիքների հերթականությունը: 15-ին Մոսկովայի պատգամավորը ուղարկում է իր փողերն ու թմբուկները՝ միախառնվելու համար պատվիրակի փողերին ու թմբուկներին, նրամուտքը այդպիսով ավելի հանդիսավոր դարձնելու նպատակով: Հետկեսօրյա ժամը երեքին սկսվում է երթը: Առջևից գնում են քսանչորս

գինվորներ: Նրանց հետևում են փողերն ու թմբուկները, որոնց հետևից գալիս են մեհմանդար բաշին՝ իրեն ուղեկցող սպաների ու տասներկու գրանիկների հետ: Ապա գալիս է պատվիրակը՝ Սպահանի եպիսկոպոսի ընկերակցությամբ, ու նրանցից անմիջապես հետո գալիս են Անգլիայի և Հոլանդիայի հյուպատոսները, որոնց հաջորդում են զանազան միաբանությունների միսիոներ հայրերը՝ վեղարավորներ (կապուչիններ), հիսուսյաններ (ճիզվիտներ), ավզուտինյաններ և դոմինիկյաններ, բոլորն էլ ձի նստած և երկուակաճ մարդ կողք-կողքի, ապա գալիս են հասարակ հոգևորականությունը և Ջուլֆայի արվարձանի հայերը՝ թվով հարյուր ութսուն հոգի: Ութսուն ձիերի վրա բարձած բեռները եզրափակում են այս խառնախումբը, որն անցնելով քաղաքի գլխավոր փողոցներով, գնում է մինչև պատվիրակին հատկացված պալատը, որը և 17-ին հանդիսավոր պատարագ է մատուցում, ի փառսաստծո, բարեհաջող գալստյան համար: 18-ին և հաջորդ օրերին նրան այցելում են կղերականությունը, միսիոներները, մեծ թվով առևտրականներ ու այլ մարդիկ: Քսանին մեհմանդար բաշին հետաքրքրվում է այն նվերներով, որ պատվիրակը պետք է հանձնի Սոֆին: Եվ հուլիսի վեցերորդ օրը նրան տեղեկացնում է, որ Սոֆին ընդունելություն օր է նշանակել 9-ը: Այդ օրը առավոտյան ժամը յոթին մեհմանդարը սրանչևի մի շքախմբով նրան ուղեկցում է դեպի Արքայական պալատ: Դռան առաջ կանգնած են Սոֆիի ախոռին պատկանող երեք փիղ և տասներկու ձի՝ ոսկե սանձերով, անթիվ քարերով զարդարված թամբերով ու ծածկոցներով: Գահլիճները լեփ-լեցուն են հիանալի հագնված մեծ թվով պարսիկ պարոններով: Սոֆին նստած է իր գահի վրա: Առաջ գալով, պատվիրակն արտասանում է իր ճառը և թագավորին հանձնում իր հավատարմագրերը, որից հետո նրան ուղեկցում են մի այլ դահլիճ, որտեղ Սոֆին նրան տեղեկացնում է, որ հրավիրում է իր սեղանը՝ ճաշելու համար և նա կարող է իր հետ բերել երեք հոգի, որոնք հետևյալներն էին՝ Միսիայի հայր-քարտուղարը, հայր Էօստած դե Բարին և Սպահանի եպիսկոպոսը, երեքն էլ կարմելիտներ: Նրանք հիացած էին այդ վեհաքանչ խնջույքից, որտեղ յոթ հարյուրի հասնող ամանեղեններն ու բաժակները բոլորն էլ ձուլածո ոսկուց էին: Սոֆին երկու անգամ խմեց պատվիրակի և երեք հարյուր հայրերի պատվին: Ճաշից հետո նրանց ուղեկցեցին իրենց պալատը, որտեղ պատվիրակն ամեն օր ընդունեց երկրի գլխավորների այցելությունները:

Նրանք, ովքեր Պարսկաստան երկրի ներկայիս վիճակի մասին գաղափար ունեն, չեն կարող չզարմանալ խնջույքի այն շքեղությունից, որին ներկա գտնվեց Անկյուրիայի արքեպիսկոպոսը. և նույն օրն այդ հոգևորականը ներկա գտնվեց նաև ընդհանուր (հասարակական) ընդու-

նելությանը: Սոֆին միշտ էլ ընդհանուր (հասարակական) խնջույքների ժամանակ է, որ զբաղվում էր երկրի հարցերով և ընդունելութուն կազմակերպում օտար երկրների իշխանների համար: Սովորաբար նման խնջույքները հույակապ են լինում և շատ սքանչելի, որովհետև այսպիսի առիթների դեպքում է, որ մեջտեղ են բերվում ամբողջ այն թանկարժեք իրերը, որ կան արքունական տան մեջ: Գորգերը, որոնց վրա նայում են, ամենագեղեցիկներից են, և փոված ծածկոցները նախշուն դիպակից են: Թագավորը սպասարկվում է երեք ոտք տրամագիծ ունեցող ոսկե ափսեով, որի կափարիչն ու կողպեքը, որի մեջ պահվում է արքայի բաժինը, նույն նյութից են պատրաստված, իսկ այդ ափսեն բերում են որոշակի ծիսակատարություններ, ինչ-որ մի պատգարակաձև բանի վրա դրված ու զարդարված ոսկե թերթիկներով: Ազնվականը բաց է անում կողպեքը նորին մեծության աչքերի առաջ, նախ ինքն է փորձում, ապա ծունկի գալով նրա առաջ, մշտապես իր մոտ պահած ոսկե խոշոր գդալով ու պատառաքողով ուտեստեղենը լցնում է բազմաթիվ ափսենների մեջ: Երբ Սոֆին խմում է, գինին նրան մատակարարվում է փակ շշերով, որոնք բացվում են նրա աչքերի առաջ և փորձվում մինչև նրան տալը: Այնուհետև, Սոֆին սպասարկելուց հետո, սպասարկվում են հյուրերը՝ ավելի քան հարյուր հիսուն ոսկյա ափսենների մեջ, որոնք ծածկված են երկու այդ ափսենների շափ բաշ ունեցող կափարիչներով: Յուրաքանչյուր ափսեի տրամագիծը մեկուկես ոտքից պակաս չէ, իսկ խորտիկների ափսենները դարձյալ ոսկուց են: Մինչև ոսկե ափսեններով սպասարկելը, արդեն կոնֆիտյուրի սպասարկումը կատարվել էր արծաթե և ճենապակե պնակներով: Կոնֆիտյուրի և քաղցրավենիքի հյուրասիրությունը միշտ ճաշից առաջ է կատարվում: Դրանք հյուրերին հրամցվում են թագավորի կողմից ընդունելություն կազմակերպելիս, և հենց այդ ժամանակ է, որ այդ իշխանն իր արքունիքի իշխաններին հյուրասիրում է գինով, իսկ դա կատարվում է ոչ պակաս շուքով, քան մնացած ամեն ինչը: Հյուրասիրություն համար նախատեսված շշերն ու թասերը էմալապատ ոսկուց են և դասավորված են խնջույքների դահլիճի մեջտեղում զանազան խոշոր ավազանի եզրին, իսկ նույն այդ ավազանի անկյունում տեղավորված են լինում շորս ոսկե և շորս արծաթե տակաոիկներ, որոնցից յուրաքանչյուրի քաշը հավասար է մեկ մարդու քաշի: Այս տակաոիկները, շշերը, թասերը, գավաթներն ու ծաղկամանները, որոնք բոլորն էլ ոսկուց են, դասավորված են հերթականությամբ՝ այնպես որ, ինչպես կարելի էր պատկերացնել, այդ ամբողջությունը հաճելի համաշափություն տպավորություն է թողնում: Այդ նույն խնջույքների դահլիճում շքերթի են դուրս եկել բազմաթիվ փղեր, առյուծներ, վագրեր, ընձառյուծներ և անտե-

սությունում եղած բոլոր հազվագյուտ անասունները: Նրանց պահող շղթաներն ու գամերը դարձյալ ոսկուց են պատրաստված, և այդ կենդանիներից յուրաքանչյուրն իր առաջ ունի երկու ոսկե խորունկ ճաշաման, որոնցից մեկի մեջ դրված է նրա խմելիքը, իսկ մյուսի մեջ՝ ուտելիքը: Բայց ինչ խոսք, ոչ մի բան չի կարող գերազանցել այս դահլիճում ցուցադրված այն տասնութ ձիերին, որոնցից յուրաքանչյուրը մի գանձի շափ արժեք ունի. ասպանդակները ոսկուց են, սանձերը, թամբերի առջևի և ետևի մասերը թանկարժեք քարերով զարդարված էմալապատ ոսկուց են, ինչպես նաև ծածկոցները, որոնք բավականին հարուստ են: Դրանցից մեկի թամբը զարդարված է ադամանդներով, մյուսինը՝ զմրուխտով, սուտակով, շափուղայով, շատ խոշոր մարգարիտներով և ամեն տեսակի թանկարժեք իրերով՝ աչք շոշոլ մեծությամբ ու գեղեցկությամբ: Յուրաքանչյուր ձի, ինչպես մյուս կենդանիները, իր առջև նույնպես ունի երկու խորը ճաշաման, որի մասին խոսեցի:

Ահա քեզ մի աննկարագրելի շքեղություն: Երբեմն այդ ձիերի արանքներում տեղավորվում են վայրի էշեր: Իսպանիայից մի միսիոներ գալով այս արքունիքը՝ Լեհաստանի թագավորի կողմից Սոֆին նամակ հանձնելու համար, տեսնելով էշերին այնքան լավ և հարուստ ձևով ծածկված, մնում է զարմացած և կորցնելով իր լրջությունն ու չկարողանալով իրեն զսպել, սկսում է ծիծաղել: Դրա վրա արքունիքի սպաններից մեկը մոտենում է նրան ու քաղաքավարի ձևով հարցնում է ծիծաղելու դրդապատճառը: Նա պատասխանում է, որ իր մոտ ծիծաղ առաջացավ՝ տեսնելով այն մեծ հարգանքը, որին արժանացել էին այն կենդանիները, որոնք իրենց մոտ՝ Իսպանիայում արժանանում էին մեծագույն արհամարհանքի: Այդժամ սպան նրան համոզում պատասխանում է. այդ նրանից է, որ էշերը ձեր երկրում մեծ թիվ են կազմում, իսկ մեզ մոտ դրանց նկատմամբ առանձին մոտեցում ունենք, որովհետև դրանք թվով քիչ կն:

1699 թ. օգոստոսի 6-ի՝ Համադանից ուղարկված նամակները վկայում են, որ Պարսկաստանի թագավորը հիանալի ընդունելություն կազմակերպեց ի պատիվ Անկյուրիայի արքեպիսկոպոսի, առաքելական (պապական) սուրբ Աթոռի պատվիրակի (պապական դեսպանի) նորին կայսերական մեծության դեսպանի: Այս պրելատը սուրբ Պետրոսի օրը հանդիսավոր պատարագ մատուցեց ճիզվիտների եկեղեցում՝ այնպիսի հոծ քաղմության ներկայությամբ, որ նույնիսկ ծնկի գալու հնարավորություն չկար: Այս արքեպիսկոպոսը դրսում միշտ երկու փողի ընկերակցությամբ է գնում, իրենից առաջ տանելով երկու դրոշ, մեկը՝ պապինը, իսկ մյուսը՝ նորին կայսերական մեծությանը, ինչպես նաև բարձր պահած խաչով: Սոֆին պատվիրակին պատվում է երեք տար-

բեր տեղերում, մեկը՝ ցերեկով, իսկ մյուս երկուսը՝ գիշեր ժամանակ: Այդ տոնակատարություններից մեկը հանդիսավորությամբ կատարվեց Սոֆիի հանգստավայրերից մեկում, լուսարձակումներով ու հրավառություններով: Իսկ վերջին ընդունելության ժամանակ, պատվիրակը մեկուկես ժամվա գաղտնի տեսակցություն ունեցավ թագավորի հետ:

P. Raphael du Mans. Op. cit., pp. 373—376.

XIX

ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀԱՅ ԿԱՔՈՒԽՆԵՐԻ ԳԻՄՈՒՄԸ ՖՐԱՆՍԻՅԱԻ ԹԱԳԱՎՈՐԸ

Ապարաներ.

1 սեպտեմբերի, 1682 թ.

Փառապանծ, վեհ և միշտ հաղթական, բարերարության տաճար, թագադրված Հիսուս Քրիստոսի կողմից, Մեծ կուղովիկոս, անունով տասնչորսերորդ, Ֆրանսիայի թագավոր, մեր բարձրագույն տերն ու մեր հույսը, ողջուն Հիսուս Քրիստոսի կողմից: Մենք, Մեծ Հայքի նախիջևան քաղաքի կաթողիկ հայերս, Պարսկաստանի թագավորի հարկատուներս, բոլոր նրանց նման, ովքեր ապրում են Ձերդ Մեծության փառավոր պաշտպանության ներքո, Հիսուս Քրիստոսին և նրա առաքյալներին միացած իսկական կաթողիկներս, ինչպես մեր նախնիները, որոնք ապրել են Ձերդ Մեծության փառավոր պաշտպանության ներքո:

Մենք երբեք այլ արդար, ավելի մեծ ու ավելի ուժեղ առիթ չենք ունեցել, որպեսզի ողորմածությամբ ծունկի գանք Ձերդ Մեծության ոտքերի առաջ ու նրան ճանաչենք իբրև մեր տերը:

Ահա արդեն երեք հարյուր հիսուներեք տարի է, ինչ մենք գտնվում ենք անհավատների լծի տակ և երբեք չենք հեռացել մեր հավատից: Մեզ վրա դրված հարկերն ու աղի տուրքերը միշտ էլ եղել են շատ բարձր, բայց մենք այս խեղճ գավառում՝ Հիսուս Քրիստոսի տանը, նախընտրել ենք տանել այդ դժվարություններն ու հոժար լինել մեր փոքր եկամտուներին, քան հրաժարվել մեր տեր Հիսուս Քրիստոսի հավատից: Մենք միշտ զրկված ենք եղել հովանավորությունից և միշտ էլ եղել ենք անընդհատ վշտի մեջ, այն միակ հույսով, որ օրերից մի օր քրիստոնյա և կաթողիկ մի որևէ մեծ արքա մեզ կվերցնի իր հովանավորության տակ: Ապրելով այդ քաղցր հույսով (կարելի է ասել հրաշք էր դա) մենք ականատես եղանք օրհնված աստծու կողմից մի հրեշտակի գալստյանը, որը մի արքեպիսկոպոս էր Ֆրանսիայից, օժտված աստծու ողորմածությամբ ու աստվածային առաքինություններով, որն աստծու կողմից մեզ ուղարկվել էր որպես մի նոր առաքյալ

և Ձերդ Մեծության կողմից որպես մեզ խեղճ քրիստոնյա կաթողիկներին՝ ազատագրող: Նրանք (կաթողիկները) այդ նոր առաքյալի ժամանուկից հետո երբեք չեն դադարել աղոթելու Ձերդ Մեծության առողջության համար, ինչպես նաև նրա համար, որ Ձերդ Մեծությունը ավելի շատ հնարավորություն ունենա մխիթարելու խեղճ հավատացյալներին և որ այդ նպատակով, Ձերդ Մեծությունը հանդուրժեց այդ նույն արքեպիսկոպոսի միջոցով մեր օգտի համար Պարսկաստանի թագավորին նվերներ մատուցել: Ու այդ նույն Պարսկաստանի թագավորը նվերներն ստանալուց և մեր նկատմամբ Ձեր զգացմունքներն իմանալուց հետո, անմիջապես փոխեց իր վերաբերմունքը մեր հանդեպ, իսկ պարսիկները, որոնք մինչ այդ կատաղած գալլեր էին, ամբողջովին սարսափած, գառնուկներ դարձան: Դրա համար բավական էր Ձերդ Մեծության փառավորված անունը:

Մեծագույն գոհունակությամբ իմացանք, որ անցած ժամանակներում մահճեղականները դողում էին՝ լսելով Ձերդ Մեծության շատ հզոր անունը: Լսեցինք նաև, որ նույն մահճեղականները ճնշված են եղել Ձեր փառավոր զենքերի շնորհիվ: Այս բոլորի հետևանքը եղավ այն, որ երթևեկությունն արդեն ազատ է բոլոր վաճառականների համար, որոնք և պարտավոր են աղոթելու աստծուն Ձերդ Մեծության առողջության համար: Մենք իմացանք նաև, որ Ձերդ Մեծություն՝ աստվածային օրհնանքներով լեցուն դրոշը միշտ տարել է փառահեղ հաղթանակներ և հավատալով, որ մեր տեր աստվածն ավելի շատ կծաղկեցնի Հիսուս Քրիստոսի այս խեղճ գավառը՝ Ձեր հովանավորության տակ վերցված լինելու շնորհիվ և ցանկանալով Ձեզ ասել, որ երբ Ձերդ Մեծությունը նվաճում էր Ֆլանդրիան, մենք երբեք չդադարեցինք մեր տիրոջն աղոթելուց, որպեսզի հաղթանակով դուրս գա Ձերդ Մեծությունը, և մենք երբեք չենք գլանա նրան աղոթելուց՝ մինչև դատաստանի օրը: Հայաստանում Ձերդ Մեծության ամենահզոր անունն այնքան փառաբանված է, որ շատ հոգիներ շարունակաբար աղոթում են աստվածային սրբազնության առաջ՝ Ձերդ Մեծության փրկության համար: Ու նրանք երբեք չեն մոռանա Ձեր փառավոր անունը, որը պահպանված կլինի նաև երկնքում: Այս ամբողջ խեղճ քրիստոնյա և կաթողիկ ժողովուրդը ներկայանում է աստծուն, աղոթում նրա առաջ, որպեսզի նա պահպանի Ձերդ Մեծությանը, ինչպես նաև տիկին թագուհուն և Ձեր միակ ժառանգ-պայծառափայլ թագածառանգին, նույնպես նաև ամբողջ արքունական ընտանիքին: Այն բոլոր ողորմածություններով հանդերձ, որ Ձերդ Մեծությունն արել է մեզ համար, չկա ավելի մեծը, քան ներկայումս խնդրում ենք իրենից, որը և լինելու է վերջինը՝ և դա մենք խնդրում ենք անհազ ծարավով ու մեծ ցանկու-

թյամբ: Մեր խնդրանքն այն է, և թող Ձերդ Մեծությունը ներողամիտ լինի մեր հանդեպ, արտահայտվելու այն պարզության համար, որ մենք ներկայումս հանդգնում ենք անել, որպեսզի Ձերդ մեծությունը չմերժի լսելու այն մեծ զօրախառնության մասին, որ եկել է մեր գլխին երկրաշարժերի հետևանքով, որոնք և պատճառ են դարձել մեր Ապարաններ (Paranere) քաղաքի եկեղեցու հիմնահատակ քանդվելուն: Մենք այլևս այն վերականգնելու հույսեր չունենք: Երկնքում՝ երկնային գթասրբություններ, իսկ երկրում այն ողորմածություններով, որ հույս ունենք ստանալու Ձերդ Մեծությունից, և շնորհիվ այն բարեպաշտությունների, որ Ձերդ Մեծությունը միշտ ունեցել է հանդեպ Հիսուս Քրիստոսի սուրբ կույսի, որը միշտ պատրաստ է ծննդաբերելու և նա (կույսը) հույս ունի, որ Դուք կլինեք նրա կնքաշայրը, որպեսզի վերականգնվի այդ սուրբ եկեղեցին իր ամբողջ վեհություններով, և որ հետո Ձերդ Մեծությունը կարողանա երկնքում ստանալ այդ մարդու ձեռքերով, բայց իրականության մեջ աստծու ձեռքերով կառուցված եկեղեցին. և մենք բոլորովին չենք կասկածում, որ Ձերդ Մեծությունը այդ խեղճ եկեղեցու համար կրարեխոսի նաև Պարսկաստանի թագավորի մոտ: Այստեղ ապրում են դամիսիկյան հայրերը, սուրբ Գոմիսիկի գավակները, որոնք այդ նույն եկեղեցուն ամեն օր պատարագ են մատուցում և միշտ իրենց աղոթքներում աղոթում են Ձերդ Մեծության փրկության համար: Գրված է Ապարաններում, 1-ը սեպտեմբերի 1682 թ.:

Վանական եղբայր Ազարիա՝ քարոզիչ և մեծավոր. շատ ողորմած կաթոլիկ բրիտանացիներ ներկայումս աղոթում են Ձերդ Մեծության համար:

Վանական եղբայր Պաուլո՝ Ապարանների, Թավրիզի (°) և Նախիջևանի հյուպատոսի մեծավոր:

G. Goyau. Op. cit., pp. 280—282.

XX

ԱՎԵՆԱԿ ՊԱՐՍՎԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ
ՀՈՒՉՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Ջ Ա Ն Ո Ր Բ Ո Ր Գ

Աղբրեջանում աֆղանների տեղավորման մասին՝ բախտիարների խոսվությունը, 1750 թ. Իսմայիլ-շահի գահին տիրանալու մասին: Աֆղանները պարտվում են Հերակլի կողմից: Նրանք նվաճում են Երևանի և Նախիջևանի գավառները: Շահ-Ռուխին կուրացնում են:

Շահ Նադիրի մահից հետո յուրաքանչյուր տարի նշանավորվում է որևէ արտակարգ իրադարձություններով: Այն, ինչ կատարվեց 1750 թ., պակաս ուշադրության արժանի չէ, քան նախորդներն էին:

